ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ

# ՋԱՄԲՌ



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

## Ե

Գիրքը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ
«Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող
համահայկական հիմնադրամի» աջակցությամբ

The book is published whit the support of the NAS RA’s
“All Armenian Foundation Financing Armenilogical Studies”

MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

SIMEON YEREVANTSI

# JAMBR

*Introduction, Study,*
*Critical Text and Annotations by*

HRANT OHANYAN

YEREVAN - 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

СИМЕОН ЕРЕВАНЦИ

# ДЖАМБР

*Предисловие, исследование,*
*подготовка текста и примечания*

ГРАНТА ОГАНЯНА

ЕРЕВАН - 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ

# ՋԱՄԲՌ

*Աշխատասիրությամբ*

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ - 2022

ՀՏԴ 271.72-9
ԳՄԴ 86.373.2
Ս 384

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան*
*Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագիրներ՝ պատմական գիտությունների դոկտոր*
*Կարեն Մաթևոսյան*
*պատմական գիտությունների թեկնածու*
*Վահե Թորոսյան*

*Սիմեոն Երևանցի*

Ս 384 *Ջամբռ / Սիմեոն Երևանցի; Աշխատասիրությամբ Հ. Օհանյանի.- Եր.: Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, 2022.- 463 էջ.- «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշար:*

*Գրքում ներկայացված է Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա. Երևանցու (1710-1780) «Ջամբռ»-ի լրացված քննական բնագիրը՝ հեղինակային ձեռագրերի և երկի 1873 թ. հրատարակության համեմատությամբ: Սկզբնաղբյուրը ներկայացնում է Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը՝ Հայոց հայրապետների գահակալումը, եկեղեցական թեմերը, նվիրապետական աթոռները (Աղվանից, Աղթամարի և Կիլիկիո) և Մայր Աթոռի դիվանի փաստաթղթերի հիման վրա՝ Ս. Էջմիածնի իրավական և սոցիալ-տնտեսական վիճակի մանրամասն պատկերը:*

*Հրատարակությունն ունի առաջաբան, ուսումնասիրություն, ծանոթագրություններ, օտար բառերի ու եզրույթների բառարան, օժանդակ ցանկեր: Հրատարակվում է «Տնտեսական պատմության վավերագրեր» մատենաշարով և նախատեսված է հայագետների, տնտեսական պատմության մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակության համար:*

ՀՏԴ 271.72-9
ԳՄԴ 86.373.2

ISBN 978-9939-897-17-2
DOI 10.57155/RMJG4729

© Մաշտոցյան Մատենադարան, 2022
© Օհանյան Հրանտ, 2022

# ԱՌԱՋԱԲԱՆ

Սիմեոն Ա. Երևանցու (ծն. 1710 թ., կաթողիկոս՝ 1763-1780 թթ.) «Ջամբռ»[1] աշխատությունը հայագիտության բազմապիսի հարցերի ուսումնասիրման կարևոր սկզբնաղբյուրներից է: Նա իր հայրապետության շրջանում մեծ տեղ է հատկացրել կաթողիկոսարանի վարած գրագրությանը և փաստաթղթեր կազմելու գործին: Սիմեան Երևանցու օրոք կանոնավոր կերպով գրանցվել է պաշտոնական նամակագրությունը, հատուկ ուշադրություն է դարձվել դրանց պատճենների պահպանմանը: Սիմեոն Երևանցու օրոք սկսվել է Մայր Աթոռի դիվանի կանոնակարգումը և այդ վավերագրերի հիման վրա էլ գրվել է «Ջամբռ»-ը:

1873 թ. հրատարակությունից ի վեր արժեքավոր այս երկը եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, ունեցել է ռուսերեն ու անգլերեն թարգմանություններ և աշխարհաբար փոխադրությամբ հրատարակություններ, այդուամենայնիվ, կարծում ենք, որ բնագիրը տակավին կարոտ էր նոր՝ գիտաքննական հրատարակության: Դա նկատի ունենալով՝ դեռևս 1984 թ. լույս տեսած «Տնտեսական պատմության վավերագրեր» հայագիտական մատենաշարի առաջին հատորում Լևոն Խաչիկյանը և Հակոբ Փափազյանը, ուրվագծելով հետագա աշխատանքները, ներառել են նաև Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ի բնագրի նոր հրատարակությունը, որն օժտված կլիներ ներածականով և ծանոթագրություններով[2]: Հուսով ենք, որ բնագրի այս նոր՝ լրացված և ամբողջացված հրատարակությամբ հաջողվել է իրագործել մեծանուն գիտնականների պատգամը:

Երկի գլուխներում ներկայացված են Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը՝ Հայոց հայրապետների գահակալումը, եկեղեցական թեմերը, նվիրապետական աթոռները (Աղվանից, Աղթամարի և Կիլիկիո), Մայր Աթոռի իրավունքները հաստատող օտար տիրապետողներից ստացած հրամանա-

[1] «Ջամբռ» բառը համարվում է փոխառություն ֆրանսերենից (ֆրանս. Chambre), նշանակում է սենյակ, դիվան (դիվանատուն):

[2] *Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու Հաշվետումարը*, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի և Հակոբ Փափազյանի, Երևան, 1984, էջ 7:

գրեր, կալվածագրեր ու վանական տնտեսությունները: Հիրավի, բացառիկ են «Ջամբռ»-ի տնտեսական տեղեկությունները հողատիրության տեսակների, հարկատվության, վանքապատկան հողային տիրույթների և այլ ունեցվածքի ու ջրատիրության վերաբերյալ: Կատարված անհելի աշխատանքի շնորհիվ, հարուստ նյութերով հագեցած սկզբնաղբյուրային այս շտեմարանն իր կարևորությունը բնավ չի կորցրել ժամանակակից ուսումնասիրությունների համար:

«Ջամբռ»-ի ձեռագիր մատյանը ունի առանձնահատկություններ, ինչը պայմանավորված է բնագրի կառուցվածքով: Գրքեթե յուրաքանչյուր գլխում կան բազմաթիվ չգրված էջեր, որոնց թիվը երբեմն անցնում է հարյուրից: Պարզ է, որ դրանք լրացնելու համար են թողնվել: Այդ հարցի տեսանկյունից նախ անդրադարձել ենք երկի ստեղծման նպատակներին և ժամանակին, որի հիման վրա էլ ներկայացրել ենք լրացումների ընդհանուր պատկերը: Այդպիսով, Սիմեոն Երևանցի կաթողիկոսն իր երկը շարադրել է շուրջ տասը տարվա ընթացքում և այն պետք է թվագրել 1765-1775-ով:

«Ջամբռ»-ն առանձնանում է հայ մատենագրության մեջ նաև օգտագործված աղբյուրների բազմազանությամբ: Դրանք են՝ հայ պատմագրական երկերը և հայերեն, վրացերեն, պարսկերեն, օսմաներեն վավերագրերը: Սիմեոն Երևանցին շատ դեպքերում նշում է հայ պատմիչների անունները, որոնց երկերից օգտվել է: Բայց թե նա ինչ մոտեցում է ցուցաբերել իր աղբյուրներից օգտվելիս, արդյոք հայ պատմագրական երկերից մեջբերումները նույնական են, թե լրացված կամ խմբագրված են, փորձել ենք պարզել բնագրերի համեմատական հատվածների միջոցով:

Աղբյուրների մյուս խումբն արխիվային փաստաթղթերն են, որոնք գտնվել են ինչպես Մայր Աթոռի դիվանում, այնպես էլ հայթայթվել են այլ վանքերից: Մեծ թիվ կազմող կոնդակները, հրովարտակները, կալվածագրերը, համախոսականները և դիվանական այլ թղթեր կանոնակարգվել, խմբավորվել, ծանոթագրվել են, որոնց հիման վրա էլ ներկայացվել են «Ջամբռ»-ում: Սիմեոն Երևանցին կատարել է հսկայական աշխատանք, որը, նաև իր ծավալուն լինելու հետևանքով, զերծ չէ ժամանակագրական կամ բովանդակային որոշ անճշտություններից: Նման դեպքերը ծանոթագրել ենք: Երկի արխիվային մասը բացառիկ է նաև նրանով, որ կան վավերագրեր, որոնց բովանդակությունը պահպանվել է «Ջամբռ»-ի միջոցով:

Մատենադարանում են գտնվում «Ջամբռ»-ի երկու (մեկն ամբողջական, մյուսը՝ պակասավոր) ինքնագիր ձեռագրերը, որոնց անդրադարձել ենք կառուցվածքային առանձնահատկությունների տեսանկյունից: ՄՄ 978 ձեռա-

գրում բնագիրն ամբողջական է, իսկ 4592-ը՝ նրա մի մասն է միայն: Այդ երկու ձեռագրերի համեմատությամբ ի հայտ եկան որոշ սեղմ հատվածներ, որոնք, կարծում ենք, պատահաբար են դուրս մնացել հիմնական ձեռագրից, քանի որ բովանդակության շարունակությունն են կազմում կամ լրացնում են այն: Դրանք համապատասխան նշումով և ծանոթագրությամբ ներառել ենք հրատարակվող բնագրի մեջ:

Հայ մատենագրության մեջ տարածում գտած ավանդույթի համաձայն՝ «Ջամբռ»-ի պատմական մասը սկսվում է Հայաստանում քրիստոնեության հաստատմամբ: Գրիգոր Լուսավորչից սկսած՝ թվարկված են հայոց բոլոր կաթողիկոսները: Թեև այդ ցանկը հիմնականում համապատասխանում է ընդունված արդի կարգին, այդուհանդերձ, առկա են նաև տարբերություններ, մասնավորապես՝ աթոռակալման թվականների վերաբերյալ, ինչն, ինքնին, հետաքրքրական է[1]: Առանձին ենթագլուխներ են նվիրված ԺԷ. դարից մինչև իր՝ Սիմեոն Երևանցու ժամանակն աթոռակալած հայրապետների գործունեությանը և բնագրի առանձնահատկություններից է այն, որ ենթագլուխներից վերջինը նվիրված է հենց իր՝ Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի գործունեության հիմնական դրվագներին: Այդպիսով, սակայն, բաց է մնում նրա վաղ շրջանի գործունեությունը, որին և անդրադարձել ենք մեր ուսումնասիրության մեջ՝ որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ կատարելով երկի տեղեկությունների հիման վրա:

«Ջամբռ»-ի տնտեսական մասը, որը հիմնված է հրովարտակների և կալվածագրերի վրա, ամփոփում է ԺԷ.-ԺԸ. դարերի տնտեսական հարաբերություններին առնչվող բացառիկ տեղեկություններ, որոնք վերաբերում են վանական-եկեղեցական հողատիրությանը, վանքապատկան տնտեսություններին և ստացվող եկամուտներին, մասնավոր տիրույթներին և այլ սեփականության ստացման հարցերի[2]: «Ջամբռ»-ի տնտեսական առանցքը վանականեկեղեցական հողատիրությունն է, որն իր առանձնահատկություններով տարբերվում էր հողատիրության տեսակների մեջ: Ամենաէականը մուաֆության, այսինքն՝ պետական հարկերից ազատված լինելու հանգամանքն էր,

[1] «Ջամբռ»-ի տեղեկությունների հիման վրա աշխատության վերջում ներկայացրել ենք Հայոց կաթողիկոսների գահացանկը՝ վերականգնելով հայրապետների աթոռակալման տարեթվերը:

[2] Այդ տեղեկությունները լրացվում և ամբողջացվում են Մատենադարանի պարսկերեն վավերագրերով: Տե՛ս **Քրիստինե Կոստիկյան**, «Հայոց Եկեղեցու իրավական և սոցիալ-տնտեսական դրության հարցերն ըստ Մատենադարանի ԺԷ.-ԺԸ. դարերի պարսկերեն վավերագրերի», *Էջմիածին*, հ. Գ, 2018, էջ 68-86:

քանի որ հողային և այլ ստացվածքները հիմնականում նվիրվում էին (վակֆ) եկեղեցուն և այդ իրավունքի հիման վրա դրանք այլևս օտարման ենթակա չէին ու ազատվում էին պետական հարկերից: Այն, սակայն, միօրինակ երևույթ չէր և կարող էր լինել ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի[1]:

Թեև Մայր Աթոռի այդ իրավունքը պարբերաբար հաստատվել է պարսից տիրակալների հրամանագրերով, սակայն, չպետք է կարծել, որ օտար տիրապետողները բարեխղճորեն պահպանել են այն: «Ջամբռ»-ում ներկայացված Վաղարշապատ գյուղի վերաբերյալ պատմական ակնարկը բավարար է պատկերացում կազմելու համար, թե դարերի ընթացքում որքան շատ են եղել այդ գյուղի նկատմամբ ոտնձգությունները՝ չնայած նրան, որ դեռևս 1431 թ. այն գնվել և նվիրաբերվել է Մայր Աթոռին[2]: Հայոց կաթողիկոսները բազմիցս, ժամանակի հրամայականից ելնելով, ստիպված էին նորանոր դիմումներով պարսից շահերից հրովարտակներ ստանալ և վերականգնել Ս. Էջմիածնի իրավունքները: Ուշագրավ է 1617 թ. պարսից շահ Աբաս I-ի հրովարտակը, որով թեև հաստատվում է Մայր Աթոռի մուաֆության իրավունքը, սակայն այն նաև պարտավորեցրել է պարսից արքունիք վճարել հսկայական մի գումար՝ տարեկան 100 թուման: Միայն 1629 թվականին է Մովսես Սյունեցի կաթողիկոսին հաջողվում շահ Սեֆիից ստանալ հրովարտակ, որով չեղարկում է այդ ծանր հարկի վճարումը[3]: Պարսկական կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում ավելի վտանգավոր էին դառնում տեղական օտարազգի պաշտոնյաները, հատկապես խաները, որոնց հետ ստիպված էին հաշվի նստել հայոց կաթողիկոսները: 1759 թ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսը դիմում է Երևանի Հուսեյն Ալի խանին և պարսից շահերի նախորդ հրովարտակների հիման վրա նրանից ստանում է 14 կետից բաղկացած մի փաստաթուղթ, որով վերահաստատվում է Մայր Աթոռի մուաֆության իրավունքը՝ Ս. Էջմիածնին և այլ վանքերին պատկանող հողերից հարկեր գանձելու իրավունքով հանդերձ[4]:

Տնտեսական հարաբերությունների կարևորագույն խնդիրներից մյուսը Մայր Աթոռի իրավունքների պաշտպանությունն էր այն համայնքների նկատմամբ, որոնք տասանորդ հարկ էին վճարում: Դրանց թիվը պատմական տար-

---

[1] Տե՛ս **Համլետ Թորոսյան**, *Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում*, Երևան, 2007, էջ 108-110:

[2] Տե՛ս *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Կալվածագրեր*, պրակ առաջին, կազմեց Հակոբ Փափազյանը, Երևան, 1968, վավ. 5, էջ 66 (այսուհետև՝ *ՄՊՎ*):

[3] *ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 91, վավ. 11:

[4] *Ջամբռ*, էջ 176:

բեր ժամանակաշրջաններում նկատելիորեն փոփոխվել է: 1431 թ. Գրիգոր Մակվեցու ձեռք բերած գյուղերի մասին տեղեկությունները (դրանք էին՝ Վաղարշապատ, Աշտարակ, Բաթրինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաջլու, Մուղնի)[1] լրացվում են «Ջամբռ»-ի տեղեկություններով, որի համաձայն Մայր Աթոռը ձեռք է բերել Դիբաքլուն (1585 թ.), ԺԷ. դարում՝ մաս-մաս Օշականը, ապա Մաստարան (ԺԷ.-ԺԸ. դդ.) և Ֆռանկանոցը (1655 թ.): Սակայն այդ բնակավայրերի թիվը պարբերաբար փոփոխվել է: Այսպես, եթե ԺԷ. դարում հիշատակվում է էջմիածնապատկան 23 գյուղ, ապա 1725 թ. դրությամբ դրանք ընդամենը հինգն էին[2]: 1735 թ. Աբրահամ Կրետացու (1734-1737) ջանքերով և Նադիր շահի հրովարտակով վերադարձվել են Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆռանկանոց, Քիրաջլու, Դիբաքլու, Հալաբի գյուղերը[3], իսկ Սիմեոն Երևանցու օրոք Մայր Աթոռին էին պատկանում հետևյալ բնակավայրերը՝ Վաղարշապատը, Օշականը, Ֆռանկանոցը, Մաստարան, Քիրաջլուն, Մուղնին, Դիպակլուն, Քեշիշքենդը, Նորագյուղը, Նորքը, Եղվարդը, Յայճին, Ամիրի գյուղը, Մելիքի գյուղը, Բաթրինջը, Բոխենիսը, Ծոպանիսը, Ղարաղոյունլուն, Աշտարակը, Աղավնատունը, Նորագավիթը, Բյուրականը, Հաջիլարը: Որոշ տնտեսություններ եղել են նաև Վրաստանում: 1657 թ. վրաց Ռոստոմ թագավորը նվիրաբերել է Նախեդուռ գյուղը: Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի (1655-1680) օրոք ձեռք է բերվել Թամամլուր գյուղը (Կախեթ), նաև խանութներ Թիֆլիսում[4]:

Մայր Աթոռի տնտեսական գործունեության հենքը վանական-եկեղեցական տնտեսություններն էին՝ վարելահողեր, այգիներ, պարտեզներ, բանջարանոցներ, արոտավայրեր, կալատեղեր, ջրաղացներ և այլն: Վանական տնտեսությունների հիմնական ճյուղերն էին հողագործությունը՝ ցորենի, կորեկի, քունջութի, ինչպես նաև՝ բրնձի, բամբակի մշակությունը, լայն տարածում ունեին նաև խաղողագործությունը, անասնապահությունը: Տնտեսության զարգացման և աշխուժացման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել ոռոգման համակարգի զարգացումը: Հակոբ Ջուղայեցի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսների օրոք կարգի է բերվել և զարգացել ոռոգման համակարգը, լայն տարածում է ստացել հատկապես արտեզյան ջրերի

---

[1] *ՄԴՎ*, պրակ առաջին, էջ 66, վավ. 5:

[2] **Հակոբ Փափազյան**, «Վանական կալվածքների սեփականատիրության մի քանի առանձնահատկություններ», *Բանբեր Մատենադարանի*, № 10, 1971, էջ 243:

[3] *ՄԴՎ*, պրակ չորրորդ, էջ 33, վավ. 8:

[4] *Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր*, պրակ 1, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց՝ Հար. Աբրահամյանը, Երևան, 1941, էջ 18-19:

օգտագործումը, բարեկարգվել են եղած գետնափոր ջրերի համակարգերը, կառուցվել են նորերը[1]: Ջրաղացների բարեկարգումը և կառուցումը խթանել է հատկապես բամբակի մշակումը: Ջրամբարների և ջրանցքների նորոգման վկայությունները փաստում են Արարատյան դաշտում տնտեսության աշխուժացման մասին: Ջրատիրությունը և ջրօգտագործման իրավունքը, որը ևս պարբերաբար ենթարկվել է ոտնձգությունների, «Ջամբռ»-ում ներկայացված են դրանք հավաստող համապատասխան կալվածագրերով:

Տնտեսական հարաբերությունների տեսանկյունից ուշագրավ է Մայր Աթոռի կողմից հայ ազգաբնակչությանը տրամադրած փոխառությունների երևույթը, որի դիմաց համայնքն ավելացրել է իր հարկային պարտավորությունները: Աստվածատուր Ա. Համադանցի կաթողիկոսի օրոք՝ թուրքական արշավանքից հետո, դժվարին վիճակում հայտնված հայ գյուղացիները, 150 թուման փող են խնդրել կաթողիկոսից՝ պարտավորվելով այսուհետ տասանորդի փոխարեն վճարել բերքի մեկ հինգերորդ մասը, որը և հաստատվել է Երևանի շեյխիսլամ Մոլա Մահմուդ Հուսեյնի կողմից[2]: Այդպիսի մի օրինակ էլ վերաբերում է Ծռանկանց գյուղին, որի բնակիչները 40 թուման գումար փոխառություն են վերցրել Աբրահամ Բ. կաթողիկոսից՝ ավելացնելով իրենց հարկային պարտավորությունները[3]: Բազմաթիվ են նաև այն դեպքերը, երբ Մայր Աթոռը գրավի դիմաց դրամ է տրամադրել[4]: Տնտեսական եկամուտների աղբյուր են հանդիսացել նաև քարվանսարա-հյուրանոցների վարձակալման հանձնելը, խանութ-արհեստանոցները, բաղնիքները, որոնք ապահովել են բարձր եկամուտներ[5]: Սիմեոն Երևանցու օրոք լայն կիրառում է գտել նաև վանական կալվածքները վարձակալության հանձնելու, դրամական փոխառություններ տրամադրելու գործելակերպը, որի վերաբերյալ պահպանվել են փաստաթղթային բազմաթիվ վկայություններ[6]:

Ինչպես տեսնում ենք՝ վանական տնտեսությունները երկրի հիմնական տնտեսական գործոններից էին և Մայր Աթոռին ու վանքերին պատկանող գյուղերը գործուն կերպով ներգրավված են եղել երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններում:

---

[1] **Համլետ Թորոսյան**, *Էջմիածնի վանական տնտեսությունը*, էջ 143-198:
[2] *Ջամբռ*, էջ 151-152:
[3] Նույն տեղում, էջ 113:
[4] *Կալվածագրեր*, կազմ. Հար. Աբրահամյան, էջ 21:
[5] **Համլետ Թորոսյան**, *Էջմիածնի վանական տնտեսությունը*, էջ 235-236:
[6] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 72, 73, թղթ. 5, վավ. 16 և այլն:

## ա. Սիմեոն Երևանցու գործունեությունը մինչ կաթողիկոս ընտրվելը
(համառոտ ակնարկ)

*Սիմեոն Երևանցին ծնվել է 1710 թ., ընտանիքի մասին հայտնի է ձեռագրերից մեկում թողած իր հիշատակարանից, ըստ որի՝ ծնողներն են եղել Կարապետը և Գայանեն[1], ունեցել է երեք եղբայր՝ Մելիքսեթ, Հարություն և Ղազար[2]: Թեև կյանքի վաղ շրջանի մասին տեղեկությունները շատ չեն, բայց արժանահավատ է այն վկայությունը, որ նախնական կրթությունը ստացել է Մայր Աթոռի դպրոցում՝ աշակերտելով ժամանակի հայտնի աստվածաբան Հովսեփ Վարդապետին[3] և ապագա կաթողիկոս Հակոբ Շամախեցուն[4]: Հաջողությամբ ավարտելով ուսումը՝ նշանակվում է նույն դպրոցի ուսուցիչ: Նրա աշակերտներից են եղել նշանավոր եկեղեցականներ՝ Հովսեփ Արղության (ռուսահայոց թեմի առաջնորդ, 1800-1801 թթ. ընտրված, բայց չօծված կաթողիկոս), Դավիթ Ե. (1801-1807), Դանիել Ա. (1807-1808)[5], Եփրեմ Ա. Ձորագեղցի (1809-1830) կաթողիկոսները, եպիսկոպոսներ, սարկավագներ[6] և այլ գործիչներ[7]:*

---

[1] Մայրը՝ Գայանեն, մահացել է 1752 թ. հուլիսի 20-ին: Պահպանվել է գերեզմանի տապանաքարը, որը, ըստ երևույթին, տեղադրվել է ավելի ուշ՝ Սիմեոն Երևանցու կաթողիկոսության շրջանում: Մինչև վերջերս հրատարակիչների ուշադրությունից վրիպած արձանագրությունն է. «Ողորմեա տէր քոյ աղախնոյս Գայիանեայ խղճուկ այրւոյս յանէ և յորդւոյ զրրկելոյս յօտար վայրոջ մենացելոյս ծնօղիս վեհին քոյդ ծառայի հայրապետին Սիմէօնի, որում կարօտ մինչ մրնացի տեսութեամբ քով իղձն իմ լցցի թվին ՌՄԱ. (1752), յուլիսի Ի. (20)» (**Ա. Հարությունյան**, *Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները*, Ս. Էջմիածին, 2016, էջ 172, արձ. 297):

[2] ՄՄ 1818 ինքնագիր ձեռագրի հիշատակարանում Սիմեոն Երևանցին գրել է իր ընտանիքի մասին. «...զմարմնաւոր ծնօղս իմ՝ զԿարապետն և զԳայիանէն, և զեղբայրսն իմ՝ զՄելքիսեթեկն, զՅարութիւնն և զՂազարն, զորս ի յիշելն ձեր, յիշեալ լիջիք և դուք ի Քրիստոսէ՝ յԱստուծոյ մերմէ» *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հատոր Զ., խմբ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երևան, 2012, էջ 70:

[3] **Արթուն Հատիտյան**, «Սիմեոն Երևանցի (1710-1780)», *Էջմիածին*, 1972, ԺԲ, էջ 23:

[4] Ստեփան Կանայեանց, *Ցուցակ հայերէն ձեռագրերի Թիֆլիսի Ներսիսեան Հոգևոր դպրանոցի*, Թիֆլիզ, 1893, էջ 51, ՄՄ 26, Գաւազանագիրք, թերթ 211ա:

[5] *Դիւան հայոց պատմութեան*, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Գիրք Գ., Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրութեամբ և յաւելուածներով ու ծանօթութիւններով, Թիֆլիս, 1894, էջ ԿԶ:

[6] Այդ հոգևորականների մասին իր հիշատակարանում տեղեկություններ է թողել Եփրեմ Ձորագեղցին, տե՛ս «Արարատ», 1875, № 9, էջ 334:

[7] Հովհաննես (Իսահակ) եպիսկոպոս Գեղամացին, որը ևս եղել է Սիմեոն Երևանցու «ձեռնասուն» աշակերտներից՝ հետագայում ղեկավարելով Էջմիածնի տպարանի աշխատանքները, «Յետ որոյ՝ յիշեսջիք զհոգեծին որդեկն սրբազանիս մերոյ՝ զԻսահակ եպիսկոպոսն Գեղամացի. որ յամենայնի կարգավորիչ և տնօրինիչ է գործոյս և գործավարացն սորին անձանձիր աշխատեցմամբ», *Տօնացոյց*, աշխատասիրութեամբ Սիմէօնի կաթողիկոսի, հտ. 1-2, Էջմիածին,

Սիմեոն Երևանցու գործունեության նախնական շրջանը ժամանակագրական առումով համընկնում է իրեն նախորդած վեց կաթողիկոսների աթոռակալմանը, որոնց մասին տեղեկություններ կան «Ջամբռ»-ում: Ստորև կանդրադառնանք նրա գործունեության առանցքային դրվագներին:

1724 թ. Օսմանյան կայսրության տիրապետության տակ են անցնում Երևանը և Վաղարշապատը: Այդ իրողության ազդեցությամբ՝ Հայոց կաթողիկոսների ընտրության գործում վճռորոշ է դառնում Կ. Պոլսի Հայոց պատրիարքության դերը: Այդ հանգամանքը, որը քաղաքացիություն է ստացել Կարապետ Բ. Ուլնեցու (1726-1729) ընտրությամբ, բացասական է ներկայացված «Ջամբռ»-ում նաև այն առումով, որ եթե մինչ այդ Ամենայն Հայոց կաթողիկոսներն անմիջականորեն կամ իրենց նվիրակների միջոցով էին դիմում օսմանյան սուլթաններին, ապա այդուհետ՝ միայն Կ. Պոլսի պատրիարքների միջնորդությամբ: Սիմեոն Երևանցին փորձել է անձնային որակներով պայմանավորել այդ շրջադարձային իրողությունը՝ նշելով, որ Կարապետ Ուլնեցին «ամենից անտեղյակ էր, ծեր և պարզամիտ», մինչդեռ Կ. Պոլսի պատրիարք Հովհաննես Բաղիշեցին՝ «խորամանկ, կեղծավոր և խաբող»: Բնական է, որ սխալված կլինենք, եթե իրողությունները պայմանավորենք բացառապես կաթողիկոսի կամ պատրիարքի անձնական հատկանիշներով կամ վերջինիս նկրտումներով: Բայցևայնպես՝ այդ հարցում Սիմեոն Երևանցու բացասական վերաբերմունքն արտահայտված է այդպիսի զգացմունքայնությամբ:

Ինչպես հայտնի է՝ հետագա իրադարձությունները զարգանում են հօգուտ Պարսկաստանի: Օսմանյան զորքերի դեմ հաջող մարտեր մղելով Նադիր շահը ետ է նվաճում Արևելյան Հայաստանը: Այդ շրջանում գահակալում է Աբրահամ Բ. Խոշաբեցի (Մշեցի) (1730-1734) կաթողիկոսը, որի ընտրությունն, ի տարբերություն նախորդի, կատարվում է Մայր Աթոռում, ինչով և պայմանավորված՝ «Ջամբռ»-ում նա բնութագրված է որպես «առաքինի», «հեզ», «բարեբարո» և «աղոթասեր»: Նրան հաջորդում է Աբրահամ Գ. Կրե-

---

1774-1775, էջ 562: Մի շարք նորահայտ վիմագրեր լրացնում են այն աշակերտների թիվը, որոնք իրենց գործունեության ընթացքում ակտիվ մասնակցություն են ունեցել Էջմիածնի վանական կյանքում: Նրանց թվում էին՝ Հովհաննես վարդապետը, որը հիշատակվում է որպես Սիմեոն Երևանցու «ձեռնասունդ» աշակերտ. «Հանգո ընդ քո սիրելիս, զհոգի խղճուկ քո ծառայիս Յովհաննէս վարդապետիս, որ եմ ծնեալ յապրակունիս, մեծի վեհին Սիմէօնի ձեռնասունդ աշակերտիս, որ պտղալից չետես դեռ զիս, փոյթ թօթափումն էհաս ծաղկիս, թվին ումիե. (1776) և յօգոստոսի ժզ. (16)» (տե՛ս **Արսեն Հարությունյան**, *Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները*, էջ 182-183, արձ. 334), Սիմեոն սարկավագը, որի վերաբերյալ արձանագրությունը վկայում է, որ նա մահացել է 1777 թ. «Գթայ յոգիս Սիմէօնի սարկաւագիս մեծի վեհին Սիմէօնի նուաստագոյն սպասաւորիս, որ դեռաբոյս գոլով ի տիս լքի փութով ըզկեանս աստիս թվին ՌՄԻԶ. (1777) յունվարի ԺԳ. (13)», (էջ 183, արձ. 335):

տացին (1734-1737), որը, թեև վայելել է Նադիր շահի բարյացակամ վերաբերմունքը, սակայն այդ հանգամանքը, ըստ «Ջամբռ»-ի, որևիցէ ձևով չի նպաստել, որ այդ տարիներին բարենորոգումներ կատարվեն Ս. Էջմիածնում, իսկ դրա պատճառը, թերևս այն էր, որ կաթողիկոսը հաճախ պարսից շահի հետ էր լինում:

Սիմեոն Երևանցին հաջորդ կաթողիկոսների օրոք գործել է Մայր Աթոռում և, ինչպես կհամոզվենք, բարձր գնահատանքի արժանացել ու տարբեր կարևոր առաքելություններ կատարել: Այդ առումով ապագա կաթողիկոսի կենսագրության մեջ նշանակալի ձեռնարկումների մի կարևոր շրջափուլ են Ղազար Ա. Ջահկեցու (1737-1751) գործունեության տարիները: Հայ իրականության համար հակասական այդ ժամանակաշրջանում պարսկական իշխանությունները կամայականորեն ճնշումներ ու հալածանքներ են հարուցում հայոց կաթողիկոսների նկատմամբ: Ինչպես հայտնի է՝ Ղազար կաթողիկոսն անգամ հեռացվել է Սուրբ Աթոռից: Այդ անորոշ վիճակին մեծապես նպաստում էին արտաքին միջամտությունները, որոնք, անշուշտ, ուղեկցվել են նաև ներեկեղեցական սուր պայքարով[1]:

Ղազար Ջահկեցի կաթողիկոսի օրոք և նրա հանձնարությամբ՝ Սիմեոն Երևանցին նախ նշանակվում է Բայազետի նվիրակ Հարություն Ջուղայեցու օգնական: Գիտենք, որ որոշ ժամանակ պաշտոնավարելուց հետո նա վերադառնում է Ս. Էջմիածին և ձեռնադրվում սարկավագ[2]: Ապա, կրկին, որպես նվիրակի օգնական՝ Հարություն Ջուղայեցու հետ այս անգամ ուղևորվում է Հնդկաստան: Այստեղ Հարություն Ջուղայեցին 1743 թ. մահանում է, և հնդկահայ համայնքի խնդրանքով Ղազար Ջահկեցի կաթողիկոսը Սիմեոն Երևանցուն նշանակում է նրա փոխարեն[3]: Այդ նշանակումը պատահական համարել չի կարելի, քանի որ նվիրակները հանդես էին գալիս հոգևոր քարոզներով և պետք է պատրաստված ու հմուտ լինեին[4]: Պարզ է, որ Սիմեոն Երևանցու կրթվածությունը լիովին բավարարել է այդ պահանջը: Բացի դա՝ նվիրակը պետք է իր կերպարով և գործունեությամբ կարողանար թեմը պահել հոգևոր ազդեցության ներքո և հաջողեր հանգանակություններ հավաքելու գործում:

---

[1] **Միքայել Չամչեանց**, *Պատմութիւն հայոց*, հատոր Գ., Վենետիկ, 1786, էջ 818:
[2] *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ ԿԷ:
[3] **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած*, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, սյունակ 3493:
[4] **Խաչատուր Կանայան**, «Էջմիածնի նվիրակությունը ԺԸ. դարում», *Էջմիածին*, հ. Բ, 1977, էջ 49:

*Համաձայն «Ջամբռ»-ի՝ նվիրակը զգալի լիազորություններ ուներ, և համայնքը պետք է անտրտունջ ընդուներ կաթողիկոսի ուղարկած նվիրակին*[1]*:*

*Սիմեոն Երևանցին Հնդկաստանում թեև կարճատև (1743-1747), բայց արդյունավետ սպասավորեց՝ լավագույնս դրսևորելով հոգևոր գործչի իր բարձր որակները: Հայտնի է, որ հնդկահայ համայնքը տոգորված էր հայրենասիրական գաղափարներով և, ինչպես երևում է, նա, որպես Մայր Աթոռի ներկայացուցիչ՝ լավ ընդունելություն է գտել այնտեղ: Ակնհայտ է, որ Ս. Էջմիածնի նվիրակն ընդառաջ է գնացել հնդկահայ համայնքի ձգտումներին՝ պահպանել սերտ և ամուր կապեր մայր հայրենիքի հետ: Հետագայում համայնքի ֆինանսական օժանդակությամբ ապագա կաթողիկոսը մեծածավալ շինարարական աշխատանքներ և մշակութային ձեռնարկումներ է կատարել Մայր Աթոռում: Այդպիսով, հաջողելով իր առաքելությունը Հնդկաստանում և վերադարձի ճանապարհին լինելով նաև Նոր Ջուղայում՝ Սիմեոն Երևանցի նվիրակը մեծաթիվ և թանկարժեք նվիրատվություններով ճանապարհվում է Ս. Էջմիածին: Այդ հանգամանքները, ըստ երևույթին, տպավորել են Ղազար Ջահկեցուն: Վերադառնալուց անմիջապես հետո՝ 1747 թ., նա արժանանում է վարդապետական աստիճանի*[2]*:*

*Այդուհանդերձ, դեպքերի հետագա ընթացքից երևում է, որ ամեն ինչ չէ, որ հարթ է ընթացել կաթողիկոսի և նորընծա վարդապետի փոխհարաբերություններում: Խնդիրը ծագում է ներեկեղեցական հակասությունների պատճառով, որոնք ավելի են սրվում պարսկական իշխանությունների միջամտությունների հետևանքով: Եկեղեցու ներսում ծավալված պայքարի հետևանքով Ղազար Ջահկեցին հեռացվում և կաթողիկոս է ընտրվում Պետրոս Ղումկյալեցին (Քյություր, 1747-1748), որի օրոք Սիմեոն Երևանցի վարդապետը վարում էր Ս. Էջմիածնի ամբողջ գրագրությունը: Դա է համարվում պատճառը, որ Ղազար Ջահկեցին անհաշտ դիրքորոշում է ցուցաբերում վարդապետի նկատմամբ և վերստին հաստատվելով կաթողիկոսական գահին՝ սկսում է հետապնդումներ, իսկ նա, հետևելով իր ուսուցիչ Հակոբ Շամախեցու խորհրդին, հեռանում է Ս. Էջմիածնից՝ նախ Կարս, ապա՝ Կ. Պոլիս, որտեղ լավ ընդունելություն է գտնում*[3]*: Այստեղ անցկացրած տարիները մեծ նշանակություն և ազդեցություն են ունենում Սիմեոն Երևանցու կյանքում, նաև ստեղծագործական առումով: Այստեղ նա աչքի է ընկնում հոգևոր և հասարակական բուռն գործունեությամբ, իսկ նրա մտերմությունը տեղի ազդեցիկ*

---

1 *Ջամբռ*, էջ 96:

2 *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ ԿԸ:

3 Նույն տեղում, էջ ՀԱ:

Յաղուբ Ակնեցի աղայի հետ և նրանից ստացած աջակցությունը, հնարավորություն է տալիս զերծ մնալ Ղազար Ջահկեցու հնարավոր հետապնդումներից: Սիմեոն Երևանցու կյանքի կոստանդնուպոլսյան այս շրջանն արդյունավետ է լինում նաև կրթական առումով: Ըստ վկայությունների՝ վարդապետը հանդես է եկել փիլիսոփայական դասերով Պորփյուրի և Դավիթ Անհաղթի մասին[1], իսկ 1747 թ. սկսել է գրել փիլիսոփայական գործերի մեկնություններ, որոնք հայտնի են «Լուծմունք արտաքնոց» հավաքական անվամբ[2]:

Ապագա կաթողիկոսի կենսագրական ուղու հետաքրքիր դրվագներից է 1752 թ. Յաղուբ աղայի հետ մեծ շուքով կատարված ուխտագնացությունը Երուսաղեմ, որտեղ բազմաթիվ ճանաչված ու ազդեցիկ հոգևորականների ներկայությամբ Սիմեոն Երևանցի վարդապետը քարոզ է կարդում և ճանաչում է ձեռք բերում[3]: Բնավ պատահական չէր կարող լինել այդ հուշակը, քանի որ նա ոչ միայն վարժ էր քարոզ կարդալու գործում, այլև ինքը հեղինակել էր «Քարոզգիրք», որի շուրջ 100 քարոզները վերաբերում են հոգևոր տարբեր թեմաների[4]:

Հաջորդիվ Ս. Էջմիածնում աթոռակալում են Մինաս Ա. Ակնեցի (1751-1753) և Աղեքսանդր Բ. Բյուզանդացի (1753-1755) կաթողիկոսները, որոնց օրոք Իրանում սկսվում է անիշխանության և ներքին անկայունության շրջան: Այդ իրողության վերաբերյալ Սիմեոն Երևանցին գրում է, որ Նադիր շահի սպանությունից հետո «բարձաւ խսպառ թագաւորութիւն Պարսից, և երկիրս մատնեցաւ ի ձեռս ինքնագլուխ և աներկիւղ բռնաւորաց և անկաւ ի մեծ թշուառութիւնս»[5]: Այդ տարիներին է, որ Կ. Պոլսից վերադառնալուց հետո՝ ըստ Միքայել Չամչյանի՝ 1752 թ. հետո, իսկ ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ 1754 թ. սկզբներին, Սիմեոն Երևանցին ձեռնադրվում է եպիսկոպոս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում ի տարբերություն Մինաս կաթողիկոսի՝ արժանավոր աթոռակալ է հիշատակվում Աղեքսանդր կաթողիկոսին[6], տարեթվի հարցում, կարծում ենք, կարելի է հակվել Օրմանյանի տեսակետին:

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3494:

[2] **ՄՄ**, ձեռ. 1818:

[3] *Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ ՀԲ:

[4] **ՄՄ**, ձեռ. 2212, ամբողջական և մասնակի բազմաթիվ ընդօրինակումները Մաշտոցյան Մատենադարանի շուրջ ութ տասնյակ ձեռագրերում են: «Քարոզգրքի» և քարոզների ընդօրինակություններ պահվում են նաև Երուսաղեմի, Վիեննայի, Հալեպի, Թավրիզի, Պետերբուրգի և այլ ձեռագրապահոցներում (մեր ձեռքի տակ եղած ձեռագրացուցակների տվյալներով՝ շուրջ 30):

[5] ***Ջամբռ***, էջ 75:

[6] Նույն տեղում:

1755 թ. Սիմեոն Երևանցին կրկին վերադառնում է Կ. Պոլիս՝ շարունակելով գործել որպես Ս. Էջմիածնի նվիրակ ու փաստորեն նաև գլխավորում է այն պատվիրակությունը, որը պետք է հանդիպեր Կ. Պոլսի Հայոց պատրիարք Հակոբ Նալյանի հետ՝ Աղեքսանդր Բ.-ի մահվանից հետո կաթողիկոսի ընտրության հարցը քննարկելու նպատակով[1]: Հիշատակություններ կան, որ այդ շրջանում Սիմեոն Երևանցու գործունեությունը զուգորդվում է ակտիվ հոգևոր քարոզներով և պոլսահայ համայնքի հետ կազմակերպված բազմաթիվ հանդիպումներով: Դրա շնորհիվ՝ նա ամենայն մանրամասնությամբ ծանոթանում է Կ. Պոլսի և մոտակա թեմերի խնդիրներին ու ցուցաբերած նրբանկատության շնորհիվ մեծ հեղինակություն է ձեռք բերում համայնքում[2]: Ի վերջո, 1755 թ. Կ. Պոլսում կաթողիկոս է ընտրվում Սահակ Կեղեցին (Ահագին) (1755-1759), որը սակայն ո՛չ օծվում, ո՛չ էլ գալիս է Մայր Աթոռ: Այդ անորոշ վիճակում հոգևոր գործերը վարում էր ապագա կաթողիկոս Հակոբ Շամախեցին[3]: Նոր կաթողիկոսի ընտրությունից հետո, ինչին ընդդիմացել էր Սիմեոն Երևանցին, նա անցնում է Զմյուռնիա, որտեղ գտնվում էր նրա մտերիմ Աբրահամ վրդ. Աստապատցին[4]: Հայտնի է, որ այստեղ ևս կրթական և ուսումնական գործունեություն է ծավալում՝ մասնակցելով տեղի հայկական տպարանի ստեղծման աշխատանքներին[5]:

Հետագա տարիների իր գործունեության ընթացքում Սիմեոն Երևանցին շարունակում է աշխատանքները Կ. Պոլսում և նրա ջանքերով ու ակտիվ քայլերի շնորհիվ է, որ 1759 թ. օգոստոսին Կ. Պոլսում գումարվում է նոր ժողով, որը չեղյալ է հայտարարում Սահակ Ահագինի ընտրությունը և կաթողիկոս է ընտրվում Հայրապետական տեղապահ ու կաթողիկոսության գործերը փաստացի վարող Հակոբ Շամախեցին[6], որին նա անվանում էր «զհոգևոր ծնօղն իմ և զվարժապետս»[7]: Նույն թվականին նա շտապում է Ս. Էջմիածին՝ հանդիպելու Շամախեցու հետ, սակայն երկար չի մնում այնտեղ: Նորընծա կաթողիկոսը նրան, որպես Կ. Պոլսում ընդունելի անձի, որպես նվիրակ կրկին ուղարկում է այնտեղ:

---

[1] **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3452-3453:

[2] Ուշագրավ մի դրվագ է, որ երբ մարդիկ կտակում էին իրենց ունեցվածքը Մայր Աթոռին՝ Սիմեոն Երևանցի եպիսկոպոսը մանրակրկիտ քննությամբ աշխատում էր պարզել, արդյոք հանգուցյալը ժառանգներ թողել է, արդյոք նրանք կարիքի մեջ են և նման դեպքերում իր պատասխանատվությամբ նրանց բաժին էր հանում այդ կտակից (*Դիւան հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ ՀԷ):

[3] **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3453:

[4] **Միքայել Չամչեանց**, *Պատմութիւն հայոց*, էջ 866:

[5] **Արշակ Ալպոյաճյան**, «Զմյուռնիո տպարանները», *Պատմա-բանասիրական հանդես*, № 2(25), 1964, էջ 71:

**6 Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3473:

[7] ՄՄ, ձեռ. 1818, 135բ:

*Դա լինում է ապագա կաթողիկոսի վերջին առաքելությունը Կ. Պոլսում, քանի որ 1763 թ. Հակոբ Շամախեցու մահից հետո նա Ս. Էջմիածնում ընտրվում և ապրիլի 20-ին օծվում է Հայոց կաթողիկոս[1]: Աներկբա է, որ Սիմեոն Երևանցին ընդունելի հոգևորական էր էջմիածնականների համար՝ նախ Մայր Աթոռից էր, իսկ նրա գործունեությունն ու ձեռք բերած հեղինակությունը Կ. Պոլսի հայության շրջանում հայտնի էր: Նորընծա կաթողիկոսը կարողացել է փոխհարաբերություններ հաստատել Երևանի Հուսեյն Ալի խանի (1759-1783 թթ.) և վրաց Հերակլ II թագավորի (Քարթլի-Կախեթի, 1762-1798) հետ, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Պարսկաստանում կենտրոնական իշխանության թուլացմամբ պայմանավորված՝ տեղի իշխողները դարձել էին կիսանկախ: Իր հերթին՝ Ռուսական կայսրությունը փորձում էր մուտք գործել տարածաշրջան: Աներկբա է, որ ժամանակաշրջանի իրադարձություններն այս կամ այն կերպ առնչվել են նաև Հայոց եկեղեցու հետ: Սիմեոն Ա. Երևանցուն հաջողվել է հոգևոր-եկեղեցական գործերին համահունչ ծավալել մշակութային, լուսավորչական և բարենորոգչական ակտիվ գործունեություն, որի հիմնական դրվագները ներկայացված են հենց «Ջամբռ»-ի բնագրում:*

*Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսը մահացել է 1780 թ. հուլիսի 26-ին, և նրա դին ամփոփվել է Ս. Գայանե եկեղեցու հարավկողմյան գավթում[2]: Սիմեոն կաթողիկոսի մահվամբ կարելի է ամփոփել Արևելյան Հայաստանի և Ս. Էջմիածնի պատմության մի կարևոր շրջափուլ՝ ի դեմս բեղուն ստեղծագործական գործունեություն ծավալած և պատկառելի գրական ժառանգություն թողած գործչի:*

[1] Սիմեոն Երևանցին ավարտել էր իր պաշտոնավարումը և արդեն վերադառնում էր Էջմիածին, երբ ճանապարհին իմանում է Հակոբ Շամախեցու մահվան լուրը (ՄՄ, ձեռ. 2766, 21բ):
[2] Տապանաքարի վրայի արձանագրությունը տե՛ս *Վիմական տարեգիր, ցուցակ ժողոված ոյ արձանագրութեանց Հայոց*, կազմեաց Կարապետ Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 214:

## բ. «Ջամբռ»-ի ստեղծման նպատակները, ժամանակը և լրացումների խնդիրը

*Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի գործունեության ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության կարևոր շրջափուլերից էր: Լինելով Իրանի տիրապետության ներքո՝ Արևելյան Հայաստանը կրում էր այդ պետությունում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումների բացասական ազդեցությունը: Դրանցից անմասն չէր նաև Ամենայն Հայոց կաթողիկոսությունը: Հայտնի է, որ Սիմեոն Ա. Երևանցու կաթողիկոսական իրավունքները հաստատվել են պարսից տիրակալ Քերիմ խանի (1763-1779) հրովարտակով: Դրանով հաստատվել են նաև Հայոց եկեղեցու մի շարք այլ իրավունքներ. ա) հարկային պարտավորությունների համար չհաշվառել եկեղեցուն պատկանող գույքը և հողագործական արտադրանքը, բ) ապահովել եկեղեցուն տրվելիք հարկերի գանձումը, գ) Ս. Էջմիածնին վերադարձնել այն հողատարածքները, այգիները, ջրաղացները և այլն, որոնք խլվել են[1]: Այդ հրովարտակի բովանդակությունից պարզ է, որ կենտրոնական իշխանությունների թուլացման պայմաններում տեղի իշխանավորները հաճախ են կամայականորեն գործել, ինչը հանգեցրել է եկեղեցու իրավունքների խախտմանը և որպես հետևանք՝ նաև ունեցվածի կորստի: Բնական է, որ նման երևույթների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է եղել վերահաստատել այդ իրավունքները: Իսկ դա անելու համար հարկ էր ունենալ համապատասխան փաստաթղթեր, որոնք կհաստատեին պետության կողմից տրված իրավունքները: Ակնհայտ է, որ նման պայմաններում կարևոր էր հայ հոգևոր կենտրոնի կարգավիճակի և ունեցվածքի պաշտպանության հարցը: Ահա այդ խնդիրներն են, որ գտնվել են կաթողիկոսի ուշադրության կենտրոնում:*

*«Ջամբռ»-ը հայ պատմագրության մեջ իր բնույթով բացառիկ գործերից է, որոշակի ծրագրով կազմված պատմական և դիվանական նյութերի յուրահատուկ ժողովածու: Սիմեոն Երևանցին իր գործը համարել է հիշատակարան: Այն ձեռնարկելը նպատակ ուներ առաջին հերթին ամրապնդել կաթողիկոսության տնտեսական իրավունքները: Հետևաբար՝ աշխատանքի հիմքում դրվել են պարսից և օսմանցի իշխողների կողմից ստացված իրավական փաստաթղթերը:*

*Երկի ստեղծման մասին առաջաբանում Սիմեոն Երևանցին գրում է, որ թեև իր նախորդները կատարել են բազմաթիվ կարևոր գործեր Մայր Աթոռի*

---

[1] *ՄԴՎ*, պրակ չորրորդ, էջ 91-95, վավ. 49:

համար, սակայն «ո՛չ ոքն էր արարեալ զփոյթ ի գիր արկանել և արձանացուցանել զորպիսութիւնս Սրբոյ Աթոռոյս և զպարագայսն սորին, գոնէ և զառ ինքեամբք եղեալ պատահմունսն, յորոց ոչ սակաւ օգուտք յառաջանային յետնոցս»[1]: Այդ հանդիմանությունից պարզ է դառնում, որ կաթողիկոսը բախվել է նյութերի հայթայթման դժվարությունների: Սիմեոն Երևանցու դիտարկումը, որ նախորդ կաթողիկոսները հոգ չեն տարել կարևոր վավերագրերի մասին, այդուհանդերձ, կարող է վկայել այն մասին, որ դրանք չեն կանոնակարգվել, քանի որ հայրապետն ինքը բազմիցս հիշատակում է, որ իր նախորդները թողել են «արքունական և դատավորական» փաստաթղթեր: Եվ այդ հանգամանքը բացահայտում է գործին ձեռնամուխ լինելու կարևոր նպատակներից մեկը ևս, այն է՝ կանոնակարգել դիվանի փաստագրական նյութերը: Հետևաբար՝ «Ջամբռ»-ի ստեղծման հանգամանքներն առնչվում են Մայր Աթոռի դիվանի կանոնակարգման և վավերագրերի ուսումնասիրման հետ: Բնական է, որ դա պահանջել է տևական ջանքեր:

Ս. Էջմիածնի իրավունքները և տնտեսական ունեցվածքը հաստատող վավերագրերն ի հայտ բերելու կարևոր գործը ևս ի սկզբանե եղել է «Ջամբռ»-ի նպատակներից, և դրանք համակարգային ձևով ներկայացված են առանձին գլուխներով: Նշենք, որ այդ աշխատանքների ընթացքում օտարալեզու վավերագրերը դասակարգվել են թվահամարներով: Հետաքրքիր է, որ «Ջամբռ»-ում պարսից շահերի հրովարտակները համարակալված չեն: Պատճառը, թերևս, այն է, որ դրանք պետք է հետագայում համալրվեին, ուստի վերջնական համարակալումը հետաձգվել է: Ամեն դեպքում՝ դրանց թվահամարների համար փակագծերում ազատ տեղ է թողնված ձեռագրում: Այլ է պատկերն օսմանյան պաշտոնյաներից ստացված հրամանագրերի դեպքում, որոնք համարակալված են[2]: Չենք բացառում նաև, որ կանոնակարգվելուց հետո դիվանում տվյալ փաստաթղթերը պահվել են «Ջամբռ»-ում առկա համարակալմամբ:

«Ջամբռ»-ում մեծ տեղ է հատկացված Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում Ամենայն Հայոց կաթողիկոսության զբաղեցրած տեղին ու դերին: ԺԸ. դարի երկրորդ կեսին Հայաստանը գտնվում էր օսմանյան և պարսկական տիրապետության ներքո ու այդ պատճառով երկատված էր նաև հոգևոր-եկեղեցական առումով: Ս. Էջմիածնի, Աղթամարի, Կիլիկիո կաթողիկոսությունների և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարանների մրցակցությունը մեծապես խարխլել էր Հայոց կաթողիկոսների դիրքերը, և կարևոր էր

[1] Ջամբռ, էջ 48:
[2] ՄՄ 978, 433ա-437ա:

*ներկայացնել Մայր Աթոռի գերագահությունն, ինչու ոչ՝ հեղինակություն ունեցող հայրապետի գործով: Իսկ Սիմեոն Երևանցին ուներ այդ հեղինակությունը: Պատահական չէ, որ նա մեծ տեղ է հատկացրել այդ հարցին՝ «Ջամբռ»-ում մի ամբողջ գլուխ նվիրելով մյուս աթոռների նկատմամբ Մայր Աթոռի գերադասության հիմնավորմանը[1]: Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ ձեռագիր մատյանը նախատեսված էր որպես ուղեցույց և օգտակար ձեռնարկ կաթողիկոսների համար՝ նվիրապետական աթոռների հետ փոխհարաբերություններում:*

*Շատ հավանական է, որ «Ջամբռ»-ը գրելու մտահղացումն ի սկզբանե եղել է կաթողիկոսի ծրագրերում, քանի որ դեռևս 1740-ական թթ. նա վարել է Մայր Աթոռի գրագրությունը և զգալի չափով ծանոթ էր դիվանին: Եվ պատահական չէ, որ կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո նրա կարգադրությամբ սկսում են կազմել մատյաններ, որտեղ մուծվում են կաթողիկոսարանի հետ կապված մտից և ելից գրությունները և այլն[2]:*

*Թեև «Ջամբռ»-ը թվագրված է 1765-ով, սակայն այն պետք է համարել միայն շարադրանքը սկսելու տարեթիվ, քանի որ տևական ժամանակ այն շարունակաբար լրացվել է: Այդ հարցի հետ կապված Մաղաքիա արք. Օրմանյանն իրավացիորեն տարակուսում է, թե 1765 թվականը «սկզբնաւորութեան, թէ աւարտման թուականն է»[3]: Մինչդեռ ուշադրություն դարձնելով «Ջամբռ»-ի բովանդակությանն ու նաև ձեռագրի կառուցվածքին, կարելի է պարզաբանել այդ հարցը: Այսպես՝ ձեռագրում յուրաքանչյուր գլխի համար կան մեծ թվով չգրված էջեր, ինչը միանգամայն ակնհայտ է դարձնում հեղինակի աշխատանքային սկզբունքը, այսինքն՝ մատյանը պետք է շարունակաբար լրացվեր: Մինչև 1775-ը կատարված լրացումները ձեռագրի այլ հատվածների հետ համեմատությամբ պարզվում է, որ դրանք մեծամասամբ պատկանում են միևնույն գրչին և թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային առումով տեքստի շարունակությունն են կազմում: Հետևաբար՝ ճիշտ կլինի «Ջամբռ»-ի շարադրումը թվագրել 1765-1775-ով: Կարելի է նաև ենթադրել, որ լրացումներ կա-*

---

[1] Նա գրում է. «ուրեմն որպէս Քրիստոս ըստ ամենատեսակ բարերարութեանն իշխանութիւն ունի ի վերայ հասարակ մարդկայինս բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Քրիստոսի սուրբն Գրիգոր, ըստ բազմատեսակ բարերարութեանն, իշխանութիւն ունի ի վերայ ազգիս Հայոց», *Ջամբռ*, էջ 95:

[2] Պահպանվել են Սիմեոն Երևանցու կարգադրությամբ կազմված բազմաթիվ այլ՝ գույքամատյաններ, հաշվեմատյաններ, որոնք վարել են ինչպես Ս. Էջմիածնի միաբանները, այնպես էլ նվիրակները: Դրանց միջոցով հստակեցվել և կանոնակարգվել է Մայր Աթոռի ունեցվածքը, եկամուտները և ծախսերը:

[3] **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3501-3502:

տարելու հանգամանքով պայմանավորված՝ Սիմեոն Երևանցին չի իրականացրել այս աշխատության տպագրությունն Ս. Էջմիածնի՝ իր հիմնած տպարանում:

Ինչպես նշեցինք՝ «Ջամբռ»-ը գրվել է այնպիսի կառուցվածքով, որ գրեթե յուրաքանչյուր գլխի և ենթագլխի համար ազատ էջեր լինեն: Թեև Սիմեոն Երևանցին գրում է, որ լրացումներ կատարելու գործն ինքը պատգամում է իր հաջորդներին, սակայն հետագա լրացումներն աննշան են: Քննենք տարբեր գլուխներում եղած տեղեկությունները. նախ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կենսագրությունը հասնում է մինչև 1775 թ.: Հաջորդը՝ ԺԳ. գլխում Մայր Աթոռին հարկատու գյուղերի (Մաստարա, Քիրաշլու, Մուղնի, Եղվարդ, Աշտարակ և Աղավնատուն) վերաբերյալ տեղեկություններն են, որտեղ իրադարձությունները հասնում են մինչև 1768 թ.: Այն, որ «Ջամբռ»-ը գրելու ժամանակը կախված չէ գլուխների հաջորդականությունից՝ երևում է ԺԴ. գլխի շարադրանքից: Այստեղ Սիմեոն Երևանցին ներկայացնում է Ս. Էջմիածնի՝ հարկատվությունից ազատ լինելու իրավունքը և գրում է. «յորմէ հետէ մինչև ցայսօր, որ եմք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում... արդ ի ներկայումս, յորում գրեմք զայս յիշատակագիրս, այսպես է կացութիւն և տուրքն սրբոյ Աթոռոյս»[1]: Ինչպես երևում է՝ ԺԴ. գլխի շարադրանքն ավարտվել է միայն 1767 թ., իսկ ԺԵ. գլխում, որտեղ խոսք կա էջմիածնապատկան դաշտերի, վարելահողերի և արոտավայրերի, ինչպես նաև՝ Երևանի Հուսեյն Ալի խանի կողմից քյոլանի ցեղն Ս. Էջմիածնի մոտակայքում բնակեցնելու մասին, գրված է, որ դա տեղի է ունեցել հայոց ՌՄԺԶ., այսինքն՝ 1767 թ.[2]: Միևնույն գլխի մեկ այլ հատվածում քյոլանիներին արտաքսելու կապակցությամբ Սիմեոն Երևանցին գրում է. «եղև այս ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում»[3], իսկ գլխի վերջում՝ «Քիւլթափայ գեօղս այս առաք մեք խւրովք սահմանօքն ի ՌՄԺԸ. (1769) թուոջն մերում»[4]: Փաստորեն՝ տվյալ գլուխը լրացվել է նաև 1767-1769 թթ.:

«Ջամբռ»-ի ԺԶ. գլուխը, որտեղ ներկայացված են Մայր Աթոռին պատկանող այգիները, պարտեզները և այլն, հիշատակություն կա այն մասին, որ «զայս այգիս յետոյ ի մեր ՌՄԺԵ. (1766) թուոջն և տաճկի ՌՃՀԹ թուոջն մեք առաք ի Ղևոնդենց»[5]: Ձեռագրում այս հատվածը որևէ կերպ չի առանձնանում հիմնական գրվածքից, բացի դա՝ տվյալ գլուխը շարադրվել է նաև 1766 թ. հետո և առկա է ևս երկու հիշատակություն՝ 1767 թ. «և զտաճիկն ի գեօղէս և

[1] ՄՄ, ձեռ. 978, 268ա:
[2] Նույն տեղում, 279բ:
[3] Նույն տեղում, 282բ:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում, 286ա:

*ի տաուղայութենէ հանեալ վարեցաք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում»*[1] *և գլխի վերջում՝ «դարձեալ ի մերումս ժամանակի ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում...»*[2]*:*

*ԺԷ. գլխում 1766 թ. հիշատակվող «յետոյ ի ՌՄԺԵ. (1766) թուոջս մերում՝ մեք վերստին շինեցաք, որ է մեկ տուն...»*[3] *և 1767 թ.՝ «ի մեր ժամանակս, վերստին ի փայտից շինեցաք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում» և այլ թվակիր հիշատակությունների հիման վրա կարելի է այս գլխի շարադրանքը թվագրել մինչև 1767 թ.*[4]*: ԺԸ. գլխում հանդիպում ենք մի շարք հիշատակությունների, որոնք թվագրված են 1766*[5] *և 1768*[6]*-ով: Այստեղ ևս գիրը որևէ կերպ չի առանձնանում, իսկ չգրված հատվածները ձեռագրում շատ են: ԺԹ. գլխում նույնպես կա տեղեկություն այն մասին, որ «... գործեցավ այս ի թուոջն մերում ի ՌՄԺԶ. (1767)»*[7]*:*

*«Ջամբռ»-ի հաջորդ գլուխներում, որոնք վերաբերում են պարսից շահերի, խաների և օսմանյան սուլթանների, փաշաների ու այլ պաշտոնյաների տված հրամանագրերին և կալվածագրերին, որոշ դեպքերում, ինչպես օրինակ՝ Երևանի Հուսեյն Ալի խանից ստացված մի փաստաթուղթ, Ախալցխային վերաբերող Օսմանյան Մուստաֆա III սուլթանի հրամանագիր և այլն, թվագրված են 1766-1769-ով:*

*Վերոնշյալը հիմք ընդունելով՝ կարծում ենք, որ 1765 թ. հիմնականում գրված են եղել երկի միայն առաջին տասներկու գլուխները: Մյուսները, որոնց հիմքում դիվանական վավերագրերն են, մեծամասամբ լրացվել են 1766-1769 թթ.*[8]*: Իսկ որ կատարած աշխատանքը հայրապետը չի համարել ավարտված և այն պատգամել է իր հաջորդներին՝ վկայում է նաև այն մասին, որ Մայր Աթոռի դիվանի վավերագրերը սպառված չեն եղել:*

*Այսպիսով, կարող ենք ասել, որ Սիմեոն Երևանցի կաթողիկոսը «Ջամբռ»-ը շարադրել է շուրջ տասը տարվա ընթացքում:*

---

1 ՄՄ, ձեռ. 978, 286բ:

2 Նույն տեղում, 306ա:

3 Նույն տեղում, 308բ:

4 Տվյալ գլխում հիշատակություն կա մի շինության և ջրաղացի մասին, որոնք «Բ. (2) արարաք ի ՌՄԾԲ. (1803) թուոջս» (ՄՄ, ձեռ. 978, 308ա), ինչը պետք է դիտարկել որպես հետագա ընդմիջարկություն:

5 ՄՄ, ձեռ. 978, 336ա:

6 Նույն տեղում, 337ա, 338ա:

7 Նույն տեղում, 345բ:

8 Հետագայում կատարվել են միայն աննշան լրացումներ: Դրանցից է՝ Նոր Նախիջևան և Գրիգորիոպոլ գաղթավայրերի վերաբերյալ հիշատակումը, որոնք հիմնադրվել են համապատասխանաբար 1779 և 1792 թթ., իսկ 1828 թ. ձեռագրում ավելացվել է ցանկ:

## գ. «Ջամբռ»-ի աղբյուրները

Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ն օգտագործված աղբյուրների բազմազանությամբ առանձնանում է հայ մատենագրության մեջ: Դրանք հայ պատմագրական երկեր և հայերեն, վրացերեն, պարսկերեն, օսմաներեն վավերագրերն են: Հեղինակը տևական ժամանակ է հատկացրել իր աղբյուրների՝ մասնավորապես դիվանական փաստաթղթերի հայթայթման գործին, ինչը երևում է իր իսկ գրածից՝ «զորն մեր գիտելով և զորն աստի և անտի հարցմամբ առ ձեռն բերելով, զորս գիտացաք հաւաստեաւ և ունեցաք գրեցաք, իսկ զորս ոչ կարացաք առձեռն բերել, բաց թողաք զտեղիսն»[1]: Քանի որ «Ջամբռ»-ի պատմական ժամանակահատվածը բավական ընդգրկուն է և սկսվում է Հայաստանում քրիստոնեության հաստատման ու նախորդ կաթողիկոսների գործունեության շարադրանքով, ապա, բնական է, որ այն գրվել է միջնադարյան հայ պատմիչների գործերի հիման վրա: Սիմեոն Երևանցին նշում է իր աղբյուրները, որոնք են պատմիչներ Ագաթանգեղոսի, Մովսես Կաղանկատվացու, Անանիա Մոկացու, Ստեփանոս Տարոնեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի, Թովմա Մեծոփեցու, Առաքել Դավրիժեցու, Զաքարիա Քանաքեռցու երկերը: Սիմեոն Երևանցին նպատակ է ունեցել ներկայացնել հայ ժողովրդի պատմության մեջ կաթողիկոսության առանցքային դերակատարությունը և մյուս հոգևոր աթոռների նկատմամբ գերադահությունը: Այդ մոտեցումն ակնառու է մասնավորապես Գանձասարի կաթողիկոսության պատմությանը վերաբերող հատվածում, որտեղ Մայր Աթոռի գերադաս դիրքը ներկայացված է տարբեր ժամանակաշրջաններում, իսկ Գրիգոր Լուսավորչից սկսած երկու աթոռների փոխհարաբերություններին, պարզ է, որ անհնար էր անդրադառնալ առանց հայ միջնադարյան պատմագրությանը ծանոթ լինելու:

Ճիշտ է Սիմեոն Երևանցին նշել է իր աղբյուրները, սակայն կարևոր հարց է, թե կատարված քաղագրումները նույնակա՞ն են արդյոք հայ պատմիչների գրածներին, թե՞ լրացված կամ խմբագրված են: Այդ հարցին կանդրադառնանք ստորև՝ բնագրերի համեմատական հատվածների միջոցով:

Այսպես, Գանձասարի կաթողիկոսության վաղ շրջանի պատմությանն անդրադառնալիս՝ նա օգտվել է Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Աղվանից աշխարհի պատմություն» երկից[2]՝ կատարելով միայն որոշ ոճական հավելումներ.

---

[1] *Ջամբռ*, էջ 309:

[2] Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2011:

| Մովսես Կաղանկատվացի | Սիմեոն Երևանցի |
| --- | --- |
| «Իսկ Մեծկողմանցն եպիսկոպոսն Սամուէլ անձնակամակ ընդ Միսայէլի ճահանայի, որ իմաստասէրն կոչիւր խորհրդազգած եղեալ՝ առանց գլխաւորագունին աջոյ տայ զեպիսկոպոսութիւնն իւր Միսայելի. եւ ինքն Սամուէլ զանկատարն առնու ձեռնադրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն: Լուրս այս եհաս ի բանակն. եւ բազում եղեւ խռովութիւն իշխանացն Աղուանից. յայնժամ ի միաբանութենէ զեկուցանեն զայս տեառն Գէորգայ՝ Հայոց կաթողիկոսի: Եւ նորա կանոնական սահմանադրութեամբ գրեալ առ իշխանն Հայոց՝ մաղթէ աւգնել իրացն եւ առնել զաւարտն ի խաղաղութիւն: Եւ նորա իմաստաբար ածեալ ի հաւան զպետս եւ զիշխանս Աղուանից՝ խաղաղութիւն ի մէջ նոցա առնէր. այլ նոցա զնզովս Հայոց պատճառեալ»[1]: | «Եւ Սամուէլ եպիսկոպոսն Մեծկունէից անզգամեալ ինքնին անձամբ առնու զպատիւ առնլով զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց յԱղուանս և լինի կաթուղիկոս անկատար ձեռնադրութեամբ՝ առանց հրամանի կաթուղիկոսին հայոց Գէորգայ և իշխանաց երկրին: Քանզի Աղուանից կաթուղիկոսն յորժամ ի սրբոյն Գրիգորի փոխանորդ կաթուղիկոսացն ոչ առնոյր զկարգն, այլ յիւր յեպիսկոպոսացն առնոյր անկատար ձեռնադրութիւն կոչիւր ի բնէ անտի: Վասն այսորիկ զայնպիսին վերստին ձեռնադրէին փոխանորդքն Լուսաւորչին, որպէս և արար Գէորգ կաթուղիկոսն մեր: Ուստի յորժամ լուրս այս հասանի ի բանակն լինի խռովութիւն մեծ, ապա իշխանքն Աղուանից գրեն առ մեծ կաթուղիկոսն հայոց Գէորգ, որ նստէր ի Դվին և կաթուղիկոսն գրէ նոցա և Աշոտ թագաւորին, զի խաղաղութեամբ վճարեսցեն զեղելութիւնն զայն և բառնայցեն զխռովութիւնն»[2]: |

*Հայտնի է, որ Է. դարի սկզբներին հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին վերաբերող հարցերն արծածված են Ուխտանես եպիսկոպոսի երկում, որում շարադրված է Հայոց եկեղեցուց վրաց եկեղեցու անջատումը, վերջինիս կողմից քաղկեդոնության ընդունումը և եկեղեցական այլ հարցեր*[3]*: Սակայն, նկատենք, որ այդ հարցում Սիմեոն Երևանցին միջնորդավորված աղբյուր է օգտագործել՝ դիմելով Ստեփանոս Օրբելյանի երկին.*

[1] **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, էջ 412-413:

[2] *Ջամբռ*, էջ 115:

[3] Տե՛ս **Ուխտանես եպիսկոպոս**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Պետրոս Յովհաննիսեանի, Գեորգ Մադոյեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2011, էջ 510-521:

| Ուխտանէս եպիսկոպոս | Ստեփանոս Օրբելյան | Սիմեոն Երևանցի |
|---|---|---|
| «Եւ երթեալ[1] յերկիրն Հոռմոց բնակեցաւ անդ ամս հնգետասան՝ ի գաւառին՝ որ կոչի Կողոնիայ. եւ բնակի անդ ի մեծ քաղաքագեղն Նիկոպոլիս կոչեցեալ՝ յեզր գետոյն՝ որ կոչի Գայլ: Եւ վարժեալ եւ ուսեալ զդպրութին նոցա եւ զայլեւս չարարուեստ գիտութիւն, որով որոշեցաւ ի մէնջ: Եւ ելեալ անտի գնաց ի Հայս առ նա ի սուրբ Կաթողիկոսն Հայոց եւ բնակէ առ նա ի սուրբ Կաթուղիկէին, որ ի Դուին քաղաքի, քանզի յայնմ ժամանակի անդ էր Աթոռ Հայրապետութեանն Հայոց»[2]: | «Եւ էր նոցա առաջնորդ Կիւրիոն, որ Նեստորի աղանդովն էր խմորեալ ի ծածուկ և ոչ կամէր յայտնել, այլ ժամու և պատճառի մնայր: Եվ ունէր ընդ իւրեան խուժիկ եպիսկոպոս մի, զոր իւրն ձեռնադրեաց: Եւ լեալ էր նա փակակալ սուրբ կաթողիկէին ի Վաղարշապատ, և գնացեալ ի սարկաւագութեանն ի Կողոնիա՝ բնակեալ էր առ երկաքնակ երիցու միոյ և ներկեալ յաղանդն»[3]: | «Քանզի ի ժամանակին յայնմիկ էր առաջնորդ մի Վրաց, որ Կիւրիոն կոչիւր: Սա նախապէս ի սարկաւագութեան գնացեալ էր ի Յոյնս ի քաղաքն Կողոնիայ և կենակից լեալ Քաղկեդոնիկ չիրիցու միոյ, յորմէ և դարձեալ էր ի նորին չար աղանդն, յետոյ եկեալ ի Վաղարշապատ յաւուրս տեառն Մօսիսի կաթուղիկոսին, որ ի վերդ յիշեցաւ, եղև փակակալ Սրբոյ էջմիածնի»[4]: |

*Վրաց եկեղեցու անջատումից հետո Հայոց ու Աղվանից կաթողիկոսությունների փոխհարաբերությունների վերաբերյալ աղբյուր են ծառայել Անանիա Ա. Մոկացի (946-968) կաթողիկոսի «Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» երկը, որտեղ նա մանրամասն տեղեկություններ է հաղորդում իր գործունեության շրջանում Աղվանից կաթողիկոսության հետ ունեցած փոխհարաբերությունների մասին: Համեմատված հատվածում, ինչպես տեսնում ենք, միայն ոճական փոփոխություններ են նկատվում: Ըստ այդմ՝*

1 Խոսքը վրաց կաթողիկոս-պատրիարք Կյուրիոն Ա.-ի (599-614 կամ 616 թթ.) մասին է:
2 **Ուխտանէս եպիսկոպոս**, *Պատմութիւն Հայոց*, էջ 510-511:
3 *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական*, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1861, էջ 75:
4 *Ջամբռ*, էջ 111:

**Անանիա Մոկացի**

«Իսկ իշխանՙ [չ]հաւանեալ Գագիկայ՝ իրաւապէս ընկալան զհրամանս մեր եւ ընտրեցին զայլ ոմն, զոր կարծէին կալ յաստիճանի հայրապետութեանն տանն Աղուանից, Յունան կոչեցեալ, եւ առաքեցին ըստ աւրինին ի ձեռնադրութիւն ի սուրբ աթոռս՝ գալ ի Սուրբ Գրիգոր»[1]:

**Սիմեոն Երևանցի**

«...գրէ Անանիա առ յիշխանսն Աղուանից և հրամայէ՝ մի՛ ընդունիլ զԳակիկ, որոց և լուեալ հնազանդեցան և ի բաց կացին ի Գակկայ և ապա միաբանեալ իսկ առաքեն զՅօնան եպիսկոպոս ոմն առ Անանիայ, զի ձեռնադրեսցէ նոցա կաթուղիկոս, զոր և արարն իսկ»[2]:

*«Ջամբռ»-ի կարևոր աղբյուրներից է Կիրակոս Գանձակեցու Պատմությունը, որի մասին ևս ուղղակիորեն նշում է Սիմեոն Երևանցին՝ «ըստ պատմութեանն Կիրակոս վարդապետին»[3]: Այս երկից նա բավականաչափ առատ նյութ է քաղել: Համեմատությունից երևում է, որ Սիմեոն Երևանցին կատարել է միայն ոճական բնույթի փոփոխություններ և որոշ կրճատումներ:*

**Կիրակոս Գանձակեցի**

«Ապա մանուկ մի էր յազգէ կաթողիկոսացն Գագիկ անուն, որդի Գէորգայ, թոռն Կարապետին, զոր սնուցին և ուսուցին. և իբրև ի չափ հասաւմանունկն, ապա գրեն թուղթ մաղթանաց Գրիգոր վարդապետն՝ որդին Թոֆակերի, և Դաւիթ՝ որդի Ալաւկայ, և այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն հայոց Գրիգորիս, որ ընդ այն ժամանակս էր նա ի կողմանս Արևմտից: Եւ այր մի ընդ թղթոյն առաքեցին, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, առաքեսցէ և ինքն եպիսկոպոս մի յիւրոցն, և տացէ հրաման ձեռնադրել զմանուկն Գագիկ յաթոռն Աղուանից, զի մի՛ անառաջնորդ կորիցէ աշխարհն:

Իսկ հայրապետն ձեռնադրեաց զառաքեալն, հրաման ետ և եպիսկոպոսին

**Սիմեոն Երևանցի**

«...ապա պատանի մի էր յԱղուանս, որոյ անունն էր Գակիկ յազգէ կաթուղիկոսացն, որոյ ի չափ հասանիլն, գրեն երկիրն Աղուանից զթուղթս մաղթանաց ի Հռոմկլայն առ մեծ կաթուղիկոսն հայոց տէր Գրիգոր և ընդ թղթոյն առաքեն զաբեղայ մի, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս և ընդ նման զայլս ևս եպիսկոպոսս եղեալ առաքեսցէ յԱղուանս, զի եկեալ ձեռնադրեսցեն զԳակիկն կաթուղիկոս Աղուանից, զի մի մնասցէ երկիրն իւրեանց թարց կաթուղիկոսի, որոց աղաչանացն լուեալ մեծին Գրիգորի, ձեռնադրէ զառաքեալն նոցա եպիսկոպոս և հրամայէ Կարնոյ Սահակ եպիսկոպոսին, ընդ որում ելեալ գան յԱղուանս ի Գանձակ և անդ ժողովեալ և զայլս եպիսկոպոսունս

---

[1] **Անանիա Մոկացի**, *Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքնոյ Սուրբ Լուսաւորիչի աթոռոյն*, «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Երևան, 2011, էջ 260:

[2] *Ջամբռ*, էջ 117:

[3] *Ջամբռ*, էջ 120:

Կարնոյ՝ գնալ յաշխարհն Աղուանից և ձեռնադրել կաթողիկոս Աղուանից:

Ապա եկեալ եպիսկոպոսին Կարնոյ Սահակայ և միւս եպիսկոպոսն, ձեռնադրեն այլ ևս եպիսկոպոսս երկոտասան՝ ըստ հրամանի գրոց, և ապա ձեռնադրեցին զԳագիկն կաթողիկոս, և անուանեցին Գրիգորէս՝ ըստ անուան կաթողիկոսին Հայոց»[1]:

ձեռնադրեն զԳակիկն կաթուղիկոս ըստ հրամանի տեառն Գրիգորի, որք և զԳակիկն կոչեն Գրիգորիս, ըստ անուան Գրիգորիսի թոռանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»[2]:

*ԺԲ. դարում Հայոց կաթողիկոսության երկպառակության, տարբեր վայրերում կաթողիկոսների հաստատման և Մայր Աթոռի անկայուն վիճակի վերաբերյալ Սիմեոն Երևանցին տեղեկություններ է քաղել Մատթեոս Ուռհայեցու երկից[3]՝ կատարելով միայն խմբագրական բնույթի փոփոխություններ.*

**Մատթեոս Ուռհայեցի**

«Յայսմ ամի մեռաւ կաթուղիկոսն Աղուանից Տէր Ստեփաննոս. և կաթուղիկոսն Հայոց Տէր Բարսեղ առաքեաց եպիսկոպոս ի Հայոց և արար ժողովս զեպիսկոպոսունսն Աղուանից աշխարհին. և ձեռնադրեցին զեղբայր Տէր Ստեփաննոսին յաթոռն տանն Աղուանից ի քաղաքն, որ ասի Գանձակ. զոր և յետոյ անարժան գտին զնա աթոռոյ հայրապետութեանն, ըստ քանադրանօք փակեաց զնա Տէր Բարսեղն կաթուղիկոսութեան Հայոց, և յաթոռոյ և ի պատուոյ հայրապետութեանն արտաքս ընկեցին զնա. զայս արարին վասն խոտոր վարուց իւրոց»[4]:

**Սիմեոն Երևանցի**

«... ի ՇԾԲ. (1103) թուոջն մեռում ի յաւուրս վերոյ յիշեալ տեառն Բարսղի կաթուղիկոսին մերոյ ի վախճանիլ վերոյ յիշեցելոյ երկրորդի տեառն Ստեփաննոսի կաթուղիկոսին Աղուանից, Բարսեղ կաթուղիկոսն մեր զեպիսկոպոսս առաքեաց ի յԱղուանսն և գնացեալ անդ ըստ հրամանի նորին զժողովս արարեալ՝ ձեռնադրեցին կաթուղիկոս Աղուանից զեղբայր տեառն Ստեփաննոսի, որոյ և յետոյ անարժան երևեալ կոչմանն, լուծանի ի կարգէն և ընդ բանիւ լինի ի նոյնոյ Բարսղէ կաթուղիկոսէն հայոց»[5]:

---

[1] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն Հայոց*, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 199-200:

[2] *Զամբռ*, էջ 119-120:

[3] **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Բ. տպագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 229:

[4] Նույն տեղում, էջ 295:

[5] *Զամբռ*, էջ 119:

*ԺԷ. դարի առաջին կեսից սկսած Հայոց կաթողիկոսների գործունեության մանրամասների համար կարևոր աղբյուր է ծառայել Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ը[1]: Համեմատենք Մովսես Տաթևացու վերաբերյալ հատվածը.*

**Առաքել Դավրիժեցի**

«... մեռաւ թագաւորն Պարսից Շահաբաս՝ որ զհարիւր թուման մուղադայն եղեալ էր ի վերա կաթողիկոսացն, և փոխանակ Շահաբասին թագաւորեաց թոռն նորին Շահսէֆի»[2]:

«Յայնժամ Մովսէս վարդապետն անապարեալ եհաս ի Սպահան և միջնորդութեամբ խօջայ Նազարիս բազում գանձս ծախսեալ, և յոգնակի աշխատութիւնս կրեալ, հազիւ թէ կարացին բառնալ զհարիւր թուման մուղադայն, որ ծանր բեռն անկաւ ի վերայ կաթուղիկոսարանին՝ զի Շահսէֆին հրամայեաց և գիր ետ թէ՝ անցայ ի հարիւր թուման մուղադայէն»[3]:

**Սիմեոն Երևանցի**

«Եւ ի մեռանել շահ Ապասին առաջնոյ, ի նստիլ թոռան նորին շահ Սէֆուն»[4]:

«Արդ այս երանելիս Մօսէս նախապէս եբարձ յԱթոռոյս զհարիւր թուման մուխաթայն, որ յառաջնոց իբր հարկ էր մնացեալ ի վերայ Սրբոյ Աթոռոյս յամի յամի տալ արքունեաց: Զայս մի թեթև և փոքր ինչ կարծիցես, զի ըստ անուանն թէպէտ հարիւր յիշիւր, սակայն ի տալն հազարիւք ոչ վճարիւր և մանաւանդ նորն զհնովն անցեալ գոլով դիզացեալ գոյր ի վերայ Սրբոյ Աթոռոյս»[5]:

*Ինչպես երևում է համեմատությունից՝ այն համառոտագրված է: Վճարելիք հարկի վերացման գործում Մովսես Տաթևացու հաղթահարած դժվարությունները և այլ մանրամասներ բաց են թողնված, բայց կա կարևոր լրացում ևս, թե դիցուկ որքան ծանր է եղել այդ հարկային բեռը Մայր Աթոռի համար: Այս դեպքում կարելի է կարծել, որ այլ աղբյուրից էլ տեղեկություն կա: Հարկային այդ ծանր բեռից ազատող պարսից շահի տվյալ հրովարտակը քաջածանոթ է եղել Սիմեոն Երևանցուն և այն բազմիցս հիշատակված է «Ջամբռ»-ում և այս դեպքում պատմիչի տեղեկությունները հնարավոր է եղել համեմատել նաև վավերագրի բովանդակության հետ:*

*Հայոց կաթողիկոսների շինարարական գործունեության բազմաթիվ դրվագների ներկայացման համար աղբյուր է ծառայել Զաքարիա Քանա-*

¹ Տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրութեամբ Լ. Ա. Խանլարեանի, Երևան, 1990:

² Նույն տեղում, էջ 207-208:

³ Նույն տեղում, էջ 208:

⁴ *Ջամբռ*, էջ 65:

⁵ Նույն տեղում:

*քեռցու «Պատմութիւն»-ը[1]: Դրանցից է՝ Հակոբ Ջուղայեցի (1655-1680) կաթողիկոսի շինարարական գործունեությանը վերաբերող հետևյալ վկայությունը.*

**Զաքարիա Քանաքեռցի**

«Այլև ի ներքոյ երկրի նաղմ արարեալ ի Բ(2) տեղւոջէ հանեալ ջուր՝ մինն հեռի ի գեղջէն էջմիածնայ՝ տարեալ յանդաստանս ի յոռոգանել զարտորայսն: Եւ մինն բերեալ ի գիւղն, զի ի ձմերանի արբցեն անասունք: Եւ ի վերայ այսմ ջրոյ շինեաց ջրաղացս և բրնձահանս. և արար ծով և ելից ձկամբ»[2]:

**Սիմեոն Երևանցի**

«Այլև եհան զջուրս երկուս (որ քանքան ասի) ի ներքոյ երկրի ի միջոյ արևմտից և հիւսիսոյ ի գետոյն կուսէ, զմին հանեալ ի վայր կոյս գեղջ մերոյ, որով ոռոգին արտորայք բազումք, ուր և շինեաց զփոքր ծովակս, ընդ որով և կազմեաց զջրաղացս և զդինկս»[3]:

*Զաքարիա Քանաքեռցու երկի հետ համեմատությամբ՝ գրեթե նույնական է Եղիազար Ա. Այնթապցի (1681-1690) կաթողիկոսին վերաբերող հատվածը.*

**Զաքարիա Քանաքեռցի**

«Սա էր այր ճոռոմաբան և ճարտար, բախտաւոր և պնդերես, ատենախօս: Սա յորժամ նստաւ կաթուղիկոս, եկին յամենայն կողմանց՝ ի հնազանդութիւն սմա:

Սա արար շինուածս ի Սուրբ Հռիփսիմայն՝ տունս գեղեցկաշէն, հրուանդանս և հովանոցս, և հաստատեաց միաբանս: Նոյնպէս և ի Սուրբ Մայրն Գայանէ շրջապատեալ պարսպեաց»[4]:

**Սիմեոն Երևանցի**

«Սա էր այր ճարտարաբան և ճոռոմախօս, յաջողակ և ահաւոր, յորմէ ամենեքեան երկնչէին թէ՛ մերայինք և թէ՛ այլայինք:

Նոյնպէս արար և ի սուրբն Հռիփսիմէի և Գայիանէի զպարիսպն պատեաց, զգաւիթսն շինեաց ի հիմանէ և զխուցս բազումս ի բնակութիւն միաբանից տեղւոյն»[5]:

*Այսպիսով՝ «Ջամբռ»-ը շարադրելիս Սիմեոն Երևանցին քաջածանոթ է եղել հայ պատմագրական երկերին, հնարավորության դեպքում համադրել է իր աղբյուրները, երբեմն համառոտագրել կամ լրացրել է աղբյուրների տեղեկությունները, սակայն հիմնականում կատարել է ոճական խմբագրումներ:*

---

[1] Տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն, Կոնդակ սուրբ Ուխտին Յօհաննու վանից*, աշխատասիրությամբ Արմեն Վիրաբյանի, խմբագրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2015:
[2] Նույն տեղում, էջ 125:
[3] *Ջամբռ*, էջ 68:
[4] **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն,* էջ 151:
[5] *Ջամբռ*, էջ 69:

«Ջամբռ»-ի աղբյուրների մյուս կարևոր խումբն արխիվային վավերագրերն են[1]: Զարմանցրած չենք լինի, եթե «Ջամբռ»-ը բնութագրենք որպես արխիվային վավերագրերի անգնահատելի մի շտեմարան: Սիմեոն Երևանցին իր առջև խնդիր է դրել հայթայթել, համախմբել և կանոնակարգել դիվանի վավերագրերը՝ կոնդակներ, հրովարտակներ, կալվածագրեր, համախոսականներ: Այդպիսով, պարզ է, որ Սիմեոն Երևանցին Մայր Աթոռի դիվանի ուսումնասիրման գործի սկզբնավորողն է, իսկ սկզբնաղբյուրային այդպիսի մեծաքանակ նյութերից օգտվելն ինքնին խոսում է հեղինակի նպատակադրման մասին, այն է՝ առավելագույնս փաստագրված ներկայացնել կաթողիկոսության և վանքերի իրավունքներն ու ունեցվածքը:

Եթե հայ պատմիչների երկերի հիման վրա շարադրված են նախընթաց շրջանի պատմական իրադարձությունները, ապա օրինակ՝ Գանձասարի կաթողիկոսությանը նվիրված գլուխը Սիմեոն Երևանցին շարադրել է՝ օգտագործելով նաև արխիվային վավերագրեր՝ կոնդակներ, գրություններ, համախոսականներ, պարսից շահերի հրովարտակներ: Աղթամարի կաթողիկոսությանը վերաբերող գլուխը շարադրված է օսմանյան սուլթանների հրովարտակների, կաթողիկոսների միջև եղած գրագրության հիման վրա, ինչը տեղեկությունները դարձնում է արժեքավոր և երբեմն բացառիկ, քանի որ օսմաներեն վավերագրերը տակավին հրատարակված չեն:

Սիմեոն Երևանցին օգտվել է ոչ միայն դիվանում պահվող վավերագրերից, այլ նաև՝ աշխատել է ձեռք բերել այլ վանքերում գտնվող նյութերը: Այդ գործում եղած դժվարությունների մասին նա ցավով արձանագրել է, որ բազմաթիվ վանքերի «հարկաւոր գրեանքն և ղապալայքն ևս իցեն անհետացեալք ի վատութենէ առաջնորդացն»[2]: Մայր Աթոռի և մի շարք այլ վանքերի սեփականության իրավունքի, վանական տնտեսություններին վերաբերող արխիվային այդ վավերագրերն ինչպես օտար տիրապետողներից ստացված, այնպես էլ հայերեն փաստաթղթեր են: Կաթողիկոսն իր հայթայթած վավերագրերի մասին գրում է, որ «թէպէտ տուողքն այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտաբարք, բուժիչք և ապահովացուցիչք»[3]: Իհարկե, միանգամայն դիպուկ է այդ բնորոշումը:

---

[1] Հայերեն կալվածագրերը հրատարակել է Հար. Աբրահամյանը, պարսից շահերի հրամանագրերը և կալվածագրերը՝ Հակոբ Փափազյանը և Քրիստինե Կոստիկյանը (հղումները տրված են): Օսմանյան վավերագրերը տակավին անտիպ են:

[2] *Ջամբռ*, էջ 309:

[3] *Ջամբռ*, էջ 248:

*Եթե հայերեն փաստաթղթերի դեպքում աշխատանքը, կարծես թե, պարզ էր, ապա հաշվի առնելով օտարալեզու նյութի մեծ ծավալները՝ հասկանալի է դառնում, թե ինչպիսի աշխատատար գործ է կատարվել: Այդ աշխատանքի արդյունքը «Ջամբռ»-ն է, որտեղ հստակ տարանջատված և առանձին գլուխներով ներկայացված են շահերից, սուլթաններից, պարսից և օսմանցի պաշտոնյաներից ստացված վավերագրերը: Այդպիսով՝ հաջողվել է ի մի բերել և կանոնակարգել պատմական մի ահռելի ժամանակաշրջանի՝ շուրջ երկու դարերի ընթացքում Մայր Աթոռի ձեռք բերված փաստաթղթերը:*

*Փաստագրական այդ հարուստ նյութը, որ ամփոփված է երկի տարբեր գլուխներում, այսօր էլ չի կորցրել իր սկզբնաղբյուրային նշանակությունը և «Ջամբռ»-ը շարունակում է մնալ որպես բացառիկ աղբյուր, քանի որ օգտագործված վավերագրերի մի մասը մեզ են հասել միայն այդ գործի միջոցով: Բնագրի համապատասխան ծանոթագրություններում օգտակար ենք համարել երբեմն լրացրել այն հայերեն վավերագրերի տեղեկությունները, որոնք պահպանվել են և մեզ հաջողվել է գտնել Մատենադարանի արխիվային ֆոնդում*[1]*: Այդ համապատկերում է, որ երևում է «Ջամբռ»-ի միջոցով պահպանված վավերագրերի ընդհանուր պատկերը: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ Սիմեոն Երևանցու այդ մեծ ուշադրությունը դիվանի նկատմամբ շատ և շատ վավերագրերի բովանդակություն փրկել է կորստից:*

---

[1] Վավերագրերը սփռված են *Կաթողիկոսական դիվանի* 1, 2, 3, 4, 5, 7, 240, 242, 243 և 252-րդ թղթապանակներում:

## դ. «Ջամբռ»-ի ձեռագրերի կառուցվածքային առանձնահատկությունները

*Մաշտոցյան Մատենադարանում են գտնվում «Ջամբռ»-ի երկու ինքնագիր ձեռագրերը՝ մեկն ամբողջական, մյուսը՝ պակասավոր, որն ինչպես ստորև կտեսնենք, պայմանականորեն կոչել ենք աշխատանքային տարբերակ:*

*Ամբողջական ձեռագիրը Հմր 978-ն է[1], որի հիման վրա կատարվել է Վաղարշապատյան 1873 թ. հրատարակությունը: Ձեռագիրն առանձնանում է իր կառուցվածքով: Դա պայմանավորված է հեղինակի այն մտահղացմամբ, որ մատյանը հետագա լրացումներ է ունենալու: Այդ տեսանկյունից աչք են զարնում ձեռագրում մեծ թիվ կազմող չգրված էջերը: Այդ հանգամանքը, սակայն, որևէ կերպ չի խախտում շարադրանքի ամբողջականությունը և հաջորդականությունը:*

*«Ջամբռ»-ն ունի առաջաբան և 25 գլուխներ: Առաջաբանում Սիմեոն Երևանցին ներկայացրել է անցյալի իրողությունների վերաբերյալ իր դիտարկումները, ձևակերպված են աշխատանքի հիմնական խնդիրները, այն է՝ ներկայացնել Հայոց կաթողիկոսության պատմությունը, հայրապետների գործունեությունը, Մայր Աթոռի ունեցվածքը և եկամուտները:*

*«Ջամբռ»-ի առաջին երեք գլուխներում ներկայացված են Մայր Աթոռի հիմնադրումից մինչև ԺԷ. դարը՝ Մովսես Սյունեցի կաթողիկոսի աթոռակալումը ներառող ժամանակահատվածի հակիրճ պատմությունը: Առաջին երկու գլուխներում ներկայացված են Հայաստանում քարոզած առաքյալների գործունեությունը և Մայր Աթոռի հիմնադրումը: Հայոց հայրապետների աթոռակալման տարիները ներկայացնելիս Սիմեոն Երևանցին անդրադարձել է նաև Հայոց պատմության որոշ դրվագներ՝ Հայոց թագավորությունների,*

---

[1] ԳՐԻՉ՝ հեղինակը: ԹԵՐԹ՝ 598. (13ա-590բ թերթերն էջակալուած՝ Ա.-ՌՃԾՋ.), չգրուած՝ 1ա-12բ, 21բ, 32ա-156ա, 164բ, 179ա-90բ, 193բ-4բ, 196ա -8բ, 205ա-6բ, 208բ-9բ, 211ա-2բ, 214աբ, 216ա-7բ, 219ա-20բ, 222ա-3բ, 224բ-5բ, 226բ-7բ, 229աբ, 231ա-3բ, 236աբ, 239ա-51բ, 252բ, 253բ, 254բ, 255բ, 256բ, 257բ, 259բ, 269ա-74բ, 284ա, 285ա, 288բ-9ա, 293աբ, 294բ-5բ, 297բ-8ա, 300ա-1ա, 303բ, 305աբ, 306բ-7բ, 309ա, 310ա, 311բ, 312բ-3ա, 315ա-27ա, 328ա, 329բ-30բ, 333աբ, 335աբ, 341ա-2բ, 344աբ, 346ա-7բ, 348բ, 350աբ, 351բ, 352բ-3բ, 354բ-5բ, 357աբ, 358բ-90բ, 399ա-422բ, 423բ-4բ, 428ա-31բ, 437բ-82բ, 484բ-89բ, 492բ, 494բ, 497աբ, 498բ, 499բ, 508բ, 510բ-31բ, 534բ-5բ, 538բ, 540աբ, 541բ, 543բ, 544բ, 545բ, 546բ, 547բ, 548բ, 549բ, 552բ, 553բ, 554բ, 558աբ, 559բ, 562ա-88բ, 593բ-8բ: ՆԻՒԹ՝ թուղթ, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 39,5x26: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: ԳԻՐ՝ շղագիր նոտրգրանման: ՏՈՂ՝ 41: ԿԱԶՄ՝ դրոշմազարդ, լուսանցակողերը՝ կարմիր (*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հատոր Գ., էջ 1555-1560):

օտար նվաճողների արշավանքների և Կիլիկիայի հայկական պետության կործանման մասին, ընդ որում թվագրելով այն 1423 թ., երբ, ըստ «Ջամբռ»-ի, գերեվարվել է Լևոն թագավորը: Երրորդ գլուխում ներկայացված է Սուրբ Աթոռի Էջմիածնում վերհաստատվելը և թվարկված են այն կաթողիկոսները, որոնք գահակալել են մինչև Մովսես Սյունեցին: Այն, որ այդ գլուխները պատմական ակնարկ են և այդ հատվածում հետագա աշխատանք չի ենթադրվել՝ խոսում է այն փաստը, որ դրանց համար ձեռագրում որևէ ազատ էջ թողնված չէ:

Չորրորդ գլխում Սիմեոն Երևանցին ավելի է մանրամասնել Հայոց հայրապետների գործունեությունը՝ Մովսես Սյունեցուց մինչև իր ժամանակները: Ինչպես երևում է ձեռագրից՝ առանձին մասերում առկա են որոշ դատարկ տողեր, հնարավոր է՝ ինչ-ինչ լրացումներ կատարելու համար, որոնք փաստորեն չեն արվել: Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսի գործունեության նկարագրությունից հետո «Ջամբռ»-ում ազատ է թողնված 124 թերթ: Այդ մեծ թիվը վկայում է այն մասին, որ հաջորդող կաթողիկոսների գործունեության նկարագրությունները ևս պետք է տեղ գտնեին ձեռագիր մատյանում:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գլուխներում ներկայացված են Հայոց եկեղեցու թեմերը, որոնցից Մայր Աթոռի նվիրակները հանգանակություններ են հավաքել: Պարզ երևում է, որ ցանկերն ամբողջական չեն, քանի որ Էրզրումի[1], Կարսի[2], Վանի[3], Դիարբեքիրի[4], Սպահանի[5], Թավրիզի[6], Նախիջևանի[7], Երևանի[8] թեմերի համար ազատ տողերը շատ են: Վեցերորդ գլխում ներկայացված են տերունի վիճակները: Ութերորդ և իններորդ գլուխները նվիրված են Հայոց հոգևոր կենտրոններին, կաթողիկոսների ընտրության, օծման արարողությունների[9], իններորդը՝ նոր կաթողիկոսի ընտրության կարգին:

Գանձասարի, Աղթամարի և Սսի կաթողիկոսություններին անդրադարձը համապատասխանաբար Ժ., ԺԱ. և ԺԲ. գլուխներում է: Մեծ ծավալի նյութ է ներկայացված մասնավորապես Գանձասարի կաթողիկոսության պատմու-

[1] ՄՄ, ձեռ. 978, 158ա:
[2] Նույն տեղում, 158աբ:
[3] Նույն տեղում,159ա:
[4] Նույն տեղում,159ա-բ:
[5] Նույն տեղում, 159բ:
[6] Նույն տեղում,160ա-բ:
[7] Նույն տեղում,160բ, 161ա:
[8] Նույն տեղում,161ա-բ:
[9] Ուշագրավ է Սիմեոն Երևանցու մոտեցումը Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքական աթոռներին, ըստ որի՝ Երուսաղեմի պատրիարքը չունի «ինքեան յատուկ Աթոռ, եկեղեցի և վիճակեցեալ ժողովուրդ և ոչ ինքն իսկ Երուսաղեմ է երկիր և տեղիք Հայոց», *Ջամբռ*, էջ 99, իսկ Կ. Պոլիսը «ո՛չ է երկիր և քաղաք հայոց», *Ջամբռ*, էջ 99:

*թյան վերաբերյալ (մինչև 1765 թ.), թեև ձեռագրում շուրջ 20 էջ էլ ազատ է թողնված[1]: Աղթամարին և Սսին վերաբերող ամփոփ տեղեկություններից հետո կան չգրված մի քանի էջեր:*

*Տասներեքերորդ գլխից սկսվում է «Ջամբռ»-ի տնտեսական մասը: Ներկայացված է յուրաքանչյուր գյուղի ձեռք բերման պատմությունը: Այստեղ որոշ գյուղերի դեպքում միայն անուններն են գրված, իսկ օրինակ՝ Ծոպանիսի մասին շարադրանքից հետո շուրջ 10 թերթ ազատ է թողնված[2], մինչև հաջորդ գյուղի նկարագրությունը, ընդ որում՝ խախտված չէ գյուղերի հերթական համարակալումը: Դժվար է ասել, թե ինչով է պայմանավորված հենց այդ գյուղին հատկացված մեծ թվով չգրված էջերի հատկացումը:*

*ԺԴ. գլխում, որը նվիրված է Մայր Աթոռի մուաֆության, այսինքն՝ հարկ վճարելուց ազատ լինելու իրավունքին, առկա է միայն մեկ դատարկ էջ, իսկ գլխի վերջում՝ արդեն մի քանիսը: «Ջամբռ»-ի տնտեսական-վիճակագրական կարևոր մասն են կազմում տասնհինգից տասնիններորդ գլուխները: ԺԵ. գլխում անուն առ անուն ներկայացված են էջմիածնապատկան դաշտերը, վարելահողերը, արոտավայրերը և այլն՝ իրենց մանրամասնություններով՝ երբ և ինչպես են դրանք ձեռք բերվել և այլն: Տվյալ հատվածում թվարկված և տեղորոշված են էջմիածնապատկան հողերը: Որոշ դեպքերում, սակայն, տեսնում ենք ազատ տողեր, միգուցե՝ լրացնելու համար, ինչն այդպես էլ մնացել է: Ձեռագրում ազատ պարբերություններ են թողնված հետևյալ տեղավայրերի համար՝* 1. Մեր Մանկասարենց այգւոյ հարաւկողմն հողն: 2. Աւեր գումբէթի կողմունքն, մինչև ի Քեալարյու ճանապարհն: 3. Ղօչերի – յուս կոչեցեալ տեղիքն: 4. Մեր միջի ջրաղացի կողմունքն: 5. Մեր վերի Իւզբաշոնց կոչեցեալ ջրաղացի վերն և վայրն: 6. Ծլուտ կոչեցեալ տեղին[3]:

*ԺԶ. գլխում ներկայացված են Մայր Աթոռին պատկանող այգիները և պարտեզները՝ ձեռք բերման կալվածագրերով: Այստեղ ևս կան չգրված էջեր, որոնց թիվը, ըստ բնակավայրերի, տատանվում է մեկ-երկուսի սահմաններում: ԺԷ. գլխում, որտեղ թվարկված են Վաղարշապատում, Օշականում, Երևանում, Ջորագյուղում և այլ բնակավայրերում Մայր Աթոռին պատկանող ջրաղացները, դինգերը և ձիթհանները, ըստ ձեռքբերման կալվածագրերի, կան բազմաթիվ չգրված էջեր: Որոշ դեպքերում առկա է մինչև 12 էջ[4], ինչը նշանակում է, որ մեզ հասած տեղեկությունները տնտեսական այդ կա-*

---

1 ՄՄ, ձեռ. 978,179ա-190բ:

2 Նույն տեղում, 239ա-251բ:

3 Նույն տեղում, 277աբ:

4 Նույն տեղում, 315ա-327ա:

ռույցների վերաբերյալ միայն մասնակի են արտացոլում իրական պատկերը: Ավելորդ չէ նշել, որ «Ջամբռ»-ի հրատարակություններից դուրս է մնացել «Ջիթհանք սրբոյ Աթոռոյս ի յՕշական» վերնագիրը կրող, սակայն բոլորովին չշարադրված էջը, որն առկա է թիվ 978 ձեռագրում[1]:

ԺԸ. գլխում, որտեղ ջրային ռեսուրսների սեփականության վերաբերյալ տեղեկություններն են, գրեթե ամեն պարբերությունից հետո հանդիպում ենք ազատ տողերի: ԺԹ. գլխում խոսք կա ինչպես Վաղարշապատում, այնպես էլ այլ բնակավայրերում՝ Օշականում, Երևանում, Մայր Աթոռին պատկանող տների ու խանութների մասին: Հաջորդիվ՝ մի քանի էջ անց, ներկայացված են Վրաստանում Մայր Աթոռին պատկանող ոչ միայն գյուղերը, այլև՝ տները, խանութները և ճորտերը: Միգուցե, ըստ նպատակահարմարության են այդ տեղեկությունները գրվել տվյալ գլխում, թեև «Ջամբռ»-ի մյուս՝ 4592 թվահամարի ձեռագրի համեմատությամբ՝ կա նաև բաց թողնված հատված, որը բնագրում ավելացրել ենք: Այս գլխից հետո ազատ է թողնված շուրջ 30 թերթ[2]:

Ի.-ԻԴ. գլուխներում հստակորեն առանձնացված, դասակարգված և ըստ ժամանակագրական կարգի ներկայացված են պարսից թագավորներից, օսմանյան սուլթաններից և այլ պաշտոնյաներից ստացված հրամանագրերը, կալվածագրերը և այլ բազմաթիվ փաստաթղթեր: Ուշագրավ է, որ օրինակ՝ Ի. գլխում, որտեղ շարադրված են պարսից թագավորներից ստացված հրամանագրերի բովանդակությունները, ձեռագրում միայն որոշ ազատ տողեր կան, իսկ պարսից տիրակալներ Ազատ և Քերիմ խաների տված հրամանագրերից հետո դատարկ թերթերը շուրջ 40 են[3], պարզ է՝ այլ հրամանագրերի համար: Պարսից խաներից և այլ պաշտոնյաներից ստացծները, որոնք ներկայացված են ԻԱ. գլխում, համարակալված են, իսկ դրանցից հետո միայն մի քանի ազատ էջեր են[4]: ԻԲ. և ԻԳ. գլուխներից հետո, որտեղ օսմանյան սուլթաններից և պաշտոնյաներից ստացված հրամանագրերն են, ազատ է թողնված ավելի քան 40 թերթ[5]:

«Ջամբռ»-ի վերջին՝ ԻԵ. գլուխը, որն ամբողջովին նվիրված է Երևանի խանության տարածքում գտնվող Գեղարդավանքի, Սբ. Ամենափրկիչ վանքի, Խոր Վիրապի, Գետարգելի, Սաղմոսավանքի, Կեչառիսի և այլ վանքերի սեփականությանն ու տնտեսություններին, պարունակում է մանրամասն տեղեկություններ, բայց առկա են նաև բաց թողնված հատվածներ, որոնք ձեռա-

---

1 ՄՄ, ձեռ. 978, 328բ:

2 Նույն տեղում, 358բ-390բ:

3 Նույն տեղում, 399ա-422բ, 423բ-424բ:

4 Նույն տեղում, 428ա-431բ:

5 Նույն տեղում, 437բ-482բ:

*գրի կառուցվածքից հստակ երևում է, որ նախատեսված է եղել լրացնել: Այսպես՝ Աղջոց Սբ. Ստեփանոս վանքի վերաբերյալ «Զամբռ»-ում միայն մեկ տող է գրված. «Վանս այս, որ է ի Գառնի գաւառին և յանուն սրբոյն Ստեփաննոսի քահանայի, որ ընդ սրբոց Հռիփսիմեանցն էր, նախապէս հիմնարկեցաւ ի Թուոջն...»: Մի քանի տող անց գրված է, որ «ունի գվիճակս յերկրոջս յերևանու՝ գՃաԹռան, գմեծ Գլան և փոքր Գլան»*[1]*: Հաջորդիվ մի էջ դատարկ է Թողնված: Միևնույն ձևով են շարադրված նաև Ս. Առաքելոց, Կեչառիսի և այլ վանքերին վերաբերող հատվածները: Այս գլխից հետո էլ ազատ է Թողնված մոտավորապես 25 Թերթ, իսկ ձեռագիրը համարակալված է մինչև 591բ էջը:*

*Ինչպես տեսնում ենք՝ մատյանն ի սկզբանե գրվել է այնպես, որ հետագայում հնարավոր լինի այն լրացնել և ամբողջացնել:*

*«Զամբռ»-ի մյուս, բայց ոչ ամբողջական ձեռագիրը Թիվ 4592-ն է*[2]*: Բնույթից դատելով՝ այն Սիմեոն Երևանցու համար ծառայել է որպես աշխատանքային մատյան, որտեղ գրի առնված տեղեկությունները հետո փոխանցվել են հիմնական ձեռագիր: Դա է պատճառը, Թերևս, որ այն կառուցվածքով զգալիորեն տարբերվում է և բնավ նույնական չէ 978-ին, այսինքն՝ այստեղ եղած հատվածներն անգամ ըստ հաջորդականության չեն համապատասխանում հիմնական ձեռագրին: Այսպես՝ 4592 Թվահամարի ձեռագիրը սկսվում է Վաղարշապատի և Մայր ԱԹոռին պատկանող այլ գյուղերի նկարագրությամբ, որը հիմնական ձեռագրի ԺԳ. գլխում է*[3]*: Հաջորդը՝ Մայր ԱԹոռի ունեցած ունեցած այգիներն ու պարտեզները ներկայացնող տեղեկություններն են, որոնք ԺԶ. գլխում են*[4]*: Այս ձեռագրում շատ մասնակի են վանքերի մասին հատվածները*[5]*, որոնք «Զամբռ»-ում կազմում են մի ամբողջ՝ ԻԵ. գլուխը:*

*Ձեռագրերի համեմատությամբ պարզվեց, որ աշխատանքային ձեռագրի մի քանի սեղմ հատվածներ դուրս են մնացել հիմնական ձեռագրից: Հետևելով հեղինակի աշխատանքային սկզբունքին, այսինքն՝ տվյալ մատյանից հիմնական ձեռագիրը լրացնելու մոտեցմանը, անհրաժեշտ համարեցինք այդ հատվածները համապատասխան ծանոԹագրություններով ներառել հիմնա-*

---

[1] ՄՄ, ձեռ. 978, 541ա:

[2] ՄՄ, ձեռ. 4592, ԺԸ. դ.: Էջմիածին: Գրիչ՝ *հեղինակը*: Թերթ՝ 51: Թուղթ՝ 23x17: Միասյուն: Նոտրգիր: Տող՝ 32: Կազմ՝ *լաԹապատ ստվարաԹուղԹ*: Հիշատակարան գրչի՝ 19ա (*Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հատոր Ա., էջ 1242):

[3] Նույն տեղում, 1ա-15ա (չգրված՝ 3բ):

[4] Նույն տեղում, 15բ-18բ:

[5] Կան «Յօհանավանից ոըպեսիութիւնքն», «Սրբոյն Սարգսի վանից որպեսութիւնքն», «Մօղնու վանից որպեսութիւնքն», «Անանիայ առաքելոյ վանից որպեսութիւնքն» և «Վարելահողքն սոյնոյ վանքիս են այսորիկ» հատվածները, ՄՄ, ձեռ. 4592, 20ա-28ա (չգրված՝ 20բ, 21ա,բ, 22ա,բ, 23բ, 24ա,բ, 26բ, 27ա,բ): Մինչդեռ «Զամբռ»-ում կա թվով 21 վանքերի նկարագրություն:

*կան բնագրի սույն հրատարակությունում: Այսպես՝ գյուղերի նկարագրությունններում Փռանկանոցի վերաբերյալ բացակայում է մի տեղեկություն, որը, կարծում ենք, բովանդակության շարունակությունն է կազմում: Նշված է, որ Երևանի Հուսեյն Ալի խանը Հակոբ Շամախեցի կաթողիկոսին հավաստագիր է տրամադրել, որ Փռանկանոց գյուղը Մայր Աթոռինն է*[1]*: Այս տեղեկությունը կարևոր է նրանով, որ հաջորդիվ խանը փաստորեն սեփականացրել է գյուղի մուլքի կեսը և միայն Սիմեոն Երևանցու օրոք է այն ամբողջովին վերադարձվել Մայր Աթոռին: Հաջորդ լրացումը վերաբերում է Եղվարդ գյուղին: Այն հաստատում է, որ այդ գյուղի չորս և կես դանգ մուլքի ձեռք բերման հրամանագիրը գտնվել է Էջմիածնի դիվանում*[2]*: «Ջամբռ»-ի ԺԹ. գլխում, որտեղ ներկայացված է Վրաստանում (Քարթլի) գտնվող սեփականությունը, կա տեղեկություն, որ ի թիվս այլ ճորտերի՝ Թիֆլիսի բնակիչ շամախեցի Իբրահիմը ևս Մայր Աթոռի ճորտն է եղել*[3]*:*

*Մեր ուսումնասիրության տեսանկյունից կարևոր էր այն, որ այս ձեռագրում առկա է նաև Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գործունեությանը վերաբերող հատվածը: Շուրջ 15 էջով ներկայացված նկարագրությունը նույնական է 978 ձեռագրի հետ, թեև ամբողջականը չէ:*[4] *Ամեն դեպքում՝ պետք է ասել, որ դրա առկայությունը նաև այս ինքնագիր մատյանում ինքնին մի կողմ է թողնում Սիմեոն Երևանցու կենսագրական այդ հատվածի՝ հեղինակային չլինելու հարցը:*

*Այն, որ այս մատյանից հիմնական ձեռագրում կատարվել են լրացումներ, երևում է յուրաքանչյուր գյուղի նկարագրությունից հետո առկա նշումներից, որտեղ գրված է, որ պետք է համապատասխան թվով ազատ տող թողնել՝ տեղեկություններն ավելացնելու համար: Աշխատանքային այս մատյանի կարևորության մասին կա հետևյալ հիշատակությունը. «սոյն տետրակս և զորս ի մէջ սորա պահելիք են, մինչև եղիցի համեմատութիւն ընդ Ջամբռին, քանզի վասն հարկաւոր իրաց են գրեցեալքն ի սոսին»*[5]*: Այս փոքր ձեռագրի առկայությունը թույլ է տալիս ենթադրել, որ նման աշխատանքային մատյաններ էլի են եղել:*

*Ամփոփելով նշենք, որ 4592 թվահամարի ձեռագիրը թեև «Ջամբռ»-ի ընդամենը մի փոքր մասն է կազմում, այդուհանդերձ՝ այն կարևոր է բնագրային համեմատություններ և ճշտումներ կատարելու համար:*

[1] ՄՄ, ձեռ. 4592, 4բ:
[2] Նույն տեղում, 9բ:
[3] Նույն տեղում, 30բ:
[4] Նույն տեղում, 35բ-38բ, 40ա-43բ:
[5] Նույն տեղում, 19ա:

## ե. «Ջամբռ»-ի հրատարակությունները և թարգմանությունները

*«Ջամբռ»-ի ձեռագիրը շուրջ հարյուր տարի անտիպ մնալով՝ 1873 թվականին հրատարակվում է Ս. Էջմիածնի տպարանում[1]: Թեև հրատարակիչները փորձել են պահպանել ձեռագրի հեղինակային կառուցվածքը, սակայն, օրինակ՝ չի ծանոթագրվել և հաշվի չի առնվել ձեռագրում չգրված էջերի հանգամանքը: Ճիշտ է հրատարակության մեջ ներառվել է ձեռագրում ավելի ուշ՝ 1828 թ. ավելացված այբբենական կարգով բովանդակության ցանկը, սակայն այն որևէ կերպ չի փոխարինում անհրաժեշտ ցանկերին, որոնք հրատարակության մեջ իսպառ բացակայում են:*

*Առաջին հրատարակությունը կատարվել է խնամքով, սակայն հասկանալի պատճառներով հնարավոր չի եղել խուսափել բնագրի պատրաստման հետ կապված մի շարք վրիպակներից և անճշտություններից: Հեղինակային տեքստին որոշ խմբագրական միջամտություններ ևս կան: Թեև հրատարակիչները ծանոթագրությունների միջոցով ներկայացրել են բառերի և եզրույթների բացատրություններ, սակայն, հաշվի առնելով «Ջամբռ»-ում մեծ թվով օտարալեզու բառերի առկայությունը, տեղանունները և այլն, դրանք միանշանակ բավարար չեն: Բնագիրը կարոտ էր ավելի հիմնավոր բացատրությունների, նաև՝ ծանոթագրությունների ու ցանկերի: Էական հանգամանք է նաև, որ վաղարշապատյան հրատարակությունում հաշվի չի առնվել «Ջամբռ»-ի մյուս՝ ՄՄ 4592 համարի ձեռագիրը: Այդուհանդերձ, վաղարշապատյան հրատարակության շնորհիվ Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը գիտական լայն շրջանառության մեջ է մեկ դարից ավելի:*

*«Ջամբռ»-ի ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1958 թ., Մոսկվայում[2]: Այն կատարել է բազմավաստակ գիտնական, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցը՝ 1935-1940 թթ., սակայն, ցավոք, հեղինակին չի հաջողվել լույս ընծայել իր թարգմանությունը (մահացել է 1947 թ.): Գրքի խմբագիրը և առաջաբանի հեղինակն է Պավել Հարությունյանը[3]: Ստեփան Մալխասյանցը*

---

[1] *Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից ործիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմէօնի ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցւոյ*, Վաղարշապատ, 1873:

[2] Տե՛ս **Симеон Ереванци**, *Джамбр, памятная книга зерцало и сборник всех обстоятельств святого престола Эчмиадзина и крестных монастырей*, перевод С. С. Малхасянца, под редакцией и с предисловием П. Т. Арютюняна, примечания С. С. Малхасянца и П. Т. Арютюняна, Москва, 1958.

[3] Գրախոսությունը տե՛ս **Պարգև վրդ. Գևորգյան**, «Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբռ»-ը ռուսերեն լեզվով», *Էջմիածին*, հ. Զ., 1962, էջ 56-60:

թարգմանությունը կատարել է հրատարակված բնագրից, բայց, ինչպես երևում է՝ գրքի խմբագիրը տեղյակ է եղել Մատենադարանում գտնվող «Ջամբռ»-ի երկու ձեռագրերի մասին էլ, թեև, կարծում ենք, որ հրատարակության ժամանակ համեմատություններ ձեռագրերի հետ, ըստ ամենայնի, չեն կատարվել: Գիրքը լույս է տեսել խմբագրի ընդարձակ առաջաբանով, նա լրացրել է եղած ծանոթագրությունները, որոնցում նաև քննված են պատմական և տնտեսական բնույթի հարցեր: Թեև առկա է օտար բառերի և եզրույթների բացատրություններ, սակայն առանձին բառարան կազմված չէ, անվանացանկեր էլ չկան:

Առաջաբանում ներկայացված է տնտեսական մի շարք հարցերի վերաբերյալ ուսումնասիրություն: Իրավացիորեն արժևորված է երկի աղբյուրագիտական կարևորությունը ոչ միայն հայոց պատմության, այլ նաև՝ արևելագիտության տեսանկյունից: Քանի որ գրքի լույս ընծայումը կատարվել է խորհրդային պատմագիտական մոտեցումների շրջանակներում, ապա ինքնին հասկանալի է սոցիալ-տնտեսական պատմությանը հատկացված ակնառու կարևորությունը, ինչն արտահայտված է եկեղեցական հողատիրության և եկեղեցու՝ որպես եկամուտներ ապահովող հաստատության քննադատական մոտեցմամբ:

2003 թ. լույս է տեսել երկի աշխարհաբար փոխադրությունը[1]: Այն կատարել է բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Համբարձումյանը: Թարգմանության մեջ ներառված են պատմաաշխարհագրական ընդարձակ ծանոթագրություններ և հավելված-քարտեզներ, որոնց հեղինակն է պատմաբան Գեղամ Բադալյանը: Առկա են նաև տեղանունների, անձնանունների և առարկայական ցանկեր: Հարկ է նշել, որ գրքի առաջաբանում հանգամանալից անդրադարձ կա «Ջամբռ»-ի լեզվին և բառապաշարին, դրա առանձնահատկություններին և նորաբանություններին:

Հրատարակության կարևոր մասը կազմող ծանոթագրությունները բաժանված են երկու խմբի: Առաջինում հայերեն և օտար բառերի, բառակազմությունների և եզրույթների բացատրություններ են, իսկ երկրորդում՝ տեղանունների, վանքերի և պատմա-աշխարհագրական: Ծանոթագրությունները ներկայացված են ըստ գլուխների: Սակայն բացատրությունների այս՝ փաստորեն երկփեղկված համակարգը զգալի անհամապատասխանություններ ունի, որը պայմանավորված է տեխնիկական խնդիրներով: Այսպես՝ տեքստում բա-

[1] Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, *Ջամբռ* (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները՝ Վազգեն Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գեղամ Բադալյանի), Երևան, 2003:

ների վրա դրված թվահամարները հերթական են և չեն համապատասխանում երկու բաժնից բաղկացած ծանոթագրություններին: Շատ դեպքերում պարզապես հնարավոր չէ գտնել հարցվող տեղեկությունը: Այս խնդիրը հաստատապես առկա է մինչև 7-րդ գլուխը: Ցավոք՝ որոշ դեպքերում թերի են նաև անվանացանկերի տվյալները, որոնք չեն համապատասխանում էջերին:

Պետք է ասել, որ գրաբարյան բազմաթիվ բառերի և բառակազմությունների բացատրությունները և պատմա-աշխարհագրական ծանոթագրությունները մեծապես արժևորում են կատարված աշխատանքը: Բնականաբար, աշխարհաբար փոխադրությամբ հրատարակությունը նաև նպաստում է հայ մատենագրության այս կարևոր գործն ընթերցող ավելի լայն շրջանակներին հասու լինելուն:

«Ջամբռ»-ը թարգմանվել է նաև անգլերեն և հրատարակվել 2009 թ.՝ Կալիֆոռնիայում[1]: Թարգմանությունը կատարել է պրոֆեսոր Ջորջ Բուռնությանը: Հարկ ենք համարում նշել, որ Ջ. Բուռնությանն անգլերեն է թարգմանել նաև հայ միջնադարյան պատմագրության՝ Աբրահամ Կրետացու, Աբրահամ Երևանցու, Զաքարիա Ագուլեցու, Զաքարիա Քանաքեռցու, Առաքել Դավրիժեցու, Սիմեոն Լեհացու և այլ երկեր: «Ջամբռ»-ի անգլերեն հրատարակությունում ներառված է թարգմանչի առաջաբանը, որտեղ նա ներկայացրել է Մայր Աթոռի ամփոփ պատմությունը, նաև ծավալուն անդրադարձ է կատարված Հայաստանում օտար տիրապետության հաստատման, դրա ծանր հետևանքների, Ս. Էջմիածնում վիճակի և այլ հարցերի վերաբերյալ: Մի շարք այլ աղբյուրների համադրությամբ՝ Ջ. Բուռնությանն իր առջև խնդիր է դրել վերլուծել Մայր Աթոռի եկամուտներին, հարկերին ու այլ հասույթներին վերաբերող հարցեր, այդ համատեքստում անդրադարձել է Պարսկաստանում հողատիրության ձևերին: Առավել մանրամասնելով տնտեսական բնույթի տեղեկությունների քննությունը՝ թարգմանիչն իր առաջաբանում ներկայացրել է նաև ջրային ռեսուրսներին վերաբերող մի շարք հարցեր, անդրադարձել է հայ ազգաբնակչության վճարված հարկերին, նվիրական թեմերից և այլ աղբյուրներից Մայր Աթոռի ստացած եկամուտներին և այլ իրողությունների:

Այդպիսով՝ հիմնական ուշադրությունը սևեռված է երկի տնտեսական մասին: Ուշագրավ է, որ Ջ. Բուռնությանն առանձին քննադատության է ենթարկել 1940-1950-ական թթ. խորհրդահայ պատմաբաններին, որոնք իրենց աշխատություններում, ըստ նրա, նպատակ են ունեցել Ս. Էջմիածինը ներկայացնել որպես ֆեոդալ-հողատեր, որը շահագործել է ազգաբնակչությանը:

---

[1] Տե՛ս Kat‘oghikos Simēon of Erevan (Simēon Kat‘oghikos Erewants‘i), *Jambr* (Archival Chamber), Introduction and Annotated Translation by George A. Bournoutian, Costa Mesa, California, 2009.

*Ընդունելով այդ տեսակետը՝ ձևակերպում է իր այն միտքը, որ Մայր Աթոռը մահմեդական տիրապետողներից «Հայ ժողովրդի միակ վահանը և պաշտպանն էր»[1]:*

*Ինչպես երևում է՝ Ջ. Բուռնությանն անգլերեն թարգմանությունը կատարելիս ձեռքի տակ ունեցել է «Ջամբռ»-ի առկա հրատարակությունները, իսկ թարգմանությունը, ինչպես ինքն է գրում, կատարել է բնագրից[2]: Կարող ենք ասել, որ ռուսերենի իմացությունը, թերևս, հնարավորություն է տվել օգտվել նաև այդ հրատարակությունից, համենայն դեպս բնագրում առկա մի շարք վրիպակներ, որոնք փոխանցվել են նաև աշխարհաբար հրատարակության մեջ, բայց նկատվել են ռուսերենում, ուղղված են նաև այստեղ: Ամեն դեպքում, իր գլխավոր նպատակը հեղինակը համարել է այնպիսի աշխատանքի պատրաստումը, որն «ընթեռնելի և օգտակար կլինի՝ առանց գիտական կողմի զոհաբերման», միևնույն ժամանակ՝ փորձելով պահպանել նաև հեղինակի ոճը[3]: Ամեն դեպքում, կարելի է ասել, որ օտարալեզու ընթերցողին երկը մատչելի դարձնելու տեսանկյունից դժվարին աշխատանք է կատարվել:*

*Նշենք, որ անգլերեն հրատարակությունը բավականին ծավալուն է, երբեմն գերհագեցած տողատակի ծանոթագրություններով: Գրքի վերջում կան քարտեզներ, հավելվածներ, եզրույթների բառարան, գրականության, անձնանունների և տեղանունների ցանկեր:*

---

[1] *Jambr*, էջ 37-39:

[2] Նույն տեղում, էջ 37:

[3] Նույն տեղում, էջ 40:

## ԲՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեև այսօր ընթերցողի սեղանին են «Ջամբռ»-ի վերը նշված հրատարակությունները, սակայն անհրաժեշտ ենք համարել ներկայացնել բնագրի նոր՝ լրացված հրատարակությունը, որը, հուսով ենք, զերծ կլինի առաջին հրատարակության թերություններից: Տպագիր բնագրում կան բառերի խմբագրական փոփոխություններ, ինչը, կարծում ենք, փոխել է հեղինակի լեզվամտածողության պատկերը (ձեռագրում՝ գոյր, յայտ, առաջակայ, տպագրում՝ կայր, այդ, առաջիկայ և այլն): Նման դեպքերում հետևել ենք հեղինակի օգտագործած ձևերին, տողատակում նշելով տպագիրը կազմողների փոփոխությունները: Միաժամանակ, մեր աշխատանքների ընթացքում հանդիպել ենք վրիպակների, անճշտությունների ու նաև՝ բացթողումների, որոնք շտկել ենք ձեռագրի հիման վրա: Վերն ասվածը նկատի ունենալով՝ կարևոր ենք համարել բնագիրն իր նախնական տեսքով ներկայացնելը:

Աշխատանքի ընթացքում հաշվի ենք առել «Ջամբռ»-ի ձեռագրի կառուցվածքային առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով լիարժեքորեն արտացոլել դրանք: Ուստի տողատակի ծանոթագրություններում նշել ենք դատարկ էջերը:

Վստահ ենք, որ ընթերցողին օգտակար կլինեն մեր կազմած ցանկերը: Ուշադրություն ենք դարձրել օտար բառերի և եզրույթների ժամանակակից ու լիարժեք բացատրություններին, որոնք ներկայացված են բառարանում, իսկ բնագրի վերջում զետեղել ենք ծանոթագրությունները:

**Բնագիրը հրատարակության պատրաստելիս նպատակ ենք ունեցել՝**

**Ա.** Պահպանել ձեռագրի հեղինակային գրելաոճը և ուղղագրությունը (անգամ եթե նույն պարբերության մեջ միևնույն բառը գրված է որոշ տարբերությամբ, թողել ենք նույնությամբ՝ ըստ բնագրի): Փորձել ենք հնարավորինս զերծ մնալ բնագրին միջամտելուց, բացառյալ ակնհայտ վրիպակները կամ սխալները: Անտեսել ենք վաղարշապատյան հրատարակության մեջ կատարված հետևյալ տառափոխությունները՝ «կ»-ն «գ»-ով, «օ»-ն «ո»-ով, «պ»-ն «բ»-ով, «ղ»-ն «խ»-ով, «ջ»-ն «ճ»-ով, «դ»-ն «տ»-ով, բառագրության մեջ՝ «Մօսէս, Մօսխս»-ը «Մովսխս»-ով, «Յակոբ»-ը «Յակովբ»-ով, «Յօսէփ»-ը «Յովսէփ»-ով, «Քարսախ»-ը «Քասախ»-ով, «Հրաստան»-ը «Հրազդան»-ով, «Թուոջ»-ը «Թւոջ»-ով և այլն, վերականգնել ենք հեղինակային գրելաձևերը: Բոլոր դեպքերում ձգտել ենք հարազատ մնալ ձեռագրին՝ ավելորդ համարելով ամեն անգամ ծանոթագրությամբ նշել այդ մասին:

**Բ**. *Ձեռագրում առկա են մի շարք երկձևություններ, որոնցից միօրինակության համար ընտրել ենք առավել հաճախ հանդիպողները, դրանք են՝ Բջնի (Բճնի), Գեղարքունոյ (Գեղարգունոյ), Ըստամպօլ (Ըստամբօլ), շահ Ապաս (Շահաբաս, Շահապազ), Յովանէս (Յովհանէս, Յովհաննէս), Ամիրկիւնէ (Ամիրկունէ), բարաթ (բէրաթ, բերաթ), ղապալա (ղաբալա), ֆարման (ֆէրման), ղաճար (ղաջար), գեօղ (գիւղ), խօճա (խօճայ, խոջայ):*

*Սույն հրատարակությունը պատրաստել ենք Մատենադարանի 978 ձեռագրի հիման վրա՝ համեմատելով այն վաղարշապատյան հրատարակության հետ, իսկ հատվածաբար՝ նաև 4592 ինքնագիր ձեռագրի հետ, որից էլ կատարել ենք որոշ հավելումներ:*

**Բնագրի հետ աշխատանքում առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով՝**

**ա**. *տարեթվերը և թվային արժեքները մշտապես գրել ենք ընդունված մեծատառերով՝ փակագծում նշելով թվային նշանակությունը,*

**բ**. *անտեսել ենք «ի» նախդրից առաջ եղած ապաթարցերը,*

**գ**. *կետադրությունը փոխել ենք ըստ արդի հայերենի կանոնների,*

**դ**. *վերականգնած տառերը կամ բառերը, ինչպես նաև՝ 4592 ձեռագրից կատարված հավելումները դրել ենք ուղիղ [] փակագծերում,*

**ե**. *չիք բառի փոխարեն օգտագործել ենք > նշանը,*

**զ**. *կլոր () փակագծերում ավելացրել ենք ձեռագրի էջահամարները, իսկ բնագրում առկա դատարկ փակագծերը թողել ենք նույնությամբ,*

**է**. *տողատակում ծանոթագրել ենք ձեռագրում չգրված էջերը,*

**ը**. *երբեմն տրոհել ենք շատ մեծ պարբերությունները:*

**Համեմատված ձեռագրերի և տպագրի պայմանանշանները**

**Ա**. *ՄՄ, ձեռ. 978:*

**Բ**. *Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէից, համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմէօնէ ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի, 1873:*

**Գ**. *ՄՄ, ձեռ. 4592:*



ՄՄ, ձեռ. 978, էջ 13ա

ԳԻՐՔ, ՈՐ ԿՈՉԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ, ԱՐՁԱՆԱՑՈՒՑԻՉ, ՀԱՅԵԼԻ
ԵՒ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԲՆԱԻԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ
ԵՒ ԻՒՐՈՑ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՎԱՆՕՐԷԻՑՆ

# ՋԱՄԲՌ

ՀԱՄԱԺՈՂՈՎԵՑԵԱԼ ԵՒ ՇԱՐԱԳՐԵՑԵԱԼ
Ի ՍԻՄԷՕՆԷ ՅԱԽԱՀԱՐ ԵՒ ՎՇՏԱԿՈԾ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԷ ԵՐԵՒԱՆՑԻՈՅ:

**Ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ նոյնակերպի Աթոռոյս ի յենարան
եւ ի հեշտութիւն ի սմա նստող հայրապետաց, գործակալաց
եւ համայն հարազատից պաշտօնէից սորին:**

**Յամի ներմարմնութեան տեառն հազար եօթն հարիւր վաթսուն եւ հինգ:
Իսկ ըստ հայոց թուականի հազար երկու հարիւր տասն եւ չորս:**

**Ի Սուրբ Աթոռոջս Էջմիածնի**

## (13բ) ԱՌ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԻՆՁ ՍԱԿԱՒՈՒՔ ԱՐԱՐԵԱԼ Ի ՆՈՅՆՈՅ ՀԵՂԻՆԱԿԷ, ՎԱՍՆ ԱՌԱՋԱԿԱՅ[I] ԳՐՈՅՍ ՈՐ ԿՈՉԻ ՋԱՄԲՌ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ԱՅԼՈՑ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՎԱՆՕՐԷԻՑՆ ՍՈՐԻՆ[1]

Քանզի աշխարհս և աշխարհայինքս են միշտ ի փոփոխման և ենթադրեցեալք զանազանից պէսպէսութեանց ըստ վճռահատութեանց սրբազնից գրոց և այս այնքան սաստկապէս, մինչ զի ոչ ինչ ունին ի հաւաստութեան: Քանզի ապագայական հաւաստի տրամադրութիւնքն տան անհաւաստութիւն ներկայականաց, որոց և զունեցեալսն տան ունիլ տարակուսանօք և զչունեցեալսն կարծեօք: Արդ այսց ամենից փոփոխմանց և տրամադրութեանց շտեմարանն և մանաւանդ ներգործական և ծնողական պատճառն է ժամանակն, որ ի հոլովիլն անդադարապէս հոլովէ ընդ ինքեան և զորպիսութիւնս ժամանակաւորաց: Ապա ուրեմն կարի հարկաւոր է մեզ ժամանակաւորացս զնոյն ինքն զժամանակն ունիլ միշտ առձեռն իբրև զհայելի և ի նմանէ ուսանիլ զօգուտն մեր որքան եմք ի նմա սևեռեցեալք: (Քանզի ժամանակն ունի զանցեալս, զներկայս և զապառնիս, որ անցելովն խրատէ զներկայականսս և զգուշացուցանէ զապագայականսն):

Եւ այս որո՞վ եղանակաւ կարէ լինիլ, եթէ ոչ ներկայացուցանելով մեզ զորպիսութիւնս անցելոցն, յորս լիապէս երևին բոլոր որպիսութիւնք փոփոխմանց, յաջողութեանց և ձախորդութեանց, օգտից և վնասուց, փորձառիթ բերմանց և նոցին հնարիցն: Արդ այս թէպէտ ամենայն մարդոյ է հարկաւոր, որք (գոլով բանականք և ենթարկեցեալք պէսպէս հոգոց և փոփոխմանց), ըստ չափու կարօտին հայելւոյ և հնարացոյց օրինակաց, սակայն ևս առաւել յատկացելոց և գլխաւորաց և բազմապէս հոգունակաց անձանց: Ապա որքան ևս առաւել հարկաւորագոյն է Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի նստօղ հայրապետաց և նոցին գործակալաց և միաբանիցն սեպհականաց և մանաւանդ յայսպիսում վտանգաշատ ժամանակոջ: Քանզի Սուրբ Աթոռս է շնորհօքն Աստուծոյ մեծանուն և հռչակեցեալ, լցեալ միաբանիւք և պէսպէս պաշտօնէիւք, պերճացեալ երևելի զարդիւք[II] և կահիւք, ճոխ փառօք և անթագուցանելի հանդիսիւք ունօղ բազմապիսեաց ելից և մտից: Եւ վերջապէս գոլով քաղաք ի վերայ լերին, որ ոչ կարէ թագչիլ ըստ Տեառն բանի: Ըստ անուանն իշխօղ բազմաց, ըստ գործոյն և ոչ միոյ ի լեզուս ունօղ ամենայն բարեաց և ի յինքն կարօտ յամենայնի: Գտանեցեալ ընդ իշխանութեամբ անիշխան տերանց խստասրտաց և գազանաբարոյից յափշտակո-

---

[I] Բ. առաջիկայ

[II] Բ. զարդուք

ղաց և ինքն անզօր և անսուր: Նպատակ բուռն և ամենակերպ պահանջողաց իւրայ- նոց և այլայնոց և ինքն կամաւոր և երկիւղիւ մուրացօղ: Արդ այսպիսւոյ տան և սորին տանուտեառն և գործակալացն և հարազատ ընտանեացն որքան հարկաւոր է ի հա- յելիս և ի հնարացոյց խրատս և յօրինակս անցելոցն պարապիլ գիտութեան փորձա- ռողացդ թողում:

Արդ ես յետինս ի սպասաւորաց և ստրուկս ի պաշտօնէիցն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի Սիմէօն լոկ ևեթ անուամբ կաթուղիկոս, որ պատահեցայ ի վերջին և յամե- նաթշուառ ժամանակոջս ի ՌՄԺԲ. (1763) թուոջս մերում տեսի, զի յառաջնոց լուսա- հոգեաց և երանելեաց հայրապետացն մերոց (որոց բարերարութիւնքն, օգտարարու- թիւնքն և արիւնախառն քրտամբք աշխատութիւնքն յոլովք և անգրելիք են ի վերայ Սրբոյ Աթոռոյս, որոց զարդիւնսն (14ա) վայելեմք մեք ի վաստակս նոցա մտանելով), սակայն ոչ ոքն էր արարեալ զփոյթ ի գիր արկանել և արձանացուցանել զորպիսու- թիւնսն Սրբոյ Աթոռոյս և զպարագայսն սորին, գոնէ և զառ ինքեամբ եղեալ պատահ- մունսն, յորոց ոչ սակաւ օգուտք յառաջանային յետնոցս և յառաջանալոց էին ի ժա- մանակս ժամանակս: Արդ ես յամենայնի անարդիւնս և անպէտս, որովհետև չունէի զկարօղութիւն և չկարացայ, իսկ ինձէն յատկապէս զարդիւնաւոր գործ ինչ յառաջա- ցուցանել, զայս գոհ ինձ բռնեալ և իբր զդիմակալ երեսաց իմոց, այսինքն՝ զարարե- ցեալ բարերարութիւնսն և զոսկեփայլ գործսն նախնեաց երանելեաց (որք ծածկեցեալք էին և որպէս թէ անհետացեալք խաւարաւ մոռացութեան և անգիտութեան) ի լոյս բերեալ փայլեցուցից, որովք ոսկեպէս անուանք նոցին փառաւորեսցին մշտնջենապէս ի Սուրբ Աթոռոջս ի մէջ տաճարիս Աստուծոյ, ընդ որս և ես և իմս այս գոնէ իբրև զխե- ցեղէն հաշուեցեալ յիշատակիցուք: Վասն որոյ յառաջադրեցի զայս գիրք, որ կոչի Յիշատակարան և պարունակօղ բնաւից որպիսութեանցն Սրբոյ Աթոռոյս: Քանզի գրեցի ի սմա զամենայն որպիսութիւնսն, այսինքն՝ զորպիսաբար հաստատիլն, զորպիսա- բար կեալն և կառավարիլն սորին և սորին աթոռակալացն ներքսապէս և արտաքսա- պէս: Զորքանաբար տարածումն իշխանութեանն և պատուոյն և զերբեմնական տկա- րութիւնն և զվշտակրութիւն, զի սմա նստօղ կաթուղիկոսունսն, որոց և զորպէսն և յորս զառաւել բարերարսն:

Այլև զինչ ունիլն սորին, զորպէս և զերբ ունիլն, այսինքն՝ նուիրակականն, առաջ- նորդականնն և զայլ արդիւնաբեր տեղիսն որպիսութեամբքն իւրեանց՝ զմլքատու գեօ- ղօրայսն, զմուլքսն, այսինքն՝ զայգիս, զջրաղացս, զդինկս, զտունս, զխանութս, զսեր- մանելի տեղիսն, զջուրս և զառուս և զայլս այսպիսիս հանդերձ իւրաքանչիւր տան- կական[2] և հայկական ղապալայական, վախմնական, վկայական և վինունական գրովքն իւրեանց և թէ ե՞րբ և որո՞ց ձեռօքն: Այլև զթագաւորական, զբռնակալական և զդատաւորական գրեանսն սորին հանդերձ պարագայիւքն իւրեանց և մանաւանդ

զմաղաֆութիւնն սորին, թէ որպէ՞ս, որքա՞ն և ե՞րբ այլովք պարագայիւքն: Այլև արձանացուցաք ի սմա զնշանաւոր և զի մտի պահելի իրակութիւնսն և զօգտաբեր և զվնասատու պատահմունսն անցելոց ի յօրինակ և ի հայելի ապագայիցդ, զի զօգտաբերսն առ ձեռն ունիլով ի վնասակարացն խոյս տայցէք: Այլև արձանացուցաք ի սմա զամենայն որպիսութիւնսն երկրիս և շրջակայիցն վանօրէիցն մերոց հանդերձ պարագայիւքն իւրեանց:

Եւ վերջապէս դիտումն մեր և ջանք այս էր, զի գիրքս այս լիցի հանրականապէս պարունակօղ, հայելի և ծանուցանօղ ամենից որպիսութեանց և ապագայիցն Սրբոյ Աթոռոյս և վանօրէիցն մերոց և յաւիտենական և մշտապիտոյ արձան իրակութեանցն անցելոց ի զգուշութիւն յապա եկելոց: Վասն որոյ խնդրի ի մերազնէից և ի կարգակցաց եղբարցդ իմոց զկնի մեր յաջորդողաց (որոցդ է հարկաւոր և շատ պիտանի մանաւանդապէս, որպէս փորձելոց էք) նախապէս, զի որպէս նուաստութիւնս մեր ի նախնեաց անտի մինչև ցառ մեօք զմնացեալսն և ունեցեալսն, զնոցին ունեցման գրեանսն և զայլ պարագայսն մեծաւ տաժանմամբ և բազմաւ աշխատութեամբ (մինչ գրեթէ ի կեանս իմ այս էր մեծ հոգ և ցաւն իմ) առ ձեռն բերեալ, զանհետացեալ և զնսեմացեալսն ի լոյս ածեալ և վերանորոգեալ, զանկանօնսն ընդ կանօնիւք արկեալ, զցան և զցիրսն ի մի ժողովեալ և որպէս թէ ի զանազանից գեղեցկագունից և յանուշահոտունեաց ծաղկանց փնջեալ և եղեալ ի տուփս յայս՝ ահա ձեզ ընծայեցաք նմանապէս և դուք ըստ այսմ կանօնի ամբողջապէս և հաւատարմօրէն պահելով՝ զկնի յաջորդողացդ ձերոց ընծայիցէք, զի մի անհետասցին և կորիցեն և այսօրիկ մնացեալքս, որպէս և շատքն անհետացեալք են յանհոգութենէ անցելոցն երանելեաց: (14բ) Երկրորդապէս, զի որպէս մեք, եթէ նախքան զմեզ անցելովքն և թէ զմեօք պատահեցեալսն գլխաւոր և հարկաւոր և զի մտի ունելի գործսն և զեղելութիւնսն (թէ օգտաւէտ և թէ վնասաբեր) ի գիր արկեալ արձանացուցաք ի սմա, նմանապէս և դուք զառ ձեօք եղեալսն գրեալ ի սմա ի յիւրաքանչիւր տեղւոջն արձանացուցջիք: Քանզի անցելոցն անցք խրատք և վարդապետութիւնք են յետնոց: Երրորդապէս, որք վայելէքդ զսայ օգտիք և ևս յաւելուք, յիշեցէ՛ք անգամ մի ի մաքուր յաղօթս ձեր զնախկին հեղինակս սորին, որպէս զի և դուք յիշիցիք ի յապա եկելոցն ձերոց: Ողջ լերո՛ւք:

## (15ա) ԳԼՈՒԽ Ա.

## ՅՈՐՈՒՄ ՃԱՌԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՍԿԶԲԱՆԷ ՅՕՐԻՆԵՑՄԱՆԷ ԱՆՏԻ Ի ՅԱՄԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ Ի ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԴԱՐՁԵԱԼ: ԵՒ ՍԱԿԱՒ ԻՆՉ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՍՐԲՈՅ ԱՋՈՅ ԼՈՒՍԱՒՈՐԻՒՆ ՄԵՐՈՅ[3]

Սուրբ և Աստուածային, Քրիստոսակերտ և լուսանկար ամենից հայոց Աթոռս էջմիածին, առ յոր էՙջ Միածին Բանն Աստուած հայրական փառօք, հրաշալի լուսով և բազմութեամբ զօրօք հրեշտակաց և ձևակերպեալ յօրինեաց զսա աստուածային լուսով, ըստ (15բ) որում և հրաշակերտեաց սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր ի յԱթոռ յատկապէս ազգիս հայոց և մայր ամենայն եկեղեցեաց և շնորհածին ծընօղ նոցին մանկանց, եղև ի ՅԵ. (305) թուոջ մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Քանզի որպէս ի հնումն եցոյց Մօսիսի (որ առաջնորդէր հնոյն Իսրայէլի) զձև խորանին ի շինել յատուկ տեղի և բնակարան աստուածութեան իւրոյ և ի դաստիարակ և տեղի ապաւինի հնոյ ժողովրդեանն նոյնպէս և ի նորումս եցոյց զձև խորանիս այսմիկ սրբոյն Գրիգորի (որ եղև առաջնորդ նորոյս Իսրայէլի) ի շինել յատուկ տեղի և բնակարան ինքեան ի մայր և դաստիարակ և տեղի ապաւինի նորոյս ժողովրդեան ազգիս հայոց: Արդ Սուրբ Աթոռս այս աստուածակերտ յառաջին ժամանակսն ի Լուսաւորչէն մերմէ ի յորդիսն և ի թոռունսն և ի մերձաւորսն նոցունց էր լաւապէս շէն և պայծառ հօգևորօք և մարմնաւորօք և պերճ իշխանութեամբ: Քանզի ձգիւր անխոնարհելի և հօգևոր իշխանութիւն սորին ի յամենայն Հայս, ի Վիրս և յԱղուանս: Եւ ի սմա նստէին հայրապետքն ազգիս մերոյ և ի սմանէ ծաւալիւր յամենայն երկիր խորհուրդ եկեղեցւոյ և սրբալոյս Մեռոնն օծութեան:

Ապա ի տկարանալ իշխանութեանն մարմնաւորի ազգիս մերոյ և ի զօրանալ թշնամեաց և յաճախիլ պէսպէս յարուցմանց հինից թագաւորք և իշխանքն մեր, ըստ ձեռնտուութեան ժամանակին, ուր տեսանէին պատեհաւոր և ձեռնտու ինքեանց և յապահովութիւն ի թշնամեաց, անդ ամրացեալ բնակութիւն առնէին ընդ նոսին և հայրապետքն, որպէս և ի ՃՀԷ. (728) թուականիս մերում, յանիշխանութեանն ազգիս մերոյ, զի ի ՃԾԳ. (704) թուոջն մերում պիղծն Աբդլլայ զամենայն իշխանսն ի յեկեղեցին Նախիջևանու այրեաց, Դաւիթ կաթուղիկոսն Արամունեցի ի Կուտէս[4] գաւառէ վշտացեալ ի տաճկաց փոխեաց զԱթոռն հայրապետական ի Դվին[5], ուր մնաց հայրա-

պետարանն մինչև ի 3Կ. (911) թուականն մեր, յորում Սմբատ Տիեզերակալն պարսպեաց զփաղաքն յԱնի և շինեաց զկաթուղիկէ եկեղեցին, յորում ժամանակի և Գրիգոր կաթուղիկոսն, որ զկնի Մաշտոցի երրորդ հայրապետ էր, փոխեաց զհայրապետարանն ի Դվնայ ի քաղաքն յԱնի[6]: Յոր և տևեաց ի ժամանակս ինչ, մինչև ի ՇԴ. (1055) թիւն մեր, յորում վերջացաւ թագաւորութիւնն Բագրատունեաց, որոյ վերջինն էր Գագիկ որդի Աշոտոյ[7] և եկն պիղծն Ալփասլանն և աւերեաց զփաղաքն յԱնի և զեկեղեցիսն ի ՇԺԹ. (1070)[8] թուոջն մերում ի հայրապետութեանն Պետրոսի կաթուղիկոսին: Յայս միջոցիս ի միում ժամանակի ի չորս տեղւոջ հայրապետ նստան ներհակ իրերաց[9]՝ Պետրոսն ի յԱնի, Գրիգոր վկայասէրն[10] ի Մար[11], Թէոդորոսն ի Հոն և Պօղոսն[12] ի Մարաշ[13]:

Ապա ի թուին ՇԻԵ. (1076), յորում հաստատեցաւ թագաւորութիւնն Հայոց ի Կիլիկէ Ռուբենիւ, յետոյ Կոստանդ, յետ որոյ Թորոս ի ԺԷ. (17) ամի թագաւորութեանն սորին Գրիգոր Տղայն՝ եղբայր Ներսիսի, փոխէ զհայրապետութեան Աթոռն ի Հռոմկլայն ի ՇԿՁ. (1117) թուոջն մերում[14]: Յորմէ վասն տղայութեանն հասակին, զի էր ԺԵ. (15) ամաց և վասն փոխելոյն զԱթոռն ի Սիս, Դաւիթ եպիսկոպոսն Ախթամարու ապստամբեցաւ և նստաւ կաթուղիկոս յԱխթամար ի սոյն թուիս և տևեաց կաթուղիկոսութիւնն ի Հռոմկլայն յամս ՃՁԷ. (187)[15], մինչև ի Ստեփաննոս[16], ըստ կարգին, զի ունէին զպատիւ հայրապետական և զԱջ Լուսաւորչին, թէպէտ և ոմանք հեստէին ի յուղիղ կարգէն: Ապա ի չորրորդում ամի հայրապետութեանն սորին եկն Մսրայ սուլթանն և գերեաց զԿլայն[17] զկաթուղիկոսն և զԱջ Լուսաւորչին հանդերձ այլովք սրբութեամբք և եկեղեցական պաշտօնէիւք տարաւ ի Մսր ի ՉԽԴ. (1295) թուոջն մերում, ուր և մեռաւ Ստեփաննոս կաթուղիկոսն[18]: Ապա այնուհետև փոխեցին զԱթոռն ի Սիս, ուր և նստաւ Գրիգոր Անաւարզեցին ի նոյն թուոջն[19]: Արդ զգերիլն Ստեփաննոսի և Աջոյն սրբոյ ի Մսր պատմեն ամենայն պատմագիրք, բայց զդարձ ինչ ոչ քնաւ[20]: Թէպէտ և այնուհետև բազմիցս (16ա) գերի և աւարի տունն Կիլիկեցւոց ի Մսրացւոցն, բայց մեք ոչ եդաք աստ: Ապա զկնի ՃԻԹ. (129) ամաց ևս գայ սուլթանն Մսրայ ի ՊՀԲ. (1423) թուոջն մերում ի ժամանակս Լևոնի թագաւորութեանն իսպառ աւերէ զԿիլիկէ և բոլորովին գերէ և աւերէ և զԼևոն իւրայնովքն տանի ի Մսր և բառնայ զթագաւորութիւնն Ռուբենեանց, ըստ ամենից ճշմարիտ պատմագրաց և եղծանէ զհայրապետութիւնն Կիլիկեանց[21]: Թէպէտ և այլք զկնի այնորիկ, որպէս զաշտարակաշէն ամբարտաւանսն ընդ Աստուծոյ, որպէս թէ մախարիլ ի մտի ունէին: Քանզի, որպէս երբեմն բարձմամբ թագաւորութեանն Բագրատունեաց փոխեցաւ կաթուղիկոսարանն ի յԱնւոյ ի Կիլիկէ, նոյնպէս և ի բառնիլ թագաւորութեանն Ռուբենեանց փոխեցաւ անտի ի յիւր սեփական յԱթոռ ի Վաղարշապատ տնօրինեցմամբն Աստուծոյ: Քանզի ի յաւերիլ տանն Կիլիկեանց և ի բառնիլ իշխանութեանն Ռուբենեանց, յետ ԺԸ. (18) ամի ի ՊԴ. (1441) թուոջն մերում, ըստ ամենից ճշմարտապատում պատմագրաց յայտնեցաւ սուրբ Աջն

Լուսաւորչին ի յէջմիածին, ուր և ժողովեցան բոլոր իշխանք, ժողովուրդք և վանականք աշխարհիս Հայոց ի տուչութենէն Աստուծոյ յորդորեցեալք ի բազմապիսեաց հրաշից հաստատեցին զՍուրբ էջմիածին վերստին Աթոռ հայրապետական ազգիս հայոց և եդին կաթուղիկոս զտէր Կիրակոս[22], իսկ աստանօր թէպէտ աւելորդ է երկարելն վասն վերադարձման սրբոյ Աջոյ Լուսաւորչին մերոյ ի Սուրբ էջմիածին, սակայն մինչ յամա-ռեցեալքն ի յախտս ինքնահաճութեան ոչ դադարին յաքացելոյ ընդդէմ խթանի ճշմար-տութեանն առ նոսա ասասցուք զայսքանս ի կարճոյ:

Արդ այնու ժամանակաւ պատմիչքն և եղեալ գործքն ամենեքեան համաձայն վկայեն, թէ ի յայս ժամանակս Աջ Լուսաւորչին վերադարձաւ ի Սուրբ էջմիածին, եթէ դու հակամարտիս, թէ որո՞վ և որպէ՞ս ես ասացից, թէ որո՞վ և որպէ՞ս կենսունակ Սուրբ Նշանն Վարագայ և Գեղարդն Աստուածամուխ եկաւորեցան ի մեզ միջնորդու-թեամբ հարազատից ոմանց ծառայիցն Աստուծոյ, նմանապէս և սուրբ Աջ Լուսաւոր-չին ի յիւր սեփական[I] յԱթոռ: Եթէ յայնս թերահաւատիս և առ յայս չէ զարմանք: Դար-ձեալ եթէ երկնաւոր և ամենակալ թագաւորի ակնարկութեան ոչ հաւատաս առ բերից քեզ և զարարս երկրաւոր և աշխարհակալ թագաւորաց, որոց ոչ ինչ կարես բացասել, մինչ ներկայական եղելութիւնքն վկայեն:

Արդ, որպէս ի վերդ ասացաք, քանիցս անգամ կաթուղիկոսարանն և բոլոր տունն Սսայ կողոպտեալ և աւերեալ եղէն ի Մսրայ սուլթանացն, թէ եկեղեցականք և թէ աշ-խարհականք և մանաւանդ առ Ստեփաննոսիւ, յորում յայտնապէս ընդ կաթուղիկո-սին և սուրբ Աջն և այլք սրբութիւնք տարեալ ասեն պատմիչք և անտի առ ձեզ վերա-դառնալ յոչ ուրեք ունիք զվկայութիւն հաւաստի, թէպէտ հոչակէք, որպէս և կամիք: Բայց մեք ունիմք զպատմիչսն ժամանակին վկայ[23], որք համաձայն ասեն, թէ ի Ջժ. (1461) թուոջն մերում մինչ Զաքարիա կաթուղիկոսն Աղթամարու[24] գնաց ի Դաւրէժ ի տեսութիւն Ջհանշահ թագաւորին, յոյժ սիրեցեալ ի նմանէ ընկալնու զկաթուղիկո-սութիւնն էջմիածնի, ընդ նմին պարգև և զԱջ սուրբ Լուսաւորչին, զխաչվառն և զուրարն[25] և գայ յէջմիածին: Եւ յետ ժամանակաց ի ՋժԱ. (1462) թուոջն առնու զսուրբ Աջն, զխաչվառն և զուրարն և գնայ վերստին ի բնիկ տեղին իւր յԱղթամար[26]: Եւ յետոյ նոյն սուրբ Աջն և խաչվառն և ուրարն ձեռամբ Վրդանէս վարդապետին վերադառնայ ի Սուրբ էջմիածին ի ՋԻԶ. (1477) թուին ի հայրապետութեանն Սարգսի և Յովհա-նիսի[27]: Իսկ Ջհանշահն էր որդի Ղարայ Իւսուֆին, որ ի Լէնկթէմուրէն ի բանտի արգելե-ցեալ կայր ի Մսր ի բազում ժամանակս, ապա ի պակասիլ Լէնկթէմուրին, ելեալ ի Մսրու բազում զօրօք գայ ի Դավրէժ և անդ թագաւորէ: Ասա՛ ինձ, զի՞նչ ինչ փոյթ այլ ազգի և աշխարհակալ թագաւորի միոյ սուտ Աջ հնարել և կամ խաբել միոյ սնազլխոյ: Արդ մեք գիտեմք և հաւատամք, սակայն զայսքանս ասացաք, զի և դուք հաւատասջիք:

[I] Բ. սեփհական

## (16բ) ԳԼՈՒԽ Բ.

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՅԵՏ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՄԵՐՈՅ ԱՌԱՔԵԱԼՔ, ԼՈՒՍԱՒՈՐԻՉՔ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՔ ԱԶԳԻՍ ՄԵՐՈՅ, ՀԱՆԴԵՐՁ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԾՈՎՔՆ ԻՒՐԵԱՆՑ

Նախկին և հանրականապէս Փրկիչն ամենայն մարդկան և լուսաւորիչն բոլորի աշխարհի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ընտրեաց իւր զերկոտասան աշակերտս, զորս և առաքեալս, սիրելիս, բարեկամս, խորհրդականս և հազարապետս անուանեաց, զորս և կոչեաց լոյս և աղ աշխարհի, որոց և ետ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ, փակելոյ և բանալոյ, զորս և ելից և հրազինեաց Հոգւովն իւրով սրբով և հրամայեաց երթալ յաշխարհ ամենայն և քարոզել զԱւետարանն իւր սուրբ և ածել զամենայն ազգս և լեզուս ի խաւարէ կռապաշտութեան ի լոյս Աստուածգիտութեան, ըստ ճշմարիտ և համաձայն վկայութեանց չորից սրբոց Աւետարանչացն և նոցունց սրբազանից առաքելոցն բանից, որք են այսոքիկ՝ Սիմոն, որ և Կեփաս և Պետրոս անուանեցաւ, որոյ են երկոքին թուղթքն Կաթուղիկեայց և Անդրէաս եղբայր սորին: Յակոբոս և Յոհաննէս՝ որդիքն Զեբեթեայ, որք և որդիք որոտման անուանեցան: Այս Յոհաննու են չորրորդ Աւետարանն սուրբ և երեքեան թուղթքն կաթուղիկեայց: Փիլիպպոս, Բարդուղիմէոս և Թօմաս, որք միոյ միոյ անուանց հանդիպեցան: Մատթէոս մաքսաւորն, որ և Ղևի կոչիւր, սորա է առաջին Աւետարանն: Յակոբոս Ալփեայ, որ է Տեառնեղբայրն, որ և արդար կոչեցաւ և սա նստաւ զկնի տեառն պատրիարգ յԵրուսաղէմ և առաջին մատոյց զփրկական պատարագ և սա գրեաց զառաջին թուղթն կաթուղիկեայց և առ յորդին Զեբեթեայ նկատմամբ փոքր Յակոբ կոչեցաւ: Շմաւօն նախանձայոյզն, որ Սիմոն կոչեցաւ և ազգական Քրիստոսի անուանեցաւ, որ է եղբայր Յակոբայ Տեառնեղբօրն: Ղէբէոս, որ նոյն ինքն է Յուդա Յակոբեան և Թադէոս և եղբայր Յակոբայ և Շմաւօնի, վասն որոյ և Յուդա Յակոբեան ասի վասն եղբայրութեան նորին և վասն զատման ի Յուդայէ մատնչէն: Սա գրեաց զկաթուղիկեայց յետին թուղթն, որ Յուդայի ասի: Սոցա եղբայր մի ևս գոյ Յովսէ, որ Յօստոս և Բարսաբայ ևս կոչի: Սա յառաջադրեցաւ ընդ Մատաթիայի ի տեղի մատնչին, բայց վիճակն Մատաթիայի անկաւ, վասն որոյ սա ընդ եօթանասնիցն հաշուեցաւ: Յուդա մատնիչն, զորոյ զտեղին յաջորդեաց Մատաթիա:

Արդ վասն վերոյ յիշեցելոց երից սրբոց առաքելոցդ, այսինքն՝ Յակոբայ, Շմաւօնի և Թադէոսի հարազատ եղբայրութեան իրերաց, առաքելութեանն Քրիստոսի և ի թիւս երկոտասանից գլխաւորացն հաշուելոյն, թէպէտ ոչ ինչ գոյ կարծիք, զի է հաւաստի և ճշմարիտ և ամենից գիտնոց ընդունելի, սակայն, թէ ո՞յր որդիք են և որպէ՞ս ասին եղբարք Քրիստոսի գոյ առարկութիւն և տարաձայնութիւն ի մեջ մերոց վարդապետաց և այլայնոց:

Քանզի մերս Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետք ասեն, թէ սոքա էին որդիք Յօսէփայ Աստուածահօրն ի յայլմէ կնօջէ, հետևելով անտարակոյս և անստելի վկայութեանց սրբոց աւետարանչացն Մատթէոսի և Մարկոսի, որք ի ԺԴ. (14) և ի Զ. (6) գլուխսն միապէս և համաձայն ասեն, թէ եկեալ Յիսուս ի գաւառ իւր ուսուցանէր զնոսա և նոքա զարմացեալք ընդ իմաստութիւն նորա ասէին, ուստի իցէ սմա այս իմաստութիւն, ո՞չ սա է հիւսանն որդի, ո՞չ մայր սորա կոչի Մարիամ և եղբարք սորա Յակոբոս, Յովսէ, Սիմօն և Յուդաս, սոքա ամենեքեան առ մեզ են և այլն: Իսկ այլոց վարդապետք ասեն, թէ ոչ էին որդիք Յօսէփայ, այլ Կղէօպայ, զոր եղբայր ասեն (17ա) Յօսէփայ, որ Ալփէ ևս կոչիւր: Քանզի աւետարանիչքն մինչ զՅակոբոս Յակոբ Ալփեան կոչեն նոքա որդի Ալփէի իմանալով այսպէս ասեն, որ է թիւր իմացումն, զի Յակոբոս, եթէ վասն Յակոբ Ալփեան կոչելոյն Ալփէի որդի լինիցէր, ապա զսոյնոյ Յակոբայ եղբայր Ղէբէոսն՝ որդի Յակոբայ, պարտին իմանալ վասն Յուդայ Յակոբեան ասելոյն, որ է յայտնի սուտ, զի Յուդաս այս (որ է Ղէբէոս և Թադէոսն, որպէս ասացաւ) եղբայր է Յակոբայ և ոչ որդի: Եւ մանաւանդ սրբազան աւետարանիչքն (և առաքեալքն ևս) յամենայն ուրեք զեղբարս Քրիստոսի կոչեն զնոսա ի կողմանէն Յօսէփայ և ոչ յուրեք զորդիս հօրեղբօր: Ասելոց եմք զայսմանէ և ի Ժ. (10) գլուխն ի ճառս Գանձասարու կաթուղիկոսութեանն: Ուրեմն կարճառօտելով զայսմանէ եկեսցուք ի մերս յառաջադրութիւն:

Արդ վերոյ գրեցեալ երկոտասան սրբազան, գլխաւոր, համակարգ և միաշունչ առաքեալքս յետ ընկալման Հոգւոյն սրբոյ ի վերնատանն, նոյնոյ Հոգւոյն սրբոյ ազդմամբն բաժանեցին վիճակաւ զբոլոր ազգս և զլեզուս ի յիւրեանս, առ յորս և գնացին ի քարոզել ըստ հրամանին Քրիստոսի վարդապետին իւրեանց: Նոյնպէս և զեօթանասուն և զերկուս աշակերտս բաժանեցին՝ առնլով ի նոցանէ իւրաքանչիւրքն զերկուս և զերիս: Ապա ազգս և երկիրս Հայոց անկաւ ի վիճակ վերոյ յիշեցելոյ սրբոյն Թադէոսի առաքելոյն, որ է մի յերկոտասանից գլխաւորաց առաքելոյն և եղբայր Յակոբայ, Շմաւօնի և Յովսէի որդւոցն Յօսէփայ Աստուածահօրն, որ Ղէբէոս և Յուդայ ևս կոչի ի սրբազան աւետարանչացն, որպէս ցուցաւ: Իսկ սոյն առաքեալս մեր Թադէոս առնու ընդ իւր ի յեօթանասնիցն զԵղիշէ և զԱտաթէոս և եղեալ յԵրուսաղէմէ ընդ ծովեզերօքն գայ ի Կիլիկիայ, ուր և քարոզելով զԱւետարանն Քրիստոսի՝ գայ մտանէ ի յառաջին

Հայս ի Կեսարիա և լուսաւորեալ զերկիրն արկանէ զհիմն եկեղեցւոյն Քրիստոսի և ձեռնադրէ նոցա եպիսկոպոս զԹէոփիլոս: Եւ անտի ելեալ անցանելով ընդ գետն Եփրատ գայ ի յԵդեսիայ, ուր և մկրտէ զԱբգար[28] թագաւորն հայոց, ընդ նմին և զքաղաքն և զերկիրն ամենայն լուսաւորէ Քրիստոնէական հաւատովն, շինէ զեկեղեցիս, կարգէ զքահանայս և ձեռնադրէ նոցա եպիսկոպոս զԱդդէ կերպասագործն: Եւ անտի ելեալ գայ ի յԱրտազ[29] գաւառ առ Սանատրուկ[30] արքայն, յորմէ և կատարի ի փառս Քրիստոսի ի թուոջ Փրկչին մերոյ խ. (40)՝ յետ է. (7) ամի Համբարձմանն: Յորոյ վերայ յետոյ հրաշալի և մեծափառ վանք կառուցանի, որ կայ այժմ և կոչի յանուն սրբոյն Թադէոսի առաքելոյն: Եւ յետ կատարման սորին Ստաթէ աշակերտն սորին ելեալ ընդ հիւսիսաւ գնայ ի Սիւնիս[31] և անդ կատարի բարի մահուամբ, յորոյ վերայ ևս շինեն վանք հրաշալի, որ կայ մինչև ցայսօր և կոչի Տաթևու վանք: Իսկ միւս աշակերտն Եղիշէ ելեալ գնայ յԵրուսաղէմ առ սուրբ առաքեալն Յակոբոս (որ էր եղբայր Թադէոսի և առաջին պատրիարգ յԵրուսաղէմ) և պատմէ զկատարումն Թադէոսի: Վասն որոյ և սուրբն Յակոբոս ձեռնադրէ զԵղիշէ եպիսկոպոս և վերադարձուցանէ զնա ի տեղի Թադէոսի ի վիճակ նորին, որոյ եկեալ ի յԱղուանս և անդ կատարեցաւ:

Յետ այսորիկ դառնայ ազգս մեր ըստ մեծի մասին վերստին ի կռապաշտութիւն թագաւորօք և իշխանօք, մինչև ի սուրբն Գրիգոր Պալհաւեան: Արդ ի Յայսմաւուրն մեր, որ սխալ է ըստ մեծի մասին և աղճատեալ և յայլս ոմանս պատմագիրս յորս գրին, թէ Թադէոս առաքեալն մեր էր ի թուոյ եօթանասնիցն կամ ընդ Թօմայի առաքելոյն լեալ և ի նմանէ առաքեցեալ ի Հայս և կամ թէ այլ է Յուդա Յակոբայն և այլ սոյն Թադէոսս բնաւքն սուտք են և ի թիւրամտաց ներմուծեցեալք յանհոգութենէ և ի զանցառութենէ նախնեաց երանելեացն մերոց թոյլատրեցեալք և ի խաժամուժս հասարակեալք և յապա եկելոցն, որպէս թէ ի նախնեաց աւանդեցեալ վասն որոյ իբրև զհաւաստի ընկալեալք և կամ, թէ ի հոմանունութենէ Ստաթէի աշակերտին առաքելոյս մեծի, որպէս ասացաւ, խաբեցեալք: Քանզի (17բ) սոյն[I] առաքեալս մեր և մեծս Թադէոս էր ի թուոյ երկոտասանիցն, եղբայր Յակոբայ և Շմաւօնի, գլխաւոր և մեծ առաքեալ և Լուսաւորիչ ազգիս հայոց, որ և նոյնս է Ղէբէոս և Յուդայ Յակոբեան, սմա պատահի սուրբ առաքեալն Բարդուղիմէոս ի յՕթեաց վանք կոչեցեալ տեղուջն[32], որք երկոքեանն ևս քարոզեն զՔրիստոս ի Հայս և կատարին յերկիրս Հայոց և կոչին առաքեալք և նախկին Լուսաւորիչք հայոց: Եւ ի տեղւոջ կատարման սոյն Բարդուղիմէոսի սրբոյ առաքելոյս ևս շինի վանք հրաշալի յանուն սորին, որ է ի (.....), այսինքն՝ ի յԱխբակ[33], որ կայ մինչև ցայսօր: Եւ յետ կատարման սրբոց առաքելոցն մերոց, զկնի մահուանն մեծին Աբգարու Անանէ որդի նորա ի յԵդեսեայ և քեռորդի նորին Սանատրուկ ի Հայս ի

[I] Բ. > սոյն

յԱրտազ գաւառի գոլով թագաւորեալք՝ ուրացեալք զՔրիստոս վերադարձան ի կռապաշտութիւն, ընդ նոսին և բոլոր ազգս հայոց, թէպէտ յուրեք յուրեք գտանէին ի ծածուկ քրիստոնեայք:

Ապա յետ ՄԿԴ. (264) ամաց ի թուոջ Փրկչին մերոյ ՅԴ. (304) և ի ԺԵ. (15) ամի թագաւորութեան Տրդատայ այցելութեամբն Աստուծոյ ելանէ սուրբն Գրիգոր ի Վիրապէն և բժշկէ զհարուածեալն Տրդատ և զդիւաբախ ազգս հայոց և ածէ ի հաւատս Քրիստոսի: Եւ ի ՅԵ. (305) ամին Փրկչին մերոյ ի ԺԶ. (16) ամին Տրդատայ գնայ ի Կեսարիա առ Ղևոնդիոս պատրիարգն (որ ի Թադէոսի և Թէոփիլոսի գաւազանէն էր յաջորդեալ զկարգն) առնու ի նմանէ զօծումն քահանայութեան, ընդ նմին և զեպիսկոպոսութիւն ազգիս հայոց և գայ նստի հայրապետ հայոց ի ՅԶ. (306) թուոջ Փրկչին մերոյ ի ԺԷ. (17) ամի թագաւորութեանն Տրդատայ յամս Լ. (30): Ի ՅԻԸ. (328) թուոջ Փրկչին մերոյ ի ԻԳ. (23) ամի հայրապետութեանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և ի Ի.[I] (20) ամի թագաւորութեանն Կոստանդիանոսի և ի ԼԹ. (39) ամի Տրդատայ լինի ժողովն Նիկիոյ[34]: Սուրբն Արիստակէս որդի նորա յամս Է. (7)[35]: Սուրբն Վրդանէս եղբայր նորա յամս ԺԵ. (15): Սուրբն Յուսիկ որդի նորա յամս Զ. (6): Փառներսեհ յամս Ե. (5): Սուրբն Ներսէս թոռն Յուսկան յամս ԼԴ. (34): Ի ՅՁԹ. (389) թուոջն Քրիստոսի ի Դ. (4) ամին մեծին Թէոդոսի ի ԻԲ. (22) ամին Արշակայ մերոյ թագաւորին ի ԻԱ.[II] (21) ամին մեծին Ներսէսի լինի ժողովն Կոստանդնուպօլսոյ[36]: Շահակ, Զաւէն և Ասպուրակէս յամս ԺԳ. (13): Սուրբն Սահակ Պարթևն յամս ԾԱ. (51): Ի ՆԾԷ. (457) թուին Քրիստոսի ի ԻԱ. (21) ամին փոքր Թէոդոսին յետ բարձման թագաւորութեան մերոյ Է. (7) ամի ի ԽԲ. (42) ամին մեծին Սահակայ լինի ժողովն Եփեսոսի[37]: Ի ՆԿԱ. (461) թուին Քրիստոսի ի ԻԵ. (25) ամին նոյն Թէոդոսի յանիշխանութեան մերոյ ԺԱ. (11) ամին ի ԽԶ. (46) ամին Սահակայ լինի երկրորդ ժողովն Եփեսոսի: Սուրբն Յօսէփ, որ նահատակի ընդ Ղևոնդեանց յամս Բ. (2): Տէր Գիւտ աշակերտ սրբոյն Սահակայ յամս ԺԵ. (15): Սա ի խնդրոյ սրբոյն Վարդանայ և յայլոց իշխանացն մերոց փոխէ զաթոռն ի Դվին[38]: Ի ՆՀԱ. (471) ամին Քրիստոսի ի յառաջին ամին Մարկիանոսի պղծոյն ի Ը. (8) ամի իշխանութեանն Վարդանայ ի Գ. (3) ամի Գիւտ կաթուղիկոսին մերոյ լինի ժողովն Քաղկեդոնի[39]: Եւ յաւուրս սորա նահատակին Վարդանաճ, մնայ անիշխան ազգս հայոց յամս Զ. (6): Ապա կարգէ մարզպան հայոց Պերոզ արքայն պարսից զՄագնոս ոմն զկնի պղծոյն Յազկերտի սատակելոյն: Տէր Յոհան Մանդակունի յամս ԺԲ. (12): Սա զարդարեաց ժամակարգութիւն եկեղեցւոյս մերոյ[40]: Տէր Բաբգէն յամս Ե. (5): Ի ժամանակս այսց երկուց հայրապետացս և ի յորդորմանէ սոցին բարեպաշտ թագա-

---

[I] Բ. ԻԳ.

[II] Բ. ԽԱ.

տորն Կոստանդնուպօլսոյ՝ Զենոն և Անաստաս բոլոր Իտալիայիւ, Յունօք, Ասորօք, Հայիւ, Աղվանօք և Վրօք, երկիցս անգամ ժողով արարեալ նզովեցին զժողովն Քաղկեդոնի: Տէր Սամուէլ ի Բզնունեաց, յամս Ե. (5): Ի սորա յաւուրս կարգեցաւ մարզպան հայոց Վահան Մամիկոնեան, որդի Հմայեկայ: Տէր Մուշէ ի Կուտէից յամս Ը. (8): Տէր Սահակ ի Հարքայ յամս Ե. (5): Տէր Քրիստափոր ի Բագրևանդայ (18ա) յամս Ե. (5): Տէր Ղևոնդ յամս Բ. (2):

Տէր Ներսէս ի յԱշտարակայ յամս Թ. (9): Եւ սա արար զժողով ի Դվին ընդդէմ երկաբնակաց[41]: Տէր Յովաննէս ի Գաբեղենեանց յամս ԺԵ. (15): Յաւուրս սորա յետ Վահանայ լինի մարզպան Հայոց Վարդ եղբայր նորա: Յետ Վարդայ տանիկք տիրեն հայոց յամս Դ. (4): Ապա Մժեժ Գնունի յամս Լ. (30): Ապա տանիկք յամս ԼԶ. (36): Տէր Մօսէս յեղուարդայ յամս Լ. (30): Ի սորա Գ. (3) ամին և ի Քրիստոսի ՇԾԲ. (552) թուոջն կարգեցաւ թիւն Հայոց, յորում ասացաւ մէկ: Եւ ի Ժ. (561) թուոջն մերում կարգեցաւ հինգհարիւրեակ շրջանին: Տէր Աբրահամ յՌշտունեաց յամս ԻԳ. (23): Ի սորա ժամանակս փայլէր քաջն Սմբատ Բագրատունի, որ զհեծեալ ձին իւր երկու ծնկամբն սղմեալ և ինքն ի ճղոց անտառաց կախեալ բարձրացուցանէր յերկրէ: Ի Ը. (8) ամի կաթուղիկոսութեանն Աբրահամու և ի ԾԸ. (609) թուոջն մերում լինի մարզպան հայոց Դաւիթ Սահառունին զկնի տանկաց: Ի Հ. (621) թուոջն մերում և ի Ի. (20) ամին սորա Մահմէտն թագաւորէ ուստի և սկսանի թիւն տանկաց: Ի ԻԴ. (24) ամին սորա և ի ՀԴ. (625) թուոջն մերում Վիրք բաժանին ի Հայոց: Տէր Յօհան ի Կոգովտայ, որ ընդդէմ Աբրահամու նստաւ ի Կարին և մեռաւ յառաջ քան զԱբրահամ[42]: Սա հետևեցաւ աղանդոյն Քաղկեդոնի:

Տէր Կոմիտաս յԱրագածոտնէ յամս Ը. (8): Տէր Քրիստափոր յամս Բ. (2): Տէր Եզր ի Նիգ գաւառէ յամս Թ. (9): Սա գնաց ի Կարին ի կոչ Հերակլ արքային Յունաց և ընդունի զժողովն Քաղկեդոնի, որո զվարձ առնու յարքայէն զԿոխբ զեօղն և զաղն: Ի սորա Բ. (2) ամին լինի մարզպան հայոց Թէոդորոս Ռշտունին: Տէր Ներսէս շինօղն ի Տայք գաւառէ յամս Ի. (20): Սա շինէ զՍուրբն Գրիգոր խաչ էջմիածնի[43], որ այժմ հանգուցեալ է: Ի սորա ժամանակս լինի մարզպան հայոց Համազասպ և յետոյ Գրիգոր Մամիկոնեան: Տէր Անաստաս յԱրկուռոյ յամս Զ. (6): Սա հարկեաց զԱնանիայ Շիրակացին շինել զտօմարն անշարժապէս[44]: Տէր Իսրայէլ յամս Զ. (6): Տէր Իսահակ ի Ձորափորոյ յամս ԻԳ. (23): Սա գնաց ի խառան ընդդէմ Մահմետի յորդորմամբ իշխանացն մերոց և անդ մեռաւ[45]: Յաւուրս յայսոսիկ էին իշխանք Թէոդորոս, Գրիգոր, Ներսէհ, Աշոտ Բիւրատեան, Սմբատ Բագրատունի և այլք, որք յեկեղեցին Նախիջևանու այրեցան ի տանկաց ի սէրն Քրիստոսի: Վասն որոյ յամս բազումս մնաց անիշխան ազգս հայոց:

Տէր Եղիա Աղիովտայ յամս ԺԴ. (14): Սա եւոյծ ի սուտ կարգէն զԲակուրներսէսն Աղուանից և ձեռնադրեաց նոցա կաթուղիկոս զՏէր Սիօն: Տէր Յօհան Օձնեցին յամս

ԺԱ. (11)։ Սա գնաց առ սուլթանն տանկաց և էառ հրաման և վարեաց զազգն Յունաց ի յերկրէս հայոց և արար ժողով ի Մանածկերտ սրբեաց զազգս մեր ի չար աղանդոյն Քաղկեդոնի, որ մնացեալ էր ի յեզրայ կաթուղիկոսէն[46]։ Տէր Դաւիթ յԱրամունեաց յամս ԺԳ. (13)։ Տէր Տրդատ յամս ԻԳ. (23)։ Միւս տէր Տրդատ յամս Գ. (3)։ Տէր Սիօն ի Բագուանից յամս Ը. (8)։ Ի սոյն ժամանակս Մուշէղ Մամիկոնեան այլովք ազատազունդ զօրօք կոտորեցան ի տանկաց։ Տէր Եսայի ի Նիգ գաւառէ յամս ԺԳ. (13)։ Ի սորա Զ. (6) ամին յառաջանայ իշխանն Սմբատ։ Տէր Ստեփաննոս, տէր Յովաբ, տէր Սօղոմօն յամս Գ. (3)։ Տէր Գէորգ ի Բիրականայ յամս Գ. (3)։ Տէր Յովսէս յԱրագածոտնանէ յամս ԺԱ. (11)։ Ի սորա Թ. (9) ամին լինի իշխան հայոց Աշոտ որդին Սմբատայ։ Տէր Դաւիթ յամս Իէ. (27)։ Տէր Յովաննէս ի Կուտէից յամս ԻԳ. (23)։ Իշխան հայոց Սմբատ որդին Աշոտոյ։ Տէր Զաքարիա ի Կուտէից Ձագոյ Ախթամարայ յամս ԻԲ. (22)։ Իշխանաց իշխան Աշոտ որդի Սմբատայ։ Տէր Գէորգ Գառնեցի յամս ԻԲ. (22)։ Սա գերեցաւ ի լափլիզաց[47], յետոյ ազատեցեալ ճմլեաց զկզակս կաթուղիկոսացն Աղուանից։ Ի սորա Ժ. (10) ամին և ի թուականութեանն հայոց ՅԼԵ. (886) վերոյ գրեալ Աշոտն թագաւորէ հայոց և յետ Ե. (5) ամի վախճանի։ Թագաւորէ որդի սորին Սմբատ Տիեզերակալն, որ յետոյ յանօրէն Յուսիփայ ի Դվին քաղաքի մարտիրոսանայ։ Մնայ (18բ) անիշխան ազգս հայոց յամս Ե. (5)։

Տէր Մաշտոց սուրբն Գառնեցի յամս Ա. (1)։ Տէր Յովաննէս պատմագիր[48] և ազգական Մաշտոցայ և Գէորգայ յամս ԻԸ. (28)։ Ի սորա ԻԳ. (23) ամին թագաւորէ Աշոտ որդին Սմբատայ։ Տէր Ստեփաննոս յամս Ա. (1)։ Տէր Թէոդորոս յամս ԺԱ. (11)։ Ի սորա Բ. (2) ամին թագաւորէ Աբաս որդին Սմբատայ և եղբայր Աշոտոյ, որ էր խաղաղարար և վանաշէն, սա շինեաց զկաթուղիկէն յԱնւոյ[49] և զՃոռմոսի վանքն և զայլսն։ Տէր Եղիսէ յամս Է. (7)։ Տէր Անանիա Մոկացին յամս ԻԲ. (22)։ Սա ևս ոչ սակաւ աշխատի և հոգայ վասն Գանձասարու ոմանց կաթուղիկոսաց լրբութեանն և աբստամբութեանն, մինչև նուաճէ վերջապէս[50]։ Ի սորա Ը. (8) ամին թագաւորէ Աշոտ որդին Աբասայ, որ Ողորմածն կոչիւր։ Յերկրորդ ամի թագաւորութեանն սորա, կին սորայ՝ Խոսրովանոյշ թագուհին շինէ զվանքն Հաղպատու ի ՅԳ. (855) թուոջն մերոյ և յետ Ժ. (10) ամի ինքն շինէ զՍանահնոյ վանքն[51]։

Տէր Վահան հերձուածող ընկեցեալ եղև յամս Ա. (1)։ Տէր Ստեփաննոս ազգական Մաշտոցին յամս Բ. (2)։ Տէր Խաչիկ յամս ԻԱ. (21)։ Ի սորա Թ. (9) ամի թագաւորէ հայոց Սմբատ Շահնշահ որդին Աշոտոյ ողորմածին։ Սա պարսպէ զքաղաքն յԱնի և ըստ արժանւոյ թագաւորութեան պայծառացուցանէ։ Եւ սկսանի շինել զսուրբն Գրիգոր զարմանալին և ոչ կարաց կատարել, յետոյ կին Գագկայ թագաւորին կատարէ։ Ի սոյն ժամանակս և Վահրամ իշխանն իշխանաց շինէ զուխտն Մարմարաշէն[52]։ Այս Սմբատ Շահնշահս, որ և Տիեզերակալ կոչեցաւ, զեղբայր իւր Գեօրկին թագաւորեցուցանէ ի

Վիրս ի ՅԼԵ. (886) թուոջն մերոյ, որ եղև սկիզբն Վրաց թագաւորութեան։ Տէր Սարգիս յամս ԻԵ. (25)։ Ի սոյն ամի և թագաւորէ Գագիկ որդին Աշոտոյ, եղբայր Սմբատայ։ Տէր Պետրոս Գետադարձն յետ և յառաջ յամս ԽԲ. (42)։ Ի սորա Զ. (6) ամին թագաւորէ Յովանէս որդին Գագկայ, որ և Սմբատն կոչիւր։ Ի ժամանակս յայս ի ՆՀ. (1021) թուոջն մերոյ, Սենեքերիմ արքայն Վասպուր[ական]ի, նեղեալ ի տանկաց՝ ետ զերկիրն իւր Յունաց կայսերն Վասլի և էառ ի նմանէ զՍեբաստիա, յոր և եկեալ բնակեցաւ և անդ մեռաւ։ Սա շինեաց զվանքն Սուրբ Նշանին անդ[53]։ Ի ՆՁԶ. (1037) թուոջն մերոյ անկաւ գժտութիւն ի մէջ Պետրոս կաթուղիկոսին և Յովանէս թագաւորին, վասն որոյ գնաց կաթուղիկոսն ի Վասպուր[ական], յոր եկաց ամս Դ. (4) և թագաւորն բերեալ զԴէոս-կորոսն ի Սանահնոյ արար կաթուղիկոս և բերեալ զՊետրոսն եդ ի բանտի ԺԸ. (18) ամիս։ Եկեալ կաթուղիկոսն Աղուանից արար հաշտութիւն, զոէր Պետրոսն եդին յաթոռ իւր և զԴէոսկորոսն առաքեցին յիւր տեղին։ Ի ԻԶ. (26) ամի տէր Պետրոսին թագաւորեցուցանեն յԱնի զԳագիկ որդին Աշոտոյ, որ ոչ կարաց վարել զթագաւորու-թիւնն։ Զսա տարան ի Կոստանդնուպօլիս յոյնք ազատագունդ իշխանօք և անդ արգելին և ինքեանք տիրեցին Հայոց յամս ԻԳ. (23)։

Ապա ի թուոջն մերոյ ՇԺԳ. (1064) եկն Ալփասլանն անիծեալ էառ զյԱնի և ընդ ձեռամբ արար զՀայս։ Եւ բարձաւ ամենայն թագաւորութիւնն Բագրատունեաց իսպառ։ Յառաջ քան զայս, թագաւորն Յունաց Կոստանդին, լսելով զբարի համբաւս Պետրոս կաթուղիկոսին, հրաւիրէ ի գնալ առ յինքն, որ և ի ՇԳ. (1054) թուոջն մերոյ օրհնէ զքեռորդին իւր զտէր Խաչիկն ի տեղի իւր կաթուղիկոս և ինքն գնայ ի Պօլիս, յուր և կեցեալ յամս Դ. (4) դառնայ ի Սեբաստիա և անդ վախճանի ի ՇԸ. (1059) թուոջն մերոյ։ Տէր Խաչիկ քեռորդին տեառն Պետրոսի յամս Ը. (8)։ Հայոց թագաւոր ոչ գոյ։ Վասն որոյ Տուկիծ[54] պիղծ թագաւորն Յունաց տարեալ զսա ի Պօլիս վասն ի յիւրեանց աղանդն դարձուցանելոյ և խափանելոյ զկաթուղիկոսութիւնն հայոց և վասն ընչից տեառն Պետրոսին շատ նեղութիւնս հասուցեալ և ի հուր արկեալ ոչ ինչ կարաց առ-նել, զի զերծեալ Աստուծով դարձաւ ի Սեբաստիայ և անդ վախճանեցաւ։ Տէր Գրիգոր Վկայասէրն, որ Վահրամ կոչիւր, որդի Գրիգորիս Մագիստրոսի իշխանին Բջնեցւոյ։ Սա ոչ եկաց ի յաթոռն, այլ գնաց ի Պօլիս վասն թարգմանութեան գրոց, անտի ի յԵրուսա-ղէմ և յԵգիպտոս։ Վասն որոյ եդին յաթոռն յԱնի մնացորդք հայոց զտէր Բարսեղ (19ա) ազգական նոյնոյ Վկայասիրին։ Արդ ի սոյն ժամանակս նստան չորս կաթուղի-կոսք հայոց՝ տէր Բարսեղն յԱնի, տէր Գրիգոր Վահրամն ի յԵգիպտոս, տէր Պօղոսն ի Մարաշ և տէր Թորոսն ի Հռնի[55]։ Վասն որոյ և թիւ սոցա անհաւաստի գոլով ոչ ուղղապէս դնին ի պատմագիրս։

Այլև ի սոյն ժամանակս զօրացեալ իշխանքն Հայոց ի Կիլիկէ, որք ի Բագրատու-նեաց և ի Սէնեքերիմեանց սկսան բռնանալ, մինչև և թագաւորել ժամանակս ինչ, որոց

առաջինն էր Ռուբէն ի ՇԻԵ. (1076) կամ աւելի և պակաս թուոյն մերում: Տէր Գրիգոր Տղայն ազգական վերոյ Վահրամայ և Բարսղի, եղբայր Ներսիսի շնորհալւոյն, որ ի թուոյն մերոյ ՇԿԶ. (1117) նստի կաթուղիկոս յԱնի յամս Ծ. (50): Սա էր հնգետասա- նամեայ (թէպէտ էր կատարեալ և շնորհալի), մինչ նստաւ և փոխեաց զաթոռն ի Հոռմկլայն առ թագաւորսն մեր ի Կիլիկէ: Վասն որոյ Ախթամարու առաջնորդ Դաւիթ վարդապետն ապստամբեալ նստի կաթուղիկոս յԱխթամար, որ մնայ մինչև ցայսօր: Զկնի Ռուբէնի նստի որդի նորա Կոստանդին: Զկնի սորա որդի սորա Թորոս, զկնի սո- րա Լևոն թագաւորն: Տէր Ներսէս շնորհալին եղբայր Գրիգորի յամս Է. (7): Զկնի Լևոնի որդին Թորոս, յետ նորա եղբայր նորա Մլեհ, յետ նորա Ռուբէն, յետ նորա Լևոն, որ յերկուց թագաւորաց ընկալաւ զթագ և եղև անուանի: Տէր Գրիգոր տղայն եղբօր որդի Ներսէսին յամս Ի. (20), որ և Քարավէժ ասի: Տէր Գրիգոր Ապիրատն եղբայր վերնոյն յամս Ը. (8): Տէր Յովհաննէս մեծաբարոյն յամս Ը. (8): Ընկեցուն զսա և դնեն զԴաւիթ յամս Բ. (2), յետոյ զնոյն Յովհաննէս հաստատեն վերստին յամս Ժ. (10): Տէր Կոս- տանդին Բարձրաբերդցին յամս ԽԷ. (47): Յետ Լևոնի դնեն թագաւոր զՖիլիպ Ֆռանկ: Յետոյ սպանեալ զսա դնեն թագաւոր զՀեթօմ: Ի սոյն ժամանակի ի ՈՀ. (1221) թուոյն ել թաթարն և աւերեաց զբոլոր աշխարհս, զորոյ որպիսութիւնն տե՛ս ի Կիրակոս պատմագիրն և յայսմ միջոցի սկզբնաւորեցաւ Օսմանցւոց թագաւորութիւնն ի յՕս- մանէն ի ՈՂ. (1241) թուոյն, զի ի Մահմէտէն մինչև ցայս վայր սուլթանք և խալիֆայք կոչէին, այսուհետև թագաւորք անուանեցան ի յՕսմանէն սկսեալ: Տէր Յակոբ Տարսո- նացին կեցեալ յամս ԺԹ. (19), յետոյ ախտորեցին:

Ի ՉԺ. (1261) թուոյն մերոյ մսրցին[56] գայ ի վերայ Սսայ և շատ աւերս առնէ, զոր- դիս Հեթօմայ թագաւորին զԹորոս սպանանեն և զԼևոն գերեն: Յետ Թ. (9) ամի ազա- տեցեալ գայ և Հեթօմ զսա կարգէ թագաւոր և ինքն հրաժարեալ կրօնաւորի: Կրկին ի սորա ժամանակին գայ Մսրայ սուլթանն ի Կիլիկէ և աւերէ և գերէ զամենեսեան ի ՉԺԹ. (1270) թուոյն: Տէր Կոստանդին Ախթամարայ, որ Գ. (3) ամ և ապա ախտորեցին: Թագաւորէ Հայոց զկնի Լևոնի Հեթօմ, յետոյ գայ յերուսաղէմ կրօնաւորի: Տէր Ստե- փաննոս յեկեղեաց գաւառէն յամս Գ. (3): Ի ՉԽԲ. (1293) թուոյն մերոյ ի յերրորդ ամին սորա գայ վերստին սուլթանն Մսրայ ի Կիլիկէ աւարէ և գերէ խպառ, զկաթուղիկոսն և զսուրբ Աջն Լուսաւորչին և զայլ սրբութիւնսն տանի ի Մսր: Եւ բառնայ ի Կիլիկիու զկաթուղիկոսարանն:

Յետ այսորիկ նստի ի Սիս Գրիգոր Անաւարզեցի յամս ԺԳ. (13): Թագաւորէ Հա- յոց Լևոն որդի Թորոսի, յետ սորա թագաւորեն Թորոս, Սմբատ, Կոստանդին և Լևոն ի սակաւ ժամանակս: Տէր Կոստանդին հերձուածող[57] յամս ԺԵ. (15): Ընդ սմին և թագա- ւորէ Օշին եղբայր Հեթմոյ, յետ սորա Լևոն որդին: Այս հերձուածող կաթուղիկոս և Օշին թագաւոր զհալածանս յարուցին ի վերայ ուղղափառաց, որպէս զթագաւորս այլազ-

գեաց, յորմէ շատf մեռան: Տէր Կոստանդին Լամբրոնացին յամս Ե. (5): Տէր Յակոբ Սսեցին fեռորդի վերնոյդ Գրիգորի յամս ԺԴ. (14): Զսա աfսորեցին և եդին զտէր Մխիթարն յամս ԺԴ. (14): Յետ Մխիթարայ դարձեալ նստաւ վերոյ Յակոբն յամս Դ. (4): Զկնի Լևոնի թագաւորէ Կոստանդին: Յայս միջոցիս էր Յօհան Քռնեցին: Տէր Մեսրոպ յամս ԻԶ. (26), որ եբարձ զշուրն ի սուրբ խորհրդոյն և հերfեաց զախթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածօղէն և յՕշին թագաւորէն: Թագաւոր հայոց Կոստանդին, յետոյ և միւս Կոստանդին, յետոյ և միւս Կոստանդին և միւս չոր-րորդ Կոստանդին, յետոյ Լևոն որդի բրնձին:

Ապա եկն սուլթանն Մարայ ի ՊՀԲ. (1423) թուոջն մերում և գերեաց զԼևոն և զկինն և զամենայն Կիլիկիա տարաւ ի Մսր, (19բ) ուր վերջացաւ թագաւորութիւնն Կիլիկեցւոց, ընդ նմին և կաթուղիկոսութիւն, զի ի վախճանել տեառն Մեսրոպայ ի ՊԼԳ. (1384) թուոջն մերոյ նստան թէպէտ ի Սիս ԺԲ. (12) կաթուղիկոսունf ևս, սակայն աննշանf և անհամբաւf, որf են՝ Կոստանդին, Պօղոս, Թէոդորոս, Կարապետ, Դաւիթ, Կարապետ, Յակոբ, Կոստանդին, Գրիգոր, Պօղոս, Կոստանդին և Յօսէփ, մինչև ի ՊՂ. (1441) թիւն մեր, յորում շնորհօfն Աստուծոյ վերանորոգեցաւ Սուրբ էջմիածին, յորում նստաւ տէր Կիրակոս:

## (19բ) **ԳԼՈՒԽ Գ.**

## ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՞ՅՔ ԵՂԷՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՕՂՔ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԷՋՄԻԱԾՆԻ, ԵՐԿՐՈՐԴԱՊԷՍ, ՈՐՔ Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՋՍ ՆՍՏԱՆ, ՅՈՐՈՒՄ ԵՒ ՅՈՒՅԱՆԻՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒՆՔՆ ՍՈՅՆՈՅ ՄԻՋՈՅԻՍ Ի ԿԻՐԱԿՈՍԷ ՄԻՆՉԵՒ Ի ՄՕՍԷՍ ՍԻՒՆԵՑԻՆ

Առդ յայնքան միջոցումն, յորս կաթուղիկոսունքն ի Դվին և ի յԱնի նստան, երբեմն ի յԱթոռոջս էջմիածնի գտանէին վանականք և կրօնաւորք, թէև կարի սակաւուք և գծուծք: Իսկ ի միջոցին ի յամս ՅԻԴ. (324), յորս նստան ի Սիս, իսպառ մնաց ի յամայութեան մինչև ի ՊՂ. (1441) թիւն մեր, յորում վերստին գթացաւ տէր ի յիւրակերտ Աթոռն և նորոգեաց, յորում սկզբանն նստաւ Կիրակոս ճգնազգեաց հայրապետն: Ուրեմն նախ և յառաջ անհուն և անհամար է բարերարութիւն սրբոյ Լուսաւորչին մերոյ, յորոյ ձեռն հրաշակերտեցաւ նախապէս Սուրբ Աթոռս էջմիածին և լուսաւորեցաւ ազգ մեր հաւատով աստուածպաշտութեան և նորին որդւոց և թոռանցն և նմանեաց նոցին, որովք սնաւ և զարգացաւ և պայծառացաւ պէս պէս շնորհօք և հոգևորական կարգօք, նոյնպէս և բարեպաշտ և Քրիստոսասէր թագաւորացն մերոց և իշխանացն, որովք մնաց հաստատուն և պահեցաւ ապահով յամենից թշնամեաց և ապականչաց, քան զորս ոչ ունիմք (բաց յԱստուծոյ) բարերար ազգս հայոց, երկրորդապէս ոչ սակաւք են բարերարութիւնք և այնց հայրապետացն մերոց, որք զկնի ամայութեան Սրբոյ Աթոռոյս և անտիրանալոյ ազգիս մերոյ, վերստին նոր նորոգեցին զսա և պայծառացուցին, քան զոր էր և զազգս մեր ցրուեալ և անիշխանացեալ վերաժողովելով ընդ թևօք սորին՝ պահպանեցին ի հոգևոր և ի մարմնաւոր թշնամեաց, որք որպէս Զօրաբաբել եղեն մեզ յիւրաքանչիւր ժամանակս զկնի Սօղոմօնի: Եւ մանաւանդ ի Դվին, յԱնի և ի Սիս նստօղք հայրապետքն ի ժամանակս իշխանութեան մերայնոց թագաւորաց և իշխանացն էին, որովք նստէին և որոց օգնականութեամբն կառավարէին զգործս և վարէին զհայրապետական իշխանութիւնն, որք որպէս թէ ի վարդէ և ի մանուշակէ (20ա) կազմէին զդեղս առողջարարս: Իսկ յետինքս, որք վերանորոգելով զՍուրբ Աթոռս ի սմա եդին զհայրապետականն Աթոռ ի ժամանակս իշխանութեան տաճկաց և օտարաց և բարբարոս թշնամեաց էին, որք որպէս թէ ի մահացուցչաց առնուին զդեղս կենաց անձնամատն վշտակրութեամբ: Վասն այսորիկ և առաջինքն, որովհետև առ յինքեանս ունէին առ ձեռն պատրաստ զմարմնաւոր զհրամանատուսն

և դիւրութեամբ առնուին զոր ինչ և կամէին ոչ ինչ արարին զփոյթ զարձանագրութեանց վասն ապագայիցս, յորոց ոչ ինչ ունիմք աճա յետինքս զգիր մի օգտաւոր և ուրախածանոյց (ո՞ գիտէ, թէրևս լեալք ևս իցեն, անհետացեալք իցեն, որք թէ լինէին ևս, ոչինչ օգնէին այժմ, որովհետև այլայլեցաւ իշխանութիւնն), իսկ յետինքս որովհետև դժուարաւ և բազմաւ նեղութեամբ և ի հազարից խնդրելեաց զմին հազիւ առ ձեռն բերէին ի հեռի, յօտար և ի բարբարոս տերանց, բազմաւ հոգունակութեամբ ի գիր արձանացուցին և մեզ ապագայիցս թողին, որք աճա որպէս թէ նոցին արձանագիր աւանդութեամբքն վարեմք զժամանակս մեր որքան և իցէ, որոց ամենից յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Արդ որպէս ասացաք ի ՊՂ. (1441) թուին մերոյ վերստին հաստատեցաւ Սուրբ Աթոռս էջմիածին ի յիշխանութեան տաճկաց Ջհանշահ[58] թագաւորին Դաւրիժու, յորում եղև կաթողիկոս նախ Կիրակոս, ապա Գրիգոր Մակուեցին ի ՊՂԲ. (1443) թուոջն։ Արդ, մինչև ի յայս ժամանակ ի Սուրբ Աթոռոջս ամենևին ոչ էր մնացեալ յիշատակագիր մի կամ արքունական և կամ դատաւորական կամ դապալայ մլքից և այլոց այսպիսեաց և կամ վախուպնամայ[59] հայերէն և կամ տաճկերէն։ Այսուհետև սկսան կաթողիկոսունքն յիւրաքանչիւր ժամանակս նորոգել զհին աւուրքն ունեցեալսն և կամ նորապէս ստանալով առաւելուլ զայգիս, զանդս, զմլքատու գեօղօրայս և զայլ այսպիսիս, արքունական և դատաւորական գրովք տաճկաց, զորս ունի աճա Սուրբ Աթոռս, զորս յիւրաքանչիւր տեղւոջն արձանացուցաք գրելով յատուկ յատուկ թուովք, ժամանակօք, դիտաւորութեամբք և որոց ձեռամբք և ժամանակօքն։ Վասն այսորիկ աստ[I] կարճառօտիւք խօսելով դարձուցուք զբանս մեր ի յառաջակայ մնացեալ պատմութիւնս՝ կարգաւ ի մեզ հասուցանելով։

Նախապէս Գրիգոր կաթողիկոսն Մակուեցի, որոյ յաւուրս նստիւր ի Դաւրէժ թագաւոր Ջհանշահն։ Եւ ի տասն ամի հայրապետութեան սորին ի ՋԲ. (1453) թուոջն մերում էառ և զԿոստանդնուպօլիս սուլթան Մահմէտն ի Յունաց։ Այնուհետև տիրեցին իսպառ տաճիկք Յունաց, Հայոց և Պարսից երկրաց միանգամայն և բարձաւ իշխանութիւն քրիստոնէից։ Վասն որոյ այնուհետև ամենայն գործակալք և գործք քրիստոնէից, թէ հոգևորք և թէ մարմնաւորք սկսան հրամանաւ և հրամանագրովք տաճկաց կարգիլ և կատարիլ։ Արդ, որպէս ասացաք, Գրիգոր կաթողիկոսս այս ունի զաշխատանս ի Սուրբ Աթոռոջս, քանզի նախապէս սա նորոգեաց զշինուածս Սրբոյ Աթոռոյս ի ներքուստ և արտաքուստ, զմլքատու գեօղօրայս առնելով հաստատուն դիվանական և դատաւորական գրովք տաճկականօք, որք աճա կան արդէն, զորս յիւրաքանչիւր տեղւոջն տեսցուք։ Իսկ զկնի սորին մինչև ի Մօսէս կաթողիկոսն Սիւնեցի նստօղ կաթողիկոսունքն ի դառնաշունչ բերմանց ժամանակացն ոչ ինչ ունի արարեալ զնշա-

---

[I] Բ. աստր

նաւոր բարեբարութիւնս ինչ գրելի: Եւ յայսման միջոցս գրեթէ Սուրբ Աթոռս ի վատ անդր ընթանայր օր աւուր և յանշքութիւն: Ապա զկնի տեառն Գրիգորի տէր Արիստակէս ի ՋԴ. (1455) թուոջն: Տէր Զաքարիա ի ՋԺ. (1461) թուոջն: Սա նախ կաթուղիկոս գոլով Աղթամարու յետոյ ի գալն Ջհանշահ թագաւորին ի Դավրէժ գնայ սա առ նա ընծայիւք, յորմէ և առնու զկաթուղիկոսութիւն էջմիածնի ընդ նմին և զԱջ սուրբ Լուսաւորչին, զխաչալումն և զուրարն և գայ յէջմիածին նստի կաթուղիկոս, յետոյ ի ՋԺԱ. (1462) թուոջն առեալ զսուրբ Աջն գնայ վերստին յԱղթամար: Յետ Զաքարիայի տէր Սարգիս ի ՋԺԵ. (1466) թուոջն: Տէր Յովանէս ի ՋԻԴ. (1475) թուոջն: Ի ժամանակս սորա սուրբ Աջ Լուսաւորչին յԱղթամարու եկն ի Սուրբ էջմիածին ձեռամբ Վրթանէս եպիսկոպոսին Շահպունեցւոյ ի ՋԻԶ. (1477) թուոջն: Տէր Սարգիս ի նոյն թուոջն ի ՋԻԵ. (1476): Ի սորա ԺԶ. (16) ամին ի Ջխ. (1491) թուոջն սկիզբն առնու թագաւորութիւն Պարսից ի շխօճաղէն[60], որոյ առաջինն է շահ Իսմայէլն, որ թագաւորեաց յամս ԼԶ. (36): Սա էր որդի Շիխէյտարին[I]՝ որդւոյ Շըխ Սէֆուն[II] ի հօր կողմանէ և ի մօր կողմանէ քեռորդի Եաղուպ (20բ) թագաւորին՝ թոռան Ջհանշահին Դաւրիժու: Զկնի որոյ թագաւորեաց որդին սորա շահ Թահմազն, յամս ԾԱ. (51):

Տէր Արիստակէս ի ՋԽԱ. (1492) թուոջն: Տէր Թադէոս ի ՋԽԸ. (1499) թուոջն: Տէր Եղիսէ ի ՋԾԳ. (1504) թուոջն: Տէր Ներսէս ի ՋԾԵ. (1506) թուոջն: Տէր Զաքարիա ի ՋԿԴ. (1515) թուոջն: Տէր Սարգիս ի ՋԿԹ. (1520) թուոջն: Տէր Գրիգոր ի ՋՁԵ. (1536): Տէր Ստեփաննոս ի ՋՂ. (1541) թուոջն: Տէր Միքայէլ ի ՌԶ. (1557) թուոջն: Այս Միքայէլս նախապէս ճմլեաց զկզակս Աղուանից և Աղթամարու կաթուղիկոսացն, որք կամէին ոտնածել յԱթոռս Սուրբ էջմիածին, զի Աղուանիցն կամէին զՆախիջևան, զԳեղարքունի, զՂափան, զԱխստև և զԼոռի, իսկ Աղթամարանն[III]՝ զԽոյ և զՍալմաստ, զՎան, զՅամիթ, զԱրճէշ, զԽլաթ, զՄուշ և զԲաղէշ յինքեանս գրաւել ի վիճակ[61], որոց աղագաւ եհան զհաստատուն ռաղամս ի շահ Թահմազէն, զի այս յիշեցեալ վիճակքս (զԿէնճէ[62], զԲարդայ[63] և զՋակամներն[64] ևս) յէջմիածնի են, որոց մի ոք իշխեսցէ ձեռնամխիլ, որ ահա գոյ նոյն ռաղամն ի Սուրբ Աթոռոջս, որպէս տեսցես յիւրում տեղւոջն՝ ի Ժ. (10) գլուխն:

Զկնի տեառն Միքայէլի տէր Բարսեղ, տէր Գրիգոր և տէր Ստեփաննոս ի ՌԺԶ. (1567) թուոջն: Տէր Թադէոս և տէր Առաքել ի ՌԻԵ. (1576) թուոջն: Տէր Դաւիթ ի ՌԼԵ. (1586) թուոջն: Տէր Մելքիսէթ ի ՌԽԲ. (1593) թուոջն: Տէր Սրապիոն ի ՌԾԲ. (1603) թուոջն: Տէր Սահակ ի ՌՀԴ. (1625) թուոջն: Տէր Մովսէս Սիւնեցին ի ՌՀԸ. (1629) թուոջն: Արդ ի վերոգրելոցդ և մանաւանդ զկնի եղելոց կաթուղիկոսացս, մինչև ի Յակոբ Ջուղայեցին, տե՛ս զոմանս ործիսութիւնս ի յԱռաքել պատմագիրն և ի Յակոբայ մինչև ի յԱղէքսանդր Ջուղայեցին ի Զաքարիա պատմագիրն:

---

I Բ. Շխ-հէ տարին
II Բ. Շխ-սէֆուն
III Բ. Ախթամարայն

## (21ա) **ԳԼՈՒԽ Դ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ԿԱՐԳ ՄՆԱՑԵԱԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ Ի ՄՕՍԻՍԷ ՄԻՆՉԵՒ ՅԱՒ ՄԵԶ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՅԻՆ ԿԱՐՃԱՌՕՏԱՊԷՍ

Ապա ի հասանիլ թուականիս մերոյ ի ՌՀԸ. (1629), յորում ժամանակի երկիրս արևելեան և Սուրբ Աթոռս էր ընդ իշխանութեան արքային պարսից շահ Ապասին Մեծի, որոյ հրամանաւն և մանաւանդ Աստուծոյ նախասահմանութեամբն և Հոգւոյն սրբոյ տնչութեամբն առնու զլուսարարութիւն Սրբոյ Աթոռոյս ի ՌՀԶ. (1627) թուին Մօսէս Սիւնեցին նախապէս: Եւ ի մեռանիլ շահ Ապասին առաջնոյ ի նստիլ թոռան նորին շահ Սէֆուն առնու զկաթուղիկոսութիւնն ևս ի ՌՀԸ. (1629) թուոջն մերում և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մուրատին: Սա էր այր հոգերնկալ, առաքինազարդ և բնակարան շնորհաց Հոգւոյն սրբոյ, սիրեցեալ յԱստուծոյ և ի մարդկանէ, որ ի նստիլն յԱթոռս սուրբ, որպէս թէ նոր ինորոյ ի հիմանէ նորոգեաց զՍուրբ Աթոռս և պայծառացոյց հոգևորական կարգօք և մարմնական պիտոյիւք, որ գրեթէ զկնի Լուսաւորչին մերոյ և թոռանց նորին և թարգմանչացն մերոց, յայլոց հայրապետացն ոչ ոքն եղև երախտաւոր և բարերար Սրբոյ Աթոռոյս և ազգիս մերոյ նման սորին և զկնի սորին յաջորդօղ հայրապետացն Փիլիպպոսի և Յակոբայ, զորոց ի տեղւոջն իւրեանց տեսցուք:

Արդ այս երանելիս Մօսէս նախապէս եբարձ յԱթոռոյս զհարիւր թուման մուխաթայն, որ յառաջնոց իբր հարկ էր մնացեալ ի վերայ Սրբոյ Աթոռոյս յամի յամի տալ արքունեաց: Զայս մի թեթև և փոքր ինչ կարծիցես, զի ըստ անուանն թէպէտ հարիւր յիշիւր, սակայն ի տալն հազարիւք ոչ վճարիւր և մանաւանդ նորն զհնովն անցեալ գոլով դիզացեալ գոյր[I] ի վերայ Սրբոյ Աթոռոյս: Այլև պատեաց զպարիսպն Սրբոյ Աթոռոյս շուրջանակի ի հողոյ և յօրինեաց ի հիւսիսակողմն Սրբոյ Աթոռոյս զխուցսն միաբանից գեղեցիկ և թրծեալ աղիւսօք և ի յարևմտեան կողմն զմեծամեծ թանապիսն քարեայ կամարով և զայլ շինուածսն: Ի հարաւային կողմն զտնտեսատունն, զսեղանատունսն երկուս, բայց ամռանն փայտեայ, զփուռսն և զայլ ամբարսն ցորենոյ և այլոց իրաց և զխուցսն արևելեան ըստ մասին: Կարգեաց և զդպրոցս մանկանց, յորմէ

---

[I] Բ. կայր

ելին բազում իմաստուն և շնորհալի վարդապետք: Զարդարեաց և այլովք բազմօք եղանակօք զՍուրբ Աթոռս, որպէս ասացաք: Սա շինեաց և զեկեղեցին Անանիա Առաքելոյն, որ ի յԵրևան և արար վանք միաբանակեցաց: Նմանապէս և զամենայն ազգս մեր եկեղեցական և հոգևորական կարգօք զարդարեաց: Զորոյ զբարերարութիւնսն տե՛ս երկարապէս ի յԱռաքել պատմագիրն: Ունի զարքունական և զդատաւորական և զայլս գրեանս առեալ յիւրում ժամանակին ի յօգուտ Սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ գրեսցուք: Եւ ի ՌՁԱ. (1632) թուոյն մերում վախճանի երանելիս յԵրևան և թաղի ի Կոզեռ գերեզմանատանն՝ հուպ Կոզեռ վարդապետին: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի[I]:

(22ա) **Վասն Փիլիպպոս կաթուղիկոսին և որպիսութեան նորին**

Ի ժամ վախճանի իւրոյ երանելին Մօսէս կտակ աւանդէ, զի զկնի իւր նստցի Փիլիպպոս վարդապետն Հաղբակցի, որ էր աշակերտ իւր: Որ և նստաւ իսկ ի ՌՁԲ. (1633) թուոյն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից շահ Սեֆուն և օսմանցւոց սուլթան Մուրատին: Որ և ի նստիլն գտաւ, որպէս զարեգակն ի մէջ աշխարհի և մանաւանդ ազգիս հայոց: Զորոյ զգովութիւն տե՛ս ի յԱռաքել պատմագիրն:

Արդ ի յԱթոռոջս որքան փայտեայ շինուածք գոյին յառաջմանէ աւերեցեալք էին, զամենեսեան շինեաց սա և վերստին նորոգեաց: Զեկեղեցւոյ տանիսն բաց ի գմբեթէն զբովանդակն նորոգեաց: Զարևելեան խուցսն շինեաց քարիւ և աղիւսով գեղեցիկ յօրինուածովք: Զամռան սեղանատունն քարեայ շինեաց վերստին: Զշրջապատ փարշն եկեղեցւոյ և առաջի խցացն սա շինեաց: Ի հարաւակողմն զձիթահանսն շինեաց: ԶՍուրբ տաճարսն Հռիփսիմեայ և Գայիանեայ, որպէս թէ նոր ի հիմանէ շինեաց և զմիաբանս բնակեցոյց, որք յառաջ անբնակք էին լեալք: Որոց մաքուր նշխարքն սովաւ գտեալ և վերստին ամրափակեցան ի տեղւոջն: Եւ զպրոցս մանկանց Սրբոյ Աթոռոյս, որ յառաջ ի Յօհաննա վանքն էր, սա եբեր ի Սուրբ Աթոռս և հաստատեաց, յորմէ ելին բազում երևելիք և գիտունք: Գրեթէ զամենայն վանօրայս Հայաստանեայց սա հաստատեաց ըստ ամենայնի:

Եւ ի ՌՁԶ. (1637) թուին գնաց յԱսպահան քաղաքն և զսուրբ Աջ Լուսաւորչին մերոյ (զոր շահ Ապասն Մեծ տարեալ էր ընդ երկոտասան քարանցն Սրբոյ Աթոռոյս, զի անդ շինեսցէ զէջմիածին ի ՌԿԴ. (1615) թուոյն մերում) դարձոյց մեծաւ ջանիւ ի Սուրբ Աթոռս վերստին ի ՌՁԷ. (1638) թուին: Այլև ի ՌՃ. (1651) թուին ելեալ գնաց յԵրուսաղէմ և անդ զսուրբ Յակոբայ Աւագ խորանն բարձրացոյց և զլատուկ եկեղեցյն գոյնզգոյն քարիւ սալայարկ[II] արար և անդ ընդ Ներսէս կաթուղիկոսին Սսայ երեքտա-

---

[I] Զգրված՝ 21բ
[II] Բ. սալահարկ

սան գլխով կանօնս հաստատեաց, զորս գրէ Առաքել պատմագիրն: Եւ անտի դարձեալ եկն ի Պօլիս և անդ ազատեաց զեկեղեցիս նոցա ի պարտուց, զորս արկեալ էին պատրիարգունքն ընդ միմեամբք ելանելով: Առ սա եկն ի Պօլիս և չար Նիկօլ առաջնորդն Լեհաց կարգեալն և եպիսկոպոս ձեռնադրեալն ի Մելքիսէդ կաթուղիկոսէն և բանադրեալն ի Մօսէս կաթուղիկոսէն և ընկալաւ զարձակումն յանձն առնլով զկանօնս, զի հնազանդ կացցէ Սրբոյ Էջմիածնի և ի սմա նստօղ կաթուղիկոսացն, զորս յատուկ և երկար յիշէ Առաքել պատմագիրն:

Քանզի յառաջ լուսաւորչադաւան հայք էին Լեհու մերայինքն և ի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ նուիրակ գնայր անդ, որք դարձան այնուհետև ի փռանկութիւն պատճառաւ չար Նիկօլին[65]: Եւ ի ՌՃԲ. (1653) թուին վերադարձաւ ի Սուրբ Աթոռս և սկիզբն արար մեծի զանկակատանն յարևմտեան կուսի, զոր և հասոյց ի ներքին կամարսն սիւնագլխաց և ի ՌՃԴ. (1655) թուին վախճանեցաւ թողլով անկատար, զոր յետոյ Յակոբ կաթուղիկոսն աւարտեաց: Ջուր մի յորդահոս ի յԱրագած լեռնէն բղխեալ ի Շիրակ կոյս ընթանայր ըստ բնականի ընթացմանն, այս երանելիս բազմաւ աշխատութեամբ շրջեալ զայն ի գետն յՕշականայ ածեալ ի յաւելումն մերոյս ջրոյ, զոր և արզ արարեալ շահ Ապասին Փոքեր բերէ ռաղամ, զի յատուկ Սրբոյ Աթոռոյս լիցի այն ջուրն, որ լինի Ժ. (10) ջրաղացի ջուր: Այլև սա յաւել զջուր ի Հրաստան, այսինքն՝ Ջանկի գետոյն ի Սևանու ծովակէն՝ բանալով զյառաջն մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ: Եւ զայլ արդիւնաւոր գործս երանելոյս տե՛ս ի յԱռաքել պատմագիրն:

Ունի և զգրեանս հոգացեալ արքունական և դատաւորական ի յօգուտ Սրբոյ Աթոռոյս, զորս յիւրում տեղւոջն գրեցուք: Թաղեալ կայ սա ի տաճարին սրբոյն Հռիփսիմեայ, ի յաջակողմեան դասուն:

## (22բ) Վասն Յակոբայ կաթուղիկոսին

Զկնի տեառն Փիլիպպոսի նստի տէր Յակոբ Ջուղայեցին (որ էր աշակերտ նորին) ի նոյն ՌՃԴ. (1655) թուոջն ի ժամանակս թագաւորացն պարսից շահ Ապասին Փոքեր[I] և օսմանցւոց սուլթան Մահմետին: Որ և սա էր այր հոգեընկալ և առաքինի, իմաստուն և հանճարեղ, հեզ և երկայնամիտ, որ ի նստիլն իսկոյն կատարեաց զմնացորդ մեծի զանկակատանն սրբոյ տաճարիս, որ սկսեցեալն էր ի Փիլիպպոս կաթուղիկոսէն: Եւ ոչ սակաւ զաշխատանս և զվիշտս կրեաց ի հակառակացն ճշմարտութեան, թէպէտ յաղթեաց ամենեցուն հաստատուն յուսովն և աստուածահաճոյ վարուքն: Եւ յետ աւարտման զանկակատանն, նորոգեաց և պայծառացոյց զվանօրայս և զեկեղեցիս, որ և զվանսն սրբոյն Ստեփաննոսի, որ ի Շամբու ձորն[66]՝ ի հիմանէ նորոգեաց զեկեղեցին

---

[I] Բ. փոքու

և զխուցսն ի վարդապետութեան իւրում: Եւ ապա գնաց ի յԱսպահան առ Փոքր շահ Ապասն: Յորմէ և յոյժ սիրեցեալ էառ զմեր գեղջ վեց դանկ մուլքն վերստին սաստիկ հրամանագրովք և դարձաւ յԱթոռս:

Եւ յետ այսորիկ գնեաց և զմուլքս այլոց գեօղօրէից և յաւել զբերս Սրբոյ Աթոռոյս հաստատուն դապալայիւք և վախմնական գրովք, որք գոն ի Սուրբ Աթոռոջս և զայլս բազումս այսպիսիս բարերարութիւնս, զորս յիւրաքանչիւր տեղւոջն տեսցես: Այլև եհան զջուրս երկուս (որ քանքան ասի) ի ներքոյ երկրի ի միջոյ արևմուից և հիւսիսոյ ի զետոյն կուսէ, զմին հանեալ ի վայր կոյս գեղջ մերոյ, որով ոռոգին արտորայք բազումք, ուր և շինեաց զփոքր ծովակս, ընդ որով և կազմեաց զջրաղացս և զդինկս: Իսկ զմիւսն եհան ի մէջ Սրբոյ Աթոռոյս ի վայելչութիւն սորին, որ ելանէ ի հարաւակոյս ի ներքոյ դրանէն, յորոյ վերայ շինեաց և զջրաղաց մի բազմաօգուտ, որ ոչ երբէք խափանի: Այլև շինեաց զերիս ծովակս ևս, զմին ի վեր կոյս հանդէպ Մօլադուրսուն գեղջն՝ մեծ և բազմախարճ, զերկրորդն ի յարևելակոյս Դոի այգի[67] կոչեցելոյ փոքրագոյն և զերրորդն քան զսա մեծագոյն ի վայր կոյս ի գլուխ Մանկասարի այգւոյն, որք ոչ սակաւ ունին զօգտութիւնս այգեաց և արտորէից:

Ապա ի ժամանակս սորին յառաջացաւ սևագլուխ մի յերկրէն Երևանու Ոնոփրիոս անուն այր լիրբ և անագորոյն, որ որքան ընկալնոյր ի կաթուղիկոսէն զսէր և զներողութիւն, այնքան կատաղիւր և յաւելոյր զչարութիւն բազմավնաս: Մինչ զի մի անգամ և երկիցս և երիցս խրատական պատժօք ոչ զգաստացեալ, յետոյ և պատիժս մեռաւ իրաւամբ: Այս Ոնոփրիոսս եգիտ իւրեան համախոհ և զոմանս սևագլուխս (որք վասն նոյնապէս անկարգութեանց իւրեանց քանիցս յանդիմանեցեալք էին ի կաթուղիկոսէն), որք գրեն առ Եղիազար վարդապետն Հռոմկլայեցի (որ պատրիարգ էր Երուսաղէմի), թէ եկ ի Սուրբ Աթոռս, մեք զքեզ կաթուղիկոս նստուցանեմք աստ, գրելով և զրպարտանս բազումս ի Յակոբայ կաթուղիկոսն: Եւ ինքն Ոնոփրիոսն ևս զկնի թղթոյն ելեալ գնաց առ Եղիազարն: Եւ Եղիազարն ևս յօժար գոլով ժողովէ զոմանս սևագլուխս աստի և անտի ի Բերիա[68] քաղաքն և օծանի կաթուղիկոս, որք ընդ Ոնոփրիոսին խոստանան տալ յարքունիս Օսմանցւոյն յամէ յամ ՐԾ. (200) դուռուշ և հրաման հանեն, զի ի պարսից կուսէ ամենևին սևագլուխ մի ոչ անցցէ ի հողն Օսմանցւոց:

Ապա զկաֆայեցի[69] Մարտիրոս վարդապետն, որ էր պատրիարգ Կոստանդնուպօլսոյ և ի նոյնոյ Յակոբայ կաթուղիկոսէն լեալ եպիսկոպոս, բարեբարոյ առաջնորդք, իշխանք և ժողովուրդք երկրին ի մի եկեալ առաքեցին ի յէջմիածին ի հրաւիրել զՅակոբ կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս՝ առ ի հոգալ վասն Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, որ և առեալ ընդ իւր զթագաւորական հատի շէրիֆն[70] Փիլիպպոս կաթուղիկոսին (զի դեռ ինքն չունէր) ելեալ գնաց ի մեծն Պօլիս և արզ արարեալ սուլթան Մահ-

մատ թագաւորին Աստուծով ամօթալից արար զներհակսն իւր, զի թագաւորն ետ սմա զհրաման կաթուղիկոսութեան արհունական գրով և զներհակսն պատժել հրամայեաց, առ յոր եկեալ եղիազարն միջ(23ա)նորդօք մեղայ գոչեաց և հնազանդեցաւ:

Ապա ելեալ փառաւորապէս Յակոբ կաթուղիկոսն դարձաւ ի Սուրբ Աթոռս: Եւ յետ այնորիկ հարկեցեալ ի բազմաց պակասութեանց և մանաւանդ ի պարտատեարցն Ոնոփրիոսի (զորս արարեալ էր նենգութեամբ յանուն Սրբոյ Աթոռոյս յաթոռակալութեան իւրում) զզուեցեալ կաթուղիկոսին եղ և գնաց յերկիրն Յունաց, զի թերևս զօգնութիւնս գտցէ և հասեալ ի Կոստանդնուպօլիս հաղահն և անդ փոխի առ Քրիստոս ի ՌՃԻԹ. (1680) թուին, որ և թաղեցաւ ի գերեզմանատանն Բէկօղլի կոչեցեալ:

Ունի հոգացեալ և զգրեանս արհունականս և դատաւորականս օգտարարս, զորս յետոյ ի տեղւոջն տեսցուք:

**Վասն Եղիազար կաթուղիկոսին**

Տէր Եղիազար Հռոմկլայեցի, որ նախապէս օծեցեալ գոլով լռեալ կայր, նստի ի ՌՃԼԱ. (1682) թուոջն ի Սուրբ Էջմիածին ի թագաւորութեանն Պարսից շահ Սուլէյմանին և օսմանցւոց սուլթան Ահմատին: Սա էր այր ճարտարաբան և ճոռոմախօս, յաջողակ և ահաւոր, յորմէ ամենեքեան երկնչէին թէ՛ մերայինք և թէ՛ այլայինք: Մինչ զի զբազում պարտս Սրբոյ Աթոռոյս, որք մնացեալք էին յառաջնոց, սա զամենայնսն անհետ արար՝ առնլով զմուրհակսն ի պարտատեարցն և ազատեաց զՍուրբ Աթոռս ի նոցանէ: Սա շինեաց զբազում եկեղեցիս և արար զնորոգութիւնս բազմաց վանօրէից: Նոյնպէս արար և ի Սուրբն Հռիփսիմէի և Գայիանէի զպարիսպն պատեաց, զգաւիթսն շինեաց ի հիմանէ և զխուցս բազումս ի բնակութիւն միաբանից տեղւոյն: Ի Սուրբ Աթոռոջս զԿաթողիկէ ի վերայ սրբոյ Իջման տեղւոյն կանգնեաց չորիւք սեամբք խամ քարիւք և հաստատեաց սեղան, զի պատարագ մատչիցի: Զերկուս կողմունս ի միջոյ տաճարին հիւսիսոյ և հարաւոյ բարձրացոյց յերկրէ, որք յառաջ հաւասարք էին յատակի տաճարին և արար սեղան ի պատարագ մատչիլ, որք են սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն Կարապետի խորանքն, կտրեաց զմէջ եկեղեցւոյն հաստատուն վիմաքարիւք, զի մի յառաջ մատչիցին խառնիճաղանճքն, ուր յեցեալք միաբանքն կանգնին այժմ: Շինեաց և զերիս զանկակատունս ի տանիս տաճարին, յարևելս, ի հիւսիս և ի հարաւ գեղեցիկ յօրինուածովք, որովք եղեն հինգ կաթողիկէ ի տանիս տաճարին: Եւ զայլ բազում բարութիւնս արար: Եւ այսպէս խրոխտ կենօք մնացեալ փոխի ի Քրիստոս ի ՌՃԼԹ. (1690) թուոջն մերում և դնի ի յաջ կողմն գաւթի Սուրբ Գայիանէին, զոր ինքն էր շինեալ:

Ունի և զգրեանս արհունական և դատաւորական հոգացեալ ի յօգուտ Սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ յիւրում տեղւոջն գրեսցուք:

## (23բ) Վասն Նահապետ կաթուղիկոսին

Նստի ի Սուրբ էջմիածին կաթուղիկոս տէր Նահապետ Ուռհայեցին ի ՌՃԽ. (1691) թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից շահ Սուլէյմանին և շահ Հիւսէինին և օսմանցւոց սուլթան Ահմետին և Մուստաֆային։ Եւ սա էր նման եղիազարու, որոյ էր աշակերտ, այր ճոռոմախօս և փառապերճ, իշխան և ահարկու, յորմէ կասկածէին ամենեքեան։ Սա շինեաց զտաճարն Շողակաթ կոչեցեալ ի հիմանէ գեղեցկաշար վիմօք, ընդ զանկակատանն և ընդ ամենայն շինուածոց նորին՝ արդեամբք շոռոթեցի[71] Աղամալ իշխանին։ Սա ի յԵրևան ի ներքնակողմն բերթին հուպ Սարվանլար կոչեցեալ գեղջն ծակեաց զլեառն ձորակին, ուր ընթանայ գետն Հրաստան և ջախելով[I] զվէմս, բանալով զխորափոր առուս, մեծաւ աշխատութեամբ և անհամար դրամածախութեամբ եբեր զջուրս ի գետոյն Հրաստանի ի գեօղս մեր ի յօգուտ այգեստանացն։

Շինեաց և զգեղեցիկ և զմեծածախ կամուրջն յՕշականայ գեղջ ի վերայ Քարձախ[II72] գետոյն խարտեալ քարիւ։ Շինեաց զՁորագեղջ անապատն[73], զեկեղեցին և զխուցսն, գնեաց և զշրջակայ տունսն և զներքոյ ձորոյն անապատի վայրսն ամենայն, որք արդէն են Սրբոյ Աթոռոյս։ Շինեաց զԵրևանու երկու եկեղեցիսն՝ Քանաքեռու[74], զԿոնտին[75] և զայլոց բազմաց գեօղօրէից եկեղեցիսն խարտեալ քարիւ ի հիմանէ։ Գրեթէ երկիրս Երևանու որքան քարաշէն եկեղեցիք գոն[III], ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք։ Արար և զայլ շինութիւնս և զօգտակար գործս յԱթոռոջս յերկրոջս։

Ունի հոգացեալ և զգրեանս արքունական և դատաւորական ի յօգուտ Սրբոյ Աթոռոյս, զորս յիւրում տեղւոջն տեսուք։

Ապա ի ՌՃԽԴ. (1695) թուոջն ի չորրորդում ամի կաթուղիկոսութեան սորին Ջուղայու առաջնորդ Ստեփաննոս վարդապետն թագաւորական գրով ելեալ ի Ջուղայու[IV] գայ յէջմիածին և նստի կաթուղիկոս, և զՆահապետն ընկենու յԱթոռոյն։ Իսկ Նահապետն ևս գնացեալ նստի ի Դավրէժ քաղաքն և անդուստ վերստին բերէ զհրամանագիր կաթուղիկոսութեան իւրոյ ի շահէն և յօսմանցւոց թագաւորէն և գայ նստի յէջմիածին ի ՌՃԽԶ. (1697) թուոջն և զՍտեփաննոսն դնէ ի կալանս, ուր և վախճանի իսկ ի ՌՃԽէ. (1698) թուոջն, զոր տարեալ թաղեն ի Խորվիրապայ վանքն։ Վասն որոյ ոչ սակաւ լինի խռովութիւն ի մէջ Ջուղայու սեազլխացն և կաթուղիկոսին, մինչև ի ՌՃԾԴ. (1705) թիւն մեր, յորում վախճանի Նահապետն և թաղի յաջակողմն գաւթին Սուրբ Շողակաթի, զոր ինքն էր շինեալ։ Եւ նստի Աղէքսանդր Ջուղայեցի ի ՌՃԾԸ. (1709) թուոջն մերում։

---

[I] Բ. ջաղխելով

[II] Բ. Քասախ

[III] Բ. կան

[IV] Բ. Ջուղայէ

(24ա) **Վասն Աղէքսանդր կաթուղիկոսին**

Նստի տէր Աղէքսանդր Ջուղայեցի կաթուղիկոս ի յէջմիածին ի ՌՃԾԶ. (1707)[76] թուոջն մերում ի թագաւորութեան պարսից շահ Հիւսէինին և օսմանցւոց սուլթան Ահմատին: Սա էր այր վանական և տեղեակ Աստուածաշունչ գրոց, հանճարեղ և շինարար, որ զբազում հնացեալ շինուածս Սրբոյ Աթոռոյս նորոգեաց, զձմռան Սեղանատունն վերանորոգեաց կամարով և խառնեալ քարամբք[I]: Զքնիկ այգին Սրբոյ Աթոռոյս, որ է հանդէպ սրբոյն Հռիփսիմեայ՝ մեծացոյց ի կողմանցն և պարսպեաց: Հաստատեցոյց բազմադիմի եղանակօք զՍուրբ Աթոռս եկեղեցական զարդուք և արտաքին կահիւք և անասնօք: Յաւել և զմուլքս[II] և զարդիւնս արքունական և դատաւորական գրովք ի Սուրբ Աթոռս, զորս յետոյ գրեսցուք: Եւ կեցեալ բարւոք քաղաքավարութեամբ վախճանի ի ՌՃԿԳ. (1714) թուոջն մերում: Եւ թաղի ի Սուրբ Աթոռս, ի ներքոյ մեծի զանգակատանն, յաջակողմն դրան սրբոյ տաճարիս:

**Վասն Աստուածատուր կաթուղիկոսին**

Նստի տէր Աստուածատուր Համատանցի կաթուղիկոս ի յէջմիածին ի ՌՃԿԳ. (1714) թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից շահ Հիւսէինին և օսմանցւոց սուլթան Ահմատին: Սա էր այր հեզաբարոյ և հոգելի, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և արտասուեղ, որ ի նստիլն արար զբազում բարերարութիւնս Սրբոյ Աթոռոյս և երկրիս, կրեաց և զբազում նեղութիւնս և զտառապանս, զի յաւուրս սորա վրդովեցաւ թագաւորութիւնն պարսից և փոխեցաւ ի յԱղուանս[77]: Սա զարդարեաց զմէջն մեծի տաճարիս, զի շինեաց և զսուրբ Իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից մարմարեայ սեանց և ծաղկեցոյց ոսկւով և պէս պէս երանգօք և արար զարմանալիս տեսողաց: Նմանապէս և զճակատ մեծի սեղանոյն արար մարմարիոնեայ, սպիտակացոյց բոլոր և ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ: Եւ զեկեղեցւոյ առաջնոյ Աւագ դասի մին սիւնն (և ըստ ոմանց զշորեսին սիւնսն ևս) ի հիմանէ նորոգեաց: Նորոգեաց սալիւ և զյատակս մեծի տաճարիս: Շինեաց և զտնտեսատունն քարիւ և կամարով և եհան ջրհոր ի մէջն: Այլև ըստ ոմանց՝ հիւսիսոյ կողման գեղջս մերոյ վերին մեծ ծովակն ի Քարաբիթն կոչեցեալ, մերձ Մօլադուրսուն գեղջն, սա շինեալ է վասն սահման լինելոյ և սինօր անդաստանացն գեղջս մերոյ:

Հոգացեալ ունի և օգտարար գրեանս արքունական և դատաւորական, զորս յետոյ գրեսցուք: Եւ ապա ի ՌՃՀԴ. (1725) թուոջն մերում փոխի առ Տէր և թաղի ի գաւիթն սրբոյն Հռիփսիմէի ի յաջ կողմն կոյս:

---

[I] Բ. քարամբ

[II] Բ. ևս մուլքս

Տանի՛ր, թէպէտ գրեցաք թէ վերին մեծ ծօվակն սորա[I] է շինեցեալ, բայց յետոյ հաւաստիցաք, որ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն է շինեալ ընդ այլոց չորից ծօվակացն, որպէս ասացաւ լիովին ի ԺԸ. (18) գլուխն ի ճառս գրոցն։

## (24բ) Վասն Կարապետ կաթուղիկոսին

Նստի կաթուղիկոս ի Սուրբ Էջմիածին տէր Կարապետ Զէյթունցին ի ՌՃՀԵ. (1726) թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից աղուան Մահմուտին[78] և օսմանցւոց սուլթան Ահմէտին։ Սա էր այր ծեր և անձնեայ, մեծաշուք և առատաձեռն, որոյ ժամանակն օսմանցիք տիրէին երկրիս մերում, մինչև ի Սուլթանիայ, որք ի ՌՃՀԳ. (1724) թուին առին ի պարսից, մինչ աղուանն էառ զԱսպահան ի ՌՃՀԱ. (1722) թուին, և ռուսսն էառ զԳիլան[79]։ Սա ետ նկարել զպատկերս երկոտասան Առաքելոցն ի ճակատ Աւագ խորանին և ետ ծաղկել ոսկէզօծ և գեղեցիկ գունովք[II]։

Ունի հոգացեալ և զգրեանս օգտարարս, զորս յետոյ գրեսցուք։

Եւ մինչ ի ժամանակս սորա երկիրս մեր ընդ իշխանութեամբ օսմանցւոց էր, ուստի և սա կարի յառաջադէմ և յաջողակ էր ի բանս և սիրիւր ի նոցունց, զերևանու մելիք Յակոբճանն ի կախաղանէն իջուցեալ ապրեցոյց ի մահուանէն։ Այլև առն գովելւոյ, շնորհաշատի և պերճիմաստի տեառն Սիմէօն աստուածաբանի վարդապետին Երևանցւոյ զմեծ և զարժանի արձանագրեցման գործն ոչ է զանց առնելի, որ ի ՌՃՀԳ. (1724) թուոջն, մինչ օսմանցին ի մերս կոյս դիմեաց և էառ զերկիրս մեր յիշեալ Սիմէօն վարդապետն ի Կոստանդնուպօլիս նուիրակ էր Սրբոյ Աթոռոյս, մեծաւ հոգւոնակութեամբ զհրամանագիրս էհան ի թագաւորէն ի վերայ սէրէսկէրին իւրոյ, զի ի յԱթոռս ամենևին ոչ մերձեսցին և մի վնաս ինչ տայցեն, որպէս և եղևն, որահա նոյն հատի շէրիֆն գոյ ի Սուրբ Աթոռս։ Ապա ի ՌՃՀԸ. (1729) թուին փոխի Կարապետ կաթուղիկոսն առ Տէր և դնի ի գաւիթ սրբոյն Հռիփսիմեայ ի ձախակողմն կոյս։ Սա ի հրաւիրելն ի մեծն Պօլիս օծեցաւ կաթուղիկոս թելադրութեամբ և չար դիտաւորութեամբ Բաղիշեցի Յովանէս վարդապետին, որ յայնմ ժամանակի պատրիարգ էր նոյնոյ քաղաքին Պօլսոյ։ Քանզի մինչ[III] ետ օծանել զսա ի կաթուղիկոս, որպէս ասացաք ինքն և իւրքն ձեռնադրեցան անդ եպիսկոպոս։ Եւ մինչ ետես զի ամենայն ըղձից իւրոց ահա ժամանակն է լնանեցման (զի տեսանէր զԿարապետ կաթուղիկոսն միամիտ և անտեղեակ որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս) յաւել և զայս չարութիւնս, զի զարգայ տալն կաթուղիկոսաց թագաւորացն օսմանցւոց ընդ ձեռամբ իւրով արար։ Յայնմ օրէ

---

[I] Բ. նա է

[II] Բ. գունոք

[III] Բ. > մինչ

սովորութիւն եղև, զի զոր ինչ և խնդիրս ունիցին կաթուղիկոսքն ի յօսմանցւոց թագաւորէն, պատրիարգն Պօլսոյ տայցէ զարզայն և ոչ այլ ոք, որպէս ասացաւ լիապէս ի ԻԲ. (22) գլուխն ի ճառս օսմանցւոց գրեանցն:

### Վասն Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին

Նստի ի յԱթոռս էջմիածին կաթուղիկոս տէր Աբրահամ Մշեցին ի ՌՃՀԹ. (1730) թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից շահ Թահմազին և օսմանցւոց սուլթան Մահմուտին: Քանզի ի ՌՃՀԸ. (1729) թուին Նատր անուն մի զօրացեալ ելանէ ի խորասանայ[80] բազմօք զօրօք պարսկականօք գայ ի վերայ Աղուանից ի յԱսպահան և յաղթեալ փախուցանէ զնոսա յերկրէն Պարսից, և զշահ Թահմազն, որ էր փախստական ի խորասան, բերեալ նստուցանէ ի բնիկ աթոռն իւրեանց յԱսպահան, որ և յետոյ զԱրարատեան և զայլս կուսի երկրայսս ևս ի ձեռաց օսմանցւոցն էառ և արար զնոսա փախստական: Եւ զերկիրն Գիլանու իւրայնովքն ի յուռուսաց[81] էառ և հաստատեաց վերստին զՊարսից թագաւորութիւնն: Այս Աբրահամ կաթուղիկոսիս ի ժամանակն երկիրս մեր և Սուրբ (25ա) Աթոռս դեռևս ընդ իշխանութեամբ օսմանցւոց էր: Եւ սա էր այր առաքինի և ճգնազգեաց, հեզ և բարեբարոյ, աղօթասէր և տօնակատար, որ ի մէջ մեծի Տաճարիս զառաջնոյ դասի երկուս սեղանսն կառոյց և անուանեաց սուրբ Յակոբ և սուրբ Լուսաւորիչ, զորս և զարդարեաց ծաղկօք և մարգարէական պատկերօվք: Եւ զամենայն պատկերսն, որք գոն ի յորմունսն և ի սիւնսն տաճարին սա ետ նկարել: Շինեաց և զփոռնատունն քարիւ տաշեցելովք, նմանապէս և զերկոսին արտագնաց տեղիսն միաբանից ի հիւսիսակոյս երկու անկիւնսն պարսպին սա շինեաց հաստատուն քարամբք: Արար և զայլ բազում բարութիւնս:

Եւ ունի զհոգացեալ գրեանս օգտարարս զորս յետոյ գրեսցուք:

Ապա ի ՌՃՁԳ. (1734) թուին վախճանի և դնի ի գաւիթ սրբոյն Գայիանեայ ի ձախակողմն կոյս:

### Վասն Կրետացի Աբրահամ կաթուղիկոսին

Նստի ի Սուրբ էջմիածին կաթուղիկոս տէր Աբրահամ Կրետացին ի ՌՃՁԳ. (1734) թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն պարսից Նատր շահին և օսմանցւոց սուլթան Մահմուտին, քանզի ի սոյն ամիս վերոյ յիշեալ Նատր խանն խորասանցի եկն բազմօք զօրօք և էառ զբոլոր երկիրս մեր ի յօսմանցւոց և արար զնոսա փախստական յերկիրն իւրեանց: Եւ յետոյ զշահ Թահմազն կալեալ եդ ի դաֆէս, զոր և սպան և զնորին որդի շահ Աբաս մանուկն յօրօրոցի հռչակեաց գոլ շահ և ի գալ ամին զնա ևս կորոյս և ինքն թագաւորեաց ի ՌՃՁԵ. (1736) թուոջն մերում, որ եղև կարի ահաւոր և անուանի ի վերայ ամենայն թագաւորաց, յորմէ ամենեքեան սարսէին զանունն միայն լսելով: Եւ զԱբրահամ կաթուղիկոսն կարի սիրեաց և միշտ առ յինքն պահէր, զոր և

հայր կոչէր: Եւ Աբրահամ կաթուղիկոսն ևս էր ահարկու և շքեղատես, մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ: Ուստի Նատր շահն ի յինքն պահէր և շատ խորհուրդ և առնելիս իւր ընդ սմա տնօրինէր և սմա հարցանէր: Եւ ինքն Աբրահամ կաթուղիկոսն էր թէպէտ ժիր և արիասիրտ յամենայն բանս և յաջողակ ի գործս, սակայն էր ծեր և լցեալ աւուրբք և ցաւագար, իսկ որ և թէպէտ զշինուածս ինչ ոչ կարաց առնել յԱթոռոջս, զի ժամանակ ևս ոչ ունեցաւ, միշտ ընդ շահին լինէր, սակայն բան զամենեսեան առաւել արար զբարերարութիւնս և զօգուտս Սրբոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ:

Քանզի Նատր շահ կոչեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քարինքն հալէին յահէն յանուանէն, սակայն ողորմածն Աստուած այնքան քաղցրացոյց յաչս նորա զսրբազան հայրապետս մեր, որպէս զՅօսէփ առ փարաւոն և զեսթէր առ Արտաշէս, որոյ բան և խնդիր մի ոչ անկանէր յերկիր առաջի այնպիսոյ բռնաւորին, վասն որոյ զբազումս ազատեաց ի մահուանէ, զշատս իջոյց ի կախաղանէ, զբազմաց աչսն և զականջսն և զայլ անդամսն ազատեաց ի հատանելոյ և ի բրելոյ: Զանհամար գերիս ազատեաց ի գերշաց: Եւ զբազումս զորս տանկացուցեալ էին կամաւ և թէ բռնութեամբ, յետս դարձոյց և առ ի ձեռաց այլազգեաց: Եւ զայլ անհամար բարերարութիւնս արար տաճկաց և հայոց, պարսից և օսմանցւոց: Բազում մեծամեծ խանք և արքունի դրան մարդիք առ սա գային և միջնորդս արկանէին առ շահն, զի զհոգալիս իւրեանց հոգասցէ, զորս և հոգայր իսկ:

Ապա ի ՌՃՁԵ. (1736) (25բ) թուին հանգեաւ ի Տէր և սուգ մեծ էած ի վերայ բոլոր երկրիս արևելեան և թաղեցաւ ի Շողակաթի ի ձախակողմն գաւթին, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Ունի և զգրեանս օգտարարս արքունական և դատաւորական հոգացեալ, զորս յետոյ գրեսցուք: *Սա թէ իւր և նոյն ժամանակի անցից պատմութիւնն ինքնին յատուկ ունի գրեալ:*

### Վասն Ղազար կաթուղիկոսին

Նստի ի Սուրբ էջմիածին կաթուղիկոս տէր Ղազար Ճահկեցին ի ՌՃՁէ. (1738) թուին, յամս թագաւորացն պարսից Նատր շահին և օսմանցւոց սուլթան Մահմուտին: Սա էր այր գիտնական և ճարտարալեզու, հանճարեղ և փառապերճ: Շինեաց ի Սուրբ Աթոռոջս ի հայրապետարանումս զգեղեցիկ դարպասս երկերեսի հայեցուածովք, մին ի մեծ տաճարն հայի և միւս երեսն յարևմուտս ի ներս կոյս, որ կոչի Վեհարան: Շինեաց և զայլս շինուածս ի հայրապետարանումս գետնանիստս ի հարաւակոյս և ի հիւսիսակոյս: Շինեաց և ի հարաւակողմն պարսպի Աթոռոյս յատուկ ներքնատամբ և վերնատամբ յաղագս հիւրոց, որ կոչի Ղազարապատ: Այս Ղազարապատիս արտաքոյ կուսէ շինեաց զպարիսպն տաշեալ քարիւք և թրծեալ աղիւսովք ի Ղազարապատի դրանէն ի յարևելս կոյս, մինչև ի մեծ դուռն, որ ի ջուր քանքանին հայի:

Սակայն երկիցս անգամ ընկեցեալ եղև սա ի յԱթոռոյն, մին ի ՌՃՂԴ. (1745) թուոջն ի Նատր շահէն, որ մնաց ընկեցեալ վեց ամիս և յետոյ նստաւ վերստին: Եւ երկրորդ, ի յօսմանցւոց երկրի սևագլխաց և միաբանից Սրբոյ Աթոռոյս: Եւ նստաւ յԱթոռն տէր Պետրոս Քիւթիւր[82] կոչեցեալն Հոռմկլայեցի յամիսս տասն: Ապա վերստին նստաւ Ղազարն ի ՌՃՂէ. (1748) թուոջն և զՊետրոսն ի բանտի մեռոյց, որ և կեցեալ ևս յամս Գ. (3) ի ՌՄ. (1751) թուոջն վախճանի և դնի ի Սուրբ Գայիանէի ի յաջակողմն գաւթին: Ունի սա և հոգացեալ զգրեանս օգտարարս արհունական և դատաւորական, զորս յետոյ գրեսցուք:

Ապա ի ՌՃՂէ. (1748) թուին և Նատր շահն սպանաւ և մնացորդքն ընդ միմեամբք անկան և բարձաւ իսպառ թագաւորութիւնն Պարսից և երկիրս մատնեցաւ ի ձեռս ինքնագլուխ և աներկիւղ բռնաւորաց և անկաւ ի մեծ թշուառութիւնս և այսպէս է մինչև ցայսօր, որում տէր այց արասցէ:

(26ա) **Վասն Մինաս կաթուղիկոսին**

Նստի յԱթոռն Սուրբ էջմիածին տէր Մինաս Ակնցի ի թուոջն մերում ՌՄ. (1751) ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մահմուտին և յանիշխանութեանն Պարսից: Եւ կեցեալ յամս երկուս մեռանի ի թուոջն ՌՄԲ. (1753) և թաղի ի վանքն Սուրբ Գայիանեայ՝ ի ձախակողմն գաւթին:

Ունի և զգրեանս դատաւորականս հոգացեալ, զորս յետոյ տեսցուք:

**Վասն Աղէքսանդր կաթուղիկոսին**

Նստի յԱթոռն Սուրբ էջմիածին կաթուղիկոս տէր Աղէքսանդր Կոստանդնուպօլսեցին ի ՌՄԳ. (1754) թուոջն մերում և ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Օսմանին, որ էր այր հեզաբարոյ և պարզամիտ և բաշմաշխատ, որդի և բնիկ միաբան Սրբոյ Աթոռոյս: Եւ ունի զբարերարութիւնս բազումս ի Սուրբ Աթոռս ի մանկութենէ, որ և կեցեալ ամս Բ. (2) մեռանի ի թուին ՌՄԴ. (1755) և թաղի ի ներքոյ զանկակատան մեծի, ի ձախակողմն դրան մեծի Տաճարիս:

Ունի և զգրեանս հոգացեալ ի յօգուտ Սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ գրեսցուք:

Ի ՌՄԵ. (1756) թուոջն մերում և ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մուստաֆային ի Կոստանդնուպօլիս կոչի ի հայրապետութիւն Սահակ վարդապետն Կեղեցի, որ Ահագին կոչիւր և մնայ յամս երեք և կէս առանց օծման և ոչ գայ ի Սուրբ Աթոռս, վասն որոյ հանեն զնա ի ՌՄԸ. (1759) թուոջն ի հայրապետութենէն և մեռանի ի Կարին քաղաք:

## (26բ) **Վասն Յակոբայ կաթուղիկոսին Շամախեցւոյ**

Ապա նստի ի Սուրբ Աթոռս[I] էջմիածին կաթուղիկոս տէր Յակոբ Շամախեցին ի ՌՄԸ. (1759) թուոջն ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մուստաֆային: Սա էր այր պիտանի և խորհրդական, խելօք և հանճարեղ յամենայն գործս և գիտուն և շնորհաշատ: Ի մանկութենէ ի Սուրբ Աթոռս գոլով ոչ է կեցեալ անգործ, զի ասէր դաս միաբանից զինչ և խնդրէին: Շարադրէր զմուսավատայս և տայր գրագրացն, զոր ինչ և գրէին, որոյ տետրունքն գոն ի Սուրբ Աթոռս, յորոց և նարդեանս գրագիրքն առնուն զօրինակս գրելեաց իւրեանց[83]: Կաթուղիկոսք ժամանակին զսա ունէին խորհրդակից և վճռատու: Եւ էր տեղեակ արքունական և դատաւորական սարքշտայից: Եւ սա գրէր և հոգայր զգրոց արքունականաց և դատաւորականաց և պահէր ի պատրաստի: Ունի և զանհամար բարերարութիւնս ի Սուրբ Աթոռոջս և զգրեանս հոգացեալս, զորս յետոյ գրեսցուք: Շինեաց և ի յԵրևան ի Ձորագեղջ անապատոջն զտունս հայրապետանիստս և պատեաց բարձրաբերձ պարսպօք և բրգօք, որպէս այժմ նստին հայրապետք ի գնալն իւրեանց յԵրևան: Այսպէս բարւոք կառավարմամբ ի տէր փոխի ի ՌՄԺԲ. (1763) թուոջն և դնի ի յաշակողմն գաւթի սրբոյն Գայիանեայ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

### **Կաթուղիկոսք հայոց ազգիս՝ սկսեալ ի սրբոյն Գրիգորէ ցաւ մեզ**

Ի սրբոյն Գրիգորէ մինչև ի Բարսեղ, որք նստան ի Վաղարշապատ, ի Դուին և յԱնի, կաթուղիկոսք ԿԱ. (61) և ամք նոցա ութ հարիւր տասն և երկու: Ի սրբոյն Գրիգորէ եղբօրէ Ներսիսի Շնորհալւոյն, մինչև ի Յօհէփ, որք նստան ի Հռոմկլայն և ի Սիս՝ կաթուղիկոսք Իէ. (27) աւելի և պակաս, ըստ միմեամբք նստելով և ամք նոցա երեք հարիւր քսան և հինգ: Ի Կիրակոսէ մինչև ի Յակոբ Շամախեցին, որք վերստին նստան ի Սուրբ Աթոռս էջմիածին (զորոց որպիսութիւնսն ի Գ. գլուխն տեսցես) կաթուղիկոսք ԼԹ. (39) և ամք նոցա երեք հարիւր քսան և երկու, որք միանգամայն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մինչև ի Յակոբ Շամախեցին են հարիւր քսան և եօթն և ամք նոցա հազար չորս հարիւր յիսուն և ինն:

## (27ա) **Վասն Սիմէօն կաթուղիկոսին**[84]

Նստի ի Սուրբ Աթոռս էջմիածին կաթուղիկոս տէր Սիմէօն Երևանցին, որ է նախապետական հեղինակ գրքոյս ի ՌՄԺԲ. (1763) թուոջն մերում: Եւ ի թագաւորութեանն Օսմանցւոց սուլթան Մուստաֆային: Սա էր այր շնորհընկալ, առատամիտ, գիտնաշատ և լի իմաստութեամբ, յաւալէս տեղեակ հին և նոր կտակարանաց և վարժ նրբից և արտաքին գրոց, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց Սրբոյ Աթոռոյս:

---

[I] Բ. > Աթոռս

Սա ի սարկաւագութենէ անտի, որքան յԱթոռս գտանիւր ոչ դադարիւր ի դաս ասելոյ, մինչև ի կաթուղիկոսութեանն ևս: Անձանձիր[I] և անտրտունջ և մանաւանդ յորդորող և հրաւիրող ի յուսումնասիրութիւն: Այլև էր վարժ բանաստեղծութեան արհեստից և համեղաբան ի շարադրութիւնս, որ և ի սարկաւագութենէ անտի սա տայր գրագրաց Սրբոյ Աթոռոյս զմուսավատայս և կարգաւորէր զարհեստս նոցին, որպէս յառկապէս հայր և մատակարար նոցին և ի կաթուղիկոսութեանն ևս, որ և ի տետրս մուսավատայից գոն բազում շարադրութիւնք շաղագիրք ի սմանէ գրեցեալք[85]:

Այլև արար սա ի վարդապետութեանն զլուծմունս բոլոր արտաքին գրոց գեղեցիկ և պարզ ոճով ի դիւրութիւն դաս ասողաց և դասատուից, յորս գրեթէ ոչ ինչ է թողեալ զտարակուսելիս և զանհասկանալիս: Արար և զգիրս քարոզից ի յերկուս հատորս, զմին երկարաբան, ճառակերպ և ներբողեան ի վեցօրեայ արարչագործութիւնսն Աստուծոյ ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր և ի Սուրբ Աթոռս էջմիածին և յայլս հարկաւոր նիւթս և ի խորհրդալի բնաբանս: Եւ զերկրորդ հատորն տարեկան քարոզ, ըստ աւուրց պատշաճաւորութեանն կարճառօտ և զօրաւոր բանիւք, որք երկուք հատորքն ևս օգնիչք, ձեռնտուք և յարմարք են վարդապետաց և մանաւանդ նուիրակացն Սրբոյ Աթոռոյս[86]:

Արար նաև զկրկնապէս լուծմունս դժուարիմաց բանիցն Պրոկղի, որք եղեալք են զկնի լուծմանցն առաջնոյ լուծողի Սիմէօն վարդապետին խաչաձև նշանիւք[87]: Արար և զփոքրիկ գիրք մի աղօթից, որ կոչի Ջրօսարան հոգևոր, գեղեցիկ և պարզ ոճով: Այլև վերանորոգմամբ կանօնաւորեաց զՏօնացոյցս մեր երկոքումբք հատորօք ի վերայ ԼԶ. (36) գրոցն մերոց՝ անշարժ և մշտնջենաւոր ընթացմամբ[88]:

Այլև էր սա բարուքն հեզ, պարզամիտ և համբերող, ներող և աննիշաչար կակղասիրտ և գթաշատ, ողորմած և առատաձեռն առ յամենեսն[II], անընչասէր և ազատաբարոյ, առ յոր գրեթէ ամենայն ինչք աշխարհի, որպէս կղկղանք էին համարեցեալք: Վասն որոյ և Աստուած ըստ բարուցն յաջողէր և տայր առատապէս: Յորում ժամանակի էր Սուրբ Աթոռս շնորհօքն Աստուծոյ լի ամենայնիւք հոգևորօք և մարմնաւորօք, ներքսականօք և արտաքսականօք, բեռնակրօք և լծկանօք և կթելի անասնօք բազմապատիկ քան զառաջինն: Միաբանքն շատ հանգիստ և ապահով յամենայնի: Ի յաւուրս սորա ոչ պակասեցան կերպակերպ արհեստաւորք և շինարարք ի յԱթոռոյս[89]:

(27բ) Քանզի ի կաթուղիկոսանալն իւրում արար սա զբազում շինուածս և զբազմադիմի բարերարութիւնս Սրբոյ Աթոռոյս: Նախապէս, զի Սուրբ Աթոռս ի յարտաքուստ կուսէ էր անպարիսպ և զոմք և ամենայն անասնատունք և այլ համբարք հար-

---

[I] Բ. Անձարձիր

[II] Բ. յամենենսեանսն

կաւոր և արտաքին իրաց էին հնացեալք, անվայելք և անյարմարք, մանունք և գծուծք և մանաւանդ ցան և ցիրք, երկուղալիք և կասկածաւորք ի գողոց և յասպատակչաց: Բազում անգամ զձիս և զայլ անասունս հիւրոց և Սրբոյ Աթոռոյս իսկ տանէին գողք: Եւ ի յերկուղէ լափլիզաց և յայլոց սրիկայից, յամենայնում ամռան կաթուղիկոսն համդերձ միաբանիւք, որպէս թէ դատարկեալ զՍուրբ Աթոռս գնայր յԵրևան և անդ մնայր յամիսս քանիսս և այսպէս ի գնալն կաթուղիկոսին և միաբանից ի յԵրևան և ի դատարկելն զՍուրբ Աթոռս տե՛ս դու զթշուառութիւնս սոցա և զխղճութիւնսն և զվնասիլն և ի վտանգաւորիլն Սրբոյ Աթոռոյս, զորս կարճեմ ես: Գրեթէ ի բառնիլ թագաւորութեանն Պարսից ի ՌՃՂՁ. (1747) թուէն, մինչև ի ՌՄԺԲ. (1763) թիւս մեր պատահիւր յամենայնում ամի Սրբոյ Աթոռոյս և Աթոռայնոցս թշուառութիւնս այս: Ապա արհասիրտ հայրապետս այս սկիզբն արար ի նստիլն իւրում ի շինել զբոլոր պարիսպս Սրբոյ Աթոռոյս շուրջանակի, որպէս տեսանես, ամուր և հաստատուն բրօք և դիտանոցօք: Ապա և ի մէջ առեալ զամենայն անասնատունս և զայլսն ամենայն պարագայիւքն իւրեանց, շինեաց նորապէս ի կողմն արևելից ներպարսպին համաժողով և մեծ իրերաց և արար յամենից կուսէ անահ և ապահով[90]:

Շինեաց ընդ նմին և զամռան Սեղանատունն վերստին տաշեալ քարիւ և կամարօք՝ վայելչագոյն քան զառաջինն, որ մեծ էր ի փլանիլ: Շինեաց զմոմատունսն և զդպրատունսն՝ ձմռան և ամռան, յատուկ յատուկ պարսպօք ի հիւսիսակողմն՝ յետ կոյս խցից միաբանիցն, յարմար ըստ տեղւոյն և ըստ շինուածոյն, որպէս տեսանես, զի յառաջ դպրատունն ներ պարսպի միաբանիցն էր անյարմար ըստ տեղւոյն և ըստ կացութեան դպրացն, նեղ և նսեմ, նոյնպէս և մոմատունն անկանօն աստ և անդ հեռի ի լուսարարի յօտայէն և անվայել:

Շինեաց և ի ներս ի վեհարանոջն զգեղեցիկ դարպաս մի երկատամբք ի հարաւակոյսն, զի բաց ի յամռան եղանակին հովանոց լինելոյն լինիցի նաև միջնորմն և արգելօղ տեսութեանց տաճկաց և այլոց հիւրապիսեաց, որք ի Ղազարապատն նստեալ բացարձակ դիտէին և զննէին ի յեղելութիւնս հայրապետարանին: Այլև ետ հանել զքանքանս ի մէջ ներսի պարսպիս զշրջագայիւք սրբոյ եկեղեցւոյն և զառաջօք միաբանից խցիցն և այլոց շինուածոցն և տարեալ խառնեաց ի քանքան Փիլիպպոս կաթուղիկոսին ի ՌՄԺէ. (1768) թուոջն մերում, որով եղեն երկուք օգտութիւնք գլխաւորապէս: Մի, զի ջուր քանքանին յաւելաւ, որ յամենայնի շահարար է, երկրորդ, զի յատակ եկեղեցւոյն և բոլոր շինուածք և միաբանից խուցքն ցամաքեցան ի գիջութենէ: Քանզի երանեալ Փիլիպպոս կաթուղիկոսի հանեալ քանքանի գլուխն էր Աթոռոյս միջի դրան դռնապանի խցի յառաջն, զի անտի սկսեալ գնայր ընդ յատակաւ արտաքին պարսպին և ի վայրն սրբոյ Գայիանէի վանիցն ելանէր և ոչինչ օգտէր միջոյ պարսպիս գիջութեանն: Այլև Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսի հանեալ քանքանն, որ ընդ մէջ

գեղջս մերոյ և Աթոռոյս անցանէ վերստին, որպէս թէ նոր ի նորոյ նորոգեաց և ի լոյս եած, որպէս ասացեալ է ի [ԺԸ.] (18) գլուխն ի ճառս ջրոցն: Վերանորոգեալ շինեաց նոր ի նորոյ նաև զբոլոր տանիսն սրբոյ և (28ա) Աստուածակերտի տաճարիս՝ գեղեցիկ և տաշեալ քարիւ: Եւ բացեալ զառաստաղ երկուց խորանացն նոր ի նորոյ շինեցոյց երկտամբ ի պիտանաւորութիւնս յամենայնի ի ՌՄԺԹ. (1770) թուոջն մերում[91]: Շինեաց ի ներս հայրապետարանիս ի յարևմտակողմն ի վերայ մեծ բրքոյն զդարպաս մի գեղեցիկ ի հովանոց ամռան և ի դիտանոց բոլորի դաշտիս: Ի ներս հայրապետարանիս ի հիւսիսակուսէ ի քեարվանսարայէն զվեց գազաչափ տեղիս էարկ ի ներս և շինեաց զտասն տունս ի լայնութիւն և յարձակութիւն ձմռատանցն և ի պիտանաւորութիւն այլոց իրաց: Եւ յետ կուսէ պարսպեալ ամրացոյց հաստատնագոյն պարսպաւ, որպէս տեսանես: Նոյնպէս և զքեարվանսարայն (որ յամենայնի փլփլեալ և աւերեալ է և կարի անվայել և տգեղ) շինեալ զամենայն յօտայն վերանորոգեաց յամենայնի պարագայիւք՝ գեղեցիկ և պատշաճաւոր ձևով:

Շինեաց ի Ղոի այգւոջն զհնձանն գեղեցիկ հանդերձ կից շինուածովք իւրովք: Նոյնպէս և մինչ էառ զՂևոնդենց կոչեցեալ բաժին այգին և խառնեաց ի վերի այգին Աթոռոյս, ապա և զայգեչափ տեղի մի[I] ևս ի յարևմտեան կուսէ ի ներս էարկ և պարսպեալ արար զմեծ այգի մի, որպէս զՂոի այգին նորապէս մեծ դարվազայի:

Դարձեալ բարեմիտ և ազատաբարոյ հայրապետս այս, որպէս էր յամենեցունց ի մերազնեայց և յայլազնեայց սիրեցեալ և պատուեցեալ նոյնպէս և էր առ յամենեսեան ահարկու և անուանի, յորմէ ամենեքեան երկնչէին և ակնածէին: Յաւուրս սորա միաբանք Սրբոյ Աթոռոյս էին, որպէս յաւուրս Մօրկայ, յորս ոչ ոք ի տանկաց կարող էր հպել և կամ զբանս ինչ ծանունս խօսիլ, որպէս սովոր էին ի յառաջինսն ի մէջ Աթոռոյս հայհոյել և զանել և տանիլ Երևան բանտել և տուգանել: Վասն որոյ և արար սա զբազում գործս արժանի զարմացման և արձանագրեցման վասն ապազայից: Յորոց զհասարակ և զմանունսն թողեալ, զոմանս գլխաւորս և զնշանաւորսն գրեմք (28բ) աստ: Նախապէս ի շինելն զպարիսպ Սրբոյ Աթոռոյս զմերձ գեօղս մեր (որ կից և անմիջոց վայրօք և խառնիխուռն շինուածովք շրջափակեալ էր զՍուրբ Աթոռովս) քակեալ հեռացոյց ի պարսպէս և յԱթոռոյս և իւրով արդեամբքն վերստին շինեաց զտունսն և զեկեղեցին ի հիւսիսակողմն միաժողով և բնակակից իրերաց, որպէս տեսանես[92]:

Դարձեալ զյՕշական գեօղն, որ մուլք է Սրբոյ Աթոռոյս, յամս բաշն զաւթեալ էին մուղանլու[93] կոչեցեալ ազգն տանկաց, զբնակիչ հայսն աստ և անդ տարագիր արարեալ իւրեանք էին նստեալ, որպէս զբնիկ և զհայրենական մուլք համարելով ինքեանց, որոյ զայնքան այգիսն և զպարտէզսն և զշատ տունս անապատ արարեալ և զցանեցե-

[I] Բ. > մի

լոցն իւրեանց զմուլ ևս ոչ տայի Աթոռոյս և դեռևս զվնասս բազումս հասուցանէին: Արիասիրտ հայրապետս այս յոտին կացեալ ի յամս բանիս այնքան ջանաց, մինչև զնոսա արմատախիլ արարեալ ի բաց հալածեաց անտի և զբնիկ գեօղական հայսն և զայլս աստի և անտի բերեալ բնակեցոյց ի նմա ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում:

Դարձեալ զգեօղօրայսս զայսոսիկ, այսինքն՝ զԱշտարակ, զեղուարդ և Աղունատուն, զորոց մուլ զոլ Սրբոյ Աթոռոյս, ոչ ոք գիտէր երբէք, զի ի Գրիգոր կաթուղիկոսէն մինչև ցայսվայր 3խէ. (347) տարի էր անցեալ, զորս զաւթեալ էին տաճիկք յայսբան միջոցի և իւրացուցեալ յազգէ յազգ հաստատուն ղապալայիւք գնելով յիւրեաց: Իսկ սրբազան հայրապետս այս հանեալ զվախմնամայսն և հաւաստեալ զոլ Սրբոյ Աթոռոյս, յետս էառ ի տաճկաց և արար մուլ Սրբոյ Աթոռոյս և հաստատուն գրով և կնքով Հիւսէին Ալի խանին, շխիսլամին և այլոց մեծամեծ տաճկաց ի ՌՃՁԲ. (1733) թուոջն տաճկաց գրեցեալ, զոր գտցես ցուցակաւն: Նոյնպէս զՄուղնի գեօղն և զՖռանկանոց գեօղն, զորս ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Շամախեցւոյ յափշտակեալ էին տաճիկք և իւրացուցեալք, սոյն հայրապետս յետս առեալ ի տաճկաց, արար վերստին մուլ Սրբոյ Աթոռոյս: Բայց յետոյ զՖռանկանոց գեօղն Հիւսէին Ալի խանն Երևանու էառ և զՔիլլթափայ կոչեցեալ գեղջ վեց դանկ մուլն ետ Սրբոյ Աթոռոյս, հաստատուն գրովք, զորոց զորպէսն տես ի ճառն սոյն գեօղօրէիցս:

Դարձեալ ի բառնիլ միահեծան տէրութեանն Պարսից և ի մուտ և ել առնելն անհծեալ ազգին լափլիզաց յերկիրս մեր ի գերել և յաւարել, ընդ նոսին և երկրաբնակ պարսիկքն իսկ եղեալ ելուզակք և սրիկայք, վասն որոյ բազում գեօղք և վանորայք իսկ ամայացան և աւեր դարձան, որպէս և են մինչև ցայսօր: Իսկ բայատ[94] կոչեցեալ տաճիկ ազգ մի եկեալ բնակեալ էին ի ներքոյ Խորվիրապայ սրբոյ վանիցն ի բաղչատեղն նորին և զվանքն և զեկեղեցիսն արարեալ էին տեղիք անասնոց և ամբարք զարշելեաց իւրեանց: Իսկ բարենախանձ հայրապետս այս զբայատ կոչեցեալ տաճիկսն ի սրբոյն Վիրապայ վանիցն ի բաց մերժեաց և էհան զոտս նոցա ի վանից անտի: Եւ եդ զանաջնորդս և հոգացեալ զամենայն պակասութիւնսն արար վանք միաբանակեցաց, որպէս յառաջն, որ և է ի ներկայումս շէն և հաստատուն ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոց նորա, որպէս ասացեալ է ի ճառս սոյն վանից[95]:

Դարձեալ ի հարաւակողմն գեղջս ի վայրն Քիլլթափայ[96] անուն փոքր բլուր զոյ, որ սահման է գեղջս մերոյ[I] ի հարաւակուսէ: Այրըմլու[97] կոչեցեալ ազգ մի տաճիկք եկեալ յայնկոյս յերեսն սոյն բլրիս կամեցան գեօղ շինել և բնակութիւն իւրեանց: Նոյնպէս և աստի ի յարևելակողմն կից Ղօռուղ կոչեցեալ տեղւոյն աւեր գեօղատեղ մի զոյ, որ Իլխճի կոչի, բանզի յառաջին ժամանակսն խանլղ իլխճիքն, որք են գրաստապանքն,

---

[I] Բ. մերում

յամռան եղանակին ի (29ա) լերինսն մնային և ի ձմռան եղանակին եկեալ աստ բնակէին վասն արօտից անասնոցն, որք զքանի մի տունս շինեալ բնակէին ի նոսա: Վասն այնորիկ կոչեցաւ տեղին այն Իլխըճի քեանտ: Եւ յայս գեօղս ևս եկեալ ազգ մի տանկաց քեօլանի[98] կոչեցեալ կամեցան բնակութիւն առնել իւրեանց՝ հրամանաւ Հիւսէյին Ալի խանին Երևանու, որք երկուքն ևս, թէ վասն ջրոց և թէ անասնոց արօտատեղից, որքան իցէին ցաւեցուցանելոց զաթոռայինսս և զգեօղականսն մեր, փորձողացն է յայտնի: Իսկ բազմերախտ հայրապետս այս ընդդէմ կացեալ երկոցունցն ևս, վարեաց զնոսա և ոչ եթող զետեղիլ անդ:

Դարձեալ սոյն հայրապետս բազմահանճար ի վերայ առաջնորդին Կարսայ բարկացեալ՝ վասն ոմանց պատճառաց բանիւ արար զնա և ի Պօլսոյ յատուկ զֆարման բերել ետ ի թագաւորէն յիւր անուն, որ գոյ ի Սուրբ Աթոռոջս և զառաջնորդն այն հանեալ անտի, եբեր ի Սուրբ Աթոռս և զԿարս քաղաքն հանդերձ իւրովք շրջակայիւքն զաւթեալ տէրունի վիճակ արար Սրբոյ Աթոռոյս և զվանքն Ղօշավանից[99] (որ քսան ամաւ յառաջ ամայի կայր) ի շինութիւն բերեալ զառաջնորդ կարգեաց և հաստատեաց միաբանիւք և ամենայնիւք պարագայիւքն տալով և զհին պարտսն, որք դիզացեալք կային ի վերայ վանքին ի յառաջնորդաց, որովք և ևս փառաւորեցաւ և հռչակեցաւ անուն սրբազան հայրապետիս ի յայլազգիս և ի մերազնեայս: Եւ հաստատեաց ի վանքն զյատուկ գութան մի յանուն Սրբոյ Աթոռոյս ամենիւք պարագայիւքն, յորմէ ոչ սակաւ արգասիք մտանէին ի Սուրբ Աթոռս: Եղև այս ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում:

Դարձեալ ի Հաշտարխան[100] և ի բոլոր երկիրն Ռուսաց բնակեալ հայքն տէրունի գոլով ի Սրբոյ Աթոռոյս գնայր նոցա առաջնորդ և եպիսկոպոս, որ ընդ առաջնորդութեանն և զնուիրակական գործն ևս կատարէր: Ապա ի ժամանակս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ ի ՌՃՂԸ. (1749) թուոջն մերում ապստամբեցան յԱթոռոյս և եդին իւրեանց յատուկ առաջնորդ հրամանաւ թագաւորին ռուսաց զՍտեփաննոս եպիսկոպոս ոմն՝ ի վիճակէն Գանձասարու վասն դժնեայ բարոյութեան Բարսեղ եպիսկոպոսին Փառակեցւոյ, որ յայնմ միջոցի առաջնորդ էր տեղւոյն ի Ղազար կաթուղիկոսէն կարգեցեալ[101]: Եւ յայնմ հետէ (29բ) ի յԱթոռոյս եպիսկոպոս ոչ եմուտ յայն երկիրն, զի հրամանաւ թագաւորին արգելեցաւ, այլ մասնաւոր վարդապետ մի գնայր նուիրակ անուամբ միայն և ընդ բռամբ առաջնորդին լինելով, որպէս զժողովարար մի կամաւորապէս ժողովէր զնուիրակութիւնն ի բոլորէն՝ զմասն հազիւ առնլով գայր յԱթոռս: Յայլուստ եպիսկոպոսք մտանէին յերկիրն անարգել և յԱթոռոյս միայն ոչ կարէր մտանել:

Վասն որոյ և Գանձասարու Ներսէս կաթուղիկոսն ժամ գտեալ (և մանաւանդ, զի տեղւոյ առաջնորդն յիւր վիճակէն էր և յինքենէ եպիսկոպոս ձեռնադրեցեալ) և յերկիրն ևս գլխաւոր իշխանք ոմանք ի Շամախու և ի յայլ վիճակէ նորին էին, սկսաւ յոտն ածել յայն յերկիրն, եպիսկոպոս և նուիրակ առաքել, զգանձանակ հաստատել և զանուն իւր

յիշեցուցանել յեկեղեցւոջն, նոյնպէս և նուիրակն նորին ևս խոստացաւ ի վերայ նուիրակացն Սրբոյ Աթոռոյս և համարձակ վատաբանել և դաս բարձել զաթոռային, ասելով, թէ մեր է այս վիճակ, դու զի՞ մտանէք յայսր և զայլս այսպիսիս: Տեսաց այս դիպուած ի ժամանակս Ղազարու, Մինասայ, Աղէքսանդրի և Յակոբայ կաթուղիկոսացն, մինչև ի Սիմէօն կաթուղիկոսս յայս յամս բաան: Ապա ի ժամանակս սոյնոյ հայրապետիս մինչ մեռաւ Գանձասարու Ներսէս կաթուղիկոսն և անկաւ երկնի կաթուղիկոսութիւն ի յԱղուանս, որպէս ասացեալ է երկարապէս ի ճառս և ի ննջելն սորա զլրբութիւնս Իսրայէլին և նորայնոցն, ևս սկսան չարանալ և ի տիրել երկրին այնմիկ և Գանձասարու վիճակ առնել զնա խսպառ և զնուիրակն Սրբոյ Աթոռոյս (որ էր Քանաքեռցի Յովանէս վարդապետն ի սոյնոյ հայրապետէս առաքեցեալ) ի յանարգանս և յանպատիւս ունիլ և զայլս այսպիսիս[102]:

Ապա բարեհնախանձ հայրապետս այս գրեաց առ Եկատարինէ թագաւորն Ալէքսիովնայ ռուսաց երկարապէս զօրպիութենէ Աթոռոյս և զհնազանդութենէ յամենայն յիշխանութիւնս եղելոց հայոց սմա և զապստամբութենէ միայն յայն յերկիրն եղեալ Հայոցն և զայլս այսպիսիս (որոյ մուսավատայն գոյ ի սոյնոյ հայրապետէն արարեցեալ), ընդ գրոյն նաև զմասունս ի Նոյեան Տապանէն, ի սրբոյն Յօհաննու Կարապետէն, ի սրբոյն Գէորգեայ և ի սրբոց Հռիփսիմեանց նշխարացն, միով բառաչեալ արծաթեայ ոսկէզրեալ տփով կնքեցելով ձեռամբ թիֆլիզեցի Դաւիթ վարդապետին՝ առաքեաց ի ՌՄԺԵ. (1766) թուոջն մերում[103]: Իսկ ողորմութեամբն Աստուծոյ (որ ունի ի ձեռին զսիրտ թագաւորաց) սիրով ընկալնու թագաւորն զգիրն և զընծայն և լիովին և բան զխնդրեալն առաւել կատարէ զխնդիրն, զի հրամայէ գրել զհրովարտակ առ յամենայն տէրութիւնս իւր և առ յամենայն յազգս հայոց՝ ծանուցանելով զմիտ գրոյն և զօրպիութիւնս ընծայից սրբազան հայրապետիս մերոյ և զընդունումն իւր մեծաւ սիրով և շնորհակալութեամբ և տալն զկատարումն խնդրանացն և զվճիռն, թէ թարց հրամանի հայրապետին էջմիածնի եպիսկոպոս և կարգաւոր ոք մի մտցէ յերկիրս յայս և զայլս սիրացոյց բանս, զորս գրեցուցանէ ի վերայ մագաղաթի ոսկեայ գրով և զնոյնն հրամայէ թարգմանել ի հայ լեզու և նոյնպէս գրել ի վերա մագաղաթի:

Եւ ապա զերկոսինն, այսինքն՝ զռուսէրէնն և զհայերէնն ի մի յարկեցեալ և կապեալ թելիւ, ուր վերջանայ բանն և ի վերայ կապին դնէ զմեծազոյն կնիքն Կայսերական ի վերայ զմոոյ, որպէս տեսանես, որ գոյ Աթոռոջս ի միում յատուկ արկղոջ ի ներքոյ փականաց: Եւ ընդ սոյնոյ հրովարտակիս զթօփ մի ոսկեհիւսն դիպայ նորագործ և գեղեցիկ և զերկուս թօփս ոսկեայ գործ հաշխայս իբր (յատկապէս ընծայ հայրապետին) առաքէ ձեռամբ նոյնոյ Դաւիթ վարդապետին ի Սուրբ Աթոռս ի ՌՁԿԸ. (1768) թուոջ փրկչին և ի մերում ՌՄԺԷ. (1768) թուոջն[104]: Եւ այսպէս արար զբոլոր երկիրն զայն հաստատապէս վիճակ տէրունի Սրբոյ Աթոռոյս արքունական հրամանագրով[105]:

Ապա ի սոյն թուոջս սոյն հայրապետս զՄինաս եպիսկոպոսն նուիրակ և առաջնորդ կարգեալ առաքէ յերկիրն յայն (30ա) փառաւորապէս, որպէս յիշեցաւ ի Զ. (6) գլուխն ի ճառս սոյնոյ երկրիս[106]: Իսկ զվերոյ յիշեցեալ դիպայն սոյն հայրապետս կտրէ և տայ կարել զշուրջառ մի հայրապետավայել, որոյ աստառն է կապտագոյն գազէթ[I][107] ծաղկեայ և քեօպայն կարմիր աթլաս և զվարագոյր մի սրբոյ Իշման տեղւոյն՝ կարմիր աստառով կերպասեայ: Իսկ զվերոյ յիշեալ ոսկեհուռն հաշիայն դնէ ի վերայ երկուցն ևս շուրջառին և վարագուրին, յերեսոյ կուսէ ի քղանցսն շուրջանակի, որք երկուքն ևս են ազնիւք յատկացեալք և աննմանք այլոց, յորոյ վերայ գրեալք գոն և յիշատակարանքն, որպէս տեսանես[108]: Եւ յայնմ հետէ եղև ընտանութիւն և մեծ սէր թագաւորին ռուսաց և նախարարաց նորին և եպիսկոպոսացն առ Սուրբ Աթոռս և առ յազգս մեր, որպէս տեսանես զգրեանսն նոցին:

Դարձեալ ի Կարնոյ Կարմիր վանք[109] կոչեցելումն սևագլուխ մի կայր Թօխաթցի Գէորգ անուն, այս չիք Գէորգ ոչ վարդապետս, միջնորդութեամբ նոյնոյ վանից առաջնորդ Մշեցի Յակոբ վարդապետին, գայ յԱթոռս և եպիսկոպոս ձեռնադրի ի Շամախեցի Յակոբ կաթուղիկոսէն ի միաբանութիւն նոյնոյ Կարմիր վանիցն ի ՌՄԹ. (1760) թուոջս մերում: Եւ յետոյ ի ՌՄԺԳ. (1764) թուոջն մերում ի ժամանակս սոյն Սիմէօն կաթուղիկոսիս նոյն չԳէորգ վարդապետն նոյնոյ Յակոբ վարդապետ առաջնորդի հրամանաւն գնայ յԱխլցխա քաղաքն սակս պտղի և իրաւանց նոյնոյ վանիցն, զի յառաջ Ախլցխա վիճակ էր այն վանիցն: Ապա ի գնալն չԳէորգին յայն քաղաքն սկսանի յայտնել զչարութեան խմորն, զոր ունէր յառաջմէ ծրարեալ ի յինքն, այսինքն՝ զաղանդն ախթարմայութեան[110]: Քանզի և Ախլցխայ քաղաքն ևս յիսուն ամաւ յառաջ ապականեցեալ էր նոյն աղանդովն ըստ մեծի մասին: Ուստի և չԳէորգն այն այնքան համարձակութիւն գտանէ անդ, մինչև զհայոց ազգն և զեկեղեցին դաս քարշէ յատեանն և վատաբանէ զանուն փափին յիշէ յեկեղեցին և զայլս այսպիսս, որոյ բողոքն հասանի ի Կարին և կարնեցիքն ևս բազմակնիք թղթով ծանուցանեն Սիմէօն կաթուղիկոսիս:

Ապա արիասիրտ հայրապետս այս (որ մանաւանդ նախանձախնդիր էր վասն ուղղափառի հաւատոյս Հայաստանեայց) գրէ ի Պօլիս, զերիս ֆարմանս բերել տայ ի սուլթան Մուստաֆայէն ի ՌՃՀԹ. (1765) և ի ՌՃՁԱ. (1767) թուոջն տաճկաց, երկուքն յատուկ ի վերայ Ախլցխայու և մինն ի վերայ ամենայն տեղեաց՝ սաստիկ հրամանաւ և պէսպէս սպառնալեօք: Իբր ուր յուրեք ֆռանկ փաթրիք իցեն՝ վարեսցեն յերկիրն իւրեանց և ուր յուրեք հայ ֆռանկացեալ իցէ կրեսցեն[II] մեծամեծ տուգանք, տանջանք և այլք այսպիսիք, զի հնազանդեսցին իւրեանց օրինաց և մի ևս արասցեն զֆռան-

[I] Բ. գէզէթ
[II] Ա., ՄՄ, ձեռ. 4592 > կրեսցեն

կութիւն: Զայս պատուէրս փաշայից, դատաւորաց և այլոց մեծամեծաց իւրոց գրէ: Իսկ յերկուս ֆարմանսն Ախլցխայու յետ այսպէս սպառնական պատուիրանացըն գրէ, թէ Պօղոս, Ստեփան և Յովանէս սևագլուխքն (որք էին ախթարմայք բնակեալք յԱխլցխայ հուտեցուցիչք յերկրին) և Յակոբ չերէցն ի յէջմիածին ահսորեցին և Գ. (3) եկեղեցիքն հայոց յանձնեցին: Եւ զի մինչ այս ֆարմանաց գալն վերոյ յիշեալ հայրապետս մեր զչիք Գէորգն բանադրեաց և նա, լսելով մանաւանդ զֆարմանաց հանելն, փախեաւ գաղտ յԱխլցխու ի Պօլիս՝ ի Բէկօղլին, առ ֆռանկսն և անդ սատակեցաւ ի նոյն ամին: Իսկ ի գալ ֆարմանացն՝ հայրապետս մեր զմին առաքէ յԱխլցխայ առ Նօման փաշայն (որ փաշայ էր նոյնոյ երկրին) և ինքն ևս գրէ փաշային զորպիսութիւնս ախթար(30բ)մայիցն:

Ապա փաշայն ի տեսանելն զֆարման թագաւորին իւրոյ կատարէ զհրամանն, զի զեօթն փաթրիկ ֆռանկսն (որք յորչացեալ էին անդ) ահսորէ յերկիրն իւրեանց և զեկեղեցիսն յանձնէ հայոց ժողովրդեանն, զթիւրեալսն բազմաւ տանջանօք և տուգանօք խոշտանգէ և զվերոյ յիշեալ չորեսին չկարգաւուրսն կապանօք ընդ միոյ գլխաւոր մարդոյն իւրոյ առաքէ յԱթոռս ի ՌՄԺԸ. (1769) թուոջն մերում, որք մնացին յԱթոռս յամս երիս, կրեցին զշատ նեղութիւնս ի բանտս, ի կապանս, ի գանս և յայլս պատիժս, մինչև երկիցս անգամ հայերէն գիր ետուն դաւանութեան մերոյ վճռապէս և նզովիւք, զի մի ևս դարձցին ի նոյն աղանդն:

Յետոյ ախլցխացիքն անկան առ մեծ Մուսթաֆայ փաշայն, որ յայնմ ժամանակի ի Կարս սարասկեար նստիւր վասն պատերազմին ընդ ռուսաց ազգին, որ յայնմ միջոցին գոյր սաստկապէս և նա գրեաց առ հայրապետս մեր, զի արձակեսցէ զկապեալսն[111]: Եւ հայրապետս մեր ևս գրեաց սարասկեարին զորպէսն և նորին ձեռամբն ի Կարս դատաւորօք և մեծամեծ իշխօղօքն Կարսայ վերստին էառ գիր ի բերանոց հեստելոցն տանեկէվար, զի մի ևս երևեցուսցեն ի յինքեանս զնշան ախթարմայութեան: Ապա գրեաց վերստին ի Պօլիս և ետ բերել զարձակման ֆարմանն և դարձոյց զնոսա յԱխլցխայ ի ՌՄԻ. (1771) թուոջն մերում: Սոյնպէս և զմիւս հասարակ ֆարմանն առաքեաց սոյն հայրապետս մեր ի Բայազիտ և յԱլաշկերտ առ Ապտի փաշայն Բայազիտու և առ յայլ իշխօղսն երկրին, գրելով և ինքն զորպիսութենէ հեստելոցն (զի և ի յԱլաշկերտ յուրեք յուրեք գոյին) և խնդրեաց զգլխաւորսն նոցա:

Իսկ փաշայն և այլ իշխօղք երկրին նոյնպէս առաքեցին կապանօք ըստ ոճոյ ֆարմանին և ըստ խնդրոյ հայրապետիս մերոյ յԱլաշկերտու յերկրէն զեօթն անձինս չարագլուխս, զհինգ չքահանայս և զմի շտիրացու, զոր Բռնձիկ կոչէին, որ էր ի Գարսան գեղջէն և զմի աշխարհական Մաթօյ անուամբ ի .... գեղջէն և չքահանայքն տէր Պօղոսն ի Ղարասու գեղջէն, տէր Գրիգորն ի Նաւկայ գեղջէն, տէր Խաչատուրն ի Մօլլասուլէյման գեղջէն, տէր Յարութիւնն ի Միրանկ գեղջէն և տէր Ղազարն ևս ի Գարսան գեղջէն[112],

որք էին գլխաւորք հեստելոցն, զորս և հայրապետս մեր նոյնպէս և զանազան կերպիւ խոշտանգեաց գանիւ, բանտիւ և բանիւք, վերջապէս ի բերանոցն էառ գիր հայերէն նզովիւք և հաստատուն ուխտիւք և ի Բայազիտ ևս ի դատարանումն տանեկաց էառ զգիր հաստատուն կնքով և վկայութեամբ բազմաց, զի մի ևս երևեցուսցեն յինքեանս զնշան աղթարմայութեան և զայլս ապականեալսն ևս յինքեանց վերադարձուսցեն ի մերս յեկեղեցի: Այսպէս արարեալ և զոսսա առաքեաց ի տեղիս իւրեանց:

Արդ Ախլցխայու անուամբ ֆարմաննն երկու էր, մինն առ Նօման փաշայն մնաց և միւսն յԱթոռս է: Նոյնպէս և միւս հասարակ ֆարմաննն իւրեանց քանեօք սուրաթօքն: Նոյնպէս և իթլախի ֆարմաննն, զոր վերստին ետ բերել վասն արձակմաննն ախլցխայեցւոցն: Այլև հեստելոց տուեալ հայերէն և տաճկերէն ձեռագիրքն, փաշայից և այլոց մեծամեծաց գրեանքն և այլք թուղթք վասն անցիցս այսոցիկ, բոլորքն համաժողով զօն յԱթոռս, զորս զոցեսս յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք պահելիք են ի պիտանաւորութիւն ըստ ժամանակին[113]:

(31ա) Եւ այս ևս ոչ է զանց առնլի, զի Հերակլ արքայն Վրաց երկիցս անգամ բազմօք զօրօք եկն ի վերայ Երևանու և երևանցի Հիւսէյին Ալի խանն իւրն իւրայնօքն բերթափակ եղեալ ամրացաւ և զերկրացիսն բոլոր քօշեցուցեալ յերևան էլից զյատակ[I] և զխանդակ բերթին և, ապա, իւրն իւրովք մեծամեծօքն գրեալ աղաչանօք հայրապետիս մերոյ, զի միջնորդեսցէ ի խաղաղութիւն: Եւ հայրապետս մեր գնացեալ առ Հերակլ արքայն, յորմէ և սիրով ընդունեցեալ մեծարի և հրաւիրէ զնա յԱթոռս ի յուխտ և ի պատիւ և ապա համոզեալ զնա ի սէր և ի խաղաղութիւն ընդ երևանցւոցն առանց յամենայնի վնասատուութեան ուղարկէ զնա խաղաղութեամբ յերկիրն իւր: Քանզի կարի սիրով էին ընդ միմեանս հայրապետս մեր և Հերակլ արքայն: Լինին այս եղելութիւնք ի ՌՄԺԴ. (1765) և ի ՌՄԺԸ. (1769) թիւսն մեր[114]:

Դարձեալ յառաջ քան զքանի ամս վնէժաքնակ[115] ի մէնչ հեստեալ լօթերականքն[116] (որք կոչին աբբայեանք) հնարեցին զտետրակ մի Օրացոյց անուն[117], զոր շինէին յամի յամի ի վերայ Տարեգրոյն, յորում դնէին զտարւոյ տօնսն, տեղաւորելով զշարժական միջոցից տօնսն ցուցանելով և զաւուր ձայնն, զամսաթիւն, զլուսնաթիւն և զայլս այսպիսիս, ընդ սոցին դնէին նաև զտօնսն յունաց և լաթինացւոց, ըստ մերոյ խառն: Եւ այսպէս յամենայն ամի տպեալ յազգս մեր սփռէին, իբր մեծ երախտաւոր իմն ցուցանելով զինքեանս ազգիս մերոյ: Եւ ազգս մեր ևս առնոյր ամենայն ոք (մանաւանդ յերկիրն Օսմանցւոց) և կրէր ի ծոցի իւրում, իբրև զհազուագիւտ և պիտանի գիրք մի: Եւ զայս տեսանելով բարեհնախանձ հայրապետիս մերոյ՝ ոչ սակաւ ցաւիւր և յոզւոց հանէր, իբր զի ազգն հայոց այնքան իցէ տկարացեալ, մինչ զի այնպիսեաց լօթրանացն կարօտիցի և նօքօք կարգաւորիցէ զտօնս եկեղեցւոյ իւրոյ:

---

[I] Բ. > զյատակ

Ուստի ի խափանել և ի ջրել զթիւնալի օրացոյցն նոցին, վերանորոգեաց զտօնացոյցս մեր երկոfումբf հատորof, որպէս ի վերն ասացաւ, որfան զՕրացոյցն նոցին գեղեցիկ ոճով և մշտատև ճանապարհաւ ցուցանէ զամենայն վերոյ գրեցեալսն, որպէս տեսանես ի Տօնացոյցն: Եւ այսպէս, ի կարգաւորելն զՏօնացոյցս մեր, որպէս ասացաf, ապա ետես, թէ գրշագրof ոչ էր հնար տարածիլ յամենայն եկեղեցիս, վասն որոյ գուն գործեալ խնդրելով զհնար, զի և զտպագրատուն ևս հաստատիցէ յԱթոռոջս, զոր և հաստատեաց իսկ յաջողմամբն Աստուծոյ ի ՌՄԺԹ. (1770) թուոջն մերում[118]: Յորում և ետ տպել նախապէս զՍաղմոսս, զիւրակերտ Տաղարանս և զգիrfն աղօթից Ջքօսարան (31ք) կոչեցեալն ի փորձել զամենայն պարագայս գործոյն ի ՌՄԻ. (1771) և ի ՌՄԻԱ. (1772) թիւսն:

Եւ ապա ի ՌՄԻԳ. (1774) թուոջն ետ տպել զիւրակերտ Տօնացոյցն, զոր և սփռեաց յամենայն յազգս մեր, ըստ մեծի մասին ձրիապէս, գրելով և զպատուիրական կոնդակունս յամենայն յերկիր, զի զթունացոյցն լօթրանաց խոտիցեն և զիւր Տօնացոյցն ի գործ ածիցեն ի ՌՄԻԴ. (1775) թուոջն մերում: Եւ մինչ զտպագրատունն ևս հաստատեաց Աստուծով, ապա ետես, թէ ի հեռուստ և բեռամբ և մանաւանդ մեծաւ ծախիւf բերելով զթուղթն՝ կարի դժուարաւ լինիւր և անձեռնտու այսմ գործոյ: Վասն որոյ հետամուտ լեալ այնուհետև, զի և զթղթաշինութեան արհեստն ևս մուծցէ յԱթոռս, զի յաջողակ լիցի գործն տպագրութեան, զոր և եմոյծ իսկ և հաստատեաց յաջողմամբն Աստուծոյ[I]:

---

[I] Չգրված՝ 32ա-156ա

## (156բ) **ԳԼՈՒԽ Ե.**

### ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՆՈՒԻՐԱԿԱԿԱՆ ՎԻՃԱԿՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ, ՅՈՐՈՑ ԱՌՆՈՒ Ի ՁԵՌՆ ՆՈՒԻՐԱԿԱՑ Ի ՅԵՐԻՍ ԱՄՍ ՄԻԱՆԳԱՄ, ԶՆՈՒԻՐԱԿԱԿԱՆ, ԶԳԱՆՁԱՆԱԿԱԿԱՆ, ԶՀՈԳԵԲԱԺՆԱԿԱՆ, ԶԿՏԱԿԱԿԱՆ ԶԱՐԴԻՒՆՍ ԵՒ ԶՎԷՃԵՂԷՆՍ ՅԻՇԱՏԱԿԻՍ[119]

Արդ ըստ կանօնի ճշմարտութեան և ըստ պահանջման իրաւանց բոլոր ազգս հայոց, ուր և իցեն զետեղեալք, թէպէտ էին և են ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս էջմիածնի, որոյ են շնորհածին և հոգևոր զաւակք ըստ հաւատոյ և հնազանդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և նորին յաջորդացն, որպէս ասացաւ լիովին ի Ը. (8) գլուխն, սակայն ի բառնիլ թագաւորութեանս մերոյ և յանկանիլն ազգիս մերոյ ընդ իշխանութեամբ այլազգեաց և ի ցրուիլն ընդ ծագս տիեզերաց, տկարացաւ և իշխանութիւն սորին:

Վասն որոյ զոմանս մասնաւոր վիճակս ի Սիս նստօղքն զաւթեցին և զոմանս յԱխթամար նստօղքն՝ տաճկական իշխանութեամբ: Իսկ որք մնացին սեպհական[I] վիճակք Սրբոյ Աթոռոյս և են այժմ ի նոյնութեան, զայնոսիկ յատկացուցից ի յիշատակ ապագայից յաւիտենականապէս, որք են ներքոյ գրեցեալքդ:

**Ի յերկիրն Արևմտեան, որք գոն ընդ իշխանութեամբ օսմանցւոց**

Առաջին՝ մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս: Ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ[120]:

Ղարթալ[121], Ղատի գեօղ[122], Իւսկուտէր[123], Սալամսզ, Բեկղօզ[124], Ղանտիլլի[125], Հիսար Ենկիքեօյ, Ղուռուչէշմէ[126], Առնաւուտքեօյ[127], Օրթագեօղ[128], Բէշիկտաշ[129], Խաս գեօղ[130], էյիպ[131], Թօփղափու[132]:

Երկրորդ՝ էտրէնէ քաղաքն[133], Գիւմուրճինէ[134], Թէքիրտաղ քաղաքն[135], Մալղարայ[136], Ուզունքեօրփու[137], Չօրլու[138], Գէլիբօլի[139], Բօղազհիսար, էյնա, Սիլիվրի[140], այլև Պրուսայ քաղաքն[141], Ջառահ գեօղ, Ենկիճէ գեօղ[142], Մուհալիճ, էտիննիկ, Քիրմաստ, Պօղովայ, Պանտրմայ[143], Պալիքեասար[144], այլև Քեօթահիայ քաղաքն[145], Մուրատչայ, Գեօլտաղ, Ասրճղ, Մալղարայ, Թուրքմանլու, Տաւշանլու[146], Բիլաճուկ[147], այլև՝ Եալո-

---

[I] Բ. սեփական

վայ[148], որք են՝ Գիւղէ, Գէոէլէկ[149], Սօլօզ[I150], Գեամիշ, Մառմառճուք, Չինիզնիկ, Ենկիշ-ճար[II151], Քեարամաթ, Անարձաթ, Նորգեօղ, Օրթագեօղ[III], Քարձաղ, Ղնճըլար[IV], Շախ-շախ, Եալախդարայ, Մէրռէգեօղ, Դօնզեալ, Բախճաճըղ, Ովաճղ, Ղլիճ գեօղ, Ասլան բէկ[152], Ղուտոբէյանկ, Օրթագեօղ, Ատաբազար[153], Արմաշ[154], Խասկալ, Ալմալու, Ֆէճրիզլու[155], Թամլխ, Նոր գեօղ, Ֆնտխլու, Սապանճայ[156] և Իզնիմիտ քաղաքն[157]:

(157ա) Այս վերոյ գրեցեալ երկրորդ վիճակս նուիրակութեան, այսինքն՝ էտրէնէ քաղաքն և այլ հետևեալքն զկնի նորին մինչև ցայժմ էին ընդ Կոստանդնուպօլսոյ մի վիճակ նուիրակութեան: Իսկ մեք ի Կոստանդնուպօլսոյ որոշեալ արարաք ուրոյն վիճակ նուիրակութեան և առաքեցաք ի յիւրաքանչիւրսն զուրոյն ուրոյն նուիրակունս, զի մի նուիրակն ի հինգ և ի վեց ամս հազիւ աւարտէր զերկոսեանսն: Ուստի մեք որոշե-ցաք, զի ի յերիս ամս աւարտեսցին երկուցն ևս նուիրակունքն: Եւ այսպէս կանօնեցաք լինիլ այսուհետև:

**Երրորդ՝ Ուռումէլու երկիրն**[158]

Կաֆայ[159], Ղարասու[160], Բաղչասարայ[161], Աղմէչիթ[162], Գեօզլաւ[163], Օր[164], Սալաճք[165], Թօփթի[166], Օրթալանկ[167], Հին Ղռիմ[168], Կէրչ[169], Ենկիդալայ[170], Թաման[171], Թօմրուկ[172], Ղափուլու[173], Օզու[174], Աղքիրման, Բանդար, Խանըրշլայ, Քիլի, Իսմայիլ, Սուլթան-ըըշլայ, Դայագեղ, Սաթճայ, Բաբատաղ, Բուքռէշ, Ֆոքշան, Օրմանի, Բոթիշան, Սիչով, Եաշ[175], Քիշնով[176], Հօթին, Մէյլով, Իպրայիլ[177], Սիլիսրայ, Հաճիօղլի, Բազարջղ, Քեօ-տէնճէ, Վառնայ, Փրաւատի, Շումլայ, Ռազղատ, Ուրուշճուղ, Թռնովայ, Հիլբայ, Թաթար-բազարճղ, Իսլիմլայ, Այիտօստ, Բուրղազ[178]:

(157բ) **Չորրորդ՝ Թօխաթ քաղաքն**[179], **ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ**

Սիվրիհիսար[180], Զիլայ, Հէյրակ, Ենկիշահար, Պիծառի, Գեակսի, Գրիգորիս:

Արապկեր քաղաքն, Կապնամատան, Շէֆիկ, Ամրկան, Ջերմակձագ, Վաղշէն, Քուշնա, Հացկնի, Կոանի, Ծապլվար, Խօրօճ, էճնէ, Զագ, Մաշկերտ, Անչրտիկ, Ակնայ քաղաքն, Ապուշեղ, Կամրկապ, Կարիչլայ, Խասկալ, Զորակ, յԱգրակ, Լին, Նաւրէր, Բեն-կան, Սեբաստիայ քաղաքն, Ջառա, Տևոցայ, Ալաքիլիսէ, Քարհատ, Թողրիկ, Ճանճին, Փասմնայ, Շխզէնի, Բրաբերթ, Զարքիտ, Ղուրթլու օղլան, Պետրոսի, Կամիս, Ուշկու-նամ, Սարհաճ, Բախչայ, Քօթնի, Ըստանօզ, Մինկէօլ, էնկիչայ, Կովտին, Աղտ, Կա-ռուայ, Խանզար, Խորսանայ, Իշխանի, Թախտուղ, Դտմաճ, Դաւռա, Ղաւռազ, Բօքայ,

---

I Բ. Սեօլեօզ
II Բ. Ենկիշահար
III Բ. > Օրթագեօղ
IV Բ. Ղնղըլար

Փոկնին, Խոռխոռօն, Խօշղատամ, Ղալտուր, Կեսարիա քաղաքն, Աղշահար, Դաւալու, Թօմարզայ, Էրակիլ, Բօռն, Նիկտայ, Քեօհնա գեօղ, Եօզղատ, Թալաս, Վանք գեօղն, Թալուսուն, Կեարմիր, Պէլագաս, Եւքառայ, Նիզայ, Տարսեղ, Ըսպտոն, Կեասի, Մունճուսուն, Մանճուսուն, Էրքիլատ, Ամասիա քաղաքն, Մարսվան, Քեօփրի, Հաճիքօյ[I], Ենկի գեօղ, Վանքի գեօղն, Ջանիկներ, Փաթսայ, Յունիայ, Թէրմայ, Չարշամպայ, Սամսօն, Բաւռայ, Սնապ, Կազտաման, Վօյվատ, Տաշքեօրփու և Քերազայ:

**Հինգերորդ՝ Էնկիւրիայ քաղաք, ընդ որով են ի ներքոյ գրեցեալքդ**[181]

Ղալայջղ[II], Զանղրայ, Թօսիայ, Ղօշհիսար, Զարքեազ, Գէռադայ, Բօլիայ, Դովրէկ, Ենկիխան, Պարթին, Էրէգիլ, Ղօնափայ, Ջափռանբօլի, Իստանօզ, Եաշ, Բէկբազար, Նալլուխան, Սիվրիհիսար, Էսկիշահար, Ենկիշար, Աֆիօնղարահիսար, Բօլավատին, Իլղուն, Աղշահար, Բէկշահար, Ղօնիայ, Ղարաման, Մութն, Էրմանիկ, Ջիլիֆկայ, Ալաիայ, Ադալիայ, Սէիտիշահար, Ալմալու, Մանթաշ, Ղաշ, Էգիրտիր, Միսադայ, Բուրդուր, Սպարթայ, Գեօլհէսար, Սանդխլու[III], Իշըղլու, Ուշաղ:

(158ա) **Վեցերորդ՝ Էրզրում քաղաք, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ**[182]

.......................................................................................................................

**Եօթներորդ՝ Ղարս քաղաք, ընդ որով են և գրեցեալքդ ի ներքոյ**

.......................................................................................................................

(158բ) **Ութերորդ՝ Բայազիդ քաղաք, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքս**[183]

Զանկազօր, Սուրբ Յօհան, Գիւրճիբուլախ, Հալաճ, Մէլիքշէն, Կաշոտ, Բազրկեան, Կարմիրկոնտ, Արծափ, Քօրուն, Մուսուն, Թաճտօյի գեօղ, Թութաղ, Գիլլուճէ, Խաչլու, Բաբախանի գեօղ, Սարուբեղ, Բազրկանչայ, Տաճիկնավրուզ, Քեաստակ, Ինջայսու, Թափառիս, Ղարաքեանդ, Տիզայ, Խարք, Ղամարջղ, Թութաք, Եաշմանդուլի, Ներքին Թութաք, Բէրէքեաթի գեօղ, Ալլահղուլի գեօղ, Քօթիս, Դիադին, Ատաքէնտ, Պրումի գեօղ, Տաշքէսէն, Ճանախզ, Գօրանի գեօղ, Մօլլադարայ, Շահվէլէտ, Ուլուքեանդ, Միրզիքեանդ, Մայեայ, Սօրան, Թօխլուճայ, Բուտաղի գեօղ, Ճուճանց, Սէվտօյի գեօղ, Ղարաբազար, Աղբազար, Շքրօյի գեօղ, Դամուրսղան, Թավլայ, Ալաշկերտու նահիան՝ Նաւրուզի գեօղ, Բօթի գեօղ, Ալիկօն, Լաշկօյի գեօղ, Քարովջուր, Ղումլուպուճախ,

[I] Բ. Հաճիքեօյ
[II] Բ. Ղալաջըղ
[III] Բ. Սանդիղու

Ղումլուճայ, Գումբէթ, Խլֆօյի գեօղ, Քեալտօշ, Մարտիկ, Գօրգօ[I], Խանռաշիկ, Կրիգեօլ, Պիկան, Սօֆիեան, Տիտան, Գեօլասօր, Աբտալաղի գեօղ, Միրզախան, Խօճի գեօղ, Մամզեցիկ, Գեարգեառ, Էկմալ, Ջիրօյի գեօղ, Ղազի գեօղ, Եօնճալու, Եզտօյի գեօղ, Ճմիկան, Քիփիղրան, Զամուսլու, Նաւիկ, Խտրի գեօղ, Մանկասար, Վերին Քիփիղրան, Փոխանցիկ, Էլիեազի գեօղ, Տօտիկան, Եազըճուգեղ, Արապաղայի գեօղ, Ալի աղայի գեօղ, Տօտօյի գեօղ, Մուրատխան, Ալէքսան, Վերին Դարափի, Ներքին Դարափի, Երանոս, Ղարաքիլիսայ, Ներքին Մուրատխան, Բօլուկբաշին, Տաշճին, Ատաղալէն, Աշխալէն, Հաճիսափար, Վերանցիկ, Ամաք, Թորգոմներ, Խաշլօյ, Մօլլասուլէյման, Թօփրախղալայ, Խօշիեան, Ճամիեան, Մուրգիք, Խաստուր, Գեարասան, Դաւօյի գեօղ, Զըլկահանի, Զուռուկի գեօղ, Վերին Մարտօյի գեօղ, Ներքին Ղազու գեօղ, Քեօլու գեօղ, Եահնիթէփէն, Քարուճոր, Ղայեաբէկ, Սևիրիցու գեօղ, Ղարասու, Պօշէկ, Էկմալ, Գամուրսղան, Դաւօն, Ջատօն, Տամպատ, Ճօրվէրան, Մալխասի գեօղ, Ղազարի գեօղ, Պունումանսուր, Խամուր:

(159ա) **Իններորդ՝ Վան քաղաք, ընդ որով են և գրեցեալքս ի ներքոյ.**

........................................................................................................

**Տասներորդ՝ Դիարբէքիր քաղաք, ընդ որով են և ներքոյ գրեցեալքդ.**

........................................................................................................

(159բ) **Ի յերկիրս Արևելեան, որք զոն այժմ ընդ իշխանութեամբ պարսից**

Առաջին՝ մայրաքաղաքն Ասպահան, որ է Նոր Ջուղայ, ընդ որով են և սոքա.

........................................................................................................

(160ա) **Երկրորդ՝ քաղաքն Դաւրէժ, ընդ որով են և սոքա.**

........................................................................................................

(160բ) **Երրորդ՝ քաղաքն Նախիջևան, ընդ որով են և սոքա.**

........................................................................................................

(161ա) **Չորրորդ՝ քաղաքն Երևան, ընդ որով են և սոքա.**

........................................................................................................

[I] Բ. Գօրգայ

## (161բ) **ԳԼՈՒԽ Ջ.**

### ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՆՈՒԻՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿՔ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ, ՈՐՔ ՏԷՐՈՒՆԻՔ ԱՆՈՒԱՆԻՆ, ՈՐՈՑ Ի ՅԱՌՆՈՒԼՆ ՋՎԵՐՈՑ ԳՐԵՑԵԱԼ ՆՈՒԻՐԱԿԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՍՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԸՍՏ ԵՐԻՑ ԱՄԱՑՆ ԱՌՆՈՒ ՆԱԵՒ ՋԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՍՆ Ի ՁԵՌՆ ՆՈՒԻՐԱԿԱՑ, ՈՐՈՑ ՆՈՒԻՐԱԿՈՒՆՔՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՒՍ ԿՈՉԻՆ ՆՈՅԱ

Ի յերկիրն Արևմտեան և ընդ իշխանութեամբ օսմանցւոց.

Ա. Ջմիւռին ճաղաճ, ընդ որով են և սոճա՝ Գեօզալ ճիսար, Մաճիսայ, Մաճամաճ, Գիրիդ, Սախգըզ, Միտիլու, Այազմայ, Քամար, Բէրղամայ, Ղընըխ, Սովմայ, Ղրխաղաճ, Աղասար, Գեօրդաստ, Ատալիայ, Մառմառայ, Ալաշճար, Դուրղութ, Բայինտուր, Թիրայ, Օտամիշ, Եճկիբազար, Նազլու, Դէճկիզլու, Բիրգի[I], Հօճաս, Ռաղօստ[II], Իստիաճֆօյ, Բօղըռում, Մուղլա, Մալաս, Մաճղալիաթ, Ղուշատայ, Սօճա, Քեօշճ, Մարտամ, Գեալամբայ, Սօպրուշայ, Բօզդօղաճ[184]:

Բ. Բաղդատ և Բասրա ճաղաճճ, ընդ որով է և երկիրն Հնդկաց, որճ են սոճա[185]: Ի յերկիրն Բաճկալայու՝ Կալկաթայ ճաղաճն, Չիշրայ, Սէյտապատ, Դաճայ[186], այլև Մատրաս ճաղաճն և Մշլիբաճդար[187]: Այլև ի յերկրօջն Փէկուայ՝ Ռաճկում Ղասապայն[188]: Այլև Սուրաթ ճաղաճն և Բումբայի[189]: Այլև Շաճջճաճապատ, Ֆէյզապատ և Փաթաճ[190]: Այլև ի յերկրօջն Չինու՝ Կաճդում Ղասապայն[191] *և Մաքաւ*[192]*, յորս գտանին վաճառականք հայոց երբեմն, նաև ի Բթաւիայ*[193] *և ի Մանիլայ*[194] *ևս գտանին:*

### (162ա) **Ի յերկիրս Արևելեան և ընդ Պարսիցն իշխանութեամբ**

Գ. Գիլանու երկիրն, որճ են՝ Ռոէշտ, Անզալու, Քիսմայ, Սալիաճ, Մազաճտարաճ, Լաճգարուտ[195]:

### **Ի յերկիրն Վրաց**

Դ. Թիֆլիզ ճաղաճն, ընդ որով են և սոճա: Ի Թիֆլիզ ճաղաճն եօթն եկեղեցիճն, այսինճն՝ Վաճքի, Սուրբ Նշաճի, Ջկրաշինու, Սճակաշինու և Քամօյեճց երկու եկեղեցիճն և Քարափի եկեղեցին[196] իւրեանց ժողովրդովճն: Թող զայլևս մաճր եկեղեցիսն,

---

[I] Բ. Բերգի

[II] Բ. Ռոտօսթ

nrf ընդ սոfof են և ընդ սոսին տէրունիf Սրբոյ Աթոռոյս: Եւ մի եկեղեցի ևս գոյ ի մէջ բերդին, nr ասի Կաթուղիկէ, նա ևս է լեալ Սրբոյ Աթոռոյս ի բնէ, սակայն ի ժամանակս շահ Ապասին, nr բերդն թուrfաքնակ լինի, զեկեղեցին այն ևս տանիկ զաւթեն: Այնուհետև լինի ամայի և անժողովուրդ և անուն Աթոռոյս ևս անհետանայ ի նմանէ մինչև ցայսօր: Իսկ միւսf երեf եկեղեցիfն, այսինfն՝ Մուղնի, Բէթղէհէմ և Նորաշէն, են Հաղբատու վանիցն վիճակf: Իսկ և ի շրջակայս նորին այսօրիկ գեօղօրայf, այսինfն՝ Կումիս, Ծարաղբիւր, Տաքախ մէլիf, Գուղէլիս, Սաղօրիս, Ղօքան, Տաքնագեօղ, Դիդէբէ, Կիկէթ, Ասուրէթ, Նախէդուռն[197]: Բաց ի վերնոյն ի վանfի կոնդակն նշմարեցեալ գեօղորայfն են: Միսխանայն, Օրաթաշուէն, Դիմացի գեօղն, Ատու գեօղն, Մուխաթն, Բօլքալէն, Էրղիսն, Տագնագեղն, Ղօպանն, Դիդէպէն, Սաղօրիսն, Գուտէլիսն, Վերի Թէլէթն, Ծղնէթն, Ծաւկասն[198]: Ի ձեռն Դաւիթ կաթուղիկոսիս օրինակի, յորոց ընդ նուիրակութեանն զառաջնորդական արդիւնսն ևս առնու Աթոռս[199]:

Այլև ընդ սովաւ նուիրակականն միայն, nrf են՝ Կախէթու[200] և Քիսեղու երկրայfն[201], Գօրի[202] և բոլոր Վրացտանու երկիրն: Այլև Ղազախ, Բօշալու և Բամբկաձորու նահիյfն բոլոր շրջակայիւfն իւրեանց[203]:

## (162բ) Ի յերկիրն Ռուսաց

Ե. Հաշտարխան fաղաfն, ընդ որով են և սոfա: Պետրպուրf, Մոսկով, Ղզլար, Սառաֆան, Բօրաղան, Ջէրfէզ, Մօզդօf *և նորոգ շինեալ Նոր Նախիջևան և Գրիգորիապօլ և նորոգ ստացեալ ի յօսմանցւոց՝ Ղըրիմ կոչեցեալն իւրով ամենայն սահմանօքն, այսինքն է՝ Քէֆէ, Էսկի Ղրիմ, Ղարասու, Աղմէչիտ, Գեօզլով, Բաղչասարայ և Օրբազար*[204]:

Գիտեա՛, զի Փառակեցի Բարսեղ վարդապետ ոմն, մինչ նուիրակ և առաջնորդ էր սոյնոյ երկրիս ի Ճահկեցի Ղազար կաթուղիկոսէն կարգեցեալ, ժողովուրդ տեղւոյն զզուեցեալf ի դժնէական բարուց նորին, գրեն զբողոf առ Ղազար կաթուղիկոսն, զի հանցէ զնա անտի: Իսկ ի յանլուր լինիլն կաթուղիկոսին ժողովուրդfն խոտեալ զԲարսեղն, հանեն ի յառաջնորդութենէն և հրամանաւ թագաւորին ռուսաց դնեն առաջնորդ իւրեանց զՍտեփաննոս եպիսկոպոս ոմն ի վիճակէն Գանձասարու ի ՌՃՂԸ. (1749) թուոջն մերում: Եւ յայնմ հետէ հատաւ առաջնորդական իշխանութիւն երկրին այնորիկ ի Սրբոյ Աթոռոյս յամս fսան: Եւ յայսfան (163ա) միջոցումս եպիսկոպոս ոչ եմուտ յերկիրն, յայն ի Սրբոյ Աթոռոյս և ոչ մտանել իսկ կարէր, զի արգելեցեալ էր արfունական հրամանաւ: Իսկ Սիմէօն կաթուղիկոսն Երևանցի գրեաց առ թագաւորն ռուսաց զապստամբութենէ երկրին և խնդրեաց զի վերադարձուցէ ի հնազանդութիւն Սրբոյ Աթոռոյս: Եւ թագաւորն ի խնդիր հայրապետին խոնարհեալ կատարեաց, իսկ արfունական կնfով և հաստատուն հրամանագրով, զոր գոցես գրեցեալ ի վերայ մագաղաթի

ռուսերէն՝ ոսկէզարդեալ ընդ հայերէն թարգմանեցելոյն ի ՌՃԺԷ. (1768) թուոջն Փրկչին: Ապա ի սոյն թուոջս նոյն հայրապետն զՄինաս եպիսկոպոսն նուիրակ և առաջնորդ կարգեալ առաքէ ի յերկերն յայն փառաւորապէս ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մեռում, զորոյ զլիովին, որպէսն ի ( ) և ի ( ) գլուխն տեսցես:

(163բ) Զ. Ի յերկրոջս Երևանու գեօղօրայք ոմանք, որք են սոքա: Այս մեր էջմիածնի գեօղս, որ է կից Սրբոյ Աթոռոյս, Եղևարդ, յՕշական, Ալիբէկլու, Դողս, Փարաքար, Գեօկգումբէթ, Կաւակերտ, Արպատ, Քեալարայ[205], յայնկոյս Երասխի մեծի գետոյն՝ Սուրմարի, Կողբ, Ալէթլու[206]:



ՄՄ, ձեռ. 978, էջ 15ա

(164ա) **ԳԼՈՒԽ Է.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ԱՅՆՔ ՎԻՃԱԿՔ, ՅՈՐՈՑ Ի ՅԱՌՆՈՒԼՆ ՋՆՈՒԻՐԱԿԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՍՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԸՍՏ ԵՐԻՑ ԱՄԱՅՆ ԱՌՆՈՒ ՆԱԵՒ Ի ՏԱՐԻՆ ՄԻԱՆԳԱՄ ՋԻԻՂՍ, ՋՊԱՆԻՐՍ, ՋՄԱՏԱՂԱՑՈՒ ՉՈՐՔՈՏԱՆԻՍ ԵՒ ՋԱՅԼՍ ԱՅՍՊԻՍԻՍ ՈՒՏԵԼԻՍ ԵՒ ՎԷՃԵՂԷՆՍ

Ա. Բայազիտ ճաղաքն, Դիադին, Նահիայն, Ալաշկերտ, Թօփրախղալայն, Բաթնոց, Մանածկերտ իւրեանց շրջակայ գեօղօրէիւքն:

Բ. Վան քաղաք, Բերկրի, Մահմուտան, Արճէշ, Արծկէ, Հաղբակ, Հազարու երկիրն իւրեանց շրջակայ նահանգօք և գեօղօրէիւքն:

Գ. Կարսայ երկիրն, Կաղզվան իւրեանց գեօղօրէիւքն:

Դ. Գեղարքունի, Ղրխբուլաղ, Շիրակ, Ապարան, Ծաղկունեաց ձորն[207] իւրեանց շրջակայ գեօղօրէիւքն: Յորոց առնոյր զցորեան, զգարի, զոսպ և զայլս այսպիսիս ի ժամանակս շինութեանն:

Ե. Լօռի, Ղազախ և Բամբակաձորն իւրեանց շրջակայ գեօղօրէիւքն, յորոց առնու զփայտեղէն թիս, զշանաղս, զտախտակս, զերկաթեղէնս և զայլս այսպիսիս:

Զ. Թիֆլիզ քաղաքն իւրեան շրջակայիւքն, յորոց առնու զմեղրեայ մոմս և զայլս այսպիսիս, որպէս և ինքեանք արձանագրեալ են ի Սուրբ Աթոռոջս ի ձախակողմանն կոյս մեծի դրան սրբոյ տաճարիս ի ՌՃԼԱ. (1682) թուականոջն մերում:

Է. Նախիջևանու երկիրն և տունն Գողթնեաց իւրեանց նահանգօքն: Յորոց առնու զշոր ծիրանս, զնուշս, զբակլայս, զբաննարս, զընկուզս և զայլս այսպիսիս:

Ը. Դավրէժ քաղաքն, իւրեան շրջակայիւքն, յորոց առնու զշոր խաղողս, զնուշս և զայլս այսպիսիս:

Թ. Գեանճայ քաղաքն, Շամախի, Շիրվան, Բաքու, Դարբանդ Նուխի, Բարդաւ[208], Խաչէնու երկիրն և բոլոր տունն Աղուանից: Յորոց առնու զերկաթս, զերկաթեղէնս, զբրթեղէնս և զայլս այսպիսիս: Յորս և զանձանակ ևս ունի, որք թէպէտ են Գանձասարու թեմք, սակայն են հնազանդք Սրբոյ Աթոռոյս և աթոռակալի սորին, որոյ և զանունն յիշեն յեկեղեցիս իւրեանց նախքան զանուն կաթուղիկոսին իւրեանց, որոյ զկին-վին ուղիսութիւնն յայլում տեղւոջ գրեսցուք[I]:

---

[I] Ձգրված՝ 164բ

## (165ա) **ԳԼՈՒԽ Ը.**

## ՅՈՐՈՒՄ ԾԱՆՈՒՑԱՆԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԵՒ ՍՈՐԻՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՑՆ Ի ԿՈՂՄԱՆՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՆ ԱՌ ՅԱԶԳՍ ՀԱՅՈՑ, ԹԷ ՄԻՆՉԵՒ Ո՞ՒՐ ՁԳԻ ԵՒ ՈՐՊԷՍ: ԵՒ ՎԱՍՆ ԱՅԼՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԱՍԱՑ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԳԱՑ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՈՐՊԻՍԱԾԱՆՈՅՑ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ

Արդ, որպէս մի է միջնորդն Հօր Աստուծոյ և ամենայն մարդկան մարդն Յիսուս Քրիստոս, ըստ սրբոյն Պօղոսի, որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, նոյնպէս և երկրորդապէս յետ Քրիստոսի մի է միջնորդն Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և յատուկ ազգիս հայոց մարդն Աստուծոյ սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր, որ ետ զանձն փրկանս ընդ ամենայն ազգիս հայոց, որ տնօրինեցմամբն Աստուծոյ և աղօթիւք սրբազանից առաքելոցն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, յորոց շառաւիղացն պարգևեցաւ մեզ Փրկիչ և առաջնորդ, որպէս Մօսէս հնոյն Իսրայէլի: Ուրեմն, որպէս Քրիստոս, ըստ ամենատեսակ բարերարութեանն իշխանութիւն ունի ի վերայ հասարակ մարդկայինս բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Քրիստոսի սուրբն Գրիգոր, ըստ բազմատեսակ բարերարութեանն իշխանութիւն ունի ի վերայ յատուկ ազգիս հայոց, զորմէ բաց ասօղն պարտի նախապէս զՀայկազնէութենէն և զՔրիստոսական հաւատոյն իւրմէ բացասել: Քանզի որ Հայկածին է և հաւատացեալ Քրիստոսի, սովաւ և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն: Եւ կարճառօտապէս առանց ամենայն հակառակութեան և անընդդիմաճառութեան, ըստ հոգւոյ և ըստ հաւատոյ, Փրկիչ, լուսաւորիչ, հովիւ, առաջնորդ, վերակացու և իշխան, հայրապետ և ծայրագոյն պատրիարգ բոլորի ազգիս հայոց՝ յետ Քրիստոսի է սուրբն Գրիգորիոս: Քանզի ըստ իմաստասիրաց իւրաքանչիւր սիրայի մի է սկիզբն, ապա և մերումս սիրայի ըստ հաւատոյ՝ է սուրբն Գրիգոր, որ ընձիւղեցաւ ի բուն սկզբէն և ի ճշմարիտ արմատոյն Քրիստոսէ, միջնորդութեամբ և յօդաւորութեամբ սրբոյն Թադէոսի առաքելոյն՝ հարազատի և մերձաւորի նորին: Իսկ և սորին առաջնորդարանն, հայրապետարանն, պատրիարգարանն, Աթոռ և գահն իշխանութեան է Սուրբ Էջմիածին, որ խնդրուածովք և միջնորդութեամբ նոյնոյ սրբոյն Գրիգորի իջմամբն Քրիստոսի Աստուծոյն մերոյ յօրինեցաւ լուսաձև և սքանչելակերտեցաւ աստուածային փառօք յերկիրս Հայոց ի դաշտս Արարատեան և ի Վաղարշապատ քաղաքոջս:

Ապա ուրեմն ձգի և տարածի հոգևոր իշխանութիւն Սրբոյ Աթոռոյս ի յամենայն տեղիս և ընդ ամենայն ծագս երկրի՝ ո՞ւր կան և գտանին Հայկածին և Լուսաւորչակրօն ժողովուրդք և հոգևոր ժողովարան: Քանզի ուր և գտանին յազգէս հայոց թէ եկեղեցիք և թէ եկեղեցականք, կարգաւորք և աշխարհականք ի յինչ կոչման և իցեն բովանդակքն պարաւանդեցեալք և փակեցեալք են ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և ի սմա նստող հայրապետացն, որք են յաջորդք և փոխանորդք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց: Եւ ի սմա նստող հայրապետին է յատուկ իշխանութիւն զբոլոր եկեղեցիս հայոց հաստատել, բարեկարգել և ի կանօնի պահել, զաւելորդսն բառնալ և զթերին լցուցանել, զեպիսկոպոս ձեռնադրել, զառաջնորդս կարգել, զհետեւեալսն ուղղել, զանարժանսն և զանուղղելիսն հանել ի յեկեղեցւոյն և լուծանել ի կարգէն, անարգել և բացարձակ իշխանութեամբն հրամայել զհոգևորսն և զօգտակարսն, փակել և բանալ, կապել և արձակել: Եւ ըստ ժամանակին զնուիրակունս առաքել առ յամենեսեան, իբր փոխանորդ ինքեան ի քննել և վերահասու լինիլ զորպիսաբար կացութեանց եկեղեցեաց և եկեղեցականաց, զեօղն աստուածագործ բաշխել և յօծումն օծելոց և ի սրբազնագործել զսրբագործելիսն: Եւ միանգամայն որք վերաբերին ի յեկեղեցիս և ի հաւատս ի Սրբոյ Աթոռոյս և ի սմա նստող հայրապետացն վերառաքին, տրին և կարգին ի յազգս հայոց, որպէս ի միոյ մշտաբուղխ աղբերէ: Վասն որոյ և ազգս հայոց փոխաբերաբար ի ցուցանել զհնազանդութիւն շնորհակալութեամբ հանդերձ յիշեն զանուն հայրապետին յամենայնում յաւուր յեկեղեցիս իւրեանց և տան յօժարութեամբ զհասս նուիրականս, զզանձանակս, զհոգեբաժինս, զյիշատակիս և զայլս արդիւնս ի ձեռս նուիրակացն սորին ըստ պայմանեալ ժամանակին:

Եւ նուիրակն սորին, որքան ի յեկեղեցիս իւրեանց կացցէ հնազանդութեամբ և անտրտունջ ընդունին՝ հոգալով զպիտոյսն կերակրոց և ըմպելեաց, յիշեն և զանունն ի յեկեղեցին նախքան զանուն առաջնորդին իւրեանց, նախագահ ունիլով քան զնա տեղեաւ և պատուով: Արդ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ մինչև ի սուրբն (165ք) Գրիգոր Տղայ կոչեցեալն հայրապետ (որ էր եղբայր սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն)՝ յամս ՊԺԳ. (813), մինչև ի ՇԿԶ. (1117) թուականն մեր: Այսորքիք կանօնիք վարեցաւ և տևեաց ամբողջապէս և անարատաբար Սուրբ Աթոռս: Քանզի յայսքան միջոցս ազգ մեր զօյր, անտարագիր, անցան և ցիր և համաժողով յերկիրս Հայոց և հայկական իշխանութեամբ վարիւր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ (թէպէտ երբեմն պայծառ և երբեմն նուազ) և կաթուղիկոսն ի յերկիրս իւր նստիւր և զազգն ընդ ձեռամբ ունէր: Եւ թէպէտ երբեմն արտաքոյ Սրբոյ Աթոռոյս յայլուր նստէին կաթուղիկոսքն ի Դվին, յԱնի և յայլուր, սակայն յանուն Սրբոյ Աթոռոյս կոչիւր և սովաւ փայլիւր և իշխէր, գահակալ և փոխանորդ սրբոյն Գրիգորի անուանիւր, որպէս զմիապետական գլուխ բոլորի

ազգիս հայոց: Յորում էր ճշմարիտ մի հօտ և մի հովիւ: Ո՜հ, աւա՛ղ մեզ, որք յայնպիսոյ երջանիկ ժամանակէն զրկեցաք: Եւ յայն ժամանակսն թէպէտ գոյր և Աղուանից կաթուղիկոսութիւնն ի բնէ անտի ի Լուսաւորչէն հետէ, սակայն չէր ինքնագլուխ և անհնազանդ Սրբոյ Էջմիածնի և սորին կաթուղիկոսացն: Քանզի գիտութեամբ և հրամանաւ սորին ընտրիւր և նստիւր և ի սմանէ օծանիւր և էր հնազանդ յամենայնի, որոյ և զանունն յեկեղեցիս նախ քան զանուն իւր յիշէր, որպէս և է մինչև ցարդ, յորոց թէև ոմանք երբեմն ընդվզեալ ներհակէին և կամ հեստէին ի յուղիղ պողոտայէն ի յէջմիածնի նստօղ կաթուղիկոսէն դատեցեալ բանիւ լինէին և յԱթոռոյն ևս ընկեցեալ լինէին, որպէս և պատմեն պատմիչքն Աղուանից և Սիւնեաց[209]: Սոյնպէս է և մինչև ցայս վայր ի ժամանակս մեր, որ գրեթէ անուամբ և օծմամբ միայն էին կաթուղիկոս և ոչ բացարձակ և ինքնագլուխ իշխանութեամբ:

Ապա ի ՇԿՁ. (1117) թուոջն մեռում ի զօրանալ տանկական իշխանութեանն և ի տկարանալ զօրացն հայոց, մինչ փոխեաց զԱթոռ հայրապետութեանն ի Հռոմկլայն վերոյ գրեցեալ Գրիգոր կաթուղիկոսն և անշքացոյց զԱթոռս Էջմիածին, Դաւիթ վարդապետ ոմն (որ ի նոյն ժամանակն առաջնորդ էր կղզոյն Ախթամարու) ապստամբեցաւ ի Գրիգոր կաթուղիկոսէն և նստաւ ինքնագլուխ կաթուղիկոս ի նոյն կղզոջն, որ և տևեաց նոյն ապստամբութեան ընձիւղն մինչև ցայսօր: Յորմէ հետէ եղեն երկուք կաթուղիկոսութիւնք հայոց ի Հռոմկլայն և ի յԱղթամար, յորս ոչ սէր գոյր և ոչ նախազահութիւն: Եւ ոչ միայն կաթուղիկոսութիւնն բաժանեցաւ, այլև գրեթէ բոլոր ազգս հայոց յերկուս բաժանեցան յայնմ հետէ, զի ըստ վճռոց իմաստասիրաց, որպէս բունն է ժամանակն, որ հարկիւ հետևեցուցանէ ինքեան զընդ ինքեամբ եղեալսն, նոյնպէս և յաղթօղ է տեղին, որ հարկիւ փոփոխէ զառ ինքն յեցեալսն: Քանզի ի փոխիլ կաթուղիկոսութեանն ի յերկրէս Հայոց ի Հռոմկլայն, ընդ նմին և ազգս մեր դիմեցին օր ըստ օրէ յայնկոյս, կարգաւորք և աշխարհականք, մինչև ժամանակ ինչ թագաւորութեամբ ևս փայլեցան: Բայց որովհետև երկիրն Յունաստան էր և յունաբնակ և մերքն ևս ընդ նոսա յարեցեալք սկսան և նոցայն սովորութեամբ վարել՝ բարուք, լեզուօք, հանդերձիւք, ուտելեօք և ըմպելեօք և այլովք, որ ըստ աշխարհի և այս այնքան, մինչ գրէթէ հայ անուամբ և լուսաւորչադաւան կրօնիւք (և այս ևս ոչ բոլորովին) միայն էին ի մէնջ, իսկ այլովք ամենիւք զատեալք և որոշեալք ի մնացորդաց յերկրոջս Հայոց: Վասն որոյ անկաւ յայնմ հետէ այլայլութիւն և մեծ խտրութիւն ի մէջ յունաստանաբնակաց և հայաստանաբնակացս թէ՛ վանականաց և թէ՛ աշխարհականաց, որ տևէ իսկ հաստատնապէս մինչև ցայսօր:

Արդ տևեաց կաթուղիկոսութիւնն ի տունն Կիլիկեցւոց[I] յամս ՅԻԴ. (324), որքան և տևեաց մասնաւոր իշխանութիւնն Ռուբենեանց ի նոյն յետ այնորիկ մինչ հաստարակեաց բռնութիւնն տաճկական և գրաւեաց զբոլոր երկիրս Յունաց, Հայոց և Պարսից և իսպառ վերջացաւ իշխանութիւնն հայոց և յունաց և աւերեցաւ կաթուղիկոսութիւնն Սսոյ և գերեցաւ կաթուղիկոսն իւրայնովքն ի յեգիպտոս, որպէս ասացաւ ի վերն, ապա ողորմութեամբն Աստուծոյ վերանորոգեցաւ բնիկ Աթոռս հայոց Սուրբ էջմիածին և վերադարձաւ կաթուղիկոսութիւնն ի սա ի ՊՂ. (1441) թուոջն մերում՝ հաւանութեամբ բոլոր երկրիս Հայոց: Բայց որք ի Յունաստան մնացին և ի տունն Սսայ, որովհետև յարեալք էին ընդ Յոյնս և ուսեալք զգործս նոցա, ոչ վերադարձան ի Հայս և ոչ հնազանդեցան կաթուղիկոսին էջմիածնի, այլ ի նոյն յամառեալք նստուցին և նոքա իւրքնագլուխ զկաթուղիկոս իւրեանց, որով եղև երեք կաթուղիկոսութիւնք հայոց, բաց ի յԱղուանից կաթուղիկոսութենէն, որք և չորեքեանքն ևս սկսան նստիլ հրամանաւ և գրով տաճկական տէրանց, որպէս և է (166ա) մինչև ցայսօր:

Արդ, եթէ ճշմարտութեան աշակերտք էին և իրաւանց հետևօղք վարդապետքն Սսայ և Ախթամարու ի վերանորոգիլ Աթոռոյս հայոց էջմիածնի, պարտէին բառնալ զանհիմն, զհետնաբոյս և զպատահանիստ կաթուղիկոսութիւնն իւրեանց և հետևիլ և հնազանդիլ արմատոյ, հիմնահաստատ և բնիկ Աթոռոյս իւրեանց և սմա նստող կաթուղիկոսին, որպէս հետևեցան էջմիածնայինքս նոցա և լռեցին յայնքան ժամանակս: Եւ թէպէտ կաթուղիկոսութիւնն հայոց այսպէս ի բազումս բաժանեցաւ, որպէս ասացաք, սակայն էջմիածնանիստ կաթուղիկոսն յառաջ և յետոյ և մինչև ցարդ շնորհօքն Աստուծոյ է նախապատիւ, գերագահ, հռչակաւոր և անուանի, քան զայլսն ի յամենայն ազգս և է սիրելի և ահարկու և վերայ ամենեցուն, որ եթէ հարկն պահանջիցէ և զիրաւունս ունիցի, կարէ և բանիւ առնել զմիւս կաթուղիկոսունսն և լուծանել ի կարգէն, նմանապէս և զեպիսկոպոսունսն և զայլս կարգաւորսն նոցին: Բայց նոքա ոչ բնաւ և ոչ կարեն իսկ ձեռն ածել ի կաթուղիկոսն էջմիածնի և ոչ ի կարգաւորս և յաշխարհականս նորին վիճակի: Այս ոչ եթէ ըստ բնիկ սեպուհ և իսկականի նախագահական և հոգևորական իշխանութեանն միայն, այլև ըստ վճռոց այլազնեայց և մերազնեայց հաստարակութեանց և ըստ հրամանատրութեանց մարմնաւոր թագաւորաց և այլոց իշխողաց, որոց վճիռք և հրամանագիրք ահա գոն ի Սուրբ Աթոռս արդէն, զորոց յետոյ ի տեղւոջն տեսցուք: Վասն զանազանից կաթուղիկոսացն հայոց այսքան:

(166բ) Իսկ և վասն պատրիարգացն և առաջնորդացն ազգիս հայոց այսպէս գիտեա՛, զի ի բաժանիլ կաթուղիկոսացն իւրեանց մասնաւոր վիճակօքն մնաց մեծ մասն վիճակ Սրբոյ էջմիածնի, զորս ցուցեալ եմք ի վերն ի գլուխս նուիրական և

[I] Բ. Կուլիկեցւոց

առաջնորդական տեղեացն: Արդ ի մէջ այնց վիճակացն որքան վանօրայք, եկեղեցիք և նոցին առաջնորդք զոն իւրեանց վիճակօքն և ժողովրդովքն, կարգաւորօք և աշխարհականօք էին և են հնազանդք Սրբոյ Աթոռոյս էջմիածնի, որոց և ամենից առաջնորդքն ի յէջմիածնանիստ կաթուղիկոսացն լինէին կարգեցեալք և լուծեցեալք, որպէս ի վերն ասացաւ:

Եւ ի մէջ սոցին նախապատիւ և գերյարգելի զկնի կաթուղիկոսին էին և են, որպէս պատրիարգ չորից սրբոց և հռչակաւոր վանից առաջնորդքն, այսինքն՝ սրբոյն Թադէոսի առաքելոյ վանիցն, որ ի յԱրտազ գաւառի, սրբոյն Ստաթէի վանիցն, որ ի Սիւնիս, սրբոյն Աստուածածնի վանիցն, որ ի Բջնի և Սրբոյն Նշանի վանիցն, որ ի Հաղբաթ, որք են իբր աթոռակալք և տեղապահք կաթուղիկոսին, որոյ և ի յընտրութեանն պարտին ներկայ գտանել և յօժմանն նախապէս զձեռն դնել ի գագաթ կաթուղիկոսին: Իսկ Երուսաղէմայն ոչ է պատրիարգ և ոչ առաջնորդ, զի ոչ ունի ինքեան յատուկ Աթոռ, եկեղեցի և վիճակեցեալ ժողովուրդ և ոչ ինքն իսկ Երուսաղէմ է երկիր և տեղիք Հայոց, զի նախապէս էր երկիր և քաղաք Յունաց և երբեմն իսկ՝ պատրիարգարան նոցա ի ժամանակս Քրիստոնէից թագաւորաց, իսկ յետոյ ի տիրիլն յօսմանցւոց յազգէն բարձաւ պատրիարգութիւնն Յունաց և իշխանութիւնն ամենայն Քրիստոնէից անտի: Այնուհետև եղև հասարակ տեղի իմն ուխտից բոլոր Քրիստոնէից, յորում և ստացան իւրաքանչիւրքն զյատուկ տեղի իմն ինքեանց, զորս և արարին վանք և եկեղեցի, որոց և կացուցին իւրաքանչիւր ազգ զսպասաւոր և հոգաբարձու իմն, զի նստելով անդ զտեղիս իւրեանց պաշտպանեսցէ և ուխտաւորացն իւրեանց ասպնջական լինիցի, նոյնպէս է և մերն, որ է միայն սպասաւոր և հոգաբարձու սրբոց տեղեացն, որք հայոց ազգիս են բաժին, որոյ աղագաւ և առաքէ զհրաւիրակս ի յազգս հայոց, ուր և իցեն ի հրաւիրել յուխտ և յերկրպագութիւն սրբոց տեղեացն տնօրինականաց և խնդրէ զկամաւոր ողորմութիւնս ի պէտս իւրոցն և ի պայծառութիւն սրբոց տեղեացն: Թէպէտ ի յետին ժամանակս ոմանք փառասէրք և ախտամոլք սնազլուխք յանգլխութենէ ազգիս զժամ գտանելով զինքեանս պատրիարգս անուանեցին և զհրաւիրակս իւրեանց նուիրակունս, զորս և զռեհիկ հասարակութիւնն ազգիս մերոյ անընտրողաբար սովորութիւն արարեալ կոչեցին և կոչեն:

Այսպէս է և ի Կոստանդնուպօլիս, որ ոչ է երկիր և քաղաք հայոց, այլ Յունաց, յորում նստիւր Յունաց պատրիարգն, որպէս և արդէն իսկ նստի: Իսկ ի յետին ժամանակս ի ցան և ցիր լինիլն ազգիս և ոմանց ևս անդր գնալով ի վաճառականութիւն և ի բազմանալն օրստօրէ և ի տնաւորիլն իսկ, սկսան և զեկեղեցիս ստանալ յատուկ հայոց, վասն որոյ և հարկ եղև զի և առաջնորդ մի ևս ունիցին, զոր և ունեցան իսկ հրամանաւ կաթուղիկոսին: Յետ այնորիկ ի զօրանալ թագաւորութեանն Օսմանցւոց և ի յանախիլ իշխանաց և ժողովրդոց մերոց անդ սկսան ընդվզիլ և ամբարտաւանիլ

յանդր նստող առաջնորդքն և թողուլ զհոգևորն կանօն և առ յոտն հարկանել զպատիւն հայրապետին հրամանագրով այլազգի թագաւորին նստիլ ինքնագլուխ՝ կանօնելով և զհարկս տալ յարքունիս յամէ յամ, յորոց և փաթրիք անուանել: Ուստի և ի հասարակութենէ գռեհկաց սովորութիւն եղև պատրիարգ կոչիլ: Արդ թէպէտ ի Պօլիս նստողն այսպէս ամբարտաւանեցաւ, սակայն այլոց քաղաքաց և վիճակաց ժողովրդոցն մերոց, որք էին ի կողմանս յայնոսիկ, առաջնորդքն ըստ օրինի ի Սրբոյ Էջմիածնէ և ի սմա նստող կաթուղիկոսէն կարգէին, սակայն ի Պօլիս նստող փաթրիք կոչեցեալքն գնալով ի յամպարտաւանութենէ յամպարտաւանութիւն, մինչ զի և զԱբիսողոմայն արկին ի գործ ի յանկողինս հօր իւրեանց ելանելով և զիշխանութիւնն նորին ի յինքեանս գրաւելով, զոր և արարին իսկ: Քանզի որովհետև ինքեանք հեստեցան ի ճանապարհէն ճշմարտութեան, թողլով զհայրապետականն պատիւ, հրամանաւ Օսմանցւոց տէրութեանն նստան ի Պօլիս առաջնորդ, սկսան ապա և յայլ առաջնորդական վիճակս (որք էին ընդ տերութեամբն Օսմանցւոց) ձեռնամխիլ և հանել յիշխանութենէ կաթուղիկոսին: Քանզի կարգեցին ի դրունս յարքունի յամ յամէ զհարկս վասն առաջնորդական վիճակացն, զոր մուխաթայ անուանեն, զորս և արկեալ ի ներքոյ հրամանագրի տաճկաց, սկսան ինքեանք կացուցանել զառաջնորդս նոցա թագաւորական (167ա) նոմոսիւ[210], որք և գրեթէ զբոլոր առաջնորդական վիճակսն (որք ընդ տէրութեամբն Օսմանցւոց) հանեալ յիշխանութենէ կաթուղիկոսին արկին ի ներքոյ հրամանագրի օսմանցւոց բաց ի յոմանց տեղեաց, զորս յետոյ յատկացուցից: Վասն այսորիկ և յաճախեցան ի կողմունսն յայնոսիկ թերահաւատութիւնք, ախթարմայութիւնք և պէսպէս ապօրինաւորութիւնք և յաճախին ևս օր ըստ օրէ, զի առաջնորդք նոցին տաճկական հրամանաւ նստին և ջանան միայն զհարկս արքունեացն տալ և զանձինս իւրեանց ճարակել: Իսկ կաթուղիկոսն գոլով ընդ տէրութեամբն պարսից ոչ այնքան կարէ իշխել ի վերայ նոցա ի հալածել, ի տուգանել և այլովք մարմնաւորօք պատժել, միայն բանադրել կարէ, այն ևս ոչ ինչ օգտէ, զի վտանգաւոր է իշխանութիւնն օսմանցւոց, յորմէ վնասք յառաջանան, քան թէ օգտութիւնք և մանաւանդ ցեցն ի միջոյնէ և ոչ յարտաքուստ:

Ո՛հ, ընտրեցի կարճառօտել զայսպիսեաց քան երկարել: Արդ ոչ թողից անմեղադրելի և զայնս, որք մնացին ի կողմունս մեր ընդ տէրութեամբն Պարսից: Քանզի ի բառնիլ իշխանութեանն Հայկական ըստ մարմնաւորի տէրութեանն, զօրացաւ տէրութիւնն պարսկական իշխանութեանն, որոյ գրովն և հրամանաւն նստիւր կաթուղիկոսն և անարգելօրէն վարէր զիշխանութիւնն իւր ի յազգս հայոց, եթէ հոգևոր պատժօք ոչ գային յուղղութիւն հեստեցեալք ոմանք, մարմնաւոր պատժօք նուաճէր, որում և տրիւր բացարձակ իշխանութիւն յարքայիցն Պարսից, որոց հրամանագիրք, զորս տուեալ են

կաթուղիկոսացն, անա գոն ի Սուրբ Աթոռոջս: Իսկ ի բառնիլ և սոցին տէրութեանն իսպառ, որ յԱսպահան նստիւր և շահ անուանիւր ի ՌՃՂԷ. (1748) թուոջն մեռում, տե՛ս այսուհետև և զթշուառութիւնն ընդ տէրութեամբ սոցա եղելոցն:

Քանզի բարձաւ միապետական թագաւորութիւնն սոցա և իւրաքանչիւր քաղաքի խանք եղեն ինքնագլուխք և աներկիւղք յումեքէ, որք ևս սկսան ի վերայ միմեանց յառնել և զերկիրս իրերաց քակել և աւերել, որք և գրեթէ ամայացուցին զբոլոր երկիրս Պարսից և Հայոց, մինչ զի ի միոյ երկրէ և ի նահանգէ, որում իշխէր խան մի, յայլ երկիր և յայլ նահանգ, որում այլ խան իշխէ, ոչ կարէ ոք գնալ և կամ կարի դժուարաւ: Ուստի իւրաքանչիւր խանից իշխանութեամբ եղեալքն ի խանս իւրեանց յեցեալք թէ տանիկք և թէ հայք ի միմեանց օտարացեալք և թշնամիք, իսկ եղեն իրերաց ըստ ախորժակաց խանին իւրեանց: Այսպէս և այլք գլխաւոր աղայք տանկաց սկսան զոմանս ի հայոց ընդ ձեռամբ ածել և ի գեղջ իւրեանց բնակեցուցանելով իւրեանց ծառայեցուցանել և յանկարգանալն ոմանց հայոց ի վրէժխնդիր լինիլն կաթուղիկոսին, տանիկք տեարք նոցա տէր կանգնել և ոչ թողուլ:

Արդ լաց զգլուխ կաթուղիկոսին, որ յայսպիսում ժամանակի պատահի, որպէս և եսս, որ գրեմս ամբոխեցեալ մտօք և թշուառական կենօք: Արդ վերջացուցանելով զայսպիսեաց, եկեսցուք և ի մեր յառաջին դիտումն, որ էր վասն առաջնորդաց, որք թէպէտ այսպէս և քան զայս առաւել ողորմելի եղև ազգս մեր, սակայն որք յերկիրս Պարսից և յայլ իշխանութիւնս (բաց օսմանցւոց երկրէն) առաջնորդութիւնք գոն ի յէջմիածնանիստ կաթուղիկոսէն կարգին, ըստ նախնոյ սովորութեանն, մինչև ցայսօր:

## (167բ) **ԳԼՈՒԽ Թ.**

### ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՎԱԽՃԱՆՄԱՆՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԵՐՍՏԻՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆՆ: ԵՒ ՅԵՏ ՕԾԵՑՄԱՆՆ ԹՂԹԱԳՐՈՒԹԻՒՆՔՆ ՆՈՐԻՆ ԵՒ ԹԷ Ո՞ՒՐ ԴՆԷ ՋԿՆԻՔՆ Ի ԹՂԹՈՋՆ ԵՒ ԱՅԼՔ Ո՞ՒՐ ԴՆԵՆ ՋԿՆԻՔՍՆ Ի ԳՐԵԼՆ ԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԵՒ ԹԷ ՋՈ՞ՐՍ ՅԱՐԳԷ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԵՒ ՈՐՊԷՍ: ԵՒ ԱՅԼՔ ԱՅՍՊԻՍԻՔ ՈՐՊԻՍԱԾԱՆՈՅՑՔ ՀԱՆԳԱՄԱՅՆՔ

Ի ժամանիլ անարգելելի և անստելի հրամանին Աստուծոյ առ կաթուղիկոսն ի կոչել զնա առ յինքն պարտին ժողովիլ ամենայն միաբանքն ի վերայ նորա և ըստ օրինին հանել ի տեղոջէն ի դուրս ի զսպել և ապա գլխաւոր միաբանք և գործակալքն Սրբոյ Աթոռոյս Բ. (2) կամ Գ. (3) անձինք զամենայն դրունսն Վեհարանին կնքել ներկայութեամբ և գիտութեամբ գլխաւոր սպասաւորի հանգուցելոյ վեհին և ապա թաղել զնա մեծաւ հանդիսիւ, որպէս օրէնն է և զսպասաւորսն նորին հանել ի Վեհարանէն և ի կարգս միաբանիցն բնակեցուցանել և զդրունսն Վեհարանին կնքեալ պահել զգուշութեամբ, մինչև և ի վերանստիլ նորոյ հայրապետին և թէ զդրամ և կամ զքսուր ինչ հարկաւորիցին ի հանել ի Վեհարանէն վերոյ Բ. (2), Գ. (3) անձինքն ընդ գլխաւորի սպասաւորի Վեհապետին ի միասին բացեալ զդրունսն հանցեն և վերստին կնքիցեն: Եւ այլ ոչ ինչ ունին հրաման քննութեան և հարցափորձութեան Վեհարանին և կամ զսպասաւորսն հանգուցելոյն խոշտանգելոյ, բանբասելոյ և կամ վատաբանելոյ: Քանզի այսպիսիք գործք վերանստող հայրապետին է և ոչ այլում: Եւ մանաւանդ այնպիսիք վայրապար յաջ և յահեակ խօսօղքն ոչ են օգտարարք և բարեկամք Աթոռոյն, այլ վնասատուք և առականաբացօղք նորին, որպէս յայտնի է խոհեմագունից անձանց:

Եւ յետ այսպէս կարգաւորաբար թաղելոյն զհանգուցեալն, ապա գրեսցեն գործակալքն Աթոռոյն ի մօտաւոր քաղաքս և ի վանօրայս առաջնորդաց երևելեաց և գլխաւորաց իշխանաց և հրաւիրեսցեն ի յԱթոռն և ժողովեսցին առաջի սրբոյ Իջման տեղւոյն ի յատեան եկեղեցւոյն թողեալ ի բաց զնախանձն, զակնառութիւնն, զանձնական օգուտն, զյատկական սիրելութիւնն և զայլս միտս ախտաւորական, նախապէս խոկայցեն զարժանաւորութիւնն և զկարօղութիւն անձին և մանաւանդ ըստ ժամանակին, երկրորդապէս զօգուտն Սրբոյ Աթոռոյն և երրորդապէս զհասարակաց հաւանութիւնն և զանգայթակղելի գոլն, որք են նշանք և պարագայք կատարելութեան

ընտրեցելոյն և ի գտանելն միաբանութեամբ զայսպիսի արժանաւոր ոք թէ յԱթոռոջս և թէ յարտաքոյ Աթոռոյն, ապա աստացեն զպահպանեայն և ապա գրեալ զբազմակնիք թուղթ համահաւանութեամբ առաքեսցեն հաւատարիմ արամբք ի Կոստանդնուպօլիս և ի յԱսպահան քաղաքսն և յայլս քաղաքս, ուր ձեռն հասիցեն ի յորդորել զնոսա ի համահաւանութիւն ընտրեցելոյն իւրեանց, որոց և ի համահաւանիլն կնքեսցեն զհաւանութեան բազմակնիքսն և ընկալցին իբրև զհայրապետ իւրեանց:

Ապա և ընտրեցեալն, եթէ յԱթոռոջս իցէ օծի և թէ յարտաքոյ իցէ գայ ի յԱթոռս և օծանի հայրապետ: Եւ յետ օծմանն և ինքն զգրեանս գրէ ի յամենայն քաղաքս և ի վիճակս օրհնութեան և շնորհակալութեան, զի զինքն արժանացուցին այնմ պատուոյ ընդ նմին և զպատուէրս ևս, եթէ ունիցի: Այսքան առ ընտրութիւն հայրապետին: (168ա) Իսկ և վասն կնքադրութեան և յարգման կաթուղիկոսին առ յայլս և յայլոց առ կաթուղիկոսն, այս է կանօնն:

Հաստարակապէս առ ամենայն տաճիկ ազգս, թէ՛ առ թագաւորս օսմանցոց և թէ՛ առ շահն պարսից նոյնպէս և առ փաշայս և առ խանս և առ յայլ մեծամեծս և գործակալս նոցին, որոց և հարկաւորիցի գիր գրել կաթուղիկոսն, ըստ նոցին օրինի տաճկական բառիւ պարտի գրել և զկնիքն փոքրիկ յետկոյս թղթոյն, ուր վերջացեալ է բանն, անդ դնել միշտ կարմրադեղով, ըստ կարգին: Բայց առ թագաւորսն և առ մեծ[I] և գլխաւոր իշխօղսն արզայապէս պարտի գրել, իսկ առ յայլսն, որպէս առ սիրելիս և առ բարեկամս: Եւ ի գրելն թագաւորաց առ կաթուղիկոսն, հրամայապէս գրեն և զկնիք և զնշանն իւրեանց ի ճակատ թղթոյն դնեն միշտ: Իսկ բաց ի թագաւորաց և ի թագաւորապիստաց, ոյք և իցեն տաճիք թէ՛ փաշայք և թէ՛ խանք և այլք, որպէս առ բարեկամս գրեն և զկնիքս իւրեանց յետ կոյս թղթոյն, ուր վերջացեալ է բանն, անդ դնեն: Իսկ յետին ժամանակս, մինչ բարձաւ թագաւորութիւնն Պարսից, միայն խանն մեր Երևանու սկսաւ հրամայապէս գրել և զկնիքն թէպէտ ի վերջ բանին, սակայն յերես թղթոյն դնել և կաթուղիկոսն առ նա արզայապէս գրել:

Բայց և ի մերում ժամանակի ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում նմանապէս եբարձ և խանն մեր Հիւսէին Ալի զհրամայապէս գրելն իւր ի մէնջ և զկնիքն իւր ևս յետ կոյս թղթոյն դնել հաստատեաց: Բայց մեք արզայապէս գրէաք առ նա: Իսկ և որքան առ յարգումն սոցին զմիմեանս այսպէս գիտեա՛:

Թագաւորք և թագաւորապէտք թէ՛ օսմանցւոց և թէ՛ պարսից, որք ընդ բոլոր երկրին, նաև զերկիրս Արարատեան ընդ իշխանութեամբ ունիցին ի խնդրելն զկաթուղիկոսն ի հարկէ պարտի գնալ և հնազանդիլ և ուր հրամայիցեն անդ նստիլ: Նոյնպէս և ի գալն նոցա (եթէ պատահիցի) յերկիրն իւր ընդյառաջ ելանել և ծառայել: Իսկ բաց ի

---

I Բ. մեծն

յայսպիսեաց թագաւորապէս իշխօղաց և բաց ի յատուկ Երևանու իշխօղէն, այլք փաշայք և խանք առանց հրամանի թագաւորին ոչ կարեն խնդրել զկաթուղիկոսն առ յինքեանս և ոչ գնայ իսկ: Իսկ եթէ պատահիցի, զի կաթուղիկոսն առ նոսա գնայցէ, յոտին կանգնեալ պատուեն զկաթուղիկոսն և յանդիման իւրեանց հաւասարաքարձ նստուցանեն և թէ նոցա պատահիցի գալ յԱթոռս, կաթուղիկոսն ընդյառաջ ելանէ ի վանիցն յարտաքս և մեծաւ պատուով բերեալ նստուցանէ ի պատուաւոր տեղւոջ յանդիման իւրեան: Այսու կանօնիւս վարի և առ Երևանու խանն, սակայն յորժամ և խնդրիցէ զկաթուղիկոսն առ յինքն պարտի գնալ, բայց ի գնալն առ նա նմանապէս և յանդիման խանին նստի ի վեր, քան զայլսն ոյք և իցեն: Եւ ի խօսիլն ևս ընդ խանին ոչ ի գործ ածէ զխոնարհական գեղջուկ բառն զայն (թէ մատաղդ լինիմ, որպէս սովորութիւն է հասարակին և կամ ծառայ եմ քեզ) այլ, թէ խանն ողջ լինի: Իսկ բաց ի յայսպիսեաց փաշայից և խանից գլխաւորաց, այլք տաճիկք ոյք և իցեն ի գալն առ կաթուղիկոսն, եթէ մեծ և երևելի իշխան իցեն, կաթուղիկոսն միայն ի տեղւոյն իւրմէ կանգնի առանց ընդյառաջ ընթացման և հրաւիրէ ի վերայ յատուկ սփռոցի նստիլ ի վայր, քան զինքն և որպէս ընդ հաւասարի վարիլ և խօսիլ ընդ նոսա: Բայց նոքա ծառայապէս վարին և խօսին ընդ կաթուղիկոսին նոյնպէս և թէ կաթուղիկոսին պատահիցի գնալ առ նոսա ընդ յառաջ ելեալ յոտին կանգնին և ի վեր, քան զինքեանս նստուցանեն: Իսկ այլք հասարակ տաճիկք ոյք և իցեն (առ յորս ոչ երթայ կաթուղիկոսսն) ի գալն նոցա առ կաթուղիկոսն (թէ և հրամանաւ խանին իցեն եկեալ) ոչ ինչ շարժի կաթուղիկոսն ի տեղւոջէն, այլ հրաւիրէ հրամայաբար ի նստել ի վայր յետին տեղւոջ և նոքա խօսին և վարին ընդ նմա ծառայաբար որոց, եթէ հարկն պահանջիցէ, կարէ կաթուղիկոսն սաստել և անարգել և մինչև գանել ևս, թէպէտ ոչ այնքան, որքան զօրէին ի ժամանակս թագաւորացն նոցա: Արդ զոր գրեցաք, ըստ մերում ժամանակի[I] բերմանցն գրեցաք, բայց ըստ ժամանակին, որովհետև և ժամանակաւորքն փոփոխին զայն ի խոհեմութիւնս ապագայիցդ թողաք: Առ տաճիկ ազգս այսքան բաւեսցի:

(168բ) Իսկ և առ յազգս քրիստոնէից այսպէս գիտեա՛, զի եթէ պատահիցի, զի Ֆռանգաց և Մոսկովի թագաւորացն գիր գրել առ կաթուղիկոսն էջմիածնի գրեն զանուն կաթուղիկոսին ի ճակատ թղթոյն յարգանօք և պատուադրութեամբ և ենթ զանուն իւրեանց և ապա զկնի ծանուցումն և զկնիքն իւրեանց ի վերջ բանին դնեն: Նմանապէս և կաթուղիկոսն ի գրելն առ նոսա զանուն նոցին ի վեր անդր դնէ՝ պատուելով ըստ արժանւոյն և ապա ըստ կարգին Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն: Եւ զփոքրիկ կնիքն դնէ ի վերջ բանին:

---

[I] Բ. > մերում ժամանակի

Իսկ և Հռոմայու պապն և Յունաց մեծ պատրիարգն և այլք այսպիսիք ի գրելն զգիր առ կաթուղիկոսն էջմիածնի զանուն կաթուղիկոսին ի վեր անդր ի ճակատ թղթոյն դնեն եղբայրականաւ պատուադրութեամբ և զկնիքն իւրեանց յետ կոյս թղթոյն ի վերջ բանին: Նոյնպէս և կաթուղիկոսն ի գրելն առ նոսա զայս կանոն պահեսցէ՝ մեծապատիւ եղբայր գրելով: Իսկ Վրաց և Ասորոց կաթուղիկոսքն ի գրելն զանուն կաթուղիկոսին էջմիածնի նոյնպէս ի ճակատ թղթոյն դնեն մեծաւ յարգանօք եղբայրականաւ պատուադրութեամբ և զկնիքս իւրեանց ի յետ կոյս թղթոյն ի վերջ բանին դնելով: Բայց կաթուղիկոսն ի գրելն առ նոսա, զերես թղթոյն ի յերկուս յէջս բաժանեսցէ և յառաջին յէջն զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն և ի յերկրորդ յէջն հանդէպ իւրոյ անուան զանուն նոցին գրեսցէ տեառնդ (այս ինչ կաթուղիկոսիդ) եղբայրականաւ յարգանօք, բայց զկնիք իւր ի մէջ Յիսուսին դնիցէ, իսկ ի գրելն առ արքայն Վրաց, զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն և զանուն արքային ի վերն դնիցէ ի ճակատին և զկնիքն իւր ի մէջ Յիսուսին: Բայց նա ի գրելն առ կաթուղիկոս զանուն կաթուղիկոսին յարգական բանիւք ի վեր անդր ի ճակատն գրէ և ի ստորոտ նորին զիւր անունն գրէ և զկնիքն յետ կոյս թղթոյն ի վերջ բանին դնէ: Զսոյն կանոն պահեա և վասն այլոց այսպիսեաց արքայապիսեաց:

(169ա) Իսկ առ յազգս հայոց միայն Գանձասարու, Ախթամարու և Սսայ կաթուղիկոսացն և Երուսաղէմայ պատրիարգին կաթուղիկոսն էջմիածնի ի գրելն զգիր զանուն իւր, ըստ կարգին դնէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն և զանունս նոցա ի ներքոյ, ըստ կարգին, եղբայրականաւ յարգանօք: Միայն զառաջին գիր անուանց նոցա կարմրադեղով գրէ և զկնիքն իւր ի մէջ Յիսուսին դնէ: Բայց և Կոստանդնու պատրիարգն, եթէ ծերագոյն անուանի և արժանապատիւ իցէ առ նա ևս զսոյն կանոն պահեսցէ և, թէ ոչ՝ զկնիք իւր ի ճակատ թղթոյն դնիցէ: Բայց նոքա ի գրելն առ կաթուղիկոսն էջմիածնի զանուն նորին ի վեր անդր ի ճակատ թղթոյն գրեն մեծաւ եղբայրականաւ յարգանօք և զկնիք իւրեանց յետ կոյս ի ծայր թղթոյն դնեն: Եւ բաց յայս ցանեաց, այլ ամենեքեան ի յազգս հայոց թէ՛ եպիսկոպոսք իցեն և թէ՛ այլք կարգաւորք, թէ՛ մեծամեծ իշխանք և մելիք և թէ՛ հասարակ աշխարհականք ի գրելն իւրեանց զգիր առ կաթուղիկոսն որդիականաւ խոնարհութեամբ և ծառայականաւ ոճիւ գրեսցեն մեծաւ յարգանօք՝ զանուն կաթուղիկոսին ի վերն գրելով[I] և զանուն[II] և զկնիք իւրեանց յետ կոյս ի ծայր թղթոյն դնիցեն: Նոյնպէս և կաթուղիկոսն առ նոսա հայրաբար սիրով և հրամայական ոճով գրեսցէ, բայց և առ յոմանս համահասակ և ծերունի և անուանի եպիսկոպոսունս ի գրելն, եթէ եղբայր գրեսցէ չէ անտեղի:

---

[I] Բ. դնելով

[II] Բ. > և զանուն

Դարձեալ ի յելանելն հայրապետին ի յԱթոռոյս՝ ունիլ պարտի ի պարանոցին զգօտի պատշաճագոյն գունով ազնիւ և վայելուչ ինքեան և տեսողաց կախեալ երկոքումք ուսովքն և լանջովն զառ ի վայր: Եւ գաւազանն ի ձեռին զերիս և կամ աւելի և պակաս յառաջընթաց հետևակս ունիլով առաջի իւր: Իսկ եթէ երիվարաւ իջէ ելանելն, թէ առ թագաւորս և առ յայլս մեծամեծս և յայլուր և կամիցի, ունիլ պարտի նոյնպէս զայնս կանօնս զորս ասացաք: Այլև ընդ նոսին զերիվար մի թամբով կրեցեալ ի միոյ հեծելոյ, քան զամենայն յառաջագնաց, որ ասի եդաք: Եւ զկնի եդաքակրին զերկուս սևագլուխ նոյնպէս ձիաւորեալս ի ձեռին միոյն ձողաբարձ խաչ արծաթեայ և ի ձեռին միւսոյն գաւազան արծաթեայ, վառեալ ոսկեթել և ազնիւ քօղիւք: Այլև ի յելանելն և ի մտանելն ևս զմեծամեծ զանկակսն հարկանիցեն միաբանիւք ընդառաջ ելմամբ և հանդիսիւ, զի ի բնէ կանօն է Սրբոյ Աթոռոյս հայրապետացն այսպէս վարել համարձակ և անկասկած յումեքէ:

Այլև այս է կանոն, զի յորժամ հայրապետն ի յընթրիս բազմիլ կամիցի ընդ միաբանից և ընդ ում իջէ պարտի առաջի իւր զյատուկ սեղան և զկերլիս և զըմպելիս և զսպասաւորս զատեալ ի հասարակութենէն: Իսկ ի յառնուլն ի ձեռն զառաջին բաժակն ամենեքեանքն, որք գտանիցեն ի յընթրիսն կարգաւորք և աշխարհականք յոտին կանգնիցեն և ժամասացն յառաջ կացեալ եղանակեսցեն բարձր ձայնիւ ի լուր ամենեցուն. Հրամայե՛ա Տէ՛ր օրհնութեամբ ասել: Եւ հայրապետն օրհնեսցէ զամենեսեանսն ըստ պատշաճաւորութեան աւուրն և տեղւոյն և նոյն երգիչքն նոյնպէս բարձր ձայնիւ երգեսցեն ամէն, եղիցի, եղիցի և մինչ նոքա զայս երգեն՝ ըմպեսցէ հայրապետն զբաժակն և ամենեքեան գլուխ խոնարհեցուցեալ հայրապետին՝ բազմիցին ի ճաշել:

## (169բ) **ԳԼՈՒԽ Ժ.**

### ՅՈՐՈՒՄ ԾԱՆՈՒՅԱՆԻՆ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՅՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԵՒ ԵՐԲԵՄՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ Ի ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԱՆԻՍՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՅՆ ԵՒ ԵՐԲԵՄՆԱԿԱՆ ԵՒՍ ՎԷՃՔԵՒ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ, ԹԵ ՈՐՊԷ՞Ս ՎԱՍՆ Ո՞ՅՐ ԵՒ Ե՞ՐԲ ԵՒ ԱՅԼՔ ԱՅՍՊԻՍԻՔ ՈՐԴԻՍԱԾԱՆՈՅՑՔ ՀԱՆԳԱՄԱՆՔ: ՅՈՐՈՒՄ ԵՒ ՋՐՈՅՑՔ ՎԱՍՆ ՎՐԱՑ ԵՒ ՈՐԴԻՍՈՒԹԵԱՆՑ ՆՈՑԻՆ

Յետ համբառնալոյն յերկինս[I] Քրիստոսի Աստուծոյ մերոյ և առաքման Հոգւոյն սրբոյ ի յառաքեալսն ի Վերնատունն, ապա և ի յառաքիլն երկոտասանից առաքելոցն վիճակաւ ի յամենայն աշխարհ անկաւ վիճակ սրբոյն Թադէոսի առաքելոյն երկիրս Հայոց, Վրաց և Աղուանից: Նախապէս գիտելի է վասն առաքելոյս մերոյ Թադէոսի, քանզի չորք որդիք էին Յօսէփայ Աստուածահօրն, առաջինն՝ Յակոբ Արդարն, որ Տեառնեղբայր կոչեցաւ և յետ Քրիստոսի նստաւ առաջին պատրիարգ յԵրուսաղէմ, որ և Յակոբ Ալփեան ևս կոչեցաւ: Սա գրեաց զթուղթն Կաթուղիկեայց: Երկրորդն՝ Յովսէ, որ Յուստոս և Բարսաբայ ևս կոչեցաւ: Սա յառաջադրեցաւ ընդ Մատաթիայի ի տեղի Յուդային մատնչին յառաքելոցն, բայց վիճակն ի Մատաթիայ անկաւ: Երրորդն՝ Սիմօն Կանանացին, որ Շմաւոն և Նախանձայոյզ կոչեցաւ: Չորրորդն՝ Յուդայ, որ Ղեբէոս և Թադէոս ևս կոչեցաւ և Յուդայ Յակոբեան ասացաւ վասն եղբայր գոլոյն Յակոբայ և առ ի զատիլ ի մատնչէն: Սա գրեաց զԿաթուղիկեայց յետին թուղթն, որ Յուդայի անուանի: Արդ այս չորեքկինքս գոլով եղբարք և որդիք Յօսէփայ կոչին և եղբարք Քրիստոսի ի յԱւետարանն սուրբ, որպէս տեսանես: Եւ յայսց չորիցս երեքն ի թիւս երկոտասանիցն են, այսինքն՝ Յակոբոս, Շմաւոն և Թադէոս և Յովսէ՝ ի թիւս եօթանասնիցն:

Արդ այս է առաքեալս մեր, որ Յուդայ և Թադէոս ասի, որպէս ցուցաւ, որ է գլխաւոր առաքեալ Քրիստոսի և մի ի յերկոտասանիցն և ոչ թէ ի յեօթանասնիցն, որպէս սխալմամբ գրի ի Յայսմաւուրն և յայլս պատմագիրս յԱխթարմայից և ի տգիտաց յետոյ ներմուծեցեալ: Ուրեմն ի դիմելն սորին յերկիրս Հայոց առնլով ի յեօթանասնիցն և զերիս աշակերտս սպասաւոր և լծակից ինքեան՝ մտանէ ի յԵդեսիայ քաղաք և մկրտէ զթագաւորն Աբգար, ըստ խոստմանն Քրիստոսի, ընդ նմին և զքաղաքն ամենայն և զԱդդէ կերպասագործն ձեռնադրէ եպիսկոպոս քաղաքին: Եւ ապա շրջեալ ընդ Ասորիս,

---

[I] Բ. > յերկինս

ի Մար[ա]ս[տան], գնայ ի յԱղուանս և դարձուցանէ զբազումս ի Քրիստոս, շինէ և զեկեղեցիս և կարգէ զքահանայս և յետոյ գայ ի յԱրտազ գաւառ և մկրտէ զՈսկեանսն և զՍանդուխտ զդուստրն Սանատրկոյ արքային, որ նախապէս մկրտեցեալ ի նոյնոյ առաքելոյն, յետոյ սպանանէ զնա, որոյ հրաշագործ մարմինն կայ անդէն ի նոյն տեղւոջն, ուր յետոյ հոյակաւոր վանք կառուցաւ, որ կայ մինչև ցայսօր շնորհօքն Քրիստոսի և կոչի վանք սրբոյն Թադէոսի առաքելոյն[211]:

Այս է նախապէս ճշմարիտ առաքեալ և Լուսաւորիչ յատկապէս Հայոց, Վրաց և Աղուանից, ընդ սմին և սուրբն Բարդուղիմէոս, որ եմուտ ի Հայս և լուսաւորեաց զբազումս և յետոյ նահատակեցաւ յանօրինաց ի գաւառն ..., ուր կայ հրաշագործ մարմինն, յորոյ վերայ և յետոյ կառուցաւ վանք հրաշալի, որ է մինչև այսօր շնորհօքն Քրիստոսի, վասն որոյ և սա կոչեցաւ առաքեալ հայոց ընդ Թադէոսի: Եւ մինչ սոքա ոչ կարացին զբոլոր վիճակ իւրեանց կատարելապէս ածել ի հաւատս Քրիստոսի, վասն որոյ ի ժամ նահատակութեան խնդրեցին ի Քրիստոսէ, զի ի շառաւիղէ իւրեանց յարուսցէ զոք ի լնուլ զպակասութիւն վիճակի իւրեանց, որոց և աղօթիւքն յարոյց Քրիստոս յետ ժամանակաց ի սրբոյն Թադէոսի առաքելոյ շնորհաբուխ զերեզմանէն զսուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն, որ վերստին նորոգեաց և փայլեցոյց զսերմանեալսն ի նոցանէ և բոլորովին լուսաւորիչ եղև նոցին վիճակի, զորմէ յետոյ տեսցո՛ւք:

Արդ յետ կատարման սրբոյ առաքելոյս մերոյ Թադէոսի մի ոմն յաշակերտաց սորին, որ Եղիշէ կոչիւր, դարձաւ յԵրուսաղէմ յառաքեալսն ի պատմել զկատարումն սորին: Իսկ եղբայր Թադէոսի առաքելոյն Յակոբոս, որ իբր պատրիարգ նստիւր յԵրուսաղէմ, ձեռնադրեաց զԵղիշէ եպիսկոպոս ի վերադարձոյց և Հայս ի վիճակ Թադէոսի, զի յաջորդեսցէ զտեղի նորին, որոյ և եկեալ ոչ կարացեալ մտանել ի Հայս, գնաց յԱղուանս և անդ քարոզեաց զՔրիստոս և աշակերտեաց զոմանս և յետ ոչ բազում աւուրց և զնա անդ նահատակեցին: Արդ ի սրբոյն Թադէոսէ և ի Բարդուղիմէոսէ առաքելոցն և ի սրբոյն Եղիշէէ թէպէտ քարոզեցաւ Քրիստոս ի Հայս և յԱղուանս և յայլս տեղիս և հաւատացին բազումք և կարգեցան եկեղեցիք, սակայն զկնի կատարման նոցին, որպէս թէ վերադարձան բոլորքն ի կռապաշտութիւն թագաւորօք և իշխանօք, թէպէտ գտանիւր յուրեք յուրեք ի ծա(170ա)ծուկ և ի թագստի հաւատացեալ և ծառայ Քրիստոսի: Ապա յետոյ յորժամ նախախնամութեամբն Աստուծոյ բողբոջեցաւ շառաւիղն օրհնութեան ի կենդանի նշխարհաց սրբոյն Թադէոսի առաքելոյն ըստ հայցուածոց նորին, սուրբն Գրիգոր, որ և յետ բազմազան տանջանակրութեան էած ի հաւատս և մկրտեաց զՏրդատ թագաւորն և լուսաւորեաց զաշխարհս Հայոց, Վրաց և այլոց շրջակայից, ապա և մկրտեաց զՈռնայր արքայն Աղուանից ի ձեռն նորին և զբոլոր ազգն Աղուանից լուսաւորեաց և զթոռն իւր զմանուկն Գրիգորիս առաքեաց նոցա կաթուղիկոս, ըստ խնդրոյ Ոռնայր արքային: Ապա յայնմ հետէ յայտնի և կատարելա-

պէս փայլեցաւ հաւատն Քրիստոսի և անեցաւ ի Հայս, ի յԱղուանս և ի Վիրս զարդարեալ եկեղեցեօք և եկեղեցականօք: Եւ վասն այսորիկ կարգեցաւ և կանօնադրեցաւ ի բնէ անտի յԱռաքելոց և ի հայրապետաց և ի թագաւորաց և մանաւանդ ի Սեղբեստրոսէ հայրապետէն և ի Կոստանդիանոսէ թագաւորէն Հռօմայ, որք հայրապետական և թագաւորական հրամանագրով և հաստատուն դաշնադրութեամբ ի սուրբն Լուսաւորիչ յանձնեն զինքնագլուխ և զծայրագոյն պատրիարգութիւնն բոլոր արևելականաց և հիւսիսականաց, այսինքն՝ Հայոց, Վրաց և Աղուանից, որոց զեպիսկոպոսունսն և զկաթուղիկոսունսն ընդ իշխանութեամբ նորա դնեն, զի ի նմանէ և ի նորին փոխանորդացն առնուցուն զձեռնադրութիւն, որպէս պատմի յանախօրէն ի յԱգաթանգեղոսէ, որպէս և զթոռն իւր զսուրբն Գրիգորիս ձեռնադրեալ առաքեաց կաթուղիկոս Աղուանից, վասն այսորիկ հարկ եղև զի կաթուղիկոսքն Աղուանից Լուսաւորչի փոխանորդ կաթուղիկոսաց որդի և թոռն կոչիցին և ի նոցանէ առնուցուն զօծումն և զկարգ կաթուղիկոսութեան և ի հնազանդութեան նոցա մնայցեն և զանուն նոցին ի յԱղուանս նախքան զանուն իւրեանց յիշել տայցեն և ի վիճակէն իւրեանց զգանձանակս և զայլ արդիւնս տայցեն նոցա, որպէս և է այսպէս ի յԱղուանս մինչև ցայսօր:

Քանզի առաքեալն նոցին Եղիշէ, զոր յատուկ իւրեանց հռչակեն, էր աշակերտ սրբոյն Թադէոսի առաքելոյն, որ ի Հայս կատարեցաւ և Աթոռն նորին է ի Հայս և նախկին կաթուղիկոսն նոցին Գրիգորիս էր՝ թոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ հայոց էր հայրապետ և կաթուղիկոս և Աթոռն նորին է ի Հայս և է հայրապետարան և կաթուղիկոսարան հայոց, որ է Սուրբ Էջմիածին: Այս է ճշմարիտ և նախնական կանօն և որպիսութիւն Աղուանից կաթուղիկոսին: Իսկ յայսց[I] կարգաց և ի կանօնաց ոմանք երբեմնապէս, եթէ հեստեցեալք են դատեցեալք են ի յէջմիածնանիստ կաթուղիկոսացն և վերայուղղեցեալք ի նոցունց՝ տալով և զձեռագիրս կնքով, զի մի ևս ի նոյնս սահիցին, որպէս ցուցանի յառաջակայդ: Վերոգրեցեալ կանօնաւոր վարեցան հնազանդութեամբ կաթուղիկոսունքն Աղուանից ի Լուսաւորչէն մերմէ և ի սրբոյն Գրիգորիսէն իւրեանց (որ էր թոռն նորին) ի ժամանակս ԻԲ. (25) կաթուղիկոսացն մերոց, մինչև ի ցԱբրահամ կաթուղիկոսն ըՌշտունեցի յամս երկու հարիւր եօթանասուն և հինգ և ի ժամանակս կաթուղիկոսացն իւրեանց, որոց յետինն էր Վիրօ[II] կաթուղիկոսն[212], որ յԱբրահամու ձեռնադրեցաւ ԺԴ. (14): Արդ յառաջ, քան զայս ի թուոջն Փրկչին մերոյ ի չորս հարիւր ութսուն և հնգոջն ի ժամանակս Բաբգէն կաթուղիկոսին մերոյ, որ չորեքտասաներորդ էր աթոռակալ զկնի Լուսաւորչին և Զենոնի և Անաստասայ թագաւորացն Յունաց և Հռօվմայեցւոց, որոց և հրամանաւն իսկ մեծահանդէս և աշխարհա-

---

[I] Բ. ի Հայոց

[II] Բ. վերոյ

խումբ ժողովով Յոյնք, Իտալիա, Հայք, Աղուանք և Վիրք միաբանեալք նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զպիղծ տոմարն Լևոնի: Եւ մինչ ոչ դադարէին քաղկեդոնիկքն յայյր և անդր ի շրջելոյ և ի սերմանելոյ զչար աղանդն իւրեանց ի Հայս, ի Վիրս և յԱղուանս, վասն որոյ ի հինգ հարիւր քսան և հինգ թուոջն Փրկչին ի ժամանակս Յուստիանոսի կայսեր Ներսէս կաթողիկոսն մեր Աշտարակեցի, որ քսաներորդ էր զկնի Լուսաւորչին մերոյ վերստին արար ժողով ի Դվին՝ ունիլով իւրեան համաձայն զՎիրս և զԱղուանս, որք և նզովեալք հերքեցին զչար ժողովն Քաղկեդոնի և զհետևօղսն նորին ի կողմանց իւրեանց:

Սակայն յուզէր միշտ և խռովէր քաղցկեղն քաղկեդոնական և վրդովէր զեկեղեցիս հանապազ, զի յետ սոյն Ներսեսի նստի Յովհաննէս կաթողիկոս հայոց յամս ԺԵ. (15): Եւ յետ նորա Մովսէս յեղուարդայ ի թուոջ Փրկչին մերոյ ԵԾԾ. (550), որ քսան երկուերորդ էր Լուսաւորչին, առ որով եղաւ թուականնն հայոց: Յաւուրս սորա (170ք) բարձրանայ և ծաւալի հուրն Քաղկեդոնի և հրդեհէ զբազումս ի մերայնոց և պատառէ զեկեղեցիս Հայոց, քանզի յաւուրս Մօրկայ թագաւորին Յունաց, որ խմորեցաւ յաղանդն Քաղկեդոնի, դարձան և հայքն ի յայն, որք էին ի բաժնի Յունաց, վասն որոյ և ապստամբեալք ի Մօսիսէ հրամանաւ նոյնոյ թագաւորին և սատարութեամբ Թէոդորոսի եպիսկոպոսին Կարնոյ, կացուցանեն այնմ կողմանց զՅօհան ոմն ի Կոգովտ գաւառէ կաթողիկոս հայոց և ընդունին զժողովն Քաղկեդոնի, որով և արկանեն զմեծ գայթակղութիւնս և զերկուութիւնս յազգս մեր: Եւ յայսմանէ ախտէ մինչ Աղուանից ազգն մնայր ազատ և անխոտոր յայսմ միջոցի, վասն որոյ զերեսս դարձուցին ի հայոց կաթողիկոսացն Սիւնեաց եպիսկոպոսքն և յարեցան յԱղուանս և ի նոցանէ առին զկարգ և զօծումն, որք ի հայոց կաթողիկոսէն առնուին: Տևեաց այս երկպառակութիւնս որքան և տևեցին երկոքին կաթողիկոսքն մեր Մօսէս և Յօհան:

Ապա ի վախճանիլ սոցին նստի Աբրահամ կաթողիկոսն ի գաւառէն Ռշտունեաց (որ ի վերդ յիշեցաւ) ի ԻԹ. (580) թուոջն մերում, աշխարհաժողով հանդիսիւ համակամութեամբ երկուց կողմանց՝ յունաբնակաց և հայաբնակաց ի Դվին քաղաք և ըստ օրինի միապետեալ ազգիս մերոյ լինի կաթողիկոս՝ յաւուրս Յուստիանոսի յունաց և Խոսրովու պարսից արքայիցն և յիշխանութեան հայոց Սմբատայ Բագրատունւոյ: Բայց եղեն և յաւուրս սորա խռովութիւնք մեծամեծք և պէսպէս յուզմունք ի Հոռոմոց, ի Վրաց, յԱղուանից և ի Հայոց, երբեմն վասն պիղծ աղանդոյն Քաղկեդոնի ի բուռն թագաւորացն յունաց Յուստիանոսէ և ի Մօրկայ, յորոց հանապազ կրէր ազգս հայոց զյարուցմունս, յորոց հրաւիրակք և դեսպանք ոչ դադարէին յերթևեկութեանց և բազմիցս հրաման հանէին ժողով լինելոյ միանգամ ի Կոստանդնուպօլիս կոչեցին և երիցս ի Թէոդուպօլիս և որքան վիճմունս և զառարկութիւնս արկանէին ճարտարաբան ազգն յունաց առ վարդապետսն հայոց՝ շնորհօքն Աստուծոյ ընկալնուին զպատասխանիս

անվեհեր: Եւ մինչ այսու ոչ ինչ կարացին ընկենլ զազգս հայոց, փոխեցին ապա և այլովք մախարիլ ասելով, թէ դուք ոչ ունիք զաթոռս պատրիարգական, վասն զի ի չորից Աւետարանչացն ոչ միոյն ունիք զաթոռ և ոչ միոյն հնազանդեալ հետևիք: Վասն որոյ բազում ժողովք և վէճք, ուժեղ քննութիւնք և հարցափորձութիւնք լինէին ի միջոցին:

Ապա յետ բազմաց վիճմանց հազիւ գտանէր զհանդարտութիւն ազգս հայոց ըստ այսմ մասին: Քանզի միաբանեալք հայոց, վրաց և աղուանից նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զտօմարն Լևոնի և մաքրեցին զբոլոր աշխարհս ի մոլեկան աղանդոյն նոցին: Եւ ապա կարգեցին կանօնաւ, զի փոխանորդն Լուսաւորչին (որ նստի յԱթոռ Թադէոսի առաքելոյն) լինիցի պատրիարգ, Աղուանից կաթուղիկոսն լինիցի արքեպիսկոպոս և Վրաց եպիսկոպոսն՝ մետրապօլիտ, առ ի հատանել զլեզուս յունաց և յազատիլ ի զրպարտութեանց նոցին: Քանզի ունէին թէպէտ ազգս հայոց զայս կանօն և կարգ աւանդեալ ի սրբոյ Լուսաւորչէն, սակայն ի փոփոխիլ ժամանակաց և իշխանութեանց անփոյթ էին արարեալ զայսպիսեաց անուանց և կոչմանց, զորս ահա վերստին հաստատեցին վասն հակառակութեան յունաց, որպէս ասացաք: Եւ զի յառաջ, քան զայս Սիւնիք յետս էին կացեալք և բաժանեալք ի յԱթոռոյ Լուսաւորչին հրամանաւ սրբոյն Պետրոսի Մեծի՝ ռաբունոյ առաջնորդին իւրեանց, վասն ներհականիստ կաթուղիկոսացն (որպէս ասացաք) Մօսիսի և Յօհաննու, որոց և չորեքկին, այսինքն՝ Գիզան, Վրդանէս, Գրիգոր և Քրիստափոր առաջնորդքն ի յԱղուանիցն, առին զձեռնադրութիւն և զմեռոն: Աստանօր ի միապետելն Աբրահամու, վերադարձան ի սա և վերստին հնազանդեցան Աթոռոյ Լուսաւորչին, որպէս և էր յառաջն և Դաւիթ առաջնորդն նոցին, որ զկնի Քրիստափորի, էառ զձեռնադրութիւն ի յԱբրահամու կաթուղիկոսէն: Եւ մնացին այսու կանօնաւ հետևօղք և հնազանդք սրբոյ Լուսաւորչի փոխանորդացն մինչև ցայսօր:

Արդ այսպէս առնելով թէպէտ թօթափեցին մերքն յինքեանց զմարտս և զվէճս յունաց և քաղկեդոնականացն, որպէս ասացաք, սակայն յառաջացան այնուհետև ի ներ իւրեանց, այսինքն՝ ի Հայս, ի Վիրս և յԱղուանս մեծ խռովութիւնք և չարաչար բաժանմունք: Քանզի ի ժամանակին յայնմիկ էր առաջնորդ մի Վրաց, որ Կիւրիոն[213] կոչիւր: Սա նախապէս ի սարկաւագութեան գնացեալ էր ի Յոյնս ի քաղաքն Կո(171ա)ղոնիայ[214] և կենակից լեալ Քաղկեդոնիկ չիրիցու միոյ, յորմէ և դարձեալ էր ի նորին չար աղանդն, յետոյ եկեալ ի Վաղարշապատ յաւուրս տեառն Մօսիսի կաթուղիկոսին, որ ի վերդ յիշեցաւ, եղև փակակալ Սրբոյ Էջմիածնի: Յաւուրսն յայնոսիկ վախճանեալ եպիսկոպոսին Վրաց տեառն Պետրոսի (որ ի Մօսիսէ էր ձեռնադրեցեալ ըստ նախնոյ սովորութեան), խնդրեցին Վիրք ի Մօսիսէ առաջնորդ իւրեանց զխմորեալն Կիւրիոն և Մօսէս ևս ձեռնադրեաց զպիղծ և զարմատն այն չարութեան եպիսկոպոս և առաքեաց նոցա առաջնորդ, որ և ունելով ի յինքն նախապէս զխմորն չարութեան զաղանդն

Քաղկեդոնի՝ սկսաւ օրստօրէ սերմանել և ի Վիրս սատար առեալ իւրեան և զպիղծ խուժիկ զհաճանայն իւր, յորմէ ուսեալ էր ինքն: Եւ եռանելին Մովսէս թէպէտ բազմիցս խրատէր զԿիւրիոն դառնալ յաղանդոյն, սակայն նա չմեղս դնէր զինքն և թաքուցանէր:

Ապա ի վախճանիլն Մովսիսի և յաջորդելն Աբրահամու և ի հաստատելն զԱղուանիցն առաջնորդն արքեպիսկոպոս և Վրացն մետրապօլիտ ի խոնարհ, քան զնա ախտացեալ ամբարտաւանութեամբ պիղծն Կիւրիոն ոչ էառ յանձն զմետրապօլտութիւնն, այլ զարքեպիսկոպոսութիւն խնդրէր առնուլ՝ կամելով նախաբարձ լինիլ ի վրայ Աղուանից: Վասն որոյ և Աղուանիցն խռովեալք յետս կացին ապստամբութեամբ ի Հայոց՝ յառաջադրելով զնախկնութիւնն առաքելոյն իւրեանց Եղիշէի (որ էր աշակերտ Թադէոսի առաքելոյն): Ապա և անիծեալն Կիւրիոն զէն առեալ իւրեան զապստամբութիւնն Աղուանից և մանաւանդ խմորեալ գոլով յաղանդն Քաղկեդոնի ժամ գտեալ իւրոյ չարութեանն ի յոչ ընկալնուլն զարքեպիսկոպոսութիւնն, յայտնեաց զմթերեալ մաղձն իւր և դարձաւ ի Հայոց և յարեցաւ ի Յոյնս, ընդ իւրեան դարձոյց և զազգն վրաց միանգամայն և եղեն քաղկեդոնիք յօրէ յայնմանէ մինչև ցայսօր:

Քանզի մինչև ի յայս պիղծս Կիւրիոն Վիրք հնազանդք էին յամենայնի և հետևօղք կանօնաց և աւանդութեանց եկեղեցւոյս հայոց և եպիսկոպոսք նոցին ի սրբոյ Լուսաւորչի փոխանորդացն առնուին զձեռնադրութիւն և հրամանաւ սոցին նստէին և զՍուրբ Մեռոնն ի սոցանէ առնուին, որոց բաժանմանն պատճառ եղև պիղծն Կիւրիոն: Առ յորս թէպէտ բազմիցս գրեաց Աբրահամ կաթուղիկոսն զգիրս խրատականս և յորդորականս և զմարդ առաքեաց ի վերաուղղել, ոչ ինչ օգտեցաւ: Վասն որոյ և բանիւ արարեալ զԿիւրիոն, ընդ նմին և զազգն վրաց և գրեաց կանոնականս Հայոց, Աղուանից և Սիւնեաց, զի քարշեցին ի վրաց և մի ևս հաղորդեցին ընդ նոսա ի հաւատս և ի յաւանդութիւնս եկեղեցւոյ: Ապա և զմետրապօլտութիւնն, յորմէ ոստեցան Վիրք, ընկալաւ եպիսկոպոսն Սիւնեաց և այս կանօն մնաց մինչև ցայսօր: Վասն այսորիկ Սիւնեաց եպիսկոպոսն վերագոյն է ի Հայս ի վերայ այլոց եպիսկոպոսաց:

Իսկ և Աղուանիցն ապստամբութիւն տևեալ ի ժամանակս երկուց կաթուղիկոսացն իւրեանց (որք զկնի Վիրօ[I] կաթուղիկոսին նստան անձամբ առեալ զկաթուղիկոսութիւնն), մինչև ի սրբազան կաթուղիկոսն մեր տէր Կոմիտաս, որ նստաւ ի ՀԲ. (623) թուոջն մերում, որով ընկալաւ իսկապէս միապետութիւն կաթուղիկոսութեան ազգս հայոց: Քանզի ըստ ոմանց պատմագրաց ի ժամանակս Աբրահամու դեռևս կենդանի էր Յօհան, որ նստեալ էր ի կողմն Յունաց հրամանաւ Մօրկայ թագաւորին, որ և ըստ ոմանց զերեցեալ յետոյ ի յԱշոտայ զօրապետէն պարսից և բերաւ ի Պարս[կաստան]՝ ի Համատան[215] և անդ մեռաւ:

---

[I] Բ. վերոյ

Ապա ի միապետելն Կոմիտասայ և ի վախճանիլն ապստամբ կաթուղիկոսացն Աղուանից զղջացեալ իշխանացն Աղուանից ի յուսադրելոյ և ի խրատուցն Կոմիտասայ առաքեն զՈւխտանէս վարդապետն իւրեանց առ Կոմիտաս և խնդրեն տալ նմա զօծումն և զկարգ կաթուղիկոսութեան, զոր և արարեալ իսկ ըստ խնդրոյ նոցին առաքէ մեծաւ փառօք յԱղուանս և դնէ նոցա ուխտ և կանօն, զի մի եւս ապստամբիցին ի յԱթոռոյ Լուսաւորչին, որք և պահելով զկանօնս զայս մնացին ի ժամանակս երկուց կաթուղիկոսացն իւրեանց Ուխտանիսի և Եղիազարու և ի ժամանակս եօթն կաթուղիկոսացն մերոց, (171բ) մինչև ի յԵղիա կաթուղիկոսն մեր Արճիշեցի, որ նստաւ ի թուին մերում ի ԾՌԲ. (703):

Ապա ի ժամանակս սորա մեռանի Եղիազար կաթուղիկոսն Աղուանից (որ ի մերմէ կաթուղիկոսացն էր ձեռնադրեցեալ) Ներսէս[216] ոմն եպիսկոպոս Գարդմանայ[217], որ Բակուր մականուանիւր գոլով խմորեցեալ յաղանդն Քաղկեդոնի՝ ուխտ և դաշինս դնէ ի ծածուկ ընդ տիկնոջն Վարազտրդատայ իշխանին Աղուանից, որ Սպարամ կոչիւր, որ և սա ունէր զախտն Քաղկեդոնի, թէ եթէ զիս կաթուղիկոս արասցես, զամենայն Աղուանս դարձուցից յաղանդն Քաղկեդոնի: Եւ չարախորհ կինն այն հաւանեալ կամաց նորին ժողովէ զեպիսկոպոսունս և զիշխանս երկրին և տայ ձեռնադրել զպիղծն Բակուր ի չկաթուղիկոս Աղուանից՝ թարց հրամանի կաթուղիկոսին հայոց տեառն Եղիայի: Եւ ապա Բակուրն այն պիղծ սկսաւ յայտնել օրստօրէ զմաղձն չարութեան, զոր ի վաղուց ունէր մթերեալ զամենայն ուղղափառսն խոտելով և հալածելով և զթուլահաւատսն ի յիւր յաղանդն դարձուցանելով: Ապա ճարակտուր լեալ ուղղափառ եպիսկոպոսաց և բարեպաշտօն իշխանացն[I] Աղուանից հաւուցին զբողոքն առ կաթուղիկոսն հայոց տէր Եղիա, որոց գրոց պատճէն է այս.

Տեառն Եղիայի հայոց կաթուղիկոսի ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն:

Վասն զի ի մի ուղիղ հաւատ գոլով հարքն մեր ընդ հարսն ձեր, զմիմեանց հոգային զհոգւոց փրկութիւն: Եւ ի ներելն Աստուծոյ զօրացեալ տիեզերակործան կռօնն Քաղկեդոնի կլից զտիեզերս և մեր կողմունքս մինչև զայսօր ժամանակի անխառն էր մնացեալ յայնմ աղանդոյ: Իսկ այժմ զոր կարծէաք զոլ մեզ հովիւ բարի զՆերսէս, սա գայլ եղեալ օձտել սկսաւ զբանաւոր հօտս Քրիստոսի, վասն որոյ կամեցաք ուշ առնել ձերում Սրբութեան, այց ելանել որպէս ձերոց անդամոց և բժշկել զբեկումնս մեր: Ողջ լեր:

Ապա սրբազան հայրապետն Եղիա շարժեալ ի Հոգւոյն սրբոյ, առեալ ընդ իւր զեպիսկոպոսունս հայոց գնայ ի յԱղուանս ի քաղաքն Բարտաւ, ուր նստէր կաթուղիկոսն նոցին և անդ ժողովեալ զամենայն զեպիսկոպոսունս և զիշխանս Աղուանից,

[I] Բ. իշխանին

յառաջ ածեալ զԲակուր և զհամախոհն նորին զչար կինն Սպարամ, ձաղածանակ խայտառակութեամբ կապեալ ի վերայ իշոյ հալածէր յերկրէն և զաշխարհն մաքրեալ յաղանդոյ չարին, ձեռնադրէ նոցա զՍիմէօն սարկաւագապետն եկեղեցւոյն կաթուղիկոս Աղուանից և դնէ կանօնս և առնու զձեռագիրս ի յԱղուանից, զի մի ևս շեղիցին ի կրօնից Լուսաւորչին և մի ևս դնել կաթուղիկոս ինքեանց ձեռնադրութեամբ եպիսկոպոսաց, այլ միայն ի յաթոռակալէ սրբոյ Լուսաւորչին և զօրինակ ձեռագրի նոցին զոր ետուն Եղիայ կաթուղիկոսին (զլիովինն ի պատմագիրս Աղուանից և Սիւնեաց և ի Կիրակոսինն տեսցես): Աստ կրճատեալ[I] զդիտումն միայն եղաւ, որ է այսպէս:

Քանզի բազում և ազգի ազգի չարութեամբ, որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեացն սատանայ զպարզամիտսն ի մարդկանէ որսալ և այլն, սակս որոյ այժմ ի միջի մերում երևեալ արմատն դառնութեան աղանդոյն Նեստորի ի ձեռն Ներսիսի ամբարշտացելոյ, որ ներողութեամբ Հոգւոյն սրբոյ կարգեցաւ յառաջնորդութիւն տանս Աղուանից և խոռամանկութեամբն եղև հաւատակորոյս և այլն, յորմէ Քրիստոսի սուրբ անդամք և որդիք սիօնի բովանդակք մոլորեցան խաբէութեամբ և այլն: Այլ սակայն օրհնութիւնն Աստուծոյ յայսմ վայրի, որ ոչ ետ թոյլ թշնամւոյն մարդկան իսպառ յառաջել, այլ գթացեալ ի տկարութիւնս մեր, ողորմեալ ժողովրդեանս իւրում՝ առաքեաց առ մեզ զպատուական հայրդ զԵղիա շնորհիւն Աստուծոյ հայոց կաթուղիկոս, զայր սուրբ և ճշմարիտ, զուգաթոռ սրբոյն Գրիգորի՝ ձերովք եպիսկոպօսօք, որք եկիք ի մայրաքաղաքս մեր Պարտաւ և ձերով քաղցրաւուսոյց վարդապետութեամբն բարձիք զչարն ի միջոյ մերմէ և յիշելով զառաջնոց հարցն մերոց աւանդութիւն, վերանորոգեցիք զԱթոռ հայրապետութեանս մերոյ և այլն: Վասն որոյ և մեք շնորհակալութեամբ ընկալաք առաքելական զհաւատն մեր, որ նախ ի սրբոյն Եղիշէ է հիմնադրեալ և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ, որ (172ա) ցայժմ ոչ էր ստերիւրեա: Ի հասանիլ փորձութեանցս հասոյց Աստուած զօգնութիւն իւր ի ձեռն փոխանորդիդ սրբոյն Գրիգորի, որոյ ուղղափառութեանն էաք աշակերտ և եղիցուք տեառնդ Եղիայի հայոց կաթուղիկոսի, որ եղև վրէժխնդիր թշնամւոյն արդարութեան: Եւ արդ մեք ամենեքեան նզովեմք զամենայն հերձուածօղսն, ընդ յորս և զեղկելին մեր Ներսէս, որ հաւանեալ եղև երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի: Զայս կանօնս առաջի Աստուծոյ և ձերոյ սրբութեանդ պայմանեցաք: Յայսմ հետէ, եթէ ոք յանդգնեալ զնորաձևութիւն ինչ կամիցի առնել ի մէնջ, ով ոք և իցէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ և ի մէնջ և այլն:

Նոյնպէս և վասն ձեռնադրութեան կաթուղիկոսացս Աղուանից այսպէս կանօնեցաք: Քանզի որովհետև ի սուղ ինչ միջոցի կաթուղիկոսքն մեր զձեռնադրութիւնն յեպիսկոպոսացս մերոց առին անփոյթ առնելով զառաջնոցն կանօնաց, վասն որոյ

---

[I] Բ. կարճառօտեալ

անփորձ և անընտրող գործով եղեալ հերձուածեցաւ աշխարհս մեր, վասն այսորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, զի ձեռնադրութիւն հայրապետութեանս Աղուանից ի սրբոյն Գրիգորի Աթոռոյն և ի նորին փոխանորդացն եղիցի միաբանութեամբ աշխարհիս մերոյ, որպէս և էրն ի սկզբանէ անտի ի սրբոյն Գրիգորէ, զի անդ իսկ ընկալաք զլուսաւորութիւն և ճշմարտութեամբ գիտեմք, թէ զոր դուք ընտրէք և կամիք հաճոյէ Աստուծոյ և օգուտ մեզ: Եւ թէ որք երկիւղիւն Աստուծոյ այսմ պայմանատրութեանս կատարօղք լինին, օրհնեալք եղիցին ի սրբոյ Երրորդութենէն: Եւ թէ ընդդիմացեալք թիւրեսցին ի ճշմարտութենէ դատապարտեալք լիցին յԱստուծոյ և ձեռնադրութիւնն այն լիցի ունայն և անվաւեր և մի համարեսցի ընդունելի և այլն: Վերջ ձեռագրին:

Առեալ տեառն Եղիայի զայս ձեռագիրս յԱղուանից դառնայր մեծաւ փառօք յԱթոռն իւր: Արդ եկաց և տևեաց այս կանօն և ուխտադրութիւն ի ժամանակս ԺԶ. (16) կաթուղիկոսացն Աղուանից և ի ԺԵ. (15) կաթուղիկոսացն մերոց, մինչև ի Գէորգ կաթուղիկոսն մեր Գառնեցի, որ նստաւ յաթոռ ի ԳՃԻԶ. (877) թուոջն մերում: Եւ զի ոմանք ԺԴ. (14) կաթուղիկոս դնեն մեզ յայսմ միջոցի՝ ոչ դնելով ի կարգի զԶաքարիա կաթուղիկոսն ի Ձագայ գեղջէն, զի սա ըստ ոմանց ասի, թէ ի վեց ամի հայրապետութեան իւրոյ ժողով արարեալ ի Շիրակվան[218], ընկալաւ զժողովն Քաղկեդոնի, որոյ զկնի նստաւ Գէորգ և խոտեաց զընկալեալ տօմարն և զաղանդն նորին և մաքրեաց զեկեղեցիս վերստին: Ապա ի ժամանակս Գէորգայ կաթուղիկոսին մերոյ մեռանի Յօսէփ կաթուղիկոսն Աղուանից, որ ի մերոց կաթուղիկոսացն էր առեալ զձեռնադրութիւն ըստ կարգին: Եւ յաւուրսն յայնոսիկ հայոց թագաւորն Աշոտ և իշխանքն Աղուանից ԺԴ. (13) ամ էր, որք ի պատերազմի կային ի դուռն Ալանաց ի Պարտաւ, ընդ Մահմետի զօրավարի ումեք, որ Եմէմիկ կոչիւր, վասն որոյ ոչ լինէին ձեռնհաս ի նորոգել զկաթուղիկոսութիւն Աղուանից, վասն որոյ յերկար միջոցի մնային անկաթուղիկոս: Եւ Սամուէլ եպիսկոպոսն Մեծկունէից անզգամեալ իւրքնին անձամբ առնու զպատիւ առնլով զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց յԱղուանս և լինի կաթուղիկոս անկատար ձեռնադրութեամբ՝ առանց հրամանի կաթուղիկոսին հայոց Գէորգայ և իշխանաց երկրին: Քանզի Աղուանից կաթուղիկոսն յորժամ ի սրբոյն Գրիգորի փոխանորդ կաթուղիկոսացն ոչ առնոյր զկարգն, այլ յիւր յեպիսկոպոսացն առնոյր անկատար ձեռնադրութիւն կոչիւր ի բնէ անտի: Վասն այսորիկ զայնպիսին վերստին ձեռնադրէին փոխանորդքն Լուսաւորչին, որպէս և արար Գէորգ կաթուղիկոսն մեր: Ուստի յորժամ լուրս այս հասանի ի բանակն լինի խռովութիւն մեծ, ապա իշխանքն Աղուանից գրեն առ մեծ կաթուղիկոսն հայոց Գէորգ, որ նստէր ի Դվին և կաթուղիկոսն գրէ նոցա և Աշոտ թագաւորին, զի խաղաղութեամբ վճարեսցեն զեղելութիւնն զայն և բառնայցեն զխռովութիւնն: Ապա Աշոտ թագաւորն հայոց, ըստ հրամանի կաթուղի-

կոսին համոզել կամեցաւ զիշխանսն Աղուանից, զի ընդունիցին զեղեալն, իսկ իշխանքն Աղուանից ոչ կամին, ասելով՝ թէ նզովք գոն ի մեզ և ուխտ ի ի նախնեաց հետէ, զի զյեպիսկոպոսաց ձեռնադրեցեալ և թարց հրամանի փոխա(172բ)նորդացն Լուսաւորչի զկաթուղիկոս ոչ դնիցեմք ի մեզ և ոչ ընդունիցիմք: Եւ թագաւորն Աշոտ խնդրեալ զգիրս ուխտիցն և վերահասու լեալ, ապա բերեալ զՍամուէլ առ յինքեանս, յետ բազմաց յանդիմանութեանց, առաքեն զնա ի Դվին առ Գէորգ կաթուղիկոսն հայոց, որ և կրկին ձեռնադրեալ զՍամուէլ և առեալ զձեռագիր վերստին ոչ ևս ապստամբիլ յԱթոռոյ Լուսաւորչին՝ առաքէ յԱղուանս: Մինչև ցաստ հասուցանէ զպատմութիւնս իւր պատմիչն Աղուանից Մովսէս Կաղանկատուին և վերջացուցանէ:

Ապա յետ քանեաց ամաց ի զօրանալ տաճկաց և գերել յերկիրս Հայոց և ընդ ձեռամբ ածել ընդ բազում գերելոց և կաթուղիկոսն Գէորգ գերեցաւ ի տաճկաց և ածաւ ի Պարտաւ: Իսկ Համամ թագաւորն Աղուանից[219] գնէ զԳէորգ կաթուղիկոսն գանձիւք ի գերչացն և մեծաւ փառօք առաքէ վերստին ի յԱթոռն իւր: Սակայն ունէր սա դրան եպիսկոպոս մի Յօնան անուն և մինչ ինքն ի գերութեան էր մեռանի Սամուէլ կաթուղիկոսն Աղուանից և Յօնանս այս գայ յԱղուանս և անդրէն ժամ գտեալ ձեռնադրի կաթուղիկոս Աղուանից՝ թարց կամաց տեառն Գէորգայ: Եւ յորժամ ազատի Գէորգ ի գերութենէն և տեսանէ զՅօնան լուծանէ զնա ի պատուոյն և ի կարգէն: Յետոյ ի միջնորդելն Համամայ թագաւորին Աղուանից վասն երախտեաց նորին կրկին ձեռնադրէ զՅօնան և կարգէ զնա կաթուղիկոս նոցա՝ առնլով զդաշնագիրս ի նմանէ և յիշխանաց երկրին, զի մի ևս ընկալցին զձեռնադրեալ յեպիսկոպոսաց կաթուղիկոս որք և մի ապստամբիցին յԱթոռոյ Լուսաւորչին: Եւ ինքն դառնայ ի Հայս՝ յԱթոռն իւր: Ապա յետ վախճանին տեառն Գէորգայ փութով անդրէն տեղի ետ այս կարգ և սովորութիւն և յաջորդեաց անկարգութիւն:

Քանզի յայնմ հետէ կաթուղիկոսքն մեր տեղափոխեալք ի հանապազորդական յարձակմանց և ի հինահարութեանց իսմայէլական ազգին այսր և անդր շրջէին, երբեմն ի գաւառն Վասպուրական, մերթ ի Շիրակվան և երբեմն յայլուր, վասն որոյ ոչ ձեռնհաս լինէին ի փոյթ ունիլ զայսպիսեաց, որպէս և է իսկ ի մերումս ժամանակի, աւաղ և ինձ, որ գրեմս: Ուստի և Աղուանից կաթուղիկոսքն ևս (որոց և ախորժէին իսկ էր այսպիսի դիպուածք) թողին և մոռացան զուխտն և զկանօնն առաջին, որք և սկսան այնուհետև անձամբ առնուլ զպատիւ առանց հրամանաց փոխանորդացն Լուսաւորչին հինգ կաթուղիկոսքն, այսինքն՝ Սիմէօն, Դաւիթ, Սահակ, ընդ որով և ապստամբեցաւ Յակոբ եպիսկոպոսն Սիւնեաց, որ յետոյ հնազանդեցաւ յաւուրս տեառն Անանիայի, Գագիկ և Դաւիթ, որք յեպիսկոպոսաց առին զանկատարն ձեռնադրութիւն և յաւուրս հինգ կաթուղիկոսացն մերոց՝ Մաշտոցի, Յովհաննիսի, Ստեփաննոսի, Եղիսէի և Թէոդորոսի: Ապա ի նստիլն տեառն Անանիայի հայոց կաթուղիկոսի ի ԳՃՂ. (941) թուոջն

մեռում (ընդ որով և Աղուանիցն Սահակ վախճանի, դնեն և ի տեղին նոյնպէս անկա-տար ձեռնադրութեամբ զԳակիկ) գրէ Անանիա առ յիշխանսն Աղուանից և հրամայէ՝ մի՛ ընդունիլ զԳակիկ, որոց և լուեալ հնազանդեցան և ի բաց կացին ի Գակկայ և ապա միաբանեալ իսկ առաքեն զՅօնան եպիսկոպոս ումն առ Անանիայ, զի ձեռնա-դրեսցէ նոցա կաթուղիկոս, զոր և արարն իսկ: Սակայն ի դրդմանէ նախանձոտաց բարդեցաւ պէս պէս բարուրանս և բամբասանս ի վերայ Յօնանու և եղև մեծ խռովու-թիւն ի յԱղուանս վասն Գակկայ և Յօնանու, որf և երկուfն ևս խոտեցեալf լինէին:

Ապա հարկ լինի այնուհետև տեառն Անանիայի գնալ յԱղուանս առ ի գտանել զհնարն նոցին խաղաղութեան, որ և գնացեալ եւյժ զերկոսեանն ևս ի պատույն և դեռևս ոչ հաստատեալ զնորն խնդրեն զնա թագաւորն և իշխանfն հայոց փութով դառնալ անտի վասն հարկաւոր ինչ պատահման, որոյ և պայմանեալ Աղուանիցն, զի զկնի նորա առաfեսցեն զոմն արժանաւոր, զի ձեռնադրեսցէ նոցա կաթուղիկոս և նորա հաւատացեալ դարձաւ յԱղուանիցն և եկեալ ի Սիւնիս ի հնազանդել զապստամբն Յակոբ, յորմէ (173ա)խոյս տուեալ Յակոբայ մտանէ առ Ջուանշիր իշխանն իւրեանց և ոչ գայ առ կաթուղիկոսն: Վասն որոյ և բարկացեալ Անանիայի, fակէ զաթոռն Սիւնեաց, բանադրէ զՅակոբն և զիշխանն և իւfն դառնայ ի Հայս հոգոց հանելով և տրտմութեամբ: Եւ զկնի դարձման հայրապետին՝ վերստին ապստամբի Գակիկն և Յակոբն և մնայ նոյնպէս:

Ապա ի վերին խնամոցն ի հասանիլ թուին մեռոյ ի ԴՃէ. (958) վախճանին երկուfն ևս՝ Գակիկն և Յակոբն Սիւնեաց, զոր լուեալ տեառն Անանիայի գոհանայ զԱստուծոյ, որ եբարձ զպատճառսն խռովութեան: Վասն որոյ ելեալ գնայ ի Սիւնիս, որոյ և ընդ յառաջ ելեալ իշխանfն ամենայն և մեծաւ զղջմամբ մեղայ գոչելով խնդրեն զթողութիւն, որոյ և ներելով նոցա վերստին շինէ և հաստատէ զաթոռն նոցա և արձա-կեալ զՋուանշիր, զորդի նորին զՎահան ձեռնադրէ նոցա եպիսկոպոս և առնու ի Սիւ-նեաց զշարաշար նզովից ձեռնարկ, զի մի ևս ապստամբիցին յԱթոռոյ Լուսաւորչին, որպէս և են հնազանդ մինչև ցայսօր, զորս հառէ եկարապէս Ստեփաննոս պատմիչն Սիւնեաց: Եւ յետ այսր ամենայնի, մինչ կամ էր գնալ նորա յԱղուանս և զնոսա հնա-զանդել և խաղաղացուցանել անդրէն ևս վերստին գրեալ իշխանfն և թագաւորն հայոց դարձուցանեն փութով ի Հայս՝ վասն հարկաւոր ինչ պատահման: Իսկ ի լսելն Աղուանից իշխանացն զգալն տեառն Անանիայի ի Սիւնիս և զգործսն որf անդ և ի դառնալն, ապա մեծաւ զղջմամբ առաքեն առ նա զգիրս մեղայականս ընդ նմին և զԴաւիթ կրօնաւոր ումն ի Խոտակերաց վանից, զի ձեռնադրեսցէ նոցա կաթուղիկոս: Որ և կատարեալ զխնդիրս նոցա, առաfէ մեծաւ փառօf զԴաւիթ կաթուղիկոս Աղուանից՝ առնլով վերստին և ի նոցանէ զձեռնարկս նզովից, զի մի ևս շեղիցին և ապստամբիցին յԱթոռոյ Լուսաւորչին և զեպիսկոպոսաց ձեռնադրեալ կաթուղիկոս մի ընդունիցին:

Արդ մինչև ցայս վայր զորս գրեցաք ի ճշմարտապատում պատմագրացն՝ յԱգաթանգեղոսէ, ի Սիւնեաց, յԱղուանից, ի Ստեփաննոսի Տարօնացւոյն, ի Կիրակոսէ և ի թղթոցն Անանիայ կաթուղիկոսին ընկալաք: Յորս տեսցես զլիովինն, եթէ կամիս: Ուստի յայտնանեաց հաւաստապատում վկայութեանց, մինչև ցայս վայր ուսաք, թէ կաթուղիկոսքն Աղուանից հնազանդք են լեալք Լուսաւորչի փոխանորդ կաթուղիկոսացն ի բնէ անտի և ի նոցանէ են առեալ զօծումն, զպատիւն կաթուղիկոսական և քանիցս ձեռագիր են տուեալ կաթուղիկոսօք, եպիսկոպոսօք և իշխանօք, զի մի ևս հետիցին և զյեպիսկոպոսաց ձեռնադրեալ կաթուղիկոսն մի ընդունիցին, եթէ ոչ իցէ հրամանաւ Լուսաւորչի փոխանորդացն: Յորոց և ի հետոյն ոմանց լուծեցեալք են ի նոցունց, որպէս ցուցաւ: Բայց ի պատմագիրս Աղուանից ի տեղիս յոմանս, որպէս յառաջին հատորն ի Թ. (9) գլուխն ի յերրորդ հատորն, ի Ը. (8) գլուխն, յորս զԱղուանսն երիցագոյն դնէ, քան զՀայս և կամ թէև հայոց կաթուղիկոսն ևս ի յԱղուանից կաթուղիկոսէն պարտի ձեռնադրիլ և կամ թէ ի շարս կաթուղիկոսացն, որք նախքան զԳրիգորիս եօթն կաթուղիկոս դնէ իւրեանց և այլք այսպիսիք, սուտք են և յետոյ ներմուծեալք ի սևագլխաց Աղուանից: Որք և թուի, թէ Անանիա կաթուղիկոսն մեր, յորժամ գնաց յԱղուանս և խնդրեալ զպատմութիւնս կաթուղիկոսաց նոցա և ի ճշմարտելն զձեռնադրիլն կաթուղիկոսաց նոցին ի սրբոյն Գրիգորի փոխանորդացն ի բնէ անտի ի սրբոյն Գրիգորէ և յՈւռնայր արքայէն իւրեանց (որպէս յայտնապէս պատմեն Մօսէսն Աղուանից, Ստեփաննոսն Սիւնեաց և մեր Անանիա կաթուղիկոսն և Կիրակոս պատմիչն) և ի յանդիմանելն զնոսա և ափ ի բերան առնելն, ըստ իւրեանց պատմագրին, յայնմ հետէ այլայլեցին և ներմուծին ըստ ախորժակաց իւրեանց, որպէս և կամեցան, զի գիտելով զընդաբոյս բարս իւրեանց ի յապստամբութեանն կոյս և ի ննջիլն ի մերոց կաթուղիկոսաց զայսպիսիս առաջադրիցին, որպէս և եղեն իսկ ի մերումս ժամանակի: Իսկ և զՇուփհաղիդայ կաթուղիկոսն իւրեանց զոր ետ եղիշէի դնեն վեց կաթուղիկոսօք յառաջ քան զԳրիգորիս, յանդիմանի սուտութիւն նոցա ի պատմչէն իւրեանց, որ զսոյն Շուփհաղիդայս ընդ տասներորդ թագաւորին իւրեանց բարեպաշտի Վաչականայ դնէ, որ ընդ նմա ի խնդիր ելանեն (173բ) նշխարհաց սրբոյն Գրիգորիսի և զկանօնս սահմանեն, զոր տեսցես ի նոյն պատմագիրն յառաջին հատորն և ի ԻԶ. (26) գլուխն, զի ի շարս կաթուղիկոսաց նոցա այլ Շուփհաղիդոյ անուամբ կաթուղիկոս ոչ գոյ բաց ի միոյն:

Ապա յետ այսորիկ, որպէս ասացաք յառաջ ի զօրանալ տէրութեանն տաճկաց և ի յանտիրանալն ազգիս հայոց ոչ կարէին կաթուղիկոսքն հայոց ի միում տեղւոջ դադարիլ, այլ այսր և անդր տարագիր և անհանգիստ շրջէին ըստ ձեռնտուութեան ժամանակին և տեղւոյն, մինչ զի և յանգլխութենէ ազգիս և ի դառնութենէ ժամանակին ի բազումս բաժանեցաւ կաթուղիկոսութիւնն հայոց, որպէս ի յԱնի, ի յեգիպտոս, ի Սեբաստիայ, յՈւռհայ, ի Կասպ[ուրական] և յայլուր, որպէս տեսանես ի պատմա-

գիրս Կիրակոսի և Մատթէոսի: Բայց որք ըստ կարգի և արժանավայել կաթուղիկոսքն էին յայսմ միջոցի զկնի տեառն Անանիայի տէր Ստեփաննոս, տէր Խաչիկ, տէր Սարգիս, տէր Պետրոս, տէր Խաչիկ, տէր Վահրամ, որ և Գրիգորիս կոչեցաւ, տէր Բարսեղ և տէր Գրիգոր՝ եղբայր[I] Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյն, ընդ որով փոխեցաւ կաթուղիկոսարանն հայոց ի Կիլիկէ և բարձաւ խսպառ ի տանէս Հայոց յԱրարատեան գաւառէս ի ՇԿԵ. (1116) թուոջն մերում, որ լինի ի վախճանէն տեառն Անանիայի, մինչև ցայս վայր ՃԾ. (150) ամ, սակաւ ինչ աւելի և պակաս: Եւ յայսքան միջոցումս ի յԱղուանս նստան կաթուղիկոսք այսոքիկ, զկնի տեառն Դաւթի (որ յԱնանիայէ ձեռնադրեցաւ) տէր Պետրոս, տէր Մովսէս, տէր Մարկոս, տէր Յովսէփ, տէր Մարկոս, տէր Ստեփաննոս, տէր Յովհաննէս, տէր Ստեփաննոս միւս և տէր Գագիկ, որ Գրիգորիս կոչեցաւ: Արդ վասն վերոյ յիշեցելոց կաթուղիկոսացս Աղուանից թէպէտ յուստէք ոչ ունիմք հաւաստի զվճիռ, թէ ի մերոց վերոյ յիշեցելոց կաթուղիկոսացն իցեն ձեռնադրեցեալք բաց ի վերնոյն Դաւթէ, որ յԱնանիայէ ձեռնադրեցաւ, որպէս ասացաք, սակայն է ճշմարիտ և հաւաստի, զի հրամանաւ և եպիսկոպոսօք նոցին իցեն ընկալեալք զձեռնադրութիւնն, որպէս անա ի ՇԾԲ. (1103) թուոջն մերում ի յաւուրս վերոյ յիշեալ տեառն Բարսղի կաթուղիկոսին մերոյ ի վախճանիլ վերոյ յիշեցելոյ երկրորդի տեառն Ստեփաննոսի կաթուղիկոսին Աղուանից, Բարսեղ կաթուղիկոսն մեր զեպիսկոպոսս առաքեաց ի յԱղուանսն և գնացեալ անդ ըստ հրամանի նորին զժողովս արարեալ՝ ձեռնադրեցին կաթուղիկոս Աղուանից զեղբայր տեառն Ստեփաննոսի, որոյ և յետոյ անարժան երևեալ կոչմանն, լուծանի ի կարգէն և ընդ բանիւ լինի ի նոյնոյ Բարսղէ կաթուղիկոսէն հայոց, որպէս պատմէ Մատթէոս պատմիչն:

Ապա ի խառնակման ժամանակին մնան անկաթուղիկոս ազգն Աղուանից յամս Լ. (30) կամ աւելի և պակաս, մինչև վախճանի կաթուղիկոսն մեր Բարսեղ և յաջորդէ զաթոռն նորին տէր Գրիգոր Տղայ կոչեցեալն՝ եղբայր սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն ի ՇԿԵ. (1116) թուոջն մերում, որ և ի նեղութենէ ժամանակին և յանկարգ գնացից տաճկաց հարկեցեալ փոխեաց զկաթուղիկոսարանս հայոց ի Հռոմկլայն: Եւ ի ԻԳ. (23) յամի կաթուղիկոսութեանն սորին (որ էր թուականն մեր ՇՁԸ. (1139)) ապա պատանի մի էր յԱղուանս, որոյ անունն էր Գագիկ յազգէ կաթուղիկոսացն, որոյ ի չափ հասանիլն, գրեն երկիրն Աղուանից զթուղթս մաղթանաց ի Հռոմկլայն առ մեծ կաթուղիկոսն հայոց տէր Գրիգոր և ընդ թղթոյն առաքեն զաբեղայ մի, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս և ընդ նման զայլս ևս եպիսկոպոսս եղեալ առաքեսցէ յԱղուանս, զի եկեալ ձեռնադրեսցեն զԳագիկն կաթուղիկոս Աղուանից, զի մի մնասցէ երկիրն իւրեանց թարց կաթուղիկոսի, որոց աղաչանացն լուեալ մեծին Գրիգորի, ձեռնադրէ

[I] Բ. > եղբայր

զառաճեալն նոցա եպիսկոպոս և հրամայէ Կարնոյ Սահակ եպիսկոպոսին, ընդ որում ելեալ գան յԱղուանս ի Գանձակ և անդ ժողովեալ և զայլս եպիսկոպոսունս ձեռնադրեն զԳակիկն կաթուղիկոս ըստ հրամանի տեառն Գրիգորի, որք և զԳակիկն կոչեն Գրիգորիս, ըստ անուան Գրիգո(174ա)րիսի թոռանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ըստ պատմութեանն Կիրակոսի վարդապետին: Արդ, մինչև ցայս վայր ցուցաւ հաւաստապէս, զի յորքան ժամանակս կաթուղիկոսքն հայոց նստէին յերկիրս Հայոց ի բնիկ և ի սեպհական յԱթոռն Լուսաւորչին, կաթուղիկոսքն Աղուանից միշտ ընդ ձեռամբ սոցին են լեալք և հրամանաւ սոցին են ձեռնադրեցեալք: Իսկ ի փոխիլն ի Հռոմկլայն և ի Սիս կաթուղիկոսութիւնն հայոց, ոչ է զարմանք, եթէ ապստամբեալք ի նոցունց ինքնագլուխ նստան այնուհետև կաթուղիկոսքն Աղուանից:

Քանզի և ի Հայս ևս շատք և գլխաւորք վարդապետք ոչ այնքան հնազանդ էին ի Սիս նստօղ կաթուղիկոսացն, որպէս յայտնի երևի ի պատմագրաց, որպէս և ներհակ նոցին յԱղթամար ևս զկաթուղիկոս նստուցին, զի ի շարժիլ հիմանն ի հարկէ շարժին և շինուածքն, որք ի վերայ նորա: Այս եղև ի ՇԿԵ. (1116) թուոջն մերում, յորմէ մինչև ի ՊԴ. (1441) թիւն մեր կաթուղիկոսքն հայոց ի Հռոմկլայն և ի Սիս նստան, յորում միջոցի Սուրբ էջմիածին կայր անշքացեալ և ամայի: Ի Գրիգորէ, որ փոխեաց զԱթոռն ի Սիս, մինչև ի Կիրակոս են ամք 325 և կաթուղիկոսք մեր, որք նստան ի Սիս՝ 29: Եւ Աղուանիցն զկնի Գագկայ՝ տէր Բժկէն, տէր Ստեփաննոս, տէր Յովանէս, տէր Ներսէս, տէր Ստեփաննոս, տէր Սուքիաս, տէր Պետրոս, տէր Կարապետ, տէր Մատթէոս, տէր Աթանաս և տէր Յովհաննէս, որք յաւուրս ԻԹ. (29) կաթուղիկոսացն մերոց նստան ի յԱղուանս: Ապա ի յաւուրս սորա և ի ՊԴ. (1441) թուոջն մերում, ողորմութեամբն Աստուծոյ, վերանորոգեցաւ Սուրբ էջմիածին և աշխարհախումբ հանդիսիւ նստաւ կաթուղիկոս ի յէջմիածին՝ Կիրակոս եզնազգեաց վարդապետն Վիրապեցի: Աստի ևս, մինչև ի ՌՀԸ. (1629) թիւն մեր, յորում նստաւ ի Սուրբ էջմիածին Մօսէս կաթուղիկոսն Սիւնեցի, թէպէտ նստան ի Սուրբ էջմիածին կաթուղիկոսք յոլովք, սակայն ոչ ինչ ունիմք հաւաստի ասելոյ զեղելոցն ընդ նոցին ժամանակօքն վասն կաթուղիկոսացն Աղուանից:

Քանզի կարի մրրկալից, աղմկաշատք և ձախորդաբերք էին ժամանակք նոցին յամենայն կողմանէ, զի իշխանութիւն և տէրութիւն ազգիս մերոյ իսպառ անհետացեալ էր և այլազգական տէրութիւնն ևս անկանօն և փոփոխական, զի ոչ գոյր հաստատուն և բնիկ թագաւորութիւնն և իշխօղքն ոչ էին թագաւորազունք, այլ աստի և անտի յարուցեալք և զօրացեալք զմիմեանս հալածէին և ուժեղն անուժին յաղթեալ՝ յինքն գրաւէր զիշխանութիւնն, որպէս պատմեն Կիրակոս և Թօմա և այլք պատմիչք: Նոյնպէս և կաթուղիկոսքն մեր ևս թէ՛ ի տկարութենէ, թէ՛ ի պահանջմանէ հարկին և թէ՛ յախտէ իմէքէ յաղթեցեալք ընդ միմեամբք ելանէին, մինչ զի Ե. (5) և Զ. (6) և այլ աւելի և պակաս կաթուղիկոսք ի միում ժամանակի նստէին: Վասն որոյ չէ զարմանք, եթէ յայնպիսի

ժամանակսն ոչ լինիցի խուզումն և վերահասումն այսպիսեաց կանօնաց և կարգաց: Արդ, եթէ մերն այսպէս, ապա զԱղուանիցն դու մտածեա՛, թէ ոպէ՞ս իցեն լեալք, որք յայսման միջոցի նստան, որք են զկնի տեառն Յովանիսի՝ տէր Մատթէոս, տէր Արիստակէս, տէր Ներսէս, տէր Շմաւօն, տէր Թօմա, տէր Առաքել, տէր Արիստակէս, տէր Սարգիս, տէր Գրիգոր, որ ուրանայ զՔրիստոս, տէր Դաւիթ, որ խեխդեցաւ, տէր Փիլիպպոս, տէր Յովանէս, տէր Շմաւօն, տէր Արիստակէս, տէր Մելքիսէթ, տէր Սիմէօն և տէր Յովանէս: Իսկ մեր կաթուղիկոսն յայս միջոցիս տե՛ս ի վերդ ի [Գ.] (3) գլուխն: Ի նոցունց միայն Միքայէլ կաթուղիկոսն մեր, որ ի ՌԶ. (1557) թուոջն մերում նստաւ, եհան զլաւ ռաղամ մի ի շահ Թահմազէն վասն Կէնճէու, Պարտայու և Ախստեւու, Լոռու, Ջակամներու, այլև՝ Նախիջևանու, Գեղարքունեայ, Ղաքանու, Խօյայ և Սալմաստու, զի էջմիածնի լիցին վինակք, որպէս գրեցաւ ի Բ. (2) գլուխն[220]: Ջռաղամն գացեւ ցուցակաւն և ( ) նշանաւ: Ապա ի ՌՀԸ. (1629) թուոջն մերում, յարժամ ի Հոգւոյն սրբոյ յառաջադրի երանելի և հռաշագործն Մօսէս Սիւնեցին և նստի կաթուղիկոս ի Սուրբ Աթոռս էջմիածին, յորժամ և երկիրս մեր ևս կարգաւորեցեալ էր հաստատուն թագաւորութեամբ Պարսից, յորում թագաւոր իւր աշխարհաշէն և խաղաղասէրն շահ Ապաս երկրորդն կոչեցեալ, յորում ժամանակի, որպէս թէ ի հիմանէ և նոր ի նորոյ հաստատեցաւ Աթոռս հայոց Սուրբ էջմիածին և սկսաւ օրստօրէ զտանել զառաջին կարգն և առաւելապէս պայծառանալ, որպէս ցուցաւ յիւրումն տեղւոջ: Բայց որովհետև ի չորս ամս հազիւ տևեաց երանելիս ի հայրապետութեանն, վասն որոյ զՍուրբ Աթոռս և զազգս և զեկեղեցիս մեր հազիւ կարաց կարգաւորել, որք որպէս թէ բոլորովին և յամենայն կողմանէ զրկեցեալք էին ի բարեկարգութենէ: Ապա ի վախճանիլն երանելոյս ի ՌՁԲ. (1633) թուոջն մերում և ի յաջորդելն զԱթոռս սուրբ հարազատի նորին փառաւորելոյն յԱստուծոյ և ի մարդկանէ երջանկին Փիլիպպոսի Հաղբակեցւոյ, որոյ և ի լցուցանելն յամենայնի զթերութիւն և պակասութիւն Սրբոյ Աթոռոյս էջմիածնի և ազգիս հայոց և յամենայնի բարեզարդելն, ձեռն էարկ ապա և զվաղնջուց կանօնսն և զկարգադրութիւնսն (որք լեալք են ի Հայս և յԱղուանս, որք ի յոլով ժամանակս որպէս թէ աննետացեալք և ի մոռացմնս էին անկեալք) վերանորոգել և հաստատել յորդորմամբ սիրոյ և Աստուածահաճոյ խրատիւք:

Քանզի յետ վախճանման տեառն Մօսիսի, յորժամ ընտրեցաւ երանելիս այս յԱստուծոյ և յազգէս հայոց ի հայրապետութիւն, գրէ զգիրս սիրոյ առ յԱղուանս, ընդ նմին և ծանուցանէ նոցա զմահ տեառն Մօսիսի և զընտրիլն իւր և հրաւիրէ զնոսա ի յԱթոռս Սուրբ՝ ի վայելումն շնորհաբաշխութեան սրբալոյս Մեռոնին, զոր հանդերձեալ (174բ) էր օրհնել և ի տեսութիւն իւրեան: Յայնմ միջոցի պատահի և մահ նոցին կաթուղիկոսի տեառն Յովանիսի: Վասն որոյ ի յոչ գալն նոցա և ոչ զպատասխանի գրելն, վերստին գրէ զգիրս առ նոսա սիրախառն ոճով զմեղադրանս և զմխիթարանս

վասն մահուան կաթուղիկոսին իւրեանց, ընդ նմին և զկանօնական խրատս տասն գլխով վասն ընտրութեան կաթուղիկոսացուին, թէ որպէս պարտի գոլ, յորում և վեր- ջապէս գրէ, զի զայնպիսի արժանաւոր nf գտեալ՝ առեալ վարդապետօf և իշխանօf եկեսցեն ի Սուրբ Աթոռս, զի աստ առեալ զօծումն կաթուղիկոսութեան գնասցէ փառօf ի վիճակն իւր ըստ կանօնի և ըստ սովորութեան նախնեացն, զորս և յորդորէ ի սոյն կանօնի կալ և մնալ անխոտոր և զկաթուղիկոսունս էջմիածնի իբրև զպապ և զհայր գիտել և զկաթուղիկոսունս իւրեանց իբրև թոռն և զորդի նորին։ Զայս գիրս գրէ երա- նելին Փիլիպպոս առ յԱղուանս ի ՌՁԳ. (1634) թուչն մերում (որոյ օրինակն ահա կայ ի Սուրբ Աթոռս) և իսկն առ Յովանէս կաթուղիկոսն է։ Ուստի և Աղուանf ի նոյն ՌՁԳ. (1634) թուին, ըստ հրամանի տեառն Փիլիպպոսի դնեն կաթուղիկոս յԱթոռն Գանձասար զտէր Գրիգոր և յայսմ ամի և ժողովուրդfն Խաչէնու և բոլոր վիճակfն Աղուանից արզ գրեն շահ Սէֆուն, թէ ի բնէ մեf էջմիածնի եմf վիճակf և այժմ կամիմf լինիլ, Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ (մեր) մի իշխեսցէ[221]։ Եւ շահն հրաման հանէ, զի էջմիածնի լիցին հնազանդf և նմա տայցեն զնուիրակութիւնս։ Գոյ ահա ի Սուրբ Աթոռս այս ռաղամս, զոր գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համարով գրեցեալ ի թուին տանկաց ՌԽԴ. (1634)։ Սոյնպէս և յետ ԺԶ. (16) ամի, բոլոր ժողո- վուրդfն Շիրվանու և Շամախու երկրին արզ առնեն երկրորդ շահ Ապասին, թէ մեf ի բնէ էջմիածնի եմf եղեալf վիճակ և զմեր նուիրակութիւնն նմա եմf տուեալ, նոյնպէս և այժմ կամիմf և Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ մեր մի իշխեսցէ։ Եւ շահն ևս ռա- ղամ գրէ, զի այսպէս լիցի ի տանկաց թուին ՌԿ. (1650) ի ժամանակս Փիլիպպոս կա- թուղիկոսին[222]։ Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշա- նաւն։ Ապա և սոյն Գրիգորս ի ՌՃԲ. (1653) թուչն վախճանի և հրամանաւ նոյնոյ տեառն Փիլիպպոսի նստի յԱթոռն Աղուանից տէր Պետրոս ի նոյն թուչն[223]։ Եւ ի ՌՃԴ. (1655) թուչն մերում վախճանի տէր Փիլիպպոս և նստի յԱթոռս հայոց տէր Յակոբ Ջուղայեցին և յաւուրս սորա ի ՌՃԻԴ. (1675) թուին, մինչ սա ի Ղազվին[224] fաղաfն էր ... ի Ջուղայ, վախճանի տէր Պետրոս կաթուղիկոսն Աղուանից և նստի յԱղուանս Սիմօն ինfնըընծայ և անձնահաճ լրբութեամբ թurg հրամանի տեառն Յակո- բայ և մանաւանդ թողլով զաթոռն Գանձասար ժողովեալ զինչս և զարդիւնս աթոռոյն ի գեօղն իւր և անդ նստի յենլով ի յայլազգ իշխօղ գեղջն իւրոյ։ Վասն որոյ և Յակոբ կաթուղիկոսն բանադրէ զսա և կոչեալ զաբեղայ մի յԱղուանից Երեմիա անուն, որում ևս ի միում նուագի տայ զեպիսկոպոսութիւն և ձեռնադրէ զնա կաթուղիկոս և առաfէ ի յԱղուանս ի Գանձասար յաթոռն նոցա, զոր թէպէտ ընդունին բոլոր վիճակfն, սա- կայն ոչ լռէ բանադրեցեալն Սիմօն, վասն որոյ ոչ սակաւ լինի կռիւ և խռովութիւն ի մէջ Երեմիայի և Սիմօնի և աղմուկ ի յերկիրն։ Եւ Յակոբ կաթուղիկոսն ևս ոչ սակաւ ջանայ և համոզէ ի խաղաղութիւն, մինչ զերկուսն ևս բերէ ի Սուրբ Աթոռս էջմիածին և

յետ բազմիցս խրատելոյն առնու զձեռագիր ի Սիմօնէն ճզովիւք հանդերձ, զի լռեսցի ի կաթուղիկոսական գործոց, այսինքն՝ յեպիսկոպոս ձեռնադրելոյ և ի մեռոն օրհնելոյ, այլև յազգականաց իւրոց մի ևս լինիցի ոք կաթուղիկոս[225]:

Քանզի այս թիւր և անկանօն սովորութիւնս յառաջնմէ և նարդեանս ևս գոյ յԱղուանս և ի Սիւս ևս, զի ազգականք կաթուղիկոսացն յառաջադրեն զինքեանս ի կաթուղիկոսութիւն, որպէս զհայրենի ժառանգութիւն համարելով իւրեանց, յորմէ ոչ սակաւ ծնանին կռիւք ի յազգականսն և երկնդութիւն և խռովութիւն ի ժողովուրդսն: Ջայսպիսի գիր մի գրէ Սիմօնն և կնքէ և կնքեցուցանէ ևս քանեաց իւրայնոց եպիսկոպոսաց և տայ Յակոբայ կաթուղիկոսին ի ՌՃԻՁ. (1677) թուոջն մերում, որ ահա նոյն գիրն կայ ի Սուրբ Աթոռոջս: Եւ թէպէտ այսպէս առնէ կաթուղիկոսն Յակոբ, սակայն և այսու ոչ վերջանայ վէճ և կռիւն նոցա, մինչ մեռանի Յակոբ կաթուղիկոսն և յաջորդէ զտեղին Եղիազարն Հռոմկլայեցի ի ՌՃԼ. (1681) թուոջն մերում:

Ապա հասանի բողոքն Սիմօնին և Երեմիային յականջն Եղիազար կաթուղիկոսին և սկսանին զսա զգուեցուցանել և բազմիցս ցաւեցուցանել: Վասն որոյ և սա գրէ քանիցս և յանդիմանէ զՍիմօնն և հրամայէ լռել և յոչ լռելն նորա, բերէ զերկոսեանն ևս յԱթոռս էջմիածին և առաջի սրբոյ Իջման տեղւոյն բազմաժողով սիւնհոդոսիւ և սոսկալի երդմամբ հաշտեցուցանէ զերկուսն ընդ միմեանս և կանօնադրէ, զի ի միասին նստիցին ի յաթոռն Գանձասար, զՄեռոն և զեպիսկոպոս ի միասին ձեռնադրեսցեն և թարց միմեանց և արտաքոյ Աթոռոյն ոչ ձեռնադրութիւն առնիցեն և ոչ Մեռոն օրհնիցին և զարդիւնս աթոռոյն ի միասին առեալ (175ա) ի պէտս աթոռոյն արկցեն ի գործ և վասն անձնական ախտից և յազգականս իւրեանց մի վատնեսցեն: Եւ զայլս այսպիսիս կանօնս ի վերայ եդեալ՝ առաքէ զնոսա յԱղուանս: Գրէ և առ ժողովուրդսն, զի եթէ այսոքիւք կանօնիւք մնայցեն, ընդունիցեն զնոսա և թէ մին ի նոցանէ շեղիցի, մի ընդունիցին զնա: Սակայն ևս շեղի և յամառի Սիմօնն, յորմէ գրեն քանիցս զգիրս գանգատանաց առ Եղիազարն: Վասն որոյ և Եղիազարն գրէ՝ մի ընդունիլ զՍիմօնն, այլ զԵրեմիայն միայն, որք ահա նոյնոց թղթոց օրինակքն Եղիազարու կան յԱթոռոջս: Նոյնպէս և բոլոր երկիրն Աղուանից ժողովս արարեալ կարգաւորօք և աշխարհականօք խոտեն և ընկենուն զՍիմօնն ըստ գրեցելոյն Եղիազարու և ընդունին զԵրեմիայն, որոց բազմակնիք թուղթքն առ Յովանէս կաթուղիկոսն է և օրինակն ահա գոյ յԱթոռոջս[226]:

Մեռանի Եղիազարն[I] ի ՌՃԵ. (1656)[227] թուոջն մերում[II] և յաջորդէ զտեղին Նահապետն Ուրհայեցի ի նոյն թուոջն: Իսկ Սիմօնն և Երեմիայն մնան հակառակք միմեանց և աղմկեալ երկրօքն, մինչև ի ՌՃԽԹ. (1700) թուոջն Երեմիայն մեռանի և ի

[I] Բ. > Եղիազարն
[II] Բ. > մերում

ՌՃԾ. (1701) թուոջն Սիմոնն մեռանի յաւուրս Նահապետ կաթուղիկոսին մերոյ[228]: Ապա յետ վախճանի երկուցն հազիւ թէ սկսեալ էր զխաղաղութիւն գտանել երկիրն նոցա Եսայի ոմն անդէն ինքնընծայ լինի և նստի կաթուղիկոս յԱղուանս ի ՌՃԾԱ. (1702) թուոջն` թարց գիտութեան և հրամանի Նահապետ կաթուղիկոսին մերոյ[229]: Առ յորս գրէ զթուղթս մեղադրանաց Նահապետ կաթուղիկոսն և հարկէ գալ ի Սուրբ Աթոռս Եսայի կաթուղիկոս կոչեցելոյն: Եւ նորա թէ՛ ի յանցաւոր գոլոյն, թէ՛ ի յաղքատութեանց և ի պարտուց և ի պակասութեանց իւրեան և Աթոռոյն և թէ՛ վասն ինքնագլուխ նստելոյն յանընդունակ լինիլն ևս ի բազմաց հարկեցեալ խոնարհի և գայ ի Սուրբ Էջմիածին ի յոտս Նահապետին և զինքն ենթադրէ իշխանութեան նորա: Եւ Նահապետն ևս սիրով ընկալեալ վերստին կաթուղիկոս հաստատէ և առաքէ յԱղուանս, գրելով և զկոնդակս յանձնարարականս և պատուիրականս առ երկիրն, զի ամենեքեան հնազանդութեամբ ընդունիցին զԵսային ի կաթուղիկոս իւրեանց և զամենայն արդիւնս Աթոռոյն ի նա հասուսցեն, օգնելով և պարտուցն ի ՌՃԾԲ. (1703) թուոջն մերում, որ ահա նոյն կոնդակի օրինակն կայ ի Սուրբ Աթոռոջս: Բայց, որպէս ոչ կարէ երկիր աղտաղտին զջուր քաղցր ունիլ, նոյնպէս և երկիրն Աղուանից և սևագլուխք նոցին զխաղաղութիւն և զմիութիւն պահել:

Քանզի ի մեռանիլն Նահապետ կաթուղիկոսին մերոյ ի ՌՃԾԴ. (1705) թուոջն, մինչ անկաթուղիկոս մնաց Սուրբ Աթոռս ԺԶ. (16) ամսոց չափ ի հինգերորդ ամի կաթուղիկոսութեան Եսայեայ Ներսէս անուն ոմն սևագլուխ յազգէ վերոյ յիշեցեալ բանադրեցեալ Սիմոն կաթուղիկոսին ի յԱղուանս կաշառօք և խաբէութեամբ օծանի կաթուղիկոս խոչ և սատան Եսայեայ ի ՌՃԾԵ. (1706) թուոջն մերում: Սա էհաս յաւուրս մեր, որ և զգլուխս մեր թէ որքան ցաւեցուցման եղև պատճառ ի տեղւոջն ասասցուք և սա իսկ եղև պատճառ այսքան երկարացուցման ճառիս Աղուանից, որպէս տեսանելոց ես այսուհետև մինչև ի կատարածն զորպիսութիւն սորին: Տե՛ս դու արդ զքանեօք եղանակօք անհամութիւն և ապօրինաւորութիւն Ներսէսիս այսմիկ նախ, զի ի կենդանութեանն Եսայեայ օծանի, երկրորդ թարց հաւանութեան երկրին և հրամանի Էջմիածնի կաթուղիկոսացն ինքնագլուխ, երրորդ, զի ի ներքոյ նզովից և դատապարտութեան գոլով, քանզի նախնին սորա Սիմոն ձեռագիր էր տուեալ Յակոբ կաթուղիկոսին (որպէս ի վերդ յիշեցաւ), զի յազգէն իւրմէ կաթուղիկոս մի նստիցի վասն ազգականութեան:

Ապա ի գալ առաջիկայ ամին, յորում թիւն մեր եղև ՌՃԾԶ. (1707) ընտրեցաւ կաթուղիկոս հայոց Աղէքսանդր Ջուղայեցի և եկեալ նստաւ յԱթոռս Էջմիածին և իմացաւ զլրբութիւն Ներսիսի ապօրինաւորին և երկիրն Աղուանից ևս գանգատական բազմակնիք թղթովք ծանուցանեն սմա: Վասն որոյ և սա հրամայէ հարկիւ, զի երկուքն ևս գայցեն ի յԱթոռս ի յատեան, որք և եկին և մեծահանդէս ժողով արարեալ Աղէքսանդրի առաջի սրբոյ Իջման տեղւոյն և ի քննութիւն մտեալ գտանէ զՆերսէսն ամենայնիւ

պարտաւոր և դատապարտելի: Վասն որոյ և ի հանդիսին հանդերձ բազմօք եպիսկոպոսօք (175ք) շարաշար բանադրէ զնա և լուծանէ ի կարգէն, որ և գրէ ի նոյն ՌՃԾԶ. (1707) թուղշն զկոնդակսն կանոնականս, որով և հաստատելով զնախնական ի Լուսաւորչէ անտի զկանօնսն (որ ի սրբոյն Գրիգորի փոխանորդացն առնուին զձեռնադրութիւնն կաթուղիկոսքն Աղուանից) և մեղադրելով զնոսա ի նոյնս վերահաստատէ և զԵսային նորոգ կաթուղիկոս հաստատէ և առաքէ առ նոսա գրելով, թէ զերկրորդ Բակուր-Ներսէսն բանադրեցաք և զԵսային կարգեցաք, այսուհետև դմա հնազանդիլ պարտիք և ի Ներսեսին ի բաց կալ: Գրէ և յատուկ զթուղթս բանադրանաց (բաց ի յայս կոնդակէս, զոր յիշեցաք), զոր ինքն կնքեալ, կնքեն և գլխաւոր եպիսկոպոսքն Աթոռոյս և երկրիս և առաքէ յԱղուանս, զոր և Աղուանից եպիսկոպոսքն կնքեն: Իսկ ի յոչ դադարիլն Ներսիսին ի չարութենէ վերստին ի ՌՃԾԷ. (1708) թուղշն գրէ կոնդակ մի ևս սոյն Աղէքսանդր կաթուղիկոսն ի յԱղուանս, յորում վերստին բանադրէ զՆերսէսն՝ Նեռն կոչելով և զընդունօղսն նորա և զձեռնադրեցեալսն ի նմանէ նեռնական և մեղադրէ զառաջնորդս և զիշխանս երկրին, որք սիրեն զնա և զկողմն նորա պահեն: Եւ վերահաստատէ զԵսային մեծաւ պատուիրմամբ: Յիշէ և զկանօնն նախկին, որ ի սրբոյն Գրիգորէ անտի կաթուղիկոսքն Աղուանից ի յԷջմիածնանիստ կաթուղիկոսացն առնուին զկարգն, ըստ օրինակի սրբոյն Գրիգորիսի թոռինն Լուսաւորչի[230]: Այլև ի սոյն թուղշս սոյն Աղէքսանդր կաթուղիկոս գրէ զկոնդակ մի ևս յատկապէս ի վերայ Շամախու, Շիրվանու և շրջակայիցն, թէ թէպէտ դուք բնական Սրբոյ Էջմիածնի էք վիճակ և տէրունի, սակայն առաջին կաթուղիկոսքն մեր Գանձասարու Աթոռոյն են շնորհեալ վասն աղքատութեան նորին: Վասն որոյ ի սէր եղբօր մերոյ Եսայի կաթուղիկոսին և վասն աղքատութեան և պարտուց Գանձասարու աթոռոյն զՁեզ և ես շնորհեցի, զի զձեր արդիւնսն նուիրականն Եսայի կաթուղիկոսին տայցէք, իբր մեզ համարելով հասեալ: (Եւ այս վերոյ յիշեցեալ չորեքկին թուղթս առ Յովանէս կաթուղիկոսն են և օրինակքն ահա գոն ի Սուրբ Աթոռոջս):

Այլև ի ժամանակս յայսոսիկ նոյնպէս արզ առնեն շահ Սուլթան Հիւսէինին բոլոր Շիրվանու և Շամախու ժողովուրդքն, թէ մեք ի բնէ Էջմիածնի եմք լեալք թէմ և զնուիրակութիւնս մեր նորին կաթուղիկոսացն եմք տուեալ, Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ մեր մի իշխեսցէ: Եւ շահն ևս ռաղամ գրէ սաստիկ հրամանաւ, զի այսպէս լիցի ի ՌՃԿԱ. (1712) թուին տանկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ՄԿԳ. (263) համար նշանաւն: Ապա ի ՌՃԿԳ. (1714) թուղշն մեռում վախճանի Աղէքսանդր կաթուղիկոսն և յաջորդէ զԱթոռս սուրբ տէր Աստուածատուրն Համադանցի: Եւ Ներսէսն մնայ բանադրեցեալ և անզեղջ: Իսկ և Եսային թէ՛ ի խառնակմանց ժամանակին և թէ՛ ի բարձրավզութենէ, ոչ գայ երկար միջոցաւ առ Աստուածատուր կաթուղիկոսն մեր ի տեսութիւն, որպէս և սովորութիւն էր, զի ի նոր նստիլ կաթուղիկոսին Էջմիածնի,

Աղուանից կաթուղիկոսն գայր ի շնորհաւորել և ի տեսութիւն և մանաւանդ սմա շատ հարկաւոր էր և պարտ գալ, մտածելով զերախտիսն Աղէքսանդր կաթուղիկոսին և մանաւանդ ներհակն իւր Ներսէսն կայր իսկ հակառակ ինքեան: Վասն որոյ և Աստուածատուր կաթուղիկոսն մեր ևս բարկացեալ ի չգալն նորա, վերստին տէրունի առնէ զՇամախի, զՇիրվան, զՇաքի և զշրջակայսն սոցա և յինքն գրաւէ, որպէս յառաջն լեալ էր և Աղէքսանդր կաթուղիկոսն Գանձասարու էր շնորհեալ, որպէս ի վերդ յիշեցաւ, զորս և Աստուածատուրս վերստին զաւթէ և ինքն առաքէ առ նոսա նուիրակ և առաջնորդ հանդերձ սրբով մեռոնաւ, որպէս ի մերումս ժամանակի ի ՌՄԺԴ. (1765) թուոջս ի Շամախեցւոց քանեաց հնազունից արանց լուաք, որք այնու ժամանակաւն լեալ՝ տեսեալ իսկ էին զնուիրակն և զառաջնորդն Շամախու ի Սրբոյ էջմիածնայ գնացեալ հանդերձ մեռոնիւ: Եւ տէր Զաքարիայ Աւագ քահանայն Շամախու ինքնին իւրով բերանովն պատմեաց մեզ, թէ ես զերկու աստիճանն իմ ի էջմիածնի նուիրակէն առի, որ առաջնորդ էր մեզ: Ապա ի ՌՃԿԸ. (1719) թուոջն մեռում Եսայի կաթուղիկոսն խոնարհեալ և մանաւանդ հարկեցեալ իսկ յաղքատութենէ գայ ի Սուրբ Աթոռս ի յոտս Աստուածատուր կաթուղիկոսին և խոստովանելով զյանցանս պատմէ զաղէտս աղքատութեան և զի ներքոյ բազմաց պարտուց անկանիլն գթացեալ ի նա Աստուածատուր կաթուղիկոսին, զկոնդակ մի շնորհէ նմա ի վերայ Շամախու և շրջակայիցն, զի ընկալցին զԵսայի կաթուղիկոսն և զնուիրականն արդիւնսն ի նա յանձնեսցեն, որպէս նուիրակի ի Սրբոյ էջմիածնէ գնացելոյ: Սակայն և այսու ոչ լինի ընկալեցեալ ի նոցունց Եսային, զի պատասխանեն երկիրն, թէ մեք էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու ոչ ունիմք զպարտս: Ուստի Եսային վերստին հարկեցեալ գայ ի Սուրբ էջմիածին առ Աստուածատուրն խնդրել զօգնութիւն ի ՌՃՀ. (1721) թուոջն մերում:

(176ա) Ապա և Աստուածատուր կաթուղիկոսն կրկին գրէ զկոնդակ ի վերայ Շամախու, Շաքու, Ղաբալու[231] և այլոց շրջակայիցն՝ ծանուցանելով նոցա զկանոնս ի սրբոյն Գրիգորէ անտի, թէ Աղուանից կաթուղիկոսքն, որպէս թոռն և որդի հնազանդ են լեալ Լուսաւորչի փոխանորդացն և նոքա ևս զնոսա, որպէս զորդի ի խնամս են պահեալ և օգնական են լեալ յամենայնի, իսկ երբեմն, եթէ ոմանք ապստամբք են գտանեցեալք ի դոցանէ զմէնջ, մեք ևս զխնամս մեր եմք բարձեալ ի դոցանէ, որպէս և առ ժամանակս մեր, մինչև ցայժմ Եսայի կաթուղիկոսն հեռացեալ էր ի յորդիութենէ, մեք ևս զհայրական խնամս մեր բառնալով՝ զձեզ տէրունի արարաք, այժմ որովհետև վերադարձաւ առ մեզ ի հնազանդութիւն, վասն որոյ և մեք վերանորոգեցաք զվաղեմի հայրական սէրս մեր և զձեզ վերստին շնորհեցաք եղբօր մերոյ Եսայի կաթուղիկոսիդ, թէպէտ մեր էիք բնական և մեր էք, սակայն մեք մերով կամաւ և յօժարութեամբ դմա շնորհեցաք ի սէր դորին և վասն աղքատութեան Գանձասարու Աթոռոյն: Այսուհետև պարտիք հնազանդիլ և ընդունիլ զԵսայի կաթուղիկոսդ ձեր, որում ներհակքն մեզ են

ներհակք և այլ այսպիսիք: Ջկոնդակ մի ևս գրէ ի վերայ Կէնճայու եկամուտ ժողովրդոց և վաճառականացն, որք պատճառելով, թէ ի Սուրբ էջմիածնի թեմէն եմք, զարդիւնս ինչ ոչ տային եսայի կաթուղիկոսին, թէ որովհետև և միճակս Գանձասարու էք գտանեցեալք ի ներկայումս զկտակ, զհոգեբաժին և զայլս այսպիսիս հասս տուք եսայի կաթուղիկոսիդ, զի ի դա հասեալն, որպէս թէ մեզ է հասեալ: Ջկոնդակ մի ևս ժողովարարութեան ի վերայ Նախիջևանու, Գողթնեաց, Ղափանու և Թիֆլիզու տայ եսայի կաթուղիկոսին, զի զկամաւոր ողորմութիւնս տալով օգնեսցեն պարտուց նորին: Եւ այս վերոյ գրեցեալ չորեքկին կոնդակաց զմիոյ օրինակն միայն առաք, իսկ երիցն ոչ, որք այժմ առ Յովաննէս կաթուղիկոսն են:

Ապա ի ՌՃՀԴ. (1725) թուոջն մեռում վախճանի Աստուածատուր կաթուղիկոսն մեր, և եսայի կաթուղիկոսն Աղուանից այսպէս ի հնազանդութեան կացեալ և սա վախճանի ի գալ ամին ի ՌՃՀԵ. (1726) թուոջն: Իսկ բանադրեցեալն Ներսէս, մինչև ցայս վայր մնայր ի ներքոյ կապից և տարագիր աստ և անդ: Իսկ ի յայսոսիկ ժամանակս կարի վրդովեցաւ երկիրս Արևելեան, զի զօրքն Լեկզեաց[232] եկին առին զՇամախի և զշրջակայ երկիրն և զԳանձասարու աթոռն կողոպտեցին: Ի Ղանդահարու[233] ազգն Աղուանից զերկիրն Խորասանու և զթագաւորանիստ քաղաքն պարսից առին և տիրեցին: Ռուսքն[234] զԳիլանու երկիրն առին: Օսմանցիքն զերկիրս Արարատեան, զՆախիջևան, զԴաւրէժ, մինչև ի Համատան, զԹիֆլիզ, զԿենճէ և զայլս կողմունսն զայնոսիկ առին: Եւ այլովք այսպիսեօք յարուցմամբք կայր վրդովեցեալ կողմունքս այսոքիկ: Եւ ի ՌՃՀԵ. (1726) թուոջն մինչ մեռաւ եսայի կաթուղիկոսն Աղուանից և երկիրն ևս անկաթուղիկոս մնաց, Ներսէսն այն բանադրեցեալ սկսանի գալ յառաջ և վարել զկաթուղիկոսութիւն երկրին ոչ ինչ խղճահարեցեալ ի բանադրեցեալ գոլոյն և անհաստատ և վայրենաբարոյ երկիրն Աղուանից ևս ընդունին ոչ ինչ առնելով զփոյթ:

Իսկ ի սոյն ՌՃՀԵ. (1726) թուոջս նստի և յԱթոռս էջմիածին տէր Կարապետն Ջէյթունցի, որոյ գոլով ծեր և կարճակեաց և ժամանակն ևս անձեռնտու, ոչ ինչ արարեալ (176բ) զփոյթ զՆերսէսն վախճանի ի ՌՃՀԸ. (1729) թուոջն մեռում: Ջկնի Կարապետին յաջորդէ զտեղին տէր Աբրահամ Մշեցին ի ՌՃՀԹ. (1730) թուոջն մեռում: Ի ժամանակս սորին Ներսէսն այն գայ ի Սուրբ Աթոռս կեղծաւորեալ և չքմեղս համարելով զինքն ոչ ինչ յայտնէ զյանցիցն իւրոց և ոչ խնդրէ զարձակումն: Եւ Աբրահամս այս ևս գոլով աղաւնամիտ, հեզահոգի և խղճաբարոյ (թէև գիտաց ևս զորպիսութեն նորին), որպէս թէ անգէտս դնելով զինքն՝ սիրով ընդունի զնա և յետս դարձուցանէ: Վախճանի և Աբրահամ կաթուղիկոսն մեր ի ՌՃՁԳ. (1734) թուոջն մեռում և յաջորդէ զտեղին տէր Աբրահամ Կրետացին ի նոյն թուոջն: Առ սովաւ ևս գայ նոյն Ներսէսն ի Սուրբ Աթոռս նոյնով կերպիւ, որպէս յառաջն և այս Աբրահամս թէպէտ էր խելացի և ահարկու և յամենայնի հանճարեղ, սակայն գտանեցաւ յաւուրս Նատր շահին (որոյ զպատմութիւնն

յայլուրեւ գրեցաւ), ընդ որով միշտ զբաղեցեալ գոլով և թէ չգիտաց ևս զորպիսութիւն Ներսիսին, զի ի Յունաստանէ նոր էր եկեալ և անտեղեակ կողմանցս մերոց և թէ գիտաց ևս զանց արար, ինչևիցէ: Եւ սա սիրով ընկալեալ զՆերսէսն և վերադարձոյց յերկիրն իւր: Վախճանի և այս Աբրահամ կաթուղիկոս ի ՌՃՁԵ. (1736) թուոջն և յաջորդէ զտեղին տէր Ղազար Ճահկեցին ի ՌՃՁԷ. (1738) թուոջն, որ էր այր ճոռոմաբան, խելացի և վրէժխնդիր յանցաւորաց: Եւ յերկրորդ ամի հայրապետութեանն ի ՌՃՁԸ. (1739) թուոջն ևս եկն նոյն Ներսէսն նոյնով կեղծաւորեալ կերպիւ ի Սուրբ Աթոռս, կարծելով թէև զսա խաբէ և զերծանի: Սակայն Ղազարս այս հնարագիտութեամբն իւրով և մանաւանդ միջնորդութեամբ Շամախեցի Յակոբ վարդապետին (որ յետոյ եղև կաթուղիկոս) որսացեալ զՆերսէսն ետ խոստովանիլ ինքնին զյանցանս իւր, որ և ակամայ կամօք յայտնեաց զբանադրեցեալ գոլն իւր և զյայնքան ժամանակ անփոյթ առնլով պաշտելն զկարգն և ապա խնդրեալ զարձակումն: Վասն որոյ և Ղազար կաթուղիկոսն ևս յետ սիրով մեղադրելոյն և յուսադրելոյն, արձակէ զնա ի կապիցն և առնու ի նմանէ զձեռագիր նզովիւք և հաստատուն ուխտիւք, զի մի ևս ապստամբիցի յԱթոռոյս էջմիածնի և երկրին իւրոյ պատուիրեսցէ և ինքն ևս կտակ աւանդեսցէ, զի զկնի իւր թարց հրամանի էջմիածնի կաթուղիկոսացն և մանաւանդ վասն ազգականութեան իւրոյ զոք կաթուղիկոս մի դնիցեն յԱղուանս: Եւ այսու ոճով զկնոճակ մի ևս գրէ երկրին Աղուանից, կնքէ ինքն և կնքեցուցանէ գլխաւոր եպիսկոպոսաց Սրբոյ Աթոռոյս, կնքեցուցանէ նաև նոյնոյ Ներսիսին և ընդ նմա եղելոց եպիսկոպոսաց և առաքէ ընդ Ներսիսին ի յԱղուանս, գրելով և հարկելով, զի և յերկրոջն եղեալ եպիսկոպոսունքն և իշխանքն ևս կնքեսցեն և հաստատուն պահեսցեն զայն ուխտ և կանոն (այժմ Ներսիսի տուեալ ձեռագիրն անա գոյ ի Սուրբ Աթոռոջս): Իսկ զկոնդակն, զոր տարաւ ի յերկիրն ոչ գիտացաւ թէ ունի՞ն, եթէ անյայտ արարին: Ապա յօրէն յայնմանէ, որպէս թէ եղև օրինաւոր կաթուղիկոս Ներսէսս այս և մնաց ի հնազանդութեան Սրբոյ Աթոռոյս և տևեաց ևս ի ժամանակս Ղազարու, Մինասայ, Աղէքսանդրի և Յակոբայ Շամախեցւոյն, որ ի վերն յիշեցաւ, մինչև ի ՌՄԺԲ. (1763) թիւս մեր, յորում վախճանի հազիւ թէ: Արդ յայսմ թուոջ և մինչ կենդանի էր յԱթոռոջս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսն, յոր-ժամ հասանի մահուան հիւանդութիւն Ներսիսիս այսմիկ, եղբօր որդոց սորին ման-կագոյն աբեղայ մի Իսրայէլ անուն (զոր ի տղայութեանն էր եպիսկոպոս արարեալ Ներսէսն այսու մտօք) օծանի կաթուղիկոս Աղուանից ի Կէնճէ (յենլով և յուսալով ի Շահվերտի[235] կոչեցեալ խանն տեղւոյն և յոմանս անձնահաճ և կամակոր մէլիք կոչե-ցեալս, որք ընդ իւրեան տարագրեցեալք էին յերկրէն իւրեանց ի Կէնճէ)՝ թարց գիտու-թեան Յակոբայ կաթուղիկոսին և առանց համակամութեան և գիտութեան երկրին Աղուանից: Արդ զինչ կարծես դու զմանէ և զխղճմտանաց սորին, այսինքն՝ զԻսրայէլս, զի նախապէս ազգականն իւր Սիմոն կաթուղիկոսն (որ ի վերն յիշեցաւ) տուեալ

ձեռագիր նզովիւք և Ներսէսն զնոյն երկրորդեալ վասն ազգականաց չլինիլ կաթուղիկոս և թարց հրամանի մերոց (177ա) կաթուղիկոսաց ոչ առնել: Եւ այս Իսրայէլս զայսց ամենեցունց անփոյթ արարեալ առնէ զայս անկարգութիւն: Արդ յորժամ ձեռնադրի այս Իսրայէլս կաթուղիկոս և Ներսէսն մեռանի ի նոյն յաւուրսն, գրեն ապա զթուղթս աղերսանաց առ Յակոբ կաթուղիկոսն ինքն Իսրայէլն և իւր համախոհ մելիքքն, զի ընկալցի զԻսրայէլն և զյանձնարարական և զպատուիրնական կոնդակս գրեսցէ յերկիրն Աղուանից ի յընդունիլ զնա: Իսկ և Յակոբ կաթուղիկոսն, մինչ և ինքն իսկ էր միջնորդ լեալ Ներսիսի արձակմանն և ձեռագիր տալոյն առ Ղազար կաթուղիկոսին (որպէս ի վերն յիշեցաք), գրէ առ նոսա զթուղթս մեղադրականս և յանդիմանականս՝ յիշեցուցանելով նոցա զՆերսիսի ուխտն և զձեռագիրն և զազգականս կաթուղիկոս չառնելն և զայլս, ըստ իմաստնաշատ մտաց իւրոց և ցուցանէ զկաթուղիկոս անուանեալն և զընդունօղսն յանցաւորս և պարտաւորս, որոյ գրեալ կոնդակին օրինակն ահա գոյ ի Սուրբ Աթոռոջս: Եւ ինքն Յակոբ կաթուղիկոսն յետ գրելոյն առ նոսա զգիրս զայս ի նոյն ՌՄԺԲ. (1763) թուոջն վախճանի: Զկնի որոյ յաջորդէ մերս նուաստութիւն ի նոյն թուոջն: Սոյնպէս և առ մեզ գրեցին անյապաղ նոյն Իսրայէլ կոչեցեալն և իւր ընտրօղքն ի Կէնճէու, իբր զի ընդունիցիմք զնա և գրիցեմք ևս ի վերայ բոլոր վիճակին ի յընդունիլ: Եւ մեք ևս գրեցաք ըստ գրեցելոյ Յակոբայ կաթուղիկոսին զմեղադրանս յիշեցուցանելով նոցա զնախնաւանդ կանօնսն և յանցաւորութիւնն նոցա և հարկեցաք, զի զԻսրայէլն առաքեսցեն առ մեզ, զի եթէ բոլոր վիճակն կամի զնա ըստ նախնեացն կարգի կաթուղիկոս արարեալ՝ առաքեսցուք զնա: Բայց գրեցին նոքա ևս քանիցս առ մեզ ըստ նոյնոյ մտացն՝ ժամադրութեամբ խաբելով զմեզ, թէ յայս ինչ ժամանակ առաքելոց եմք և ինքն ևս, թէ գալոց եմ դու գրեա ի վիճակս մեր ի յընդունիլ, սոյնպէս և Շահվերտի կոչեցեալ խանն Կէնճէու գրէր մեզ վասն Իսրայէլին, նոյնպէս և մեք գրեցաք նոցա ըստ նոյնոյ մտաց մերոց ի գալ և ապա առնուլ զխնդրելին, սակայն ոչ նա եկն և ոչ մեք տուաք:

Ապա ի սոյն ՌՄԺԲ. (1763) թուոջս, մինչ այսպէս թղթոց երթևեկութիւնք լինէր ի մէջ մեր և կէնճէցւոցն ի Գանձասարու կուսէն, մելիքք ոմանք և այլք մարդիկք աշխարհականք և վարդապետք մինչև Ծ. (50) հոգիք, հանդերձ բազմակնիք թղթով և գրեամբք բազմօք առ մեզ[236] և Հիւսէին Ալի կոչեցեալ խանն մեր, որ նստիւր յԵրևան, նաև գրով և մարդով Փանահ խան կոչեցելոյն երկրին Խամսայու[237], առեալ զոմն վարդապետ Յովանէս անուամբ եկին ի Սուրբ Աթոռս առ մեզ, իբր, զի զնոյն Յովանէս վարդապետն ձեռնադրիցեմք կաթուղիկոս Աղուանից, ասելով, թէ Իսրայէլն ինքնագլուխ և թարց մերոյ գիտութեանն եղև կաթուղիկոս և ի յաթոռն Գանձասար ևս ոչ գայ, վասն որոյ մեք զնա ոչ կամիմք, որք և երկրաւ վարդապետօք և ժողովրդօք բազմակնիք թուղթ ևս ունէին գրեցեալ հաստատուն ուխտիւ, թէ ով ոք զԻսրայէլն ընդունի, նզովեալ

եղիցի[238]: Մեք զՑովանէսն կամիմք և ընդունիմք, որք թէ որքան ցաւեցուցին զմեզ տանկօք և ճայոցք յաւուրս քանիս, ոչ ևս երկարեմք, միայն, թէ ի սկզբէն մինչև ի վերջն մեր պատասխանին այս եղև նոցա, թէ ահա Իսրայէլն օծեալ կաթուղիկոս նախքան զդա նստի ի Կէնճէ, մի առնէք զայդ անկարգութիւն և մի արկանէք զայդ երկնդութիւն ի յերկիրդ ձեր և զայլս այսպիսիս: Ահա ի Կէնճէու ևս այսպէս գրեն մեզ, թէ մեք զԻսրայէլն կամիմք և ոչ զայլոք ցուցաք ևս գրեանս նոցա և, թէ ահա գրեն մեզ ևս, թէ զԻսրայէլն առաքելոց եմք առ քեզ: Ուրեմն համբերեցէք և դուք յաւուրս քանիս, մեք ևս գրեսցուք ի Կէնճէ, զի զայցէ Իսրայէլն և հաշտեցուսցուք զձեզ և զնա կաթուղիկոս հաստատել տացուք ձեզ, զի միապետութեամբ հովուեսցէ զձեզ և զայլս այսպիսիս յորդորականս և համոզիչ բանս թէպէտ ասացաք նոցա, բայց ոչինչ եղև օգուտ և ոչ քնաւ լուան, այլ ասացին, թէ եթէ դու ոչ ձեռնադրիցես զՑովանէս վարդապետս մեր կաթուղիկոս մեզ, մեք տարեալ ի Գանձասար ձեռնադրեմք զսա մերովք եպիսկոպոսօք, որոց թէպէտ (177բ) և մեք ասացաք բազմիցս, թէ մի առնիցէք զայդ, զի յետոյ մեծ խռովութեան պատճառ լինիք և թէ ատ ոչ մնայք, գոնէ գնացեալ անդ համբերեցէք, մինչև Իսրայէլն եկեսցէ առ մեզ, մեք զբանն ի խաղաղութիւն վերջացուսցուք: Նոյնպէս և Յովհաննիսին ընտրեցելոյն նոցա պատուիրեցաք հարկիւ, թէ մի գուցէ ձեռնադրիցիս, որ յետոյ զմեծ զղջումն կրելոց ես: Սակայն ոչ եղև նոցա լսելի պատուէրն մեր, այլ ի գնալն ի մէնջ ի Գանձասար, ձեռնադրեն և զՑովանէսն կաթուղիկոս ի սոյն թուոջս:

Ապա այնուհետև անկաւ մեծ կռիւ և երկփեռեկտումն ի յերկիրն Աղուանից, զի ի Կէնճէու հայքն և իւրեանց Շահվերտի կոչեցեալ խանն ի մի կողմն և Խամսայու և Գանձասարու հայքն և Փանահի տղայ Իպրահիմ Խալիլ կոչեցեալ խանն իւրեանց ի մի կողմն, տե՛ս դու այսուհետև և զմեր ցաւն, թէ զինչ և զորքանս կրեմք ի յերկաքանչիւր կողմանցն, զի յերկուց կողմանցն ևս անդադար մարդ առաքեն և զիս գրեն մեզ, խանքն և հայքն ի Կէնճէու գրեն, թէ զմեր կաթուղիկոսն ընկալ և վասն սորա գրեա՛ ի վիճակս Աղուանից, զի ընդունիցեն զսա և մի զՑովանէսն, զի եթէ զմերս խոտեցեր և զՑովանէսն ընկալար, գիտեա՛, զի բազմաց արեանց հեղման պատճառ լինիս: Սոյնպէս և ի Խամսայու և ի Գանձասարու գրեն, թէ զՑովանէս կաթուղիկոս մեր ընկալ և վասն սորա գրեա, նոյնպէս և առ Հիւսէին Ալի կոչեցեալ խանն մեր գրեն, թէ հարկեսցես քում խալիֆայիդ, զի զմերն ընկալցի: Իսկ միջասահման տեղեաց ժողովուրդքն նոցին, այսինքն՝ Շամախու, Շիրվանու, Դարբանտու և այլոց տեղեաց ժողովուրդքն գրէին մեզ աղաչանօք, թէ զորն կամիս հաստատեա, միայն թէ զմիապետութեան հնարս գիտ, զի գիտասցուք, թէ որում հնազանդիլ և հետևիլ պարտ է, որոց իւրաքանչիւրոց գրեցեալ գրեանքն գոն ի Սուրբ Աթոռս: Արդ զգլխացաւութիւնսն զորս կրեցաք մեք յիւրաքանչիւրոց կողմանցն ոչ կարեմք ի գիր արկանել: Եւ մեք այսպէս պատասխանեցաք միշտ իւրաքանչիւր կողմանցն. տանկացն գրելով, թէ այս ոչ է ձեր գործ, դուք

մի ձեռնամխիք ի յայս և հայոցն գրելով, թէ երկուք ընտրեցեալքն ևս պօրինաւորք են և անընդունակք: Եթէ կամիք զխաղաղութիւնն ձեր, զերկուսն ևս առաքեցէք առ մեզ, զի և մեք զորն կամի Աստուած զնա հաստատեալ ի ձեզ դարձուցուք: Տևեաց այս կենամաշ խռովութիւնս յամս երիս:

Ապա ի ՌՄԺԴ. (1765) թուոջն Խամսայու Իպրահիմ Խալիլ խանն և բոլոր ժողովուրդքն բազմակնիք թղթով և գրեամբք և քանեօք եպիսկոպօսք և իշխանօք, վերստին զՅովանէս կաթուղիկոս կոչեցեալն իւրեանց առաքեցին առ մեզ, գրելով, թէ կամիս զՅովանէսդ հաստատեա, կամիս զԻսրայէլն և զայլ ոք զոր և կամիցիս մեզ ընդունելի է, միայն թէ խնդրեմք մեք ի քէն, զի ով ոք և իցէ ի յաթոռս մեր Գանձասար նստիցի և զսա հաստատուն պահեսցէ, զի յայլ տեղիս նստօղ կաթուղիկոսն ոչ է մեզ ընդունելի: Եւ մինչ այս այսպէս եղև և մեք ասացաք սոցա, թէ որովհետև մարտն ձեր վասն աթոռոյն է և ոչ կաթուղիկոսի ի բաց կացէք դուք ի Յովհաննիսէդ, մեք զկաթուղիկոս մի յաթոռդ ձեր հաստատեսցուք, որք և յանձն առին, թէ երկիրն և թէ Յովանէսն: Ապա և մեք հրաժարեցուցաք զՅովանէսն ի կոչմանէն և պահեցաք առ մեզ: Եւ գրեցաք ի Կէնճէ առ Շահվերտի խանն և առ հայսն, թէ ահա մեք զՅովանէսն հրաժարեցուցաք և առ մեզ ունիմք, դուք զԻսրայէլն եթէ կամիք, զի հաստատեսցի, առաքեցէք առ մեզ և մեք ըստ օրինի և ըստ նախնական աւանդութեան կաթուղիկոս հաստատեալ առաքեսցուք կոնդակաւ ի Գանձասար, եթէ կամի զՅովանէսն ևս ընդ ինքեան տանիցէ ի ծառայութիւն իւրեան և թէ ոչ՝ առ մեզ պահեմք զՅովանէսն: Քանզի երկիրն զկաթուղիկոսն ի յաթոռն նստիլ կամին: Զսոյն ոն գրեցաք և ի Թիֆլիզ Հերակլ արքային, զի սաստեսցէ Շահվերտի խանին ի յառաքել զԻսրայէլն և հարկեցաք ևս Թիֆլիզու առաջնորդ Զաքարիայ վարդապետին ի գնալ ի Կէնճէ և ի ծանուցանել զմիտս մեր խանին, հայոց (178ա) և Իսրայէլին և ի բերել զնա, որ և ըստ գրեցելոյ մերոյ գնացեալ Զաքարիայ վարդապետին հանդերձ մարդով և գրով Հերակլ արքային ի Կէնճէ և շատ ջանացեալ և յետ բազմաց բանակռուութեանց և խօսից, ոչ եկն Իսրայէլն յԱթոռս, այլ մանաւանդ զիրքութիւնն ի ծայր հասուցեալ՝ գրեցոյց կէնճեցւոցն և խանին իւրոյ առ մեզ, թէ կաթուղիկոս մի դու ես և կաթուղիկոս մի սա, ընդէ՞ր պարտի սա ի յոտս քոյ գալ և թէ զՅովանէսն մեք բանիւ եմք արարեալ, կորն զդա, միթէ՞ կաթուղիկոս էր դա, զոր հրաժարեցուցանել գրես մեզ, այլ մի ևս երկարացուցաներ և գրեր մեզ: Ահա գրեցաք քեզ: Եւ զայլս այսպիսիս ամբարտաւանական զրոյցս գրեալ էին մեզ թէ՛ խանն և թէ՛ իսրայէլեանքն: Յայս յերիս ամս ներելոյն մերոյ անզգամութեան նոցին, զայսպիսի պտուղս կթեցաք ի նոցանէ: Եւ Զաքարիայ վարդապետն դատարկ դարձաւ առ մեզ՝ պատմելով զիրքութիւն և զխստաարտութիւն Իսրայէլին[239]: Ապա և մեք ի պահանջմանէ հարկին և ըստ իրաւանցն Աստուծոյ ի սուրբ և յաստուածակերտ յԱթոռոջս բազմաժողով հանդիսիւ և բազմօք արքեպիսկոպոսօք զԻսրայէլն լուծաք ի կարգէն և խոտեցաք ըստ

արժանւոյն: Եւ հրաւիրեցաք զՅովաննէսն ի պատարագ մատուցանել և յելանելն ի յաւանդատանէն եպիսկոպոսական զգեստիւք բերեալ առաջի Աւագ խորանին ի ծունկս չոքեցուցաք բացաւ գլխով առեալ զնափորտ ի վերայ մեր՝ ընթերցաք ի Մատթէոսեան Աւետարանէն ի ԻԱ. (21) գլխոյն, ի ԻԸ. (28) համարէն (զառակն Քրիստոսի, որ ասէ, թէ բայց զի՞րդ թուի ձեզ, առն միոջ էին երկու որդիք, մատուցեալ առ յառաջինն, ասէ՝ երթ այսօր գործեա յայգւոջ) մինչև ցայն տեղին, թէ (յոյր վերայ անկցի, հոսեսցէ զնա): Ապա արկեալ զնշանն սուրբ ի պարանոցն, կախեալ զկոնքեռն ի գօտւոյն յաջ կուսէ և ետուք զգաւազանն ի ձեռն և ասացաք զպահպանեայն՝ տալով վերստին զիշխանութիւն և զպատիւ կաթուղիկոսական ի լուր ամենեցուն: Եւ ապա մատոյց զպատարագն սուրբ հայրապետական պատուով: Յիշեցուցաք և զանունն ի պատարագոջն զկնի անուան մերոյ, որքան առ մեզ եկաց, որովհետև նախապէս օծեցեալ էր, վասն որոյ խորշեցեալ ի կրկնելոյ, այսպէս արարաք, զի յորմէ առաք և զձեռագիր հաստատուն կնքով իւրով և վկայութեամբ բազմաց, զի մի ևս ապստամբիցի ի յէջմիածնանիստ կաթուղիկոսացն, յորում գրեցուցաք և զայլս կանօնական բանս, որ ահա գոյ առ մեզ ի Սուրբ Աթոռոջս, զոր երկուս գրեցուցեալ, զմին ետուք Զաքարիայ վարդապետին, զոր ընդ նմա յղիցաք, զի և իւրեանց վիճակաց եպիսկոպոսացն և երևելի արանց կնքեցուսցեն և առ մեզ առաքեսցեն:

Ապա և գրեցաք զկոնդակ ի վերայ բոլոր երկրին Աղուանից վիճակին Գանձասարու, յորում և ծանուցանելով զնախնական կանօնսն ի սրբոյն Թադէոսէ առաքելոյն և ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ, մինչև ցառ մեզ հաստատեալ բազմօք պատմագրօք և վկայութեամբ, զի կաթուղիկոսքն Աղուանից ընդ ձեռամբ և հրամանաւ Լուսաւորչի փոխանորդ կաթուղիկոսացն են լեալք: Գրեցաք, զի և ինքեանց գիտացեալ այսու կանօնաւ մնասցեն այսուհետև և պատուէր ևս, զի և զՅովաննէսն գիտասցեն իւրեանց կաթուղիկոս այսուհետև և զԻսրայէլն ամենևին խոտեսցեն և մի ընդունիցին[240], զի լուծաք զնա ի կաթուղիկոսական կոչմանէն և ի պատուոյն՝ խնայելով ի յեպիսկոպոսական կարգն միայն, զոր ոչ առաք, որ ահա սոյնոյ կոնդակիս օրինակն գոյ ի Սուրբ Աթոռոջս: Ընդ սմին գրեցաք և զայլս թուղթս ոմանս յանձնարարականս և պատուիրականս ի յերկիրն Աղուանից: Եւ այսպէս մեծաւ փառօք և հանդիսաւորութեամբ և ըստ արժանւոյն խիլայիւք առաքեցաք յաթոռն իւր ի Գանձասար, դնելով ընդ նմա և զվերոյ գրեցեալ Զաքարիա վարդապետն, զի ի յաթոռն հաստատեալ նստուսցէ և զպատուէրս և զկանօնադրութիւնսն մեր և զուխտադրութիւնսն Յովաննէս կաթուղիկոսին իւրեանց ծանուսցէ բերանով ժողովրդեանն երկրին և զմիւս (179բ) ձեռագիրն, զոր տարան ընդ ինքեանս՝ կնքեցուցեալ բերցէ առ մեզ: Եղև այս գործ ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում և ի դեկտեմբերի քսան և հինգն[I]:

[I] Չգրված՝ 179ա-190բ

## (191ա) ԳԼՈՒԽ ԺԱ.

### ՎԱՍՆ ԱԽԹԱՄԱՐՈՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆՆ

Զայսմանէ ճառեցաք ի վերդ ի Ժ. (10) գլուխն, թէ երբ սկսաւ և յինչ պատճառէ և զգիարդութենէ նորին, անդ տեսցես: Իսկ աստանօր ոչ ևս վերակրկնելով զնոյնն, այլ զմնացելոցն շուրջ զայնու նիւթովն ի լոյս բերելով ի մեւս ժամանակ հասուցից:

Արդ մինչ խափանեցաւ հայրապետութիւնն հայոց ի Սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ ի հինգ հարիւր վաթսուն և վեց թուականութեանս մերում ի յաւուրս Գրիգոր կաթուղիկոսին և փոխեցաւ ի Հռոմկլայն (որպէս ի վերն ասացաք ի Ժ. (10) գլխոչն ամենայնիւք պարագայիւքն), ապա և առ նովաւ հաստատեցաւ կաթուղիկոսութիւնն Ախթամարու կղզոյն ձեռամբ և հեղինակութեամբ Դաւիթ անուն վարդապետի ումեմն: Անկան այնուհետև ընդ միմեանս երկոքին կաթուղիկոսունքն Հռոմկլայուն և Ախթամարուն, նա զնորին ընդունօղսն, զհետևօղսն և զձեռնադրեցեալսն բանիւ առնէր և խոտէր նա զնորինն, մինչ զմիմեանս ևս բանիւ արարին քանիցս անգամ: Տե՛ս դու յայսմ միջոցի զորպէսն առաջնորդաց վարդապետաց, քահանայից և խղճալւոյ հասարակ ժողովրդոցն մերոց, թէ որպիսաբար կեան լիրբքն և անկարգքն, որպէս թէ բացարձակ գտեալ զճանապարհ աներկիւղ և անկասկած, զինչ և կամին առնեն: Ամօթխածքն և երկիւղածքն հեղձամղձուկ լեալք յոգւոց հանելով մաշին և ի լռութեան նստին: Եւ շատք ևս ի գլխաւորաց և երևելի վարդապետաց ոչ զմինն ի նոցանէ ընդունէին և հետևէին, որպէս Գոշ Մխիթարն, Վանականն, Տաթևացւոյ դպրատունն և այլք շատք: Յաւուրսն յայնոսիկ, որովհետև և ազգն մեր ըստ մեծի մասին փոխեցան ի Հռոմկլայն և ի Կիլիկէ և ի յիշխանութիւնս Յունաց, շատքն ի նոցանէ այլայլեցին զդաւանութիւնս և զկրօնս Հայաստանեացս եկեղեցւոյ՝ հետևելով Քաղկեդոնիկ աղանդոյն յունաց, նոյնպէս և շատք ի կաթուղիկոսացն անդ նստողաց յաղթարմայութիւն մոլորեցան: Զանազան և պէսպէս հերձուածք և թիւրութիւնք ծնանէին յազգի մերում ի դաւանութիւնս և յարարողութիւնս եկեղեցւոյ, ի պսակս, ի ձեռնադրութիւնս եկեղեցականաց և այլ այսպիսիք անկարգութիւնք յոլովք, որպէս պատմէ Կիրակոս պատմագիրն: Վասն որոյ և Կոստանդին կաթուղիկոսն գրէ զթուղթս կանոնականս քանեօք գլխօք և առաքէ յամենայն յերկիրս Հայոց ի ՈՂԶ. (1247) թուականիս մերում:

Արդ կաթուղիկոսքն Սսայ այսպէս տկարացեալ և կարճալեզու յազգս և յերկիրս Հայոց, իսկ Աղթամարու կաթուղիկոսքն ամենևին օտար, խոտեցեալ և անընդունակք յազգէս մերմէ: Եւ այսպէս մնացեալ երբեմն լաւ, երբեմն միջակ և երբեմն ի վատ անդր, մինչև ի յութն հարիւր իննսուն թիւն մեր, յորում վերանորոգի հայրապետութիւնն հայոց ի Սուրբ էջմիածին ի բնիկ հայրապետարանն ի նստի հայրապետ հայոց տէր Կիրակոս ճգնաւորն ի յութն հարիւր իննսուն թուոջն մերում, որպէս ասացաք յայլուր երկարապէս: Եւ մնան նոքա, այսինքն՝ ի Սիս և յԱղթամար նստող կոչեցեալ կաթուղիկոսքն ի յապստամբութեանն իւրեանց և բանադրեցեալք յիրերաց:

Ապա ի նստիլ տեառն Կիրակոսի ի Սուրբ էջմիածին բառնայ զամենայն անէծսն և արձակէ զնոսա ի բանադրանացն և առհասարակ օրհնութեան արժանացուցանէ զերկուս կողմունսն ևս, ըստ Թօմայի պատմագրին: Իսկ ի Կիրակոս կաթուղիկոսէն մերմէ մինչև ի Միքայէլ կաթուղիկոսն մեր զոչ ինչ հարկաւոր գրելիս գտաք զհաւաստիս վասն Աղթամարու կաթուղիկոսացն, թէ որպէս և յինչ կացութեան են լեալք: Բայց ի խառնակմանց երկրիս և ի տարագրութենէ կաթուղիկոսացն մերոց համարձակութիւն գտեալ նոցա երբեմն երբեմն ոտն աձէին ի վիճակս Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի Բ. (2) և ի Ժ. (10) գլուխսն: Քանզի Գրիգոր կաթուղիկոսն նոցին ի ՌԻԳ[I]. (1574) թուոջն մերում ֆարման բերէ ի յօսմանցւոց թագաւորէն վասն Վանայ, Համդայ[241], Արճշու, Խլաթու, Մշու և Բաղէշու և այլոց մերձագայիցն, թէ այսոքիկ ի բնէ մեր են վիճակք, այլ սևագլուխք զաւթեալ են և ես մնամ ի ներքոյ միրիի: Այսպէս արարեալ ֆարման բերէ ի տաճկաց ՋՁԳ. (1575) թուին[242]: Յետոյ մեր կաթուղիկոսքն գիտացեալք արզ առնեն թագաւորին և զԳրիգոր կաթուղիկոսն Աղթամարու ընկրկեն և զֆարման նորին առնուն ի ձեռացն, որ ահա՛ գոյ ի Սուրբ Աթոռս, զոր գոցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ՄԻԹ. (229)) համարովն: Այսպէս և զկնի ժամանակաց ի ՌՃԴ. (1655) թուոջն մերում, մինչ մեռանի Փիլիպպոս կաթուղիկոսն մեր և նստի Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի յայսմ միջոցի, մինչ սաստիկ պատերազմն ևս գոյր ի մէջ պարսից և օսմանցւոց թագաւորացն, Մարտիրոս կաթուղիկոսն Աղթամարու ժամանակ գտեալ (191բ) ի ձեռն իւրոցն ծածուկ արզայ հասուցանէ առ օսմանցւոց սուլթան Մահմուտ թագաւորն, թէ Վան, Բերկրի, Արճէշ, Խլաթ, Բաղէշ, Մուշ, Խօշապ[II243] և մինչև ի Համիթ ընդ տէրութեամբ քով են, սակայն ի յերկիրն Պարսից նստող խալիֆայն զայսոսիկ զաւթեալ է և զարդիւնսն սոցա ժողովեալ տանի յերկիրն Պարսից, հրամայեսցես, զի մեզ լիցին վիճակք, որովհետև ի յիշխանութիւնս քո նստիմք մեք, զոր ի լսելն սուլթան Մահմուտին, տայ նմա զֆարման, զի նա տիրեսցէ այնց վիճակացն[244]: Զայս, իբրև լսէ Յակոբ կաթուղիկոսն և սա գրէ արզայ առ նոյն սուլթան Մահմուտն՝

---

I Բ. ՌԻԳ

II Բ. Հոշապ

հաւաստելով ի բնէ անտի էջմիածնի գոլ վիճակք վերոյ յիշեալ նահանգքն և սուլթան Մահմուտն ևս ի վերահասու լինիլն ճշմարտութեանն՝ վերստին հաստատուն ֆարման գրէ, թէ այնք[I] վիճակքն, որովհետև ի բնէ էջմիածնի են լեալք, մեք ևս էջմիածնի շնորհեցաք և մի ևս ձեռնամխիցին Ախթամարու կաթուղիկոսն և կամ այլք (և նոյն ֆարմանն ևս ահա ի Սուրբ Աթոռս գոյ), որ գրի ի տաճկաց թիւն ի ՌՀԲ. (1661), զորս գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ՄԼԱ. (231)) համար նշանաւն:

Իբրև այս այսպէս լինի, ապա Մարտիրոս կաթուղիկոսն Ախթամարու անկանի ի Վանայ մովպետն և ի մեծամեծսն կաշառելով սաէ, թէ ես զայսքան դրամ եմ խարճեալ, ֆարման եմ հանեալ, այժմ ի վիճակացս ևս զրկիմ և շատ զրոյց առարկի ի մէջ այլազգեաց և մերայնոցն ի դատարանի նոցին, վերջապէս Յակոբ կաթուղիկոսի գիտութեամբքն և խորհրդակցութեամբքն տեղւոյ իշխանացն՝ տեղւոյ առաջնորդ Պօղոս վարդապետն վէճիլ լինի էջմիածնի կողմանէ ՌՊԽԸ. (1848) դուռուշ տայ Մարտիրոս կաթուղիկոսին և ի բերանոյն զգիր առնու, թէ ես Մարտիրոս կաթուղիկոսս Ախթամարու յառաջ քան զայս վասն Վանայ, Բաղէշու, Մշու և այլոց շրջակայից յաղագաւ, որոց զնուիրակութիւնն էջմիածին առնոյր, ֆարման հանի յարքայէն, թէ էջմիածին ի յիշխանութիւնս պարսից է և այս երկրաց զարդիւնսն ժողովեալ տանի յերկիրն Պարսից, հրաման լիցի, զի Ախթամար կերիցէ, որովհետև ի յիշխանութիւնս օսմանցւոց է: Ապա յետոյ Վանայ առաջնորդ Պօղոս վարդապետն ընդ յիս դաւ յարոյց և վկայս եբեր ի դատարանի, թէ այդ վիճակքդ Եստի Քիլիսային են[245] և ոչ՛ Ախթամարու: Եւ յետ խօսակցութեանց, ապա ի Պօղոս վարդապետէն ես Մարտիրոս կաթուղիկոս առի ՌՊԽԸ. (1848) դուռուշ և զայս գիրս ետու, որ այսուհետև, եթէ ևս ձեռնամխիլ կամիցիմ այսց վիճակացս՝ թալպիս լինիմ և յանցաւոր: Եւ զայս գիրս գի՛տ ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ՄԼԲ. (232)) համար նշանաւն, որ գրի ի թիւն տաճկաց ի ՌՀԲ. (1661): Իբրև այս այսպէս լինի, ապա ի միւս ամին Մուստաֆա փաշայի որդի Ապտուլլայ Չէլէպի ոմն կոչեցեալ, որ լինի իշխօղ Աղթամարու կղզոյն, դաւ յարուցեալ ընդ Պօղոս վարդապետին և ընդ իշխանսն Վանայ, սաէ թէ Աղթամարու կաթուղիկոսին յաղագաւ ես զայսքան դրամ խարճեցի և ֆարման բերել ետու, զի նա տիրեսցէ այսց վիճակացս և ի տարուոջն տայցէ Վանայ բերթին ԳՌ. (3000) ըստակ և ԺՌ. (10000) ըստակ[246] ևս ինձ տայցէ ի տարուոջն: Այժմ, որովհետև դուք ի ձեր կողմն արկեալ դուք տիրեցիք, ուրեմն Եստի Քիլիսէի առաջնորդ Պօղոս վարդապետն տայցէ զնոյն ԳՌ. (3000) ըստակն Վանայ բերթին, ԺՌ. (10000) ըստակ ինձ ամ յամէ և Ճ. (100) դուռուշ ևս զոր խարճեցի վասն ֆարմանի Մարտիրոս կաթուղիկոսին, ապա թէ ձեզ լիցին այդ վիճակքդ: Եւ Պօղոս վարդապետն և իշխանքն ևս յանձն առեալ զայս ասացեալ դրամքս ի տալ և ի նոյն Ապտուլլայէն ևս զգիր մի առնուն, թէ այսուհետև թէ՛ ես և թէ՛

[I] Բ. այն

Ախթամարու կաթուղիկոսն դափ արասցու և կամ ձեռնամխիլ կամիցիմք յայս վի-ճակսս, թալպիս և խաբեբայ եղիցու, որ է գրեցեալ ի ՌՃԺԱ. (1662) թուին տանկաց, զոր զտցես յերեսն գրեցեալ (192ա) ցուցակաւն և ՄԼԳ. (233) համարին:

Բայց ֆարման թագաւորին թէպէտ յանուն Սրբոյ Աթոռոյս է գրեցեալ, զոր ի վերդ գրեցաք, թէ վիճակքն այնոքիկ Սրբոյ Էջմիածնի են, Ախթամարու կաթուղիկոսքն և այլք չունին հրաման ձեռնամխիլ յայնս, սակայն այս երկու հունարքս զորս յիշեցաք յանուն Վարագայ սրբոյ Նշանի վանիցն գրին, իբր թէ վիճակքն այնոքիկ այն վանքին են և Ախթամարու կաթուղիկոսն ոչ ինչ ունի մասն ի նոցանէ, իբր թէ Պօղոս վարդա-պետն, որ ի նոյն ժամանակն Վարագայ վանիցն առաջնորդ է լեալ, նա տայ զայն վերոյ յիշեալ դրամքն և զոտս Մարտիրոս կաթուղիկոսին հանէ ի վիճակէն Էջմիածնի: Վասն որոյ ի մէջ այն երկուց հունէքիցն ոչ Էջմիածնի անուն գոյ և ոչ Էջմիածնանիստ կաթուղիկոսի, այլ Պօղոս վարդապետի և եռտի Քիլիսայի, այսինքն՝ Եօթն եկեղեցւոյ, որ է Վանայ Վարագայ սրբոյ Նշանի վանքն:

Քանզի, որպէս ասացաք ի վերն, զի որովհետև մեծ պատերազմն և թշնամութիւն գոյր ի մէջ պարսից և օսմանցւոց և Սուրբ Աթոռս էր ընդ իշխանութեամբ պարսից և Վանայ կողմունքն ընդ իշխանութեամբ օսմանցւոց (որպէս և են այժմ) վասն այսորիկ այսպէս առնել ետ Յակոբ կաթուղիկոսն, զի հատցի թունալի լեզու նոցին, որք զմեծ զէն առեալ իւրեանց, որպէս թէ արծարծէին աստ և անդ ի յականջս օսմանցւոց, թէ ի յերկրէս օսմանցւոց զարդիւնսն ժողովեալ տանին ի յերկիրն Պարսից, որպէս և մինչև ցայժմ ունին զայս սովորութիւն օսմանցւոց կողմանց սևազլուխքն, որք ի խոշտանկիլն ի յԷջմիածնանիստ կաթուղիկոսացն և ի նուիրակաց սոցին վասն անկարգութեանց իւրեանց, զայս յառաջ բերեն, որպէս թէ յանառիկ ամրոց իմն ապաւինեալք:

Դարձեալ զկնի այսորիկ ի ՌՃՂԲ. (1743) թուոջն մերում ի ժամանակս Ղազարու կաթուղիկոսին մերոյ Ճահկեցւոյ, Ախթամարու բոլոր վիճակքն զզուեցեալ ի ... կաթու-ղիկոսէն իւրեանց վասն անյարմար կացութեանն և մանաւանդ զի զաթոռն իւրեանց իսպառ անշքացոյց և ի ներքոյ յոլովից պարտուց էարկ և զեկեղեցական միաբանսն ցրուեաց և զկնաւոր աշխարհական բնակեցոյց ի վանքն, վասն որոյ ընկեցին զնա յաթոռոյն և զՆիկողայոս վարդապետ ոմն ընտրեալ արարին իւրեանց կաթուղիկոս: Ապա Նիկողայոսս այս խորհրդակցեալ ընդ ոմանց սևազլխոց իւրոց անկատարից և ընդ ումեմն Աղէքսանդր աբեղայի, իբր թէ նեղ է տեղիս մեր, ըստ գրոյն առաքէ զնոյն Աղէքսանդրն ի Կոստանդնուպօլիս, որ զնացեալ անդ ի ձեռս ոմանց ծածուկ գիր մի հանէ ի դրանէ թագաւորին (որ ասի ղօլթուղ ֆարմանի[247]), իբր թէ նահանգս այսոքիկ, այսինքն՝ Վան, Բաղէշ, Մուշ և շրջակայք սոցին Ախթամարու են վիճակք: Եւ զայս հրա-ման առեալ գայ ի Վան, գայ և Նիկողայոսն ի Վան և ցուցանէ զհրամանագիրն զայն տեղւոյ մովպետին, յորմէ և զգենու զխիլայ և, որպէս թէ տիրելով վերոյ յիշեալ նա-

հանգացն՝ զլիշեալ Աղէքսանդր աբեղայն նուիրակ կարգէ նոցա, և զՅովանէս վարդա-պետն, որ յայնմ միջոցի նուիրակ էր ի Սրբոյ Աթոռոյս կողմանցն այնցիկ կալեալ՝ զժողովեալ արդիւնսն առնուն ի ձեռացն և զինքն ի բաց վարեն և զայլս այսպիսիս:

Եւ յորժամ զայս ամենայն լսէ Ղազար կաթուղիկոսն մեր և սա գրէ ի Պօլիս և զնորոգ ֆարման բերել տայ ի նոյն թագաւորէն սաստիկ և հաստատուն վճռով, թէ վիճակքդ այդոքիկ էջմիածնի են, ոչ ոք ունի իշխանութիւն ձեռնամխիլ ի դոսա (և ֆար-մանս այս, մինչ ի վերայ Վանայ օճախլու կոչեցելոցն էր գրեալ առ նոսա զոյ մինչև ցայսօր և պատրիարգ Յակոբ վարդապետի գիրն զոյ վասն այսորիկ, թէ զֆարմանն հանեալ յղեցի ի ՌՃՂԵ. (1746) թուոյն մերում: Եւ այսու զվերոյ յիշեալ վիճակսն Ղա-զար կաթուղիկոսն վերստին յինքն վերադարձուցանէ և զարդիւնս նուիրակին մերոյ, զոր առեալ էր Նիկողայոսն, ճշտիւ յետս առնու և զՆիկողայոսն ևս բանադրէ: Եւ յետ այսց անցից ապա Նիկողայոսն այն ետես, թէ ի յունելոցն ևս զրկեցաւ և մանաւանդ կորագլուխ և ամօթալից լեալ ի վիճակէն իւրմէ և նուաճեցեալ, իսկ ի բազմակոյտ պարտուց և յաղքատութեանց, վասն որոյ անճարացեալ բոլոր վիճակօք, վանականօք և (192բ) աշխարհականօք զբազմակնիք թուղթս հնազանդութեան և աղերսանաց գրեն առ Ղազար կաթուղիկոսն մեր, ընդ թղթոյն և զՆիկողայոսն առաքեն յԱթոռս՝ խնդրելով մեծաւ աղաչանօք ի Ղազար կաթուղիկոսէն, զի զՆիկողայոսն արձակեսցէ ի կապից և կաթուղիկոս հաստատեսցէ ինքեանց և աղքատութեանց և պարտուց ա-թոռոյն իւրեանց ևս օգնութիւնս արասցէ՝ խոստանալով ևս այնուհետև կաթուղիկոսօք և վիճակօք ի հնազանդութեան Սրբոյ էջմիածնի և սորին կաթուղիկոսացն մնայցեն և նոյն թուղթն զոյ ի Սուրբ Աթոռոջս: Վասն որոյ և Ղազար կաթուղիկոսն մեր սիրով ընկալնու զՆիկողայոսն և ի յատենի արձակէ զնա ի բանադրանաց, որպէս թէ յաթո-ռոջս վերստին հաստատէ զնա կաթուղիկոս Ախթամարու բոլոր վիճակին: Եւ ապա հաւանութեամբ և ըստ խնդրոյ բոլոր վիճակին և Նիկողայոս կաթուղիկոսին, իսկ ի ներկայութեան բազմաց եպիսկոպոսաց զկանօնական կօնդակ իմն գրէ քանեօք գլխօք, այսինքն՝ զՆիկողայոսն ընկալցին իւրեանց կաթուղիկոս այսուհետև և մինչ ի մահն զայլ ոք մի դնիցեն, որպէս առնէին յառաջ: Եւ յետ մահու նորին զայլ ոք ինքնա-գլուխ մի նստուցեն, այլ զարժանաւորն բազմակնիք թղթով բոլոր վիճակին ի Սուրբ Աթոռս առաքեսցեն, զի աստ օծցի: Եւ զայլս այսպիսիս գրէ և կնքէ ինքն Ղազար կա-թուղիկոսն, կնքէ և ինքն Նիկողայոս կաթուղիկոսն և այլք եպիսկոպոսք, որք գտանին: Եւ վերջապէս վճռեն ի նոյն թղթոջն, թէ այսուհետև ով ոք հեստիցի յայսց կանօնացս՝ նզովեալ լիցի յամենասուրբ Երրորդութենէն, յամենայն սրբոց նորին և ի մէնջ (որոյ աhա օրինակն զոյ ի Սուրբ Աթոռոջս): Զայս գիր առեալ Նիկողայոս կաթուղիկոսն մեծաւ փառաւորութեամբ և խիլայիւ գնայ ի վիճակն իւր[248]:

Եւ յետ ամաց ինչ մեռանի Նիկողայոս կաթուղիկոսն Ախթամարու և նստի ի տե-ղին Գրիգոր վարդապետ ոմն, նոյնպէս ինքնագլուխ և թարց հրամանի Սրբոյ Աթոռոյս կաթուղիկոսացն Մինասայ և Աղէքսանդրի, որք զկնի Ղազարու նստան յԱթոռոջս, զի որպէս ախթամարցիք զայնքան նզովիւքն և ուխտիւքն իւրեանց անփոյթ արարին, նոյնպէս և մերս կաթուղիկոսունքն պաշարեցեալք ի խառնակմանց ժամանակին և յանձեռնհասութենէ՝ զանց արարին:

Ապա ի ՌՄԺ. (1761) թուոջն մեռում մեռանի և Գրիգոր կաթուղիկոսն Ախթա-մարու, նոյնպէս և նստի ի տեղին Թօմայ վարդապետ ոմն կաթուղիկոս, յորում ժամա-նակի էր կաթուղիկոս յԱթոռոջ էջմիածնի Շամախեցի կոչեցեալ Յակոբ գիտնականն: Ի սոյն ժամանակի վերոյ յիշեալ Թօմաս կաթուղիկոսն Ախթամարու, թէ ի խղճէ հարե-ցեալ, եթէ ի բազմակոյտ պարտուց և ի պակասութեանցն բռնադատեցեալ, եկեալ գայ ի Սուրբ Աթոռս ի յոտս Յակոբ կաթուղիկոսին մերոյ ի հնազանդութիւն և ի վերանորո-գումն առաջնոց հայրապետացն կանօնաց և յայտնապէս յանձն առնու և խոստովանի զգոյն իւրեանց ընդ նզովիւք Ղազարու կաթուղիկոսին: Եւ յաւուր կիւրակէի ի ներկա-յութեան բոլոր միաբանից Սրբոյ Աթոռոյս և բազմախումբ ժողովրդեան ի ժամ Սրբոյ Պատարագին ի մէջ սրբոյ եկեղեցւոյն անկեալ ի ծունկս բացաւ գլխով և ըստ անառա-կին որդւոյ գոչեմ ասելով խնդրէ զարձակումն, զոր և ընդունի սիրով Յակոբ կաթուղի-կոսն մեր և ընթեռնու զաւետարանն Անառակին և տայ զարձակումն ի մէջ հանդիսին և, որպէս թէ վերստին հաստատէ զնա կաթուղիկոս Ախթամարու վիճակին: Գրէ և կոնդակ ի վերայ վիճակին, զի զԹօմասն ընկալցին այնուհետև կաթուղիկոս իւրեանց, վերայիշելով հաստատէ ի սոյն կոնդակոջս և զկանօնս Ղազարու և Նիկողայոս կաթու-ղիկոսացն ուխտադրութեանցն և նզովափակ կանօնացն, զորմէ ի վերդ յիշեցաք: Եւ հարկադրէ ևս, զի ի նոյն կանօնի և յուխտի մնալ այնուհետև վերահաստատելով զնոյն ուխտսն հանդերձ նզովիւք՝ մի ևս դիցեն ինքնա(193ա)գլուխ զկաթուղիկոս իւրեանց և զեղեալն առանց հրամանի կաթուղիկոսացն էջմիածնի մի ընդունիցին: Եւ զայլս այսպիսիս պատուէրս և կանօնս: Զայս կոնդակս գրէ Յակոբ կաթուղիկոսն հաւանութեամբ Թօմայ կաթուղիկոսին՝ ներկայութեամբ և վկայութեամբ Լմայ և Կտուցու անապատից հարանցն Կարապետ և Յակոբ վարդապետացն և այլոց բազմաց եպիս-կոպոսաց և տայ Թօմայ կաթուղիկոսին, զոր և պատռով և խիլայիւք առաքէ ի յաթոռն իւր յԱխթամար ի վերոյ յիշեալ թուոջն: Եւ նոյն կոնդակի օրինակն ահա գոյ ի Սուրբ Աթոռոջս: Եւ այս Թօմաս կաթուղիկոս որքան նստեալ է յաթոռն իւր, թէ՛ ի յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին, և թէ՛ ի մեր ժամանակս, զՍուրբ Մեռոնն ի Սրբոյ Աթոռոյս և ի մէնջ առեալ բաշխէ վիճակին իւրոյ: Թէպէտ ինքն զնիւթն խնդրէր, զի ինքն օրհնիցէ, սակայն մեք զօրհնեալ Սուրբ Մեռոնն տայաք, որ և է այսպէս մինչև ցայսօր[1249]:

---

[1] Ձգրված՝ 3 էջ՝193բ-194բ

## (195ա) **ԳԼՈՒԽ ԺԲ.**

### ՎԱՍՆ ՍՍԱՅ ԵՒ ԿԻՒԼԻԿԵՑՒՈՑ ՏԱՆՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԵԱՆ

Զայսմանէ ևս ճառեցաւ լիապէս ի վերդ ի գլուխսն Ժ. (10) և ի ԺԱ. (11), թէ ե՞րբ սկսաւ և յի՞նչ պատճառէ: Ապա յետոյ, մինչ վերանորոգեցաւ Սուրբ Աթոռս Էջմիածին ի ՊԴ. (1441) թուոջն մերում և նստաւ Կիրակոսն կաթուղիկոս ի սմա, այնուհետև զոչ ինչ ունիմք ասել զնոցանէ հաւաստեաւ, թէ ո՞յք, որպէ՞ս և յի՞նչ կացութեան մնացին: Միայն, թէ ի ՌՃ. (1651) թուոջն մերում, յորում երջանիկ և սրբազան կաթուղիկոսն մեր տէր Փիլիպպոս գնայ ի սուրբ Երուսաղէմ յուխտ և ի յակնածումն ազգիս հայոց, որք ի Յունաստան, յայնմ ժամանակի պատահի Ներսէս կաթուղիկոսին Սսայ ի յԵրուսաղէմ գտանիլ, որոյ ի տեսանելն զմաքուր վարս և զառաքելաշաւիղ վարդապետութիւնս տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսին հարկեցեալ ի ճշմարտութենէ հնազանդեալ՝ խոստանայ հետևիլ ամենայնի պատուիրանաց նորա:

Վասն որոյ և երջանիկն Փիլիպպոս, վկայութեամբ Երուսաղէմի պատրիարգ Աստուածատուր վարդապետին և այլոց բազմաց եպիսկոպոսաց, ընդ Ներսիսի կաթուղիկոսին զքանի գլխաւոր կանօնս հաստատէ (զորս տեսցես լիովին ի յԱռաքել պատմագիրն), որոց բազմաց դիտաւորութիւնն է, թէ իւրաքանչիւր վիճակի կաթուղիկոս և եպիսկոպոս, զիւր վիճակի եղեալսն և զարժանաւորսն ձեռնադրեսցէ հաւանութեամբ վիճակին, յորոյ վերայ ձեռնադրէ: Եւ յայլս վիճակս մի ձեռնամխեսցի: Եւ զայլս այսպիսիս կանօնս հաստատեն և կնքեն երկոքին կաթուղիկոքն և ներկայ գտանեցեալ եպիսկոպոքն վճռելով, թէ հեստօղն յայսց կանօնացս լուծցի ի կարգէն, տուօղն և առօղն: Տե՛ս դու այժմ զՍսեցւոց կանօնապահութիւնն, որոց կաթուղիկոսունքն զեպիսկոպոսունս ձեռնադրեն, որոց չև է ժամանակ սարկաւագութեան, որոց ոչ զուտին գիտեն և ոչ զորպէսն և մանաւանդ բազմիցս մին զմինն ընկենու և զտեղին յաջորդէ և երկուքն ևս զեպիսկոպոսունս ձեռնադրեն:

Որպէս ի մերում ժամանակս Ղուկասն ընկեցեալ ի Հաճին[250] զեօղն նստէր և Միքայէլն ի Սիս, Ղուկասն զշատս ձեռնադրէր, քան զՄիքայէլն միոյ հօխայ դահֆէի և այլովք այսպիսեօք: Իգնատիոս աբեղայի միոյ զէշն առեալ ձեռնադրեաց զինքն եպիսկոպոս ի միւս օրն ձեռնադրեցեալն զէշն իւր առեալ փախեաւ: Նմանապէս և եպիսկո-

պոսունքն յաձեալ ի վիճակս որոյ և իցէ շրջեալ ի տանէ ի տուն, ի ծակէ ի ծակ, ձեռնադրեն զքահանայս և զայլս աստիճանաւորս՝ չգիտելով զինչ լինելն: Եւ վարդապետքն, որք չև են ժամանեալ ի Ի. (20) ամս, ընդ աբեղայութեան առնուն և զԾայրագոյն Գաւազան, յորս գրեթէ ոչ գտանի աբեղայ և կամ մասնաւոր վարդապետ, այլ որք ենն՝ են ի ծայրագոյն աստիճանի: Թողցո՛ւք զայսպիսիս:

Ապա յետոյ ի ՌՃՂԸ. (1749) թուոջն մերում յաւուրս Ղազարու կաթուղիկոսին մերոյ Ճահկեցւոյ, մինչ ի հարկեցմանէ վրդովմանց ժամանակին և վասն ոմանց պատճառաց, զորոց ասացաւ յիւրումն տեղւոջ, անկաւ խռովութիւն ի մէջ Ղազար կաթուղիկոսին և միաբանիցն Սրբոյ Էջմիածնի, ընդ որս և համաձայնեցան յունաստանաբնակ սևագլուխքն մեր և մանաւանդ Յակոբ վարդապետն, որ յայնմ ժամանակի պատրիարգ էր ի Կոստանդնուպօլիս, թէև ի ծածուկ ազդմանէ սորին Միքայէլ կաթուղիկոսն Սսայ եկն ի Կոստանդնուպօլիս և անկաւ առ յոմանս յիշխանս ի տանէն Սսայ և կամէր ոտն ածել ի վերայ Էջմիածնի՝ խնդրելով ի վիճակաց սորին զոմանս նահանգս զաժմմանակիցս վիճակին իւրոյ: Իսկ յԱստուծոյ օրհնեալ իշխանքն մեր և բարեբարոյ վարդապետք ոմանք երևելիք գտանելով անդ առ յորս և մեք իսկ գտանեցաք ի պատահմանէ իմեքէ, խափանելով զչար խորհուրդս նորա՝ ափ ի բերան արարին զնա և ի գիշերայն հալածեցին ի քաղաքէն և ի Սրբոյ Էջմիածնի վիճակէն իսկ:

Դարձեալ ի ժամանակս նոյնոյ Ղազարու կաթուղիկոսին ի ՌՄ. (1751) թուոջն մերում, յորում Մինաս վարդապետն Ակնցի էր պատրիարգ Կոստանդնուպօլսի, ևս եկն նոյն Միքայէլ կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս ի սադրելոյ ոմանց իւրնանմանից սևագլխաց, առարկելով զնոյն վէջն և մանաւանդ ասելով, թէ ինձ վայել է ունիլ (195բ) զայս երկիր, որ ընդ իշխանութեամբ օսմանցւոց է, առ որով և ես և աթոռս իմ կամք: Նոյնպէս և յառաջն արարին օրհնեալ իշխանքն մեր, որք ձայնակցեալ արքունական հրովարտակաւ հանին զնա ի քաղաքէն և ի վիճակէն Էջմիածնի այնպէս, որ մի ևս կոխեսցէ զվիճակս Սրբոյ Էջմիածնի կաթուղիկոսն Սսայ: Եւ է այսպէս մինչև ցայսօր[I]:

[I] Զգրված՝ 196ա-198բ

## (199ա) **ԳԼՈՒԽ ԺԳ.**

## ՅՈՐՈՒՄ ՑՈՒՑԱՆԻՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՏՈՒԿ ԵՒ ՅԱՆՈՒԱՆԷ ՄԼՔԱՏՈՒ ԳԵՕՂՕՐԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ, ՅՈՐՈՑ Ի ՅԱՅԳԵԱՅՑ ԵՒ Ի ՍԵՐՄԱՆԵԼԵԱՑ ԱՌՆՈՒ ԶՄՈՒԼՔՍ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԶՏԱՍԱՆՈՐԴՍ, ԹԷ Ո՞ՅՔ ԵՆ, ՅՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՒ Ո՞ՅՐ ՁԵՌՕՔ ԵՒ ՈՐՊԷ՞Ս ՈՒՆԵՑԱՒ ԵՒ ՍՏԱՑԱՒ ԶՆՈՍԱ[251]

### Յաղագս գեղջս մերոյ Վաղարշապատու

Նախ այս գեօղ, որ է կից Սրբոյ Աթոռոյս, որ նախապէս կոչիւր Վարդգէս և յետոյ կոչեցաւ Վաղարշապատ, է բոլորովիմբ Սրբոյ Աթոռոյս՝ հողով, ջրով և իւրովք պարագայիւքն, հաստատեցեալ ի բնէ անտի ի Սրբոյ Լուսաւորչէն և ի Տրդատայ թագաւորէն, եթէ ըստ հոգևորական հասիցն և թէ ըստ մարմնաւորական հարկին: Այսպէս եկաց ի ժամանակս իշխանութեանն թագաւորացն մերոց, յոր ոչ կարէին ձեռնամխիլ կերպիւ իւիք մարմնաւոր իշխօղք: Ապա ի բառնիլ իշխանութեանս հայոց և ի փոփոխիլ հայրապետարանին ի Սիս և ի յամայանալն Սրբոյ Աթոռոյս՝ խափանեցաւ ամենայն կարգ և իշխանութիւն սորին և ինքն մերկացաւ յամենայնէ և զրկեցաւ յամենից ունեցւոցն իւրոց: Եւ ձախորդութիւնս այս տևեաց յամս ՅԻԴ. (324): Իսկ ի թուոջն մերում ի ՊՂ. (1441), յորում ողորմութեամբն Աստուծոյ վերանորոգեցաւ Սուրբ Աթոռս ի յիշխանութեանն տաճկաց Ջհանշահ թագաւորին (որ նստիւր ի Դավրէժ) և ունէր ընդ ձեռամբ զբոլոր երկիրս Պարսից և Հայոց, յորում ժամանկի նստաւ կաթուղիկոս տէր Կիրակոսն և զկնի նորա Գրիգոր Մակուեցին, որպէս ասացաւ յայլուր, սկսաւ վերստին օրըստօրէ ստանալ զառաջին կարգն և զիշխանութիւնն և տիրել իւրոցն սեփհականաց՝ հրամանաւ այլազգի թագաւորաց, գրովք և ղապալայիւք նոցին դատաւորաց, զհինսն նորոգելով և զնորսն վերայաւելելով: Արդ այս Գրիգոր կաթուղիկոս, որ նստաւ հրամանագրով Ջհանշահ թագաւորին Դավրիժու ի ՊՂԲ. (1443) թուոջն մերում ի Սուրբ Աթոռս էջմիածին, գնէ զշեշղանկ մուլքն գեղջս այսմիկ (որ է տասանորդն) այսպէս: Զի յայնմ ժամանակ գեօղս այս անկեալ լինի ընդ ձեռամբ ումեմն տաճկի Սէյիտ պէկ կոչեցելոյ մեծազգւոյ և մանկահասակի և այս Սէյիտ պէկս վէքիլ առնէ ինքեան զՍարու մելիք կոչեցեալ ոմն իշխան տաճիկ՝ որդի Ալիխան բէկի ի ներկայութեան և վկայութեամբ ումեմն տաճկի երևելւոյ իշխանի Շեխ Բօրհան կոչեցելոյ և վաճառէ զգեօղս զայս ամենայն սահմանօք և սինօրիւք և ամենայն պարագայիւքն

իւրովք Գրիգոր կաթուղիկոսին ԸՌԽ. (8040) դինարի, որոյ ութներորդ մասն է մէկ հազար հինգ դինար, որոյ և դապալայն գրէ դազին Երևանու Զամանատին կոչեցեալն և կնքէ հաստատուն վճռօք և բազմաց մեծամեծ տանկաց վկայութեամբ և կնքով յերևան ի ( ) թուին տանկաց:

Դարձեալ ի սոյն թուոջս Մէլիք Խաթուն անուն ոմն կին տանիկ՝ դուստր Փիր Հուսէին ումեմն տանկի գոլով յազգականաց վերոյ յիշեալ Սէյիտ պէկին յարուցեալ ասելով, թէ իմ է այս գեօղ և կամի ի յինքն դարձուցանել, որ և վէճիլ առնէ[I] ինքեան զՇէխ Մահմէտ անուն տանիկ ոմն՝ որդի Դախա կոչեցելոյ ի յառաջ տանիլ զայս դաւ: Վասն որոյ և նոյն Գրիգոր կաթուղիկոսն ևս վէճիլ առնէ ինքեան զՂևոնդ ոմն հայ՝ որդի Սէթի և թոռն Բապինանի, որով և վերստին նոյնպէս ամենայն պարագայիւքն գնէ զգեօղս զայս ի Մէլիք Խաթուն կոչեցեալ կնոջէն ձեռամբ Շէխ Մահմէտ վէճիլի նորին ԺԵ. (15) հազար դինարի, որոյ վեցերորդ մասն է ԲՌԵՃ. (2500) դինար, զորոյ և զդապալայն ևս գրէ նոյն վերոյ յիշեալ Զամանատին կոչեցեալ դազին՝ հաստատուն վկայութեամբ բազմաց մեծամեծ տանկաց և կնքէ ինքն և կնքեցուցանէ:

(199բ) Դարձեալ յետ այսր ամենայնի ի սոյն թուոջս յարուցեալք աստի և անտի ի յազգականաց և ի մերձակայից վերոյ յիշեցեալ Սէյիդ բէկին և Մէլիք Խաթունին, մինչև ԺԴ. (14) անձինք, որք ոչ տան հանգիստ Գրիգոր կաթուղիկոսին վասն գեղջս այսմիկ ասելով, թէ մեք ևս ունիմք զբաժին ի գեօղս յայս, որք վէճիլ կացուցանեն ինքեանց զոմն զլխաւոր տանիկ Ղալանդար օղլի Մահմետ ղուլի կոչեցեալն, վասն որոյ և նոյն Գրիգոր կաթուղիկոսն երրորդապէս գնէ զգեօղս զայս նոյնպէս ամենայն սահմանօքն ի ԺԴ. (14) միրասխոր կոչեցելոցն՝ ձեռամբ և միջնորդութեամբ վերոյ յիշեցեալ Մահմէտ ղուլի կոչեցեալ վէճիլի նոցին ԺԵ. (15) հազար դինարի, որոյ վեցերորդ մասն է ԲՌԵՃ. (2500) դինար: Եւ նոյն վերոյ յիշեցեալ Զամանադին դազին երրորդապէս գրէ զդապալայն և կնքէ վկայութեամբ բազմաց մեծամեծ տանկաց, գրելով և ըստ օրինի իւրեանց զսաստիկ և զմեծ նզովս և զանէծս յետ այսորիկ դաւի առնօղաց և վերստին խօսողաց վասն գեղջս այսմիկ: Եւ այս Զամանադին դազիս բերեալ ապա զայսոսիկ վերոյ յիշեցեալ զերեսին դապալայքս ընդ միմեանս կցէ և շինէ զմի մեծ կոնդակաձև դապալայ և ինքն կնքելով զկիցսն իւրաքանչիւր տեղեացն կնքեցուցանէ և ոմանց մեծամեծ տանկաց ևս և տայ Գրիգոր կաթուղիկոսին: Եւ Գրիգոր կաթուղիկոս այս, որ է որդի Մակուեցի պարոն Ջալալ բէկին, գրեցուցանէ ի յերիս դապալայոջսն ևս, թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեօղս զայս և վախըֆ տայ էջմիածնի Աթոռոյն: Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վախըֆն ոչ վաճառի և ոչ յետս դառնայ վասն այսորիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել: Այլև ի մէջ երից դապալայիցս այսոցիկ գրի գեօղս այս և յատկացուցանէ ամենայն

[I] Բ. առաքէ

սահմանօf և կոպարօfն իւրովf և վճոի, թէ ի մէջ այսց կոպարացս այգի, պարտէզ, անդf, արօտf, անասնոց, ջրաղացf, դինկf և այլ ամենայն արդիւնատեղիf և ջուրf և հողf և fարինf ևս, մինչև բոլորովին գնեաց Գրիգոր խալիֆայն և վախըֆ ետ Սրբոյ էջմիածնի:

Զայս ղապալայս և վախմնամայս առնու Գրիգոր կաթուղիկոսն ի (ՊՃԼԲ. (1428)) թուին տաճկաց և դնէ յԱթոռոջս ի յարձան յաւիտենական, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի՛, ամէն, որ և գոյ արդէն ի Սուրբ Աթոռոջս, զոր և զտցես ի յերեսն գրեցեալ ցուցակովն և (...) նշան համարով: Արդ եթէ ի յայս ղապալայոջս և թէ ի միւս մեծ ղապալայոջն, զոր զկնի սորա գրելոց եմf գեղջս մերոյ սահմանfն և կողմունfն այսպէս գրին: Ի հիւսիսակողմն եզր դաշտիս մերոյ դըռն, որ է ի Մօլադուրունէն և ի Քարաfթէն, մինչև ի փոfր ծօվակն, որ է սահման և կոպար գեղջս մերոյ և Փարաfարու, որ և սոյն ծօվակս ևս է Սրբոյ Աթոռոյս: Ի յարևելակողմն Ղօոուղն, հանդէպ Ծօրլու[252] գեօղի, որ ջմջմայ[253] և ղամըշլղ[254] գրի: Ի հարաւակողմն Քիլթափայ կոչեցեալ փոfր բլուրն: Ի յարևմտակողմն մեր գետն, որոյ կից է մեր Թեղուտներ կոչեցեալ հողն ի մեր կողմն հանդէպ Ալիպէfլու գեղջն, որ բազրկեան եօլի[255] գրի, թէ ստտ, թէ ի ռաղամսն:

(200ա) Դարձեալ ըստ վճռոց գրոց սրբոց, որպէս ոչ կարէ տեղի աղտաղտին զջուր fաղցր բերել, նոյնպէս և ժամանակն վրդովեցեալ ոչ կարէ յառաջացուցանել զհաստատուն և զյարամնաց գործս, զի յետ երից ամաց ի փոփոխմանէ տիրողաց երկրիս յառաջանայ այր ոմն տաճիկ յերկրոջս Ռուստամ անուն և բռնացեալ (ոչ է յայտ, թէ որով կերպիւ) տիրէ fանեաց գեօղօրէից, յորոց մին լինի և այս մեր կից գեօղս Վաղարշապատ և այս Ռուստամ տաճիկս լինի որդի Ամիրշfեանի և թոռն Ամիր Սմբատայ և ուստի լինիլն անյայտ: Ապա նոյն Գրիգոր կաթուղիկոսն ի յայս տաճկէս վերստին գնէ զգեօղս զայս իննսուն հազար դինարի և վախմ առնէ Սրբոյ Աթոռոյս: Եւ ընդ գեղջս այսմիկ գնէ ևս ի նոյն տաճկէն զայսոսիկ գեօղօրայսս, այսինfն՝ զԱշտարակ, զԲաթրինչ, զՆորագաւիթ, զԱղունատուն, զՔիրաշլու, զՄուղնի, որոց զօրպէսն ի յիւրաfանչիւր տեղւոջն ասասցուf: Եւ եօթնից գեօղօրէիցս գրեցելոցս[I] այսոցիկ զղապալայ մի մեծ և կոնդակաձև գրէ նոյն վերոյ յիշեցեալ Զամանատին ղազին Երևանու և կնfէ, կնfեն և վկայեն ևս Երևանու շխիսլամ մօլայ Ռահիմ կոչեցեալն և Նախչևանու ղազին Ահմատ կոչեցեալն՝ որդի Մահմետի: Յորում վճռեն հաստատուն վկայութեամբ և սաստիկ երդմամբ և նզովիւf, ըստ օրինացն իւրեանց, թէ այսոցիկ եօթեանց գեօղօրէիցս զշեշղանկ մուլfն գնեաց Գրիգոր խալիֆայն և վախմ արար Սրբոյ էջմիածնի, որ գրի ի տաճկական թուոջն ի ( ), զոր զտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն: Եւ այս մեծ ղապալայիս սուրաթ մի ևս գոյ գրեցեալ յետոյ ի միոյ շխիսլամէ և կնfեցեալ, զոր

---

[I] Բ. գրելոցս

ևս զտցես ի յերեսն գրեցեալ ցուցական և ( ) նշան համարով: Յետ Գրիգոր կաթուղի-կոսիս այսմիկ, մինչև ի ՌԽԲ. (1593) թիւն մեր, յորում նստի կաթուղիկոս ի Սուրբ էջմիածին Մելքիսէթ և յետ նորա Սահակ և յետ նորա մեծն Մօսէս ի ՌՀԸ. (1629) թուոջն մերում, Աթոռս էջմիածնի գրէթէ, թէպէտ ոչ խպառ ամայի, սակայն ոչ այնքան հեռի մնայ ի յամայութենէ, զի որպէս թէ յառաջին նուաստութիւնն էր հասեալ: Քանզի ի փոփոխմանէ յայլևայլ բռնակալ իշխողաց երկրիս և ի յարուցմանց պէս պէս ելուզա-կաց և ապստամբաց և յարշաւանաց ի վերայ միմեանց մեծազօր թագաւորաց պար-սից և օսմանցւոց և ի տարագրութենէ բոլորից երկրականաց ի շահ Ապասէն և յայլոց այսպիսեաց, զորս յիշէ Առաքէլ պատմագիրն և մանաւանդ յայնքան միջոցսն կաթու-ղիկոսն Աթոռոյս ոչ մի և երկու, այլ մինչև ի չորս և հինգ և այնք ևս ոչ կարէին և ոչ նստէին յԱթոռս, այլ աստ և անդ տարագիրք և փախստականք ի բռնաւորաց և ի պարտուց: Մտածեա՛, թէ Աթոռս ի յորպիսի կացութեան իցէ լեալ, զի ոչ միայն ի մլքատու գեօղօրէիցն էր զրկեցեալ, զորս տաճիկք զաւթեալ էին, այլև ի շինութենէ ի միաբանից և յայլ ամենից հոգևոր և մարմնաւոր զարդուց և ի հարկաւորացն էր մերկացեալ: Վասն որոյ վերոյ յիշեցեալ գեօղքն, զորս էառ Գրիգոր կաթուղիկոսն, տիրեցեալք եղեն ի տաճկաց ի բազում ժամանակս:

Ապա յետ ժամանակաց ի տիրելն երկրիս մերոյ թագաւորին Պարսից մեծին շահ Ապասայ ի ՌԾԳ. (1604) թուոջն մերում և ի կարգելն զԱմիրկիւնէ կոչեցեալ ոմն խան երկրիս, ժամանակ ինչ և այս Ամիրկիւնէ խանս զաւթեալ ուտէ զգեօղս մեր, որոյ վասն է բանս մեր: Ապա խանս այս մինչ էր բարեբարոյ, շինարար և քրիստոնէասէր ի ժամա-նակս սորա ոմանք ի սևագլխաց աստի և անտի ժողովեալք ի յԱթոռս՝ գնացեալ արզ առնեն Ամիր(200բ)կունէ խանին, և զԳրիգոր կաթուղիկոսի մեծ վախուպնամայ ղապալայն, զոր ի վերն յիշեցաք ևս ցուցանեն՝ ասելով, թէ այս գեղջ վեց դանկ մուլքն Սրբոյ էջմիածնի է ի բնէ անտի: Եւ Ամիրկիւնէ խանն ևս վերահասու լեալ իրին ստու-գութեանն՝ վերադարձուցանէ զվեց դանկ մուլքն գեղջս այսմիկ Աթոռոյս և հաստա-տուն գիր ևս տայ կնքով, թէ այսուհետև ով ոք յազգէ իմմէ և յայլոց իշխեսցէ զմուլք գեղջս այսմիկ հանել ի յէջմիածնայ, նզովեալ լիցի: Եւ նոյն թ[ուղթն] և երկու սաւատքն նորին շխիսլամի կնքով զոն ահա ի Սուրբ Աթոռոջս, որ գրի ի ՌԿԹ. (1620) թիւն տաճ-կաց, զոր զտցես երեսսն գրեցեալ ցուցակօքն և ( ) և ( ) և ( ) նշան համարովքն: Եւ թէպէտ այս այսպէս լինի, սակայն այս կանօն այնքան տևէ, որքան Ամիրկիւնէ խանն կենդանի էր և յիշխանութեան, իսկ յետ մահուան նորին, մինչ առնու զխանութիւն երկրիս որդի նորին Թահմազ ղուլին և նա զաւթէ ի կեանս իւր զմուլք գեղջս և ուտէ իւր տօնլուղին տեղն ժամանակ ինչ: Եւ յետ նորա դարձեալ զաւթեցին առաջին տիրօղք տաճիկքն, որք իւրացուցեալք ուտէին յորդւոց յորդիս և վաճառէին և բաշխէին ում և կամէին, զի իբրև զսեպհական ստացուած էին արարեալ իւրեանց:

Իսկ ի ճստիլ Մօսիսի եռշանիկ կաթուղիկոսին, թէպէտ և նա ջանաց և էառ իսկ ձեռամբ տիրողաց երկրիս, սակայն ոչ մնաց հաստատուն, զի երանելին երեք և կէս տարի հազիւ ապրեցաւ և միանգամ գնաց ի յԱսպահան առ շահն Սէֆի, զորքան դրամս վատնեաց և զվիշտս կրեաց, զհարիւր թուման մուխաթայն հազիւ եբարձ յԱթոռոյս, որ մեծ բեռն էր լեալ և տոկոսեօք բազմացեալ ի Մէլքիսէթ կաթուղիկոսէ անտի: Եւ մանաւանդ ի նորոգութիւն և ի շինութիւն Աթոռոյս պարապեալ, զորմէ լիովին պատմէ Առաքել պատմիչն, զի յամենայնի յանշքութիւն էր հասեալ Աթոռս: Իսկ զկնի նորա յորժամ նստի նոյնանման եռշանիկ Փիլիպպոս կաթուղիկոսն, արզ առնէ երկրորդ Ապաս շահին, թէ այս գեօղիս մուլքն ի բնէ անտի Սրբոյ Աթոռոյս է լեալ, այժմ խաներն և այս և այն զաւթեալ ուտեն և Աթոռոյս ոչ գոյ ապրուստ: Յիշէ և յարզայումն, թէ զայսքան դրամ խարճեալ յԱպարանու ջուր բերի և յօգուտ երկրիս և այլ այսպիսիք: Յայնմ ժամանակի նստիւր յԵրևան խան Խոսրով անուն ոմն, որ էր բարեբարոյ և բարեկամ Փիլիպպոս կաթուղիկոսին, սա ևս արզ առնէ շահին, թէ գեղջս մուլքն յիրաւի էջմիածնի է լեալ ի բնէ անտի, վկայէ և լաւութեանն Փիլիպպոս կաթուղիկոսին և զջուր բերելոյն և զայլոց լաւութեանցն: Վասն որոյ և շահն ռաղամ գրէ, թէ ետու զվեց դանկ մուլք գեղջդ էջմիածնի Աթոռոյն, այսուհետև մի ոք իշխեսցէ ձեռնամխիլ: Ահա գոյ նոյն ռաղամն ի յԱթոռս գրեցեալ ի ՌԿ. (1650) թուին տանեկաց, զոր զտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն: Եւ յայս ռաղամումս յիշի, թէ գեղջս այսմիկ հասլ և մուլքն հարիւր իննսուն խալվար և Ե. (5) լիտր և կէս ևս աւելի է լեալ, զոր տուեալ է Աթոռոյս:

(201ա) Յետ այսորիկ ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, յաւուրս շահ Սուլէյմանին պարսից ի դրանէն արքունի իշխան տանիկ յորդւոց Ամիրկիւնէ խանին, որոյ անունն Ապաս ղուլի, գայ յերկիրս յայս ի գործ արքունի և որովհետև հայր սորին Ամիրկիւնէ խանն ժամանակ ինչ կերեալ է զմուլք գեղջս այսորիկ և սա սկսանի դաւի յարուցանել ընդ Յակոբ կաթուղիկոսին, թէ մուլք գեղջս այսորիկ իմէ, դու զիա՞րդ ուտես: Ապա Յակոբ կաթուղիկոսն զգիր Ամիրկիւնէ խանին և զհին վախուպնամայն, զորս ի վերդ յիշեցաք, ցուցանէ նմա: Եւ նա վերահասու լեալ գիր մի ևս իւրն տայ շարի կնքով, թէ և ես գիտացի հաւաստեաւ, որ վեց դանկ մուլք գեղջս այսորիկ էջմիածնի է ի ՌՃԺ. (1661) թուին տանեկաց: Գի՛տ ցուցակաւն:

Եւ յետ այսպէս լինելոյն, ապա սոյն Յակոբ կաթուղիկոսս զայսոսիկ յիշեցեալ գրեանս առեալ գնայ ի յԱսպահան ի դիւանատունն նոցա և ցուցանէ և հաստատէ զգեօղս զայս գոլ ի բնէ անտի Սրբոյ Աթոռոյս: Ապա ի տեսանել շխիսլամին և այլոց մեծամեծաց գրեն զհաստատուն գիր մի և վկայեն, թէ մեք վերահասու եղաք ստուգութեամբ, որ այս գեօղիս վեց դանկ մուլքն, մուտախիլն, բահրէն և այլ հասքն բոլորովին

Սրբոյ էջմիածնի են լեալք ի բնէ անտի։ Այլև վկայեն ի սոյնում գրի, թէ տեսաք զհինգ վախուպնամայն, զԱմիրկիւնէ խանի գիրն և զայս գրեանս։ Այլև յիշեն, թէ յառաջ քան զայս յաւուրս Սահակ և Մօսէս կաթուղիկոսացն, ևս են արարեալ ոմանք վէճ վասն այսորիկ և սուտ են եղեալք։ Արդ մեք ամենեքեան վերահասու եղաք և վկայեմք, որ այս գեօղիս հասըլ, մուտախիլ և բահրէն, բոլորովին Սրբոյ էջմիածնի է լեալ ի բնէ անտի, ով ոք այսուհետև ձեռնամուխ լիցի և կամ դաւի արասցէ՝ սուտ է և յանցաւոր և բան նորին անընդունելի։

Այսպէս գրէ շխիսլամն, և այլք մեծամեծք և կնքեն և տան Յակոբ կաթուղիկոսին։ Եւ Յակոբ կաթուղիկոսն արզ առնէ շահ Սուլէյմանին՝ ցուցանելով զայն գիրն։ Եւ շահն ևս ի միւս երեսն նոյն թղթոյն ռաղամ գրէ, թէ զոր ինչ գրեալ և վկայեալ են ի միւս երեսն թղթոյս դատաւորքն, յիրաւի է և ես հրամայեցի զի այդպէս լիցի։ Գրելով և զպատուէրս Երևանու իշխողաց, զի մի ոք ընդդէմ գրեցելոցս շարժիցի։ Այսպէս հաստատուն թուղթ ի դատաւորաց և ի շահ Սուլէյմանէն երկիցս անգամ առնու Յակոբ կաթուղիկոսն, մին ի ՌՃԲ. (1672) թուին և միւսն ի ՌՃԴ. (1675) տաճկաց, որք ահա զոն ի Սուրբ Աթոռոջս երկուքն ևս, զորս զտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն և ( ) և ( ) համար նշանիւքն։ Եւ երկու սաւատք ևս զոն սոցա շխիսլամի կնքով, զորս զտցես ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն և ( ) և ( ) նշան համարովքն, որք երկուքն ևս հարկաւորք և շատ պիտանիք և լաւ պահելիք են։ Այսոքիւք ափ ի բերան արարեալ պապանձեցուցաք մեք ի ժամանակս մեր զպիղծ միրզայ Շէֆին, որ զոլով երկրիս դիւանագիր կամէր խափանել զմաղափութիւն Սրբոյ Աթոռոյս ի ՌՄԺԳ. (1764) թուոջն մերում։

(201բ) Արդ լուսահոգի Յակոբ կաթուղիկոսն, թէպէտ այսպէս զրովք և վկայութեամբ ի յԱթոռս դարձուցանէ զվեց դանկ մուլք գեղջս մերոյ, որպէս գրեցաք, սակայն յետոյ ի ժամանակս ժամանակս տաճիկքն այնոքիկ, որք յանտիրութենէ Աթոռոյս և ի խառնակմանց ժամանակին երբեմնապէս զաւթեալ էին զգեօղս զայս և իւրացուցեալ, զորս յիշեցաք ի վերդ, զան երբեմն առ Յակոբ կաթուղիկոսն և դաւի առնեն ասելով, թէ մեր է մուլք գեղջս այսմիկ, ոմանք իւքնին և ոմանց ազգականքն և ոչ տան հանգիստ։ Ոմանք միոյ դանկին դաւի առնելով, ոմանք երկուց և ոմանք կիսոյն և այլն այսպէս։ Ապա Յակոբ կաթուղիկոսն ոմանց զգինսն տալով վերստին գնէ և զգին ունեցեալ գրեանսն, որք են ղապալայքն, առնու ի ձեռաց նոցա և զոմանս ի դատաստան տանելով սուտ հանէ և ոմանց զսակաւ ինչ դրամ տալով ի բերանոցն գիր առնու։ Այսպէս առնելով հատանէ զձայնս դատախազիցն խպառ յԱթոռոյս և իսկապէս դարձուցանէ զվեց դանկ մուլքն գեղջս ի յԱթոռս։ Եւ առեալ գրեանքն ի դատախազիցն են ի յԱթոռս։ Ջհինգ հատ հին ղապալայս առնու ի տաճկաց, որոց մին է ի ԹՃԿԴ. (1555) գրեցեալ, մին ի ՌԿԱ. (1612), մին ի ՌԿԴ. (1615), մին ի ՌԿԶ. (1617), մին ի ՌԿԹ. (1620)

ի թիւն տանկաց: Եւ զերիս գիրս ևս ի դիւանի ի բերանոյ դատախազիցն առնու մին ի ՌՀԱ. (1660), մին ի ՌՀԴ. (1663) և միւսն ի ՌՀԷ. (1666) թիւն տանկաց գրեցեալք, որք ամենեքեան գոն ի Սուրբ Աթոռոջս, զորս գտցես ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն և ի ( ) համար նշանէն մինչև ի ( ) համար նշանսն:

Դարձեալ զկնի ժամանակաց Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի վեց կտրպ խնդրոց աղագաւ արզ առնէ շահ Սուլթան Հիւսէյինին, որոց երրորդ խնդիրն այս է, թէ Սրբոյ Էջմիածնի մուլք տեղեաց և մաղափութեանն ոմանք երբեմն ձեռնամուխ լինին և ոչ թողուն զմեզ հանգիստ: Եւ վասն այսոցիկ վեցից խնդրոցս յառաջնոց թագաւորացն ևս գոն ռաղամք ի Սուրբ Աթոռս արդէն, զորս յիւրաքանչիւր տեղւոջն ասսացուք, զայնոսիկ ռաղամսն ևս տարեալ ցուցանէ շահին: Վասն որոյ և շահ Հիւսէյինն տեսեալ զռաղամսն, գրէ և ինքն զռաղամ մի և զայնոսիկ վեց ռաղամսն ևս յիշէ ի նմա հանդերձ խնդրելեօքն և թուովքն և հրաման գրէ, թէ որպէս մեր նախնի թագաւորքն հրաման են տուեալ վասն այսոցիկ գրեցելոցս և ես ետու հրաման, զի այսպէս լիցի: Եւ պատուէր Երևանու իշխօղացն, զի մի թողցեն զոք ձեռնամուխ լինիլ ի մլքատու տեղիսն Էջմիածնի: Եւ այս ռաղամս գոյ ի Սուրբ Աթոռս, որպէս ցուցանի ի յերեսսն գրեալ ցուցակաւն, որ է գրեցեալ ի ՌՃԿԱ. (1712) թուին տանկաց և ( ) նշան համարով:

(202ա) Դարձեալ ի թուոջս մերում ՌՃՀԳ. (1724) և ի տանկաց թուին ՌՃԼԷ., օսմանցիքն առին զերկիրս մեր ի պարսից, որք և տիրեցին յամս ԺԳ. (13), նստի յԵրևան Ռաշափ անուն փաշայ, որում և ծանուցանէ Աստուածատուր կաթուղիկոսն զորպիսութիւնս Աթոռոյս և զգիր խնդրէ վասն մլքատու գեօղօրէիցն և մաղափութեանն Աթոռոյս: Վասն որոյ և փաշայն գրէ զգրքաձև դէվթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ և զվերջն դազին: Յորում գրեցեալ Սրբոյ Աթոռոյս մլքատու գեօղօրայքն են այսոքիկ՝ այս մեր գեօղս, Մաստարայ, յՕշական, Տոանկանոց և Քիրաշլու: Այլև մաղափ եղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ: Ի մեր գեօղս վեց շէն ջրաղաց, երկու աւեր, մէկ շէն դինկ, երկու ձիթահանք, բաղն և ինն արտ ցանելի, երեք եօնջալուղ, երեք այգի, երկու այգի ևս յՕշական, մեկ ևս աւեր: Ի Փարաքար երկու այգի, յԵրևան երկու այգի, երկու ջրաղաց: Ի Քեալարայ երկու ջրաղաց, մէկ դինկ: Երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի[256] գետոյն, որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, որ դալմայ ասի, որոյ ակն է մերձ Սարվանլար կոչեցեալ գեղջն, որ յԵրևան ի ներքոյ բերթին և վեց հարիւր ոչխար: Եւ սևագլուխք և միաբանքն մաղափ և մի տայցեն զխարաճ և այսքան վանօրայք ևս, ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղափ լիցին՝ Սուրբ Հռիփսիմէն, Շողակաթն, Գայիանէն, Երևանու Սուրբ Անանեայ Առաքելոյ և Զորագեղու անապատքն: Բայց միայն խալիֆայն ի տարւոջն զվեց հազար ութ հարիւր ստակ տայցէ յարքունիս և ոչ այլ ինչ: Գի՛տ զայս գիրս ցուցակաւն և ( ) նշան համարովն: Թիւն տանկաց ՌՃԼէ. (1725): Այսպիսի օրինակաւ գիր ... հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն:

Իսկ յետ այսորիկ ի ՌՃԽ. (1140) թուոջն տաճկաց և ի ՌՃՀԶ. (1727) թուոջն մերում, յաւուրս Կարապետ կաթուղիկոսին, ձեռամբ փաշային Երևանու արզ առնեն սուլթան Ահմէտ թագաւորին Օսմանցւոց և գրեն զդէվթէր մի տաճկերէն, յորում յանուանէ և ուրոյն ուրոյն յատկացուցանեն զիւանի տուն լինիլն գեօղիս, զիւանի այգիս, զջրաղացս, զպարտէզս, զսերմանելի տեղիսն և զայլս այսպիսիս, այլև գրեն ի նմա յատկապէս զորպիսութիւնս Սրբոյ Աթոռոյ, թէ ունի զայգիս, զջրաղացս, զդինկս, զհամամս, զքարվանսարայս և զայլ ամենայն մուլքսն՝ առանց յատկացեալ թուոյ: Այլև երկու գութանս, հազար հինգ հարիւր սօմար սերմանելիս, զվեց հարիւր ոչխարս: Եւ զԱթոռս, զերիս վանսն, իւրեանց միաբանիւքն, զորս զամենեսեանսն մաղաֆ առնեն ի բնաւից հարկաց: Յորում գրի վերջապէս, թէ կաթուղիկոսն յամէ յամ թագաւորին ԳՃԾ. (350) ղուռուշ տայ միայն և յայլ յամենից կողմանց մաղաֆ լիցին ոչ խարաճ, ոչ իսպանջ և ոչ այլ ինչ խարճ: Այլև գրեն, թէ էջմիածնի գեօղս, յՕշական և Մաստարայ մուլք են Սրբոյ Աթոռոյ, որք յամենայնէ զտասանորդս պարտին տալ: Զայս ամենայն գրէ շխիսլամն և կնքէ զվերջ բանին և մատուցանեն թագաւորին: Եւ թագաւորն ևս ի գլուխ դէֆթէրին դնէ զարմն իւր, այսինքն՝ զթուրէն: Զսոյնանման թուղթ մի ևս ի ժամանակս Աբրահամ կաթուղիկոսին Մշեցւոյ շինեն յետ երից ամաց, նոյնպէս և գրեցուցանեն, որ ինչ ի վերնումն գրեցաւ, նոյնպէս (202բ)և սուլթան Մահմուտ թագաւորն օսմանցւոց դնէ զթուրէն ի գլուխ դէֆթէրին, նոյնպէս և հրամայէ, զի Աթոռոյ տայցեն զմուլքն անխափան վերոյ գրեալ գեօղքն: Եւ կնքէ շխիսլամն զկիցս թղթոցն և ի վերջն ի ՌՃԽԳ. (1730) թուոջն տաճկաց, որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք և են երկար գրքաձևք, մին չորս թուղթք և միւսն հինգ թուղթք, որք երկուքն ևս գոն ի Սուրբ Աթոռս՝ ունիլով զծաղկեալ պահարան յատուկ յատուկ և են ի միում նղտանաձև թղթեալ պահարանում: Եւ յերեսսն գրեցեալ ցուցակքն ևս ցուցանեն:

Դարձեալ ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց, մինչ Նատր շահն առնու զերկիրս մեր ի յօսմանցւոց ի հայրապետութեանն Աբրահամու Թրակացւոյ, դիւանագիրք Նատր շահին և նորին հրամանաւն ի գիր արկանելն զերկիրս, գեօղօրայսն և զբերսն նոցին, զգիր մի տան Սրբոյ Աթոռոյ հաստատուն վճռով և կնքեալ վկայեն, թէ էջմիածնի գեօղս, յՕշական, Ֆռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու և Քէշիշքեանդ գեօղօրէիցս վեց դանկ մուլքն Սրբոյ էջմիածնի են ստուգիւ: Յորս ոչ ոք ունի հրաման ձեռնամխիլ, զորս գտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

## (203ա) **Բ. Յաղագս յՕշական կոչեցեալ գեղջն, որոց վեց դանկ մուլքն, այսինքն՝ տասանորդն է Սրբոյ Աթոռոյ, թէ որպէ՞ս և ե՞րբ ծանուցանի**

Այս գեօղ ի ժամանակս իշխանութեանն հայոց էր ընդ իշխանութեամբ իշխանաց հայոց, յետոյ ի տիրելն Հայաստան երկրիս այլազգի տաճկաց, անկաւ ընդ իշխանութեամբ տաճկաց, որպէս և ամենայն գեօղք: Յետոյ ի թուին մերում ի ՌՁԲ. (1633) և ի

տանկաց թուին ի ՌԽԲ. (1042), յորժամ նստաւ կաթուղիկոս յԱթոռս էջմիածին եռանելին Փիլիպպոս, սկսաւ ի յԱթոռս դարձուցանել զվեց դանկ մուլքն սորին: Նախապէս առնու զկէս դանկ մուլքն գեղջս այսմիկ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Սհաթլուեցի Սուլթան բէկ կոչեցեալ տանկէ միոյ հինգ թումանի, զորոյ զդապալայն տանկերէն գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն և ի (Բ. (2)) համար նշանաւն և ի թուին տանկաց մէկ հազար և յիսուն: Սմին համաձայն ի միւս ամին ի տանկաց թուին ի ՌՂԱ. (1641) ի նոյն տանկէն վերստին առնու զնոյն կէս դանկ մուլքն ևս հինգ թումանի, զոր գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն և ի (Ա. (1)) համար նշանաւն: Սոցունց սավատ մի ևս գոյ ի ( ) համար նշանիւ: Երկրորդ, նոյն եռանելին ի տանկաց ի ՌՂԱ. (1641) թուին առնու ի Բաքայ, Բանդալու և Բէկում կոչեցեալ տանկաց զմէկ դանկ մուլք գեղջս եօթն թումանի, որոյ տանկերէն դապալայն գոյ (Գ. (3)) նշան համարով: Երրորդ, նոյն եռանելին ի սոյն ՌՂԱ. (1641) թուոջս տանկաց առնու զկէս դանկ մուլքն գեօղիս ի Հասան և Հիւսէին տանկաց վեց թումանի, զորոյ զդապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ի (Դ. (4)) համար նշանաւն: Չորրորդ, առնու նոյն եռանելին զկէս դանկ մուլք գեղջս ի Սուլթան բէկի թոռն Իսմայէլ բէկէ և ի Մէջլամ դուլի բէկ կոչեցեալ տանկաց հինգ թումանով ի թուին տանկաց մէկ հազար յիսուն և երկու (1642), զորոյ զտանկերէն դապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ի (Ե. (5)) համար նշանաւն, որոյ սավատ մի ևս գոյ ի ( ) համար նշանաւ: Հինգերորդ, սոյն եռանելիս առնու զկէս դանկ մուլք ևս գեղջս ի Սէֆի դուլի բէկ և ի Մէջլում բէկ կոչեցեալ տանկացն վեց թումանով ի տանկաց թուին ի ՌՂԳ. (1643), զորոյ դապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ի ( ) համար նշանաւն: Վեցերորդ, նոյն եռանելին գնէ զկէս դանկ մուլք ևս գեղջս ի Շահ Ջէյնապ կոչեցեալ տանկէ չորս թումանով ի տանկաց թուին ի ՌՂԴ. (1644), զորոյ զտանկերէն դապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ի ( ) համար նշանաւն: Եօթներորդ, նոյն եռանելին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Թահմազ բէկի որդի Մէջլում բէկ կոչեցեալ տանկէ վեց թուման և չորս հազար դիանով ի ՌՂԵ. (1645) թուին տանկաց, զորոյ զդապալայն գտցես ի ( ) համար նշանաւն: Ութերորդ, նոյն եռանելին գնէ զկէս դանկ մուլք ևս գեղջս այսմիկ ի յԱմիրասլան բէկի որդի Հիւսէին պէկէն հինգ թումանով ի ՌՂԵ (1645) թուին տանկաց, զորոյ զդապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ի ( ) համար նշանաւն: Սորա երկու սավատf ևս գոն ի ( ) և ( ) համար նշանով, որպէս և ցուցակfն յայտ առնեն:

(203բ) Դարձեալ յետ Փիլիպպոս կաթուղիկոսին նստի Յակոբ եռանելի կաթուղիկոսն, և նա սկսանի գնել զմնացորդսն սոյնոյ գեղջ ի կողմանէ մլքին և իսպառ յԱթոռս դարձուցանել զվեց դանկն բոլորովին: Նախ գնէ ի Սահաթլուեցի Հիւսէին բէկի որդի Խանադան դուլի և Քալպալի կոչեցեալ տանկէ զկէս դանկ մուլքն հինգ թումանով

ի ՌԿԶ. (1655) թուին տաճկաց, զորոյ զղապալայն գտցես ի յերեսն գրեալ ցուցական և ( ) նշան համարով: Երկրորդ, նոյն երանելին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի բազազ Դարկեահ տաճկէ է. (7) թումանով ի ՌՀԷ. (1666) թուին տաճկաց, զորոյ զղապալայն գտցես ցուցական և ( ) համար նշանաւն: Երրորդ, սոյն երանելիս գնէ ձեռամբ իւր աթոռակալ Միքայէլ վարդապետին յՕշականայ մահալայի Մանկանոց կոչեցեալ վեց դանկ մուլքն ի յերևանցի Այասլու եասաւուլ Հաբիպէկ կոչեցեալ տաճկէ ԺԱ. (11) հազար դիանով ի ՌՀԸ. (1667) թուին տաճկաց, զորոյ զղապալայն գի՛տ ցուցական և ( ) նշանաւ, որոյ հին ղապալայն ևս գոյ ( ) համար նշանաւ: Չորրորդ, գնէ սոյն երանելիս զկէս դանկ մուլք գեղջս յՕշականայ և Սէֆի ղուլի տաճկէն Սհաթցոյ է. (7) թումանով ի ՌՁԳ. (1672)[I] թուին տաճկաց, զորոյ ղապալայն գի՛տ ցուցական և ( ) նշան համարովն: Հինգերորդ, սոյն երանելիս ձեռամբ իւր աթոռակալ Ոնոփրիոս վարդապետին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Սէֆի ղուլի տաճկէ վեց թումանով ի ՌՂԱ. (1680) թուին տաճկաց, զորոյ ղապալայն գի՛տ ցուցական և ( ) նշանաւ: Սորին աղագաւ հուճէթ մի ևս գոյ ի շխիսլամէ առեալ վեց թումանով ի ՌՁԳ. (1673)[II] թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւ և ( ) նշանաւ: Վեցերորդ, սոյն երանելիս ձեռամբ իւր աթոռակալ Ստեփաննոս վարդապետին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Թահմազի որդի Մուշուտ տաճկէ վեց թումանով, զորոյ ղապալայն գտցես ցուցական և ( ) նշանաւ ի տաճկաց ՌՂԱ. (1680) թուին: Եօթներորդ, սոյն երանելիս գնէ ձեռամբ աթոռակալ Մինաս վարդապետին զկէս դանկ մուլք գեղջս ի հայ Գասպարէն տասն թումանով, զորոյ զղապալայն և զվախպլամայն գտցես ցուցակաւ և ( ) նշանաւ ի տաճկաց թուին ՌՂԲ. (1681)[257]:

Յետ այսր ամենայնի, մինչ զբոլոր վեց դանկ մուլքն գեղջս գնեն այս երանելիքս, որպէս ասացաք, Սհաթլուեցի Բաբուռ աղայի աղջիկ Թուքազբան կոչեցեալ ոմն դաւի առնէ ընդ Յակոբ կաթուղիկոսին վասն կէս դանկ մլքին՝ ասելով իմ է: Վասն որոյ և Յակոբ կաթուղիկոսն տայ նմա ԺԲ. (12) հազար դիան դրամ[III] և գիր առնու ի նմանէ, զոր գտցես ցուցական և ( ) նշանաւն գրեալ ի ՌՁԷ. (1676) թւին տաճկաց: Դարձեալ Դանիէլ անուն ոմն դաւի արարեալ ի Ղլին Ասլանի դուստր Հիւրի խանէն և ի յԱլահդոլըու դուստր Թիլի խանէն, թէ այս գեղջ կէս դանկ մուլքն իմ է, զոր դուք ծախեալ էք էջմիածնի: Վասն որոյ և Յակոբ կաթուղիկոսն երեք թուման և հինգ հազար դիան է տուեալ նմա և գիր առեալ ի նմանէ ի ՌՂ. (1679) թուին տաճկաց, զոր գտցես ( ) և ցուցակաւ և նշանաւ: Դարձեալ բազազ ուստայ Ալի տաճիկ ոմն դաւի է արարեալ կէս դանկ մլքին գեղջս և Մինաս վարդապետն չորս թուման է տուեալ և գիր առեալ (204ա) ի նմանէ ի ՌՂԴ. (1683) թւին տաճկաց, զոր գտցես ( ) նշանաւ և ցուցական:

---

[I] Բ. ՌԾԳ

[II] Բ. ՌՁԳ

[III] Բ. գրամ

Դարձեալ Ամիր Ասլան պէկի թոռն աղջիկ Փիրի տանիկ ոմն Սհաթլուեցի և իւր վէքիլ Քուրտլար Ղուպան Ալին դաւի առնեն Աթոռոյս, թէ յՕշականայ մէկ դանկ մլքի երեք բաժինն մեր է: Աթոռակալ Միքայէլ վարդապետն տասն սօմար ցորեան տայ նոցա և գիր առնու ի նոցանէ ի ՌՃԼԳ. (1684) թուին տանկաց, զոր գտցես ցուցակսն և ( ) նշանաւ:

Արդ այս երկոքին լուսաճոգիքս, մինչ հանիցս այսպէս կրկնելով, գնեալ են այս յՕշական գեղջս Զ. (6) դանկ մուլքն, և տանիկք ոմանք, որք երբեմն ունեցեալք են զհին դապալայ և զթուղթ ինչ վասն սորին և եկեալք երբեմնապէս դաւի են արարեալ զմանէ չտալով հանգիստ, վասն որոյ և սոքա որոնեալ և տեղեկացեալ, թէ յուրեք գտանեցեալ է վասն այս գեօղիս թուղթ ինչ, զայնս ևս առեալ են, որով կերպիւ և իցէ: Քանզի երկիրս այս յորժամ ի ձեռաց քրիստոնէից ի յիշխանութիւնս տանկաց անկանի, գեօղս այս նախապէս զաւթէ տանիկ ոմն Ամիրքամալ Ապիտին պէկ անուն, որդի հանի[258] Նաւռուզի և թոռն հանի Հէյդարի: Եւ այս տանիկ յետոյ ծախէ զվեց դանկ մուլք գեղջս այսորիկ խօճա Սատիվախկազ տանկի ումեմն՝ որդւոյ Սէյդ Ալւոյ և թոռին Քեամալ Հիւսէնի[I], ութ հազար դինարի ի թուին տանկաց ՇՃԼԴ. (1488), զորոյ դապալայն գրէ շխիսլամ տանիկ ոմն Իւսուֆ անուն, որդի Խալիլի, որ է հնագոյն և մեծ կոնդակաձև, յորում գրի յՕշական չորից կողմանց կոպարօքն և սահմանօքն, մի կողմն Հանիլար կոչեցեալ գեղջ, մօտ Ղարաքիլիսէն, մի կողմն Ճաղվերթի ջուրն[259], մի կողմն Թաքեալ կոչեցեալ գեօղն և միւս կողմն Կարփւոյ ճանապարհն և առապարն: Այս է բուն և մայր դապալայն սոյն գեղջս վեց դանկ մլքին, զորոյ գտցես յերեսն գրեալ ցուցակսն և ( ) նշանաւ, զի, մինչ յիշեալ լուսաճոգիքն գնեալ են զվեց դանկ մուլք գեղջս այսորիկ կատարելապէս, զայս դապալայս ևս առեալ են ի նախկին տէրանցն, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի: Այլև ընդ սմին զԺԱ. (11) հատ հին դապալայս ևս են առեալ ի տանկաց, որք ոմանք զկէս և ոմանք զմի դանկն ունեցեալ գոլով ծախեալ են Սրբոյ Աթոռոյս, զի ի գնելն լուսաճոգւոց ի տանկաց զմուլքն գեղջս միով և կիսով դանկիւ հաստատուն դապալայիւք, զհին դապալայս նոցին ևս են առեալ ի նոցանէ, զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն և ի ( ) նշանէն, մինչև ի ( ) նշան համարն:

(204բ) Դարձեալ յետ այսորիկ ի յաւուրս Աստուածատուր կաթուղիկոսին ի ՌՃՀԱ. (1722) թուին մերոյ յՕշականայ գեղջ բոլոր հայքն ի պատահմանէ իմեքէ և կամ ի հարկապահանջութենէ այլազգեաց ի նեղ անկեալ կարի անկարանան և եկեալ առ Աստուածատուր կաթուղիկոսն՝ խնդրեն զհարիւր յիսուն թուման դրամ այսու պայմանաւ, թէ մեր գեղջ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյդ է, որ է տասանորդ: Արդ այժմ այսքան դրամ տուր մեզ, և մեք այսուհետև երկու մուլք տացուք քեզ, որ լինի ի հնգէն

---

[I] Բ. Հիւսէյինի

մէկ և ի տասնէն երկու մուլք: Այսու պայմանաւ առեալ զհարիւր յիսուն թուման դրամն և բոլոր գեօղականքն ընդ աթոռակալին գնացեալ յԵրևան՝ առ շխիսլամն Մօլա Մահմատ Հիւսէին կոչեցեալ, որ անուանի և յատկացեալ ումն է լեալ ի տաճիկսն երկրիս, ծանուցանեն նմա և ամենեքեան համաձայն յանձն առնուն զայս կանօն և գրեցուցանեն զհաստատուն ղապալայ մի և բազմաց տաճկաց ևս կնքեցուցանեն և միմեանց ևս երաշխաւոր լինին, իբր, թէ մեր կամաւ այսքան դրամ առաք ի կաթուղիկոսէն և գեղջս մերոյ ամենից հասից և սերմանց մուլքն (յորոց և տասնէն մէկն տայաք յառաջ) ի հնգէն մէկն տացուք այսուհետև: Եւ ով ոք ի մէնջ ընդդիմանայ՝ մեք վրէժխնդիր լիցուք: Այս լինի և գրի ի տաճկաց հազար հարիւր երեսուն և չորս թուին, զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն: Սմին համաձայն սոյն գեօղականքս յետ չորից ամաց յաւուրս իշխանութեանն օսմանցւոց ի տաճկաց թուին հազար հարիւր երեսուն և եօթն զղապալայ մի ևս տան Կարապետ կաթուղիկոսին ձեռամբ: Աթոռակալ Սիմէօն վարդապետին, զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) նշանաւ:

Արդ զգեօղս զայս յՕշական մուղանլու կոչեցեալ ազգ մի տաճկաց զաւթեալ և իւրացուցեալ էին, որպէս զբնիկ և զսեփական գեօղ և բնակարան իւրեանց և բնակեալ էին ի սմա յամս բազմս: Զայնքան այգիսն անապատացուցեալ, զաւելորդ տունսն քակեալ և զցանեցելոցն մուլք ևս ոչ տային Սրբոյ Աթոռոյս, և բնիկ գեօղական հայքն աստ և անդ կային տատանեալք: Մեք Աստուծով հանեալ վարեցաք զմուղանլու տաճիկսն աստի և զգեօղական հայսն բերեալ[I] բնակեցուցաք ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում[II]:

## (207ա) Գ. Վասն Ֆռանկանոց գեղջն, որ է Երևանու յերկրոջս ի Կարփի[260] նահիէն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, թէ որպէ՞ս և յորո՞ւմ ժամանակի ծանուցանի

Զի, որպէս ասացաք յանցելումն, թէ ի տիրելն այլազգեաց երկրիս հայոց անկան և ամենայն գեօղք ընդ հարկաւ նոցին, նոյնպէս և այս գեօղ: Եւ այսպէս մնալով ի ձեռս տաճկաց, յետոյ ի ժամանակս շահ Սէֆի թագաւորին Պարսից և Մօսէս կաթուղիկոսին մերոյ տէր գոլով վեց դանկ մլքին գեղջս այսմիկ երևանցի Ամիրբէկի որդի Ահլուլլայ կոչեցեալ տաճիկ ումն ծախէ Հաճի Խզրի որդի հաճի Իպրահիմ և Սուլէյման կոչեցելոց տաճկաց իննն թումանի, որոյ ղապալայն գրի ի տաճկաց ՌԽԲ. (1632) թւին: Եւ յետոյ յայլմէ յայլ անցանելով՝ անկանի ի ձեռս Արալղցի Ալի աղայի տաճկի ումեմն: Ապա ի մեռանիլ այս Ալի աղայիս սորին որդիք Իպրահիմն, Եաղուպն, Մուհամատն և քոյր իւրեանց Հուրիխանն[III], և կին մեռեալ եղբօրն իւրեանց Թամուր խանի Հիւսէին խանի դուստր Բէկում խանն, ծախեն զվեց դանկ մուլք գեղջս այսմիկ Ջուղայեցի Յակոբ

[I] Բ. > բերեալ
[II] Զգրված՝ 205ա-206բ
[III] Բ. Հիւրի խանն

կաթուղիկոսին մերոյ ինն թուման ինն հազար դիան և տասն շահიոյ ի տանկաց թուին ՌՃԴ. (1655), զորոյ զդապալայն գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն: Եւ ի յանոնոյն Յակոբ կաթուղիկոսին զայս դապալայս, առնու ի նոցանէ և զվերոյ յիշեցեալ հին դապալայն, զոր գտցես յերեսի ցուցակաւն և ( ) նշան համարովն:

(207բ) Եւ յետ այսորիկ ի յաւուրս Աբրահամ կաթուղիկոսին մերոյ Մշեցւոյ և յիշխանութեանն օսմանցւոց սոյն գեօղականքս ի պատահմանէ իմեք և կամ ի յաւելի պահանջմանց հարկաց այլազգեաց ի նեղ անկեալ գան յԱթոռս առ Աբրահամ կաթուղիկոսն և խնդրեն զվեց հարիւր ղուռուշ օսմանցւոց դրամ, որ է ըստ հաշուի երկրիս քառասուն թուման այսու պայմանաւ, զի բաց ի տասնէն մէկ միքէն, որ պարտին տալ Սրբոյ Աթոռոյս, զմուլք մի ևս տայցեն, որ լիցի ի հնգէն մէկ: Եւ Աբրահամ կաթուղիկոսն ևս տայ նոցա զվեց հարիւր ղուռուշ դրամ և առնու ի նոցանէ զդապալայ մի ի դատարանում օսմանցւոց ի ՌՃԽԴ. (1731) թուին տանկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն: Եւ ի նոյնում ժամանակին Մուստաֆա բէգ կոչեցեալ տաճիկ ոմն, որ նոյնոյ գեղջն աղայ է լեալ ի նմանէ ևս զգիր մի առնուն գեղականքն և տան մեզ, իբր թէ ինքն և որդին իւր Մահմէտն ևս կամեցան և ոչ ևս խօսիցին յառաջ և յետոյ՝ վասն սոյնոյ պայմանիս: Զսոյն գիր ևս գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

[Դարձեալ ի ժամանակս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին և յիշխանութեան Հիւսէին Ալի խանին Երևանու գիր մի շինելն, զոր և կնքեն խանն, շխիսլամն և այլք բազմօք տաճիկք վկայիւով, թէ մեք ամենքն գիտեմք և վկայեմք, զի Ֆռանկանոց գեօղի մուլքն ի բնէ անտի էջմիածնի է, զոր գտցես ցուցակաւն և (Դ. (4)) համարով][I] [261]:

Արդ գեօղս այս ի բառնիլ թագաւորութեանն Պարսից և ի վրդովիլն երկրիս Երևանու ամայացաւ ի բնակչաց իսպառ, որպէս և այլք բազումք: Ապա ի ՌՄԹ. (1760) թուոջն մերում ի ժամանակս Շամախեցի Յակոբայ կաթուղիկոսին, Հիւսէին Ալի խանն Երևանու պայմանէ ընդ Յակոբայ կաթուղիկոսին, թէ ես աստի և անտի զհայս բերեալ բնակեցուցից ի սա և շէն արարից, զկէս միքին ես առից և զկէսն դու:

Յետ բազմիցս ստիպելոյ խանին խօսք տայ և Յակոբ կաթուղիկոսն ակամայ և խանն յետ շինեցուցանելոյն զբոլոր վեց դանկ մուլք գեղջս զաւթեալ ինքն առնու և Աթոռոյս ոչ ինչ տայ յամս ութ, մինչև ի ժամանակս մեր: Ապա մեք խնդրեցաք ի նոյնոյ խանէն զմուլք գեղջս այսորիկ ընդ այլոց ոմանց գեօղօրէից միքիցն Սրբոյ Աթոռոյս, զորս ինքն և այլք տաճիկք զաւթեալք իւրացուցեալ էին, զորս յիւրաքանչիւր տեղւոջն ասասցուք: Եւ խանն պատճառ էր, թէ Յակոբ կաթուղիկոսն ինձ է բաշխեալ: Եւ յետ բազմաց առարկութեանց հազիւ կարացաք զերեք դանկ մուլք գեղջս այսորիկ ի յԱթոռս

---

[I] Գ., 4բ

դարձուցանել ի ՌՄԺԷ. (1768) թուոջս մերում: Ջմնացեալ երեք դանկն ևս տէր յաջո-ղեսցէ: Գի՛տ զխանի գիրն, որ զերեք դանկ մուլքն մեզ տայ՝ գրեցեալ ի ՌՃՁԲ. (1768) թուին տաճկաց:

Ջկնի անցիցս այսոցիկ ի գալ Նաւուզին[262] և ի մտանելն մեր ի ՌՄԺԸ. (1769) թիւն մեր սոյն Հիւսէին Ալի խանս մեր, մինչ զաւթեալ էր զԻմամարխ կոչեցեալ գեօղո-րայսն և զՔիլթափայն և զվայրսն ամենայն, որպէս ասացաք ի ԺԸ. (18)[263] գլուխն, սկսաւ զբազում գութանս բերել և յետ կոյսն Քիլթափային զվայրսն ամենայն վարել և բամբակ ցանել, զորս ջրով մերով էր ոռոգանելոց: Ինչ և իցէ: Յետ բազմաց գլխացա-ւութեանց և խօսակցութեանց վերստին ետուք իւրն զնոր առեալ Գ. (3) դանկ մուլքն Ֆռանկանոց գեղջս այսորիկ և առաք ի նմանէ զբոլոր վեց դանկ մուլք Քիլթափայ կոչեցեալ գեղջն՝ հետևելով ըստ ժամանակին կամաց նորին, որովհետև ինքնագլուխ տիրէր երկրիս: Վասն որոյ ետուք մեք խանին զնոր ղապալայ մի վասն Գ. (3) դանկ մլքին սոյն գեղջս: Այլև ընդ մերոյ ղապալային ետուք զվերոյ յիշեցեալ Ջուղայեցի Յա-կոբ (208ա) կաթուղիկոսի ղապալայն ի ՌԿՁ. (1655) թիւն տաճկաց գրեցեալ: Այլև զբազմակնիք վկայական գիրն վերոյ յիշեցեալ և զսոյն խանիս տուեալ մեզ թուղթ վասն Գ. (3) դանկին սոյն գեղջս, որպէս ասացաք: Իսկ խանն ետ մեզ ընդ վեց դանկ մլքին Քիլթափայ գեղջն մէկ նոր ղապալայ յիւր կողմանէն և երկու հին ղապալայք վասն սոյն գեղջս վեց դանկ մլքին, զորս ինքն առեալ էր ի նախկին տէրանց իւրեանց, զորս զտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն:

Արդ վեց դանկ մուլքն Ֆռանկանոցին է ի ձեռս խանին, որպէս թէ զերեք ի Շամա-խեցւոյ Յակոբ կաթուղիկոսէն առեալ և զերեքն ի մէնջ: Իսկ Քիլթափայ կոչեցեալ գեղջն վեց դանկ մուլքն է ի ձեռս մեր: Ի ժամանակս այս խանիս և մեր այսպէս եղև, յետոյ, եթէ դաւաճան յարիցէ՝ կարէ յԱթոռս նստօղն ասիլ, թէ մեր Ֆռանկանոցն մեզ տուք, ձեր Քիլթափայն ձեզ լիցի: Ըստ այսմ ոճի է և Ղօռուղն ի ձեռս մեր փոխանակ մեր Խաթունճարխին, որպէս ասացաւ յիւրումն տեղւոջ, ի [ԺԵ.] գլուխն[I]:

### (210ա) Գ. Վասն Մաստարայ կոչեցեալ գեղջն, որ է յերևանու յերկրոջս ի Կարփի նահիէն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյն է, թէ որպէ՞ս և ե՞րբ ծանուցանի

Զի որպէս ասացաք յանցելումդ, նոյնպէս և այս գեօղ անկանի ի ձեռս տաճկաց և փոփոխի յայլմէ յայլ, ոմանց ըստ բոլորին, ոմանց ըստ կիսոյն և այլոց ըստ մասին: Ապա յետ ժամանակաց ի միոյ տաճկէ Մուղատտամ Բատրխանի որդի Մուհամատ աղայ կոչեցելոյ զսոյն գեղջս երկու և կէս դանկ մուլքն առնու սոյն գեօղացի Ոսկանի որդի Թարխան կոչեցեալ հայ ոմն տասն և երկու հազար դիանով, որոյ և ղապալայն

[I] Զգրված՝ 208բ-209բ

տանկերէն գրի ի տանկաց ՌԿԴ. (1655) թուին: Եւ յետ միոյ ամի նոյն Թարխանն զնոյն երկու և կէս դանկ մուլքն ձեռամբ Յակոբ կաթուղիկոսին վախմ տայ Սրբոյ Աթոռոյս և ի գլուխ նոյնոյ ղապալային գրեցուցեալ զվախմական հուճէթն շխիսլամին և կնքեցուցեալ ի ՌԿԷ. (1656) թուին տանկաց, տայ մեզ: Եւ զայս ղապալայս և վախմլամայս գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն: Իսկ յետ ութն ամի Ալփաւուտ կոչեցեալ Իբրահիմ խալիֆայի որդի Ռզայ ղուլի ոմն տաճիկ դաւ յարուցանէ ընդ Սրբոյ Աթոռոյս ասելով, թէ ես զԿեաւոուր գեօղի շէշդանկ մուլքն ծախեցի ձեզ երկու թումանով... Դուք զՄաստարայու երկու և կէս դանկ մուլքն յումմէ՞ առեալ տիրէք: Գնացեալ ընդ նմա ի դիւան տաճկաց, յետ բազմաց վիճմանց տան նմա երեք թուման և հուճէթ մի առնուն ի նմանէ, զի մի ևս խօսիցի: Այս գրի ի թուին ՌՀԵ. (1664) տանկաց, զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

(210բ) Դարձեալ ի ՌՃԽԱ. թուին տանկաց և ի ՌՃԾԸ. (1709) թուոջն մերում երևանցի Սարգսի որդի Մհէր անուն հայ մի զերեք ռուպI (որ է մէկ դանկի երեք բաժինն) մուլքն գեղջս այսմիկ ծախէ Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տասն և մէկ թումանով, որոյ զղապալայն գտցես տանկերէն գրեալ յերեսի ցուցակաւն և ( ) համար նշանովն: Իսկ յետ հնգից ամաց ի ՌՃԿԳ. (1714) թուին մերոյ նոյն Մհէրի թոռունք և Մուզաբարի որդիք Բէկլարն և Մկրտիչն զկէս դանկ մուլքն ևս սոյնոյ գեղջ ծախեն Սրբոյ Աթոռոյս չորս թումանի գրաւ դնելոյ անուամբ, որոյ զղապալայն գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն: Այլև յետ հնգից ամաց սոյն Բէկլարս և Մկրտիչս ձեռամբ երևանցի խօճա Յակոբճանին զմէկ դանկ մուլք գեղջս ևս ծախեն Աստուածատուր կաթուղիկոսին մերոյ եօթն թուման և հինգ հազար դիանի ի թուին տանկաց ՌՃԼԲ. (1132) և ի մերս թուոջ ՌՃԿԸ. (1719), զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Եւ յետ այսր ամենայնի յետ առնլոյն զբոլոր վեց դանկ մուլք գեղջս այսմիկ, ապա առեալ են և ի հին տերանց զհին և զբուն ղապալայն, յորում գրի գեօղս այս սահմանօքն, որոյ մի կողմն Ղարախաչ[264] կոչեցեալ տեղին, մին կողմն ոչխարաց փարախն, մին կողմն Ապարանու ճանապարհն և միւս կողմն Ղըզլօրան, զոր Միրաշահի որդիք Դատա աղայն և Ջանֆիտէն ծախեն Ղօչի Ահմատ աղային և Սէյիտի Մուհամատ աղային ի տանկաց թիւն ՋԽԵ[II]. (1538), զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

(211ա) Սոյն Մաստարայ գեօղացի ափնհի[265] Մահմատ խանն զիր մի գրէ մեզ, թէ գեօղս այս ձեր մուլքն է, արիք զսորա առուն հանեցէք, զոր գի՛տ ցուցակաւն, որ վկայութիւն է, թէ մուլք գեղջս այսմիկ մեր է[III]:

---

I Բ. ռեթուպ

II Բ. ԼԽԵ

III Զգրված՝ 211բ-212բ

## (213ա) Ե. Վասն Քիրաշլու կոչեցեալ գեղջն, որ է յԱպարանու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, թէ որպէ՞ս և ո՞յր ձեռօք ծանուցանի

Այս գեղջ վեց դանկ մուլքն նախապէս լինի Սրբոյ Աթոռոյս ի ձեռն Գրիգոր կաթուղիկոսին, որ առնու ի յԱմիր Ռուստամէն մէկ հազար վաթսուն դինարի և վախմ առնէ Սրբոյ Աթոռոյս, որպէս ցուցաւ ի ճառն գեղջս մերոյ էջմիածնի, որոյ մեծ վախուպնամայն գոյ ի Սուրբ Աթոռոջս և զորպիսութիւնն անդ տեսցես, որ է մայր դապալայ վասն այսր գեղջ և վասն այլոց վեցից գեօղօրէից, որք անդ գրին: Դարձեալ յետ ժամանակաց յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսին, վասն այս Քիրաշլու գեօղիս, որ Փիրիդավրիշ ևս կոչի, վեց դանկ մլքին յաղագաւ Գիւլու տղայ Խան Մահմատ տանիկ ոմն իւրովք ընտանեօքն եկեալ դաւի առնէ, թէ այս գեղջ մուլքն մեր է: Ապա Փիլիպպոս կաթուղիկոսն տարեալ զնոսա յԵրևան առ շխիսլամն և սուտ հանէ զնոսա և հաւաստէ Սրբոյ Աթոռոյս զոլն վեց դանկ մուլքն այսր գեղջ: Եւ չորս թուման ևս տայ շարին և այլոց և զնոր դապալայի պէս հուճէթ մի առնու տանկերէն, զոր կնքեն շխիսլամն և այլք գլխաւորք իշխանք և տանկերէն և հայերէն վկայեն Սրբոյ Աթոռոյս վախմ գոլ ի բնէ մուլք գեղջս այսմիկ: Եւ զայս դապալայս զի՛տ յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւ, որ գրի ի տաճկաց թիւն ՌԿԳ. և ի մերում թուոջ ՌՃԲ. (1653):

Դարձեալ ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տանիկ ոմն Ղասում անուն դաւի առնէ ընդ Սրբոյ Աթոռոյս, թէ գեղջս այս մուլքն իմ է: Եւ ընդ սմա ևս երթան յԵրևան առ խանն և շխիսլամն: Եւ խանն բարկացեալ ի վերայ տանկին ասէ, թէ մեք ամենեքեան գիտեմք, որ մուլք գեղջդ այդմիկ էջմիածնի է: Ուստի և շխիսլամն զհուճէթ մի գրեալ տայ Սրբոյ Աթոռոյս, վկայելով, թէ վեց դանկ մուլք Քիրաշլուին էջմիածնի է ի ՌՁԲ. թուին տաճկաց և ի մերում թուոջս ՌՃԻ. (1671), զոր գտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Դարձեալ մինչ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի գնայ ի Ստամպօլ, յորում և վախճանի, իսկ Հանիբէկլու Շահկեալտու որդի Ղահար Ալլահվէրտի պէկ կոչեցեալ տանիկ ոմն զմուլք Քիրաշլու գեղջս այսմիկ (նաև Դիպակլու և Քէշիշքեանտ կոչեցելոց գեօղօրէիցն, որք ևս Սրբոյ Աթոռոյս են, զորոց յետոյ ասասցուք) զաւթէ և առնու ամ մի զմուլքս սոցին: Վասն որոյ և Սրբոյ Աթոռոյս լուսարար Ստեփաննոս վարդապետն այլովք միաբանիւքն արզ առնեն յԵրևան խանին և զկերեալ մուլքն յետս պահանջեն ի տանկէն՝ հաստատելով Սրբոյ Աթոռոյս զոլ մուլքն սոցա: Եւ տանիկն այն զմիջնորդս արկեալ զերիս խալվար միայն տայ և զմի գիր տայ շխիսլամին ձեռօքն, թէ ոչ ևս այսուհետև ձեռնամուխ եղեց ի գեօղօրայսն յիշեցեալ և ոչ ևս դաւի արարից, զի էջմիածի են ի ՌՂԴ. թուին տաճկաց և ի մերում թուոջ ՌՃԼԱ. (1682), զոր տեսցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Դարձեալ ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին Երևանցի էմինի որդիք Ալի ղուլի և Ջէյնալապտի կոչեցեալ ոմանք տաճիկք ելեալ դաւի առնեն ընդ Սրբոյ Աթոռոյս ասելով, թէ[I] (213բ) Քիրաշլուի մուլքն մեր է և զդապալայ մի ևս ունելով ի կողմանէ մօրն իւրեանց, և շարն եղումն հրաւիրէ զՆահապետ կաթուղիկոսն: Իսկ կաթուղիկոսն ի ձեռն մեծամեծաց զերկու թումանս և Ե. (5) հազար դիան տայ նոցա և զհունէքթ մի առնու ի նոցանէ շխիսլամին ձեռօքն, զի մի ևս դաւի արասցեն վասն գեղջս այսմիկ զի էջմիածնի է ի ՌՃԺԳ. թուին տաճկաց և ի մերս թուոջ ՌՃԾ. (1701), զոր զտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Դարձեալ ի յիշխանութեանս Նատր շահին ի ՌՃԽԸ. թուին տաճկաց և ի ՌՃՁԴ. (1735) թուին մերոյ ի ժամանակս Աբրահամ կաթուղիկոսին Թաւրոսաղեցւոյ[266] դիւանագիրք Նատր շահին և նորին հրամանաւն ի գիր արկանելն զերկրիս գեօղօրայսն և զբերս նոցին զգիր մի տան Սրբոյ Աթոռոյս հաստատուն վճռով և կնքեալ վկայեն, թէ էջմիածնի գեօղս, յՕշական, Ֆռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու և Քէշիշքեանդ գեօղօրէիցս վեց դանկ մուլքն Սրբոյ էջմիածնի են ստուգիւ, յորս ոչ ոք ունի հրաման ձեռնամխիլ, զոր զտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Եւ գիտեա՛, զի յորժամ ի լոյս բերաք զՄակուեցի Գրիգոր կաթուղիկոսի մեծ վախուպնամայն վասն եօթնից գեօղօրէիցն, որք ի նմա գրեցեալք են զոլ մուլք Սրբոյ Աթոռոյս, յորոց մին և այս գեօղս է ի ՌՄԺէ. (1768) թուոջն մերում և ցուցաք Հիւսէին Ալի խանին Երևանու զգիր մի ևս ի նմանէ առաք հաստատութեան վասն այսց գեօղօրէիցս, իբր մուլք զոլ Սրբոյ Աթոռոյս, յորում յանուանէ գրին գեօղօրայքն ի ՌՃՁԲ. (1182) թուին տաճկաց: Տե՛ս ի ճառս Աշտարակու[II]:

### (215ա) **Զ. Յաղագս Մուղնի գեղջն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, որ է յերկրոջս Երևանու ի Կարփի նահիումն, թէ որպէ՞ս և ե՞րբ, տե՛ս ի ներքոյ**

Գեօղս այս Մուղնի է ի յեօթանց գեօղօրէից մին, զորոյ զվեց դանկ մուլքն Ամիր Ռուստամն ծախէ Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսին մերոյ հազար յիսուն և հինգ դինարի, որոյ մեծ ղապալայն և վախումնամայն զոյ յԱթոռոջս, զորմէ ասացաւ ի վերդ, որ անտի հետէ Սրբոյ Աթոռոյս է մուլք գեղջս: Ապա յետ ժամանակաց յաւուրս տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսին, մինչ նորոգին բազում վանօրայք և եկեղեցիք և շատք ևս ի հիմանէ նոր շինին, որպէս պատմէ Առաքել պատմիչն, նորոգի և հաստատի սրբոյն Գէորգայ յանուն կառուցեալ վանքն, որ է ի գեօղս այս Մուղնի՝ հզաքարձութեամբ և արդեամբք նոյնոյ գեղջցի և նոյնոյ վանից առաջնորդ Մարտիրոս վարդապետին: Վասն որոյ և Փիլիպպոս կաթուղիկոսն ի պատիւ սրբոյն Գէորգայ և ի յօգնութիւն

---

[I] Բ. > թէ

[II] Ջնջված՝ 214աբ

ծախուց Մարտիրոս վարդապետին, զմուլքն Մուղնի գեղջս այսմիկ շնորհէ ձրիապէս նոյնոյ սրբոյ Գէորգայ վանիցն, որ և է այսպէս մինչև ցայսօր:

Եւ յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի յառաջնորդութեան նոյնոյ վանից Դաւիթ վարդապետին, երևանցի տաճիկ ոմն Ալի Տօստի որդի Ապտըլ բաղի կոչեցեալ, գնացեալ արզ առնէ երկրորդ շահ Աբասին, թէ Մուղնի գեղջ վեց դանկ մուլքն իմ է ի բնէ, այժմ էջմիածնի խալիֆայն զաւթեալ ունէ: Այս լինի ի տաճկաց թուին հազար եօթանասուն և մէկ: Եւ շահն հրաման գրէ յԵրևանու Նաջաֆ ղուլի խանին, թէ վերահասու լեր իրիդ այդմիկ, թէ յիրաւի է ի սա դարձո զմուլք գեղջն այնմիկ: Եւ յայսմ միջոցի սատակի յիշեցեալ Ապտըլ բաղին այն և խորհուրդն մնայ անկատար: Ապա յետ տասն և հինգ ամաց կին Ապտըլ բաղուն, որ Շահրիպան կոչիւր, վէքիլ առնէ ինքեան զԻւսուփ եղբայրն իւր, որ եկեալ դաւի առնէ ընդ նոյնոյ վանից առաջնորդ Դաւիթ վարդապետին, որք և գնան յԵրևան ի դատաւորն և դատաւորն, այսինքն՝ շխիսլամն, զվկայս խնդրէ ի յԻւսուփ տաճկէն, և Իւսուփն ոչ գտանէ զվկայս: Ապա ի Դաւիթ վարդապետէն զհաւաստութիւն խնդրէ ի յերդումն հրաւիրելով: Իսկ Դաւիթ վարդապետն երդմամբ և մեծ ղապալայիւն Գրիգոր կաթուղիկոսին հաստատէ էջմիածնի գոլ ի բնէ մուլք գեղջս այսմիկ: Վասն որոյ և շխիսլամն ի բաց վանէ զԻւսուփն և զկինն Շահրիպան և գիր գրեալ տայ Դաւիթ վարդապետին, հաստատելով, թէ վեց դանկ մուլք Մօղնի գեղջն ի բնէ էջմիածնի է: Այս լինի ի հազար ութսուն և վեց թուին տաճկաց (1675): Գտցես զայս գիր յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Արդ ի ՌՄԹ. (1760) թուոջն մերում սոյնոյ վանից առաջնորդ կոչեցեալ վատաշուէր Աղէքսանդր վարդապետն ի Յակոբայ կաթուղիկոսէն Շամախեցւոյ ծածուկ զմուլք գեղջս լիովին տուեալ էր, իբր կաշառ Երևանու Հիւսէյին Ալի խանի նազիր Իպրահիմ աղային, զի իւրեան տիրութիւն արասցէ, որ և կերեալ էր մինչև ի ՌՄԺԷ. (1768) թիւս մեր: Յորմէ (215բ) մեք յետս առեալ զաւթեցաք՝ հաւաստելով մերն գոլ մուլք գեղջս մեծ վախուպնամայիւն Գրիգոր կաթուղիկոսին Մակուեցւոյ: Տե՛ս ի ճառս Աշտարակու: Եւ այս է գիտելի, զի սոյնոյ գեղջս գեօղական հայքն ի վրդովմանց ժամանակին թողեալ զգեօղս զայս ամայի՝ եկեալ բնակեալ էին ի մէջ պարսպի վանիցն սրբոյն Գէորգայ քսան ամաւ աւելի, որք և լցեալ էին զվանքն և զսուրբ եկեղեցին գարշութեամբ, զորս մեք յաջողմամբն Աստուծոյ հանաք ի վանից և վերադարձուցաք ի բնիկ գեօղն իւրեանց Մուղնի՝ տալով զխարճս և զփայտս իւրեանց ծախուցն և տնաշինութեանն: Եւ զվանքն մաքրեալ արարաք նոր ի նորոյ վանք միաբանակեցաց ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոյն Գէորգեայ ի ՌՄԺԷ. (1768) թուոջս մերում:

**(218ա) Է. Յաղագս Դիպաքլու կոչեցեալ գեղջն, որ է յԵրևան յԱպարանու նահիէն, որ հայերէն Սանտ կոչի, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, տե՛ս ի ներքոյ**

Դարձեալ ի ՌՃԼԱ. (1682) թուոջն մեռում և ի ՌԳԴ. թուին տանկաց, մինչ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի գնայ ի յԸստամպօլ, յորում և վախճանի[267], իսկ Հանի Պէկլու Շահկեալտու որդի Ալլահվերտի ումն դաճար[268] տանիկ զմուլք գեղջս այսմիկ, նաև Քիրաշլու և Քէշիշքեանդ կոչեցեալ գեօղօրէիցն, որպէս ասացաւ ի յորպէսն Քիրաշլուին, զաւթեալ ուտէ ամ մի: Եւ Սրբոյ Աթոռոյս լուսարար Ստեփաննոս վարդապետն ընդ այլոց միաբանիցն արզ առնեն յԵրևան խանին և ի նոյն յիշեցեալ տանկէն յետս դարձուցանեն ի Սուրբ Աթոռս՝ առնլով (218բ) զհաստատուն հուճէթ մի ևս ձեռամբ շխիսլամին ի նոյն Ալլահվերտի տանկէն, զի մի ևս ձեռնամխիցի ի մուլք այսց գեօղօրէիցս: Եւ զայս գիրս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Եւ յետ գնելոյ Սրբոյ Աթոռոյս զվեց դանկ մուլքն գեղջս այսմիկ Դիպակլու կոչեցելոյ, ապա առնուն և զհին դապալայն սորին, յորում Ղույլուհասարլու Վալի աղայի որդիք Մահմատ և Ահմատ աղայքն ծախեն Ալփաւուտ խալիֆայ խալիլի որդի Իպրահիմ խալիֆայ կոչեցելոյն եօթն թումանի ի ՋԳԴ. (1585) թուին տանկաց: Յորում և գրի սահմանք գեղջս Արմուտ աղանին, Իլանլուն, Ղուզուլուղարայն և Ղարատաշն ի յԱպարան նահիէն, զոր գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Դարձեալ սոյնոյ գեղջս վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս լինելոյն յաղագաւ զգիր մի ևս հաստատուն ի Նատր շահի դիւանագրացն ունիմք կնքով, թէ էջմիածնի գեօղին, յՕշականու, Տռանկանցի, Մաստարայու, Քիրաշլուի, Դիպակլուի և Քէշիշքեանտի գեօղօրէից վեց դանկ մուլքն Սրբոյ էջմիածնի են, զորոյ զորպէսն ի յէջմիածնի և ի Քիրաշլուի յորպիսութիւնսն տեսցես[I]:

**(221ա) Ը. Յաղագս Քէշիշքէանտ կոչեցեալ գեղջն, որ է ի Դրխբուլաղ[269] նահիէն և կից Ապարանու նահիային, որ Այտին դաւրիշ և Զալապիքեանտ[II] ևս կոչի, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, տե՛ս զորպէսն ի ստորև**

Գեօղս այս լեալ է ումեմն Ղուլ Ֆահրատ աղա կոչեցեալ տանկի միոյ, որոյ որդի է լեալ Ղուլ Իսմայէլ աղա ումն, յորմէ գնէ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի զվեց դանկ մուլքն գեղջս Բ. (2) թումանի ի ՌՉԲ. (1671) թուին տանկաց, զորոյ զդապալայ ... գտցես ցուցակաւն և յերեսն ( ) նշան համարովն:

Դարձեալ ի ՌՃԽԸ. (1735) թուոջն տանկաց վերոյ յիշեալ Թրակացի Աբրահամ կաթուղիկոսն արզ առնէ Նատր շահ կոչեցեալ բռնաւորին, թէ Սուրբ Աթոռս ունի ի բնէ

---

[I] Զգրված՝ 219ա-220բ

[II] Բ. Հալապիքեանտ

անտի զեօթն գեօղս մլքատու, որք են էջմիածնի գեօղս, յՕշական, Ֆոանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպաքլու և Զալապիքեանտ, որ է Քէշիշքեանտ։ Ուաղամ մի շնորհեա մեզ, որ մեր գեօղօրէիցն և մեր մլքին մարդ ձեռնամուխ չլինի։ Եւ նոյն Նատր շահն ի գլուխ նոյնոյ[I] արզային հրաման գրէ, զոր գտցես ցուցակաւն։

Դարձեալ ի ՌՃՁԱ. (1738) թուին տաճկաց միրվէիզքն Նատր շահին զգեօղս զայս Զալապիքեանտ գրեն, որոյ բոլոր խարճն լինի տասն և վեց հազար դիան և չորս ապասի և ինքեանք լեալ են ութ տուն։ Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն։

(221բ) Յետ ինչ ամաց, մինչ Յակոբ կաթուղիկոսն ոչ լինի յԱթոռոջս, նոյն Ղուլ Իսմայէլ աղայն յԵրևան Սէֆի խանին արզ առնէ, թէ էջմիածնի խալիֆայն զՔէշիշքեանտի մուլքն, որ իմն է՝ զաւթեալ ինքն առնու։ Եւ խանն ևս նոյնոյ արզայի ի լուսանցն գրէ և կնքէ ի վերայ յաթոռակալին, թէ եկ մուրաֆայ լեր ընդ դատախազիդ։ Եւ աթոռակալն գնացեալ ի շարն, զքան ինչ տայ նոյն Իսմայիլին և զայն արզայի գիրն, որ ի լուսանցն ևս խանին գիրն և կնիքն գոյ, առնու ի նմանէ, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարովն։

Ապա յետ զնելոյ զմուլքն գեղջս այսորիկ առեալ են եռանեյիքն մեր ի ծախողացն զհին ղապալայն ևս, յորում զմուլքն վեց դանգ գեղջս այսմիկ Ֆարխատին անուամբ հայ ոմն ծախէ Եաղուպ աղայի որդի Խալիֆայ Իպրահիմ պէկ կոչեցելոյ տաճկի ումեմն վեց թումանի ի ինն հարիւր ութսուն թուին տաճկաց (1572)։ Յորում կողմունք գեղջս գրի Արմուտ աղաճին, Իլանլուն, Ղուզուլու դարայն և Ղարատաշն, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարով։ Զայլ ոպէսն գեղջս տե՛ս ի յորպիսութիւն Դիպակլու գեղջն[II] ։

## (224ա) **Թ. Յաղագս Նորագեօղ կոչեցեալ գեղջն, որ է յԵրևանու երկրոջս ի Ղրխբուլախ նահիէն, որոյ վեց դանգ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, թէ ոպէ՞ս և ե՞րբ, տե՛ս ի ստորև**

Նորագեօղ գեղջս այս վեց դանգ մուլքն ունեցեալ է նախապէս երևանցի խօճա Սէթ ոմն։ Այս Սէթս ունեցեալ է յերկրոջս յԵրևանու[III] զվեց դանգ մուլքս Նորագեղու գեղջն, Նորք գեղջն, զչորս դանգ և կէս Եղուարդ գեղջն, զվեց դանգ մուլքն Եայճի գեղջն, որ է ի Ծաղկունեաց ձորն, զվեց դանգ Գեօլքեանդ գեղջն և զչորս դանգ և կէս մուլք Ամիրի գեղջն, որ է ի Գէօղարքունին։ Եւ զայլս այսպիսիս շատ այգիս, ջրաղացս, տինկս, տունկս և զայլս մուլքս, զորոց զշատն Աթոռս առեալ է ի յորդւոց և ի թոռանց սորին զորն գնով և զորն ի յիշատակ, զորս ասելոց եմք յիւրաքանչիւր տեղւոջն։ Արդ

---

[I] Բ. > նոյնոյ
[II] Զգրված՝ 222ա-223բ
[III] Բ. > յԵրևանու

այս Սէթիս որդիf են եղեալf խօճա Յակոբճանն և Գրիգորն: Յակոբջանին որդի է լեալ Սարգիս, nr տաճկական անուամբ Մանշուր և Սարուխան կոչեցաւ, և Գրիգորին որդի է լեալ Քեալանթար Սահակն: Եւ զայսոսիկ վասն այն յիշեցաf, զի և սոfա են ծախեալ Յակոբ կաթուղիկոսին զմուլfս, զորս յետոյ ասասցուf: Այս Սէթի որդի Յակոբճանս, nr լեալ է բարեպաշտ և հոգեսէր և աստուածատուր պարգևօf հարուստ յամենայնի, վախմ առնէ Սրբոյ Աթոռոյս և ձրիապէս յիշատակ տայ զվեց դանգ մուլfն Նորագեօղ կոչեցեալ գեղջս այսորիկ ձեռամբ Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի տաճկաց թուին հազար վաթսուն և ինն և ի մերումս թուոջ հազար հարիւր և ինն (1660)[270]: Այլև ընդ սմին վախմ և յիշատակ տայ Սրբոյ Աթոռոյս զշորս դանգ և կէս մուլfն Եղուարդ գեղջն, այլև զմէկ այգի ևս յԵրևան fաղաfոչն, զոր Մուխանենց այգի կոչեն, որոյ սահմանfն են ճանապարհն, Սրբոյ Աթոռոյս վախմ այգին, սարն և Ամիրբէկի այգին: Այլև զայգի մի ի Ջորագեօղ, զոր Թոռոսենց այգի կոչեն, որոյ սահմանfն են առուն, nr ելանէ ի Ջանկի գետոյն և Ջորագեղցւոց այգիfն: Այլև զջրաղաց մի ի Ջորագեօղ, զոր Գառնուկենց ջրաղաց ասեն, որոյ կողմունf են ջրաղացաց առուն, Ղազարի ջրաղացն և ճանապարհն:

Զայս ամենայն զորս գրեցաf վախմ և յիշատակ տայ նոյն Յակոբճանն Սրբոյ Աթոռոյս և հաստատուն ղապալայս գրեցուցանէ զերկուս հատս տաճկերէն բազմաց մեծամեծ տաճկաց և հայոց կնfեցուցանէ և իւրոց որդւոց և ազգականացն ևս, այսինfն՝ նոյն Սարուխան կոչեցեալ Սարգսին և այլոցն և ինfն ևս կնfէ և գրէ իւրով ձեռամբն, թէ զայսոսիկ վախմ ետու Սրբոյ էջմիածնի ձեռամբ Յակոբ կաթուղիկոսին իմով կամաւս, այսու պայմանաւ, nr ի շաբաթ և ի կիւրակէ աւուրսն ի սուրբ Պատարագոջն յիշեսցեն յաւիտեան, զիս և զիմայինս: Ով nf ի յազգականաց իմոց դաւի արասցէ և յետս կամիցի առնուլ Գծ. (300) հայրապետացն նզովեալ լիցի, որոյ յիշատակն orհնութեամբ եղիցի: Գի՛տ զայս ղապալայfս, nrf երկուfն ևս ըստ գրեցելոցն մի են, սակայն ( ) համար նշանաւն, առաւել բազմակնիf է և լաւ զարդարեցեալ և հաստատուն, fան զ( ) համար նշանաւն, որպէս տեսանես յԵրեսն գրեցեալ ցուցակօfն:

(226ա) **Ժ. Յաղագս Նորf կոչեցեալ գեղջն, nr է յԵրևան յերկրոջս ի Դրխբուլաղ նահիէն, որոյ վեց դանգ մուլfն Սրբոյ Աթոռոյս է, թէ որպէ՞ս և յորո՞ւմ ժամանակի, ծանուցանի**

Գեօղս այս Նորf եղեալ է նախապէս երևանցի պարոն Սէթին, զոր ի վերոյ յիշեցաf, որոյ որդի է լեալ բարեպաշտն Յակոբճան և Յակոբճանի որդի է լեալ Սարգիսն, nr յետոյ տաճկացեալ է և կոչեցեալ է Սարուխան, գեղջս այս վեց դանգ մուլfն ի խօճա Սէթէն և Յակոբէն մնայ այս Սարուխան կոչեցեալ Սարգսիս: Եւ Սարուխանս այս ծախէ զվեց դանգ մուլfն գեղջս այս Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին Ծե. (55) թումանի ի տաճկաց թուին մէկ հազար ութսուն և հնգին և ի մերում թուոջս մէկ հազար և հարիւր

քսան և երեքն (1674), որոյ կողմանքն են՝ Ղզլթափէն[271], Երևանու առուն[272], որ ի Դրխբուլաղու գետէն ելանէ, խօճա Գրիգորի ջրաղացներն և Դրխբուլաղու գետն: Գի՛տ զղապալայն սորա յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Իսկ և յառաջ քան զայս զվեց դանկ մուլքն այս գեօղիս թարվզեցի Ահմատ բէկի որդի Ալիդօստն, և երևանցի Մուսլումի որդի Մուհամատ սատղն, և Մահմատ մախսուտն են ծախեալ Ամիրկեօնա խանի որդի Միրզայ Նազրկեօնին ինն թուման և երկու հազար դիանի ի տանկաց թուին ՌԻԷ. (1617), զորոյ զղապալայն գտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն, զի ի յառնուլն Յակոբ կաթուղիկոսին զմուլք գեղջս՝ առեալ է և զայս հին ղապալայս[I]:

(228ա) **ԺԱ. Յաղագս Եղուարդ գեօղին, որ է յերկրոջս Երևանու ի Դրխբուլաղ նահիէն, որոյ չորս դանկ և կէս մուլքն Սրբոյ Աթոռոյս է: Թէ որպէ՞ս և ե՞րբ, տեսցես ի ստորև**

Գեօղս այս Եղուարդ, որոյ չորս դանկ և կէս մուլքն այսպէս է Սրբոյ Աթոռոյս, որպէս ի վերդ ասացաք, ի յորպիսութիւնս Նորագեօղու: Քանզի բարեպաշտն այն Յակոբճան, որդին պարոն Սէթին, ընդ վեց դանկ մլքին Նորագեղու զչորս և կէս դանկ մուլք գեղջս այս ևս տայ Սրբոյ Աթոռոյս վախմ և յիշատակ, որոց ղապալայն և վախմնամէն[II] միէ և երկու հատ գրեցեալ ի տանկաց թուին հազար վաթսուն և ինն (1658), զորս գտցես ի յերեսն գրեալ ցուցակօքն և ( ) և ( ) համար նշանիւքն:

Իսկ և յառաջ, քան զայս յերկրոջս Երևանու Մուրատ պէկ ոմն տաճիկ վէքիլ լինի ի դրանէ արքունեաց և այս Եղուարդ գեղջս չորս և կէս դանկ մուլքն, որ խօճա Յակոբին է լեալ զմէկ և զկէս դանկ մուլքն ևս այս Մուրատ բէկիս է լեալ, և այս Մուրատ բէկս բռնութեամբ զչորս և կէս դանկ մուլքն ևս ի Յակոբճանէն յափշտակեալ է ասելով, թէ գեղջս այս վեց դանկ մուլքն իմ է լրապէս: Վասն որոյ խօճա Յակոբճանն ելեալ գնայ ի յԱսպահան և արզ առնէ երկրորդ շահ Ապասին՝ ցուցանելով զհաստատուն ղապալայսն իւր և զայլս վկայական գրեանս: Եւ շահն ևս ռաղամ գրէ ի վերայ խանին Երևանու, զի զմուլքն Յակոբին առեալ ի Մուրատ բէկէն տայցէ իւրեան և մինչև ի գալն Յակոբին՝ Երևանու խանն ձգի ի խանութենէ: Վասն որոյ և վերստին դառնայ Յակոբն ի յԱսպահան և վերստին առնու ռաղամ ի նոյն շահէն ի վերայ նոր խանին, որով և գայ յԵրևան հրամանաւ շահին և գրով շխիսլամին զաւթէ զմուլքն իւր, և շխիսլամն տայ Յակոբին զհաստատուն հուճէթ մի իւր և խանի կնքովն վկայելով, թէ Յակոբճանին է չորս և կէս դանկ մուլքն Եղուարդայ ի տանկաց թուին ՌԿԴ. (1653), զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն: Քանզի որովհետև Յակոբճանս այս յետ հնգից ամաց Սրբոյ Աթոռոյս վախմ տայ զայս չորս և կէս դանկ մուլքս, որպէս ասա-

[I] Զգրված՝ 226բ-227բ

[II] Բ. վախմնամայն

ցաւ ի վերդ, վասն որոյ և զայս ճունէքս ևս ընդ իւրոյ վախուպնամային տայ Սրբոյ Աթոռոյս: [Նոյնպես և զվերոյ յիշեցեալ ոաղամդ տայ, որպէս որ գրի ՌԿԲ. (1658) թուին տաճկաց, զոր ևս գի՛տ ցուցակաւն և ( ) համարով][I]:

(228բ) Արդ զգեօղս զայս եղուարդ յառաջ, ճան զօսմանցւոց տիրելն երկրիս յաւուրս պարսկական իշխանութեանն, պարսիկ խանք հանեալ էին յԱթոռոյս և հրացուցեալ՝ խալիսա անուանելով: Եւ յանփոյթութենէ կաթուղիկոսացն մերոց և յանյաջողութեանց ժամանակին մնացեալ էր այնպէս ի ձեռս նոցա յամս յիսուն աւելի և կամ պակաս: Մինչ զի գրէ, թէ աննետ էր լեալ մուլք զոլն գեղջս Աթոռոյս, զոր ոչ ոք գիտէր ոչ ի յաթոռայնոցս և ոչ ի յերկրականացս: Եւ գեօղս այս ևս ի բառնիլն թագաւորութեան պարսից ամայի և աննարդաբնակ էր լեալ յամս ճանիս: Ապա ի ՌՄԺԷ. (1768) թուոջս մերում Երևանու խան Հիւսէին Ալի կոչեցեալն, մինչ կամեցաւ ի շինութիւն արկանել, մեք ցուցաք զվախուպնամայն Յակոբճանին և հաւաստեցաք զոլ Սրբոյ Աթոռոյս մուլք գեղջս այսորիկ, զոր և յաջողմամբն Աստուծոյ զաւթեցաք, իսկ ընդ այլոց ոմանց գեօղօրէից, որ և է այժմ Սրբոյ Աթոռոյս չորս դանկ և կէս մուլք գեղջս այսորիկ: Տե՛ս ի ճառս Աշտարակ գեղջն[II]:

(230ա) **ԺԲ. Յաղագս Եայճի և Ամիրի գեօղկոչեցեալ գեօղօրէիցն, զի Եայճի գեօղն, որ է յերկրոջս Երևանու ի նահիէն Ծաղկունեաց ձորու, որոյ վեց դանկ մուլքն է Սրբոյ Աթոռոյս և Ամիրի գէօղն, որ է ի Գեօղարքունի նահիէն, որոյ չորս և կէս դանկ մուլքն է Սրբոյ Աթոռոյս, թէ որպէ՞ս և ե՞րբ, տե՛ս ի յատորևդ**[273]

Երկոքին գեօղքս այսոքիկ եղեալք են երևանցի խօճա Սէթին, զորմէ ի վերդ յիշեցաք: Ի նմանէ նմացեալք են ի միւս յորդին իւր Գրիգորն և ի Գրիգորէն ի յորդին իւր Սահակ քեալանթարն: Եւ այս քեալանթար Սահակս զմուլք երկուց գեօղօրէիցս այսոցիկ, այսինքն՝ զվեց դանկ մուլք Եայճի գեօղին և զչորս դանկ և կէս մուլք Ամիրի գեօղին, ընդ յորս և զչրաղաց մի ի Զորագեօղն, որոց կողմունքն են՝ Ջանկու գետն, ջրաղացի առուն, Յօհանիսի ջրաղացն և Գրիգորի ջրաղացն: Այլև մէկ ձեռք տուն ի Նորագեօղ քառասուն կարասով հանդերձ ծախէ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին երեսուն թումանի ի տաճկաց ՌՀԱ. (1661) թվին և ի հայոց թուին..., զորոյ զղապալայն զտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն[274]:

Իսկ յառաջ, ճան զայս ի ժամանակին, յորում օսմանցիքն առնուն զԵրևան, և զԱմիրկիւնա խանի որդի Թահմազ ղուլի խանն, որ խան էր Երևանու, առաքեն ի յԸստամպօլ և յետ միոյ ամի զայ և շահ Սէֆին և առնու զԵրևան ի յօսմանցւոց և դառնայ ի յԸսպահան և ապա զՓօլատ բէկ անուն ոմն առաքէ յԵրևան ի զիր արկանել

---

[I] ՄՄ, ձեռ., 4592, 9բ
[II] Ջզրված՝ 229աբ

զմուլքս և զայլ ինչս Թահմազ ղուլի խանին և այս Փօլատ բէկս ի սադրելոյ ոմանց նախանձոտ տանեկաց ի գիր արկանէ և զայս երեք գեօղս, այսինքն՝ զՆորագեօղ, զեայեհի և զԳեօլքեանդ, իբր թէ և սոքա են Թահմազ ղուլի խանին մուլք, որք խօճա Սէթին են, որպէս ի վերդ ասացաք: Ապա նստի յԵրևան խան յայնմ միջոցի Մահմատ ղուլի ոմն և նա զաւթեալ ունէ զմուլք երից գեօղօրէիցս յամս քանիս ի կողմանէ արքունեաց: Յետոյ ի ժամանակս երկրորդ շահ Ապասին խօճա Սէթի որդի Յակոբճանն գնայ ի յԱսպահան՝ ցուցանելով զգրեանս հաստատունս և զղապալայս արզ առնէ շահին, թէ այս երեք գեօղօրէիցս մուլքն մեր է, այժմ Մահմատ ղուլի խանն զաւթեալ ունէ՝ ծանուցանելով զքանիօնութիւն ամացն և զորքանութիւնս հասից գեօղօրէիցն: Եւ շահն գրէ առ յԵրևանու մեծամեծսն և դատաւորսն, զի ո՞վ ոք ի նախանձու (230բ) ի դաւթար է արկանել, տուեալ զայն գեօղօրայսն ի նմանէ այնքան ամաց զհասսն այնց գեօղօրէիցն առեալ ի յարքունիս տայցեն և այնք գեօղօրայքն, եթէ յիրաւի խօճա Յակոբճանին են, զստոյգն արզ արասցեն իւրեան: Եւ ի գալ հրամանիս ի յԵրևան, ստուգեն դատաւորքն և մեծամեծքն յիրաւի գոլ Յակոբին և արզ առնեն շահին վկայելով, թէ այս երեք գեղջս մուլքն Յակոբինն է: Վասն որոյ և շահն զռաղամ տայ խօճա Յակոբին, զի զաւթեսցէ զմուլքս իւր:

Ապա յետոյ յորժամ խօճա Յակոբն զՆորագեօղ գեօղն վախմ տայ Սրբոյ Աթոռոյս և եղբօրորդին իւր Սահակ քեալանթարն, զեայեհի գեօղի մուլքն և զԱմիրի գեօղի մուլքն ծախէ Յակոբ կաթուղիկոսին, որպէս ասացաք, վասն որոյ և Յակոբ կաթուղիկոսն ի յառնուլն զգեօղօրայս զայս խնդրէ ի նոցանէ և զայս յիշեալ ռաղամս ի հաստատութիւն բանին, իբրև զհին ղապալայ, բայց ի ռաղամումն, որովհետև Գեօլքեանդն ևս է գրեցեալ, որ ոչ էր Աթոռոյս, այս Գեօլքեանդ գեօղիս յաղագս Յակոբի որդի Սարուխանն, որ ի վերդ յիշեցաւ ոչ տայ զայս ռաղամս Յակոբ կաթուղիկոսին, այլ զսուրաթն նորին գրեցուցեալ շխիսլամին և կնքեցուցեալ տայ Յակոբ կաթուղիկոսին և զասլ ռաղամն առ յինքեանս պահեն: Գտցես զայս ռաղամիս սուրաթն գրեցեալ ի տանեկաց թվին ՌՂԸ. (1648), որպէս ցուցանէ յԵրեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

### (234ա) ԺԳ. Վասն Մէլիքի գեօղ կոչեցելոյն, որ է յԱպարանու նահիումն, որոյ վեց դանկ մուլքն է Սրբոյ Աթոռոյս, թէ որպէ՞ս և ո՞յր ձեռօք ծանուցանի

Գեօղս այս, որ է յԱպարան նահիումն, որոյ շէշ դանկ մուլքն Ալփաւուտ Իպրահիմ խալիֆի որդի Ոզա ղուլի տանիկ ոմն ծախէ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին մերոյ երկու թումանի ի տանեկաց թուին ՌՃԺ. (1664), որոյ կողմունքն են՝ Բաշ-Ապարանն, Վրացտանու ճանապարհն, Տաշ պուրինն և Ջաննիկու գետն, զորոյ զղապալայն գի՛տ յԵրեսն գրեցեալ ցուցակաւն և համար ( ) նշանաւն[I]:

[I] Զգրված՝ 234բ

## (235ա) **ԺԴ. Յաղագս Բաթռինն կոչեցեալ գեղջն, որ է յԵրևան յերկրոջս ի Կարփու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է**

Գեօղիս այսորիկ զվեց դանկ մուլքն առնու նախապէս Գրիգոր կաթուղիկոսն Մակուեցի ի յԱմիր Ռուստամէն հազար հարիւր վաթսուն դինարի ի թուին տանկաց ութն հարիւր երեսուն և հինգ (1431), որոյ զմեծ ղապալայն գի՛տ ի յերեսն գրեցալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն, զոր յիշեցաք ի յորպիսութեանն գեղջս Էջմիածնի, յորում եօթն գեօղօրէից մին է և այս Բաթռինջ գեօղս:

Սակայն զկնի ժամանակաց ի խառնակմանց երկրիս, տաճիկք զաւթեցին զմուլք գեղջս այսմիկ, որպէս և այլոց գեօղօրէիցն, որպէս ասացաւ ի վերդ: Ապա ի թուին տանկաց ՌԿՁ. (1655) Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն առնու զմէկ դանկ մուլքն սորին վերստին ի Նեճիլու Շխահմատի որդի Բայրամ պէկէն ԺԶ. (16) հազար դիանի, զորոյ զղապալայն գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւ: Զսորին հին ղապալայն ևս գտցես ցուցակաւն և ( ) նշան համարովն, զոր իւզբաշի[275] Իպրահիմի որդի Ոզա ղուլի աղայն ծախէ սոյնոյ յիշեցելոյ Բայրամ պէկիս ի թուին տանկաց ՌԿԴ. (1653):

Այլև քան զայս հին ղապալայ մի ևս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարով, յորում զերեք դանկ մուլք գեղջս Հիւսէին պէկի որդի Ալիջանբէկն ծախէ Եաղուպ պէկի որդի Իբրահիմ պէկին չորս թումանի ի ՋԶԵ. (1577) թուին տանկաց:

(235բ) Այլև բաց ի միէքն գեօղիս ունեցեալ է Սուրբ Աթոռս ի գեօղս այս զխոտհարքս և զարօտատեղիս անասնոց և գեօղս այս լեալ է կաթուղիկոսացն մերոց հովանոց և զքօսարան՝ յաւուրս ամարայնոյ տօթոյն: Վասն որոյ երբեմն քէօշար[276] տաճիկք, որք այստի և անտի եկեալք ի յարօտ գեղջս իշխանեցեալք են և զխոտ և զարմտիս սորին ուտեցուցեալք են անասնոց իւրեանց, Փիլիպպոս[I][277] կաթուղիկոսն ժողովեալ զշրջակայ գեօղօրայսն, ընդ նոսին արզ է արարեալ երկիցս անգամ երկրորդ շահ Ապասին և ռաղամ է բերեալ և զայնպիսի վնասատու տաճիկսն վարեալ է անտի: Գի՛տ զայսոսիկ ռաղամքս մին ( ) նշան համարով և միւսն ( ) համար նշանաւ: Եւ ցուցակք երեսացն ևս ցուցանեն, որք գրին ի տանկաց թուին ի ՌԿ. (1650) և ի ՌԿԱ. (1651): Նոյնպէս և ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ քիւրաքանլու[278] քեօշարի տաճիկք եկեալ իշխանին ի գեօղս յայս, զքերս և զխոտս սորին ճարակ տան անասնոց: Եւ Աղէքսանդր կաթուղիկոսն ընդ շրջակայից գեօղականացն արզ գրէ շահ Սուլթան Հիւսէինին և ռաղամ բերեալ՝ վարէ զնոսա: Զայս ռաղամս ևս գի՛տ ցուցակաւն և ( ) նշան համարաւն, գրի ի տանկաց թուին ՌՃԿԱ. (1712)[II]:

---

[I] Ա, Բ. Յակոբ

[II] Զգրված՝ 236աբ

**(237ա) ԺԵ. Վասն Բոխենիս կոչեցեալ գեղջն, որ տանկերէն Չաշուրլու կոչի, ճանդէպ Ամբերդ կոչեցեալ ամրոցին, որ է յերկրոջս յԵրևանու ի Կարփու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է, թէ ոպէ՞ս և ե՞րբ, տե՛ս ի ստորև**

Գեօղս այս ի բնէ անտի ի գեօղականաց իւրոց վախմ է տուեցեալ Սրբոյ Աթոռոյս կամաւ և յօժարութեամբ իւրեանց, զի զվեց դանկ մուլքս իւրեանց տայցեն Սրբոյ Աթոռոյս: Սակայն ի խառնակմանց ժամանակին և յանշքութենէ Աթոռոյս, երբեմն նոյն գեօղականքն թէև ի պակասութենէ իւրեանց արգելեալ են և ոչ են տուեալ, իսկ յետոյ ի ժամանակս Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի յորդորմանէ նորին սոյն գեօղականքս ի մի ժողովեալ վերստին հաստատելով զնախնեաց իւրեանց ուխտն՝ անդրէն դարձուցանեն զվեց դանկ մուլք գեղջն իւրեանց ի Սուրբ Աթոռս: Վասն որոյ և տանկերէն զհաստատուն դապալայանման հուճէթ և վախմնամայ գրեն և տան Սրբոյ Աթոռոյս՝ գեղովի վկայելով ի նմա, թէ մեք ի նախնեաց մերոց լուեալ և տեսեալ եմք, որ մեր գեօղս վախմ են տուեալ Սրբոյ Էջմիածնի: Վասն որոյ և մեք տուաք այսուհետև, թէ ի մէնջ և թէ զկնի մեր, եթէ խօսօղ և արգելօղ լինիցի՝ սուտ և անընդունելի լիցի: Գրի այս գիր ի տանկաց ՌՃԱ. (1660) թուին և ի մերում թուոջ..., զոր զացեսս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւ[I]:

**(238ա) ԺԶ. Յաղագս Ծօպանիս գեղջն, որ է յերկրոջն Երևանու ի Կարփու նահիէն, որոյ մուլքն է Սրբոյ Աթոռոյս, թէ ոպէս, տե՛ս ի ստորև**

Դարձեալ ի ժամանակս Եղիազար կաթուղիկոսին ի ՌՃԼԶ. (1687) թուոջն մերում Հանիպէքլու Իւսուֆ աղայ տանիկ ոմն դաւ առնէ ընդ Սրբոյ Աթոռոյս վասն մլքին գեղջս այս, թէ իմ է: Ապա Սրբոյ Աթոռոյս աթոռակալ Պետրոս վարդապետն գնացեալ ընդ նմա ի դատարանն տանկաց սուտ հանէ զնա, բայց տայ նմա զԼԵ. (35) սօմար ցորեան և գարի և ի բերանոյն զգիր առնու շխիսլամին ձեռօf, թէ այսուհետև մուլք գեղջս Ծօփանիս կոչեցեալ Էջմիածնի է, ինձ ոչ ինչ ունիմ զիրաւունս, զոր զացեսս ցուցակաւն և ( ) նշան համարովն, գրեցեալ ի ՌԴԹ. (1687) տանկաց:

(238բ) Այլև ի տանկաց թուին ՋՀԲ. (1564) զմէկ և կէս դանկ մուլք գեղջս այսմիկ Բաքի որդի Ետկեար ոմն ծախէ համատանցի Մօլայ Իւսուֆի որդի մօլայ Աման Ալահին ութ հազար դիանի, զորոյ զդապալայն զի՛տ ցուցակաւն և ( ) համար նշանաւն, յորում սահմանք գեղջս ևս գրեցեալք են մի կողմն Ագարակ գեօղն, մի կողմն Անբերդ գետոյ ձորն, մին կողմն Բիրականու այգիքն և միւս կողմն նորին ջրաղացաց առուքն:

Ի յանունս մեր զ… դանկ մուլքն գեղջս այսորիկ՝ առեալ եմք և զայս հին դապալայս:

---

I Չգրված՝ 237բ

## (252ա) **ԺԷ. Յաղագս Ղարաղօյունլու կոչեցեալ գեղջն, որ Եօլճեասան ևս կոչի, որ է ի Գառնու ճահիճն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է**

Գեօղս լեալ է ումեմն խօճա Սուֆիաս կոչեցելոյ հայ ազգաւ և Սուֆիասս ի պատահմանց ինչ երթեալ ի Շամախի, մնայ անդ: Եւ Սրբոյ Աթոռոյս միաբան Ջուղայեցի Թասալուի որդի Յակոբ վարդապետն, որ յետոյ եղև կաթուղիկոս Սրբոյ Աթոռոյս, պատահի և ի Շամախի Սուֆիաս կոչեցելոյն ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին և անդ սոյն Յակոբ վարդապետս գնէ զվեց դանկ մուլքն գեղջս այսորիկ ի նոյն Սուֆիասէն ճսան և երկու թումանով, որոյ տանկերէն ղապալայն գրի ի Շամախի ի ՌՂԱ. (1650) թուին տանկաց, զոր գի՛տ ցուցակաւն և ( ) նշան համարովն: Սահմանք սոյնոյ գեղջս են՝ Երասխ գետն, Ղույլուհասար գեօղն, Ալիբաբաթ գեօղն և Իմամշարլու գեօղն[I][279]:

## (253ա) **ԺԸ. Յաղագս Աշտարակ գեղջն, որ է Կարփու ճահիճն, որոյ վեց դանկ մուլքն Սրբոյ Աթոռոյս է**

Գեօղս այս մին է ի յեօթանց գեօղօրէիցն, զորս մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն առնու ի յԱմիր Ռուստամէն և վախմ գրեցուցանէ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի ճառս միֆատուութեան մեր էջմիածնի գեղջս: Գիտեա՛ ստանօր, զի մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն, թէպէտ կուռն շանիւ և մեծաւ խոհեմութեամբ առնու հաստատուն վախմնամայիւ զայսոսիկ եօթանեսին գեօղորայսս, այսինքն՝ զգեօղս էջմիածնի, զԱշտարակ, զԲաթրինջ, զՆորագաւիթ, զԱղունատուն, զՔիրաշլու և զՄուղնի, որպէս ասացաք, սակայն ի Գրիգոր կաթուղիկոսէս յայսմանէ, մինչև ի Մօսէս և ի Փիլիպպոս կաթուղիկոսն բերմունք ժամանակին, զիարդ գոլն երկրիս և որպիսաբար կացութիւնն Սրբոյ Աթոռոյս ասացան բազմիցս և ի յԱռաքել պատմագրէն ևս իմանալ կարես: Քանզի յայնքան միջոցին Սուրբ Աթոռս բոլորովին, որպէս թէ ի հոգևարութեան է լեալ, զի՞նչ զարմանք, եթէ և մուլքն զաւթիցեն և տիրիցեն յօտարաց:

Արդ կամիմ ասել, թէ յայնմ միջոցին և այսք գեօղորայքս յափշտակեալք եղեն ի տանկաց և հանեցեալք ի յԱթոռոյս: Ապա Փիլիպպոս և Յակոբ բազմերախտ կաթուղիկոսքն ի ժամանակս իւրեանց ի յեօթեանց գեօղօրէիցս այսոցիկ հազիւ ի ձեռն բերին մեծաւ տաժանմամբ զայսոսիկ զերեսին գեօղորայսս միայն, այսինքն՝ զէջմիածին գեօղս, զՄուղնի և զՔիրաշլու, ճանիցս անգամ վերստին զգինն տալով, ի շահից զռաղամս բերելով և զայլս աշխատանս կրելով, որպէս ասացաւ ի յիւրաքանչիւր տեղիսն: Իսկ Աշտարակ, Նորագաւիթ, Բաթրինջ և Աղունատուն մնացին յայնմ հետէ ի ձեռս տանկաց և անուանք նոցին ամենևին անհետք եղեն ի յԱթոռոյս մինչև ցայսօր:

---

[I] Չգրված՝ 252բ

Եւ այս այնքան անհետացեալ և հնացեալ, մինչ զի թէ արտոայինքս և թէ բոլոր երկրականքս իբր հաւաստապէս և անկարծիք կարէին երդնուլ, թէ գեօղօրայքս այսուհիկ ոչ երբէք են լեալք մուլք Սրբոյ Աթոռոյս և մեծ վախուպնամայն ևս, որպէս թէ խափան և անպէտ կայր անկեալ ի յանկիւնս՝ անյայտ և անհետ: Սոցա նման իմա և զգեօղն Եղուարդ և զվախուպնամայն նորա, զորմէ սակաւ ինչ ասացաք ի ճառս իւր:

Իսկ ի յետին ժամանակս զՄուղնի գեօղն ևս զաւթեալ էին տաճիկք, որպէս ասացաւ ի ճառս իւր և Քիրաշլուն ևս էր ամայի և անմարդ, որ և է այնպէս մինչև ցայսօր, որ ի ներկայումս, յորում նուաստութիւն մեր յաջորդեաց զԱթոռս, մնացեալ էր Սրբոյ Աթոռոյս մուլք միայն մեր էջմիածնի գեօղս: Ապա յաւուր միում կոչեցաք զՀիւսէին Ալի խանն Երևանու ի յԱթոռս ի պատիւ, որպէս թէ և ի գալն առանձին արարեալ ցուցաք նմա զմեծ վախուպնամայն Գրիգոր կաթուղիկոսին և զվախուպնամայն Եղուարդայ՝ ծանուցանելով նմա զպարագայսն: Իսկ ողորմութեամբն Աստուծոյ, յորոյ ձեռին են սիրտ իշխողաց, կակղացեալ խանին, զայնս գեօղօրայսն, որք ի ձեռս իւր էին, որոց զմուլքսն ինքն առնոյր, ետ մեզ հաստատուն գրով, որք են գեօղս այս՝ Աշտարակ, Եղուարդ, Մուղնի և Քիրաշլու, թէ թէպէտ ի ձեռս մեր էր, սակայն մինչ էր ամայի, զի մի յետոյ և սա անհետասցի գրեցուցաք, զորս յանուանէ գրէ ի գիրս իւր վկայելով, թէ տեսի զվախուպնամայսն և գիտացի հաւաստեաւ, որ ի բնէ անտի վախմ են սոքա էջմիածնի: Այսպէս գրելով կնքէ ինքն, կնքեցուցանէ և շխիսլամին և այլոց մեծամեծաց և տայ մեզ ընդ յիշեցեալ գեօղօրէիցն ի ՌՃՁԲ.[280] թուոջն տաճկաց և ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում, զոր զտցես ցուցակաւն և ամուր պահեա՛, զի կարի պիտանի է և լաւ պահելի[I]:

### (254ա) ԺԹ. Յաղագս Աղունատուն գեղջն, որ է ի Կարփու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն է Սրբոյ Աթոռոյս

Գեօղս այս մի էր ի յեօթեանց գեօղօրէիցն, զորս առնու Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն և վախմ գրեցուցանէ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի ճառս մլքատուութեան գեղջս մերոյ էջմիածնի, որ և սա էր անհետացեալ և ի բաց հանեցեալ յԱթոռոյս ընդ այլոց գեօղօրէիցն: Ապա ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում յետս առաք մեք ի յերևանցի ղաճար Սուլէյման բէկէն և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս արարաք՝ առնլով և զգիր մի ի նոյն Սուլէյման բէկէն բազմաւ կնքաւ, թէ տեսեալ զվախուպնամայն՝ գիտացի էջմիածնի գոլ գեօղս այս և ես ետու էջմիածնի վերստին: Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն: Յիշեցաւ ի ճառս Աշտարակու:[II]

---

[I] Զգրված՝ 253բ

[II] Զգրված՝ 254բ

(255ա) **Ի. Յաղագս Նորագաւիթ գեղջն, որ է ի Դրխբուլաղու ճահիճն**[I]

…………………………………………………………………………………………………

(256ա) **ԻԱ. Յաղագս Բիւրական գեղջն, որ է Կարփու ճահիճն**[II]

…………………………………………………………………………………………………

(257ա) **ԻԲ. Յաղագս Հանիլար գեղջն, որ է ի Կարփու ճահիճն**[III]

…………………………………………………………………………………………………



ՄՄ, ձեռ. 978, էջ 165ա

---

[I] Չգրված՝ 255բ

[II] Չգրված՝ 256բ

[III] Չգրված՝ 257բ

## (258ա) **ԳԼՈՒԽ ԺԴ.**

## ՅԱՂԱԳՍ ՄԱՂԱՖՈՒԹԵԱՆ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ, ՈՐՈՅ ՋՈՐՊԻՍԱԲԱՐ ԳՈԼՆ ՏԵ՛Ս Ի ՍՏՈՐԵԻԴ

Ի բնէ անտի ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ի ժամանակս իշխանութեանն հայոց Սրբոյ Աթոռոյս ազատ լինիլն յամենից հարկաց է անտարակոյս: Յետոյ ի բառնիլ իշխանութեան հայոց և ի փոխիլն հայրապետութեանն ի Սիս զայնքանեաց միջոցացն, յորս յամայութեան գոյր Սուրբ Աթոռս, զոչ ինչ ունիմք ասել: Իսկ ի նորոգիլն վերստին, որպէս ասացաւ ի վերն, սկսաւ ապա յաջողմամբն Աստուծոյ վերստին ստանալ զառաջին կարգն իւր և կեալ ազատ յամենից հարկաց: Այսինքն՝ հայրապետն և միաբանքն ոչ տայցեն զկերպիւ իւիք հարկս մարմնաւոր տերանց, որպէս տան աշխարհականք: Անդէ այգիք և կալք սորին ոչ չափիցին, անասունք և գրաստքն ոչ ի թիւ արկցին, ջրաղացք և այլք այսպիսիք ոչ գրիցին, մուտք և ելք սորին ոչ տայցեն զմաքս և ոչ տալ զգլխահարկս, զհնգորդս[281], զտասանորդս[282], զտնախարհս, զանասնախարհս և զմլքախարհս և զայլս այսպիսիս, որպէս սովորութիւն է աշխարհի, այլ յամենայնի ազատ լինիլ իւրայնովքն, որպէս և է այսպէս մինչև ցայսօր: Եւ, թէ որպէ՞ս ծանիր, զի նախապէս ի ժամանակս Մելքիսէդ կաթուղիկոսին, որ Մեծ շահ Ապաս թագաւորն պարսից զհարիւր թուման մուխաթթայն, զոր հարկ էր եդեալ ի վերայ Սրբոյ Աթոռոյս ի տալ ամի ամի, զայն եբարց երանելին Մօսէս կաթուղիկոսն ի ժամանակս շահ Սէֆի թագաւորին պարսից և ամենևին հանեալ ի ջամբոէն անհետ արար հաստատուն հրամանագրով նոյնոյ թագաւորին, որպէս ասացաւ ի վերդ ի պատմութեան գեղջս մերոյ ի թուին տաճկաց ՌԼԸ. (1629), բայց ռաղամս այս ոչ տեսաք մեք, այլ զսուրէթն ....... զոր գտցես ցուցակաւն և ( ) նշանագրով: Ապա երանելիս այս, որպէս թէ յանշնչութենէ ի շնչաւորութիւն հազիւ բերեալ զՍուրբ Աթոռս վերանորոգութեան և շինութեանն միայն պարապելով փոխի առ Տէր, չունելով ժամանակ և զայլոց հարկաւորացն հոգալոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Իսկ զկնի երանելւոյս այսորիկ, մինչ յաջորդէ համանմանն իւր յոգներախտն և բազմաշխատն և նոր ի նորոյ նորոգօղն յամենայնի ազգիս մերոյ և Սրբոյ Աթոռոյս տէր Փիլիպպոս կաթուղիկոսն սկսանի յամենայնի ի կատարելութիւն ածել՝ կուռն ջանիւ հոգալով զհարկաւորացն Սրբոյ Աթոռոյս, զներքսականացն շինելով և զարտաք-

սականացն արբունական և դատաւորական հաստատուն գրով: Քանզի ի բազմա-ցուցանելն զմիաբանսն Սրբոյ Աթոռոյս, զանդս և զարտորայս սերմանելոյ, որպէս ասացաք յառաջ սկսաւ և զյատուկ գութան մի ի կիր արկանել, որ չգոյր յառաջ: Իսկ չարն Մահմատ ղուլի, որ խան էր երկրիս Երևանու կամեցաւ հնգորդ առնուլ, այսինքն՝ զբահրա ի ցանեցելոց հասիցն Սրբոյ Աթոռոյս: Վասն որոյ և նոյն երանելին արզ առնէ երկրորդ շահ Աբասին, (258բ) թէ Սուրբ Աթոռս ի բնէ անտի մաղաֆ է լեալ, այսինքն՝ ազատ յամենայնէ, այժմ ի յաղքատութենէ մէկ գութանի վարելոյ չափ տեղ հազիւ կարեմք զսերմն արկանել յերկիր, Մահմատ ղուլի խանն կամի ի նմանէ ևս զբահրա առնուլ: Եւ շահն ռաղամ տայ սաստիկ թամպէհով, զի մի ձեռնամխիցին թէ Մահմատ ղուլի խանն և թէ այլք ի խնդրել զբահրա ի Սրբոյ Աթոռոյս սերմանցն: Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն, որ գրի ի տանեկաց թուոջն ՌՂԴ. (1645): Բայց զայս իմա՛, զի որովհետև յարզայումն մէկ գութան միայն գրի, վասն որոյ և շահն ևս ի ռաղամումն զմէկ գութան միայն մաղաֆ առնէ, ուստի ոչ պարտիս զայս ռաղամս ցուցանել, յորժամ գութանի աղագաւ զրոյց լինիցի և դու աւելի ունիցիս զգութան: Բայց յառաջ, քան զայս ի ՌԽԸ. (1638) թուին տանեկաց սոյն երանելիս Սէֆի շահին ևս արզ արարեալ զմէկ գութանի մաղաւութեան ռաղամ առնու, որոյ զսուրէթն գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ սոյն երանելիս յետ հնգից ամաց վերստին արզ առնէ նոյնոյ շահ Աբասին, թէ մեք յամենայն ժամ օրհնօղ եմք քեզ: Մուրթուզայ փաշայն կամէր զերկիրս զայս աւերել, ես ԲՃ. (200) թուման ետու հազիւ յետս դարձուցի: Եւ զԳօզալդարայի ջուրն բերի յայս դաշտ, մինչև ութն ջրաղացի ջուր և զայլս այսպիսիս: Ապա գրէ, թէ այս Աթոռոյս այգիքն, ջրաղացքն, վարելահողքն, ոչխարքն և զայլս այսպիսիս, զորս ունի Սուրբ Աթոռս, Խոսրով խան բէկլարբէկին երկրիս գիտելով զմաղաֆութիւն իւրն ևս մաղաֆ պահէ խնդրեմ ի քէն, զի և դու մաղաֆ արասցես, զի մեք վայելեալ աղօթեսցուք վասն կենաց քոց: Եւ շահն ռաղամ առնէ ի գլուխ նոյնոյ արզային, զի մաղաֆ լիցին վերոյ յիշեցեալքդ:

Քանզի երանելիս այս նախապէս ի ՌՂԳ. (1644) թուոջն տանեկաց շխիսլամի կնքով և վկայութեամբ արզ առնէ սոյնոյ շահ Աբասիս յատկացուցանելով յանուանէ զվարելահողսն Սրբոյ Աթոռոյս, որոց յաղագաւ և առնէ զռաղամ գրեցեալ ի միւս երեսն ի նոյն թղթոյն, որով և հաստատէ զայնոսիկ յիշեցեալ հողսն զոլ Սրբոյ Աթոռոյս, որպէս ի [Ի.] գլուխն ասացաւ, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարով, որոյ համաձայն ռաղամ մի ևս գոյ ի մեծէ շահ Աբասէն ի ՌԿԲ. (1613) թուոջն տանեկաց գրեցեալ, որպէս անդ ցուցանի: Սոյնպէս և յետ վեց ամի կրկին արզ առնէ նոյնոյ շա-հին վկայութեամբ խանին և յատկացուցանէ յանուանէ զայգիս և զջրաղացս և զայլս

այսպիսիս և զորքանութիւ[I] և զյուր[II] գոյն նոցին: Եւ առնէ զռաղամ հաստատուն և (259ա) սաստիկ թանպիհօվ, զի միոք ի յայնս ձեռնամխիցի, որով և զայնս հաստատէ զոյ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաք ի [Ի.] գլուխն, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարով, որ գրի ի տաճկաց թիւն հազար վաթսուն (1650): Ապա և երրորդապէս զայս արզս գրէ անորոշապէս և թարց յատկացուցման տեղեացն և ունեցելոցն գրով միայն, թէ ունի Սուրբ Աթոռս զայգիս, զհողս, զջրաղացս, զանասունս և զայլս այսպի-սիս, զորս մաղաֆ արասցես և այսու արզայովս և ռաղամովս զայնս ամենայն վերոյ յիշեցեալսն ի մէջ երկուց ռաղամիցն մաղաֆ առնել տայ այսպիսի խոհեմութեամբ:

Դարձեալ ի սոյն թղթոջ երկրորդ արզ առնէ, թէ այս Աթոռոյս ի Քրիստոսէ, մինչև ցայժմ գոն վախուպտեղիք և մուք այժմ ոմանք ձեռնամուխ լինին և զաւթեն: Նոյն շահն ևս կրկին ռաղամ արարեալ ի կից նորին, կնքէ երկրորդապէս և հրամայէ՝ մի ոք ձեռնամուխ լինի ի վախուպ տեղիսն Աթոռոյս:

Դարձեալ ի սոյն թղթոջ երրորդապէս արզ առնէ, թէ ես յերուսաղէմ պարտիմ գնալ, հրաման տուր, զի զոմն վէքիլ եդից ի տեղի իմ և մի ոք նեղացուսցէ զնա: Եւ շահն երրորդապէս ռաղամ արարեալ ի կից նորին կնքէ և հրամայէ առնել այնպէս: Զայս եռամիտ արզայիս և ռաղամիս թուղթն գի՛տ ցուցակաւն և ( ) նշան համարովն, որ գրի ի տաճկաց թիւն ՌԿ. (1650), որ է շատ պիտանի, զօրեղամիտ վասն մաղաֆու-թեան և վասն մլքիցն Սրբոյ Աթոռոյս, քանզի յառաջ քան զայս ի Խոսրով խանէն, որ յերևան նստիր երկիցս զթալղա առնու և մաղաֆ առնէ զմուլքսն Սրբոյ Աթոռոյս ի ՌԾԷ. (1647) և ի ՌԾԹ. (1649) թուոջն տաճկաց, յորս գրին ինն այգի և ինն ջրաղաց և հազար ութ հարիւր յիսուն ոչխար մաղաֆ, զորոց զգիրսն գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն:

Յետ այսորիկ և Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի արզ առնէ առ նոյն երկրորդ շահ Ապասն վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս և թէ մէկ գութանի տեղ հազիւ կարեմք սերմանել ի նմանէ ևս կամին զհարկս առնուլ: Վասն որոյ և շահն ռաղամ գրէ սաստիկ թամպեհով առ իշխօղն երկրիս Նաշաֆ խանն, զի մի ոք ձեռնամխիցի յԱթոռս, զի մաղաֆ է, սակայն և այս ռաղամ յայնժամ լինի օգուտ ի ցուցանելն, յոր-ժամ զմի գութան միայն ի կիր արկանիցէ Աթոռս, որպէս և ի վերդ ևս ասացաւ: Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն, որ գրի ի տաճկաց թիւն ՌԿԹ. (1659)[III]:

(260ա) Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ զերկուս գութանս սկսանի ի կիր արկանել Սուրբ Աթոռս, բայց որովհետև ի մէջ երկուց ռաղա-

---

[I] Բ. զորքանութենէ

[II] Բ. զո՛ւր

[III] Չգրված՝ 259բ

մից շահ Ապասին ևս մի գութան յիշի մաղաֆ եղեալ արզայով Փիլիպպոս և Յակոբ կաթուղիկոսացն, որպէս ասացաք ի վերդ և հոշակի, թէ Աթոռոյս մէկ գութանն է մաղաֆ, վասն որոյ և իշխօղք երկրիս կամին զմիոյ գութանի բահրայն առնուլ յԱթոռոյս ասելով, թէ միոյ գութանի ունիք մաղաֆութիւն: Սոյնպէս և վասն ոչխարաց առնեն վէճ ասելով, թէ շատ պահէք: Ապա և Աղէքսանդր կաթուղիկոսն արզ առնէ շահ Հիւսէինին և զռաղամ առնու զերկուս գութանս և զեճ. (500) ոչխարս մաղաֆ առնելով: Գի՛տ զայս ռաղամս ցուցակաւն և ( ) նշան համարովն, որ գրի ի ՌՃԿԳ. (1712) թիւն տանեկաց: Արդ և զայս ռաղամ յայնժամ պարտիս ցուցանել, յորժամ քան զերկուս գութանս և քան զեճ. (500) ոչխարս ոչ ունիցիս աւելի, որպէս ի վերդ ևս ասացաւ:

Դարձեալ սոյն Աղէքսանդր կաթուղիկոսս յառաջին թագաւորացն զվեց հատ զայլևայլ մտօք ռաղամս ցուցանէ նոյն շահ Հիւսէինին և խնդրէ, զի և ինքն տայցէ զռաղամ մի ի վերահաստատութիւն նոցա: Եւ շահն ևս վերայիշելով յատուկ յատուկ զեղեալ խնդիրսն ի մէջ ռաղամիցն այնոցիկ ի մէջ իւրոյ ռաղամին գրէ և ինքն, թէ որովհետև նախնիքն մեր այսպէս ռաղամ են տուեալ և ես ետու: Զվեց խնդիրսն ի յիւրաքանչիւր տեղւոջն ասասցուք: Յորոց երրորդն է, թէ էջմիածնի Աթոռոյ միքին և մաղաֆութեանն մի ոք ձեռնամուխ լիցի: Զայսմանէ ի պատմութիւնս զեղջս մերոյ ևս յիշեցաք, որ գրի ի տանեկաց ՌՃԿԳ. (1712) թիւն, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարովն:

(260բ) Դարձեալ Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի առնէ արզ շահ Թահմազին, թէ քան զիս յառաջ եղեալ խալիֆայքն զորքան զվարս և զցանքս արարեալ են, ոչ երբէք են տուեալ ումեք զբահրայ և զայլ հարկս, զի Աթոռս այս ի բնէ մաղաֆ է լեալ, այժմ տիրօղք երկրիս և այլ ոմանք նեղացուցանեն զմեզ և զպէսպէս շիլթախս առնեն՝ չտալով մեզ զհանգիստ: Եւ շահն գրէ ռաղամ սաստիկ թամպէհով, զի մի ոք ձեռնամուխ լիցի ի մաղաֆութիւն Աթոռոյս, որ գրի ի թիւն տանեկաց ՌՃՀԶ. (1724), զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարովն:

Դարձեալ ի ՌՃՀԷ. (1725) թուին տանեկաց, մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ օսմանցւոց և նստի յԵրևան Ռահապ կոչեցեալ փաշայն, ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաֆութենէ Սրբոյ Աթոռոյս: Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքանձև դէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ և զվերջն շխիսլամն: Յորում գրեցուցանէ զմլքատու գեօղօրայսն Սրբոյ Աթոռոյս, որք են այսոքիկ: Այս մեր գեօղս, Մաստարայ, յՕշական, Ֆռանկանոց և Քիրաշլու: Այլև մաղաֆ եղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ: Ի մեր գեօղս վեց շէն ջրաղաց, երկու աւեր, մէկ շէն դինկ, երկու ձիթահանք, քաան և ինն արտ ցանելի, երեք եօնջալուղ, երեք այգի, ի յՕշական երկու այգի, մի ևս աւեր, ի Փարաքար երկու այգի, յԵրևան երկու այգի, երկու ջրաղաց, ի Քեալարայ երկու ջրաղաց, մէկ դինկ, երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի գետոյն, որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ

առում, որ Դալմա ասի, որոյ ակն է մեծ Սարվանլար կոչեցեալ գեղջն, որ յԵրևան ի ներքոյ բերթին և վեց հարիւր ոչխար և սևազլուխ, և միաբանքն մաղաք և մի տայցեն զխարաճ և այսքան վանորայք ևս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղաք լիցին՝ Սուրբ Հռիփսիմէն, Շողակաթն, Գայիանէն, Երևանու Սուրբ Անանիա առաքելոյ և Ջորագեղու անապատքն: Բայց միայն խալիֆայն ի տարուջն զվեց հազար ութն հարիւր ստակ տայցէ յարքունիս և ոչ այլ ինչ: Գի՛տ զայս գիրս ցուցակաւն և ( ) նշան համարովն: Թիւն տանկաց ՌՃԼէ. (1725): Այսպիսի օրինակաւ գիր Ժ.[I] (10) հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն:

(261ա) Իսկ յետ այսորիկ ի ՌՃԽ. թուոջն տանկաց և ի ՌՃՀՁ. (1727) թուոջն մերում յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ձեռամբ փաշային Երևանու արզ առնեն Սուլթան Ահմէտ թագաւորին օսմանցւոց և գրեն զդէվթէր մի տանկերէն, յորում յանուանէ և ուրոյն ուրոյն յատկացուցանեն զքանի տուն լինիլն գեօղիս, զքանի այգիս, զջրաղացս զպարտէզս, զսերմանելի տեղիսն և զայլս այսպիսիս: Այլև գրեն ի նմա յատկապէս զորպիսութիւնս Սրբոյ Աթոռոյս, թէ ունի զայգիս, զջրաղացս, զդինկս, զհամամս, զքարվանսարայս և զայլ ամենայն մուլքսն՝ առանց յատկացեալ թուոյ: Այլև երկու գութանս, հազար հինգ հարիւր սոմար սերմանելիս, զվեց հարիւր ոչխարս: Եւ զԱթոռս, զերիս վանսն իւրեանց միաբանիւքն, զորս զամենեսեան մաղաք առնէ ի բնաւից հարկաց: Յորում գրի վերջապէս, թէ կաթուղիկոսն յամէ յամ թագաւորին զԳՃԾ. (350) ղուռուշ տայ միայն և յայլ յամենից կողմանց մաղաք լիցին, ոչ խարաճ, ոչ իսպանջ և ոչ այլ ինչ խարճ: Այլև գրեն, թէ էջմիածնի գեօղս, Օշական և Մաստարայ մուլք են Սրբոյ Աթոռոյս, որք յամենայնէ զտասանորդս պարտին տալ: Զայս ամենայն գրէ շխիսլամն և կնքէ զվերջ բանին և մատուցանեն թագաւորին: Եւ թագաւորն ևս ի գլուխ դէֆթէրին դնէ զարմն իւր, այսինքն՝ զթուրէն: Զսոյնանման թուղթ մի ևս ի ժամանակս Աբրահամ կաթուղիկոսին Մշեցւոյ շինեն յետ երից ամաց, նոյնպէս և գրեցուցանեն, որ ինչ ի վերնումն գրեցաւ, նմանապէս Սուլթան Մահմուտ թագաւորն օսմանցւոց դնէ զթուրէն ի գլուխ դէֆթէրին, նոյնպէս և հրամայէ, զի Աթոռոյս տայցեն զմուլքն անխափան վերոյ գրեալ գեօղքն և Աթոռս մաղաք լիցի յամենից հարկաց և կնքէ շխիսլամն զկիցս թղթոցն և ի վերջն ի ՌՃԽԳ. (1731) թուոջն տանկաց, որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք և են երկար գրքաձևք, մին չորս թուղթք և միւսն հինգ թուղթք, որք երկուքն ևս գոն ի Սուրբ Աթոռս՝ ունելով զծաղկեայ պահարան յատուկ յատուկ և են ի միում ջղտանաձև թղթեայ պահարանում և յերեսսն գրեցեալ ցուցակքն ևս ցուցանեն[283]:

---

[I] Բ. Թ.

Դարձեալ յաւուրս Թէֆիրտաղցի Աբրահամ կաթուղիկոսին մերոյ, յորում այլայլե-ցաւ իշխանութիւն երկրիս Պարսից և զօրացաւ Նատր կոչեցեալ բռնաւորն և էառ զերկիրս մեր ի յօսմանցւոց, և ինքն տիրեալ թագաւորեաց, իսկ յետոյ առ սա արզ գրէ վերոյ յիշեցեալ կաթուղիկոսն, թէ Աթոռս այս այսպէս յայտնի և հռչակաւոր օճաղ իմն է, յորում հինգ հարիւր մարդ աւելի հաց ուտեն և ի պարսից և յօսմանցւոց թագաւո-րաց ևս գիր ունիմք, որք մաղաֆ են արարեալ զԱթոռս ի հասարակ հարկաց, որոյ կալն ոչ չափի և մասիլն ոչ գրի, վասն որոյ և ի քէն խնդրեմ զայսպիսի գիր մի, որ խանք և դիւանագիրք ի յԱթոռս ոչ ձեռնամխիցին և զկալս սորին (261բ) մի չափիցեն: Եւ Նատր շահ կոչեցեալն ևս ի գլուխ արզային ռաղամ գրէ սաստիկ թամպէհով իւրոց գործակալացն, զի ի կալս և ի մասիլս Աթոռոյս մի մերձեսցին բնաւին և մի ի չափս և ի համարս արկցեն: Ի լուսանցն սոյնոյ ռաղամիս կրկին գրէ և կնքէ սաստիկ թէմպէհ ի ՌՃԽԸ. (1735) թիւն տաճկաց և ի մեր թուոջն ՌՃՁԴ. (1735), զոր գտցես ցուցակաւն և ( ) նշան համարով:

Ի սոյն թուոջս երկու անգամ ևս արզ առնէ սոյն Աբրահամ կաթուղիկոսս այս Նատր շահիս վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս և այլոց վանօրէից երկրիս, թէ ի բնէ յամենայն հարկաց ազատք են եղեալք թէ՛ վանք, թէ՛ սեագլուխք, թէ՛ եկեղեցիք և թէ՛ եկեղեցականք երկրիս մերոյ, և ամենեքեան ընդ իշխանութեամբ էջմիածնի են, խնդրեմ զի և դու մաղաֆ արասցես: Եւ Նատր շահն ևս ի գլուխ արզայիցն ևս ռաղամ գրէ մաղաֆութեան և սաստիկ թամպէհ իւրոց գործակալացն, զի մի երբէք շարժիցին ընդդէմ հրամանին իւրոյ: Բայց զսոցին սուրէթսն տեսաք մեք կնքեցեալ ի շխիսլամէ և զասլն ոչ գտաք, զորս գտցես ցուցակօքն և ( ) նշանօք:

Նոյնպէս և յետ Նատր շահին, մինչ թագաւորեաց եղբօր որդի նորին Իպրահիմ շահն, և սա ռաղամ տայ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ, յորում և գրէ, թէ որովհետև ի բնէ անտի էջմիածին և նորին մուլքն և ամալէքն մաղաֆ են լեալ, և թագաւորքն և մանաւանդ իմ հօր եղբայրն ևս մաղաֆութեան ռաղամ են տուեալ, և ես ետու ռաղամ, զի այգիք, ջրաղացք, դինկք, քքրայք, ձիթահանք, համամ, ցանքն և թէ՛ ի նաղտից, թէ՛ ի ջնսից, ի բաղաթէ, ի մալուջհաթից և յայլ ամենից հարկաց ազատ և մաղաֆ լիցին և սաստիկ թամպէհ իւրոց գործակալացն, զի մի մերձեսցին բնաւին յԱթոռս: Գի՛տ զայս ռաղամս ցուցակաւն և ( ) նշան համարովն, որ գրի ի տաճկաց թիւն ՌՃԿԱ. (1748):

Յետ Իպրահիմ շահին, մինչ վերջացաւ թագաւորութիւնն Պարսից, և աղուան Ազատ խանն[284] տիրեաց յամս քանիս երկրիս և սա տայ զռաղամս հինգ ըստ խնդրոյ Մինաս և Աղէքսանդր կաթուղիկոսացն, վերոյ գրեցեալ ռաղամի ոճովն գրելով զամե-նայն մուլքսն Աթոռոյս և մաղաֆ առնէ յամենայնէ, զորս գտցես ցուցակօքն և ( ) ( ) ( ) ( ) ( ) նշան համարօքն, որ գրին ի ՌՃԿԴ. (1751), ի ՌՃԿԵ. (1752), ի ՌՃԿԶ. (1753), ի

ՌՃԿԷ. (1754) և ի ՌՃԿԸ. (1755) թւին տաճկաց։ Յորոց ի միումն և զերկրիս վանօրէից ճարկսն ևս բաշխէ, որ էր ԺԷ. (17) թուման, որք յամի յամի տային յարքունիս։ Յետոյ մինչ աւերեցան վանօրայքն, յԱթոռոյս առնուին զայն ճարկն, զոր Ազատ խանն բաշխեաց ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին։ Ըստ սմին օրինակի և Խալիլ խան Օզբէկն, որ հրամանաւ Ազատ խանին իշխօղ էր երկրիս, (262ա) երկիցս անգամ և սա զիր տայ Սրբոյ Աթոռոյս՝ վկայութեամբ իւրոց գործակալացն վասն մաղափութեանն և ինքն մաղափ առնէ յամենից ճարկաց, որք գրին ի թւին տաճկաց ՌՃԿԵ. (1752), զոր գտցես ցուցակօքն։

Դարձեալ ի սոյն ՌՃԿԸ. թուոջս տաճկաց և ի մեր թուոջն ՌՄԴ. (1755), մինչ յերևան ճստէր խան ղաճար Հասան Ալի խանն, պօլսեցի Աղէքսանդր կաթուղիկոսն արզ առնէ վերոյ յիշեալ խանին, թէ դու գիտես, որ Սուրբ Աթոռս ի բնէ անտի մաղափ է յամենից ճարկաց, այլև վանորայքն մեր, մինչ աւերեցան նոցին ճարկն բաշխեաց Ազատ խանն։ Վասն որոյ դու ևս յիշխանութեան քում զգիր մի տո՛ւր մեզ ի յիշատակ քեզ։ Եւ խանն նոյն արզայի գլուխն գրէ, թէ Էջմիածին մաղափ է յամենից ճարկաց ի բնէ անտի և մինչ վանորայքն աւեր են, ոչ ոք պարտի ի կողմանէ նոցա զիր ինչ պահանջել յէջմիածնէ։ Այսպէս գրեալ խանն, կնքէ ինքն ի վերջ իւրոյ բանին և յետ կոյս սոյնոյ թղթոյս բոլոր երկրիս դիւանազիրք, շխիսլամ և գլխաւոր աղայք տաճկաց կնքեն և վկայեն սոյն եղելութեանս, որ է կարի ճարկաւոր և շատ պիտանի, զի բոլոր երկրիս վկայութիւն է վասն մաղափութեան Սրբոյ Աթոռոյս։ Ունի ևս զսաւատ մի զոր գտցես ցուցակօքն և ( ) նշանաւ։

Դարձեալ ի ՌՃՀԲ. (1172) թուին տաճկաց և ի մերս ՌՄԸ. (1759) Յակոբ կաթուղիկոսն Շամախեցի զոմանս ճարկաւոր խնդրիս ԺԴ. (14) գլխով, զորս ի ռաղամիցն հնոց և զորս յինքենէ ժողովէ ի մի վայր և գրէ ի միում թղթի և արզ առնէ Հիւսէին Ալի խանին Երևանու, որ էր եղբայր վերոյ յիշեալ Հասան Ալի խանին, թէ զայսոսիկ խնդիրս ի թագաւորացն արարեալ են առաջին կաթուղիկոսքն, և թագաւորքն ռաղամ են տուեալ իւրաքանչիւրցն յատուկ յատուկ, արդ դու ևս ձեռնագրեա զթուղթս զայս ի վերահաստատութիւն հրամանաց թագաւորացն և ի յիշատակ քեզ։ Եւ խանն ևս ի գլուխ նոյնոյ թղթոյն գրելով կնքէ և հրամայէ, թէ որպէս առաջին թագաւորքն մեր ռաղամ են տուեալ վասն այս խնդրոյս և ես գրեալ հրամայեցի, զի այսպէս լիցի։ Եւ թէ զի՞նչ են այսոքիկ ԺԴ. (14) խնդիրքս և կամ թագաւորաց հրամանքն, յիւրում տեղւոջն տեսցես ի յորպիսութիւն իւրաքանչիւրօց ռաղամից և հրամանագրացն։ Բայց այստանօր զայս միայն գիտեա, զի ի տասն և չորիցն գլխոց առաջին և վերջինն են յատկապէս վասն մաղափութեան Սրբոյ Աթոռոյս և աթոռայնոցս։ Յորս գրի, թէ որպէս յառաջնոց թագաւորաց հաստատեցեալ է ռաղամօք, զի ի բնէ անտի էջմիածնի խալիֆայն, վարդապետքն, միաբանքն և ամենայն ամալէքն յամենայնի մաղափ լիցին և ոչ ոք

իշխեսցէ պահանջել զդինար մի ի նոցանէ և արտորայք և բովանդակք մահուվք և մուլք նոցին ո՛չ չափիցին և ո՛չ ի գիր արկցին, զի ազատ են յամենայնի, նոյնպէս և ես հրամայեցի, զի այսպէս լիցի: Զայս թուղթ առնու Յակոբ կաթուղիկոսն ի Հիւսէին Ալի խանէն, զոր գտցես ցուցակաւն և ( ) նշանաւ:

(262բ) Եւ յետ Յակոբ կաթուղիկոսին ի յաշորդիլն մեռս նուաստութեան և մեք խնդրեցաք զայսպիսի թուղթ ի նոյնոյ Հիւսէին Ալի խանէն, զոր և առաք իսկ նոյնով[I] օրինակաւն ի ՌՄԺԲ. (1763) թուոյն մերում և ի տաճկաց ՌՃՀԶ. (1176), զորս գտցես ցուցակաւն և ( ) նշանաւ:

Եւ ի սոյն թուոյս, մինչ բռնացաւ վէքիլ կոչէալ[II] Քեարիմ խանն[285] և, որպէս թէ տիրեաց բոլոր երկրիս Պարսից և հնազանդեցոյց իւրեան զամենայն իշխօղսն Արաղստանու[286] և Հատրբէչանու[287], զմարդ առաքեցաք առ նա ի Դաւրէժ ընծայիւ և առաքեցաք ևս զվերոյ յիշեցեալ ԺԴ. (14) գլխով թղթոյ սուրէթն խնդրելով ի նմանէ, զի որպէս նախնի թագաւորքն տուեալ են Սրբոյ Աթոռոյս զայսպիսի ողորմ, իւրն ևս տայցէ, որ և ընկալեալ սիրով զընծայն մեր տուեալ էր զողորմ մի կաթուղիկոսութեանս մերոյ: Այլև զնոյն թղթոյ օրինակաւն գրեցուցեալ իւրն իւրոց դիւանագրացն զթուղթ մի, կնքէ իւրն, կնքեցուցանէ ևս նոցա և ենք ԺԴ. (14)-ից գլխոցն ևս յատուկ յատուկ սաստիկ պատուէր և թանպէհ գրէ ի վերոյ երկրիս խանին և այլոց գործակալացն, զի մի ոք իշխեսցէ ընդդէմ գրեցելոցն շարժիլ գրելով, թէ որպէս նախնի թագաւորքն մեր տուեալ են զայսպիսի ողորմ և ես ետու: Եւ մանաւանդ նոյնպէս ի յառաջին և ի վերջին գլուխսն վասն մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս, զի մի ոք իշխեսցէ ձեռնամխիլ ի մուլքս, ի մահսուլս, ի միաբանս և յայլ յամենայն ինչս Սրբոյ Աթոռոյս, զի որպէս մաղաֆ են ի բնէ անտի ողորմօք թագաւորաց, նոյնպէս և ես մաղաֆ արարի: Արդ այս երեքկին վերոյ յիշեցեալ թուղթքս, այսինքն՝ երկուքն ի Հիւսէին Ալի խանէն և միւսն ի Քեարիմ խանէն, տուեցեալք են շատ պիտանի և լաւ և հարկաւորք և շատ զգուշութեամբ պահելիք, զի որքան ողորմք գոն յԱթոռոյս ի թագաւորաց և յայլոց տիրողաց, ի միջի նոցին եղեալքն լիապէս և աւելորդովք ևս գոն ի մէջ այս թղթոցս և վերահաստատօղ վկայութիւնք ևս են նախնեաց ողորմիցն, զորս գտցես ցուցակօքն և ( ), ( ) և ( ) նշանօքն:

(263ա) Արդ մինչև ցայս վայր ճառեցաք անորոշապէս զմաղաֆութենէ, այսինքն՝ զազատութենէ Սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի մինչև ցառ մեզ: Այժմ ասասցուք բացապէս և որոշակօրէն, թէ որո՞վ կերպիւ և որքանեօք է մաղաֆ և ըստ որում մասին ոչ է մաղաֆ և տայ զհարկս:

---

[I] Բ. նոյնոյ

[II] Բ. կոչեցեալ

Արդ երկու գութանի և հինգ հարիւր ոչխարի մաղաֆութիւնն սորին է յայտնի և բացորոշեալ, որոց յաղագս յատուկ ռաղամք գոն, զի նախապէս զմիոյ գութանի մաղաֆութեան ռաղամն Փիլիպպոս կաթուղիկոսն առնու ի յերկրորդ շահ Ապասէն, և Յակոբ կաթուղիկոսն ևս կրկին առնու զնոյնապէս ռաղամ մի ի նոյնոյ շահ Ապասէն։ Իսկ երկրորդ գութանի և հինգ հարիւր ոչխարի մաղաֆութեան ռաղամն Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն առնու ի շահ Հիւսէինէն։ Իսկ ի տիրելն օսմանցւոց սուլթան Ահմէտն գրելով զֆարմանն մաղաֆութեան Աթոռոյս զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սոմար ցանելիս և զվեց հարիւր ոչխարս միայն յատկացուցանէ թուով։ Նոյնպէս և զկնի սուլթան Մահմուտն տայ ֆարման այսու ոճով։ Իսկ զայլսն ոչ յատկացուցանեն, այլ գրեն, թէ էչմիածին երիւք վանիւքն մաղաֆ է ի բնաւից հարկաց, որ ոչ ինչ ունի տալոյ, բայց միայն ի տարին ԳԾՌ. (350) ղուռուշ դրամ, որպէս ասացաք ի վերդ։ Քանզի այգեաց, ջրաղացաց, դնկից և այլոց այսպիսեաց յաղագս ոչ է յատկացուցեալ ռաղամօք, թէ որքան այգի կամ ջրաղաց և այլքն են մաղաֆք։

Արդ այսպիսեաց մաղաֆութիւնն այնպէս է լեալ, որպէս ասացաք ի վերդ, զի Փիլիպպոս կաթուղիկոսն անգամ մի արզ առնէ երկրորդ շահ Ապասին, թէ այս Աթոռս զայսքան վարելահողս ունի (գրելով յանուանէ յատուկ յատուկ), ռաղամ մի տուր, զի ոչ ոք ձեռնամխիցի ի նոսա, որոյ յաղագս առնու ռաղամ ի ՌՂԴ. (1644) թուոջն տանկաց։ Եւ երկրորդ անգամ արզ առնէ նոյնոյ շահին, թէ Աթոռս այս զայսքան այգիս և ջրաղացս և զայլս այսպիսիս վախուփ մուլքս ունի, ոմանք երբեմն ձեռն ածեալ ի նոսա կամին հանել ի մէնջ, ռաղամ մի տուր, զի ոչ ոք ձեռնամխեսցի ի մուլքսն Աթոռոյս, որոյ աղագս և շահն ռաղամ տայ ի ՌՂ. (1650) թուոջն տանկաց։ Յորում ինն այգի և ինն ջրաղաց գրի, որպէս ի վերդ ցուցաք։ Սոյնպէս և յայլս ռաղամս յիշեն միով, երկոքումբք և այլովք որքանութեամբք, աւելի և պակաս այգի, ջրաղացք և այլք այսպիսիք, զորս տեսցես ի յորպիսութիւնսն ռաղամաց։

Արդ այս երանելիս յորժամ այսպիսեօք արզայիւք և ռաղամօք հաստատէ այսքան մուլք զոլն Աթոռոյս, ապա և արզայ մի ևս գրէ նոյնոյ շահ Ապասին, թէ այս Աթոռս ունի զայգիս, զջրաղացս, զվարելահողս, զոչխարս և զայլս այսպիսիս, որպէս ի վերդ ասացաք, զայսոսիկ մաղաֆ արա, զի կերեալ աղօթեսցուք վասն քոյ։ Եւ շահն ռաղամ գրէ ի վերայ նոյնոյ թղթոյն և մաղաֆ առնէ անորոշապէս զամենայն մուլքսն Աթոռոյս ի ՌՂ. (1650) թուին տանկաց։ Եւ մինչ երանելիս այս այսու կերպիւ մաղաֆութեան ռաղամ առնու ի շահ Ապասէն, ապա այնուհետև զկնի եկեալ կաթուղիկոսքն յիւրաքանչիւր ժամանակս արզ առնեն տիրողաց երկրիս, թէ Աթոռս մաղաֆ է իւրայնովքն, դու ևս մաղաֆ արա, որպէս ասացաք ի վերդ։ Ապա և ի զալ դիւանագրաց ի թագաւորաց յերկիրս յայս ի գիր արկանել զմուլքսն և զբերսն երկրիս և ի կամիլն ի գրել և զմուլքսն Աթոռոյս և ի ցուցանելն կաթուղիկոսաց զմաղաֆութեան ռաղամսն, ասելով,

թէ Աթոռս մաղափ է, վասն որոյ և դիւանագիրքն զամենայն մուլքսն Աթոռոյս ի գիր արկեալ յատուկ յատուկ և յանուանէ գրէին և կնքէին, թէ (263բ) այսքան այգի, այսքան ջրաղաց, այսքան դինկ, այսքան ձիթահանք և այլք այսպիսիք, զորքանս ունեցեալ լինէր Աթոռս ըստ ժամանակին էջմիածնի էին, որք մաղափ գոլով հրամանաւ թագաւորաց և մեք մաղափ գրեցաք: Այսու ոճով շարքնամայ[I] մի գրեալ և կնքեալ տային Աթոռոյս և զերեսսն ի յարքունին ջամբռն գրէին, զի ի հաշուատրութեանն ցուցցեն թագաւորին: Եւ ոչ միայն զՍրբոյ Աթոռոյս մուլքսն, այլև բոլոր վանօրէից երկրիս մուլքսն այսպէս մաղափ գրէին ընդ Սրբոյ Աթոռոյս:

Որպէս ի ՌՃԼԵ. (1686) թուին տանկաց ի ժամանակս շահ Սուլէյմանին և Եղիազար կաթուղիկոսին մերոյ եկեալ դիւանագիրք յարքունուստ յերկիրս յայս, գրեն զթուղթ մի և կնքեն, թէ այսքան մուլք էջմիածնի և վանօրէից նորին մաղափք են: Յորում գրի Սրբոյ Աթոռոյս ԺԲ. (12) այգի երեքն յայս մեր գեօղս, երեքն յՕշական, երեքն Փարաքար և երեքն յԵրևան, ջրաղաց ութ՝ երեքն յայս գեօղս, երեքն յԵրևան, մի ի Փարաքար և մին ի Դոխս[288], դինկ հինգ՝ երկուքն յայս գեօղս, մին ի Քեալարայ, մին ի Ցռանկանոց և մին ի Փարաքար, երեք ևս քրքրայ՝ մին ի Քեալարայ, մին ի Ցռանկանոց և մին ի Փարաքար: Այլև Մօղնու վանիցն Բ. (2) այգի՝ մին ի յիւր գեօղն և մին ի Փարաքար և երկու ջրաղաց, Կոշավանքին[289] Ա. (1) այգի և Ա. (1) ջրաղաց, Սաղմոսավանքին Ա. (1) այգի յԱշտարակ և Բ. (2) ջրաղաց յիւր մօտն, Գեղարդին չորս այգի, մին ի Նորք, երկու յԵրևան և մին ի Նորագաւիթ և Ա. (1) ջրաղաց յիւր մօտն: Գետարգելին[290] Գ. (3) այգի, երկուքն յԵրևան և մին յԱռինջ և Բ. (2) ջրաղաց, Բջնու վանքին Ա. (1) այգի յԵրևան և Բ. (2)[II] ջրաղաց: Սևան Ա. (1) այգի յԵրևան և Ա. (1) ջրաղաց յիւր մերձ: Տեղեր Ա. (1) այգի ի Բիրական և Ա. (1) ի Նորագեօղ: Յօհանավանքին երկու այգի ի Կարփի և Ա. (1) ջրաղաց, Սուրբ Սարգիս Ա. (1) այգի ի յՕշական և Գ. (3) ջրաղաց ի յՈւշի[291]: Վիրապ չորս այգի, մին ի Նորք, մին յԵրևան, մին ի Փարաքար, մին յեղուարդ և Գ. (3) ջրաղաց: Ղզլվանք[292], որ է Ամենափրկիչն Ա. (1) այգի յԵրևան և Ա. (1) ջրաղաց ի Գառնի: Աղջոց վանքն[293] Ա. (1) այգի ի Ծնգաւիթ և Ա. (1)[III] ջրաղաց յիւր մերձ: Ղփչաղ Ա. (1) ջրաղաց: Կարենիս Ա. (1) այգի յՕշական և Բ. (2) ջրաղաց: Զայս ամենայն վերոգրեցեալքս գրեն յանուանէ մաղափ և տան մեզ ի թուին տանկաց ՌՃԼԵ. (1686), զոր զտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Սոյնանման թուղթ մի և ի ժամանակս շահ Հիւսէին թագաւորին և Աստուածատուր կաթուղիկոսին մերոյ տան մեզ դիւանագիրք արքունին: Յորում երեսուն և չորս այգի գրեն մաղափ՝ տասն և մէկն Սրբոյ Աթոռոյս և քսան և երեքն վանօրէից, երեսուն

I Բ. շարդ նամա
II Բ. Ե.
III Բ. երեք

և ինն ջրաղաց գրեն մաղաֆ՝ տասն և երկուսն Աթոռոյս և fսան և եօթն վանօրէից: Քսան ձիթահանf գրեն մաղաֆ՝ երկուfն Աթոռոյս և տասն և ութն վանօրէից, ինն դինկ գրեն մաղաֆ՝ հինգն Աթոռոյս և չորսն վանօրէից: Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ գրի ի ՌՃԼԱ. (1716) թուին տանկաց:

Սոյնանման թուղթ մի և ի ժամանակս ... թագաւորին և ... կաթուղիկոսին մերոյ տան մեզ դիւանագիրf արfունի: Յորում գրեն մաղաֆ ԿԱ. (61) այգի՝ երեսուն և մէկն Աթոռոյս և երեսուննն վանօրէից: Քառասուն և ինն ջրաղաց՝ տասն և չորսն Աթոռոյս և երեսուն և հինգն վանօրէից, տասներկու դինկ՝ չորսն Աթոռոյս և ութն վանօրէից, ԺԷ. (17) ձիթահանf՝ վեցն Աթոռոյս (264ա) և տասն և մէկն վանօրէից, զոր զտցես ցուցակաւն, որ գրի ի թիւն տանկաց...:

Վերոյ գրեցեալ չարթնամայ թուղթն, որ ի ժամանակս շահ Սուլթան Հիւսէինին և Աստուածատուր կաթուղիկոսին տան դիւանագիրfն, աթոռակալ Վրթանէս վարդապետն առնու ի ՌՃԼԱ. (1131) թուին տանկաց և ի ՌՃԿՁ. (1717) թուոջն մերում: Այս թուղթս երկու է և միապէս, որպէս ցուցակfն ցուցանեն: Արդ ի սոսում գրեցեալ մուլfսն այսպէս գրեն. երեսուն և չորս այգեաց տասն և մէկն, որf Սրբոյ Աթոռոյս են, այսոfիկ են՝ չորս այգին է ի մեր գեօղս, երեfն ի յՕշական, երկու ի Փարաfար և երկու ի Նորագեօղ, ԼԹ. (39) ջրաղաց, ԺԲ. (12), որf Սրբոյ Աթոռոյս են այսոfիկ են՝ ութն ի մեր գեօղս, երկու ի Քեալարայ և Բ. (2) ի Ձորագեօղ, երկու ձիթահանf ի մեր գեօղս, երկու դինկ և fրfրայ ի մեր գեօղս և Գ. (3) դինկ ի Քալարայ: Իսկ միւս մնացեալfն են վանօրէիցն, զորոց որպէսն տե՛ս. Բջնու վանիցն մին այգի ի Շնգաւիթ և մէկ ի Կեղրոն: Ձորս ջրաղաց և մէկ ձիթահանf ի Բջնի գեօղն: Կարէնիսու վանիցն երեf ջրաղաց ի նոյն Կարենիս գեօղն, մէկ այգի և մէկ ձիթահանf ի յՕշական: Գետարգելու վանիցն Բ. (2) այգի յԵրևան, Ա. (1) ձիթահանf և Գ. (3)[I] ջրաղաց ի յիւր գեօղն, Մօղնու[II] վանիցն Ա. (1) այգի ի Փարաfար, Ա. (1) այգի և Բ. (2) ջրաղաց ի յիւր գեօղն և Ա. (1) ձիթահանf ի Կարփի: Սրբոյն Գեղարդայ վանիցն Ա. (1) այգի յԵրևան, Ա. (1) այգի ի Նորագաւիթ, Ա. (1) ջրաղաց յիւր մօտն, Ա. (1) ձիթահանf ի Ծար[294] և Ա. (1) ձիթահանf ի Շահապ: Սրբոյ Ամենափրկչի վանիցն Ա. (1) այգի ի Շնգաւիթ և մէկ այգի ի Նորագեօղ և Ա. (1) ջրաղաց[III] ի Պզտիկ գեօղն և Ա. (1) ջրաղաց ի Գառնի: Աղջոց վանիցն Ա. (1) այգի ի Շնգաւիթ, Ա. (1) ձիթահանf ի Ճաթղրան և Ա. (1) ձիթահանf յիւր մօտն: Խորվիրապայ վանիցն չորս այգի ի Նորf, ի յԵրևան, ի Նորագաւիթ և ի Գեօf fումպէթ, Ա. (1) ջրաղաց ի Վէթի և մէկ ի ... և Ա. (1) ջրաղաց և Ա. (1) ձիթահանf ի ...: Սաղմոսավանիցն Ա. (1) այգի յԱշտարակ, Ա. (1) ձիթահանf ի Սերկէվիլ և Բ. (2) ջրաղաց յիւր մօտն: Սրբոյն

---

[I] Բ. Բ.

[II] Բ. Մողնւոյ

[III] Բ. այգի

Սարգսի վանիցն Ա. (1) այգի յՕշական, Ա. (1) դինկ և Ա. (1) ֆրֆրայ ի Ղզլթամիր, Ա. (1) ջրաղաց ի Լազրվան, Բ. (2) ջրաղաց և մէկ ձիթահանք ի յՈւշի: Տեղերու վանիցն[295] Ա. (1) այգի և Ա. (1) ձիթահանք ի յԱզարակ, Ա (1) ջրաղաց և Ա. (1) ձիթահանք ի յԱղց[296]: Յօհանավանիցն Բ. (2) ջրաղաց և Ա. (1) ձիթահանք ի յիւր գեօղն, Բ. (2) դինկ և ֆրֆրայ ի Փարպի և Ա. (1) ձիթահանք ի Կարփի, Կոշավանիցն մէկ այգի և մեկ ձիթահանք ի Կոշ: Դփշաղու վանիցն Ա. (1) ձիթահանք յիւր մօտն: Սևանու անապատին Ա. (1) ջրաղաց ի Վարսէր և Ա. (1) ձիթահանք ի Ղարադալու: Անանիա առաքելոյ անապատին[297] Բ. (2) այգի յԵրևան:

(264բ) Այսու ոճով մնայ մաղաֆութիւն Աթոռոյս և հոշակի յամենեսեան, թէ Աթոռս այս մաղաֆ է յամենից հարկաց: Արդ տեսէ այս կանոն ի մեր ՌՂԸ. (1649) թուոյն և ի տանկաց ՌԿ. (1060) թուոյն, մինչև ի մեր ՌՃՀԳ. (1724) և ի տանկաց ՌՃԼԷ. (1137) թիւն, յորում վերջացաւ թագաւորութիւնն Պարսից շիխ օճաղին և տիրեաց երկրիս մերոյ ազգն օսմանցւոց և նստի յԵրևան Ռաջափ կոչեցեալ փաշայն, ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զորպիսութենէ Սրբոյ Աթոռոյս, զմաղաֆութենէն և զորքան մուլքս ունելոյն[298]: Ապա փաշայն գրեցուցանէ զերկար գրքանձև դէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ և զվերջն դազին, յորում այս մեր գեօղս, յՕշական, Մաստարայ, Յոանկանոց և Քիրաշլու գեօղքն մուլք գրին Աթոռոյս: Ապա և զմաղաֆութիւնն կանօնաւորեալ գրէ, թէ տասն այգի, յորոց երեքն ի մեր գեօղս, երեքն յՕշական, երկու ի Փարաքար, երկու յԵրևան, տասն և երկու ջրաղաց, յորոց ութն ի մեր գեօղս, երկու յԵրևան, երկու ևս ի Քալարայ, երկու դինկ՝ մեկն ի մեր գեօղս և միւսն ի Քալարայ: Երկու ձիթահանք ի մեր գեօղս, կից Աթոռոյս, քսան և հնն սերմանելի արտ, երեք եօնճալուղ, մէկ քեարվանսարայ, մէկ համամ և վեց հարիւր ոչխար: Այսքանեօք կանօնէ զՍուրբ Աթոռս մաղաֆ, որ եթէ քան զայսոսիկ աւելի ինչ ունիցի, զհարկսն տայցէ: Այլև գրէ, թէ Սրբոյ Աթոռոյս միաբանքն ընդ սմին և Հռիփսիմէի, Գայիանէի, Շողակաթի վանքն, այլև Երևանու Անանիա առաքելոյ և Ջորագեղու անապատքն, իւրեանց միաբանիւքն, լիցին մաղաֆ ի խարաճից և յայլոց հարկաց: Սոյնանման գիր և այլք փաշայք տան մեզ, որպէս ասացաւ ի վերդ, յաւուրս իշխանութեանն օսմանցւոց՝ այսու կերպիւ կառավարեցաւ Սուրբ Աթոռս:

Քանզի ի ժամանակս Ռաջափ փաշայիս այսմիկ մեր գեօղականքս կամին, զի զԱթոռոյս մին գութանն խափանեսցեն, վասն որոյ և Աստուածատուր կաթուղիկոսն արզ առնէ սոյն փաշայիս: Եւ սոյն փաշայս ի գլուխ արզային գրէ և կնքէ, թէ որպէս ի բնէ անտի ունեցեալ է Աթոռդ զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սօմար սերմն և զհինգ հարիւր ոչխարս, և ես հրամայեցի զի այսպէս լիցի: Սոյնպէս և դազին տայ զֆաթֆայ մի, զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի ՌՃԼԷ. (1725) թուին տանկաց: Ջսոյնանման զգիրս երկուս ևս տայ սոյն փաշայս վասն մաղաֆութեան

վանօրէից Երևանու, զորս ամենևին մաղափ առնէ յամենայն հարկաց, այլ միայն ի տարին զեօթն հարիւր ղուռուշն տան յարքունիս և այլ ոչ ինչ, զորս գտցես ցուցակօքն, որք գրին ի ՌՃՀԷ. (1725) թուին տաճկաց: Ըստ վերոյ յիշեցեալ գրոյն զգիր մի ևս տայ սոյն փաշայս Սրբոյ Աթոռոյս՝ ամենևին մաղափ առնելով: Այլ միայն զերեք հարիւր յիսուն ղուռուշ տայցէ ի տարին, զոր ևս գտցես ցուցակաւն, որ գրի ի թուին տաճկաց ՌՃՀԹ. (1726): Ըստ վերոյ գրեալ Ռաշափ փաշայի տուեալ գրքանն մեծ թղթոյն, զթուղթ մի ևս Ահմէտ փաշայն տայ ամենևին նոյնանման, որ գրի ի ՌՃ[Խ]. (1728)[299] թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն: Դարձեալ զերկուս թուղթս Մուստաֆայ փաշայն տայ, մին ի ՌՃԽԱ. (1728) և զմիւսն ի ՌՃԽԴ. (1731) թուոշն: Զթուղթ մի ևս Հիւսէին փաշայն տայ ի ՌՃԽէ. (1734) թուոշն տաճկաց, որք միապէս զՍուրբ Աթոռս և զամենայն վանօրայսն երկրիս մաղափ գրեն յամենայնից հարկաց: Միայն, թէ Սուրբ Աթոռս ի տարին երեք հարիւր յիսուն և հինգ ղուռուշ և ամենայն վանօրայքն եօթն հարիւր ղուռուշ տան յարքունիսն և յայլ ամենից հարկաց ազատք լիցին: Զսոյնամիտ թուղթ մի ևս շխիսլամն տայ, զոր գտցես ցուցակօքն:

(265ա) Ապա յետ ԺԱ. (11) ամաց ի մերում թուոշն ՌՃՁԴ. (1734) և ի թուին տաճկաց ՌՃԽԸ. (1148), մինչ բռնանայ Նատր կոչեցեալ բռնաւորն յազգէն պարսից, որ և թագաւորէ իսկ ի հայրապետութեանն տեառն Աբրահամու Թրակացւոյ, զզործակալս, այսինքն՝ զմիրվէիզս հանէ յամենայն երկիր, գրել յիւրաքանչիւր գաւառի, քաղաքի և գեօղօրէից զհասսն և զհարկսն արքունական: Յորմէ և կարգեցաւ երկրիս Երևանու Միրզայ Քեազում անուն ոմն գլխաւոր տաճիկ՝ վէքիլ և միրվէիզ վերոգրեալ գործոյն[300]: Արդ ի սոյն թուոշս, վերոյ յիշեալ Աբրահամ կաթուղիկոսն, յառաջագոյն արզ արարեալ ծանուցանէ անորոշապէս Նատր շահին զմաղափութենէ Սրբոյ Աթոռոյս և զաղագս խնդրէ ի նմանէ: Եւ Նատր շահն ի գլուխ արզային գրէ հրաման անորոշակի ի վերայ գործակալացն իւրոց, թէ ի կալս և ի մասիլս Աթոռոյն մի մերձենայք, որպէս յիշեցաք ի վերդ: Ապա վերոյ յիշեալ միրզա Քեազումն ի գիր արկանելն զհասսն երկրիս, սկսանի և զԱթոռոյս հասսն և զմուլքն գրել ի ցուցանելն Աբրահամ կաթուղիկոսին զաղագս Նատր շահին, թէ Աթոռս մաղափ է, և Նատր շահն ևս ահա մաղափ է արարեալ, պատասխանէ միրզա Քեազումն, թէ Նատր շահն միայն զցանքս և զկալս քո է արարեալ մաղափ, արդ մեք զայգիս, զջրաղացս և զայլս այսպիսիս, զորս ունիս ի գիր արկանեմք:

Ապա վերստին արզ առնէ կաթուղիկոսն Նատր շահին, թէ թէպէտ դու ողորմութիւն արարեր և մաղափութեան ռաղամ ետուր մեզ, որ քո գործակալքն ի Աթոռս ամենևին զիր ինչ ոչ պահանջիցեն, ահա Միրզայ Քազումն միայն զկալս մեր ոչ չափեաց և ի ցանքէս մերմէ ոչ պահանջեաց զհարկս, իսկ զայլոցն, այսինքն՝ յայգեաց, ի ջրաղացից և յայլոց այսպիսեաց, կամի առնուլ զհարկս, որ ոչ եմք տուեալ բնաւին:

Քանզի այս Աթոռս յամենայնէ մաղաֆ է ի բնէ անտի, որ ոչ ինչ կերպիւ է տուեալ զհարկս: Այլև Երևանու երկրիս վանորայքն, այսինքն՝ Խորվիրապ, Աղցվանք, Ամենափրկիչ, Գեղարդ, Սևան, Հայրավանք[301], Կեչառիս, Ղպչաղ, Գետարգել, Բջնի, Կարենիս, Սաղմոսավանք, Յօհանավանք, Մուղնի, յՈւշի, Տեղեր, Կոշ[302], Սաղմոսավանից և Յօհանավանից անապատքն այս ԺԹ. (19) վանքերս ի նախնեաց հետէ թէ՛ ջազիայի և թէ՛ այլ խարճի կողմանէ մին ղալամ ի տարին մի անգամ կաթուղիկոսի ձեռօքն ԺԷ. (17) թուման և հինգ հազար դիան մալուջհաթ անուամբ տուեալ են յարքունիս: Իսկ զսերմանցն, որքան սերմանեն ի հնգէն զմին տան բահրայ անուամբ, նոյնպէս այգեաց, ջրաղացից և այլոց այսպիսեաց, զորս ունին, ըստ կարգին տուեալ են զհարկսն: Այժմ ի յառաւել հարկապահանջութեանց շատքն ամայի են եղեալ, զի երկրիս գործակալքն, քան զկարգն առաւել պահանջեն, վասն որոյ խնդրեմ ի մեծութենէդ, զի զռաղամ մի շնորհեսցես մեզ, որ այս Աթոռս, որպէս ի բնէ անտի յամենայն կողմանէ մաղաֆ է եղեալ, որոց ցանքն, ցորեն, գարի և այլ ամենայն սերմանելիք, այգիք, ջրաղացք, դինկք, ձիթահանք, ոչխարք և այլ անասունք, քեարվանսարայ, դուքան, համամ և այլք այսպիսիք ամենեքեան մաղաֆ լիցին, որպէս յառաջն: Նոյնպէս և միւս վանօրայքս զԺԷ. (17) թուման և զհինգ հազար դիանն, որպէս տուեալ են ի բնէ, նոյնպէս և այժմ զնոյնն տայցեն իմով ձեռամբ: Եւ զցանիցն որքան ցանիցեն ի հնգէն զմինն տայցեն բահրայ, իսկ այգեաց, (265բ) ջրաղացից և այլոց այսպիսեաց զորքան ունին, ըստ կարգին, որպէս տուեալ են յառաջնմէ, նոյնպէս և այժմ զնոյնն տայցեն և մի առաւել պահանջիցեն ի նոցանէ զիր ինչ, յորոց շատ աղօթք վասն քոյ կու ելանէ առ Աստուած և քո երախտիքն ոչ կորնչի:

Արդ այսու ոճով գրէ զարզա մի վերոյ յիշեալ[I] Աբրահամ կաթուղիկոսն և տայ Նատր շահին: Իսկ Նատր շահն զայս արզայս առաքէ առ վերոյ յիշեալ միրզա Քեազում գործակալն իւր և գրէ առ նա, թէ այդ արզայիդ լաւ վերահասու լինիս և յամենայն կողմանէ տեղեկասցիս, թէ Էջմիածին և թէ միւս գրեցեալ վանօրայքդ ի բնէ անտի որպէ՞ս են եղեալ, յարքունիս զի՞նչ հարկ են տուեալ և որպիսի՞ է մաղաֆութիւնն դոցա, լաւապէս գիտասցես և զիւրաքանչիւրոց որպիսութիւնն յատուկ յատուկ ինձ գրեսցես: Ըստ այսմ հրամանի վերոյ յիշեալ Միրզա Քազումն և այլք գործակիցք նորին (եկեալ յԱթոռս ընդ Աբրահամ կաթուղիկոսին՝ յետ բազմաց վիճմանց և խօսակցութեանց) գրեն առ շահն, թէ քո ծառայք միրզա Քեազումս և միւս միրզա Քեազումս վերահասու եղաք Էջմիածնի, Յօհանավանից և միւս վանօրէից և նոցին սկազլխաց մաղաֆութեանն, որ ահա արզ առնեմք մեծութեանդ Էջմիածնի սկազլխաց և նորին մարդկանց, մաղաֆութիւնն ի նախնեաց հետէ այսպէս է ճշմարիտն, որ

[I] Բ. վերոյգրեալ

գրեմք: Ամենայն տեսակ սերմանելեաց հատից, զոր ցանեն, որ ջինս ասի, մաղաֆութիւնն է վաթսուն և վեց խալվարի, որ է վեց հազար և վեց հարիւր լիտր Երևանու: ... և նաղտ մաղաֆութիւնն է այսքան՝ տասն այգի, երեքն յայս էջմիածնի ի գեօղս, երեքն յՕշական, երեքն յԵրևան և մին ի Փարաքար, որք ընդ ամէնն լինին մէկ հարիւր յիսուն ... և .... մէկ հարիւր դիանով լինի մէկ թուման և հինգ հազար դիան, տասն ջրաղաց, եօթն ի յայս գեօղս, երեքն յԵրևան, երեք ձիթահանք, երկունքն յԱթոռս և մէկն յՕշական: Երկու դինկ և երկու քրքրայ ի Քալարումն, ևս մէկ դինկ և մէկ քրքրայ ի Կաւակերտ, որք ընդ ամէնն՝ ջրաղաց, ձիթահանք, դինկ և քրքրայ լինին տասն և ինն հատ, որոց մին հազար վեց հարիւր յիսուն դիանով, լինին ընդ ամէնն երեք թուման Ա. (1) հազար ԶՃ. (600) դիան: Ութսուն և ինն հատ դուքեան ի քեարվանսարայս մեր, որք մէկ-մէկ ապասիով լինի ընդ ամէնն Ա. (1) թուման ԷՌԸՃ. (7800) դիան, մեկ համամ Գ. (3) թուման: Ոչխար հինգ հարիւր, որոց մինն կէս շահիով, լինի ընդ ամէնն մեկ թուման, ԲՌԵՃ. (2500) դիան: Արդ վերոյ գրելոց այգեաց, ձիթահանգից, ջրաղացից, դնկից և քրքրայից, դուքանից, ոչխարաց և համամի խարճից ջամն, որ է մեր նաղտից մաղաֆութիւնն է, ընդ ամենն՝ տասն թուման վեց հազար վեց հարիւր յիսուն դիան: Արդ յաւուրս Նատր շահին ևս այսպէս կանօնեցաւ Սրբոյ Աթոռոյս մաղաֆութիւնն, այսինքն՝ ջինսն վաթսուն և վեց խալվար և նաղտն տասն թուման, ԶՌԶՃԾ. (6650) դիան, որպէս ասացաւ, որ եթէ քան զայս գրեցեալսս աւելի ունիցի զմուլք և կամ աւելի սերմանիցէ, զհարկն տալոց է ըստ կարգին, որպէս տայ երկիրն: Եւ յետ գրելոյ զորպէսն Սրբոյ Աթոռոյս, ըստ հրամանի Նատր շահին, գործակալքն նորին, որպէս ասացաք, ապա գրեն և զորպէսն միւս վանօրէից:

Արդ վերոյ ասացեալ ԺԹ. (19) վանօրէից աղագաւ գրեն, թէ այս վանօրայքս և իւրեանց միաբանքն ի ջազիայից և յայլոց հարկաց մաղաֆ են, բայց (266ա) սովորութիւն ունին, որ ի նախնեաց հետէ ի տարին միանգամայն տասն և եօթն թուման և հինգ հազար[I] դիան խալիֆայի ձեռօքն տան յարքունիս: Իսկ ցանքն, զորքան ցանեն և ջրաղաց, այգի և այլք այսպիսիք, զորքան ունիցին, զհարկս նոցա տան ըստ կարգին: Միայն, թէ Յօհանավանքին մէկ թուման ԳՃԼ. (330) դիանի մաղաֆութիւն ունի նաղտից կողմանէ, որ է չորս այգի, երեք ջրաղաց, մէկ ձիթահանք և մէկ դինկ: Զայս ամենայն, զորս գրեցաք, գրեն Միրզայ Քեազումն և այլք գործակալքն և առաքեն առ Նատր շահն, գրելով, թէ ահա այսէ, որպէսն էջմիածնի և այլոց վանօրէից, զոր գրեցաք տէրութեանդ, որպէս հրաման տէրութեանդ է, այնպէս եղիցի:

Այսու ոճով և Աբրահամ կաթուղիկոսն գրէ արզայ առ Նատր շահն և ընդ նոցին գրոյն առաքէ: Ապա և Նատր շահն ի տեսանելն զգրեցեալսս ռաղամ գրէ յԵրևան ի վերայ

---

[I] Բ. հարիւր

խանին և իւրոց գործակալացն, թէ որպէս իմ գործակալքն գրեալ էին և յատկացուցեալ զմաղաֆութիւն էջմիածնի և այլոց վանօրէից, վերահասու եղէ և հավանեցայ և մանաւանդ, թէ ես եկի յերևան բազում զօրօք, խալիֆայն իւր մարդկամբքն ընդ առաջ եկն փէշքեաշով և ինձ և զօրացս լաւ ծառայութիւն արար և ռոճիկ ետ: Վասն որոյ և ես զամենայն հարկսն նոցա բաշխեցի և զինչ որ ունին՝ մաղաֆ արարի, որ միշտ մաղաֆ մնան:

Ուրեմն ով գործակալք իմ այսուհետև այսպէս գիտեցեալ՝ էջմիածնի մէրին և միաբանին մի ձեռնամուխ լինիք և զայս կանօնս գրեցէք ի յարքունական դէվթէրոջն, զի միշտ մնասցէ: Նմանապէս և խանին գրէ պատուէր, զի յամենայնի պատուով պահիցէ զկաթուղիկոսն իւրայնովքն: Այս ամենայն լինի ի ՌՃԽԸ. (1148) թուոջն տաճկաց և ի մեր ՌՃՁԴ. (1735) թուոջն: Այս ռաղամքս, զորս յիշեցաք, սոցա տալն ի ձեռն գործակալացն Նատր շահին մնան և նոցա երեսն հայերէն թարգմանեալ առ մեզ ունիմք: Սակայն և զայլն ևս ձեռն բերաք յետոյ, որ է եռանկիւնի թուղթ մի, Բ. (2) արզայ և Բ. (2) հուքմ: Բ. (2) կնիք միրզայիցն և ի ծայրն Աբրահամ կաթուղիկոսին: Գի՛տ ցուցակսն:

Ապա յետ երկուց ամաց փոխի առ տէր լուսահոգի Աբրահամ կաթուղիկոսն, որ շատ սիրեցեալ էր ի յիշեալ Նատր շահէն և յաջորդէ զԱթոռս Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի և յաւուրս սորա ևս եկեալ նոյն գործակալքն Նատր շահին, գրեն զունեցեալ մուլքսն և զցանքն Սրբոյ Աթոռոյս, զի այս գազանաբարոյ և խորխտ Նատր շահս ի տարին մի անգամ ի գիր արկանէր զբոլոր երկրի զամենայն հասսն և զբերսն: Նոյնպէս գրեն անպակաս, զորս յիշեցաք ի վերդ՝ զտասն այգի, զտասն և ինն ջրաղաց, ձիթահանք և դինկ, զութսուն և ինն դուքեան ի քեարվանսարայոջս մերում, զմէկ համամ, զհինգ հարիւր ոչխար և զվացսուն և վեց խալվար ցանելիսն: Արդ թէպէտ զնոյն վերոգրեցեալսն գրեն նոյն թուով, որքան ի վերդ գրեցան, սակայն զխարճսն ոչ նոյնապէս, այլ աւելորդով գրեն: Քանզի նոյն տասն այգեաց խարճն, որ ի վերդ մէկ թուման, հինգ հազար դիան գրեցաւ, սոքա ինն թուման, ութն հազար մէկ հարիւր դիան գրեն: ԺԹ. (19) ջրաղացից, դնկից և ձիթահանքից խարճն, որ ի վերդ երեք թուման մեկ հազար և ՉՃ. (600) դիան գրեցան, մին մէկ հազար վեց հարիւր յիսուն դիանով սոքա վեց թուման գրեն, մին երեք հազար մէկ հարիւր յիսուն դիանով և հինգ հարիւր ոչխարն ի վերն, մինն Իե. (25) դիանով, մէկ թուման ԲՌԵՃ. (2500) դիան գրեցին, սոքա զմինն վաթսուն դիանով երկու թուման, վեց հազար դիան գրեն: Նոյնպէս և քեարվանսարայի ութսուն և ինն դուքեանն նոքա զմինն ԲՃ. (200) դիանով, ընդ ամենն Ա. (1) թուման էՌԸՃ. (7800) դիան գրեցին, իսկ սոքա զմինն չորս հարիւր յիսուն դիանով չորս թուման ԲՌ. (2000) դիան գրեն, որոց գրեցելոց նաղտից ջամն ընդ ամենն (266բ) եղև քսան երեք թուման ԲՌԱՃ. (2100) դիան:

Արդ ըստ առաջնոց գրելոցն մաղաֆութիւնն մեր էր տասն թուման, վեց հազար վեց հարիւր յիսուն դիան, որպէս ասացաւ և զայսմանս հանին ի վերոյ գրեցեալ ջամէն, իբր մեր մաղաֆութիւնն և զմնացեալ աւելորդն, nr է տասն երկու թուման, հինգ հազար չորս հարիւր յիսուն դիանն, խնդրեցին ի մէնջ: Տե՛ս դու զխորամանկութիւն օձաբարոյից պարսիցն, զի մի և նոյն իրfն, nrf երկու ամաւ յառաջ մաղաֆ գրեցին, զմաղաֆութիւնն ի վերայ նոյն իրացն ոչ կապեցին, այլ զխարճն թեթևազնով հաշուեալ ի վերայ այնfանեաց խարճիցն կապեցին զմաղաֆութիւնն, nr է տասն թուման վեց հազար վեց հարիւր յիսուն դիան: Յետոյ զխարճսն նոյնոյ իրացն աւելացուցանելով ասացին, թէ ձեր մաղաֆութիւնն այսfան է, ուրեմն զայսfանս, nr յաւելաւ, պարտիf տալ:

Ապա յետ բազմաց վիճմանց և խօսակցութեանց ի ջրաղացիցն երկուfն աւեր էր՝ մին աստ և մին յԵրևան, նոյնպէս և fեարվանսարայի խանութիցն ոմանf անմարդաբնակ էին յայնմ միջոցին, զխարճսն նոցին ի բաց հանեալ ի վերոյ յիշեալ տասներկու թուման, հինգ հազար չորս հարիւր յիսուն դիանէն, տասն և մէկ թուման, եօթն հազար ինն հարիւր յիսուն դիան առնուն ի յԱթոռոյս, նոյն միրզա Քեազումն և ընկերfն իւր և տան զհունէթ մի եռակնիf յաւուրս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ ի ՌՃԾ. (1150) թուոջն տաճկաց և մեր թուին ՌՃՁԷ. (1738), զոր գտցես ցուցակաւն յԵրեսն գրեցեալ:

(267ա) Եւ, որպէս զԱթոռոյս մլfից խարճսն յաւելացուցին սոfա, նոյնպէս և բոլոր երկրիս մլfիցն յաւելացուցին, նոյնպէս և Յօհանավանfին աւելորդով գրեն ի նոյն հունէթումն: Բայց զտասնեօթն թուման և զհինգ հազար դիանն, զոր յանուն վանօրէիցն ի մէնջ առնուին, որպէս ի վերդ ասացաf, զնոյնն թարգ յաւելման առին ի մէնջ: Արդ այս կանօն տևեաց մինչև ի վերջանալն Նատր շահին և ի բռնանալն աղուան Ազատ խանին, nr յամէ յամ տասն և մէկ թուման, եօթն հազար ինն հարիւր յիսուն դիան վասն աւելորդացն մերոց առնուին ի յԱթոռոյս և տասն և եօթն թուման, հինգ հազար դիան վասն վանօրէից առնուին, որպէս ասացաf:

Ապա յետ անցման Նատր շահին մեծաց փորձութեանց և ալէկոծութեանց պատահեցաւ երկիրս այս և շատ աւերումն եղև երկրիս գեօղօրէից, վանօրէից և Սրբոյ Աթոռոյս ևս նուազումն մլfից և այլոց իրաց: Եւ ի ՌՄԲ. (1753) թուոջն մերում և ի ՌՃԿԷ. (1167) տաճկաց թուին ի յիշխանութեանն Ազատ խանին և ի հայրապետութեանն Մինասայ Ակնեցւոյն, դարձեալ միրվէիզf եկանեն յերկիրս ի գրել զհասսն և զհարկսն երկրիս, Միրզայ ռապի կոչեցեալ ոմն և այլf ընդ նմա, nrf և գան յԱթոռս և զnrhինն ի գրել, որպէս ի վերն ասացաւ նոյն վաքսուն և վեց խալուար սերմանելիսն անպակաս, իսկ զայլ մուլfսն, զորս չէն գտեալ գրեն են այսnfիկ՝ երկու այգի ի մեր գեօղս հինգ թուման, զի Մանկասարենց այգին աւեր էր, երեf այգի չէն յՕշական երկու թուման, երեf ջրաղաց աստ և մէկ ի Զորագեօղ մէկ թուման, վեց հարիւր եօթանասուն և հինգ դիան և մէկ դինկ և մէկ frfraj աստ և մէկ դինկ և մէկ frfraj ի Քալարումն մէկ

թուման, երեք հազար ութ հարիւր դիան, մէկ ձիթահանք երեք հազար չորս հարիւր յիսուն դիան, համամն վեց հազար դիան, քարուանսարայի քրէհի երկու տասանորդն, այսինքն՝ հնգորդն երեսուն դուքանի, հնն հազար դիան ի նոսա նստօղ դուքեանդարից մալուճհաթն չորս թուման, ութ հազար երեք հարիւր դիան, կով, էշ և մատակ ձի, ըստ ամենն՝ կովն և էշն, երկու հարիւր դիանով և մատակ ձին հինգ հարիւր դիանով, մէկ թուման, մեկ հազար չորս հարիւր դիան, երեք հարիւր տասն ոչխար մէկն՝ վաթսուն դիանով մէկ թուման, ութ հազար վեց հարիւր դիան, վերոգրեցելոց ջամն է ըստ ամենն տասն և ինն թուման, եօթն հազար երկու հարիւր քսան և հինգ դիան: Ի սմանէ մեր մաղաֆութիւնն, որ է տասն թուման ԷՌ. (7000) դիան, հանին, մնաց Թ. (9) թուման ԲՃԻԵ. (225) դիան, զոր առնուն յԱթոռոյս և տան զհունէթ մի երիք կնքով ի ՌՃԿԷ. (1753) թուին տանկաց, զոր գտցես ցուցակսն: Նոյնպէս և զտասն և եօթն թուման և հինգ հազար դիան, որ վասն վանօրէիցն, թէպէտ վանօրայքն ամայեցեալք էին, առնուն անպակաս յԱթոռոյս:

Ապա զկնի Մինաս կաթուղիկոսին, մինչ Պօլսեցի Աղէքսանդր կաթուղիկոսն յերկրոջս հոչակեցեալ տանիկ ոմն Ալի դուլի անուն, որ վէքիլ էր արքունական հարկաց վերայ եկեալ յԱթոռս և սա գրէ զմուլքսն Աթոռոյս, որ գրէ զփոքրիկ հունէթ մի գրելով, թէ էջմիածնի ունեցելոց մլքից հարկն է տասն և ինն թուման, հինգ հազար չորս հարիւր քսան և հինգ դիան և զմաղաֆութիւնն, որ է տասն թուման և եօթն հազար դիան հանաք, իսկ զաւելորդն, որ էր ութ թուման ԸՌԴՃԻԵ. (8425) դիան, առաք: Զայս հունէթս (որ շարթնամայսև ասի) հինգ գործակալօք կնքեալ տան մեզ, զոր գտցես ցուցակսն:

Բայց զկնի (267բ) Աղէքսանդր կաթուղիկոսին, մինչ կոչեցաւ Սահակ վարդապետն Կեղեցի ի հայրապետութիւն ի ՌՄԵ. (1756) թուոջն մերում և ոչ եկն յԱթոռս, որպէս ասացաք յայլուր, նստի և յԵրևան Հիւսէին Ալի խանն, զոր ի վերդ յիշեցաք, յանտէրութենէ Աթոռոյս և երկրիս, համարձակեալ խանին և այլոց գործակալաց զպէսպէս խնդիրս առնեն և զնորապէս խարճս յաւելացուցանեն և առնուն յԱթոռոյս, զի զաւելորդն մաղաֆութեան մերոյ չինեն տասն և մէկ թուման, եօթն հազար հինգ հարիւր դիան, զոր մինչև ցայսօր առնուն անպակաս և տան զհունէթ, այսինքն՝ զղաւզն կամ շարթնամայ, զորս տեսցես ըստ ցուցակացն և ըստ թուոցն: Նոյնպէս և զվանօրէից տասն և եօթն թուման և զհինգ հազար դիանն վերստին հաստատեն յառնուլ յԱթոռոյս, զոր Աղէքսանդր կաթուղիկոսն Պօլսեցի արզ արարեալ Ազատ խանին զվանօրէից ամայութենէն բարձեալ էր ռաղամօք, նմանապէս և ի Հասան Ալի խանէն և ի յերկրիս մեծամեծաց զբազմակնիք թուղթս էր առեալ, զի մի ևս խնդրիցեն զխարճսն վանօրէից յԱթոռոյս, որպէս ի վերդ ասացաք: Եւ ի վերայ եկեղեցեաց երկրիս զհարկս կանօնեն, զոր մինչև ցայսօր առնուն, ըստ ամենն քսան և չորս թուման եկեղեցեացն յամի յամի: Բայց ի յաջորդելն մեր զԱթոռս ի ՌՄԺԲ. (1763) թուոջն մերում և ի տան-

կաց ՌՃՀԷ. (1177) ի Քարիմ խանէն միրվէիզ, այսինքն՝ դիւանագիր, եկն յերկիրս, որ և ի Սուրբ Աթոռս ևս եկն և զսորինն ի գիր արկանել, որոյ անունն էր Ֆազլուլլայ, որոյ և ի ծանուցանելն մեր զմաղաֆութենէ Սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի ռաղամօք թագաւորաց և սա զփոքրիկ շարթնամայ կամ զհուճէթ մի տայ մեզ, թէ և ես վերահասու եղէ, որ էջմիածնի մաղաֆութիւնն է տասն և երեք թուման և վեց հազար երեք հարիւր դիան նաղտն, որ է այգեաց, ջրաղացից, ձիթահանքից, համամի, ոչխարաց, դուքեանից և այլոց այսպիսեաց խարճն և եօթանասուն և հինգ խալվար և քսան և հինգ լիտր ջինսն, որք են սեռմանելիքն, որ եթէ ապագայ եկեալ գրօղքն ևս ըստ այսմ գրիցեն[I], մեծ օգտութիւն լինի Սրբոյ Աթոռոյս: Քանզի զերկու թուման, ինն հազար և ԳՃ. (300) դիան ի նաղտն յաւելացուցաք և ինն խալուար և ԻԵ. (25) լիտր ի ջինսն զմաղաֆութիւնն Աթոռոյս: Զայս հուճէթս գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում և ի ՌՃՁԸ. (1188) թուին տաճկաց երկրիս վէքիլ և դիւանագիրն, որ էր պիղծ Միրզա Շէֆին խնդրեաց ի մէնջ ծածկաբար զմեկ հարիւր թուման՝ պատճառաւ ի Հաճ գնալոյն իւրոյ: Եւ ի չտալն մեր, սկսաւ մախալ և չորիս խորհիլ զմէնջ, ասելով, թէ ուստի՞ է յայտ[II] ձեր մաղաֆութիւնն և որո՞վ ժամանակաւ և ռաղամօք: Արդ եկեալ կամ զմաղաֆութիւնն ձեր հաւաստեցէք կամ զայսքան ամեայ հարկսն տուք: Յետ բազմաց վիճմանց և խօսակցութեանց, ապա զռաղամ ինչ ոչ պատշաճ տեսաք հանել ի յԱթոռոյս, զի չարք և նենգաւորք պարսիկք են և անթագաւորք, այլ զսուրէթն շահ Սուլթան Սուլէյմանին, որ ի ՌՁԳ. (1672) թուոջն տաճկաց է գրեցեալ և զսուրէթն Հասան Ալի խանի տուեալ թղթոյն (զոր ինքն և բոլոր երկրիս մեծամեծ տաճիկքն կնքեալ և վկայեալ են մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս, որ ի ՌՃԿԸ. (1754) տաճկաց թուին է գրեցեալ, զորոց ճառեցաք ի վերդ) առեալ, զարզա մի ևս (268ա) մեք գրեցաք Հուսէին Ալի խանին, թէ դիցուք, թէ մեք նոր եկեալ ղարիպ և Աթոռոյս որպիսութեանցն անտեղեակ՝ ոչ ինչ գիտեմք, դու ո՞չ գիտես, որ ի բնէ անտի մաղաֆ է այս Աթոռս թագաւորաց ռաղամօք, այս վասն է՞ր է, որ ի ժամանակս քոյ և իմ, նորապէս քննութիւն և թաֆթիշ լինի վասն մաղաֆութեանն սորա և կամ լսօղքն զի՞նչ ասեն քեզ և ինձ: Մեր մաղաֆութեան աւելորդն վեց և եօթն թուման է լեալ յառաջ, դուք այժմ ի տասն և մէկ թուման և յեօթն հազար դիան էք հասուցեալ, մեք տամք և ոչ ընդիմանամք, տասն և եօթն թուման ևս ի զուր եղեալ ի վերայ մեր առնուք խարաճ և ջազիայ անուամբ, զոր մինչև ի ձեր ժամանակս ոչ եմք տուեալ երբէք: Մեք կամէաք զայն տասն և եօթն թումանն արզ առնել քեզ և բառնալ, այժմ միրզայ Շէֆին այնու ոչ բաւականանայ, կամի զԱթոռս յամենայնի հարկատու առնել, որ չև է եղեալ

---

I Բ. գրեսցեն

II Բ. այդ

և ոչ ևս լինելոց է: Ահա զմիմիայն ռաղամի զսուրեթ մի և զսուրէթն քո եղբօր տուեալ թղթոյն առաքեցաք առ քեզ, զի տեսցես և զհրաւունս արասցես և զայս տասն և եօթն թումանն ևս բարձցես յԱթոռոյս: Վասն որոյ և խանն ի գլուխ արզային մերոյ կնքեալ հրաման գրէ, թէ որպէս առաջին թագաւորքն և իմ եղբայրս գիտելով զմաղաֆութիւնն էջմիածնի, զայսպիսի գիր են տուեալ և ես հրամայեցի, զի մաղաֆ լիցի և ոչ ոք ունի հրաման ի յԱթոռոյն զդինար մի պահանջել: Եւ մեք այսու ոչ բաւականացեալ, այլ զյատուկ թալղայ մի ևս խնդրեալ առաք վասն տասն և եօթն թումանին: Յորում գրէ, թէ յաւուրս Նատր շահին զտասն և եօթն թումանն, զոր ի զուր և անիրաւապէս ի վերայ էջմիածնի եդեալ առնուին մինչև ցայսօր, մեք բարցաք զայն՝ գիտելով զմաղաֆութիւն էջմիածնի: Այսուհետև չունի ոք հրաման վերստին յիշել և առնուլ: Գի՛տ զայս երկու թուղթս յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի մեր ՌՄԺԴ. (1765) և ի տաճկաց ՌՃՀԸ. (1178) թուոջն: Յորմէ հետէ մինչև ցայսօր, որ եմք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում, ոչ եմք տուեալ զայն տասն և եօթն թումանն, զոր ջազիա անուամբ առնուին յԱթոռոյս:

Արդ ի ներկայումս, յորում գրեմք զայս յիշատակագիրս, այսպէս է կացութիւնն և տուրքն Սրբոյ Աթոռոյս, զի տարին միանգամ տամք զտասն և մէկ թուման, զեօթն հազար և զհինգ հարիւր դիանն, որ է աւելորդն մաղաֆութեան Աթոռոյս: Եւ զայլ տուրս ոչ ունիմք հարկ անուամբ, ոչ նաղտ և ոչ ջինս: Իսկ ընծայ ի պատահման ժամանակին և ի Նաւռուզին, որ է տարեմուտ և բայրամ նոցա, ըստ արժանւոյն խանին և այլոց մեծամեծաց և դրան մարդկանց տամք ի նաղտէ և յայլոց իրաց ընդ ամենն ի Նաւռուզին թէ՛ խանին և թէ՛ այլոց նաղտ և ջինս, մինչև ի քսան թումանն հասանի, որոց դէվթէրքն ևս գոն: Այս է մեր մեծ և հարկաւոր տալոյ օրն, յորում գնամք ի տեսութիւն և ի շնորհաւորել զբայրամն նոցա, թէպէտ ի ժամանակս թագաւորաց ոչ կաթուղիկոսն գնայր և ոչ զայսքան տայր, այլ ի ձեռն միոյ սևագլխոյ սակաւ ինչ քաղցրեղինօք և գաւամբ շնորհաւորէր, բայց և խանն տայ մեզ զմէկ զառբաւ[I] բալափուշ[303] և զմէկ զառբաւ[II] կապայ[304], որ (268բ) միշտն է և երբեմն ևս զձի ռախտիւք[III], զմեր կիր արկանելի շալ պարանոցի և զարծաթեայ գաւազան ևս և եօթն կարած մահուտ չուխայ ևս է. (7) եպիսկոպոսաց մերոց տայ:

Իսկ յայլ ժամանակս թէ՛ խանն և թէ՛ այլքն, երբեմն մուհակաւ զպարտս խնդրեն, երբեմն ողոքանօք և աղաչանօք խնդրեն, թէ զնաղտս և զայլ իրս, մեք ևս երբեմն տամք ըստ կիսոյն, մերթ ըստ բոլորին և երբեմն իսպառ բացասեմք ի ժամանակն ի խնդիրն և ի խնդրողն՝ նկատելով միանգամայն, որպէս նաւավար, ըստ հողմոյն վարիմք, ըստ բերմանց միջոցին: Բայց և զոմանս չար սովորութիւնս ևս կամէին կանօնել ըստ

[I] Բ. զարպաֆ
[II] Բ. զարբաֆ
[III] Բ. ռախտ

խորամանկ բարուցն իւրեանց, զորս և արարեալ էին յամս քանիս, մեք խափանեցաք Աստուծով: Մին այս, զի ի հոգտեմբեր ամսոյն խանն զամենայն մեծամեծսն առեալ գայր յԱթոռս, որոյ անունն Ուշքիլիսէ եղնաղի էին եղեալ, յետ բազմաց խարճից և նեղութեանց, մեծ ընծայ մի խանն առնոյր և դէվթէր մի ևս գրեալ առաքէր, թէ այս ինչ աղայի այս ինչ տուր և այս ինչ աղայի այս, ամենեցունց ըստ արժանւոյն, որոց մինչև ի յիսուն թումանն հասանէր, գինսն տուեցելոցն: Միւս ևս ի բայրամին խանն գայր ի տեսութիւն մեզ և մէկ ամանով ոսկի խնդրէր ի դնել առաջի իւր և ապա առեալ բաժանէր բազմականացն, որ ընդամէնն լինէր յիսուն կամ վաթսուն ոսկի, զորս թէպէտ յառաջնումն ամին մերոյ և մեզ տալ ետուն, սակայն շնորհօքն Աստուծոյ ի գալ ամին ոչ ետու, որք խափանեցան իսպառ այնուհետև: Գրեմք ի զգուշութիւն ապագայից:

Այլև ի ներկայումս, որքան սերմանեմք և զորքան մուլքս և զանասունս ունիցիմք, ոչ գոյ քննութիւն և ոչ ի հաշիւ արկանել, զինչ և բերեմք ի յարտաքուստ և տանիմք ի ներքուստ, ոչ գոյ մաքս և ոչ այլ ինչ խարճ:

Այսպէս է կացութիւն մեր և Աթոռոյս ի ներկայումս, յապայն Աստուած յանձին: Այսոքիկ զորս գրեցաք, թէպէտ հասարակին ոչ այնքան ախորժելի, սակայն զկնի մեր յաջորդող կաթուղիկոս եղբարցն կարի փարեցմամբ գրկելի լինելոց է: Յորոց յուսամ յիշել երբեմնապէս միով ողորմեայիւ ի յանիլն ի յայս փորձարան[I]:

[I] Ձգրված՝ 269ա-274բ

## (275ա) **ԳԼՈՒԽ ԺԵ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՅԱՏՈՒԿ ՅԱՏՈՒԿ ԵՒ ՅԱՆՈՒԱՆԷ ԱՆԴՔ ԵՒ ՀՈՂՔ ՎԱՐԵԼԻՔ, ԱՐՕՏՔ ԱՆԱՍՆՈՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ, ԹԷ Ո՞ՒՐ ԵՒ ՈՐՊԷ՞Ս ԵՒ Ե՞ՐԲ ԵՒ Ո՞ՅՐ ՁԵՌՕՔ ԾԱՆՈՒՅԱՆԻ

Անդք և վարելի հողք, զորս ունի Սուրբ Աթոռս ի կից գեօղս մեր են այսոքիկ, յորոց զոմանս ի բնէ անտի ունի և զոմանս յետոյ ստացեալ:

Արևելեան կողմն Սրբոյ Աթոռոյս և կից կալին մերոյ մեծ եօնչալուղ կոչեցեալ տեղին իւրովք սահմանօքն, որ է հարիւր քսան սօմարի տեղ: Ի վերկոյս սոյնոյ եօնչալուղիս աւեր ջրաղաց մի կայ, զոր Ջանիբէկին ասեն, սոյնոյ ջրաղացիս մերձ՝ դէպ ի յարևելս կոյս, Քեօնտալան կոչեցեալ հողն, որ է վաթսուն սօմարի տեղ: Ի ներքոյ սոյնոյ ջրաղացիս և կից մեր եօնչալուղի որմոյն յարևելեան կողմն յիսուն սօմարի տեղ: Սոյնոյ տեղւոյս արևելակողմն հողն, որոց երկուց մէջն մէկ առու գոյ, յիսուն և հինգ սօմարի տեղ: Սոյնոյ տեղւոյ ներքին ծայրի կողմն մէկ Քեօնդալան[I] հող ևս գոյ, որ է տասն և հինգ սօմարի տեղ: Մեր Մանկասարենց այգւոյ տակի ի հարաւակոյս հողն, որ է եօթանասուն սօմարի տեղ: Դարձեալ աստի ի վայր յարևմտակոյս հակեալ աւեր գումբէթ գոյ խարտեալ քարակերտ յայն գումբէթէն մինչև ի փոքր բլուրներն, որ դէպ ի յԱթոռս հային և յայն բլուրներիցն մինչև ի ճանապարհն, որ ի Քալարու կողմն երթայ, որք են երեսուն սօմար տեղ: Աստի դէպ ի հարաւակոյս ի վայր, քան զճանապարհն Քալարու տեղիք գոն, որք Շօրաքեաթ ասին, մինչև ի Բ. (2) փոքր բլուրներն, որք Ղօշաթափայ ասին, որք են սահմանք ի մէջ մեր գեօղիս և Շօրլու գեղջն, որք են մինչև երկու հարիւր յիսուն սօմարի տեղ, որք ի մէջ ուղամիցն ևս Շօրաքեաթ գրին:

Դարձեալ աստի փոքր ինչ ի վայր ի հարաւակոյսն Ջուղայեցի Յակոբ կաթողիկոսն զծովակ մի է շինեալ և պարսպով պատեալ, զի ջուրք քանքանիս մերոյ, զոր և նոյն Յակոբ կաթողիկոսն է հանեալ և այլ աստի և անտի գնացեալ ի յայն ծովակն լնանին և անտի զառիվայր արտորայսն ջրեն: Այս ծովակս յառաջ զարդարուն էր լեալ ծառովք և այլովք վայելչութեամբք, զորմէ յիւրում տեղւոջն ասասցուք: Այժմ ցամաք է և արտ ի տեղիս տեղիս ունելով զորմունս և Ներքի Գեօլ ասի: Այս ծովակիս մէջն և կտոր

[I] Բ. Քեօտալահան

մի ևս մօտն ի հարաւակոյս, կտոր մի ևս ի գլուխն յարևմտեան կողմն և մեծ հող մի ևս ի յոտն, որ Հին Եսնջալուղ ասի յարևելակողմն, որք են հարիւր ութսուն սօմարի տեղ, որ ի մէջ ողղամիցն քսան խալվարի տեղ գրին:

Դարձեալ աստի դէպ ի յարևմտակողմն Ղօշերի յուս կոչեցեալ հող, որ է ութսուն սօմարի տեղ: Դարձեալ աստի դէպի ի հարաւակոյսն Հայրենիք փոս կոչեցեալ տեղին և մեր աւեր դնկի լրի մօտ կտոր հողն և նոյն դնկի տակի մեծ հողն և այս հողիս դէպ ի գետակողմն հողն, որոց մէջն առու մի զոյ ճանապարհն Խաթունարխին, մինչև ի Քիլթա(275բ)փայ կոչեցեալ բլուրն և ի բլրէն մինչև ի յԱղսախլու կոչեցեալ տեղիսն և յԱղսախլու կոչեցեալ տեղեացն մինչև ի վերոյ յիշեցեալ Ղօշերի յուս կոչեցեալ տեղեաց բլուրներն և միայնզամայն Խաթունարխ կոչեցելոյ ճանապարհի երկու կողմունքն ևս Սրբոյ Աթոռոյս են, որք են երեք հարիւր յիսուն սօմարի տեղ, որք ի մէջ ողղամիցն միանգամայն մինչև ցՔիլթափէն Հէրանանկ գրին:

Դարձեալ ի յայս կուսէ դէպ յարևմուտ հակեալ հանդէպ Ալիբէքլու գեղջն Թեղուտներ կոչեցեալ տեղն, որ ի մէջ ողղամիցն Բազրկեան եօլի գրի, որ է իննսուն սօմարի տեղ: Դարձեալ անտի դէպ ի հիւսիսակոյսն Փշատի ծառ կոչեցեալ տեղին, որ ի մէջ ողղամիցն Հաճիլարի տեղ ասի, որ է հարիւր քսան սօմարէն տեղ: Սատախլու կոչեցեալ տեղն հարիւր սօմարէն տեղ: Աստի դէպ ի վեր հիւսիսակոյս ի տեղւոջն Իլանլու կոչեցեալ, յորում հող մի, որ է ... սօմարի տեղ: Գինուենց ջրաղացի մերձ հողն դէպ ի յարևմուտն, յորոյ գլուխն բաժանի Շահարխի[305] կոչեցեալ մեծ առուն, որոյ կէսն ի Խանդակ առուն երթայ և կէսն ի Սատախլուն, որ է յիսուն սօմարի տեղ, որ ի մէջ ողղամիցն Շահարխի գրի: Մեր միջի ջրաղացին տակն և մօտն, դէպ ի յարևմուտ երկու առուամէջն, դէպի Հաճիլար գետղն իննսուն սօմարի տեղ: Մեր վերի ջրաղացն, որ Իզբաշոնց ջրաղաց կոչի, նորա տակն և գլխոյն Քեօնդալանն հարիւր տասն սօմարէն տեղ:

Դարձեալ գեօղիս մերոյ յայզուց առուէն, մինչև ի Վերին Գեօլն մեր, ի գեօլէն դէպի յարևմուտ՝ ծայր Մօլադուրսունի սահմանն և միւս ծայրն մինչև ի Քարաֆիթ կոչեցեալ տեղին եօթանասուն սօմարի տեղ, որք ի մեջ ողղամիցն միանգամայն Քարաֆիթ գրին: Եւ նոյնոյ Քարաֆթի տակի մեծ հողն և գլխոյն Քեօնդալանն հարիւր յիսուն սօմարի տեղ: Աստի դէպ ի հարաւակողմն հակեալ Ճլոտ կոչեցեալ տեղին հարիւր և եօթանասուն սօմարի տեղ:

Դարձեալ Շողակաթի վանից հիւսիսակոյսն Խանըղ այգի կոչեցեալ տեղին հարիւր քառասուն սօմարի տեղ: Դարձեալ ի Սուրբ Հռիփսիմէի վանիցն դէպ ի Սուրբ Աթոռս, մինչև ի վայրն Շողակաթին Ղարիպանց զերեզման կոչեցեալ տեղին և անտի ի հարաւակողմն հակեալ, մինչև ի յԵրևանու ճանապարհն, որ ի մէջ ողղամիցն Հռիփսիմէի տեղ գրի իննսուն սօմարի տեղ: Դարձեալ Սուրբ Հռիփսիմէի ի հարաւակողմն յԵրևանու հին ճանապարհէն ի վայր, մինչև ի Մանկասարենց այգին մեր այն միջոցն, որք Մխիթարենց այգիք կոչին են ... սօմարի տեղ:

(276ա) Արդ այսոքիկ անդք և հողք, որք գրեցան՝ են ի յանդաստանի գեղջս մերոյ, յորոց շատոքն ի բնէ անտի սեպհական Սրբոյ Աթոռոյս են լեալք, որոց յաղագաւ և զերկուս ողդամս ևս ունի Սուրբ Աթոռս, մին ի մեծէ և յառաջնոյ շահ Ապասէն, որ գրի ի տանեկաց ՌԿԲ. (1612) թուին ի ժամանակս Մելքիսէթ կաթուղիկոսին: Եւ միւսն յերկրորդ շահ Ապասէն ի տանեկաց ՌՂԴ. (1644) թուին ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին, որոց թէպէտ մին քան զմիւսն ԼԲ. (32) ամաւ յետոյ է, սակայն միևնոյն են գրեցեալքն ի մէջ երկուցն և միապէս: Քանզի յերկուսն ևս նախապէս շխիսլամք երկրիս գրեն յանուանէ և յատուկ յատուկ զհողս և զանդս վերոյ յիշեցեալս և կնքեն և վկայեն, թէ այսոքիկ անդքս ստուգիւ էջմիածնի են լեալք ի բնէ անտի, և ապա թագաւորքն ի վերայ այսոցիկ թղթոցս մին ի նոյն երեսն և միւսն ի միւս երեսն ողդամ գրեն և հրամայեն, թէ մեք ևս հրամայեցաք, զի հողքդ այդոքիկ էջմիածնի Աթոռոյն լիցին միշտ, և ոչ ոք ունի իշխանութիւն ձեռնամխիլ ի դոսա, զորս գտցես ցուցակօքն և զառաջինն ( ) նշան համարով և զերկրորդն ( ) նշան համարով: Իսկ ի տիրելն օսմանցւոց երկրիս մերոյ, նոցին երկու թագաւորքն և փաշայքն տան գիր Սրբոյ Աթոռոյս՝ գրելով զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սոմար սերմն և զխամ և ինն արտ սերմանելիս և զերիս եօնջալուղս ընդ այլոց մլքից մաղափ, որպէս ի վերդ ասացաք:

(276բ) Արդ վերոյ գրեցեալ տեղիքդ, զորս յիշեցաք յանուանէ և յատուկ յատուկ ի դոցանէ ի մէջ վերոյ յիշեցեալ ողդամից գրեցեալք այսոքիկ են, որք ի բնէ Սրբոյ Աթոռոյս են լեալք, զորս ի վերդ ևս յիշեցաք: Նախապէս Ճորաքեաթ կոչեցեալ տեղիքն միանգամայն, որք են ի ներքոյ Քալարայու ճանապարհին և ի մէջ մեր գեօղիս և Ճօրլու կոչեցեալ գեղն, որք են երկու հարիւր յիսուն սոմարի տեղ: Երկրորդ, Յակոբ կաթուղիկոսի ծովակն ի վայր Ճորաքեաթի տեղուջն, որոյ մէջն հարաւակոյսն, արևմտակոյսն և արևելակոյսն ծովակին, որք միանգամայն քսան խալվար սերման տեղ գրին: Երրորդ, աստի դէպ ի հարաւակոյսն Հերանանկ կոչեցեալ տեղիքն, որք են մինչև ցՔիլթափայ կոչեցեալ բլուրն և Խաթունարխի ճանապարհի երկու կողմունքն և այլ շրջակայքն, որք ի վերդ յատկացեալք յիշեցան, որք են երեք հարիւր յիսուն սոմար սերման տեղիք: Չորրորդ, աստի դէպ ի յարևմուտ հակեալ հանդէպ Ալիպէկլու գեղջն Թեղուտներ կոչեցեալ տեղիքն, որք Բազրկեան եօլի գրին, որք են իննսուն սոմարի տեղիք: Հինգերորդ, Սատախլու կոչեցեալ տեղին, որ է հարիւր սոմարի տեղ: Վեցերորդ, աստի դէպ ի հիւսակոյսն Իլանլու կոչեցեալ տեղին, որ է ... սոմարի տեղ: Եօթներորդ, Գինոսենց ջրաղացի մերձ հողն, որ Ճահարխի գրի, որ է յիսուն սոմարի տեղ: Ութներորդ, Փշատի ծառ կոչեցեալ տեղին, որ Հաճիլարի տեղ գրի, որ է հարիւր քսան սոմարի տեղ: Իններորդ, գեօղիս մերոյ այգւոց առուէն, մինչև ի Վերին Գեօլն մեր, անտի ի Մօլլայդուրունի սահմանն, միւս ծայրն մինչև ի Քարաքիթ կոչեալ տեղին, որք միանգամայն Քարաքիթ գրին՝ հանդերձ տակի մեծ հողովն և գլխոյ Քեօնդալանովն, որք են երկու

հարիւր բաան սօմար սերման տեղիք: Տասներորդ, ի Սուրբ Հռիփսիմէէն ի վայր ի Ծողակաթն և Ղարիպանց զերեզման կոչեցեալ տեղին, որք Հռիփսիմէի տեղ գրին իննսուն սօմարի տեղ:

Արդ վերոյ յիշեցեալ տեղիքդ ի բնէ անտի և թագաւորաց հրամանագրով սեպհական Սրբոյ Աթոռոյս են սերմանելի տեղիք և ոչ այլ ումեք: Իսկ մնացեալ տեղիքն, որք ի վերդ գրեցան և ի մէջ ռաղամիցդ, ոչ զոն, այսպէս են Սրբոյ Աթոռոյս:

Մեր կալի մօտ Եօնջալուղն և սորին արևելակողման և հարաւակողման տեղիքն, որք ի վերդ գրեցան:

............................................................................................................................................

(277ա) Մեր Մանկասարենց այգւոյ հարաւակողմն հողն:

............................................................................................................................................

Աւեր գումբէթի կողմունքն, մինչև ի Քեալարայու ճանապարհն:

............................................................................................................................................

Ղօշերի յուս կոչեցեալ տեղիքն:

............................................................................................................................................

Մեր միջի ջրաղացի կողմունքն:

............................................................................................................................................

(277բ) Մեր վերի Իւզբաշոնց կոչեցեալ ջրաղացի վերն և վայրն:

............................................................................................................................................

Ճլուտ կոչեցեալ տեղին:

..........................................................................................................................................

Ծողակաթի մօտ Խանըլ այգի կոչեցեալ տեղին:

Քանզի Մեծն շահ Ապաս, յորժամ էառ զերկիրս մեր ի յօսմանցւոց և տիրեաց և զԱմիրկիւնէ խանն տէր կարգեաց երկրիս մերոյ ի ՌԾԲ. (1603) թուին մերում և ի տանկաց ՌԺԲ. (1012) թուին, որպէս ասացաք ի վերդ այս Ամիրկիւնէ խանս պարսպեաց զայս տեղիս և տնկեաց ծառս և որթս և արար զայգի ի զբուսարան ինքեան, զոր և վայելեաց ինքն և որդին իւր Թահմազ ղուլի խանն: Զկնի սորա օսմանցիքն, որք առին զերկիրս մեր յաւուրս սուլթան Մուրատին և կերին յամս յերիս: Քանզի Մեծն շահ Ապաս էառ նախ զերկիրս մեր յօսմանցւոց ի ՌԾԲ. (1603) թուին մերում և օսմանցիքն կրկին առին ի Պարսից ի ՌՁԳ. (1634) թուին մերոյ, որք ևս Թահմազ ղուլի խանն առաքեցին ի յԸստամպօլ, որ և մեռաւ իսկ ի ճանապարհին Իզնիմիտու ի յետ դառնալն ի դաւաճանութենէ Ռուստամ խանին ի յօսմանցւոց:

Ապա շահ Սէֆին եկն ի ՌՁԵ. (1636) թուին և վերստին էառ զերկիրս յՕսմանցւոց և կարգեաց յԵրևան խան զՔեալպալի կոչեցեալն: Յետ սորա եղև խան Քեօթուկ Ահմատն: Յետ սորա եղև խան Խոսրովն: Յետ սորա Մահմատ խանն: Զկնի սորա

Նաճաֆ կոչեցեալն: Եւ զկնի սորա Ապասն կոչեցեալ, որ էր այր բարեբարոյ և քրիստոնէասէր և կարի բարեկամ Յակոբ կաթուղիկոսին և էր որդի Ամիրկիւնէ խանին վերոյ յիշեցելոյ: Արդ ի յԱմիրկիւնէ (278ա) խանէն մինչև այս Ապաս խանս այգիս այս վերոյ յիշեցեալ խանըղ էր և արքունիս և եկօղ խանքն ունէին և վայելէին, յորմէ շատ վնաս և նեղութիւն ևս հասանէր Աթոռոյս և կողմանցս՝ վասն երթևեկութեանց նոցին և մանաւանդ կողմնացւոցս տային տածել և մշակել: Ապա այս Ապաս խանս յառաւել սիրոյն, զոր ունէր առ Յակոբ կաթուղիկոսն, բաշխեաց զայգիս զայս Յակոբ կաթուղիկոսին և Աթոռոյս ձրիապէս և մնաց ժամանակ ինչ Աթոռոյս: Ապա յետ այս Ապաս խանիս եկն Լազկի Սէֆի խանն յԵրևան, որ շատ չարութիւն արար ընդ Յակոբ կաթուղիկոսին և ընդ Աթոռոյս: Քանզի երկիցս անգամ խնդրեաց Յակոբ կաթուղիկոսէն զծովակն, զոր ի վայրի կողմն Աթոռոյս յարևելակողմն շինեալ էր Յակոբ կաթուղիկոսն, էր շինեալ և զարդարեալ ծառօք և պէսպէս վայելչութեամբք, զոր ի վերդ յիշեցաք: Եւ ի յոչ տալն Յակոբ կաթուղիկոսին՝ ոխակալեցաւ ընդ նմա այս խանս և բազում չարիս գործեաց, որպէս պատմէ Զաքարիա պատմիչն[306]: Վերջապէս ինքն պատժեցաւ չարաչար ի շահէն և փոխանակ նորին եկն միւս Սէֆի խանն յԵրևան, որ է ազգաւ վրացի: Այս Սէֆի խանս և իւր կինն հանին զջուրն ի Մամարխ և Խաթունարխ կոչեցելոցն ի Սև ջրոյն և խէյրաթ արարին, զորմէ ի տեղւոջն ասասցուք: Զկնի այս Սէֆի խանիս եկն յԵրևան Զալ խանն, որ էր զաւակ Քրիստոնէի և բարեբարոյ: Յետ սորա Մուրթուզա ղուլի խանն: Յետ նորա Մահմատ խանն: Յետ նորա Ֆարզալի խանն, որ էր ի թոռանց Ամիրկիւնէ խանին, որ էր այր չար, ագահ, երկրաւեր, յաւուրս շահ Հիւսէինին և մերոյ Նահապետ կաթուղիկոսին:

Արդ ի յԱպաս խանէն, որ զայս այգիս բաշխեաց Աթոռոյս, մինչև յայս Ֆարզալի խանս ոմանք խանք երբեմն արծարծէին վասն այգւոյս, թէ խանըղ այգի է, և կաթուղիկոսն զաւթեալ է, վասն որոյ և զբանս պահանջէին յԱթոռոյս և կամ զայգին յետ առնուլ կամէին: Ապա յաւուրս Եղիազար և Նահապետ կաթուղիկոսացն մերոյ զբան ինչ ինարայ կապեցին ի վերայ Աթոռոյս, զի զայգին Աթոռս ուտիցէ և ամստամէ խանըղ, այսքան՝ դրամ տայցէ: Եւ կաթուղիկոսքն մեր ևս ակամայ յանձն առին այնու մտօք, զի ոտք տանկացն հատցին ի սմանէ: Ապա յետոյ Նահապետ կաթուղիկոսն տեսեալ, թէ և այսու ևս լինի վնաս, զի զկապեալ ինարայն առնուին և յերթևեկութեանց ոչ պակասէին, վասն որոյ գրէ վերոյ յիշեցեալ Ֆարզալի խանին, թէ ես ոչ ևս կարեմ պահել զայգիս զայս վասն սղութեան ջրոյ և նեղութեան երկրիս, դու գիտես զքո այգին, ում կամիս տուր: Եւ նոյն արզայի վերայ հրաման գրէ Ֆարզալի խանն ի վերայ միրվէիզին իւրոյ, թէ հան ի դաւթարէդ զանուն այգւոյդ մերոյ ի յԱթոռոյն: Եւ, որպէս հրամայիցեմ քեզ, յետոյ այնպէս արասցես: Գտցես զայս գիրս ցուցակաւն և ( ) համար նշանաւն:

Եւ կաթողիկոսն, մինչ այսու հնարիւ ձգէ յինքենէ զայգիս զայս և զերծանի, ապա խանն կոչեալ զԿարփու նահիայիս զմէլիք Նէրսէսն, զգլխաւոր իշխանսն և զայլ տեարսն խօսից և նոցա վերայ ձգէ ասելով՝ դուք երկրովի տո՛ւք զիճարայն այգւոյն մերոյ և մշակեալ շէն պահեցէք: Եւ սոքա ևս թէպէտ ակամայ կամօք յանձն առնուն տալ զիճարայն ամի ամի, բայց (278բ) այսու պայմանաւ, թէ դուք միայն զձեր այգւոյ իճարայն առէք ի մէնջ, մեք գիտեմք զյագին: Այսու հնարիւ առնուն զայգին և գիտելով անհոգ թողուն և ոչ տածեն և վերջապէս յօրէ յօր քանցեալ զորթսն և զծառսն՝ զսերմանելի արտ շինեն և զսերմն ևս ոչ ումեք թողուն սերմանել: Բայց զսակարկեալ իճարայն տան յամս քանիս երկրովի յԵրևան նստող խանին: Եւ այսպէս առնելով, մինչ հնանայ անցքն և բառնի անուն այգւոյն, նոյն երկրականքն մէլիք, իշխանք և քահանայք զգիր մի շինեալ կնքեն ամենեքեան, թէ մեք որ զխանըղ այգին, որ ի գեօղն էջմիածնի էր, ի խանէն առեալ խափանեցաք և մինչև ցայժմ մեք տայաք զիճարայն և ոչ ումեք թողուաք զնա սերմանել, ահա ևս մեք զնոյն այգւոյ տեղն ետուք Աթոռոյն էջմիածնի, զի նա միայն սերմանեսցէ զնա և ոչ այլ ոք և մեք երկրովի զնորին իճարայն տամք ի դուռն խանին: Բայց ի տալն մեր զնուիրակութիւն Սրբոյ Աթոռոյն, զայն իճարայն ի հաշիւ անկցի: Եւ թէ պատահիցի, զի բաց յԱթոռոյն այլ ոք ցանեսցէ զայն տեղին, ցանօղն տայցէ զիճարայն և մեք ազատ լիցուք: Գրի այս գիր ի ՌՃԾԵ. (1706) թուոջն մերում հայերէն, զոր գտցես ցուցակաւն: Այսու կերպիւ լինի տեղիս այս Խանըղ այգի կոչեցեալ Սրբոյ Աթոռոյս տեղի սերմանելոյ: Եւ երկրացիքն տային զիճարայն, որքան տևէր թագաւորութիւն Պարսից և ի յամբոխիլն թագաւորութեան և յայլայլիլն երկրիս, անհետ եղեն այսք զրուցք և իճարայն և բարձաւ անուն խանիցն ի տեղւոյս յայսմանէ և ընդ ձեռամբ Աթոռոյս մնաց մինչև ցայսօր:

(279ա) Իսկ ի Սուրբ Հռիփսիմէէն դէպ ի հարաւակոյս, մինչև ի Մանկասարենց այգին մեր, որք Միխիթարենց այգիք գրեցան ի վերդ, այգիք են լեալք գեօղացւոց մերոց:

Արդ այսոքիկ տեղիքս, որք գրեցան ի վերդ են յատուկ Սրբոյ Աթոռոյս, յորս ոչ կարեն գեօղականքն մեր սերմանել ինչ առանց հրամանի մերոյ, բայց ի յայլ արտորայս գեղջս մերոյ, որք են գեօղականացն, մեք կարեմք սերմանել, ըստ պահանջման ժամանակին, եթէ կամիցիմք: Քանզի, որպէս գրեցաւ ի վերդ, ըստ ղապալայի Գրիգոր կաթուղիկոսին, Սրբոյ Աթոռոյս է գեօղս այս՝ բոլոր սահմանօքն իւրովք: Դարձեալ և այսու ոչ է զանց առնելի, զի գեղջս մերոյ յարևելակողմի սահմանն, որ է Ղօռուղն, որպէս ի վերդ ասացաւ, այս Ղօռուղիս եզրն դէպ ի գեօղս մեր զոն աւեր տեղիք տանց, որ ըստ երևմանն, որպէս թէ գեօղատեղ է լեալ յառաջնմէ: Եւ գեօղատեղս այս տաճկերէն Իլխըճի կոչի:

Քանզի ի յառաջին ժամանակսն անասնապահք և նախարարծք (279բ) Երևանու խանին, որք յամռան եղանակին զանասունսն խանին ի լերինսն արածեն ի ձմռան

եղանակին ի յայս Ղօռուղ տեղիս արածէին: Վասն որոյ և իւրաքանչիւրքն զմի մի խուղս և զծածկարանս շինեն վասն ինքեանց կամ թէ անասնոց և դարմանից նոցին: Վասն այսորիկ կոչի տեղիս այս Իլխըճիլար կամ Իլխըճի քեանդի: Այժմ է աւեր ամենևին: Այս տեղւոյս յարևելակողմն Ղօռուղն է և միւս կողմանսն մեր գեօղիս հողն, որք մեր ջրովն միայն կարեն ոռոգանիլ:

Ապա ի ՌՄԺԶ. (1767) թուոջս ի մերումս ժամանակի Երևանու Հիւսէին Ալի խանն կամեցաւ զազգ մի տանկաց, որք քեօլանի ասին, բերել և յայս Իլխըճի տեղիս բնակեցուցանել, որպէս զի զհողսն մեր, որք զտեղեաւն այնու շուրջ կան, ցանիցեն և ջրովն մերով ոռոգանիցեն՝ խաբելով զմեզ, թէ զաւելորդ ջուրս ձեր ի կիր արկանեն սոքա և ձեզ ոչ ինչ տան զվնաս: Եւ յետ բազմաց վիճմանց և ընդդիմաբանութեանց՝ խափանեցաք զչար դիտումն նորին և ոչ թողաք՝ հաւաստելով, զի հողքն այնոքիկ մեր գեղջս են և մեր ջրովն ոռոգանին և մեք կարեմք ցանել զնոսա և ոչ այլ ոք: Ուստի և խանն բռնադատեցեալ ի ճշմարտութենէ գիր տայ մեզ, թէ յիրաւի անկարգ էր դիտումն մեր, վասն որոյ և խափանեցաք: Գի՛տ զայս գիրս ցուցակաւն և պինդ պահեա վասն ապագայից զգուշութեան: Այսպէս վարեցաք զքեօլանիսն ի տեղւոյն և զտեղիսն սերմանելոյ մեզ արարաք:

Դարձեալ ի ՌՃԾԳ. (1704) թուոջն մերում և ի ՌՃԺԶ. (1116) թիւն տանկաց Կաւակերտ կոչեցեալ գեօղի բոլոր գեօղականքն ի նոյն գեօղն Սրբոյ Աթոռոյս վախմ տան ... հող ցանելոյ, որ լինի ... սօմարի տեղ ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին, զորոյ զտաճկերէն վախուպնամէն գի՛տ ցուցակաւն[307]:

## (280ա) **Վասն Սէֆիապատ և Խաթունարխ կոչեցեալ տեղւոյն, թէ որպէս է Սրբոյ Աթոռոյս**

Դարձեալ արտաքոյ գեղջս մերոյ ունի Սուրբ Աթոռս զմեծ հող մի ի վայրն ի հարաւակոյս ի վերայ Մեծամօր կոչեցեալ Սև ջրոյն, որ տաճկերէն Ղարասու կոչի: Քանզի Մեծամօրի կոչեցեալ գետս այս ելանէ ի դաշտի մերում՝ յարևմտակոյսն յակնաց բազմաց ի յոտիցն Արագած կոչեցեալ լեռնէս մերմէ, որ և ժողովեալ աստի և անտի լինի գետ մեծ, խորագոյն, զարհուրատես, տղմուտ և պրտուապատ և ընթանայ դէպ ի հարաւակոյս փռսացեալ և վայրահիստ ճանապարհաւ, ուստի դաշտիս մերում[I] ոչ ինչ օգնէ բնաւին: Իսկ ի վայրակոյսն դաշտիս մերոյ ի հարաւակողմն են փոս և նիստ տեղիք, ընդ որովք անցանէ Սև ջուրս այս և զնացեալ խառնի ի մեծ գետն Երասխ կոչեցեալ և փոս տեղիքն այնոքիկ լեալք են անշէն, անբեր, ուրեք-ուրեք աղտաղտին և ուրեք ուրեք չոր:

---

[I] Բ. մերոյ

Ապա ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ երկրորդ Սէֆի խանն, որ ի վերդ յիշեցաւ, որ էր ազգաւ վրացի, որ նստի յԵրևան խան հրամանաւ շահ Սուլէյմանին, այս Սէֆի խանս ի Մեծամօրի կոչեցեալ գետոյս յայսմանէ զմեծ առու մի հանեալ և զջուր բերեալ արկանէ ի յաւացեալ յանշէն տեղիսն և ի վերայ առուին իւրոյ զփանի գեօղօրայս շինէ: Եւ մինչ խանս այս առնէ զայս գործ և կին սորին նախանձեալ և սա հանէ ի մեծ առուէն առն իւրոյ զառու մի յատուկ և տանի յայլ կողմն նոյն վայրացն և շինէ զոմանս գեօղօրայս ի վերայ առուին իւրոյ: Եւ գեօղօրայքն այնոքիկ, թէ՛ ի խանէն շինեցեալքն և թէ՛ ի կնոջէն միանգամայն և այնու ջրով ոռոգեցեալ տեղիքն կոչին անուամբ առուիցն հանեցելոց Սէֆիապատ և Խաթունարխ, մինչև ցայսօր:

Այլև խանս այս և կին սորին, մինչ հանեն զայս երկուս առուս և զջուր բերեն յայսոսիկ տեղիսս, զորս ասացաք, ապա ուխտեն և կանօնադրեն յերկրոջս առաջի ամենեցուն, թէ զայսոսիկ ջուրս, զորս մեք բերաք, վախմ և խէյրաթ արարաք մեզ և մերայնոցն յաւիտեան, զի ով ոք և իցէ, թէ յայսց գեօղօրէիցս և թէ յայլ ուստեքէ, թէ ի տանկաց և թէ ի հայոց, զոր ինչ սերմանեն ընդ բերեալք ջրովք մերովք, զմուլք, այսինքն՝ զտասանորդ մի տայցեն ումեք յայնց սերմանեցելոցն, զի մեք խէյրաթ արարաք զայս ջուրս, որ և է այսպէս մինչև ցայսօր, զի որպէս է սովորութիւն երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս, զոր ինչ սերմանեն ի հնգէն մէկ զհինգորդ տան յարքունիս, որ բահրայ ասի և ի տասնէն մէկ զտասանորդ տան մլքատեարն, որ մուլք ասի և յայս ասացեալ ջրոցս վերայ[I] սերմանացելոցն միայն զհնգէն մին տան և զմուլք ինչ ոչ տան ումեք ով ոք իցէ և զինչ և սերմանեսցէ:

Արդ զմեծ առուն իւր, զոր հանէ Սէֆի խանս այս ի Մեծամօր գետոյս յայսմանէ, Ալիպէքլու կոչեցեալ գեօղի հողովն անցուցեալ բերէ ի յաւացեալ տեղիսն, զի զմասն մի ի հողոյ գեղջն այնմիկ հատեալ առուն այն արկանէ ի ներքոյ ինքեան, և ինքն ընդ գլխովն տեղւոյն այնորիկ անցանէ և հատեալ տեղին այն յայն յառուէն միայն ոռոգանի և ոչ յայլուստ: Եւ տեղիս այս լինի ծոցամէջ (280բ) շրջապատեալ, որպէս զկղզի մի չորից կողմանց, քանզի ի յարևմտեան կուսէ զՄեծամօրի գետն ունի պարիսպ, ի հիւսիսոյ կուսէ զխանի հանեալ մեծ առուն ունի, ի յարևելեան կուսէն զանցս նոյնոյ առուին, որ զՔարասախ գետն մեր ընդ մէջ հատեալ անցանէ և ի հարաւակուսէ զնոյն Քարասախ գետն և զՄեծամօրի գետն ընդ իրեարս խառնեցեալք: Արդ ծոցս մէջ և կղզիացեալ տեղիս այս է լաւ, ջրաւէտ, բերրի և խոտաւէտ տեղի իմն, որ … բայց չալթուկ և բօստան միայն սերմանեն և ոչ այլ ինչ: Արդ տեղիս այս ըստ հողոյն է Ալիպէքլու գեղջն և ըստ ջրոյն է՝ Սէֆիապատ:

---

[I] Բ. իրաց

Ապա ի թուին մերոյ ՌճԿէ. (1718) և ի տանկաց թուին ՌճԼԱ. (1719) Աստուածատուր կաթուղիկոսն մեր գնէ զայս տեղիս իւրովք սահմանօքն ի յԱլիպէքլու գեօղականացն քսան և հինգ թումանի ի լինիլ խոտատու և արօտատեղի անասնոց Սրբոյ Աթոռոյս մանաւանդապէս, զորոյ զտանկերէն ղապալայն գտցես ցուցակաւն[308]: Եւ նոյն գեօղականքն ի վաճառելն զտեղիս զայս զերկուս գլխաւորս ի գեղջէն իւրեանց տանկերէն գրով և կնքով վէքիլ առնեն, զի ծախեսցեն նոքա զտեղիս զայս կաթուղիկոսին և նոյն գիրն ևս գի՛տ ցուցակաւն:

Եւ յետ այսպէս վաճառելոյն սոցա զտեղիս զայս Աստուածատուր կաթուղիկոսին յետ երկուց ամաց զղջացեալ նոյն գեօղականքն, գան յետս պահանջեն զտեղիս զայս ի կաթուղիկոսէն, և կաթուղիկոսն ևս ասէ բարի է, քսան և հինգ թուման ձեզ ետու և տասն և հինգ հազար դիան ևս ի դուռն խարճեցի, տո՛ւք ինձ զքսան և վեց թուման և կէս դրամն իմ և առէք զձեր հողն: Եւ գեղականացն ոչ ունիլով զդրամ, այսր և անդր անկանին և միջնորդս արկանեն առ կաթուղիկոսն, զի զողորմութիւն արարեալ բաշխեսցէ ի դրամէն, վերջապէս տասն և չորս թումանն բաշխէ կաթուղիկոսն նոցա և տասն և երկու թումանին գիր առնու ի բերանոց գեօղականացն տանկերէն վկայութեամբ շխիսլամին երկու մտօք, թէ այսքան օր վատայ ձեզ տասն և երկու թումանն բերէք և զձեր հողն առէք ձեզ և թէ ոչ բերիք՝ հողն Աթոռոյն է: Միւս ևս, թէ յինէն ի յառնուլն ձեր զհողս զայս, այլոց մի՛ ծախիցէք, այլ ի կամիլն ձեր ի ծախել, ինձ պարտիք ծախել և ոչ այլ ումեք: Եւ նոյն գեօղականքն ոչ կարացեալ ի տալ զտասն և երկու թումանն, մնացեալ է անդէն նոյն գիրն ի Սուրբ Աթոռս, զոր գտցես ցուցակաւն:

Եւ յետ այսր ամենայնի յետ տասն և վեց ամի յաւուրս Թէքիրտաղցի Աբրահամ կաթուղիկոսին մերոյ, նոյն գեղականքն, ճնշեցեալ ի պակասութեանց, գան առ Աբրահամ կաթուղիկոսն և ասեն, թէ վասն տասն և երկու թումանի հողն մեր մնաց առ ձեզ, որոյ գինն այսքան է, այժմ կամ ողորմութիւն արա մեզ և բան մի ևս տուր և կամ զհողն մեր դարձո առ մեզ: Եւ յասելն կաթուղիկոսին, թէ բարւոք է, բերէք զտասն և երկու թումանն և առէք զհողն ձեր և նոքա ոչ ունին ի տալ: Վասն որոյ ի բազմաց ստիպմանց և ի թախանձանաց նոցին բերեալ կաթուղիկոսն զտասն և երկու թուման ևս տայ վերստին նոցա և կրկին գնէ զտեղիս զայս ի նոցանէ, զորոյ զտանկերէն ղապալայն գտցես ցուցակաւն, որ գրի ի թիւն տանկաց ՌճԽԸ. (1148) և ի հայոց ՌճՁԵ. (1736)[309]:

Ապա յետ ժամանակաց, յորժամ խպառ բառնի թագաւորութիւնն Պարսից, և ինքնագլուխ տանիկք տիրեն երկրիս (281ա) և հնարիւք և կերպի-կերպի զաւթեն զգեօղօրայս երկրիս տանիկք մլքատէր լինին, գեղջս այսմիկ Ալիպէքլու կոչեցեալ տիրեն Բ. (2) տանիկք՝ Ղօչի խան և Աբկեար կոչեցեալ: Ապա այս ասացեալ տանիկքս

դաւ յարուցանեն ընդ Յակոբ կաթուղիկոսին Շամախեցւոյ, թէ Խաթունարխն, զոր ինչ ցանէք մեզ մուլք պարտիք տալ, զի Ալիպէքլուի հող է և Ալիպէքլուն մեր է: Եւ Յակոբ կաթուղիկոսն զաթոռակալն իւր զՂունկիանոս վարդապետն առաքէ ի շարն և վկայիւք հաստատէ, թէ տեղիս այս Աթոռոյս է և զմուլք երբէք ոչ եմք տուեալ ումեք: Եւ շխիսլամն գրէ ըստ վկայութեան վկայիցն զհունէք մի, և խանն Հիւսէին Ալի գրէ ի գլուխ հունէքին և կնքէ, որք վճռեն, թէ տեղիդ այդ Աթոռոյն է և այլոց չկայ զբան ինչ պահանջելոյ վասն տեղւոյդ այդմիկ: Եւ յառաջ, քան զայս յանցելումն ամի զհունէք մի ևս առնուն ի նոյն շխիսլամէն, որ վկայէ, թէ տեղին այն էջմիածնի է և մուլք չունի: Զայսոսիկ հունէքքս գտցես ցուցակօքն, որք գրին ի մեր թիւն ՌՄԺԱ. (1762) և ի ՌՄԺԲ. (1763) և ի տաճկաց ՌՃՀԵ. (1175) և ի ՌՃՀԶ. (1176):

Ի սոյն ամի վախճանի Յակոբ կաթուղիկոսն և մեր նուաստութիւնն յաջորդէ: Նոյնպէս և ի մերս ժամանակ նոյնք տաճիկքն արծարծեցին զնոյն չարութիւնն և մեք արզ արարաք նոյնոյ խանին և թալղայ առաք, որ գրէ ի գլուխ արզային մերոյ այնց տաճկացն, թէ ընդ ունայն է ձեր դաւին և մուլք չկայ տեղւոյն այնորիկ, որ գրի ի տաճկաց թիւն ՌՃՀԶ. (1176) և ի մերս ՌՄԺԲ. (1763): Նոյնպէս և զհունէք մի ի բերանոյ նոյն Ղօշի խանին առաք շխիսլամին ձեռօքն, թէ իմ դաւիս ընդ ունայն է ի նոյն թուղջն, զորս գտցես ցուցակօքն: Այնուհետև և զքանիս գրեանս ունիմք ի նոյն Ղօշի խանէն և Աբկարէն գրեցեալք առ մեզ աղաչանօք, որք ի տեղւոջն այնմիկ զտեղիս խնդրեն ցանելոյ, զորս գտցես ցուցակօքն: Զտեղիս զայս երբեմն խոտհարք արարեալ զխոտն հնձեմք և զանասունս արածեմք, երբեմն ևս զչալթուկ և զբօստան ևս ցանեմք:

Իսկ ի մերումս ժամանակի Երևանու Հիւսէին Ալի կոչեցեալ խանն զգեօղօրայսն, որք յիշեցան ի վերդ, որք ի վերայ այս ջրոցս շինեցան, էառ իւրն և զաւթեաց զմուլքսն և զգեօղսն, ընդ յորս զաւթեաց և զայս տեղս, որ մեր էր: Իսկ ի շատ ներհակլին մեր և ի յընդիմանալն ասելով, թէ մեր է, ոչ անսաց, այլ և մեք ասացաք, թէ որովհետև զմեր անասնոց արօտն առեր, առ և զանասունս մեր: Եւ այլ այսպիսիք զրոյցք շատք: Վերջապէս յեզր գեղջս մերոյ ի մէջ արևելեան և հարաւոյ մեծ խոտհարք գոյ, որ Խանըլ ղօռուղ ասի, փոխանակ մեր այս տեղւոյս ետ մեզ զմեծ բաժինն այն Ղօռուղ տեղւոյն, որ ահա Սրբոյ Աթոռոյս է և սորա խոտն քան զմեր տեղւոյն խոտն լաւ է և մերձաւորագոյն մեզ: Գի՛տ զայս գիրս, զոր խանն մեզ գրէ վասն այս ղօռուղիս տաճկերէն: Այժմ այս Ղօռուղ տեղիս ի ձեռս մեր է և մեր Իմամարխ կոչեցեալ տեղին ի ձեռս խանին: Յետոյ Աստուած գիտէ, որպէս լինիլն գրեցաք, զի գիտասջիք:

Դարձեալ և այս է հարկաւոր գիտելի, զի ի սոյն Ղօռուղ կոչեցեալ տեղւոյս եզրն, որ ի կողմն գեղջս մերոյ, քանի մի աւեր տանց տեղիք գոն, զի յառաջին ժամանակսն խանըլ որձ և էգ ձիանքն ի բերելն աստ ի յարօտս, ձիապանքն շինեալ են զքանի մի

ծածկարանս վասն ինճեանց (281բ) և ձիանց և խոտից, վասն որոյ անուն տեղւոյն կոչեցեալ է Իլխնի ճեանղի, այսինքն՝ ձիապանաց գեօղ, որ այժմ է աւեր և նշանք որմոցն միայն երևին ի տեղիս-տեղիս:

Ապա ի մերումս ժամանակի ճեօլանի անուն ազգ մի տաճիկ հրամանաւ Երևանու Հիւսէին Ալի խանին կամեցան աստ զգեօղ շինել ինճեանց և բնակիլ, որք և զգութանս իւրեանց արկեալ ի մէջ ղոռուղին և ի մէջ գեղջս մերոյ եղեալ՝ հողսն վար էին ստէպ ստէպ, որք գեղջս մերոյ են և վասն հեռի գոլոյն ի ջրոյ՝ անգործ մնային: Քանզի բաց ի ջրոյն մերմէ յայլ տեղեաց ոչ ունին ջուր: Ուստի տաճիկքն այնք, եթէ տեղակալեալ էին անդ ի ջրոյս մերոյ տարեալ զցանքս իւրեանց ջրելոց էին: Ապա զորքան զլխացաւութիւնս կրեալ հազիւ ճակեալ զքունս նոցա վարեցաք անտի և անհետ արարաք գրով վերոյ յիշեալ խանին, զորոյ զիրն գտցես ցուցակաւն և պահեսցես, զի հարկաւոր է: Եղև այս ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում:

(282ա) Այլև ունի Սուրբ Աթոռս ի Բաթրինջ գեօղն զխոտհարքս և զարօտատեղիս, զորոյ զորպէսն տե՛ս ի պատմութիւնս սոյնոյ գեօղիս Բաթրինջ կոչեցելոյ:

(282բ) Դարձեալ Քիլթափայ կոչեցեալ գեօղացիքն, որ է ի հարաւակոյսն գեղջս ի վայրն յետկոյս փոքրիկ բլրին, միշտ վէճ են ունեցեալ ընդ գեղջս մերոյ և Աթոռոյս վասն ջրոյ և վասն հողոյ և վասն արօտատեղեաց անասնոց, զի որովհետև ոչ ունին զջուր և ոչ զառու յատուկ, վասն որոյ երբեմն ի կամելն նոցա զսերմն սերմանել ի կողմունս յայնոսիկ, աթոռայինքս և գեօղականքս մեր ոչ են թողեալ զիտելով, զի ի սերմանելն ի հարկէ ի ջրոյն մերմէ տարեալ ոռոգանեն զսերմանեալսն, որպէս ասացաւ ի [ԺԸ.] գլուխն ի ճառս ջրոյն: Ապա ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին մերոյ և յիշխանութեանն [Ֆարզալի] խանին Երևանու, գնացեալ այս գեօղացիքս արզ առնեն խանին, թէ մեք ութսուն տարի է, որ յայս գեօղս կամք և միշտ սերմանեալ եմք զսերմն, այժմ էջմիածնեցիք ոչ թողուն սերմանելոյ: Եւ խանն զէշիկաղասի կոչեցեալ Նաճաֆալի բէկ ոմն կարգէ ի գալ և վերահասու լինիլ տեղւոյ որպիսութեան, որ եկեալ տեսանէ և սահմանք նոցին տեղեացն և մեր գեղջս յատկացուցանելով այսպէս կանոնդնէ. արևելակողմն Քիլթափային առու մի գոյ, ընդ որով աւելորդ ջուրք գեղջս մերոյ երթեալ դիմէ ի հարաւակողմն ի Թուրափի-հասար կոչեցեալ տեղեաւն և անտի ի միւս Նիւր Մուհամատի-հասար կոչեցեալ տեղն՝ անցեալ գնայ: Այս առուիս արևելեան կողմն հանդերձ Ճահրիպանլու կոչեցեալ տեղեաւն, արևմտեան կողմն ի վերոյ յիշեցեալ Թուրափի-հասարի ներքի անկիւնէն մինչև ի Նիւր Մուհամատ կոչեցեալ հասարի ներքի անկիւնն և հարաւակողմն ի վայր, մինչև ի [Յակրի՞] գեօլ կոչեցեալն, որ է խորացեալ և ծովակացեալ տեղի մի ի մէջ գետոյս մերոյ, այսքան տեղիքս տան էջմիածնեցւոց ի լինիլ արօտատեղի անասնոց սոցա: Իսկ արևմտակողմն վերոյ յիշեցեալ առուին, որ է նոյն Քիլթափայի տեղն իւր կողմամբքն և այնց վերոյ յիշեցեալ

երկուց հասարաց մնացեալ տեղիքն, մինչև վերոյ յիշեցեալ ծովակացեալ գեօլն տան քիլթափայեցւոց ի լինիլ միայն արօտատեղիք նոցին անասնոց և ոչ վարելոյ և սերմանելոյ: Այլև ի վերոյ կողմանէ Թուրապի-հասարին քսան գազաչափ լայնութեամբ ճանապարհ տայցեն քիլթափեցիքն էջմիածնեցւոց, զի անասունք նոցին ընդ յայն գնացեալք ի Յակրի գեօլն ջուր արբցեն և դարձցին: Այսու պայմանաւ զթուղթ մի շինեն և զայս ամենայն գրեն ի նմա և կնքեն բազում տանիկք և տարեալ առ շխիսլամն և նա ևս, որպէս զհունէք գրէ և կնքէ՝ վճռելով, թէ ով ոք այս պայմանիս վերայ ոչ մնացէ՝ յիսուն թուման դիւանին պարտական լիցի: Լինի այս ի ՌՃԺԳ. (1704) թուոջն տանկաց, զի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Քիլթափայ գեօղս այս առաք մեք իւրովք սահմանօքն ի ՌՄԺԸ. (1769) թուոջն մերում, զորոյ զղապալայսն զի՛տ ցուցակօքն, զորպէսն տե՛ս ի ճառս Ֆռանկանոցին:

## (283ա) **ԳԼՈՒԽ ԺԶ.**

### ՅԱՂԱԳՍ, ԹԷ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՍ ԶՈՐՔԱ՞Ն ՈՒՆԻ ԶԱՅԳԻՍ, ԶՊԱՐՏԷԶՍ, ԶԱՅԳԵՏԵՂՍ ԵՒ ԶԱՅԼՍ ԱՅՍՊԻՍԻՍ: ԵՒ Ո՞ՒՐ ԵՒ ՈՐՊԷ՞Ս, ՏԵ՛Ս Ի ՍՏՈՐԵՒԴ

Նախապէս ի կից գեօղս մեր ունի զայգի մի մեծ, որ կոչի Ղռի այգի, որ է հանդէպ սրբոյն Հռիփսիմէի վանիցն ի հիւսիսակոյս՝ լայնարձակ և հոչակեցեալ, պատեցեալ պարսպով: Այգիս այս ըստ սկզբանն և ըստ մեծի մասին ի բնէ անտի Սրբոյ Աթոռոյս է լեալ, որքան առ միջասահման տեղիքն: Յետոյ Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի ի սահմանակից տեղեացն առեալ մեծացուցանէ և պարսպէ, զի զորն դրամով գնէ և զորն տեարքն յիշատակ տան Սրբոյ Աթոռոյս: Արդ ի վերի կողմն դէպ յարևմտակոյս, մէջ տէր Նահապետի այգւոյն և մեր բնիկ այգւոյն, յորում խարապ հնձան ևս գոյ, զայն բաժինն Ռուստամի որդի խօճա Յովանէս կոչեցեալ ոմն յիշատակ տուեալ է Սրբոյ Աթոռոյս ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ: Եւ ինքն՝ նոյն խօճա Յովանէսն, զայն այգւոյ երեք տախտակն յայս գեօղացի Աստուածատուրի որդի Սահակէն է առեալ հինգ հազար դիանի ի տաճկաց թուին ՌՂԲ. (1681) և զմնացեալ բաժինն ի Մահմատ զաման և ի Ջուանմարտ ղուլի կոչեցեալ տաճկացն երեք թումանի ի տաճկաց թուին ՌՂԷ. (1685), որ և ի տալն զբոլորն Սրբոյ Աթոռոյս, զայս երկուս ղապալայս ևս մեզ տայ, որք գոն աճա ի Սուրբ Աթոռոջս, զորս գացես յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք են տաճկերէն, յորս գրին սահմանք երկուց բաժնեաց ասացելոցս: Իսկ ի վայրկոյս սմին՝ դէպ ի Սուրբ Հռիփսիմէն, որ դրան ի ներքին կողմն անկանի Գորենց այգի կոչի: Քանզի Իւզբաշի կոչեցեալ ... մէկ այգի է ունեցեալ, որ կոչի Նորք՝ մօտ Ղարամենց այգւոյն, ի մեռանիլ այս Իւզբաշուս, որովհետև և ինքն Նահապետ կաթուղիկոսի չրաղն[310] է լեալ, Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի տասն թուման իբր ողորմութիւն տուեալ նորա որդւոցն և առեալ է զայն վերի ջրաղացն, որ Իւզբաշոնց ասի, զորմէ յիւրում տեղւոջն ասասցուք և զսոյն այգիս ի նոցանէ: Յետոյ զսոյն Նորք կոչեցեալ այգիս տայ Գորենց Միրզաջանին և Դօլումին և ի նոցանէ առնու զայդ վերոյ յիշեցեալ այգիդ և խառնէ ի Ղռի այգին մեր վասն կից լինելոյն այգւոյս մերոյ, որ կոչի Գորենց փայ: Այլև յայս գեօղացի Գտակակարենց Աւետիքի որդիք Տիրատուրն, Եղիազարն և Միքայէլն մէկ կտոր այգի ծախեն Սրբոյ Աթոռոյս հինգ հազար

դիանի ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսի Ջուղայեցւոյ ի ՌՃԿԱ. (1712) թուոջն մերում, զորոյ զղապալայն հայերէն գի՛տ: Եւ զայս կտորս ևս խառնեն ի Ղոի այգին մեր:

(283բ) Դարձեալ ի հիւսիսակոյսն Ղոի այգւոյն ի վերի կողմն, որ տէր Նահապետի այգի կոչի: Այս տէր Նահապետս գոլով այս գեօղացի և որդի Աբէլի ունեցեալ է զայգիս զայս: Ապա ի ՌՃՁԷ. (1738) թուոջն մերում և ի ՌՃԾԱ. (1151) թիւն տաճկաց զկէս այգւոյս այսմիկ ծախէ սոյն գեղացի տանուտէր Սօղօմոնին ութ թումանի: Յետոյ Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի ի տէր Նահապետէն առնու և զմնացեալ կէս այգւոյն ութ թումանի ի ՌՃՂ. (1741) թուին մերոյ և տաճկաց ՌՃԾԴ. (1154) թուին: Ապա և ի սոյն թուոջս առնու ի յիշեալ Սողոմանէն զկէսն ևս ութ թումանի: Ընդ նմին և զտէր Նահապետի տուեալ ղապալայն առնու: Այսպէս առեալ զբոլորն այսր այգւոյս խառնէ ընդ բնիկ Ղոի այգւոյն մերոյ: Գի՛տ զայս երիս ղապալայսս յերեսսն գրեցեալ ցուցակօքն: Զերկու ղապալայսն տէր Նահապետն տայ մեզ, մէկն հայերեն և մին տաճկերէն և զմին տաճկերէնն ի Սօղօմանէն առնումք[I]:

(284բ) **Բ.** Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի յայս գեօղս երկուս զայգիս մեծամեծ ևս կից իրերաց ի հարաւակողմն Ղոի այգւոյն նոյնպէս պարսպաւ պատեցեալք, զորս աստի և անտի առեալ լուսահոգի կաթուղիկոսացն, զորն դրամով և զորն յիշատակ, յետոյ ի մի խառնեալ զերկուս այգիս շինեն, որք հասարակապէս կոչին Մանկասարենց այգի: Քանզի ի գեօղս յայս Մանկասար անուն մարդ մի է լեալ, որոյ ազգ և ընտանիքն յանուն սորին մականուանեցեալք Մանկասարենց կոչին, որոյ մեծ այգի մի է լեալ, որ է այս, զորմէ ճառեմս և սորին որդիք և ազգն զայս այգիս ի յինքեանս բաժանեն յետոյ: Ապա նախապէս այս Մանկասարի որդի Մէհրումն գոլով ինքն անորդի ի ժամ վախճանին իւրոյ՝ զիւր բաժին չորս տախտակ այգին, զոր մանաւանդ ինքն աշխատութեամբ ստացեալ տայ յիշատակ Սրբոյ Աթոռոյս ի ժամանակս Եղիազար կաթուղիկոսին ի ՌՃԼ. (1681) թուոջն մերում, որոյ յիշատակագիրն գոյ յԱթոռոջս հայերէն գրեցեալ: Յետոյ, յետ տասն և մէկ ամաց, յազգականաց նոյնոյ Մանկասարին Միրիջանի որդի Յարութիւնն, զիւր բաժին յայգւոյն մէկ տախտակ և կէսն ծախէ Նահապետ կաթուղիկոսին հինգ հազար դիանի ի ՌՃԽԱ. (1692) թուոջն մերում և ի ՌՃԴ. (1104) թուին տաճկաց, որոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն: Եւ յառաջ, քան զայս ի ՌԴԲ. (1681) թուին տաճկաց սոյն Մերիջանի որդի Յարութիւնս և իւր մայր Մարիամն յայգւոյս յայսմանէ զվեց տախտակ ևս ծախեալ են տաճկի յումեմն, որ Շահրիմանլու բայատ Ղունճալի կոչի երկու թումանի: Իսկ Նահապետ կաթուղիկոսն ի յառնույն զվերոյ յիշեալ տախտակ և կէսն, առնու և ի տաճկէս յայսմանէ զայս վեց տախտակս ... և

[I] Զգրված՝ 284ա

նորին տանկերէն ղապալայի գլխոյն կրկին ղապալայ գրել տայ ի ՌԾԴ. (1104) թուին տանկաց և ի ՌՃԽԱ. (1692) թուոյն մերում, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ ի սոյն թուոյս Սրբոյ Աթոռոյս աթոռակալ Աստապատցի Մինաս վարդապետն ի սոյն տեղւոյս առնու զայգի մի իւր հնձանովն ի Բէկումի որդի Մուրատէն, Անտօնի դուստր Մարգարտէն և նոյն յիշեալ Միրիջանի որդի Սահակէն երեք թումանի և երկու հազար դիանի և տայ յիշատակ Սրբոյ Աթոռոյս, զորոյ զտանկերէն ղապալայն գտցես ցուցակաւն: Զայս վերոյ յիշեալ չորս բաժին այգիս ի մի խառնեալ միաւորեն և զերկու այգի շինեն յատկացեալ պարսպօք, որք կոչին Մանկասարենց[I]:

(285բ) Գ. Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի յայս մեր գեօղս զմեծ այգի մի ևս ի հիւսիսակոյս ի գլուխ այգեաց գեօղիս նոյնպէս պարսպաւ պատեցեալ, որ կոչի Վերի այգի և Շահի ղլի այգի: Նոյնպէս և զսա ստէպ և անտի առեալ լուսահոգի կաթուղիկոսքն ի մի խառնեալ միաւորեն: Քանզի այգւոյս այսմիկ ի միջի մեծ միջնակէն ի վայր ի հարաւակողմն լեալ է ումեմն տանկի Մէհրապ անուն կոչեցելոյ, և Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի ի մտաւորելն յանուկ զայս այգիս ի տանկէն յայնմանէ խորհուրդ դնէ ընդ երկուց տանկաց, զի իւրեանք յանուն իւրեանց գնեսցեն ի Մէհրապէն, յետոյ իւրեան վաճառեսցեն: Եւ այս երկուս տանկաց անուանքն են Մուհամատ և Ապտալ, որք են լեալք յերկրոյս ի թագաւորական գործս և թագաւորական ծառայք ի մեծ պատիւ և ի յիշխանութիւնս և Աղէքսանդր կաթուղիկոսին բարեկամք և սիրելիք: Ապա, ըստ խնդրոյ և ըստ կամաց սորին, յիշեալ թագաւորական ծառայք Մուհամատ և Ապտալն գնեն զայս այգիս ի Մէհրապ տանկէն տասն և հինգ թումանի և իւրեանց անուամբ գրեցուցանեն զտանկերէն ղապալայն: Յետոյ ի գլուխ նոյնոյ ղապալային գրեն կրկին ղապալայ և կնքեն, թէ զայս այգիս, որ Աղէքսանդր կաթուղիկոսի բանիւն մեք գնեցաք, զոր ինչ որ տուեալ և խարճեալ էաք մին թամամ յիշեալ կաթուղիկոսի վէքիլ Մօսէս վարդապետի ձեռօքն առաք և զայգին տուաք կաթուղիկոսին: Այսուհետև այգին խալիֆային է, մեզ իլախայ[311] չկայ: Այս այգւոյս սահմանք գրին Միրանի այգին և Եսայու եօնջալղն, Ղևոնդի այգին և Սահակի և Մկրտումի եօնջալղն, էշակչի Եաղուպի այգին, Քէօռ Վարդանի և Ղօչղափանի այգիքն: Այս ամենայն լինի ի ՌԾԻԴ. (1124) թուոյն տանկաց և ի մեր ՌՃԿ. (1711) թուոյն: Զայս ղապալայս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն: Եւ վասն այսորիկ կոչիւր յառաջ այգիս այս Շահի-ղլի այգի, յետոյ ի վտանգաւորութենէ անուանն կոչեցաւ Վերի այգի:

Ապա ի յանունլն յիշեալ կաթուղիկոսին զայս բաժին այգիս ի յիշեալ տանկացն առնու նաև ի յէշակչի Եաղուբէն, ի Քեօռ Վարդանէն և ի Միրանէն, որ ըստ ոմանց Մանուչար կոչիւր, զայգիսն նոցա և խառնեալ ի մի շինէ զմի այգի՝ պատեցեալ պարս-

[I] Ձգրված՝ 285ա

պաւ: Եւ յետոյ ի ժամանակս օսմանցւոց ի կողմն ղռին այգուտեղ[I] մի կայր անշէն, որ էր տէր Մկրտչի որդի Սահակին, զայն տեղին ևս էառ Սուրբ Աթոռս ձեռամբ վէհիլ Ալէֆխանին յիսուն դուռուշի: Եւ Մեսրոպ վարդապետն, որ էր գործակալ և վէհիլ ի վերայ այսպիսեաց գործոց, նա ետ տնկել որթ և այգի շինել և խառնել ի սոյն այգիս ի ՌՃՀԸ. (1729) թուին մերոյ և տաճկաց ի ՌՃԽԱ. (1141) թուին, որոյ երկու ղապալայ գոն, մինն հայերէն և մինն տաճկերէն, զոր գտցես ցուցակօքն:

Իսկ արտաքոյ պարսպին սոյն այգւոյ ի հարաւակողմն և կից սմին չորս տախտակ այգին էր Յօսէփենցն և կից Յօսէփենց այգւոյ չորս տախտակ այգին ևս Շուշանենց Մկրտումին էր, յորոց ի վախճանելն Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի էառ ի տեղի հոգեբաժնի և արար Սրբոյ Աթոռոյս, որպէս է մինչև ցայսօր: Եւ կից սոյնոյ Շուշանենց չորս տախտակ այգւոյ ի հարաւակողմն էր Ղևոնդենց այգին, որ է եօթն տախտակ և երկու բաշ և տասն և երկու չուան, որոյ սահմանքն հիւսիսակողմն մեր Շուշանենց այգին, արևելակողմն Լօռենց Ներսիսի այգին, հարաւակողմն է դարբին Մկրտումի այ(286ա)գին և արևմտակողմն ճանապարհն և վարելահող: Զայս այգիս յետոյ ի մեր ՌՄԺԵ. (1766) թուոջն և տաճկի ՌՃՀԹ. (1179) թուոջն մեք առաք ի Ղևոնդենց, Ղևոնդի որդիք Հերումէն և Յաղամէն՝ յանուն Սրբոյ Աթոռոյս: Եւ փոխանակն ետուք մեր ձիթապան մահտեսի Գալուստի կտոր այգին, Ատի բէկի փայ այգին, որոյ զփոխն ևս ետուք Ատի բէկին լուսարար Եղիազար վարդապետի այգին, այլև ընդ Գալուստի և Ատի բէկի այգեացն ետուք նա և նոյն Հերումին քսան թուման դրամ, ՃԾ. (150) մշակ, Բ. (2) օր գութան և Գ. (3) խալաթ: Զայս այնու մտօք առաք, զի խառնեսցուք ընդ այլոց երկուց բաժնիցն ի Վերի այգին մեր, որոյ երկու ղապալայ գոյ, մին հայերէն ի ՌՄԺԵ. (1766) թուոջն գրեցեալ և միւսն տաճկերէն ի ՌՃՀԹ. (1179) թուոջն նոցին գրեցեալ, զորս գտցես ցուցակօքն:

(286բ) Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի յայս գեօղս մեր զայգի մի մէջ Ղռի այգւոյն և Վերի այգւոյն մերոյ ի մէջ այգեաց գեղջս, որ էր այս գեօղացի Իսրայիլի որդի դալլաք խանքաքինն, որոյ սահմանքն են՝ մի կողմն ղռն[II], մի կողմն Թարխանի այգին, մի կողմն քարտաշ տէր Յարութիւնի այգին և մի կողմն ...: Այս Խանքաքիս յազգէն զաղշիկ մի յառաջմէ տաճկացուցանեն յերևան և առնուն զնա ի կին: Յետոյ տաճկացեալ կինն այն զիր մի տայ իւրոյ ազգ ընտանեացն տաճկերէն, թէ իմ բաժին այգիս ես բաշխեցի իմ ընտանեացն, որովհետև ի մէջ պարսից վատ սովորութիւն մի գոյ, որ տաճկացեալն ընչից դաւ առնէ ընդ ազգականաց իւրոց: Վասն որոյ այս կինս, խնայելով յազգականս իւր, զայս զիրս տայ իւրոց ազգականացն, զի մի յետոյ յիւրայնոցն

[I] Բ. այգւոյ տեղ
[II] Բ. > մի կողմն ղռն

դաւ յարուցանիցեն: Ապա յետ բազմաց ամաց թոռն մի ի տանկացեալ կնոջէն և տանիկ Սայիդ անուն դաւ յարոյց ընդ Խանբաբին յիշեցելոյ, որ ունէր զայգիս զայս ոչ միայն վասն այգւոյս այսորիկ, այլև տան և այլոց իրաց, որ և արզ արարեալ խանին, և խանն ի դատարանն[I] իւրեանց գնալ հրամայեաց: Վերջապէս թիւր շարն նոցին հասոյց զայգիս այս Սայիդ կոչեցեալ տանկին: Եւ Սայիդն այն էառ զայգին, նաև զայն գիրն ևս, զոր տանկացեալ հանիկն իւր տուեալ էր ազգականաց իւրոց: Այլև յիշեցեալ Խանբաբն ինն տարով առաջ յայգւոյս յայսմանէ զկտոր մի ծախեալ էր Անանիայի որդի Մատթէոսին երկու թումանի տանկերէն դապալայիւ, որ գրի ի տանկաց թուին ՌՃՀԱ. (1757) և Սայիդ տանիկն այն և զայն կտորն ևս յինքն գրաւեաց և էառ զայս դապալայս ի Մատթէոսէն, որ և լեալ տէր բոլոր այգւոյն, եկեր զամ մի: Եղև այս ի մեր ժամանակս:

Ապա և մեք չկամելով, զի ոտք տանկի մի մտցէ ի գեօղս մեր, առաք զայս այգիս ի յայս Սէյիդ կոչեցեալ տանկէս քառասուն թումանի տանկերէն և հաստատուն դապալայով, որ ընդամենն գնաց խարճ յիսուն թուման: Եւ յառնուլն մեր զբոլոր այգին, առաք նաև զՄատթէոսի դապալայն ի տանկէն: Առաք նաև զայն հիւնէթի երեսն, զոր շխիսլամն զայգին տանկին հասուցանելով տուեալ էր նմա տանկերէն: Առաք նաև ի տանկէն զղավզ մի տանկերէն, թէ քառասուն թումանն անպակաս առի և զայգին ծախեցի խալիֆային, որ անա ունի Սուրբ Աթոռս զայս այգիս և զդապալայսն թէ՛ մեր առեալն ի տանկէն և թէ՛ զՄատթէոսի դապալայն, նաև զղավզի գիրն[312] և զհիպալամայի սուրէթն, զորս յիշեցաք, գտցես յերեսսն իւրեանց գրեցեալ ցուցակօքն: Այս եղև ի մեր թուոջն ՌՄԺԵ. (1766) և տանկաց ՌՃՁ. (1180):

Այս ևս գրելի է ի յօրինակ ապագայից ի մեր գեօղս Կակոս անուն մարդ մի զայգին իւր ծախեալ էր գեօղիս տառուղայ և խանի նօքար Սարու Մահմատ կոչեցեալ տանկին տանկերէն հաստատուն դապալայիւ ի մէնջ ծածուկ, յետոյ ի գիտելն մեր նեղելով զծախօղն և զառնօղն ևս, յետս առաք զայգին ի տանկէն և դարձուցաք ի Կակոսն և զտանիկն ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում:

(287ա) Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի յայս գեօղս զայգի մի, զոր Սուրբ Հռիփսիմէ վանքն ուտէ, որ է կից մեր Ղռի այգւոյն յարևելակողմն:

Դարձեալ ունի Սուրբ Աթոռս զայգի մի յայս գեօղս, զոր Սուրբ Շողակաթի վանքն ուտէ, զոր մեք տուաք:

(287բ) Դարձեալ ունի Սուրբ Աթոռս զայգի մի յայս գեօղս, զոր Սուրբ Գայիանեայ վանքն ուտէ, որ է կից նոյնոյ վանքին:

---

[I] Բ. դատաւորն

Դարձեալ այս գեղացի տէր Եսային և Բօզտաղենց Գալուստի որդի Մարտիրոսն ի Ջաման Միրզայ Ալի և յՈւղուր խան կոչեցելոյ տաճկաց զայգի մի առնուն ի գեօղս յայս ութ թումանի, յետոյ Մարտիրոսն զիւր բաժին չորս տախտակն ծախէ Սրբոյ Աթոռոյս միաբան Ներսէս վարդապետին երեք թումանի[313], և Ներսէս վարդապետն ևս վախմ տայ սրբոյն Գայիանեայ վանքին հայերէն գրով ի ՌՃՂԸ. (1749) թուին մերում[314], որոյ կողմանքն են Գինոսենց և Փնճալոնց այգիքն, տէր Եսայու փայն և ճանապարհն, որոյ յաղագս չորս թուղթ գոյ, զոր գտցես ցուցակօքն:

Դարձեալ ունի Սուրբ Աթոռս յայս գեօղս մեծ իւրեան զերկուս ծառոտ պարտէզս կից գերեզմանատան մերոյ, մին ի յարևելակողմն, զորս մեք շինեցաք և միւսն յարև-մտակողմն:

Դարձեալ ունեցեալ է Սուրբ Աթոռս ի յայս գեօղս զքանիս այգի ևս, որք այժմ են սերմանելի տեղիք և արտք, որք են ի մէջ սրբոյն Հռիփսիմէի և Մանկասարենց այգւոյն մերոյ, որք են այսոքիկ:

Էլիպէկի որդի Յարութիւնն իւրայնովքն զայգին իւրեանց տայ յիշատակ սրբոյն Գայիանեայ վասն մեծ եղբօրն իւրոյ հանգուցելոյ հոգւոյն ի ՌՃԼԸ. (1689) թուին մերոյ, որոյ սահմանքն գրին՝ արևելեան կողմն տէր Ստեփաննոսի այգին, արևմտեան կողմն մելիք Յովանիսի վարելահողն, հարաւակողմն նոյն Յարութիւնի և Մուրատենց Գալուստի եօնճատեղն և հիւսակողմն[I] Սուրբ Հռիփսիմէն և Երևանու ճանապարհն: Գի՛տ զայս վախուպլամայս, որ հայերէն է:

Դարձեալ Նահապետ կաթուղիկոսն առնու զայգին վերոյ յիշեալ տէր Ստեփան-նոսի այգին յիւր յորդւոց Յովհաննիսէն և Զաքարիայէն ութն թումանով, որոյ սահ-մանքն են՝ վերոյ յիշեալ Սարգսի այգին, խօճա Ներսիսի այգին, խօ[ճա] Մխիթարի այգին և Երևանու ճանապարհն ի թուին տաճկաց ՌՃէ. (1695), զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ Նահապետ կաթուղիկոսն առնու զվերոյ յիշեալ Մխիթարի այգին, որ է Կիրակոսի որդի իճն թումանի, որոյ սահմանքն են՝ ի յերեք կողմունսն վերոյ յիշեցելոց Յարութիւնի, Ներսեսի և Զաքարիայի այգիքն և մէկ կողմն եօնչատեղ ի թուին տաճ-կաց ի ՌՃԴ. (1692): Գի՛տ ղապալայն ցուցակաւն:

Դարձեալ Նահապետ կաթուղիկոսն առնու զայգի մի ի Բօզտաղենց տէր Սարգսի որդի տէր Խաչատուրէն հինգ թումանով, որոյ սահմանքն են վերոյ յիշեալ Սարգսի այգին, Մատթէոսի այգին, Խաչիկի այգին և Երևանու ճանապարհն ի տաճկաց թուին ՌՃե. (1693): Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

---

[I] Բ. հիւսիսակողմն

(288ա) Դարձեալ վերոյ յիշեալ Մատթէոսի այգին իւր կին Ոսկէհատն վախմ առնէ Սրբոյ Աթոռոյս վասն հոգւոյ առն իւրոյ ի ՌՃԿԲ. (1713) թուին մերոյ, զորոյ զվախմլամայն գի՛տ հայերէն է:

Դարձեալ Կիրակոսի որդի Դաւիթն զայգի մի վախմ տայ Սրբոյ Աթոռոյս, որոյ սահմանքն են՝ վերոյ յիշեալ մեր այգիքն, որք են՝ Բօզտաղենցն, Մխիթարինն, Մատթէոսինն: Եւ մի կողմն Գինոսի այգին ի տանկաց թուին ՌՃԻԴ. (1712): Գի՛տ զվախմլամայն ցուցակաւն:

Դարձեալ Դաւուտի որդի Յարութիւնն զայգի մի առնու ի նալբանտ Մարտիրոսի որդի Միրզախանէն երկու թուման և Բ. (2) հազար դիանի և վախմ տայ Սրբոյ Աթոռոյս, որոյ սահմանքն են՝ վերոյ յիշեալ Բօզտաղենց Գինոսի և Յարութիւնի այգիքն մեր, ցուցակաւն գի՛տ զվախմլամայն տանկերէն:

Դարձեալ Սահրատի որդի Խաչատուրն և իւր որդիք Նաւասարդն և Գորէսն զիւրեանց զայգի մի վախմ տան Սրբոյ Աթոռոյս, որոյ սահմանքն են մեր վերոյ յիշեալ այգիքն, որք են Մխիթարի, Դաւթի, Գինոսի և Մանկասարենց այգիքն: Գի՛տ զվախուպնամայն հայերէն, որ գրի ի ՌՃԿԲ. (1713) թուոջն մերում:

Վերոյ յիշեցեալ այգետեղիքդ ամենայն են մեր Մանկասարենց այգւոյ և Երևանու ճանապարհի և Սուրբ Հռիփսիմէի միջոցքն, զորս արտ արարեալ ցանեմք, որք հասարակօրէն Մխիթարենց այգիք կոչին, զորմէ ի ԺԵ. (15) գլուխն (որ վասն արտորէիցն Սրբոյ Աթոռոյս) ասացաւ:

Դարձեալ Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն յայս գեօղս զայգի մի առնու կէս հնձանովն քսան և երեք հազար դիանի ի յայս գեղացի Անանի որդի Մկրտումէն, որոյ սահմանքն են՝ մէկ կողմն քուչէն ... , մէկ կողմն դուզն, մի կողմն Գալուստի այգին և մէկ կողմն գերեզմանատունն ի տանկաց թուին ՌՃԻԵ. (1713): Ջտանկերէն գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ ի յայս գեօղումս մէլիք Յովանէս ոմն ծախէ Սրբոյ Աթոռոյս զմէկ պարտէզ մի ձեռամբ Սրբոյ Աթոռոյս վէքիլ Սարգսին հինգ հազար դիանի, որոյ սահմանքն են՝ մեր վախմ բախչայն, Մխիթարի բախչայն և Գէորգի բախչայն ի ՌՀԹ. (1668) թուին տանկաց: Գի՛տ զտանկերէն ղապալայն ցուցակաւն[I]:

(289բ) Դարձեալ Սուրբ Աթոռս ունի ի գեօղն յՕշական զայգի մի մեծ չէն, որ կոչի Մեծ և Ներքի այգի, որոյ զբուն և զառաջին մասն Մելքիսեթէկ կաթուղիկոսն է առեալ ութսուն ղուռուշով ի Հաճիղարացի Ալի ղուլի տանկէ միոյ, որոյ սահմանքն գրի մէկ կողմն Քրիստոստուրի այգին, Գեօզալի այգին, Փանոսի այգին և Տրիզալու այգին ի տանկաց թուին ՌԽ. (1596): Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

---

[I] Զգրված՝ 288բ-289ա

Ապա յետոյ Փիլիպպոս կաթուղիկոսն առնու զայգի մի ևս կից սոյնոյ այգւոյս ի յուշականցի Մելիտոնի որդի Ազիզէն, որոյ սահմանքն գրի Գրիգորի այգին, Մելքոնի խարապայ տեղն և մեծ առուն: Եւ զայս այգիս ևս խառնէ ընդ վերոյ յիշեալ այգւոյն և միաւորէ և այս այգւոյս թէպէտ յատուկ ղապալայ ոչ գոյր, սակայն մէկ մեծ սօհլամայի գիր գոյ, որ գրի ի թուոջն տաճկաց ՌԾԶ. (1646): Քանզի յառաջ, քան զառնուլն Փիլիպպոս կաթուղիկոսին զայգիս զայս յերկրոջս լեալ է մեծ տաճիկ ոմն Միրզա Մուհամատ Մէհտի կոչեցեալ, որ լեալ է վեզիր և գլխաւոր դիւանագիր արքունական: Այս վեզիրս բռնութեամբ յափշտակէ զայս այգիս ի վերոյ յիշեալ Ազիզէն և պարսպեալ զարդարէ և ուտէ ի ժամանակս ինչ:

Ապա ի գալ սուլթան Մուրատին յերկիրս յայս և ի տիրելն այս կողմանցս, զորդի Ամիրկունէ խանին Թահմազ ղուլի խանն և զայլս մեծամեծսն պարսից յաքսորէ ի յԸստամպօլ, որպէս ի տեղւոջն ասացաւ, զայս Մէհտի կոչեցեալ վէզիրս ևս ընդ նոսա առաքէ ի Պօլիս: Եւ մինչ այսպէս անհետացեալ կորնչի տաճիկս այս, վերոյ յիշեալ Ազիզն զաւթէ զայգիս իւր շարով և ծախէ Փիլիպպոս կաթուղիկոսին: Եւ յետ ինչ ամաց Հաֆզքամրան տաճիկ ոմն ի յընտանեաց յիշեալ վեզրին վէքիլ կարգեցեալ, գայ դաւ առնէ ընդ Փիլիպպոս կաթուղիկոսին վասն այգւոյս այսորիկ, թէ վազրին է լեալ, մեզ պարտի հասանիլ: Եւ Փիլիպպոս կաթուղիկոսն կոչեալ զԱզիզն և զայլ յուշականցիսն և զիւր վէքիլ Թումանն[I] ընդ վերոյ յիշեալ տաճկին առաքէ ի դատարանն նոցին, որք գնացեալ հաստատեն զայգին Ազիզինն գոլ և վէզիրն բռնութեամբ զաւթեալ: Ապա թէ ազգականաց վազրին, թէ նոցին վէքիլ տաճկին ութ թուման, երկու հազար դիան տան և մէկ սօհլամայ գիր մի առնուն տաճկերէն, որ գրի ի թուին տաճկաց ՌԾԶ. (1646), զոր գտցես ցուցակաւն:

(290ա) Ապա յետոյ ի տաճկաց թուին ՌՃԽԸ. (1148) և ի մեր ՌՃՁԴ. (1735) Թրակացի Աբրահամ կաթուղիկոսն կից սոյն այգւոյս առնու զայգի մի ի կարբեցի Անտոնի որդի Դաւութէն, Խեչումէն և Յօսէփէն ութ թումանի և խառնէ ընդ յայս այգիս, որոյ սահմանքն գրին՝ մէկ կողմն քուչէն, մէկ կողմն Սրբոյ Աթոռոյս այգին, մէկ կողմն Վարդանի այգին և մէկ կողմն ձորն: Այսպէս յետ և յառաջ ի շրջագայիցն զորն դրամով և զորն յիշատակ առեալ են երանելիքն մեր և միացուցեալ, զորս և պարսպեալ իսկ, որ կոչի Մեծ այգի, որոյ սահմանքն են այժմ ...:

(290բ) Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի գեօղս յայս յՕշական զմեծ այգի մի ևս ի հիւսիսակողմն գեղջն, յետ կոյս Դիտի բլուր կոչեցելոյն ի յեզր ձորոյն, յորում անցանէ գետն Քարձաղ, որ կոչի Արեգունի և Վերի այգի: Այգիս այս, ըստ մասին նախապէս վախմ և յիշատակ տան յօշականցիք Սրբոյ Աթոռոյս: Յետոյ ի ՌՂէ. (1685) թուին

---

I Բ. Թումասն

տանկաց նոյն գեօղացի Մուրատի որդի Բաքամն կից սոյնոյ այգւոյս զայգի մի ծախէ Սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ գործակալ Վարդան վարդապետին երեք թումանի, որոյ սահմանքն գրին մէկ կողմն գեօղն, մէկ կողմն Գրիգորի այգին, մէկ կողմն մեր յիշեալ այգին և մէկ կողմն տանկաց գեօտեր, որոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն, զոր և խառնեն ընդ վերոյ գրեալ Արեգունի այգւոյն: Այլև ի ՌՃ. (1651) թուոջն մերում [Փիլիպպոս] կաթողիկոսն ևս զայգի մի կից սմին այգւոյս էառ ի յԱլիար կոչեցեալ տանկէն և խառնեաց ի սոյն այգիս: Այսպէս յետ և յառաջ առեալ ի շրջագայիցն խառնեն ընդ յայս յայգիս և պարսպեն, իսկ, որպէս սասցաք, որոյ սահմանքն են այժմ ... որք ի ներկայումս ևս շէն են և ընդ ձեռամբ մերով վերոյ յիշեցեալ երկու մեծ այգիքդ, որք ի յՕշական:

Դարձեալ կից սոյնոյ այգւոյս ի հիւսիսակոյսն զայգի մի Սուրբ Սարգսի վանքն ունի, որ է այժմ շէն և ընդ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս, զի Սուրբ Սարգսի վանքն ամայի է ընդ այլոցն:

(291ա) **Ի ներքոյ գրեցեալքդ աւեր են ընդ գեօղիս այգեացն միանգամայն**

Դարձեալ ի սոյն գեօղս զայգի մի ևս ունի Սուրբ Աթոռս, զոր մօղնեցի Հայրապետի որդի վարպետ Ալէքսանն է տուեալ վախմ սրբոյ Աթոռոյս, որոյ կողմունքն են՝ Աւետսի այգին, Սահակի այգին, Խաչատուրի այգին ...: Այս Ալէքսանս Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին գրագիր է լեալ, առ ի լինիլ երախտահատոյց տուեալ է զայս այգիս Աթոռոյս, որոյ աղագաւ երկու վախմնամայք գոն, մին հայերէն, որ գրի ի մեր թուին ՌՃԽ. (1691) և ի հայրապետութեանն Եղիազար կաթուղիկոսին և մին տանկերէն ի նոյն ժամանակին ի տանկաց թուին ՌՃԲ. (1102): Եւ յետ երկուց ամաց ի հայրապետութեանն Նահապետ կաթուղիկոսին ազգականք Ալէքսանին ի գլուխ սոյնոյ վախմնամայիս կրկին տան գրել տանկերէն, թէ որպէս Ալէքսանն տուեալ է զայս այգիս Աթոռոյն, նոյնպէս և մեք տուաք, որ գրի ի տանկաց թւին ՌՃԴ. (1693), տան և զհին ղապալայն ևս սոյն այգւոյս մեզ, զորս ինքեանք առեալ են ի յօշականցի Ափիշանի որդի Սաթումէն ինն թումանի և յԱզիզի որդի Կիրակոսէն չորս թումանի: Ջչորեսին ղապալայսս զայսոսիկ գտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն:

Դարձեալ Սրբոյ Աթոռոյս աթոռակալ Մինաս վարդապետն ի յՕշական զայգի մի առնու ի գեղականացն, այսինքն՝ ի Բաղու որդի Թումանէն և Սաֆարի որդի Մուրատէն և յամենից գեղացւոցն քսան թումանի յանուն Սրբոյ Աթոռոյս յաւուրս Եղիազար կաթուղիկոսին ի թուին տանկաց ՌՃԲ. (1691), որոյ կողմունքն են՝ ճանապարհն, Ոլուբէկի այգին, Պետրոսի և Պօղոսի այգիքն, որ Բոումենց այգի ասի: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ սոյն Մինաս վարդապետս զայգի մի ևս է ունեցեալ ի յՕշական, որոյ կողմունքն են՝ Թումանի այգին, Լալազարի այգին, Աբրահամի այգին և Սրբոյ Աթո-

ռոյս այգին: Զայս այգիս և վեց թուման ևս դրամ տայ և գնէ ի յեավրի որդի Այվազէն, Բաղու որդի Թումանէն՝ վէքիլութեամբ Յօհաննիսին, Պետրոսին և սորա կին Մարիամին, որ է դուստր Փիլիպպոսին, զմէկ այգի մի հրամանաւ Նահապետ կաթուղիկոսին, որոյ կողմունքն են՝ առուն, Սահակի այգին, ճիւշայն և Յովաննիսի այգին ի տանկաց թուին ՌՃԳ. (1693), զորոյ ղապալայն գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ Նահապետ կաթուղիկոսն ի սոյն գեօղս առնու զայգի մի ի Թօրոսի որդի Մարուք վարդապետէն հինգ թումանի, որոյ կողմունքն են՝ Իրիցու այգին, Դուզն, Խտրէլիազի այգին և չօտարի այգին ի տանկաց թւին ՌՃԳ. (1692): Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսի Ջուղայեցւոյ գեօղս այս յՕշական հարեալ ի կարկտէ և յայլոց ձախորդական պատահմանց կարի չքաւորին և ի նեղ անկանին բոլոր գեօղացիքն: Վասն որոյ ի սհաթլուեցի Միրզայ Մուհամատ բէկն[I], որ վէզիր և մեծ դիւանագիր է լեալ յերկրիս և ի քեալանթար Հաճի Մուհամատ Հիւսէինէն առնուն զհարիւր և ութսուն թուման դրամ և քսան այգի և հինգ (291բ) ջրաղացս գրաւ դնեն եօթն ամիս վատայով նախապէս: Եւ դարձեալ ի յերևանցի խօճա Փանոսի որդի խօճա Մօսէսէն դրամ փոխ առնուն գեղովլի մէկ հարիւր յիսուն թուման, Ը. (8) այգի և ԺԲ. (12) ջրաղացս գրաւ դնեն ինն ամիս վատայով ի թուին տանկաց ՌՃԻԶ. (1714): Եւ երկոցունցն ևս ղապալայի պէս գրաւնամայ տան, թէ եթէ ի լրանալ վատային ոչ տայցեմք զդրամն ձեր, այդ այգիքդ և ջրաղացքդ ձեզ լիցին: Եւ ի մէջ երկուց ղապալայիցն ևս սահմանք այգեաց և ջրաղացիցն գրեցեալք են յատուկ յատուկ և յանուանէ: Ապա երկոցունց վատայն ևս լրանայ և ոչ կարողանան հատուցանել յօշականցիքն զդրամսն: Վասն որոյ և զաւթեն զայնքան այգիսն և զջրաղացսն խօճա Մօսէսն և յիշեցեալ տանիկքն:

Բայց ի յայգեաց և ի ջրաղացիցն, զորս տան խօճա Մօսէսին, երեք այգին և Գ. (3) ջրաղացն ի մէջ ղապալայի յիշեցեալ տանկացն ևս լինին գրեցեալք: Ուստի տանիկքն այնքիկ տարեալ զյօշականցիսն և զխօճա Մօսէսն ի շար՝ հաւաստեն գոլ իւրեանց և յետս առնուն ի Մօսէսէն զԳ. (3) այգիսն և զԳ. (3) ջրաղացսն: Իսկ և ի խնդրելն Մօսիսին ի յօշականցւոցն զփոխարէննն տան նմա յօշականցիքն զայլս երիս ջրաղացս և զչորս այգիս, որ լինի խօճա Մօսիսի առեալն ինն այգի և տասն երկու ջրաղացք: Զայս ամենայն զորս ասացաք ի մէջ երկուց ղապալայիցն ևս լիովին գրեցեալք են հանդերձ ուղիղութեամբքն և սահմանօքն, եթէ այգիքն և եթէ ջրաղացքն: Ի ՌՃԻԶ. (1714) թուոջն տանկաց և յաւուրս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ յօշականցիքն տան զայնքան այգիսն և զջրաղացսն յիշեալ տանկացն և խօճա Մօսէսին և ի ՌՃԼ. (1717) թուոջն այս վէճս լինի յաւուրս Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ:

---

I Բ. բէկէն

Ապա իբրև տեսանէ Աստուածատուր կաթուղիկոսն զխղճութիւն գեղջս այսորիկ, որ մուլք է Սրբոյ Աթոռոյս, զորոյ զայսքան այգիս և զջրաղացսն այլք առեալ տիրեն, ոչ հանդուրժէ: Վասն որոյ յետս առնու նախապէս ի խօճա Մօսիխէն զինն այգիսն և զտասն և երկու ջրաղացսն եօթանասուն թումանով և հաստատուն ղապալայով ի տանկաց ՌՃԿԷ. (1718) թուոջն, զորոյ զղապալայսն գտցես ցուցակում: Առնու նաև ի խօճա Մօսիխէն զհին ղապալայսն, զոր ի յօշականցւոցն առեալ էր, զոր ևս գտցես ցուցակում: Բայց զճառասուն թումանն տայ նաղտ դրամ խօճա Մօսիխին և ի տեղի երեսուն թումանին զմէկ այգի և զմէկ ձեռք տուն տայ ի Նորագեօղ գեղջն: Սոյնպէս և ի վերոյ յիշեցեալ տանկացն առնու յետս զճսան այգիս և զհինգ ջրաղացսն յիսուն և հինգ թումանով ի ՌՃԿԴ. (1721) թուոջն տանկաց: Եւ ի յետկոյս ղապալային, զոր առեալ ի յօշականցւոցն վերստին ղապալայ գրեալ վերոյ յիշեցեալ Հանի Մահմատ Հիւսէին բեալանթարն և Ալի ղուլի բէկ եղբայրն վեզիրին տան Աստուածատուր կաթուղիկոսին, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակում, զզինս սոցա վասն այսորիկ պակաս տայ Աստուածատուր կաթուղիկոսն, զի յայնքան յամս կերեալք էին նոքա զայնքան մուլքսն:

(292ա) Դարձեալ Սուրբ Հռիփսիմէի առաջնորդ ազուլեցի Անտօն վարդապետն ի սոյն գեօղս զայգի մի առնու յանուն սրբոյն Հռիփսիմէի վանիցն Բռումենց Առաքելի որդի Էվումէն և Պետրոսի Յովանիսէն հինգ թումանի, որոյ կողմունքն են՝ Սահակի և Յօսէփի այգիքն, առուն և քիչէն ի տանկաց թիւն ՌՃՁԴ. (1735): Գի՛տ զղապալայսն ցուցակում:

Դարձեալ սրբոյն Շողակաթի առաջնորդ Մարտիրոս վարդապետն առնու ի սոյն գեօղս զայգի մի յանուն Շողակաթին և ի Յօսէփի որդի Մատթէոսէն եօթն թուման հինգ հազար դիանի, որոյ կողմունքն են՝ Էվումի այգին, քիչէն, Յօսէփի այգին, Դաւուտ-ալու և Մարութ վարդապետի այգիքն ի ՌՃՁԴ. (1735) թուին տանկաց: Գի՛տ զղապալայսն ցուցակում:

Դարձեալ վերոյ յիշեալ Անտոն և Մարտիրոս վարդապետքն յանուն երկուց վանիցն Հռիփսիմէի և Շողակաթի զայգի մի ևս առնուն ի սոյն գեօղս ի Բռումենց Առաքելի որդի Էվումէն երկու թուման հինգ հազար դիանի, որոյ սահմանքն են՝ քիչէն, առուն, Խաչի խուպանն և Յօսէփի այգին ի ՌՃՁԵ. (1736) թուոջն մերում: Գի՛տ զղապալայսն հայերէն գրեցեալ:

Դարձեալ Աստուածատուր կաթուղիկոսն զքսան այգիքն, զորս առնու ի Վազիրէն, որպէս ի վերդ ասացաք, յորոց մին է յօշականցի Փիլիպպոսի որդի Առաքելինն, զոր նոյն կաթուղիկոսն ծախէ էջմիածնեցի Աղաբէկի որդի Մկրտումին: Եւ յետ մեռանելոյ Մկրտումին, վերստին վախմ էին տուեալ Սրբոյ Աթոռոյս: Ապա ի ՌՃՂԷ. (1748) թուին մերոյ Քիւթուր Պետրոս կաթուղիկոս ասացեալն ծախէ զսոյն այգիս սրբոյն Գայիանէի

առաջնորդ Եղիազար վարդապետին երեք թումանի, որոյ կողմունքն են Սաքումի, Էմինի, Մատթէոսի և Միխայէլի այգիքն: Գի՛ր զհայերէն ղապալայն[315]:

Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի սոյն գեօղս Այվազի որդի Եավրին մէկ հնձան տայ Սրբոյ Աթոռոյս հոգեբաժին կնոջ իւրոյ ի ՌՃԿԱ. (1712) թուոջն մեռում: Գի՛ր զվախմնամայն հայերէն գրեցեալ:

Ի սոյն ժամանակս զհնձան մի ևս Ղազարենց Աբրահամ ծախէ Սրբոյ Աթոռոյս վեց հազար դիանի ի ՌՃԾԸ. (1709) թուոջն մեռում: Գի՛ր զհայերէն ղապալայն[316]: Ի սոյն գեօղս զհնձան մի ևս Աստուածատուրի որդի Խաչատուրն վախմ տայ Սրբոյ Աթոռոյս ի տանկաց թուին ՌՃԸ. (1667), կողմունքն են՝ գեղն, առուն, Միրաղի բաղչայն և Ղօշաղի հնձանն: Գի՛ր զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ ի սոյն գեօղ զերկուս մարաfս ևս ունի Սուրբ Աթոռս, յորոց զմին Կիրակոսի որդիքն ծախեն մէկ թումանի ի ՌՃՀԱ. (1722) թուոջն մեռում և զմին տէր Մարուքն և իւր եղբարքն ծախեն տասն և ութ հազար դիանի ի ՌՃՁԷ. (1738) թուին մեռոյ[317]: Յորոց[I] զղապալայսն գի՛ր հայերէն գրեցեալք:

Դարձեալ սոյն գեօղացի Ղևոնդենց Խեչումի որդի Գրիգորն ծախէ սրբոյն Գայիանէի առաջնորդ Եղիազար վարդապետին երկու շիրախանայ, տասն տուն, (292բ) երկու թաղման և միաfաշ թաղման՝ հինգ հազար տասն շահու՝ ի ՌՄ. (1751) թուին մեռոյ: Գի՛ր զհայերէն ղապալայն[318]:

Դարձեալ ի ՌՃՂԴ. (1745) թուին մեռոյ ի ժամանակս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ նորին սպասաւոր զառնեցի Նիկողայոս վարդապետն տասն և չորս հազար դիան տայ յօշականցի Թումանի որդի Յարութիւնին վատայով և երկու տախտակ այգի և մէկ շիրախանայ կարասօքն գրաւ առնու այսու պայմանաւ, թէ եթէ վատային չկարիցեմ վճարել զդրամն, իւրն լինի իմ այգին և իմ շիրախանէն: Ի չվճարելն մնայ այգին և շիրախանէն Նիկողայոս վարդապետին: Երկու գիր գոյ հայերէն, գի՛ր և տե՛ս[II][319]:

## (294ա) <u>**յԱշտարակ այգիք**</u>

Նախապէս ի գեօղս Աշտարակ Մօսէս կաթուղիկոսն առնու զայգի մի երևանցի Մուրատի դուստր Հատիէէն հինգ թումանի, որոյ սահմանքն են՝ յՕշականայ ճանապարհն, Գասպարի և Շահնազարի այգիքն և բայիրն ի թուին տանկաց ՌԴ. (1595), զորոյ զղապալայն գի՛ր ցուցակաւն[320]:

Դարձեալ ի գեօղս յայս Սաղմոսավանքին մէկ այգի է լեալ վախուպ, որոյ կողմունքն են՝ ... Գէորգի Շմաւօնի այգիքն և fիչէն: Զայս այգիս Յակոբ կաթուղիկոսն

---

[I] Բ. Զորոյ

[II] Զգրված՝ 293աբ

Ջուղայեցի առնու ի ... կոչեցեալ տանկէ տասն և չորս թումանի և տայ Սաղմոսավանիցն յիշատակ ի յառաջնորդութեանն նոյնոյ վանից Գաբրիէլ վարդապետին ի թուին տանկաց ..., զորոյ զղապալայն և զվախմնամայն գի՛տ ցուցակաւն, յորոց վերայ չորից կաթուղիկոսաց կնիք զոյ, զոր յետոյ վերստին և Սուրբ Աթոռս զաւթէ ի յամայանալն վանօրէից:

Դարձեալ ի Ղազախու երկրէն տղայ մի Գրիգոր անուն եկեալ յԱշտարակ, կին առնու և բնակեալ լինի: Կինն ի հայրենեաց իւրոց և ինքն ևս ստանալով զերիս կտոր այգիս են ունեցեալ: Յետոյ ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Պօլսեցւոյ մեռանին երէցն և կինն անզաւակ, վասն որոյ Սուրբ Աթոռս զաւթէ զերիս կտոր այգիսն ևս, որոց մին է ի ձորոջն յեզր գետոյն, որ Յոանորիկ ասի, որոյ կողմունքն են. արևելեան կողմն դոն, արևմտեան կողմն տէր Խաչատուրի այգին, հիւսիսային կողմն քարափն և հարաւային կողմն գետն: Իսկ միւս այգին ևս ի սոյն Յոանորիկ ձորոջս է, որոյ կողմունքն են. հարաւային կողմն գետն, հուսիսային կողմն քարափն, արևմտեան կողմն ... այգին և արևելեան կողմն ..., իսկ միւս կտորն ... զոյ մօտ գեղջն որոյ կողմունքն են՝ արևելեան և հարաւային կողմունքն տէր Յարութիւնի այգիքն, արևմտեան կողմն Մահմատ դուլի տանկի այգին, իսկ հիւսիսային կողմն դոն և ճանապարհն, որք են շէն և ընդ ձեռամբ մերով[1]:

(296ա) **Այգիք ի Փարաքար**

Արդ ունի Սուրբ Աթոռս ի գեօղս յայս Փարաքար զայգի մեծ ... պարսպաւ պատեցեալ, որոյ կողմունքն են այժմ ...:

Քանզի ատտի և անտի առեալ լուսահոգեացն խառնեալ են ի մի և մեծացուցեալ, որպէս վասն այլոցն ասացաւ, զորոյ զորպէսն այսպէս իմա՛: Նախապէս Աբրահամ վարդապետ մի է լեալ փարաքարցի, որոյ այգի է մի լեալ ընդ ամենն վեց թումանի, որոյ ի վախճանիլն, կամեցեալ է Փիլիպպոս կաթուղիկոսն զաւթել զայգին, սակայն Աբրահամ վարդապետին քեռորդի է մի լեալ տանկացեալ, անունն Մուհամատ, զայգին կամեցեալ է և սա զաւթել յետոյ, որպէս և իցէ զերից բաժնէն մէկ բաժինն կաթուղիկոսն է զաւթեալ և զերկուս բաժինն յիշեցեալ տանիկն: Եւ մինչ այսպէս լինի, ապա Փիլիպպոս կաթուղիկոսն տայ և զչորս թուման սոյն տանկիս, առնու և զերկու բաժինսն ևս, որոյ լրման այգին լինի Սրբոյ Աթոռոյս, զորոյ զտանկերէն ղապալայն գի՛տ ցուցակաւն՝ գրեցեալ ի տանկաց թուին ՌԽԶ. (1636): Եւ յետ միոյ ամի զոյնամիտ գիր մի ևս առնու Փիլիպպոս կաթուղիկոսն ի սոյն Մուհամատ տանկէս գրեցուցանելով զայս անցս, զորս գրեցաք ի ՌԽԷ. (1637) թուին տանկաց:

---

[1] Ջնջված՝ 294բ-295բ

Դարձեալ յետ ԺԷ. (17) ամի սոյն տանիկս ևս եկեալ դաւ յարուցանէ ընդ Աթոռոյս, յետոյ, որպէս և իցէ տասն և երկու հազար դիան ևս տան սմա և ի գլուխ սոյնոյ երկրորդի թղթոյս կրկին բաթիլնամայ գրեցուցեալ շարին ի ՌՃԳ. (1653) թուին տանկաց և զերծանին: Գի՛տ և զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն: Կողմունքն այգւոյս են Սաֆարի այգին, Փարաֆարու մեծ առուն, որ ի Ջանկի գետոյն ելեալ անցանէ զգլխով գեղջս, Մելիք Եաղուպի այգին և Այվազի եօննալղն: Ջայսոսիկ յիշեցեալ կողմունսս ևս առեալ յետոյ խառնեալ եմք ի մի, որպէս տեսանես ի ստորևդ: Յետոյ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն առնու զերկուս այգիս կից սոյն այգւոյս, զմին ի վերոյ յիշեալ Սաֆարի որդի Միֆայէլէն հինգ թումանի, որոյ կողմունքն են՝ մեր վերոյ յիշեալ այգին, Անտօնի, Սահակի և Մկրտչի այգիքն: Եւ զմիւսն Իսկանդարի որդի Մկրտչէն, որ է ի վերոյ յիշեցեալ տեղդ, երկու թումանիւ, որոյ կողմունքն են՝ Խաչկի այգին, վերոյ յիշեցեալք Սաֆարի այգին, Այվազի եօննալուղն և մեծ առուն: Լինի այս ի ՌՀՁ. (1665) թուին տանկաց, զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն: Յետոյ վերոյ յիշեցեալ Սահակի որդի Վարդանն, զիւր այգին, որ ի վերդ սահման գրեցաւ մեր ի Սաֆարէն առեալ այգւոյն, ծախէ ի նոյն գեօղն Թադէոսին և նորին որդի Սիմէօնին ութ թումանի: Եւ այս Թադէոսս զայս այգիս յետոյ վախմ տայ Սրբոյ Աթոռոյս գրեցուցանելով ի գլուխ նոյնոյ ղապալային զվախմնամայն ի ՌՃԺԳ. (1702) թուին տանկաց, որոյ կողմունքն են՝ նոյն գեօղի գերեզմանքն, Երևանու ճանապարհն, տէր Փիլիպպոսի այգին և Սրբոյ Աթոռոյս վերոյ յիշեցեալ այգիքն: Գի՛տ զայս ղապալայս և վախըմնամայս ցուցակաւն:

(296բ) Դարձեալ վերոյ յիշեցեալ Մկրտչի որդիք Գրիգորն և Պետրոսն զայգի մի ևս ունելով կից այգւոյն, զոր Աթոռոյս ծախեաց Մկրտիչ հայրն իւրեանց, որպէս ասացաք ի վերդ, ծախեն զսոյն այգիս ի նոյն գեօղն Սարգսի որդի տէր Ղուկասին եօթն թումանի ի ՌՃՁ. (1694) թուին տանկաց, որոյ կողմունքն են՝ գեօղի քիւշէն, Նազարի եօննալղն, Սրբոյ Աթոռոյս վերոյ յիշեցեալ այգիքն և սոյն տէր Ղուկասիս այգին: Եւ յետոյ զսոյն այգիս նոյն տէր Ղուկասի որդի Մանասին և իւր եղբօրորդի Իսրայէլն տան Սրբոյ Աթոռոյս և առնուն չորս թուման և հինգ հազար դիան դրամ, երեք սոմար ցորեան և մէկ այգի, զորմէ յետոյ ասելոց եմք ի ժամանակս Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ ի ՌՃՁԵ. (1736) թուոջն մերում, հայերէն ղապալայիւ, տան և զհին ղապալայն իւրեանց տանկերէն, զոր ի Մկրտիչի յորդւոցն առեալ էին, զոր գտցես ցուցակօքն: Դարձեալ զվերոյ յիշեցեալ Այվազի եօննալուղն ի ՌՃՀԸ. (1729) թուոջն մերում սոյն Այվազի որդի Թադէոսն ծախէ Սրբոյ Աթոռոյս երեք թումանի ի ժամանակս Կարապետ կաթուղիկոսին Զէյթունցւոյ, որ գոյր ի մէջ մեր յիշեցեալ այգւոյն, զորոյ զղապալայն գի՛տ հայերէն գրեցեալ:

Զայս ամենայն այգիս, զորս ասացաք զամենայն խառնեալ ի մի միաւորեն և պարսպով պատեն նախնի երանելիքն մեր, զոր ունիմք այժմ ի ձեռս մեր, բայց աւեր հանդերձ գեօղի ամենայն այգեստանեօքն: Բայց զայս վերոյ գրեցեալ մեծ այգիս, մինչ յաւուրս Նատր շահին աւերեցեալ խոպանացաւ, որպէս և այլք շատ այգիք Երևանու դահար Հիւսէին Ալի խանն զաւթեալ էր ժամանակս ինչ և եօնեայ և բօստան ցանէր ինքն: Ապա ի ՌՄԺԳ. (1764) թուոջն մերում մեք յետս առաք ի խանէն և այժմ մեք ունիմք, որպէս յառաջն:

(297ա) Դարձեալ ունի Սուրբ Աթոռս ի գեօղս յայս զայգի մի, զոր նոյն գեղացի Պետրոսի որդի Ղարագեօզն, ինքն և իւր ընտանիքն հաստատուն տանկերէն վախմ-նամայիւ տան Սրբոյ Աթոռոյս յիշատակ յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին Ջուղա-յեցւոյ ի տանկաց թուին ՌՁԱ. (1670), որոյ կողմունքն են՝ Իրիցու, Գասպարի, Եաղուպի և էնեաթի այգիքն: Գի՛ռ զվախմնամայն ցուցակաւն: Դարձեալ ի սոյն գեօղս Մարկո-սի դուստր Եղսումն զայգի մի յիշատակ տայ Սրբոյ Աթոռոյս, որ է երեք տախտակ, որոյ կողմունքն են՝ Մօղնու վանից, տէր Ստեփաննոսի, Միհասի և Սարգսի այգիքն: Ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի տանկաց թուին ՌՃԻՁ. (1714): Զայս այգիս տայ Աբրահամ կաթուղիկոսն տէր Ղուկասի որդւոցն, զոր ի վերդ յիշեցաք:

Դարձեալ ի ՌՃՂԹ. (1750) թուոջն մերում ի ժամանակս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ սոյն գեօղացի Առաքելի որդի Յովանէսն գոլով ինքն ի յՈւռումէլի զիւր հայ-րենական այգին վախմ տայ Սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս նուիրակ Մօսէս վարդապետին: Գի՛ռ զղապալայն հայերէն գրեցեալ[321]:

Դարձեալ սուրբ Հռիփսիմէի առաջնորդ Անանիա վարդապետն ըՍտամպօլցի ի սոյն գեօղս առնու ի Մանուկի որդի Դիլանէն[I] զայգի մի եօթն թումանի ի մեր թուոջն ՌՃՂԴ. (1745) և ի տանկաց ՌՃԾԸ. (1158), որոյ կողմունքն են՝ Բարղուղիմէոսի, էլի-կենց Զաթաղի, Պետրոսի այգիքն և քիւչէն: Գի՛ռ զղապալայն հայերէն գրեցեալ:

Դարձեալ սոյն Անանիա վարդապետս ի սոյն գեօղս ի սոյն թուոջս առնու ի Յօսէ-փի որդի Տիրացու Նիկողայոսէն զայգետեղ մի, որոյ կողմունքն են՝ Անտօնի, Յովանի-սի այգիքն և քիւչէն: Եւ զկանաչ առտ մի՝ ի ներքոյ Գեօք Քումբէթի[II] ջրոյն ... զորոյ զղա-պալայսն զի՛ռ ցուցակօքն[III]:

## (298բ) Այգիք յԵրևան քաղաքն

Նախապէս ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին քանաքեռցի Ղազարի որդի Միքայէլ վարդապետն ի յԵրևան առնու զայգի մի ի Դօլվաթ Կեալտի կոչեցեալ տանկէ

---

[I] Բ. Տիրանենն

[II] Բ. Կեօք-քիւմբէթի

[III] Զգրված՝ 297բ-298ա

միոջէ Լէ. (37)[I] թումանի ի տանկաց թուին ՌԿԲ. (1651), որոյ կողմունքն են՝ Քեալանթար մելիք Մոհսունի այգին, Մախսուտ բէկի այգին, Նուռնուռ օղլի Մարխանի այգին և Քեօթոյի որդի Յովանիսի այգին:

Զայս այգիս նախապէս սոյն Միքայէլ վարդապետս ծախէ սոյնոյ տանկիս ի ՌԽԱ. թուին տանկաց (1631) Լէ. (37) թումանի: Յետոյ ի նոյն տանկէն վերստին յետս առնու նոյն գնովն ի վերոյ գրեալ թուղթն: Վասն որոյ և զիւր տուեալ հին ղապալայն ևս առնու ընդ այգւոյս: Գտցես զայս հին ղապալայս ի յերեսն գրեցեալ ցուցակուն: Այլև ընդ սոյն այգւոյս, առնու սոյն Միքայէլ վարդապետս ի նոյն տանկէն զայգի մի ևս Իէ. (27) թումանի կից նոյնոյ այգւոյն, որոյ կողմունքն են՝ նոյն մելիք Մոհսունի այգին, Մարխանի այգին, Մահմատ աղայի այգին և Ղանարտօնտար բէկի այգին: Այս երկուց այգեաց մի է ղապալայն, որ գրի ի ՌԿԲ. (1651) թուին տանկաց, զորս գտցես ցուցակուն, զորս ի յառնուլն, յիշատակ ... տայ Սրբոյ Աթոռոյս:

Դարձեալ ունի Սուրբ Աթոռս յԵրևան զայգի մի, զոր Մարխանենց այգի կոչեն, որ ի վերդ յիշեցաւ, որոյ սահմանքն են՝ Սրբոյ Աթոռոյս վախմ Միքայէլ վարդապետի այգին, սարն, ճանապարհն և Ամիրբէկի այգին: Զայգիս զայս խօճա Սէթի որդի Յակոբն է տուեալ վախմ Սրբոյ Աթոռոյս՝ ընդ Նորագեղու և Եղուարդայ մլքիցն ի ՌԿԷ. (1658) թուին տանկաց՝ յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին, որպէս ասացաւ ի [ԺԳ.] (13) գլուխն: Այլև ընդ սոցին տուեալ է նոյն Յակոբն զայգի մի ևս ի Զորագեօղ, զոր Թորոսենց այգի ասեն, որոյ սահմանքն են՝ առուն, որ ի Հրաստան գետոյն ելանէ և նոյն գեղացւոց այգիքն:

Այլև ի սոյն գեօղս զչրաղաց մի ևս է տուեալ Սրբոյ Աթոռոյս նոյն Յակոբն, զոր յիւրում տեղւոջն ասացուք: Սոցա վախումնամայն երկուք են և մեծ և մի և նոյն, զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն և ( ) նշանօք:

Դարձեալ այս յիշեցեալ Սեթիս թոռն քալանթար Սահակն առնու յԵրևան զայգի մի ի խօճա Գրիգորի դուստր Ջամանէն Կե. (65) թումանի ի ՌԿ. (1650) թուին տանկաց, որ կոչի Ղարաղաշենց այգի: Յետոյ, սոյն Սահակի որդի խօճա Աբրահամն զսոյն այգիս վախմ տայ Սրբոյ Աթոռոյս ի ՌՁԶ. (1675)[II] թուին տանկաց յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ հաստատուն տանկական գրով: Իսկ այս Աբրահամիս ազգական Սարգիսն, որ տանկացեալ Սարուխան կոչեցաւ, զորմէ յիշեցաք ի [ԺԳ.] (13) գլուխն, եթէ վասն ազգական գոլոյն Աբրահամին և թէ որով կերպիւ դաւ յարուցանէ ընդ Յակոբայ կաթուղիկոսին վասն այգւոյս այսորիկ, վասն որոյ և Յակոբ կաթուղիկոսն Լ. (30) թուման (299ա) տուեալ այս Սարուխանիս, կրկին ղապալայ առնու ի

[I] Բ. ԼԵ.
[II] Բ. ՌՁԴ.

նմանէ ի նոյն թուոյն ՌՃԻ. (1675) տանկաց։ Գի՛տ զայս ղապալայս և զԱբրահամի տուեալ վախմնամայն, նաև զհին ղապալայն, զոր բեալանթար Սահակն ի Ջամանէն առեալ է, յերեսսն գրեցեալ ցուցակօքն։ Կողմունք այգւոյս գրին Նամաթի այգին, Հայրապետի այգին, եկեղեցին և ի նմին գերեզմանքն և ճանապարհն, որ է Երևանու վերի եկեղեցւոյ ի վեր կոյս կից այգին, որ այժմ չէն է և տնաւոր։

Եւ յետ եօթն ամի ի ՌՃԼԱ. (1682) թուոյն տանկաց, մինչ Յակոբ կաթուղիկոսն գնացեալ ի Պօլիս վախճանի անդ, տաճիկ ոմն երևանցի Միրզայ Մահմատ Թաղի կոչեցեալ դաւ յարուցանէ ընդ Աթոռոյս վասն այգւոյս այսորիկ։ Վասն որոյ և Սրբոյ Աթոռոյս լուսարար և վերակացու Ստեփաննոս վարդապետն ելանէ ընդ նմա ի դատարանն Երևան և հաստատեն զայգին գոլ Սրբոյ Աթոռոյս և զհինգ թուման տան յիշեալ տաճկին և ի բերանոյն հունէթ մի առնուն, զոր գտցես ցուցակաւն, գրեցեալ ի թուին տանկաց ՌՃԼԱ. (1682)։

Դարձեալ ունի Սուրբ Աթոռս յԵրևան զայգի մի, զոր Աստուածատուր կաթուղիկոսն է առեալ ձեռամբ երևանցի Սիմէօն վարդապետին երկու ձեռք աւեր տամբք, մէկ հնձանաւ և մէկ սառնատամբ տասն թումանի ի Ջիմշիտ անուն տանկէ, որ և Ջիմշիտենց այգի կոչի ի ՌՃՀԵ. (1726) թուին տանկաց, որոյ սահմանքն են՝ երկու կողմանքն բիւչէ և երկու կողմանքն վարելահողք, որ է կից Անանիայ առաքելոյ անապատին և է այժմ աւեր։ Գի՛տ զղապալայն ցուցակաւն։

Դարձեալ Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի յԵրևան զերիս հնձանս գնէ երեք թումանի ի Հաճի-իմամղուլի որդի Հաճի Մահմատ Քեարիմէն ի տանկաց թւին ՌՃԿ. (1717), զորոյ զղապալայն գտցես ցուցակաւն։ Դարձեալ երևանցի Աւետիքի որդիք խօճա Թօրոսն և խօճա Մանուկն գոլով իւրեանք ի յԱսպահան զմէկ այգին իւրեանց ի յԵրևան տան վախմ Փիլիպպոս կաթուղիկոսին, և Փիլիպպոս կաթուղիկոսն ևս տայ վախմ սրբոյն Անանիայ առաքելոյ անապատին ի ՌՂԳ. (1644) թուին տանկաց, որոյ սահմանքն են՝ խօճա Թաղէոսի և խօճա Մատթէոսի այգին, զոր ևս էառ Փիլիպպոս կաթուղիկոսն դրամով և սոյն անապատիս ետ, սոյն անապատի պարիսպն, Հաճիղարի այգին և Կոզռան բլուրն։ Գի՛տ զղապալայն ցուցակաւն։

Դարձեալ սոյն Աւետիքի որդիք խօճա Մատթէոսն և խօճա Թաթէոսն զսոյն յիշեալ այգւոյս կից կէս այգի ևս ծախեն նոյն Փիլիպպոս կաթուղիկոսին տասն և հինգ թումանի ի սոյն թուոյս տանկաց ՌՂԳ. (1644)։ Եւ նոյն կաթուղիկոսն զայս այգիս ևս վախմ տայ նոյն Անանիա առաքելոյ անապատին, որոյ կողմունքն են՝ վերոյ յիշեալ այգին, Հաճիղարի այգին և Կոզռան բլուրն։ Գի՛տ զղապալայն ցուցակաւն։

Ապա յետ ԻԶ. (26) ամաց ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տաճիկ ոմն Շահղուլի կոչեցեալ և Ղուշչի խանն դաւ յարուցանէ վասն սոյն այգւոյս, թէ իմ է տեղս ջրաղաց ևս ունէաք մեք և նախնիքն իմ զՄամռի կոչեցեալ առուն ևս, որ

ի Ջանկի գետոյն ելանէ, որոյ մէկ կողմն սարի ճանապարհն է (299բ) և մէկ կողմն սոյն այգիս, վասն այս այգւոյս և ջրաղացին են ճանեալ զղապալայն ևս ունիլով ի ձեռին: Ապա Յակոբ կաթուղիկոսն, ձեռամբ վէքիլին իւրոյ ի շարն տարեալ՝ տայ նմա զերկուս թուման դրամս և զմէկ ֆուրթուկցու շուխայ և զմէկ գիր առնու ի նմանէ: Այս լինի ի ՌՃԺԸ. (1669) թուին տաճկաց: Գի՛տ զայս գիրս ցուցակաւն[I]:

(301բ) **Այգի ի Նորագեօղ**

Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի ի Նորագեօղ զայգի մի առնու, որ է երկու տախտակ՝ իւր ճնձանովն և մէկ շարտախով ի Դամուրբուլաղցի Քեարիմ Ալի որդի Հասան աղայէն տասն թումանով ի թուին տաճկաց ՌՃԻԶ. (1714), որոյ կողմունքն են՝ Սահակի այգին, ֆիշէն և նոյն Հասանի այգին: Գի՛տ զղապալայն ցուցակաւն: Սորա հին ղապալայն ևս գի՛տ ցուցակաւն, որ նոյն Հասանն առեալ է ի Քեալպալայ Փիրուցն ի ՌՃԻԱ. (1716) թուին տաճկաց:

Զորագեղացի Արիստակիսի դուստր Սիրիխան անուն կին ոմն այրի ի հայրենեաց մնացեալ զայգի մի ի Նորագեօղ, որոյ կողմունքն են՝ ձորագեղացի Հանի Մուհամատ Վէլու այգին, ձորագեղցի Կարապետի այգին, ձորագեղցի Դաւթի այգին և երևանցի Իսրայէլի այգին: Այլև զտուն մի բաղչայով ի յԵրևան ֆաղաքն, որոյ կողմունքն են՝ ֆարտաշ Պետրոսի տունն, Ջալալենց տունն, Խուպոնց տունն և ուստա Աղաբապի տունն, վախմ տայ Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԻԴ. (1124) թուին տաճկաց և ի մեր թուոշն ՌՃԿ. (1711) ի ժամանակս Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսին: Երկուց վախուպնամայն մի է, զոր գտցես յԵրեւսն գրեցեալ ցուցակաւն, որոյ բաղչայումն եղեալ տունքն են այսոքիկ՝ մէկ այվան, մէկ թանապի, մէկ սանդուխխանայ, երկու զերզամպի, մէկ աշխանայ, մէկ մառան, մէկ թավլայ և մէկ մարաք: Այսպէս գրի ի վախուպնամայոջն, թէ զայսոսիկ վերոյ յիշեցեալ տունքս, հանդերձ ի միջի իւրեանց կահիւքն և ամենայն ընչիւքն, զամենայն վախմ ետու Սրբոյ Էջմիածնի: Եւ յետ միոյ ամի ի ՌՃԻԵ. (1713) թուին տաճկաց ի յայս Սիրիխանի ազգէն կին ոմն անուն Համազ, դուստր Յակոբայ Զորագեղցւոյ, վախմ տայ զայգի մի ևս Սրբոյ Աթոռոյս ի նոյն գեօղն Նորագեօղ, որոյ կողմունքն են՝ դամուրբուլաղցի Հասան աղայի այգին, ֆիշէն, երևանցի Իսրայէլի և ձորագեղցի Յօհանի այգիքն:

(302ա) Ապա ի յայս Սիրիխանի և Համազի ազգէն կին ոմն տաճկացեալ անունն Ֆաթմայ դաւ յարուցեալ ընդ Սրբոյ Աթոռոյս, խանին արզ առնէ, թէ իմ հայրենի այգիքն Էջմիածնի խալիֆայն զաւթեալ ուտէ, պարտիս առնուլ և տալ ինձ: Եւ խանն ի շարն հրաւիրէ և շարն ի մէնջ զվկայս և զհաստատութիւնս խնդրէ, և Աղէքսանդր կա-

[I] Զգրված՝ 300ա-301ա

թուղիկոսն զերկուս վախուպնամայս հանեալ ցուցանէ, մին ի ՌՃԿԱ. (1712) թուին տանկաց գրեցեալ վասն միոյ այգւոյ և միոյ տան, զոր Սիրիխանն տայ վախմ Սրբոյ Աթոռոյս, զոր ի վերդ ասացաք և միւսն ի ՌՃԿԲ. (1713) թուին տանկաց, գրեցեալ վասն միոյ այգւոյ, զոր Համազն տայ վախմ Սրբոյ Աթոռոյս, զոր ևս ի վերդ ասացաք: Ապա ի տեսանելն շարին զայսոսիկ հաստատուն վախումնամայս ի Ֆաթմայէն զվկայս խնդրէ և նա ոչ գտանէ զվկայս, այլ սուտ ելանէ, վասն որոյ և շարն զհունեէթ մի գրեալ տայ Սրբոյ Աթոռոյս և զՖաթմայն ի բաց վանէ: Լինի այս ի ՌՃԿԳ. (1714) թուին տանկաց: Եւ յետ երկուց ամաց ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ նոյն Ֆաթմայն ևս դաւ յարուցանէ վասն վերոյ յիշեալ այգեացն, և Աստուածատուր կաթուղիկոսն ի հատանել զձայն նորին ի ձեռն աթոռակալ Վրդանէս վարդապետին, զիտութեամբ շարին, ԺԵ. (15) սոմար ցորեան տան Ֆաթմային, և ի գլուխ նոյնոյ վերոյ յիշեալ հունէթին կրկին հունէթ գրէ շարն և տայ Աթոռոյս ի ՌՃԿԴ. (1715) թուին տանկաց: Գի՛տ զայս կրկնաբար հունէթս յերեսն գրեցեալ ցուցակուն:

Դարձեալ յառաջ, քան զվերոյ յիշեալ Համազին վախմ տալն Սրբոյ Աթոռոյս զայդ այգիդ, որ ի վերդ ասացաւ, սոյն Ֆաթմայ կինս ընդ Համազին դաւ յարուցանէ վասն երկուց այգեաց, որոց մին այդ է, զոր Սրբոյ Աթոռոյս տայ Համազն, որ և խանին առզ արարեալ զմուհասիլ հանէ և զՀամազն ի շարն հրաւիրէ: Եւ շարն ի Ֆաթմայէն զվկայս խնդրէ, և նա թէպէտ բերէ զքանի վկայս, բայց սուտ ելանեն: Վասն որոյ և շարն զՖաթմայն ի բաց վարէ և զհունեէթ մի գրեալ տայ Համազին ի ՌՃԿԳ. (1711) թուին տանկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակուն: Քանզի ի վախմ տալն Համազին զայդ այգին Սրբոյ Աթոռոյս, տայ և զայս հունէթս ընդ նմին:

(302բ) Դարձեալ ի ՌՃԿԷ. (1718) թուին տանկաց, վասն որոյ Համազի տուեալ այգւոյս ոմն Հաճիբէկլու Մահմատ Ղասում բէկ անուն տաճիկ, թէ՛ ազգական է լեալ նոյն Ֆաթմային, և թէ ոչ, էՙս, չեղև յայտնի մեզ, դաւ յարուցանէ ընդ Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ ասելով, թէ մեր է այդ այգիդ: Ապա Աստուածատուր կաթուղիկոսն ի ձեռն աթոռակալ Վրդանէս վարդապետին յիսուն ոսկի տայ գիտութեամբ շարին նոյնոյ Մահմատ Ղասում բէկին և ի բերանոյ նորին զհաստատուն հունէթ մի առնու ի շարէն: Գի՛տ զայս հունէթս յերեսն գրեցեալ ցուցակուն: Յորում անուն այգւոյս այսորիկ Քեօշկի Համզայ բաղ գրի:

Դարձեալ ի յերկիրն Վրացտանու ի գեօղն Ծուլաւէր Ջհանշիրի որդիք տանուտէր Թահմազն և Բայրամն և Թահմազի որդիք Ռէվազն, Բայինդուրն և Ջալն ի նոյն գեօղն զմի մեծ այգի տան յիշատակ Սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին, շէն և ապրշումեայ ծառօք և այլովք լի ի ՌՃԻէ. (1678) թուոջն մերում: Գի՛տ զվախմնամայն վրացերէն գրեցեալ, յերեսն գրեցեալ ցուցակուն:

## (303ա) <u>**Այգի ի Ձորագեղ**</u>

Ի գեօղս յայս զայգի մի տայ Սրբոյ Աթոռոյս յիշատակ խօճա Սէթի որդի խօճա Յակոբն, զոր ի վերդ բազմիցս յիշեալ եմք, ընդ Եղուարդայ և ընդ Նորագեղու մլքիցն, որպէս ի վերդ ասացաք ի ճառս Երևանու այգեացն, այգին կոչի Թորոսենց այգի և ... որոյ կողմունքն են՝ առուն, որ ի Զանկի գետոյն ելանէ և ի նոյն գեղի այգիքն: Սորա փախուպնամայն մի է ընդ վերոյ յիշեալ գեօղօրէից մլքիցն և երկու ճատ, զորս գտցես ցուցակօքն[I]:

## (304ա) [<u>**Այլ այգիներ**</u>][322]

Դարձեալ ի Դաւրէժ քաղաքն այգի մի գոյր Սրբոյ Աթոռոյս, որ ի վաղուց հետէ ամայի և անշէն անկեալ գոյր, զոր այս և այն արտատեղ արարեալ սերմն ցանէին և մեզ անօգուտ ի պղտորմանէ ժամանակին ձեռք մեր ոչ հասանէին կամ ի նորոգել և կամ ի տիրել: Ապա ի ժամանակս մեր Միրզայ շէֆի ոմն անուն մեծ իշխան տանիկ ի Դաւրէժ կից նոյն այգւոյն մերոյ զայգի ունիլով կամեցաւ, զի պարսպաւ պատիցէ զայ-գին իւր, բայց ճանապարհ և անցք նորին էր մեր այգետեղն, ուստի գրեաց մեզ, թէ որովհետև դուք տիրութիւն ոչ առնէք այգւոյն ձերոյ կամ ծախեցէք ինձ և կամ իշարով տուք, զի ընդ այգւոյն իմոյ պարսպեալ նորոգեցից և մեր ոչ կամելով ծախել ետուք իշարայ, որ ի տարին հարիւր լիտր Թարվիզու ցորեան տայցէ Սրբոյ Աթոռոյս և զայգին նորոգեալ ընդ այգւոյն իւրոյ շէն պահեսցէ: Բայց ի միջոցիս, յորում նա մեզ գրէր և մեք նմա Միրզայ շէֆին անկեալ մեռաւ: Վասն որոյ նորին որդի Միրզայ Ռաֆին հուճէթ մի գրեալ և կնքեալ իւրն և տեղւոյ շխիսլամին ևս կնքեցուցեալ առաքէ առ մեզ և հուճէթ մի ևս մեք գրեալ առաքեցաք առ նա, այսու պայմանաւ, թէ ի տարին Սրբոյ Աթոռոյս Ճ. (100) լիտր ցորեան տայցէ և զայգին մեր ի շինութեան պահելով վայելեսցէ, մինչև ի ՂԹ. (99) տարին: Գի՛տ զայս հիւճէթս և Միրզայ շէֆու և Միրզա Ռաֆու բարևա-գրեանքն յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի տաճկաց թուին ՌՃՁ. (1180) և ի մեր ՌՄԺԵ. (1766) թուոջն: Երկու գիր ևս հայերէն ի պարոն Սաֆարէն թիլֆիզեցւոյ գրեցեալք վասն այնորիկ, որոյ միջնորդութեամբն եղև այս գործ:

(304բ) Դարձեալ զմեծ այգի մի ևս ի Դուխուրղան[323] գեօղն ունի Սուրբ Աթոռս, որ է ի կողմն Դաւրիժու, զորոյ զորպէսն այսպէս գիտեա՛: Ջուղայեցի Յակոբ կաթուղի-կոսն նախապէս առնու սոյն այգւոյս զքաժին մի ի Նաւրուզի որդի Մահմատ Ալիէն իւր վէքիլ Գեօլասարի ձեռօքն չորս թումանի, որոյ սահմանքն գրին ճանապարհն և Միրզայ Մուհամմատի այգին: Յետոյ զեօթն հազար տասն շահի ևս տայ, որ լինի չորս թուման, եօթն հազար Ժ. (10) շահի, զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն, որ գրի ի ՌԿԵ. (1654) թւին տաճկաց:

---

[I] Զգրված՝ 303բ

Դարձեալ առնու զբաժին այգի մի ևս կից սոյն այգւոյս յԱհմատի որդի Մահմատէն եօթն թուման մէկ հազար Ե. (5) շահու, անուամբ վերոյ յիշեալ Գեօլասարին, որոյ կողմունքն գրին նմանապէս Միրզայ Մահմատի այգին և ճանապարհն … ի տաճկաց թուին ՌԿԷ. (1656), զորոյ զղապալայն ևս գի՛տ ցուցակաւն:

Եւ դարձեալ ի սոյն թուոջս նոյն Յակոբ կաթուղիկոսն առնու ի սոյն տեղւոջս զմեծ բաժին այգի մի ևս ի թարվիզեցի Ահմատի որդի Մահմատէն տասն և չորս թուման, երկու հազար և Ժ. (10) շահու, որոյ կողմունքն ևս գրին Միրզայ Մահմատի այգին և ճանապարհն, զորոյ զղապալայն ևս գի՛տ ցուցակաւն յերեսն գրեցեալ: Եւ ապա զերեսինս զայսոսիկ միացուցեալ՝ շինէ զմեծ այգի մի, որ կայ այժմ շէն և ընդ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս[I]:

(306ա) Դարձեալ ի մերումս ժամանակի ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում թիֆիզեցի Լօյինենց Բէժանի հանգուցեալ Սիմէօնի կողակից Խանումն զոլով իւրն այրի և անզաւակ զիւր մէկ այգետեղն, որ ի Թիֆլիզ ի Տափիթաղ կոչեցեալ մահլէն, ետ յիշատակ Սրբոյ Աթոռոյս՝ միջնորդութեամբ նոյնոյ fաղաfացի տէր Պետրոսին, զոր բանադրեալ բերեալ էաf ի Սուրբ Աթոռս: Գի՛տ սորին զերկուս վախուպնամայսն վրացերէն գրեալ և յերեսն հայերէն գրեցեալf[II]:

---

[I] Զգրված՝ 305աբ
[II] Զգրված՝ 306բ-307բ

## (308ա) ԳԼՈՒԽ ԺԷ.

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՋՐԱՂԱՑՔ, ԴԻՆԿՔ ԵՒ ՋԻԹԱՀԱՆՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ, ԹԷ Ո՞ՒՐ ԵՒ ՈՐՊԵ՞Ս ԵՒ ՅՈՐՈ՞ՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ

**Ջրաղացք ի մեր գեօղս**

Ի գեօղս մեր ունեցեալ է Սուրբ Աթոռս ի վաղուց հետէ զերկուս ջրաղացս, մին միջի ջրաղացն, որ է ի վերի Իւզբաշոնց և Սատախլու կոչեցեալ ջրաղացաց մէջն, յորոյ վերայ զքուրխս շինեցուցաք, որ է մէկ տուն և ի մէջն երկու ջրաղաց: Եւ սոյն Սատախլու կոչեցեալ ջրաղացս խարաշէն, որ է հուպ գեօղիս մերոյ ի հիւսիսակողմն, որ է մէկ տուն և ի մէջն մէկ ջրաղաց: Բ. (2) արարաք ի ՌՄԾԲ. (1803) թուոջս[324]:

Երրորդ ջրաղացն, որ է ի հարաւակողմն ի հուպ Աթոռոյս ի վերայ խանխանիս, զոր Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն է շինեալ (ի բերելն զջուր խանխանիս, որ ընդ մէջ գեօղիս և Աթոռոյս անցանէ), որ է մէկ տուն և ի մէջն մէկ ջրաղաց:

Չորրորդ, վերի ջրաղացս, որ Իւզբաշոնց կոչի: Իւզբաշիս այս, որոյ անունն է ...: Նահապետ կաթուղիկոսին չրաղն և որպէս թէ վէքիլ և գործակալն է լեալ ի դրունս տանեկաց գնացօղ աշխարհական մարդ և տնաւորեալ, որ և ի խնամոց նոյնոյ կաթուղիկոսին զօրացեալ շինէ զտունս ի գեօղումս, որ ևս է Սրբոյ Աթոռոյս այժմ, զորմէ յետոյ ճառեսցուք: Այլև շինեալ է զայս ջրաղացս, որ է ի մէջ միում տան երեք ջրաղաց ի վերին ծայր գեղջս ի հիւսիսակողմն ի ներքոյ Մօլլայդուրսուն կոչեցեալ գեօղին: Յետոյ ի մեռանիլ Իւզբաշի ... զայթէ Սուրբ Աթոռս իբր զհոգեբաժին նորա: Յետոյ ի ներհակիլ Ջուղայեցւոց ընդ Նահապետ կաթուղիկոսին և ի գալն Ստեփաննոս վարդապետին կաթուղիկոսական անուամբ ի վերայ Նահապետ կաթուղիկոսին և ի յայլայլութեան միջոցին, վերստին ի յինքեանս գրաւեն որդիք և ազգականք Իւզբաշու զայս ջրաղացս:

Ապա ի գալ Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի խաղաղանալ միջոցին վերստին զտասն թուման, որպէս թէ ողորմութիւն տայ Աղէքսանդր կաթուղիկոսն Իւզբաշու որդւոցն և ազգականացն և առնու զայս ջրաղացս, որ և յայնմ օրէ լինի Սրբոյ Աթոռոյս մինչև ցայսօր: Գի՛տ զհայերէն ղապալայն, որ գրի ի մեր ՌՃԿԲ. (1713) թուոջն, յորում Նորք մի ևս գրի զոլ Սրբոյ Աթոռոյս, որ է կտոր մի այգի, որ է այժմ ի ձեռս վէքիլ Այվազին և Ղազարին: Քանզի ի յայնմ ժամանակի Աղէքսանդր կաթուղիկոսն ի պարսպելն զմեծ Ղռի այգին մեր, զայս Նորք կոչեցեալ այգիս տուեալ է Գոր-

բենց և ի նոցանէ առեալ է զայս կտոր այգին, որ է այժմ ի մէջ Ղռի այգւոյն մերոյ և կոչի Գորբենց փայ: (308բ) Եւ այս ջրաղացս ի յոլով ժամանակս ամայի և անշէն էր մնացեալ, յետոյ ի ՌՄԺԵ. (1766) թուոջս մերում մեբ վերստին շինեցաք, որ է մէկ տուն, յորում միջի երկու ջրաղաց:

Հինգերորդ, մօտ գեօղիս մերոյ ի յարևմտակողմն կից մերոյ դնգին ջրաղացն, որ է մէկ տուն և ի մէջն մէկ ջրաղաց, զոր Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի շինեաց ձեռամբ իւր գործակալ յօշականցի Յակոբ վարդապետին ի շինելն զդինկն ի թուին մերոյ ի ՌՃՂԷ. (1748):

Որբ եղեն ի գեղջս մերում տունբն հինգ և յորս միջի եղեալ ջրաղացբն եօթն, որբ են շէնբ և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս: Իսկ զջրաղաց մի ևս ի սոյն գեօղս ի տէր Մկրտչի որդիբ Մեսրոպէն, ի Սահակէն, ի տէր Փիլիպպոսէն և ի Սարգսէն առնու Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի ՌՃԾԹ. (1710) թուոջն մերում, որ կոչի Մեսրոպենց ջրաղաց, որ է ի վայր գեօղիս յարևմտակողմն՝ հանդէպ Ալիբէքլու գեօղին, որ է անշէն և ամայի ի վաղուց հետէ, վասն հեռաւորութեանն ի ջրոյ: Գի՛տ զղապալայն հայերէն գրեցեալ[I]:

## (309բ) **Ջրաղացբ ի յՕշական**

Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի ի յՕշական գեօղս ի Բռումենց[II] Առաբելի որդիբ Պետրոսէն և յէմինէն[III] առնու զվեց ջրաղացս չորս թուման և կիսոյ ի ՌՀԳ. (1662) թուին տաճկաց: Ջրաղացբն ի Գետառումն են: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի ի ՌՃԼԱ. (1718) և ի ՌՃԼԴ. (1721) թիւսն տաճկաց ի գեօղս յայս ի յերևանցի խօճա Փանոսենց խօճա Մօսիսէն առնու զհնն այգիս և զտասն և երկու ջրաղացս եօթանասուն թումանով: Եւ ի սհաթլուեցի հաճի Մահմատ Հիւսէին բեալանթարէն և ի Վէզիրի եղբայր Ալի դուլի բէկէն առնու զբսան այգիս և զհինգ ջրաղացս յիսուն և հինգ թումանով, զորոց զղապալայսն գտցես ցուցակօբն: Ջոնցս որպէսն տեսցես ի ճառս յՕշականու այգեացն:

Դարձեալ ի ժամանակս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ ի գեօղս յայս կին մի այրի, որ կոչիւր Գիւլի, զջրաղաց մի ունէր ի մէջ ձորոյն, մերձ կամրջին ի ... կողմն, որոյ ի մեռանիլն ետուն զջրաղացն զայն Սրբոյ Աթոռոյս, իբր հոգեբաժին, որ կոչի ... Գիւլենց ջրաղաց:

---

I Զգրված՝ 309ա

II Բ. Իփրումենց

III Բ. Հեմինեն

Մէկ ջրաղացի տեղ և մէկ այգւոյ տեղ տէր Հայրապետի դուստր Կեօւրլուն ի յՕշական ծախէ Սրբոյ Աթոռոյս ձեռամբ վէքիլ Դաւթին վեց հազար դիանի ի ՌԺԳ. (1653) թուին տաճկաց: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն[I]:

## (310բ) **Ջրաղաց ի Կաւակերտ և ի Գեօկքումբեթ**

Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի ի յայս գեօղս զերկուս ջրաղացս առնու ձեռամբ տեղապահին իւրոյ Միքայէլ վարդապետին Գ. (3) թումանով ի կաւակերտցի Յօհանի որդի Աւաքէն ի ՌՃԾԳ. (1740) թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ Ջանկու գետն, Ալիայի ճանապարհն և ջրաղացն և Սրբոյ Աթոռոյս դինկն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

## (311ա) **Ջրաղաց ի յԵրևան և ի Զորագեօղ Սրբոյ Աթոռոյս**

Դարձեալ երևանցի խօճա Սէթի որդի Յակոբճանն բարեպաշտ, զոր բազմիցս յիշեալ եմք ի ճառս Նորագեղու մլքատուութեանն ի ԺԳ. (13) գլուխն և ի ճառս յԵրևանու այգեացն ի ԺՋ. (16) գլուխն և յայլս տեղիս Նորագեղու և ընդ եղուարդայ մլքիցն, ջրաղաց մի ևս տայ Սրբոյ Աթոռոյս ի յիշատակ ի Զորագեօղ, որ Գառնուկենց ջրաղաց ասի, որոյ կողմունքն են՝ ջրաղացաց առուն, Ղազարի ջրաղացն և ճանապարհն, զորոյ զղապալայն գի՛տ, որք են երկուք ի ՌԿԷ. (1658) թուին տաճկաց գրեցեալք և յերեսն գրեցեալք ցուցակօքն:

Դարձեալ սոյն յիշեցեալ Սէթի թոռն Սահակ քալանթարն ընդ եղբարց և ընդ Ամիրի գեօղօրէից մլքիցն, որպէս ցուցաւ ի ճառս նոյն գեօղօրէիցն ի ԺԳ. (13) գլուխն, ջրաղաց մի ևս ծախէ ի սոյն գեօղս Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին ի ՌՀԱ. (1660) թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ Ջանկի գետն, ջրաղացի առուն և Յօհաննիսի և Գրիգորի ջրաղացքն: Գի՛տ զմեծ ղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն[II]:

(312ա) Երևանցի խօճա Գրիգորի դստերք Մարգարիտն և Յօղիտայն ի Զորագեօղ Դ. (4) դանկն ջրաղացի միոյ, որ լեալ է իւրեանց բաժին, վախմ տան Անանիայ առաքելոյ անապատին, որ յԵրևան ձեռամբ տեառն Փիլիպպոս կաթուղիկոսին ի ՌՂԳ. (1644) թուին տաճկաց: Գի՛տ զվախմնամայն յերեսն գրեցեալ ցուցակաւն: Սորա մէկ մեծ սաւատ ևս զոյ շխիսլամի կնքով, զոր ևս գի՛տ ցուցակաւն, որոյ կողմունքն են Ալիբէկի և խօճա Եաղուպի ջրաղացքն, ճանապարհն և Բ. (2) դանկն սոյնոյ ջրաղացիս, զոր ևս առնու սոյն Փիլիպպոս կաթուղիկոսս ի Շահզաման դստերէն սոյն յիշեալ Գրիգորիս ի սոյն թուոջս, դրամով և տայ նոյնոյ Անանիայ առաքելոյ անապատին վախմն, որով լրանայ վեց դանկն ջրաղացին[325]: Գի՛տ զղապալայն, զոր վասն

---

[I] Չգրված՝ 310ա

[II] Չգրված՝ 311բ

Բ. (2) դանկին ի Շահզամանէն առնու Փիլիպպոս կաթուղիկոսն և զվախուպլամայն, որով վախմ տայ նոյնոյ անապատին, յերեսն գրեցեալ ցուցակօֆն:

Այլև սոյն եռանելիս զջրաղաց մի ևս տայ յիշատակ սոյնոյ անապատիս ի Զորագեօղ ի ներֆոյ բերթին, որոյ կողմունֆն են՝ Ջանկի գետն, Նորագաւթայ առուն, ճանապարհն և բերթն ի նոյն ՌՂԳ. (1644) թուոջն տաճկաց: Այս ջրաղացիս և այն երկու դանկին, որ ի վերդ յիշեցաւ, զորս յիշատակ տայ Փիլիպպոս կաթուղիկոսն Անանիայ առաֆելոյն՝ մի է վախմնամայն, որպէս ցուցանէ ֆեզ յերեսն գրեցեալ ցուցակն[I]:

(313բ) **Դինկ Սրբոյ Աթոռոյս ի մեր գեօղս**

Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի ի յայս գեօղ ի Բաքի որդի Բուտաղէն զերկու ջրաղացս, որֆ լինին ի միում տան, առնու հինգ թումանով և ֆակէ զայնս և շինէ դինկ և ֆրֆրայ, որ կայ այժմ շէն և ընդ ձեռամբ Աթոռոյս, որոյ կողմունֆն գրին խաչատուրի և Մալխասի տներն, առուն և մեր Սատախյուի ջրաղացն՝ ի տաճկաց թուին ՌՃԿԳ. (1749): Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ է մեր գեօղիս կից դինկն ի յարևմտակոյս, որոյ կիցն զջրաղաց մի ևս ունիմֆ:

Դարձեալ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն, յորժամ հանէ զմեր ներֆին ֆանֆանն, որ է ի վայր փոսն ի վերայ նորա զդինկ մի շինէ, որ այժմ աւեր է դինկն և ֆանֆանն: Այս դնկիս ֆարհնֆն Երևանու Հաճիահմատ խան կոչեցեալ տաճիկն ֆարշեալ տանի և իւրեան դինկ շինէ՝ յաւուրս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին:

(314ա) **Դինկ Սրբոյ Աթոռոյս ի Քալարայ գեօղն**

Ջուղայեցի Աղէֆսանդր կաթուղիկոսն ի սոյն գեօղս առնու զերկուս ջրաղացատեղս կից իրերաց ի նոյն գեօղացի Առաֆելի որդի Սարգսէն և ի Պետրոսի որդի Յոհանիսէն ի ձեռն վէֆիլ Մատթէոսին երեֆ թումանով, որոյ կողմունֆն են՝ նոյն Յոհանիսի վարելահողն, Ազարիայի հողն և առուն, զորոյ զղապալայն զի՛տ ցուցակաւն, որ գրի ի թւին տաճկաց ի ՌՃԺԹ. (1707): Եւ յետոյ զնոյնս դինկ շինէ երկու մլաւոր: Բայց այժմ աւեր է ի վաղուց հետէ:

(314բ) Դարձեալ ի սոյն գեօղս Դալուլար Իմանի բէկի որդի ղանար Մահմատ բէկն առնու զերկուս ջրաղացս կից իրերաց ի սոյն գեօղացի Զաֆարիայի որդի տէր Սարգսէն ութն թումանով ի տաճկաց ՌՃԻՋ. (1714) թիւն: Եւ ի սոյն թուոջս նոյն տաճիկն ծախէ զնոյն ջրաղացսն Ջուղայեցի Աղէֆսանդր կաթուղիկոսին տասն թումանի: Եւ ի գլուխ իւրոյ ղապալային վերստին ղապալայ գրեցուցեալ և կնֆեալ տայ մեզ: Զայս ղապալայս զի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն, որոյ կողմունֆն են՝ դուզն, Շաֆա-

---

[I] Զգրված՝ 312բ-313ա

ղաթի ջրաղացն, ջրաղացի առուն և ճանապարհն: Ջայսոսիկ երկուս ջրաղացս ևս բակեալ դինկ շինել տայ նոյն Աղէքսանդր կաթուղիկոսն երկու մլաւոր, որ կայ այժմ շէն և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս:

Իսկ ի մերումս ժամանակի ի ՌՄԺԳ. (1764) թուոջն պիղծ խաչափարախցի տաճիկ ոմն, որ Շարաֆ Ալի կոչիւր, գնացեալ արզ արարեալ մեր Հիւսէին Ալի խանին, թէ Քալարու տէր Սարգսի ջրաղացներն մեր է և մեք եմք առեալ զնոսա, այժմ խալի-ֆայն զաւթեալ դինկ է շինեալ: Եւ խանն ևս ի գլուխ նոյնոյ արզային թալղայ արարեալ ի շարն, ճրաւիրեաց զմեզ: Եւ մեք վերոյ գրեցեալ ղապալայիւդ խոստեցաք զնոսա և սուտ ճանաք: Վասն որոյ և շարն վերստին ճուճէթ և խանն վերստին թալղայ տան մեզ, թէ յիրաւի դինկն այն խալիֆայինն է: Եւ զարզայն ևս, զոր տուեալ էին խանին զնա ևս առաք ի ձեռաց նոցա, զորս զոցես յերեսն գրեցեալ ցուցակօքն:

## (327բ)[I] <u>Դինկ Սրբոյ Աթոռոյս ի Կաւակերտ կամ ի Գեօկզումբեթ</u>

Ի Կաւակերտ Բ. (2) եղբարք տաճիկք ղաճար Դալուլար Մահմատ Ալի բէկ և Մահ-մատ ղուլի բէկ անուն աղա գոլով նոյնոյ գեղջն զկէս դինկ են ունեցեալ ի նոյն գեօղն, որոյ կէսն ևս գեօկզումբէթցի Մկրտչին է լեալ և այս Մկրտչի որդիք տէր Արիստակէսն, Յօճաննէսն և Արզում բէկն զկէս դնկին իւրեանց ծախեն Դալուլար Մահմատ աղա բեկի որդի ղաճար Բայրամին ճինգ թումանի ի ՌՃԳ. (1691) թուին տաճկաց: Գի՛տ ղապա-լայն ցուցակաւն:

Յետոյ ի տիրելն օսմանցւոց երկրիս մերում առնուն ի տաճկացս այսոցիկ զայս դինկս երկու բաժինն ևս օսմանցիքն և միրի առնեն: Յետոյ մէլիք Սաճակն Երևանու առնու ի յօսմանցւոց միրիէն դրամով, ժամանակ ինչ ինքն ուտէ և յետոյ տայ Սրբոյ Աթոռոյս՝ յիշատակ ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին, որոյ սաճմանքն են՝ Ջանկու գետն, առուն և ճանդն: Այս է մեր դինկն, որ է ի Կաւակերտ, զոր ևս ունիմք այժմ: Վասն սորայ ճին ղապալայ մի զոյ առ մեզ ի ՌՃԳ. (1691) թուոջն տաճկաց գրեցեալ, որպէս ի վերդ յիշեցաւ: Գի՛տ ցուցակաւն[II]:

## (328բ) <u>Ջիթաճանք Սրբոյ Աթոռոյս ի մեր գեօղս</u>

Ի յայս մեր գեօղս և կից Սրբոյ Աթոռոյս, որ այժմ ի շինիլ պարսպին անկաւ ի ներս, շինէ զերկուս ձիթաճանքս թրծեալ աղիւսով կից իրերաց, Փիլիպպոս կաթուղիկոսն, որոց մինն փլաւ ի մեր ժամանակս, վերստին ի փայտից շինեցաք ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում, որք կան այժմ շէն և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս:

---

[I] Ջգրված՝ 315ա-327ա

[II] Ջգրված՝ 328ա

## (Ձիթահանք Սրբոյ Աթոռոյս ի յՕշական)[I][326]

.................................................................................................................................................

(329ա) Դահին խանայ մի ևս, որ է քունեթի ձիթահանք, ունի Սուրբ Աթոռս ի գեօղս մեր կից Սրբոյ Աթոռոյս ի մէջ Քարվանսարային մերոյ, որ և է շէն և ընդ ձեռամբ Սրբոյ Աթոռոյս:

Դարձեալ ի հարաւակողմն Սրբոյ Աթոռոյս և կից ի վերայ քանքանիս մերոյ ջրաղացին շինեաց տեղապահն մեր Մկրտիչ վարդապետն[327] նորապէս զչղրխատուն մի, այսինքն՝ բամպակահան, որ է Ա. (1) տուն և ի միջին երկու չղրեխ, որք ջրով քանքանին մերոյ հանեն զբամբակս ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում, որ է շէն և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս[II]:



ՄՄ, ձեռ. 978, էջ 164ա

[I] Բ. > Ձիթահանք Սրբոյ Աթոռոյս ի յՕշական
[II] Ջգրված՝ 329բ-330բ

(331ա) **ԳԼՈՒԽ ԺԸ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՋՈՒՐՔՆ, ԱՌՈՒՔՆ ԵՒ ԾՈՎԱԿՔՆ ԵՒ ՈՐՈՅ ՈՐՔԱՆՈՒԹԻՒՔՆ, ԹԷ ՅՈՐՄԷ՞ ՀԵՏԷ, Ո՞ՅՔ ԵՒ Ո՞ՒՐ ԵՒ ԱՅԼՔ ԱՅՍՊԻՍԻՔ

### Ջուրք Սրբոյ Աթոռոյս, որք ի յայս գեօղս մեր

Ի բազում յուրեք ասացաւ յառաջ, թէ ի յանկանիլն երկրիս մերոյ ընդ իշխանութեամբ այլազգեաց և ի փոփոխիլ հայրապետութեան Աթոռոյս ի Սիս, անհետացան ամենայն բարեկարգութիւնք և վայելչութիւնք Աթոռոյս և ինքն ի յամայութեան եկաց ի բազում ժամանակս։ Ապա ի վերանորոգիլն վերստին ողորմութեամբն Աստուծոյ և նստիլն հայրապետին ի սմա ի ժամանակս Գրիգորին Մակուեցւոյ ևս առաւել ի յաջորդիլն Մօսէսի և Փիլիպպոսի երջանիկ կաթողիկոսացն ի ձեռն որոց սկսաւ (թէպէտ ոչ որպէս ի ժամանակս մերոց թագաւորաց) ստանալ զառաջինն կարգ։

Արդ որպէս վասն այլոց ունեցելոցն ասացաւ, նոյնպէս և վասն ջրոցն իմա։ Քանզի յառաջնումն թէ որպիսաբա՞ր է լեալ, ոչ է յայտնի, իսկ ի յաջորդելն տեառն Փիլիպպոսի երջանկին զհայրապետութիւն Սրբոյ Աթոռոյս, յետ բազմաց բարերարութեանցն առնէ սոյն երանելիս և զայս մեծ և գովութեանց արժանի գործս։ Քանզի ի ծոցոյն լեռնէս մերմէ Արագածու յայն կուսէ երեսէն ջուր մի ելեալ մինչև ութն ջրաղացի բաւական, գնացեալ լինիւր ի Շիրակայ վայրն և անտի հոսիւր ի գետն Ախուրեան, որ տանկերէն ասիւր Գեօզալդարայի ջուր։ Այս երանելիս մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ բերեալ զայն ջուրն՝ արկանէ յայս կոյս լերինն և խառնէ ի գետս մեր Քարձաղ, որով ոռոգանի դաշտս մեր[328]։ Եւ յետ այսպէս առնելոյն, ապա արզայ գրէ առ շահ Ապասն երկրորդ, թէ երկիրս այս ի ջրոյ զպակասութիւնս ունէր, ես յայս ինչ լեռնէ զայսքան ջուր, որ յոտար թագաւորութիւն գնայր, բերեալ խառնեցի ի ջուրն դաշտիս, որով մեծ օգտութիւն եղև երկրիս սերմանցն և արքունական հասիցն, սակայն մեզ ոչ ինչ օգուտ, զի երկրացիքս զաւթեալ զջուր գետոյն տանին ի հողս իւրեանց աւելորդաբար և մեզ ոչ տան ըստ բաւականին։ Եւ զայլս այսպիսիս գրէ հանդերձ այլովք բարերարութեամբքն իւրովք։ Գրէ և խանն երկրիս, որ Խոսրով կոչիւր՝ վկայելով զբարերարութեանց երանելւոյն և գրեցելոցն նորին։

Ապա և շահն գրէ յատկապէս զուղամ մի ի վերայ երկրիս սաստիկ հրամանաւ, թէ ջուր Քարձաղ գետոյդ որքան և իցէ յերկուս բաժանեսցի հաւասարապէս, մին բաժինն միւս գեօղորէիցն դաշտիդ և միւս բաժինն էջմիածնի Աթոռոյն և իւր գեղջն լիցի։ Մի ոք իշխեսցէ այսուհետև ելանել յայսմանէ կանօնէ։ Եւ ի գալ հրամանիս այսունրիկ երկրիս խանն յայնմ ժամանակին, որ Խոսրով կոչիւր, և այլք մեծամեծք տաճիկք և հայք՝ հանդերձ Փիլիպպոս կաթուղիկոսիւն, ելեալ գնան ի բանտն[329] գետոյս, ուր բաժանին ջուրք դաշտիս, որ է աւարտն յՕշականու ձորոյն և մուտն նոյնոյ գետոյն ի լայնանիստ դաշտն (331բ) Վաղարշապատու, ի վեր կոյս Հաճիղարայ կոչեցեալ գեղջն, որ և այժմ ասի բանտ և անդ մեծամեծ արձանաքարիւ կալեալ զառաջս գետոյն զբոլոր ջուր նորին յերկուս բաժանեն, զմի բաժինն տան մեր դաշտիս եղելոց Կարփու նահիայ կոչեցելոց գեօղօրէիցն, որ ի յարևմուտս հակեալ ընդ հաասարակ գետազնաց շաւիղն ընթանայ և զմիւս բաժինն, որ է ի յարևելակոյս ի վեր հակեալ յատուկ ճանապարհաւ գայ Սրբոյ Աթոռոյս և սորին կից գեղջս տան։ Այս կանօն յայնմ օրէ տարածեալ հռչակի յերկրոջս Երևանու և արձանանայ յամենեսին ի հայս և ի տաճիկս և է այսպէս մինչև ցայսօր, մինչ զի, եթէ կանանց և մանկանց երկրիս ևս հարցանիցես զորպիսութենէ ջրոյս այսմիկ պատասխանեն, թէ կէսն էջմիածնի է և կէսն երկրիս։ Բայց շահաւոր և օգտակար ռաղամս այս, զոր գրէ շահ Աբասն, որպէս ասացաք, ոչ գիտեմ առ խա՞նն մնայ և ոչ տան Աթոռոյս և այնպէս անհետանայ, թէ յԱթոռո՞ջս կորնչի, զի մեք ոչ տեսաք, թէպէտ շատ որոնեցաք և խնդրեցաք։ Ո՜հ, Ո՜հ, արգելաւ գրիչս և հարկեաց կարճել աստանօր։ Ռաղամս այս գրի ի ՌՂԹ. (1650) թուին տաճկաց։

Որք թէպէտ երբեմն երբեմն տեսաք և բնակիչք տաճիկքն միւս գեօղօրէիցն մոմոեալ ընդ մեզ դաւ յարուցանեն՝ կամելով աւելորդով տանիլ զջուր ի կողմն իւրեանց, սակայն ի հաւաստութենէ ասացելոյ կանօնիս ոչ կարեն այնքան համարձակիլ և յայտնապէս մաքառիլ, որպէս ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԻԱ. (1709) թուոջն տաճկաց ի միւս գեօղօրէիցն ոմանք, կամելով աւելորդով տանիլ զջուրն մեր, էջմիածնի գեօղացիքս ընդ վէհիլին Աթոռոյս արզ գրեն և տան Մէհրալի խանին, որ յայնժամ նստիւր Երևան խան, թէ մենք ի բնէ ռաղամ ունիմք և ամենեքեան գիտեն, որ այս գետոյս կէսն մեր է և կէսն միւս գեօղօրէիցն, այժմ միւս գեօղացիքն կամին աւելի տանիլ զջուրն։ Եւ յետկոյս արզային ևս հինգ երևելի տաճիկք՝ Միրզապ Սէֆի ղուլի, Մուհամատ, Սատղ, Հասան և Մելիք Աւթանդիլ, գրեն զվկայութիւն և կնքեն, թէ մեք գիտեմք և վկայեմք, որ յիրաւի կէս գետոյն գեօղորէիցն է և կէսն էջմիածնի։ Ապա խանն ի գլուխ արզային գրէ հրաման և կնքէ, թէ ոչ ոք ունի հրաման ի ջուր էջմիածնի ձեռնամխիլ։

Սոյնպէս և ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ ի ՌՃԼԴ. (1721) թուին տանկաց առնեն այսպէս լրբութիւն միւս գեօղօրայքն և նոյնպէս մեր գեօղացիքս ընդ վէճիլին Սրբոյ Աթոռոյս արզայ գրեալ տան Ալլահղուլի խանին, որ յայնժամ խան լինի յերևան, ըստ առաջնոյ արզային: Նոյնպէս և յետկոյս արզային Հաճի Հիւսէին անուն ոմն երևելի տանիկ գրէ վկայութիւն և կնքէ, թէ ես եօթն տարի միրապութիւն եմ արարեալ, այն ջրոյն գիտեմ, որ ի բնէ կէսն Էջմիածնի է և կէսն միւս գեօղորէիցն: Նմանապէս և խանն ի գլուխ արզային գրէ հրաման և կնքէ ըստ առաջնոյն:

Եւ դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Պօլսեցւոյ ի ՌՄԴ. (1755) թուոջն մերում և ի ՌՃԿԸ. (1168) թուին տանկաց յարուցին զայս վէճ նոյն գեօղացիքն: Վասն որոյ և յիշեալ կաթուղիկոսն արզ գրէ աղուան Ազատ խանին, որ յայնմ ժամանակին թագաւորապէս իշխէր յարևելեան երկրիս, զորմէ և ի ԺԴ. (14) գլուխն ևս խօսեցաք, և նոյն Ազատ խանն յատկապէս ռաղամ գրէ ի վերայ երկրիս խանին, թէ որպէս որ ի բնէ կանօն է առաջին թագաւորաց հրամանաւն, որոց ռաղամքն ևս զոն ի յէջմիածին, որք հրամայեալ են, զի կէս գետոյդ (332ա) Էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղորէիցն, նոյնպէս և դու պահեա՛ զայն կանօն և մի թողուր ումեք ձեռնամուխ լինիլ ի ջուրս էջմիածնի: Արդ զայսոսիկ երիս թուղթս, զորս գրեցաք, յորս ի մէջ երիցն ևս գրեն և վկայեն, թէ կէս ջրոյն էջմիածնի է և ի թագաւորաց ռաղամ ևս ունին: Դի՛տ ի մի կցեալ և միացուցեալ յերեսն գրեցեալ ցուցակաւն և զգուշութեամբ պահեա, զի շատ պիտանի է վասն ջրոյդ:

(332բ) Դարձեալ ի յառնուլն օսմանցւոց զերկիրս մեր ի ՌՃԼԷ. (1724) թուին տանկաց, որպէս ասացաք ի բազում տեղիս ի նստիլն Ռաջաբ փաշային յերևան, դարձեալ հակառակին միւս գեօղօրայքն ընդ Աթոռոյս վասն ջրոյ գետոյս մերոյ, վասն որոյ և արզ առնեն Աստուածատուր կաթուղիկոսն և գեօղացիքս մեր Ռաջաբ փաշային: Փաշայն ևս զայր ոմն յիւրայնոցն վերակացու կարգեալ հրամայէ գրով բաժանել զջուրն գետոյն ի յերկուս, ըստ առաջնոյ կանօնի, զկէսն էջմիածնի տան և զկէսն միւս քսան գեօղօրէիցն: Այս լինի ի ՌՃԼԸ. (1725) թուին տանկաց:

Դարձեալ յետ երից ամաց ի ՌՃԽԱ. (1728) թուին տանկաց ի ժամանակս Իպրահիմ փաշային և Կարապետ կաթուղիկոսին լինի այս վէճս, նմանապէս և այս փաշայս տայ զգիր մի, թէ որպէս Ռաջաբ փաշայն հրամայեալ է, նոյնպէս և ես հրամայեցի, զի կէս ջրոյդ էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղորէիցն:

Այսպէս և ի ժամանակս Ալի փաշային և Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին լինի այս վէճ և արզ առնեն այս փաշայիս և սա գիր տայ և հրամայէ, թէ որպէս Ռաջաբ և Իպրահիմ փաշայքն հրամայեալ են, նոյնպէս և ես հրամայեմ, զի կէս ջրոյդ էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղօրէիցն ի ՌՃԽէ. (1734) թուին տանկաց, զորս զայսոսիկ երիս գրեանս ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն:

Դարձեալ և ի ժամանակս աղուան խալիլ խանին, որ նստիւր յԵրևան հրամանաւ Ազատ խանին և Աղէքսանդր կաթուղիկոսին Պօլսեցոյ սոյն խալիլ խանս գիր մի տայ Սրբոյ Աթոռոյս, թէ կէս գետոյդ էջմիածնի է և կէսն միւս գեօղօրէիցն, որ գրի ի մեր թիւն ՌՄԳ. (1754): Գի՛տ ցուցակաւն[I]:

(334ա) Դարձեալ յՕշականու գեօղացիքն զվարելահողս ունին ի վերին ծայր դաշտիս մերոյ ի հիւսիսակողմն ի գլուխ Մօլլադուրսուն գեղջն: Եւ այս հողոյս աղագաւ ևս յատուկ ջուր ունին յասացեալ գետոյս ի բանտէն մերմէ բաժանեալ, ապա ի ՌճԼԴ. (1721) թուոջն տանկաց զայս ջուրս յերից բաժանեաց, զմի բաժինն ծախեն Աստուածատուր կաթուղիկոսին իւն թումանի և հինգ հազար դիանի: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ վերոյ յիշեցեալ Մօլլադուրսուն գեօղդ այդ, որ է ի գլուխ գեղջս մերոյ ի հիւսիսակողմս է յետնաշէն, և բնակիչքն աստի և անտի եկամուտ, վասն որոյ ոչ ունի յատուկ ի բնէ ջրոյ առու և ոչ այնքան վարելահող և ոչ այգի: Բայց ի կայ առնուլն բնակչացն ստացեալ են յետոյ զսակաւ ինչ ջուր յատուկ առուիւ, որով և զփոքր ինչ տեղիս սերմանեն և կենցաղավարին, ուպէս և է մինչև զայսօր: Իսկ ի ՌճՁԸ. (1739) թուոջն մերում ի յաւուրս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ ի գեօղէս յայսմանէ տանիկ ոմն բռնացեալ Աղաբէկ անուն ի գլուխ գեղջն նոյնոյ ի հիւսիսակոյս ի ներքոյ հողին յՕշականայ, որ ի վերդ յիշեցաւ, զայգի մի տնկէ և պարսպէ և ի ջրոյս մերմէ առեալ ոռոգէ զնա: Ապա և Ղազար կաթուղիկոսն և գործակալքն և գեօղացիքս մեր քանիցս անգամ ասեն ցնա ի բաց կալ ի յամառութիւնէ, նա ոչ անսա երբէք: Վասն որոյ և Ղազար կաթուղիկոսն յերկրոջս եղեալ ի հայոց և ի տանկաց զվկայութիւնս խնդրեալ՝ զերկուս գիրս շինէ և կնքեցուցանէ, որք վկայեն, թէ գեօղն այն այգի ոչ է ունեցեալ երբէք և յատուկ ջուր ունի սակաւ ինչ, որով զցանքս իւրեանց հազիւ ջրեն, իսկ ի յէջմիածնայ առուէն ոչ ունի ջուր և այգւոյն տեղն յՕշականայ հող է, զորս և ցուցեալ խանին և արզ արարեալ, յորմէ (334բ) և առեալ հրաման զայգին քակէ ի հիմանէ և ի բերանոյ նոյնոյ Աղաբէկին ևս զգիր առնու ի շարումն, որ այլ ոչ ևս շինեսցէ զայգին և էջմիածնի ջրոյն մի՛ լիցի ձեռնամուխ: Գի՛տ զայս երիս գրեանս, երկուքն վկայականք և միւն շարթնամայ Աղաբէկին յերեսնն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի ՌճՁԷ. (1738) և ի ՌճՁԸ. (1739) թիւսն տանկաց, այլև զգիր մի ևս ի յիշեալ Աղաբէկէն առնու, իբր շարթնամայ, թէ մեր ջրոյն և առուին ամենևին չմօտի, այլ նաւ եղեալ ի վերայ առուին մերոյ և նովաւ զջուրն իւրեանց անցուցեալ՝ տանի ի հողս իւրեանց: Գի՛տ և զայս գիրս ցուցակաւն, որ ևս գրի ի ՌճՁԸ. (1739) թուին տանկաց:

---

[I] Զգրված՝ 333աբ

Այլև սոյն գեօղիս մեծ Հաճիղարա կոչեցեալ գեօղացիք ի վերայ մեր ջրոյն գոլով երբեմն ի մեր առուէն զջուրն գողացեալ ի գեօղս իւրեանց տանին: Իսկ Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի արզ առնէ Երևանու խանին և ի բերանոյ հաճիղարացւոցն գիր առնու տանկերէն, թէ եթէ անգամ մի ևս ձեռնամուխ լինիմք ի յէջմիածնի ջուրն տասն և երկու հազար դիան դիւանի տալոյ լինիմք: Գի՛տ զայս ցուցակաւն, որ գրի ի ՌՃՂԷ. (1744) թուին տանկաց[I]:

(336ա) Ի ներքոյ գեղջս մերոյ ի հարաւակողմն ի փոսորակս փոքրիկ բլուր մի գոյ ի հողոյ, որ է մէկ սահմանն մերոյ գեօղիս, որ կոչի Քիւլթափայ: Այս բլուրիս յայն կողմն քանի մի խարապայ քեալավայք և տանց տեղիք գոն դէպ ի հարաւակողմն, յորս երբեմն այրըմլու քեօշարի տանիկք բնակեալք են յաւուրս ձմռան և երբեմն ևս յամառանն, զցանք ևս են արարեալ ի յոմանս տեղիս և անուն գեղջն ևս ըստ անուան բլրին կոչի Քիւլթափայ: Բայց մինչ զյատուկ ջուր և զառու ոչ ունին, զի բնական գեօղատեղ չէ լեալ ի յաւելորդաց ջրոյն մերոյ և ի գետոյն ի յորդ ժամանակն են առեալ: Վասն որոյ առ սոսա ևս է բազմիցս վէճ լեալ Աթոռոյս վասն ջրոյ: Քանզի որ յառաջնումն, իբր զմուրացիկ զողորմութիւնս խնդրելով են կենցաղավարեալ, յետոյ որպէս զսեփական տէր ջրոյ են ձևացուցեալ զինքեանս, որպէս զմոլլադուրսունցիքն: Քանզի ի յայրմլու տանկացն յայսցանէ ոմն, որ Իզբաշի Թաղի կոչի ի ՌՃՂԵ. (1742) թուոջն տանկաց յաւուրս Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ գնացեալ արզ առնէ Երևանու խանին, թէ մեք ի բնէ անտի ի յէջմիածնի ջրոյն զչափաջուր եմք ունեցեալ, որով զցանքս մեր ջրեալ եմք, այժմ էջմիածնցիք ոչ տան մեզ զջուր և արտք մեր ահա չորանան: Եւ խանն զմարդ կարգէ վերահասու լինիլ ուղիղութեանն: Ապա և էջմիածնցիքս զբազում վկայս բերելով՝ զմահսար մի շինեն և կնքեցուցանեն, թէ մեք ի բնէ գիտեմք և վկայեմք, որ քիւլթափեցիք ոչ ունին ջուր ի յէջմիածնի ջրոյն, այլ թէ գետն ունեցեալ է զաւելորդ ջուրս, այնու են կառավարեցեալք: Եւ գնացեալ ի շարն և շարն ևս տեսեալ բազմաց վկայութիւնն, ինքն ևս կնքէ զնոյն մահսարն և որպէս զհուճէթ շինէ, ոչ ինչ առնելով զբանս նոցա: Գտցես զայս գիրս բազմակնիք՝ յերեսն գրեցեալ ցուցակաւն: Եւ ի սոյն թուոջս խանին ևս արզ առնէ նոյն Ղազար կաթուղիկոսն, և խանն ի գլուխ արզային գրէ թամպէհ, թէ քիւլթափեցիք, որովհետև ոչ ունին ջուր ի բնէ, յէջմիածնի ջուրն մի ձեռնամխեսցին: Գի՛տ և զայս գիրս ցուցակաւն:

Ապա ի տեսանելն այնց տանկաց, թէ դաւելով ոչ ինչ կարացին առնել, այլ մանաւանդ սուտ ելին, գան առ Ղազար կաթուղիկոսն և աղաչելով խնդրեն յայնմ ամի զջուր, զի վաստակք իւրեանց մի չորասցին և խոստանան ուխտիւ, զի այլ մի ևս դաւեսցեն վասն ջրոյ: Վասն որոյ և Ղազար կաթուղիկոսն զհուճէթ մի առնու ի նոցանէ

---

[I] Զգրված՝ 335ա-335բ

ձեռամբ շարին, թէ եթէ այսուհետև ևս ջուր խնդրեսցուք ի յէջմիածնէ և կամ դաւ արասցուք՝ յիսուն թուման դիւանի պարտական լինիցիմք: Գտցես և զայս հուենէքս յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ ի տաճկաց ՌՃՂԵ. (1742) թուին: Յետ միջոցաց ինչ անհետացեալ էին բնակիչք տեղւոյն և տեղին այն կայր ամայի և անշէն:

Իսկ ապա ի մերս ժամանակի ի ՌՄԺԵ. (1766) թուոջն մերում եկեալ տաճիկք ոմանք ի նոցանէ կամեցան վերստին զտունս շինել անդ և շէնս արկանել, որք լինելոցք էին մեծ զլխացաւութիւնք: Գնացեալ մեր տեսաք, թէ յիրաւի զի շինէին զտունս ստէպ ստէպ, որք և զմուլք իւրեանց գեղջն ևս խոստացեալ էին Հասան Ալի խանի տղա հանի Միրզային: Իսկ ապա ի տեսանելն մեր զայս գնացաք առ Հիւսէին Ալի խանն մեր և ասացաք նմա զորպէսն: Իսկոյն հրաման արարեալ ի բակել զշինեցեալսն և զինքեանս վարել անտի, որք (336բ) և անհետ եղեալ կորեան ի միջոյ: Քիլթափայ գեղջս այսորիկ զվեց դանկ մուլքն առաք մեք ի Հիւսէին Ալի խանէն մերմէ, զորոյ զորպէսն տե՛ս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Տոանկանոցին:

(337ա) Դարձեալ երանելին Փիլիպպոս կաթուղիկոսն հաներալ է զջուր մի ի յատակէ Սրբոյ Աթոռոյս, որ կոչի քանքան, որ ի յատակէ սրբոյ տաճարին և ընդ յատակաւ պարսպին ի ներքուստ է ելեալ, գնայ դէպ ի սրբոյն Գայիանէի վանքն և անտի ի վայր յարևելակոյս, թեքեալ ելանէ յերեսս հողոյն և գնացեալ յայն կողմունսն՝ ոռոգանէ զտեղեաց արտորայսն մինչև զայսօր, որ է ջուր չափ միոյ ջրաղացի ջրոյ և է յատկապէս Սրբոյ Աթոռոյս: Բայց այս քանքանիս գլուխն էր Սրբոյ Աթոռոյս միջի դրան դռնապանի օտայի առաջն, զի անտի սկսեալ գնայր ընդ արտաքին պարսպաւն դէպ ի սրբոյն Գայիանէի վանքն: Վասն որոյ ոչ ինչ օգնէր միջնոյ պարսպիս յատակի եկեղեց-ւոյն և շրջակայ օտայից զիջութեանն: Վասն որոյ և մեք վերստին ետուք հանել զքան-քանս ի միջոյ ներսի պարսպիս զշրջակայիւք սրբոյ եկեղեցւոյն և զառաջօք յօտայից և այլոց շինուածոց և տարեալ խառնեցաք ի քանքանն նոյն Փիլիպպոս կաթուղիկոսին, որով եղեն երկուք օգտութիւնք. մի, որ յատակ եկեղեցւոյն և բոլոր շինուածք և միաբա-նից օտայքն ցամաքեցան, որք յառաջ տիրեցեալք էին ի զիջութենէ, երկրորդ, զի ջուրքն յորդեցան ի ՌՄԺԷ. (1768) թուոջն մերում:

Դարձեալ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի հանէ զջուր նոյնպէս գետնափոր ի կողմանէ Քարձաղ գետոյն մերոյ ի միջոյ արևմտից և հիւսիսոյ գեղջս մերոյ, որ եկեալ ընդ յատակաւ գեղջս մտանէ ի հիւսիսոյ կուսէ ի Սուրբ Աթոռս ի պարտեզ վեհարանիս և ելանէ յերեսս հողոյն և աստի քարակերտ և կրամած առուիւ բաց ընթացեալ ընդ միջով Ղազարապատին և ելանէ յարտաքն ի պարսպէն և ընթացեալ է հարաւակոյս ի վայրն՝ խառնի ի վերոյ ասացեալ գետնափոր ջրոյն Փիլիպպոս կաթուղիկոսին, որք և ի միասին գնացեալ ոռոգանեն զներքին դաշտն, որ է ի ներքոյ Գայիանէի, մինչև ի

Շորաճեաթ կոչեցեալ տեղիսն, մինչև ի Ղօռուղն և ի մեծ ծովակն Յակոբ կաթուղիկոսին, զորմէ յետոյ ասացուք և զայլ միջոցսն այսոցիկ տեղեաց: Եւ լինէին երկոքեանն, ըստ չափու ջրոյ երկուց ջրաղացից և են յատկապէս Սրբոյ Աթոռոյս: Այս ասացեալ երկրորդիւ ջրովս գրեթէ կեան և կենցաղավարին աթոռայինքս և գեօղականքն, ըստ մեծի մասին: Քանզի յայսմանէ և ճուղ մի բաժանեալ մտանէ ի մեծ[I] պարիսպն միաբանից, որով ոռոգին բոյսք և ծառք պարտպին և լուանին և զովանին միաբանքն հանապազ: Քանզի ի յամռան տօթաշատ ժամանակին ցրտանայ և ի ձմռան ցրտաշատ (337բ) եղանակին ջերմանայ և ոչ սառի երբէք: Նոյնպէս և գեօղականքն և ամենայն անցորդք, զի ի յամռան զցուրտ ջուր ըմպէ և ի ձմռանն տաք, զի մինչ ամենայն ջուրք սառին և պակասին, սա արբուցանէ զամենեսեան: Ի վերայ այսորիկ ջրոյս շինեաց այս երանելիս ի հարաւակոյս, մերձ Սրբոյ Աթոռոյս զջրաղացն, որ Քանքանի ջրաղաց ասի, զոր ի վերդ ասացաք ի ճառ ջրաղացացն, որ և գոյ չէն մինչև ցայսօր և բանի ի յամառն և ի ձմեռն, զի ոչ սառի ջուրս այս, որպէս ասացաք:

Նոյնպէս և ի վերայ այս ջրոյս շինեցաւ կից սոյնոյ ջրաղացիս բամբակահանն, այսինքն՝ զչղրեղատունն ի մերումս ժամանակի, որպէս ասացաք ի ճառս ջրաղացաց, որ բանի անդադար և հանէ զբամբակ՝ յամառն և ի ձմեռն: Բայց այսոքիկ վերոյ յիշեցելոց երկոցունց ջրոցս առուքն, որք են գետնափորք և խորինք ի յատակս հողոյ, երբեմն երբեմն թէպէտ էին նորոգեցեալք ի յառաջնոց հայրապետացն, սակայն ի մերումս ժամանակի գոլով կարի հնացեալք և փլփլէցեալք և ի բազում տեղիս ևս լցեալք հողով, եղեն ի ծայրէ ի ծայր նորոգեցեալք և հաստատնապէս շինեալք քարիւ, թէ առուքն և թէ բերանք հորիցն ամենեցունց:

(338ա) Դարձեալ զգետնափոր ջուր մի ևս, այսինքն՝ զՔանքան հանէ սոյն երանելի Յակոբ կաթուղիկոսս ի ներքոյ ի հարաւակոյսն Սրբոյ Աթոռոյս, որոյ ակն է նոյնպէս ի նոյնոյ Քարձաղ գետոյս մերմէ, հանդէպ Ալիբէքլու կոչեցեալ գեղջն, յորմէ ելեալ ընթանայ զառ ի վայր ի հարաւակոյս ի փոսորակ արտորայսն մեր, որք Փոսի հող կոչին և ի ԺԵ. (15)՝ ճառն արտորէից Հերանանկ գրեցան և ոռոգանէ զնոսա: Յորոյ վերայ զդինկ մի ևս շինեաց նոյն երանելին, որպէս ասացաք ի գլուխն ջրաղացից: Շինէ նա ևս զփոքրիկ ծօվակ մի ի վերայ սոյն ջրոյս, զորմէ յետոյ ասացուք: Բայց այժմ աւերք են և խափանեցեալք ի վաղուց հետէ ջուրն, դինկն և ծովակն: Իսկ ի ՌՄԺէ. (1768) թուոջն մերում նոր ի նորոյ նորոգեցաք մեք զՔանքանս զայս և հանաք զջուրն և հաստատնապէս շինեցուցաք զբերանս հորիցն և զջրագնաց առուն՝ քարիւ և կրով:

[I] Բ. մերձ

(338բ) **<u>Ծովակք և լիճք ջրոց, այսինքն՝ գեօլ Սրբոյ Աթոռոյ, որք ի յայս գեօղս մեր</u>**

Վերոյ յիշեալ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի՝ բազմաշխատն և յոգնաշահն Սրբոյ Աթոռոյ, զկնի երանելոյն Փիլիպպոսի, շինէ նախապէս զմեծ ծովակն, որ է ի վերին կողմն գեղջս մերոյ ի հիւսիսակոյս ի գլուխ անդաստանաց գեօղիս և հանդէպ Մօլլադուրունն կոչեցեալ գեղջն, որ կոչի ռամկօրէն Քարաքթի գեօլ:

Երկու մտօք շինէ այս երանելիս զայս ծօվակս նախ, զի ի յանձրևաց և ի ձեանց և ի գետոյս մերմէ ևս (ի յորդ ժամանակին, յորմէ և զյատուկ առու ևս ունի) առեալ զջուրս լճանիցի և յետոյ ի հարկաւոր ժամանակին սակաւ առ սակաւ ոռոգանիցէ զառ ի վայր դաշտս մեր երկրորդապէս, զի կոպար և սահման լիցի մէջ մեր հողոց և մօլլադուրունցւոց, զի մի ոտն ածեալ ձեռն արկիցեն ի հողս մեր վասն մերձաւորութեանն, որպէս երբեմն արարեալ են: Արդ ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ այդ մօլլադուրունցիքդ, գոլով տաճիկք, զօրացեալք կամին զաւթել զայս ծովակս ասելով, թէ տեղին այն մեր է: Եւ աթոռայինքս ընդ գեօղականացս արզ առնեն Երևանու խանին և խանն զմարդ ոմն կարգէ յիւրոցն, զի վերահասու լիցի ճշմարտութեանն, որ և եկեալ ի գեօղօրայս ի բազմաց տաճկաց և ի հայոց զվկայութիւնն լուեալ զբազմակնիք մահուար մի շինէ, որք գրեն և կնքեն, թէ տեղին այն էջմիածնի է և զծովակն զայն Յակոբ կաթուղիկոսն է շինեալ: Զայս վկայական գիրս գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն: Այժմ աւեր է ի վաղուց հետէ, յորում երբեմն զբօստան առնեմք:

(339ա) Երկրորդապէս, շինէ նոյն երանելին զփոքրիկ ծովակ մի ևս ի վայր քան զնա ի գլուխ այգեստանեացն գեղջս մերոյ ի յարևելակոյս վասն վերնոյ ասացեալ նախկնոյ պատճառին, որ ևս է աւեր իսպառ:

Երրորդապէս, շինէ նոյն երանելին զծովակ մի ևս ի վայր, քան զնա ի վեր կոյս սրբոյն Հռիփսիմէի վանիցն յարևելակողմն ի ներքոյ Երևանու ճանապարհին, որ ևս էր աւեր ի վաղուց հետէ, զոր մեք նորոգեցաք ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում:

Չորրորդապէս, շինէ սոյն երանելիս զմեծ ծովակ մի ևս լայնարձակ և պարսպաւոր ծառոտ և գեղեցկավայել ի վայր, քան զսոսա ի ներքոյ գեղջս մերոյ ի մէջ արևելից և հարաւոյ հանդէպ Շօրլու կոչեցեալ գեղջն և Ղօռուղ կոչեցելոյն: Առ յոր մտանեն ջուրք երկուց քանքանիցն Փիլիպպոս կաթուղիկոսին և սոյնոյ երանելոյս և այլ ջուրք աստի և անտի, զորմէ ասացեալ եմք ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէիցն: Զայս ծովակս խնդրեաց լէկզի Սէֆի ղուլի խանն ի սոյն երանելոյս և ի յոչ տալն սորա՝ չարացաւ յիշեալ խանն և բազում չարիս գործեաց ընդ կաթուղիկոսին, որպէս յիշեցաք ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէիցն, և վերջապէս կաթուղիկոսն գաղտ ելեալ գնաց առ շահ Սուլէյմանն և արզ արար զարարմունս խանին: Եւ բարկացեալ շահին զմարդ առաքէ յԵրևան, մինչ նստէր խանն տամբք իւրովք ի Դրխբուլաղ կոչեցեալ տեղոջն ի զբօսանս ի վերայ եկեալ մարդկանց շահին կալեալ զխանն կապեն և գնացեալ

յԵրևան զբովանդակ ինչսն զաւթեն և զխանն կորուսանեն և զոր ինչ ունի տանին առ շահն: Եւ ապա ի տեղի սոյն խանիս գայ յԵրևան խան վրացի Սէֆի խանն, որ զՍէֆիապատ կոչեցեալ ջուրն բերէ ի Սև ջրոյն և խէյրաթ առնէ, որպէս ասացաւ ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէից: Այժմ է աւեր ասացեալ լինս, միայն ի տեղիս տեղիս (339բ) որմունքն և հիմնատեղիքն կան և յայտնապէս երևին:

Հինգերորդապէս, սոյն երանելի Յակոբ կաթողիկոսս Ջուղայեցի ի հանելն զներքի ֆանֆանն, որ ի վայրդ ի հարաւակոյսն մեր, որպէս ասացաւ ի վերդ, որոյ ջրովն ոռոգանէին Ներքի փոքի կոչեցեալ արտորայքն, շինէ և զփոքրիկ լին մի ի ներքոյ ծայրին նոյնոյ ֆանֆանին, որ կայ այժմ և է վարելահող, որպէս տեսանես ի վերայ ճանապարհին ի գնալդ ի փոքի արտորայսն մեր ի Քիւլթափայն:

(340ա) Դարձեալ ի ժամանակս Մշեցի Աբրահամ կաթողիկոսին մերոյ և յիշխանութեանն օսմանցւոց մինչ առեալ զերկիրս ի պարսից տիրէին, Պետրոս վարդապետն, որ մականուամբ Քիւթուր կոչիւր, որ էր Հօռմկլայեցի և Սրբոյ Աթոռոյս միաբան և աթոռակալ, կամեցեալ է ի Մեծամօր կոչեցեալ Սև ջուր գետոյն ջուր բերել ի յարտորայս գեղջս մերոյ և ոչ է լեալ հնար, որոյ նշանն և առուատեղն գոյ արդէն, որ է սկսեալ ի վերին ծայրից Սև ջրոյն: Բայց յայնմ միջոցին, մինչ կամեցեալ են հանել զառուն ի բերել և ի հասուցանել ի գեօղս մեր, ոմանք գեօղորայք, ընդ յորս անցանիլ պարտ էր ասացեալ առուդ, դաւ են յարուցեալ ասելով, թէ ոչ թողումք, զի ընդ հողս մեր անցանիցէ ջուրդ այդ և առուդ: Ուստի և գնացեալ ի շարն և շարն վճռէ, թէ ջուրդ այդ որքան և գայցէ երկու բաժին լիցի, մին բաժինն բերողին և միւսն այնց գեօղորէիցն, ընդ որովք անցանի առուն և ջուրդ այդ: Գի՛տ զայս հուճէթս յԵրեսն գրեցեալ ցուցակւոյն: Նմանապէս և գիր մի ևս Իպրահիմ փաշայն, որ յաւուրսն յայնոսիկ իշխօղ է լեալ Երևանու տայ, զոր ևս գտցես ցուցակւոյն: Այս լինի ի ՌՃԽԵ. (1145) թուին տաճկաց և ի ՌՃՁԱ. (1732) թուոջն մերում: Սակայն ոչ են կարացել ի բերել զջուրն, մնացեալ է անկատար:

(340բ) Դարձեալ երևանցի Բուրճալի բէկ տաճիկ ոմն ի Հրաստան գետոյն, այսինքն՝ Զանկի գետոյն, ի ներքոյ կուսէն ջրաղացացն Նորագեղու և Սարվանլար կոչեցեալ գեղջն, ծակեալ զլեառն ջուր հանէ և ընդ յատակաւ երկրի բերէ, մինչև ի փոքր ձորակն հասուցանէ, յորոյ հիւսիսակողմն է Իւչթափայ կոչեցեալ բլուրներն, հարաւակողմն է Ղարաթափայ կոչեցեալ Քարաբլուրն, որ է յայնկոյս գետոյն և յարևմտակողմն, ուր աւարտի տաճկի բերեալ առուն, Գեօկֆումբէթ կոչեցեալ գեօղն: Մինչև աստ ջուրս այս ի ներքոյ երկրի գայ և աստ ի ձորակոջս ելանէ ի յԵրեսս և երևի: Եւ դիտաւորութիւն տաճկիս այսորիկ այն է լեալ, զի զջուրս զայս տարեալ ի վայր դաշտն Կաւակերտու և յայն կողմունսն՝ ոռոգանիցէ:

Ապա ի սատկիլ[I] սոյն Բուրճալի բէկ տանկիս միրասխորէ նորին խտմաթ ղուլի բէկն, Մահմատ ղուլի բէկն և Թամուր Ղայա բէկն ծախեն զայս ջուր Նահապետ կաթուղիկոսին յիսուն թումանի, որոյ զղապալայն գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ գրի ի թուին տանկաց ՌՃԽԷ. (1698), և Նահապետ կաթուղիկոսն ի յառնուլն զայս ջուրս ի ձորակէն յայնմանէ, որ ասացաւ, սկիզբն արարեալ բերէ ի վերին կողմամբն ընդ գլխովն Փարաքարու, և իջուցանէ ի դաշտ գեօղիս մերոյ ընդ հիւսիսակողմամբն Երևանու ճանապարհին, որ առ մեզ գայ, որոյ առուն բաց գայ մինչև ի Փոքր բլուրներն, որ հանդէպ Հռիփսիմէի վանքին՝ դէպ ի հիւսիսակողմն յարևելս և յայն տեղիսն ընդ յատակաւ հողոյն գայ ընդ միջոց ինչ, որոյ հորոց բերանքն գոն յայտնի մինչև զայսօր, որպէս հորք քանքանի և զջուրս զայս ի կիր արկանէ Սուրբ Աթոռս ի յայգիս և յարտորայս, մինչև ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին: Իսկ ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին յազգականաց վերոյ յիշեալ տանկացն ոմանք ձեռնամուխ լինին ի ջուրս յայս և ի վերայ ջրոյն զբօստանս և զայլ ինչս սերմանեն և զջուրն տանին ի յայնս և զայլս այսպիսիս և ոչ թողուն զջուրն ամբողջ գալ յայս գեօղ: Վասն որոյ և Աստուածատուր կաթուղիկոսն արզ գրէ Երևանու խանին, և խանն առաքէ առ շարն: Եւ շարն տեսեալ զհաստատուն ղապալայս մեր, զոր առեալ եմք զջուրն ի վերոյ գրեցեալ տանկացն գրէ յետկոյս արզային և կնքէ՝ սաստելով այնց տանկացն, զի մի ևս ձեռնամխեսցեն ի յայս ջուր: Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ գրի ի տանկաց ՌՃԿԹ. (1716) թուին: Արդ առուս այս յօրէն յայնմանէ չգիտեմ յանհոգութենէ կաթուղիկոսացն, եթէ յայլ ինչ պատճառէ խափանեալ, կայ մինչև ցայսօր[II]:

(343ա) **Ջուր ի Դաւրէժ**

Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի ի Դաւրէժ ի Հաճի Մահմատ Բաղրի որդւոյն ի Մուհամատ Մուսունէն երկու շաբաթէն ջուր առնու վեց թումանի ի ՌՃԿԱ. (1712) թուին տանկաց, որոյ անունն Սէյիդ Միրիմ Քահրիզի կոչի: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ նոյն Աղէքսանդր կաթուղիկոսն ի Մահմատ շէֆի տանկէ միոջէ առնու ի Թաւրէզ ի նոյն Սէյիդ Միրիմի Քահրէզ կոչեցեալ ջրոյն երկու շաբաթէն ջուր հինգ թումանի և ինն հազար դիանի ի թուին տանկաց ՌՃԿԵ. (1713)՝ Մանուկի որդի Աբրահամին ձեռօքն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

---

[I] Բ. սատակել

[II] Ջգրված՝ 341ա-342բ

Դարձեալ ի սոյն թուոջս առնու սոյն կաթուղիկոսս ի Դաւրէժ ի Սաշա խանում տանկէ մէկ շաբաթէն ջուր երեք թումանի և երեք հազար դիանի ի ձեռն Առաքել կոչեցեալոյ ումեմն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ նոյն Աղէքսանդր կաթուղիկոսն ի Դաւրէժ ի Մահմատ Ալի տանկի որդի Քեալբալի Մահմատ Իւսուֆէն առնու ի նոյն Բահրիզի ջրոյն ... շաբաթէն ջուր եօթն թումանի ի ՌՃԿԳ. (1714) թուին տանկաց: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

(343բ) Դարձեալ ի Դաւրէժ Հանի Ռահապ Ալու որդի Մահմատ Ռահիմն ի նոյն վերոյ յիշեալ ջրոյն ծախէ Սրբոյ Աթոռոյս ձեռամբ թարվէզեցի տէր Ներսիսին ի ԺԴ. (14) յօրէն մէկ աւուր ջուր վեց թումանի ի ՌՃԼԲ. (1719) թուին տանկաց: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ ի սոյն թուոջս դաւրէժեցի խօճա Բարսեղ ոմն ծախէ Սրբոյ Աթոռոյս ի սոյն ջրոյն երեք շաբաթէն ջուր ինն թումանի ձեռամբ նոյն տէր Ներսիսին Դաւրիժեցւոյ: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

Յետին երկուքս ի ժամանակս Աստուածատուր կաթուղիկոսին լինին: Զայս վեց ղալամ[330] ջուրս, զոր առնուն լուսահոգիքն վասն այգեաց մերոց առնուն, զորս ունեցեալ եմք ի Դաւրէժ[I]:

[I] Զգրված՝ 344աբ

## (345ա) **ԳԼՈՒԽ ԺԹ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՏՈՒՆՔՆ, ԽԱՆՈՒԹՔՆ, ՃՈՐՏՔՆ ԵՒ ԱՅԼՔ ԱՅՍՊԻՍԻՔ: ԹԷ Ո՞ՒՐ ԵՒ ՈՐՊԷ՞Ս, ՏԵ՛Ս[I] Ի ՍՏՈՐԵՒԴ

Գեօղս այս Վաղարշապատ, որ է կից Սրբոյ Աթոռոյս, բանիցս անգամ տեղափոխեցեալ է ոչ ըստ բոլորին, այլ ըստ մասին, զի տունք ոմանք ի տեղւոջէ ի տեղի են փոխեցեալք, ոմանք նորապէս շինեալք և շատք ևս պակասեալք, այս երբեմն ի բերմանէ ժամանակին է լեալ և երբեմն ըստ մեծի մասին ի հարկեցմանէ հայրապետացն Սրբոյ Աթոռոյս: Քանզի երանելիքն մեր Մօսէս և Փիլիպպոս և այլք զկնի նոցա կաթուղիկոսքն ի կանօնաւորելն, ի պայծառացուցանելն և ի հաստացուցանելն զՍուրբ Աթոռս, որպէս ասացաւ բազմիցս և մանաւանդ ի լայնացուցանելն զսա շինուածովք, առեալ են ի չորից կողմանց ի գեօղէն մերմէ զտեղիս, զորս և արարեալ են զօմատեղս, ձիատեղս և զայլս անասնատեղիս, այլև զբուրաստանս, պարտէզս, կալատեղս, զյատուկ պարիսպս և բակս արտաքոյ պարսպի տաճարիս, որպէս տեսանես, որոց տեղեաց[II] ոչ գոյր ղապալայ ինչ, զի գրէաք: Այլ միայն զերկուս հայերէն ղապալայս գտաք, որ գրին ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին, որոց մին է մէկ ձեռք տուն իւր պարագայիւքն, զոր Սահրատի որդի Խաչատուրն ծախէ Սրբոյն Աթոռոյս երեք թումանի և երեսուն սօմար ցորենոյ ի ՌՃԽԲ. (1693) թուոջն մերում, որ է մեր բաղանեաց տեղն և միւսն ի նոյն կաթուղիկոսի ժամանակն Մարտիրոսի որդիք Աստուածատուրն և Սափարն[III] ծախեն մէկ տուն և մէկ շարտախ մէկ թումանի ի ՌՃԽԴ. (1695) թուոջն մերում, որ է ի մէջ Ղազարապատին: Ջտաճկերէն ղապալայ մի ևս Անտոնի որդիք Աւետիքն, Մկրտիչն և Յովանէսն տան՝ ծախելով Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ քսան և հինգ հազար դիանի հինգ տուն ի տաճկաց թուին ՌՃԻԵ. (1713), որոյ կողմունքն գրին Սրբոյ Աթոռոյս քանքանի ջրաղացն, ճանապարհն և գերեզմանատունն, որ է մեր քանքանի ներքոյ եղեալ տունն, յորում նստիւր օթարն և մեք քակեցաք: Գի՛տ զայսոսիկ երիս ղապալայսս յերեսն գրեցեալ ցուցակօքն:

Եւ ոչ միայն այսք, այլև որպէս ասացաք զշատս ևս առեալ են, զորն դրամով, զորն հոգեբաժին և այլն այլով կերպիւ և քակեալ են վասն հարկաւորութեանն Սրբոյ

---

[I] Բ. > տես

[II] Բ. Որոց տեղեաց որոյ

[III] Բ. Սափատն

Աթոռոյս և կամ զայլ ինչ են շինեալ: Բայց, որովհետև, ըստ պատահման տեղեացն էին այնք շինուածք, այսինքն՝ գօմքն, ձիատունքն, ջորատունքն, իշատունքն, ուղտատունքն, նախրատունքն և այլք այսպիսիք, վասն որոյ էին անյարմարք, ցան և ցիր, ի միմեանց հեռիք և մանաւանդ անպարիսպք և երկիւղալիք: Իսկ ի մերս ժամանակի յաջողմամբն Աստուծոյ, մինչ շինեցաք զբոլոր պարիսպն արտաքոյ շուրջանակի, որպէս ասացաւ յայլում տեղւոջ, զվերոյ յիշեցեալ տեղիսդ քակեցաք զամենայնն և ի մէջ պարսպին արկեալ կից իրերաց շինեցաք նորապէս ի մէջ միոյ յատուկ պարսպի իւրեանց պարագայիւքն, որք են ի յարևելեան կողմն Սրբոյ Աթոռոյս:

Այլև, մինչ գեօղս մեր էր հուպ և յարակից Սրբոյ[I] Աթոռոյս և ցան և ցիր զշուրջ կողմամբքն սորին, որով և նսեմանայր գեղեցկութիւն պարսպին, զոր շինեցաք շուրջանակի հաստատուն բրքոք և հրացանատեղեօք, յորոց երկիւղ և վտանք ևս ծնանէին Սրբոյ Աթոռոյս, վասն որոյ զգեօղս մեր, ըստ մեծի մասին, այսինքն՝ (345բ) զհարաւակողմն և զյարևմտակողմն ըստ բոլորին և ի հիւսիսակողմէն, ըստ մասին, իբր հրացանի միոյ ձգման չափ քակեցաք իսպառ հանդերձ եկեղեցեաւն, զոր Նահապետ կաթուղիկոսն էր շինեալ, այն ևս էր հնացեալ և փլփլեցեալ: Եւ հեռացուցեալ ի պարսպէս ի հիւսիսակողմն շինեցաք վերստին ի միում կարգի ծախիւք Սրբոյ Աթոռոյս զտունսն և զեկեղեցին վայելուչ, քան զյառաջինն, զորոց յայլում տեղւոջ ասացեալ եմք: Վասն որոյ գրեթէ տունքս գեղջս մերոյ, ըստ մեծի մասին են Սրբոյ Աթոռոյս: Գործեցաւ այս ի թուոջն մերում ի ՌՄԺԶ. (1767)[II]:

(348ա) <u>**Տունք Սրբոյ Աթոռոյս ի յՕշական գեօղն**</u>

Ի յՕշական գեօղս յայս, մինչ ունի Սուրբ Աթոռս զքանիս այգիս և է մլքատու գեօղ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաք, վասն որոյ ունի և զձեռք մի տունս յատուկ պարսպով ներքնատամբ, վերնատամբ, գինատամբ, ձիատամբ, դարմանատամբ և այլովք հարկաւորօք, որոց կողմունքն են ...[III]

(349ա) <u>**Տունք Սրբոյ Աթոռոյս ի յԵրևան՝ ի Ջորագեօղ**</u>

Ի գեօղս յայս Ջորագեօղ, որ կոչի Խնկաձոր, ունի Սուրբ Աթոռս զմեծ, պարսպապատ տուն մի իւր սարօքն, յորում գոն երկու եկեղեցիք և ... օտայք, ձիատունք, աշխանայս և այլովք պարագայիւք: Եւ նոյն մեծ պարիսպն յերկուս բաժանեցեալ միջնահատ որմով, մին որ ի կողմն հիւսիսոյ միով եկեղեցեաւն և այլովք հարկաւոր տամբք է հասարակ միաբանից տեղի և անասնաց և այլոց այսպիսեաց, յորում եղեալ յեկեղե-

---

I Բ. > սրբոյ
II Զգրված՝ 346ա-347բ
III Զգրված՝ 348բ

ցին զան ժողովուրդք օտարականք և վաճառականք՝ ի յաղօթել: Յորում և կացուցանի սևագլուխ մի վերակացու և կառավարիչ բանի միաբանիւք ի հայրապետէն ի պաշտել զկարգն եկեղեցական և ի շինութեան պահել: Եւ միւսն, որ ի հարաւակողմն միով եկեղեցեաւն է յատուկ տեղի հայրապետին, զի ի գնալն կաթուղիկոսին ի յԵրևան, անդ ագանի իւրովք սպասաւորօքն, որ և ունի զյատուկ պարիսպս, յատուկ դրամբ և արգելեալ ի հասարակութենէ: Այս երկոքեանս ևս, որք գոն ի մէջ միոյ մեծի պարսպի և են շէն և ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս, կոչին միով անուամբ Ջորագեղու անապատ[331], որ է հանդէպ բերթին Երևանու ի հիւսիսակոյսն ի բարձրահայեաց գագաթանն մեծախոր ձորոյն, ուր անցանի գետն Հրաստան: Տեղիս այս լեալ է յառաջագոյն տուն և այգեկերպ մեծ բաղչայ ումեմն ձորագեղցւոյ Բայընդուր կոչեցելոյ Համազազեան, վասն որոյ կոչի Համազազպենց տներ, որոյ որդի Ասլանն ծախէ կարնեցի տէր Սուքիասի որդի մահտեսի Ղևոնդին քառասուն թումանի ի ՌՂԴ. (1682) թուին տանկաց, զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն: Յորում գրի մէկ այգի, յորոյ մէջն երկու թանապի, երկու այվան, մի աշխանայ, մէկ մառան, մէկ թաւիլայ, մէկ մարաք, մէկ զերզամբի և մէկ ոտից ճանապարհ: Եւ սահմանք սորին գրին Հրաստան գետն, Հաճի Նիազի այգին, Ջորագեղու այգեաց բուշէն և Ջորագեղու եկեղեցին: Իսկ ի սոյն թուոջս նոյն մահտեսի Ղևոնդն ծախէ զայս տեղիս բոլոր պարագայիւքն Եղիազար կաթուղիկոսին ևս քառասուն թումանի, զորոյ զղապալայն ևս գի՛տ ցուցակաւն: Յորում գրի տասն տուն և մէկ մեծ բաղչայ, որք են նոյն վերոյ ասացեալքդ: Եւ սահմանքն ևս նոյն վերոյ ասացեալքդ գրին: Այդ վերոյ ասացեալ ղապալայիցդ մէկ մէկ սաւատ ևս գոն, զորս ևս գի՛տ ցուցակօքն: Եւ բան զայս իրակութիւնս, չորս ամաւ յառաջ վերոյ յիշեցեալ Բայընդուրի որդի Ասլանի եղբայր Փիրին զիւր բաժին տունն և բաղչայն ծախէ իւր եղբայր Ասլանին երեք թումանի ի ՌՂ. (1679) թուին տանկաց, որոյ զղապալայն ևս գի՛տ ցուցակաւն, զի յառնուլն Եղիազար կաթուղիկոսին զայս բոլոր տեղիս, զորս ասացաք, առնու նա և զհին ղապալայսն այս տեղոյս ի Ղևոնդէն, զորս Ղևոնդն առեալ էր ի Ասլանէն: Այլև բան զԵղիազար կաթուղիկոսի առնուլն զայս տներս յիսուն և հինգ ամ յառաջ զայս տներս Աւաք և Շահում կոչեցեալ Բ. (2) եղբարք ծախեն ումեմն Ալիբէկ կոչեցելոյ տանկի ի ՌԼԹ. (1039) թուին տանկաց ԻԳ. (23) թումանի, որոյ ղապալայն գոյ:

Եւ յետ երկուց ամաց ի ՌԽԱ. (1631) թուին տանկաց նոյն Ալիբէկն ծախէ Տէրտէրենց կոչեցելոյ խօճա Սաֆարի որդի խօճա Միքայէլին յիսուն և հինգ թումանի, որոյ ղապալայն ևս գոյ[332]: Այս երկու ղապալայքս եկեալ հասանին ի ձեռս սոյն Միքայէլի եղբայր խօճա Պետրոսի թոռն խօճա Աղամիրիին: Ապա յորժամ Եղիազար կաթուղիկոսն առնու զայս տներս ի ՌՂԴ. (1683) թուին տանկաց ի Համազասպեան Բայընդուրի որդի Ասլանէն, ի ձեռն մահտեսի Ղևոնդին քառասուն թումանի, որպէս ասացաք

երկուք հաստատուն (349բ) ղապալայիւք, ոչ եղև յայտնի մեզ, թէ Աղամիրին այն վերոյ յիշեցեալ դա՞ւ յարուցանէ յայնմ միջոցին և զբան ինչ առնու ի յԵղիազար կաթուղիկոսէն կամ թէ ինքն Եղիազար կաթուղիկոսն տեղեկացեալ, թէ այս տանց հին ղապալայք զոն ի ձեռս Աղամիրին, որպիսի կերպիւ և իցէ զերկուս հին ղապալայսս ևս առնու ի յԱղամիրիէն: Մին Աւագ և Շահում կոչեցեալ եղբարքն ծախեն նախապէս Ալիբէկ տանկի միոյ ի ՌԼԹ. (1629) թուին տանկաց և միւսն նոյն Ալիբէկն ծախէ ի ՌԽԱ. (1631) թուին տանկաց սոյն Աղամիրիս պապ խօճա Միքայէլին, որպէս ի վերդ ասացաւ և ի սոյն յետին ղապալայիս յետ կոյսն գրէ սոյն Աղամիրիս, թէ որովհետև իմ նախնիքն զայս տներս վախմ էին արարեալ Սրբոյ Էջմիածնի և ես զայս ղապալայս ետու և վախմ արարի: Այս լինի ի ՌՃԼԹ. (1139) թուին տանկաց և ի մեր թուոջն ի ՌՃԲ. (1690): Գտցես զայսոսիկ ղապալայքս ևս յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք եղեն այս մեր անապատիս Ջորագեղոյ հինգ ղապալայ և երկու սուրէթ, որք զոն այժմ ի Սուրբ Աթոռոջս:

Այլև սոյն Եղիազար կաթուղիկոսս առնու ի կից սոյնոյ տեղւոյս զտուն մի շէն և զտեղի ևս միոյ տան երեք թումանի ի ՌՃԲ. (1690) թուին տանկաց ի Ղազարի որդի Խաչատուրէն, որոյ կողմունքն գրին ծախողի տունն և Եղիազար կաթուղիկոսի վերոյ ասացեալ առած տներն, զի՛տ զղապալայն ցուցակաւն, զոր ևս ի յառնուլն խառնէ ընդ վերոյ յիշեալ տեղիսն:

Արդ յորժամ վերոյ յիշեալ Եղիազար կաթուղիկոսն առնու այսպէս հաստատուն ղապալայիւք զայսքան տներս և այն մեծ բաղչայիւն, ապա նորապէս ի մէջ միոյ հաստատուն պարսպի առնու և զտունսն զամենայն քակեալ զքանի մի օտայս շինէ վասն վանականաց և զփոքրիկ եկեղեցի մի ևս շինէ յանուն սրբոյն Յակոբայ ի հիւսիսակողմն սոյն տեղւոյս, ընդ նոսին և զայլ պարագայսն: Եւ ապա ի նոյն պարսպէն բաժանեալ յատուկ որմով և պարսպաւ ի հարաւակողմն շինէ ի նմա զփոքրիկ եկեղեցի մի ևս յանուն սրբոյն Գէորգայ և զքանի օտայս ևս յաղագս յատուկ հայրապետին և իւրոցն, որպէս ի վերդ ասացաք: Յետոյ Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի զհայրապետանիստ տեղիսն քակեալ մեծացոյց և վայելչացոյց: Զկնի նորա Յակոբ կաթուղիկոսն Շամախեցի և ևս վայելչացոյց և յաւել զշինուածս, թէ՛ ի հայրապետարանումն և թէ՛ ի միւս հասարակ պարսպոջն և արտաքուստ կուսէ հայրապետարանին, պարսպեաց լաւապէս և ամրացոյց, որք զոն այժմ ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս, թէ ներսի պարիսպն և թէ արտաքինն[I]:

(351ա) Եւ մինչ Եղիազար կաթուղիկոսն առեալ զայս տեղիս շինէ վանք և տեղիք իւրեան և միաբանիցն, ապա ստորև սոյնոյ ի ձորոջն, եղեալ բնակիչքն, որոց տունքն ի ներքոյ սոյնոյ տեղւոյս զոն ոմանք հայք և ոմանք այլազգիք, սկսանին խօսիլ և տրտնջալ, որպէս օրէն է աշխարհի, զի ի ներքոյ եղեալքն ի հարկէ ի վերոյ եղելոցն

[I] Ջգրված՝ 350աբ

խռտնին և աղմուկս յարուցանեն: Վասն որոյ և ի նստիլ Նահապետ կաթուղիկոսին առնու և զայն ներքին տներն ի Թումանենց Յարութիւնի որդի Աղամալէն երեք թումանի ի ՌՃԳ. (1691) թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ ներքին կողմն, Ձորագեղու քուչէն, վերի կողմն քարաբն, յորոց գլուխն է մեր վերոյ յիշեալ տներն, մի կողմն Պետրոսենց և միւս կողմն՝ Մինասենց տներն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն, զոր և յառնույն քակեալ ամայի առնէ, զի մի ոք ևս բնակեսցի: Իսկ ի մերումս ժամանակի ի ՌՃՀԸ. (1178) թուին տաճկաց և ի մեր ՌՄԺԳ. (1764) թուոջն ձորագեղցի Զուլլունենց Յօհանի որդի Նէրսէսն ստիպեալ ի քաղցէն դաւ յարոյց վասն սոյնոյ տան տեղւոյն, թէ իմ է, և մեք ի ձեռն չարին ոչ ինչ արարեալ զդաւ նորին, իբր ողորմութիւն ետուք նմա մէկ թուման և ի գլուխ նոյնոյ ղապալային գրեցուցաք չարին ի բերանոյ նորին զճունճէթ մի, թէ փուչ է իմ դաւիս և այժմ կողմունք նոյնոյ տեղւոյն են տաճիկ բազազ աղա Հիւսէինի տունն, Ազիզի խարապայ տունն, քարափն և քուչէն[I]:

(352ա) Դարձեալ ի Ձորագեօղ ի Քարափագլուխ մահլայոջն ի մերձ մեր վերոյ յիշեալ անապատի մեծ դրանն, ձորագեղցի Յօհանիսի որդի Յօհանն ի նոյն գեօղացի Երանոսի որդի Պօղոսէն առնու զերիս տունս միով հիսարով քառասուն դուռուշի և տայ վախմ անուամբ Սրբոյ Աթոռոյս, բայց զքառասուն դուռուշն առնու ի տաճկաց թուին ՌՃԽԱ. (1728) ի յիշխանութեանն օսմանցւոց, որոյ կողմունքն են՝ մեր անապատի պարիսպն, Ձորագեղու եկեղեցին և քուչէն, որ կոյ և այժմ ընդ իշխանութեամբ Սրբոյ Աթոռոյս, որոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն[II]:

## (354ա) Տունք Սրբոյ Աթոռոյս յԵրևան քաղաքն

Ձորագեղացի Արիստակիսի դուստր Սիրիխան անուն կին ոմն այրի ի հայրենեաց մնացեալ զայգի մի ի Նորագեօղ, որոյ կողմունքն են՝ ձորագեղացի Հանի Մուհամատ Վէլու այգին, ձորագեղացի Կարապետի այգին, նորագեղացի Դաւթի այգին և երևանցի Իսրայէլի այգին, որպէս յիշեցաւ ի ճառս այգեաց Նորագեղու: Այլև զտուն մի բաղչայով ի յԵրևան քաղաքն, որոյ կողմունքն են՝ քարտաշ Պետրոսի տունն, Ջալալենց տունն, Խուպոնց տունն և ուստա Աղաբաբի տունն, վախմ տայ Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԻԴ. (1124) թուին տաճկաց և ի մեր թուոջն ՌՃԿ. (1711) ի ժամանակս Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ: Երկուց վախուպնամայն մի է, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն, որոյ բաղչայումն եղեալ տունքն են այսոքիկ մէկ այվան, մէկ թանապի, մէկ սանդուխխանայ, երկու զերզամպի, մեկ աշխանայ, մէկ մառան, մէկ թալվայ և մէկ մարաք: Այսպէս գրի ի վախուպնամայոջն, թէ զայսոսիկ վերոյ յիշեցեալ տունքս, հանդերձ ի միջի իւրեանց կահիւքն և ամենայն ընչիւքն, զամենայն վախմ ետու Սրբոյ Էջմիածնի[III][333]:

[I] Զգրված՝ 351բ
[II] Զգրված՝ 352բ-353բ
[III] Զգրված՝ 354բ-355բ

(356ա) **Տունք, զգեօղք, խանութք և այլք այսպիսիք ի Վրաց տունն**

Կախէթու պարոն Թէմուրազ խանն և իւր որդի Հերակլն և իւր կին Խօրիշանն ի մէջ Կախէթու և Քիսեղու ի էնիսուլ[334] կոչեցեալ նահանգոջն զգեօղ մի Թասմալուր կոչեցեալ տան Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ ամենայն բնակչօքն, ամենայն այգեստանեօքն, ջրօքն և ամենայն պարագայիւքն ի ծառայութիւն Սրբոյ Աթոռոյս, ի յիշատակ յաւիտենական ի թուոջն մերում ի .... Գի՛ տ զղապալայն վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

**Խանութք, որք ի Թիլֆիզ**

Ի մէջ փոքր Զարսու կոչեցեալոյն երեք խանութք գոն ի միումն Շիշման Պետրոսի որդի Բէժանն նստի այժմ, որոյ յաջակողմն կէնջեցի Խիթարին խանութն է և ձախ կողմն ևս Աթոռոյս խանութն է, յորում Աղաջանն նստի: Եւ այս Աղաջանի նստեալ խանութիս, որ Աթոռոյս է ի ձախ կողմն ի ներքոյ թաղին փոքր խանութ մի ևս գոյ Սրբոյ Աթոռոյս, որոյ ձախ կողմն Բուշայ է: Զայս երեք խանութս խօճա Բէհպուտի որդի Ասլանն տայ Սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին ի ՌճԺԳ. (1664) թուոջն մերում: Գի՛ տ զվախմնամայն վրացերէն: Աստի ի վեր ընթացեալ դէպ ի Նորաշէն Աշպազխանի[335] փողոցումն խանութ մի ևս գոյ Սրբոյ Աթոռոյս, որոյ աջ կողմն Ղարանին խանութն է և ձախն Աբովենց, զայս խանութս ևս մէլիք Աշխալ բէկն է տուեալ յիշատակ Սրբոյ Աթոռոյս, որ եղբայր է նոյն Ասլանին: Աստի ի վեր ընթացեալ, դէպ ի մեծ չարսուն թաղի առաջն խանութ մի գոյ, զոր Հօֆիլօենց Մօսէսն է տուեալ Սրբոյ Աթոռոյս, որոյ վերի կողմն ևս իւրեանց խանութն է և ներքի կողմն իմէրէլ[336] Գեօրկոնց խանութն է: Աստի ևս ի վեր ընթացեալ դէպ ի Գուլասպոնց փողոցն խանութ մի ևս գոյ Սրբոյ Աթոռոյս, զոր Հօֆինենց Ասին է տուեալ յիշատակ, որոյ վերի կողմն մահտեսի Մելքոնի խանութն է և ներքին կողմն սառաճ Գարսէվանի փեսայ Օթարինն: Աստի ևս ի վեր ընթացեալ դէպ ի սուրբ Նշանի փողոցն, խանութ մի գոյ, որ Շահնազարենց կոչին, զոր Կիկոսենց Նասխիթն է տուեալ Սրբոյ Աթոռոյս, որոյ ներքի խանութն ևս նոյն Կիկոսենց Յարութիւնին է և վերի կողմն Ապովենց ոսկերիչ Ռուստամի տունն է և առաջն փողոց:

Գոյ ևս ի քաղաքս յայս միոյ տան տեղ, զոր Նօնենց Ռուստամն է տուեալ Սրբոյ Աթոռոյս յիշատակ, որոյ վերն Փիթոնց Դանիէլին, վայրն Հէջուբենց Ռստամին, աջ կողմն Միրիշքեարի տան տեղն և ձախ կողմն Փիթօյենց Դաւութ բէկի տունքն են: Գոյ ևս ի քաղաք յայս ի Տափի թաղումն Սուրբ Նշանի տէր Մօսէսի այգւոյն կից մէկ այգետեղ, զոր Լօյինենց Յովանիսի որդի Սիմաւոնն է տուեալ վախմ Սրբոյ Աթոռոյս, որոյ երկու կողմն տէր Նիկողասի այգին է, երկու կողմն ճանապարհ:

(356բ) Մօնթօյենց Մկրտումն և իւր որդի Յօսէփն զխանութ մի ետուն Սրբոյ Աթոռոյս յիշատակ ի նոյն քաղաքն, որոյ մի կողմն Ապովենց Դաւիթն է, մի կողմն Դուլօյենց Գօրկինն է, առաջն փողոց և յետկոյսն պարոնի քեարվանսարէն, որոյ դապալայն գի՛տ հայերէն[337]:

Դարձեալ ի յերկիրն Վրացտանու ի գեօղն Ծուլաւէր[338] Ջհանշիրի որդիք տանուտէր Թահմազն և Բայրամն և Թահմազի որդիք Ռէվազն, Բայինդուրն և Ջալն ի նոյն գեօղն զմի մեծ այգի տան յիշատակ Սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին, շէն և ապրշումեայ ծառօք լի ի ՌՃԻէ. (1127) թուոջ մերում: Գի՛տ զվախմնամայն վրացերէն գրեցեալ՝ յերեսն գրեցեալ ցուցակաւն[I]:

(358ա) **Ծոռաք, այսինքն՝ հարկատու ծառայք Սրբոյ Աթոռոյս ի նոյն երկիրն**

Ի քաղաքն Թիֆլիզ Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի զխախուտի որդի Յարութիւնն գնէ ի ծոռութիւն Սրբոյ Աթոռոյս որդւովքն և բոլոր ընտանեօքն ի ՌՃԿԴ. (1715) թուոջն մերում: Գի՛տ զղապալայն վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ նոյն Աստուածատուր կաթուղիկոսն գնէ ի նոյն քաղաքն ի Թումանենց ազգէն զՅակոբի որդի Պապէն, զնորին որդիսն զՅակոբն և զՄամալօն բոլոր ընտանեօքն ի ծոռութիւն Սրբոյ Աթոռոյս ի ՌՃՀ. (1721) թուին մերում: Գի՛տ զղապալայն վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Այլև են ծոռաք Սրբոյ Աթոռոյս ղալայեհի Պաղտասարն, Քօհնեց Պաղտասարի թոռ Պաղտասարն, դաբաղ մահտեսի Դաւթի որդի Յովանէսն, Խելթուբնեցի տէր Դաւիթն, Խելթուբնեցի Աւթանդիլն և իւր որդի Աբրահամն[339], բախալ Լալվի[II] որդի Յովանէսն և Մկրտումն, բասմահի Ասլանի որդի Գրիգորն, Գուռջի[III] Մարգարի որդի Յովանէսն, թէզբազ Ասլանի թոռն Պապէն, Ծոակցի[IV] Աւթանդիլի որդիք Դաւիթն և Յարութիւնն, ղալայեհի Պաղտասարի փեսայ ղալայեհի Մեհրապն, ճօն Անտօնի որդի բազազ Յարութիւնն, երևանցի Աւաքի որդի դապաղ Յարութիւնն, ճաշկեցի Աղաճանն, դիլիջանեցի տէր Սարգսի որդիք Լէհինզ, Մելքոն և Պաղտասարն, կրցիլվանեցի էսի որդի Օթարն, ղազախեցի դաբաղ Մարգարն, երևանցի բազազ Գաբրիէլն[V]: [Այլև շամախեցի ի Թիֆլիզ բնակեալ բաննահ զԻբրահամն իւրայնովքն ծոռ է Սրբոյ Աթոռոյս, որոյ ձեռագիրն գի՛տ հայերեն գրեցեալ ի ՌՄԺԲ. (1763) թուոջն մերում»][VI 340]:

---

[I] Ջնջված՝ 357աբ

[II] Բ. Լալուի

[III] Բ. Գիւրջի

[IV] Բ. Ծկանցի

[V] Ջնջված՝ 358բ-390բ

[VI] Գ. 30բ

## (391ա) **ԳԼՈՒԽ Ի.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՌԱՂԱՄՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ ՊԱՐՍԻՑ ԵՒ ԲՈՒՌՆ ԻՇԽՈՂԱՑ, ՇԱՀԱՊԻՍԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԱՅՍՊԻՍԵԱՑ ՀԱՐԿԱՒՈՐ ԳՐԵԱՆՔ, ՈՐՔ ԳՈՆ Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՋՍ, ԹԷ ՈՐՊԷ՞Ս, Ե՞ՐԲ ԵՒ ՎԱՍՆ Ո՞ՅՐ ՊԱՏՃԱՌԻ[341]

Եւ որքան առ յայս ծանի՛ր սիրելի ընթերցող, զի ի ձեռնարկելն իմ զայսմանէ կարի և շատ տարակուսանօք և յոգոց հանելով գրեցի, քանզի որոց ցանկայի և յուսայի գտանել, զորս և հաւաստեաւ գիտէի իսկ գոլ յԱթոռոջս, զբազումս և զբոլորէն ոչ գտի: Ոչ գիտեմ ի նախանձակոտուր ի նենգալի և ի թշնամի մարդկա՞նց էին անհետացեալք, թէ ի յանհոգութենէ յաջորդողացն տեղւոյս և թէ ի մօտ առ մօտ վախճանեցմանէ նոցին և ի պղտորմանէ և ի տարուբերմանէ երկրիս և երկրականացս, ընդ յորս և Աթոռոյս և աթոռայնոցս: Ոչ միայն զյառաջնոցն ասեմ և զհնագունիցն, այլև զյետնոցն և զմօտագունիցն:

Արդ մինչ զբազումսն ոչ գտի, որպէս ասացի, վասն որոյ և զսակաւսն, զորս առձեռն ունեցայ, տեսի և վերահասու եղէ մտացն և դիտմանցն գրեալ աստ արձանացուցի, զի մի և սոքա անհետասցին: Քանզի թէպէտ տուօղքն են այլազգիք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն տուրք և հրամանագիրք նոցին են, ըստ աշխարհիս օգտարարք, բուժիչք և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրակէզս ի բուժումն պէս պէս ցաւոց: Զայս վասն այսորիկ երկարեմ, զի և դու ի յունիլդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ: Եւ մի ասիցես, թէ այժմ այս ինչ ռաղամ անօգուտ է և կամ թէ թագաւորքն ոչ գոն, զի՞նչ օգտեն հրամանք նոցա, զի պիտոյանան բազմիցս և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեք փորձեցաք բազմիցս: Եւ մանաւանդ որքան թագաւորական գիր գտանի յԱթոռոջս, այնքան պատիւ է սմա, որքան առ յայս բաւ լիցի խոհեմութեանդ: Ուրեմն զորս ունեցայ և տեսի են այսոքիկ, զոր սկսեալ ի յառաջնոյն շահ Թահմազէն մինչ ի յետինս շահ Թահմազ և զկնի նոցա զօսմանցւոցն և զայլոց շահապէս իշխօղաց կարգաւ գրեցի ցանկապէս համարովք հանդերձ դիտմամբք և թւովքն իւրեանց: Բայց ի սոցունց, որք յիշեցեալք են ի գրքոջս ի հարկաւորութեանն տեղւոջ՝ աստ ևս առ նշանադրին կարճառօտաբար և որք ոչ են յիշեցեալք երբէք, միայն որպիսութեամբքն իւրեանց գրին:

(391բ) Ի սկսանիլ երկրորդի գաւազանի թագաւորութեանն Պարսից ի ՋԽ. (1491) թուոյն մեռում և ի ՊԶԷ. (897) թուոյն տաճկաց ի շխօճաղ կոչեցելոյն, յորում նախապէս նստաւ շահ Իսմայիլն, յորմէ զռաղամ ինչ ոչ գտաք և զկնի նորա թագաւորէ շահ Թահմազն ի ՋՀԷ. (1528) [I] թուոյն մեռում և ի տաճկաց ՋԼԳ. (933)[II] թուին: Այս շահ Թահմազս ռաղամ մի տայ Միքայէլ կաթուղիկոսին ի ՋԾԵ. (955) թուոյն տաճկաց և ի մեր թուոյն ՋՂԵ. (1546) վասն Նախիջևանու, Գեղարքունւոյ, Ղափանու, Խօյու, Սալմաստու, Կէնճէու, Բարտայու, Ախստևու, Ջակամներու և Լոռու, զի էջմիածնի լիցին վիճակ և ճնազանդ նորին կաթուղիկոսացն, որպէս յառաջմէ լեալք են: Քանզի ի յամայանալն Սրբոյ Աթոռոյս, զվերոյ յիշեցեալ վիճակսդ, զորն Գանձասար էր զաւթեալ և զորն Աղթամար: Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... նշան ճամարաւն, որոյ սաւատ մի ևս գոյ, զոր ևս գի՛տ դոյն նշանօքդ: Յիշեցաւ այս ի տասն գլուխն ի ճառս Գանձասարու:

Մեծ շահ Ապասին ռաղամ մի գոյ ի Սուրբ Աթոռս, զոր գրէ առ Ամիրկիւնէ խանն, ըստ արզայի Դաւիթ կաթուղիկոսին ի ՌԺԹ. (1610) թուին տաճկաց, թէ զմասունս սրբոց Հռիփսիմեանցն ի գող պատրիչացն[342] առ և էջմիածնի թայլիմ արա և զպատրիչսն ճալածեա: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... ճամարաւն:

Մեծ շահ Ապասին ռաղամ մի ևս գոյ ի Սուրբ Աթոռս, զոր ի ժամանակս Մելքիսէթ կաթուղիկոսին գրելով յանուանէ զամենայն սերմանելի տեղիսն Սրբոյ Աթոռոյս ճրամայէ, զի մի ոք ձեռնամուխ լիցի նոցա ի ՌԻԲ. (1612) թուին տաճկաց: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... ճամարաւն: Յիշեցաւ այս ի ճառս արտորէիցն ի ԺԵ. (15) գլուխն: Յոր նախ շխիսլամն գրէ յանուանէ զսերմանելի տեղիսն Սրբոյ Աթոռոյս և ապա շահն ի գլուխն ռաղամ գրէ:

Մեծ շահ Ապասին ռաղամ մի ևս գոյ ի Սուրբ Աթոռս, զոր գրէ ըստ արզայի Մելքիսէթ կաթուղիկոսին թամպէճ ազգիս ճայոց, զի յուր և իցեն, ճնազանդ լիցին կաթուղիկոսին էջմիածնի, որպէս օրէն է ի քնէ անտի ի [ՌԻՁ. (1026)][343] թուին տաճկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և .... ճամարովն:

Մեծ շահ Ապասին ռաղամ մի ևս գոյ ի Սուրբ Աթոռս, յորում զլուսարարութիւնն Սրբոյ Աթոռոյս տայ Սիւնեցի Մովսէս վարդապետին, ըստ արզայի նորին, որ յետոյ եղև կաթուղիկոս: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ... ) ճամարովն, որ գրի ի տաճկաց ՌԼՁ. (1627) թուոյն:

(392ա) Շահ Սէֆու ռաղամի սաւատն է, բայց ճաստատուն կնքով, յորում շահ Սէֆին զճարիւր թուման մուխաթէն բառնայ ի Սուրբ Աթոռոյս, ըստ արզայի Մովսէս կա-

---

[I] Բ. ՃՀԷ.

[II] Բ. ՃԼԳ.

թուղիկոսին, որ էր հաստատեցեալ ի Մեծէ շահ Ապասէն ի ժամանակս Մելքիսէթ կաթուղիկոսին, որ գրի ի տանկաց ՌԿԸ. (1629) թուին, զոր զտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարով:

Շահ Սէֆուն ռաղամ, զի արզ առնեն խաչենու և բոլոր Աղուանից երկիրն, թէ մեք ի քնէ էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ մեր մի իշխեսցէ: Եւ շահն գրէ հրաման, զի այսպէս լիցի, զի էջմիածնի լիցին հնազանդք և նմա տայցեն զնուիրակութիւնս: Գի՛տ ցուցակաւ և ... համարով, որ գրի ի ՌԽԳ. (1634) թուին տանկաց: Սորա սաւատ մի ևս գոյ, գի՛տ ցուցակաւն և ... համարով: Յիշեցաւ այս ի Ժ. (10) գլուխն ի ճառս Գանձասարու[344]:

Շահ Սէֆու ռաղամ, յորում գրէ, թէ նուիրակացն էջմիածնի և կամ խալիֆայի մարդկանցն ամենևին մի ոք խօսեսցի և մի[I] խառնիցին ի բանս և ի գործս նոցա և կամ զքան ինչ պահանջիցեն ի շրջիլն աստ և անդ, ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին ի ՌԽԸ. (1639) թուին տանկաց, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարով:

(392բ) Փոքր շահ Ապասին ռաղամ, յորոյ մին կողմն շխիսլամն զփաթվայ գրէ և ի միւս երեսն շահն ռաղամ գրէ ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին, թէ ի Հատրբեջան ոմանք ի զուր զքան պահանջեն ի հայոց, որպէս արզ արարին մեզ, մի ևս լիցի այսուհետև: Եւ ի ժամանակս օսմանցւոց, զի շարժէ աւերեալ եկեղեցիսն, եթէ նորոգել կամիցին մի ոք ներհակիցի, զի հարկատու են մեզ և ի բանս օրինաց նոցա մի ոք խառնեսցի՝ ի ՌԾԳ. (1644) թուին տանկաց, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում ի մի երեսն շխիսլամն գրէ զամենայն սերմանելի տեղիսն Սրբոյ Աթոռոյս և վկայէ, թէ այսոքիկ վախմ են էջմիածնի և ապա ի միւս երեսն շահն ռաղամ գրէ, թէ մի ոք ձեռնամուխ լիցի նոցա ի ՌԾԳ. (1644) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով: Սոյնանման ռաղամ մի ևս ի Մեծէ շահ Ապասէն գոյ, գի՛տ ցուցակաւն և ... համարովն, որք յիշեցան ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէիցն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում, ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին զմէկ գութան մաղաֆ առնէ Սրբոյ Աթոռոյս, զի չարն Մահմատ ղուլի խան կամեցեալ է բահրայ առնուլ: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարովն, որ գրի ի ՌԾԵ. (1645) թուին տանկաց:

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում գրէ, թէ վանօրայքն Երևանու, զոր ինչ ի ժամանակս Ամիրկիւնէ խանին տուեալ են, զնոյնն առցէ Մահմատ ղուլի խանն և մի ինչ աւելի ի ՌԾԵ. (1645) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

---

[I] Բ. > մի

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում, ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին գրէ սաստիկ պատուէր, զի նուիրակացն էջմիածնի խանք և այլք իշխօղք մի լիցին ձեռնամուխք ի ՌՃԵ. (1645) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշէ ևս, թէ որպէս ի ՌԽԸ. (1639) թուին շահ Սէֆին ևս է տուեալ այսպէս ռաղամ, որպէս ի վերդ գրեցաւ:

Փոքր շահ Ապասին ռաղամ վասն Երևանու երկրիս եկեղեցեաց նորոգութեան և շինութեան, ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարովն ի ՌՃԵ. (1645) թիւն տանկաց:

(393ա) Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում գրէ ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին, թէ եթէ հայք ընդ միմեանս զդաւ ինչ ունիցին առ խալիֆայն և առ յայլ կարդացօղս իւրեանց գնան ի դատ, տանիկք ոչ արգելուցուն և ոչ խառնիցին: Այլև հայք, եթէ զիր ինչ վախմ տան էջմիածնի՝ տանիկք մի արգելուցուն, յորոյ միւս երեսն ևս շարն գրէ զփաթվայ: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն ի ՌԿ. (1650) թուին տանկաց:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի Փիլիպպոս կաթուղիկոսն արզ առնէ, թէ այս Աթոռս, թէ ի յայս գեօղս և թէ յայլ ուրեք ունի զմուլքս, զայգիս և զջրաղացս, որք ի բնէ վախմ են Աթոռոյս, և այժմ խանք և այլք իշխօղք ոչ թողուն մեզ վայելել զնոսա: Երկրիս իշխօղ Խօսրով խանն ևս ի սոյն արզայումս զվկայութիւն գրէ կաթուղիկոսի արզային: Յորում ինն այգի գրի և ինն ջրաղաց գոլ Աթոռոյս, որոց աղագաւ շահն սաստիկ թամպէհ գրէ, զի մի ոք լիցի ձեռնամուխ ի ՌԿ. (1650) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի Փիլիպպոս կաթուղիկոսն արզ առնէ, թէ զԳեօզալդարայի ջուրն, որ է ինն ջրաղացի ջուր, բերի ի գետս մեր խառնեցի, որ մեծ օգնութիւն եղև երկրիս, բայց մեզ ոչ ինչ օգուտ, զի մուլք գեղջս մերոյ, որ բնական Աթոռոյս է լեալ, այն ևս Ամիրկունէ խանի որդի Թահմազ ղուլի խանն իւր տօնլուղի տեղ զաւթեալ եկեր, որ և մինչ ցայսօր այնպէս այլք ուտեն, խնդրեմ զի մեզ շնորհեսցես զմուլք գեղջս մերոյ: Երկրիս իշխօղ Խօսրով խանն ևս յայս արզայոջս գրէ զվկայութիւն և զբարերարութենէ կաթուղիկոսին և խնդրէ կատարել զխնդիր նորին: Վասն որոյ և շահն ռաղամ գրէ բաշխելով ոչ միայն մուլքն շէշ դանկ գեղջս մերոյ, այլև զբոլոր մուտախիլն սորին, որ գրի հարիւր իննսուն խալվար և հինգ լիտր: Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարովն ի ՌԿ. (1650) թուին տանկաց: Յիշեցաւ այս ի ԺԳ. (13)[I] գլուխն ի ճառս մլքատուութեան գեղջս մերոյ, որ կարի պիտանի է մանաւանդ, որ ինն ջրաղացաց ջուր յատուկ Սրբոյ Աթոռոյս գոյ ի գետս մեր, բաց ի հասարակ բաժնէն, որոյ կէսն Աթոռոյս է:

[I] Բ. ԺԵ.

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում Փիլիպպոս կաթուղիկոսն յետ ճառելոյ զբարեհարութիւնս իւր զԳեօզալդարայի ինն ջրաղացի ջուրն բերելն և զՄուրթուզայ փաշայն յետս դարձուցանելն ԲՃ. (200) թուման տալով, ապա զերիս խնդիրս առնէ յատուկ յատուկ: Նախ, թէ զմուլքն Սրբոյ Աթոռոյս, զայգիս, զջրաղացս, զվարելահողս, զանասունս և զայլսն մաղաֆ արասցես, զի կերեալ աղօթեսցուք վասն քոյ: Երկրորդ, թէ Աթոռս այս ի Քրիստոսէ մինչև ցայսօր, զորքան վախուպ մուլքս ունեցեալ է և ունի՝ մի ոք ձեռնամուխ լիցի նոցա: Երրորդ, թէ հրաման տուր, զի Երուսաղէմ գնացից: Եւ շահն իւրաքանչիւրց խնդրոցն յատուկ յատուկ ի գլուխսն հրաման գրէ և կնքէ ի ՌԿ. (1650) թուին տանկաց: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարովն: Շատ հարկաւոր է և լաւ պահելի:

(393բ) Փոքր շահ Ապասին ռաղամ, զի արզ առնեն Շամախու և Շիրուանու երկիրն, թէ մեք ի բնէ էջմիածնի եմք լեալք վիճակք և զնուիրակութիւնս մեր էջմիածնի եմք տուեալ կամիմք ևս այսպէս լինիլ, Գանձասարու կաթուղիկոսքն ի վերայ մեր մի իշխեսցեն: Շահն գրէ հրաման, զի այսպէս լիցի ի ՌԿ. (1650) թուին տանկաց, զոր գտցես ցուցակաւն և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ, գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի Ժ. (10) գլուխն ի ճառս Գանձասարու:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի Սրբոյ Աթոռոյս վէքիլ Թումանն գնացեալ ի յԱսպահան արզ առնէ շահին, թէ Բաթրինջ գեօղն էջմիածնի մուլք է և խոտհարք վասն անասնոցն քեօշարի տանիկք եկեալք բնակին ի նմա, երկրին և էջմիածնի վնաս տան: Վասն որոյ և շահն սաստիկ թամպէհ գրէ նոցա՝ մի ևս բնակիլ անդ: Յիշեցաւ այս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Բաթրինջու ի ՌԿ. (1650) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Ապասին ռաղամ վասն Փիլիպպոս կաթուղիկոսին յԵրուսաղէմ գնալոյն և վասն նորա վէքիլին մի ոք ներհակիլոյն: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն ի ՌԿ. (1650) թուին տանկաց:

Փոքր շահ Ապասին ռաղամ մի ևս շնորհակալութիւն վասն ընծայիցն Փիլիպպոս կաթուղիկոսին և զխիլայ յղելոյն: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն ի ՌԿ. (1650) թուին տանկաց:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի երևանցի Սէթի որդի խօճա Յակոբն, զոր յիշեցաք ի ճառս Նորագեղու և յայլս տեղիս, զեղուարդայ շորս դանկ և կէս մուլքն ունեցեալ է հաստատուն ղապալայով, տանիկք ոմանք յափշտակեալ են ի նմանէ, և Յակոբն արզ առնէ շահին, և յինքն դարձուցանէ և յետոյ տայ վախմ Սրբոյ Աթոռոյս ընդ Նորագեղու մլքին և ընդ այլոց, վասն որոյ և զայս ռաղամս տայ Աթոռոյս: Յիշեցաւ ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Եղուարդայ ի ՌԿԹ. (1658) [345] թուին տանկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զոր ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին և Յակոբ վարդապետին գրէ, թէ էջմիածնի նուիրակունքն ուր և գնան զապիթք, խանք և ռահդարք մի մերձեսցին և մի զինչս պահանջեսցեն: Բայց, եթէ մաքսի արժան ինչ ունիցին, տայցեն ըստ կարգին զմաքսն ի ՌԿԲ. (1652) թուին տանկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի Յակոբ կաթուղիկոսն և այլ շրջակայ գեօղորայքն վերստին արզ առնեն վասն քեօշարի տանկացն, որք գան ի Բաթոինեն գեօղն իջանեն և վնասս հասուցանեն: Վասն որոյ սաստիկ թամպէհ գրէ, զի մի ևս մտցեն ի գեօղն յայն ի ՌԿէ. (1657) թուին տանկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, զի նախ շարն վճռէ, թէ եթէ ոմն տանիկ ումեմն քրիստոնէի ի ձեռն շարի և ղապալայով զմուլք ինչ ծախէ, այլ ոչ կարէ դաւ առնել և յետս խնդրել: Այլև, եթէ ծախօղ տանկին ազգական մի եկեալ դաւ յարուցանէ ընդ գնօղ քրիստոնէին վասն այն ծախեցեալ մլքին, ոչ ինչ է և ընդունայն: Ապա և շահն ի գլուխ ֆաթվային գրէ լինիլ այսպէս ի ՌԿԸ. (1658) թուին տանկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն:

(394ա) Փոքր շահ Ապասին ռաղամ, զի Նաշաֆ խանն կամեցեալ է բահրայ առնուլ յԱթոռոյս, և Յակոբ կաթուղիկոսն արզ առնէ, թէ Փիլիպպոս կաթուղիկոսին դու մէկ գութանի մաղաֆութիւն ես տուեալ, այժմ սոքա զպատուէրդ ոչ պահեն: Վասն որոյ և շահն վերստին հաստատելով զմէկ գութանի մաղաֆութիւնն՝ գրէ սաստիկ թամպէհ Նաշաֆ խանին, զի մի առցէ ի ՌԿԹ. (1659) թուին: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

Փոքր շահ Ապասին ռաղամ, որ (որպէս ... և ... ռաղամքն) գրէ յամենայն իշխանութիւնս իւր, թէ էջմիածնի կաթուղիկոսն և նորին մարդիկքն ուր և շրջին, մի ոք արգելցէ կամ զիր ինչ պահանջիցէ և կամ ի գործս և ի յօրէնս նոցա խառնիցի: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն ի ՌԿԹ. (1659) տանկաց թուին:

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում նախ շխիսլամն վճիռ գրէ, թէ արծաթագին ծառային ջաղիայ և խարճ ոչ գոյ: Ապա և շահն հրաման գրէ լինիլ այնպէս ի ՌԿԹ. (1659) թուին տանկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Ապասին ռաղամ, յորում նախ շխիսլամն վճռէ, թէ ոմն հայ մեռանի, և ոմն եկեալ առ մնացորդսն մեռելոյն ասասցէ, թէ մեռեալդ ինձ այս ինչ տալոց էր և կամ թէ զայս ինչ աւանդ եդի առ դա, ոչ կարէ հաւաստել և առնուլ, մինչև ի ձեռն շարի և բազմաց վկայութեամբ ոչ ստուգեսցէ: Ապա և շահն գրէ այնպէս լինիլ ի ՌԿԹ. (1659) թուին տանկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Աբասին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Երևանցւոց և նախիջևանցւոց, թէ զաւեր եկեղեցիսն, եթէ նորոգել կամիցին՝ մի ոք ներհակիցի ի ՌՃԷ. (1658) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Աբասին ռաղամ, յորում նախ շարն գրէ զվճիռ, թէ ոմն հայ ուր և իցէ զմուլքս և զվարելահողս ունիցի իւրեան հաստատաբար, երբ և կամիցի կարէ վարել և տիրել, ոչ ոք կարէ արգելուլ և կամ տիրել, և շահն գրէ այնպէս լինիլ ի ՌՃԷ. (1658) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Փոքր շահ Աբասին ռաղամ, յորում նախ շխիսլամն վասն երից իրակութեանց զվճիռ գրէ նախ, թէ եթէ ոք զմուլք ինչ վախմ արասցէ տեղւոյ ուրուք, ոչ կարէ յետս առնուլ: Երկրորդ, թէ եթէ ոք ի մեռանիլն իւրում զկտակ ինչ առնիցէ, որդի նորին ոչ կարէ բացասել զայն: Երրորդ, թէ եթէ ոք ի մեռանիլն իւրում զոք վէքիլ կարգեսցէ, զի զկտակն իւր կատարեսցէ որդի մեռանօղին ոչ կարէ արգելուլ: Եւ շահն հրաման գրէ ի գլուխն, զի այսպէս լիցի ի ՌՀԱ. (1660) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի ճանաճեցւոց թամպէհ, թէ ի հայոց ոմանք, որք ի յօրէնս մեր դառնան, այլ ոչ կարեն յազգականաց իւրեանց զինչս խնդրել և կամ դաւ յարուցանել: Գրէ և Երևանու իշխօղ Սէֆի ղուլի խանին պատուէր, զի մի թողուցու ի ՌՀԷ. (1667) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

(394բ) Շահ Սուլէյմանին ռաղամ վասն Մուղնու սրբոյն Գէորգեայ վանիցն նորոգութեան: Յորում նախապէս շարն զվճիռ գրէ, թէ որովհետև յառաջմէ լեալ է և հնացեալ է այժմ, եթէ նորոգեսցեն քարիւ և կրով՝ ոչ է անտեղի: Եւ շահն հրաման գրէ լինիլ այնպէս ի ՌՀԸ. (1667) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ վասն եկեղեցեաց նորոգութեան: Յորում նախ շարն զվճիռ գրէ, թէ հայքն մինչ հնազանդ են թագաւորի և հարկատու ոչ է անտեղի, եթէ զաւերեալ եկեղեցիս իւրեանց նորոգեսցեն: Եւ շահն զհրաման գրէ լինիլ այնպէս ի ՌՀԹ. (1669) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, յորում նախ վճռէ շարն, թէ էջմիածին, վանորայք և այլք եկեղեցիք հայոց, որք ըստ օրինաց իւրեանց զմեռեալս իւրեանց համարձակ թաղեն, զպասկս առնեն, յեկեղեցիս բարձր ձայնիւ երգեն, զանկակ ծեծեն և զայլս այսպիսիս, ոչ է արգելելի, որովհետև հարկատու են թագաւորին և շահն հրաման գրէ ի ՌՀԹ. (1669) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, զի արզ առնեն ամենայն հայքն Հատրբէջանու երկրիս, թէ մեք հարկատու եմք թագաւորին, տաճիկք ոչ թողուն մեզ զանկակ ծեծել, ժամ կոչել և բարձր ձայնիւ ժամ ասել և ամենայն օրինաց մերոց հակառակին: Ապա շահն գրէ զվճիռ, թէ ոչ է պարտ տաճկաց այսպէս առնել և շահն ևս ի միւս երեսն հրաման գրէ մի այնպէս առնել ի ՌՀԹ. (1669) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, յորում նախ շարն զվճիռ գրէ, թէ որքան հայք, որք գոն ի յիշխանութիւնս թագաւորութեան մերում, որք են հարկատու և հնազանդ, մի ոք իշխեսցէ զնոսա ի տաճկութիւն հրաւիրել և կամ բռնադատել: Այլև, եթէ զաւերեալ եկեղեցիսն իւրեանց նորոգեսցեն քարիւ, կրով, աղիւսով և փայտիւ, ոչ ոք կարէ արգելուլ: Եւ շահն հրաման գրէ լինիլ այնպէս ի ՌՃԺ. (1669) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամի սաւատ, բայց շարի կնքով: Յորում նախ շարն վճռէ, թէ ի Հատրբէջան յերկրոջս տաճիկք ոմանք զհայոց ազգն նեղացուցանեն և ի զուր զիրս պահանջեն և կամ ի նորոգելն նոցա զհնացեալ եկեղեցիս իւրեանց արգելուն և ի բանս օրինաց նոցա խառնին, որոց պատուէր լիցի՝ մի առնել այսպէս: Եւ շահն ի միւս երեսն գրէ հրաման սաստիւ այնպիսեացն ի ՌՀԹ. (1079) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով: Այսպէս ռաղամ մի ևս Փոքր շահ Ապասն տայ ի ՌԾԳ. (1643) թուոջն տաճկաց, զոր գտցես ցուցակաւն և ... համարով:

Սապէս ռաղամ մի ևս տայ Փոքր շահ Ապասն վասն նորոգութեան եկեղեցեաց բոլոր Հատրբէջանու երկրիս ի ՌՀԱ. (1660) թուին տաճկաց: Բայց սաւատ է և շարի կնքով, զի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ խիստ լաւ և շատ հարկաւոր և պիտանի, զի Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն, զպէսպէս հակառակութիւնս և զգլխացաւութիւնս կրելով վասն գեղջս մերոյ էջմիածնի վեց դանկ մլքին ի խանից և յայլոց տաճկաց, արարեալ է զայս մեծ բարերարութիւնս մեծաւ խոհեմութեամբ: Քանզի զմեծ վախուպնամայն Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսին, որ գոյ ի Սուրբ Աթոռոջս, որով գնեալ է զբոլոր (395ա) գեօղս մեր իւրովք սահմանօքն զԱմիրգիւնէ խանի տուեալ հուճէթն, որ ժամանակ ինչ զգեօղս մեր զաւթեալ ուտէ և յետոյ զվերոյ յիշեալ վախուպնամայն տեսեալ, որով և հաւաստեալ է, թէ գեօղս այս վախմ է Սրբոյ Աթոռոյս, զայն հուճէթն տայ, թէ յիրաւի գեօղս էջմիածնի է, այսուհետև մի ոք ձեռնամուխ լիցի ի գեօղս յայս յազգականաց իմոց, որ գրի ի ՌԻԹ. (1620) թուին տաճկաց, որոյ երկուք սաւատքն գոն ի Սուրբ Աթոռս՝ շարի կնքով: Այլև սոյն Ամիրկիւնէ խանի որդի Ապաս ղուլի խանի տուեալ հուճէթն, որ յառաջ, քան զխան լինիլն երկրիս եկեալ դաւի է արարեալ ընդ Յակոբ կաթուղիկոսին վասն գեղջս այսորիկ, թէ մեր է, և հայրն իմ յայսքան ժամանակ եկեր զսա: Եւ Յակոբ կաթուղիկոսն վերոյ յիշեալ մեծ վախուպնամայիւն և նորին հօր տուեալ վերոյ յիշեալ հուճէթիւն պապանձեցուցեալ է զնա առաջի շարին և զայն հուճէթն առեալ ի նմանէ ի ՌՀԳ. (1662) թուին տաճկաց, յորում գրէ, թէ յիրաւի գեօղս այս բոլորովին էջմիածնի է, որոյ սաւատն գոյ յԱթոռոջս: Այլև զհուճէթ և զվկայական գիր մի ևս ի ՌՀԹ. (1669) թուին տաճկաց գրեցեալ: Ջայսոսիկ չորեսին թուղթս, զորս ասացաք, առեալ Յակոբ կաթուղիկոսն գնայ ի յԱսպահան և ցուցանէ շխիսլամին և այլոց դիւանագրաց նորին

և ծանուցանէ զամենայն ուղիղութիւնս գեղջս մերոյ: Ապա ի տեսանել շխիսլամին և ի վերահասու լինիլն գրէ զհաստատուն և զվճռահատ հուճէթ մի, կնքէ ինքն և այլոց մեծամեծաց կարդացօղաց կնքեցուցանէ, թէ տեսաք մեք զհին մեծ վախուպնամայն, զԱմիրկիւնէ խանի գիրն և զայլ գրեանս և վերահասու եղաք ստուգութեամբ, որ այս գեղջս ոչ միայն զչեշ դանկ մուլքն, այլև բոլորովին հասըլն, մուտախիլն և բահրայն էջմիածնի են լեալք ի բնէ անտի, որոց յաղագաւ ով ոք դաւ յարուցանէ՝ փուչ է և անընդունելի: Ապա և Յակոբ կաթուղիկոսն առեալ զայս հաստատուն գիրս մատուցանէ շահ Սուլէյմանին՝ արզայիւ հանդերձ: Եւ շահն ի տեսանելն զվկայութիւն շարին և այլոց մեծամեծացն գրէ ռաղամ ի միւս երեսն նոյն հաստատուն հուճէթին, թէ որ ինչ գրեցեալ է ի միւս երեսն թղթոյս վկայութեամբ շարին, և ես հրամայեցի, զի այդպէս լինիցի: Գրելով ի նմա և զպատուէր Երևանու իշխողացն, զի մի ոք ընդդէմ գրեցելոցս շարժիցին ի ՌՃԻ. (1672) թուին տաճկաց: Գի՛տ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ռաղամս և որպէսն սորին ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս մլքատուութեան գեղջս մերոյ: Ունի սա և զերկուս սաւատս շարի կնքով կնքեցեալ, բայց մինն սոյնանման մի յերեսն շարի վկայութիւնն և ի միւս երեսն շահի ռաղամն և միւսն միայն շահի վկայութիւնն, զի շահի ռաղամի երեսն չէ գրեցեալ, զորս գտցես ցուցակօքն և ... համարօքն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ է ամենայնիւ նոյն և նման ընդ վերնոյ ասացեալ ռաղամիդ: Բայց այսքան ունի զանազանութիւն, զի ի վերնումդ ի շարի վկայութեանն յիշի, թէ մեք վերահասու եղաք, որ էջմիածնի գեղջ հասըլն, մուտախիլն և բահրայն են բոլորովին էջմիածնի, բայց շահն ի միւս երեսն զայսոսիկ յատուկ յատուկ ոչ յիշէ, այլ գրէ, թէ որ ինչ ի միւս երեսն շարն վկայեալ է, և ես հրամայեցի: Իսկ յայս ռաղամոջս, որպէս շարն գրէ զայն բառսն յանուանէ, նոյնպէս և շահն գրէ յանուանէ ի ռաղամն ի միւս երեսն: Եւ երկրորդս գրի ի ՌՁԵ. (1674) թուին (395բ) տաճկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ... համարովն: Շատ պիտանիք են այս երկու ռաղամքս և լաւ պահելիք:

Շահ Սուլէյմանին ռաղամ, զի մեր գեօղականքս արզ առնեն, թէ առու մի ունիմք մեք Շահիարխ անուամբ, որ բնական մեր է, այժմ հաճիղարացիք զայն առուն և ջուրն յափշտակել կամին ի մէնջ: Եւ շահն ի գլուխ արզային ռաղամ գրէ ի վերայ Հատրբէջանու սարդարին և Երևանու իշխօղին, թէ վերահասու լերուք, եթէ ջուրն այն էջմիածնի է, նոցա տո՛ւք, և հաճիղարացիք մի մօտեսցին ի ՌՁԵ. (1674/1675) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի աթոռակալ Ոնոփրիոս վարդապետին ի վերայ իշխողաց երկրիս, թէ ի վանօրէիցն աւելի քան զքնական կանօնն զիր ինչ մի պահանջէք ի ՌՁԵ. (1674) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ վերահաստատութեան կաթուղիկոսութեանն Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԻԴ. (1675) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Յակոբ կաթուղիկոսին ի վերայ Երևանու խանին, թէ Էջմիածնի մուլքն ով որ բռնութեամբ զաւթեալ իցէ, յետս դարձուցանել տայցես, զի անիծեալ Լազկի Սէֆի ղուլի խանն զոմանս մուլքս Աթոռոյս զաւթեալ է երբեմն ի ՌՃԼ. (1680) թուին տանկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ, զի խալդար անուամբ ոմն տանկացեալ զմուլք ինչ, զոր ազգականքն իւր վախմ են տուեալ Սրբոյ Աթոռոյս, յետս առնու: Եւ Եղիազար կաթուղիկոսն արզ առնէ շահին, և շահն զայս ռաղամս տայ, զի խալդարն այն յետս դարձուցէ զառեալ մուլքն: Ի ներքոյ արզային և շարն գրէ զփաթվայ ի ՌՃԼԵ. (1684) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ..... համարով:

Շահ Սուլէյմանի ռաղամ վասն Եղիազարի կաթուղիկոսութեանն ի ՌՃԼԹ. (1687/1688) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Սուլէյմանին ռաղամ վասն Նահապետի կաթուղիկոսութեանն ի ՌՃԽԲ. (1692) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ վասն Նահապետի կաթուղիկոսութեանն ի ՌՃԽԴ. (1695) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ վասն վերստին կաթուղիկոսութեանն Նահապետին յետ Ստեփաննոսին ի ՌՃԺԱ. (1700) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ Հատրբէշանու երկրիս իշխողացն թամպեհ, թէ հայոց ննջեցելոցն համարձակ թաղելոյն, քակեցեալ եկեղեցեացն նորոգելոյն և այլ օրինաց նոցա մի որ հակառակիցի կամ նեղացուցէ կամ զիր ինչ պահանջեսցէ ի ՌՃԺԱ. (1700) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, զոր գտցես ցուցակաւն և ... համարովն:

(396ա) Շահ Հիւսէյինին ռաղամ, զի Դանիէլ անուն ոմն չարախօսէ զՆահապետ կաթուղիկոսէն առ շահն, և Աբըլղասում խանն բարեկամ գոլով կաթուղիկոսին՝ բարեխօսէ վասն նորա: Վասն որոյ և շահն գրէ զայս ռաղամս ի միամտութիւն կաթուղիկոսին և միաբանիցն ի հնազանդութիւն նմա, ըստ օրինի ի ՌՃԺԴ. (1704) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինի ռաղամ, զոր գրէ ի ՌՃԺԸ. (1706) թուին տանկաց վասն կաթուղիկոսութեանն Աղէքսանդրի Ջուղայեցւոյ ի թուին տանկաց ...: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինի ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ վասն ֆռանկաց, թէ մի երբէք երևեսցին յիշխանութեանս իմում և ոչ զօրէնս

իւրեանց ուսուսցեն և կամ հրաւիրեսցեն զոք ի յաղանդս իւրեանց մի զմանկունս ուսուսցեն և ի հայոց զկանայս մի առցեն և այլ այսպիսիք պատուէրք ի ՌՃԻԲ. (1710) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ պիտանի, զի զերկուս գութանս և զհինգ հարիւր ոչխարս Սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնէ, ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԻԴ. (1712) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս:

Շահ Հիւսէյինին ռաղամ, ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին վասն փոանկ պատրչացն, զի մի իշխեսցեն զհայս դարձուցանել և զայլս այսպէս թամպէհս: Յիշէ ևս, թէ ի ՌՃԻԲ. (1710) թուոջն ևս եմ տուեալ այսպէս ֆարման, որ ի վերդ յիշեցաւ, սաստանօր շատ սաստկութեամբ գրէ ի ՌՃԻԴ. (1712): Գի՛տ ցուցակսւն և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, գի՛տ սոյն թուովս և ... համարովս:

Շահ Հիւսէյինին ռաղամ, ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին, զի զնացէ Յունաց յերկիրն և խանին պատուէր գրէ, զի տեղապահին և Աթոռոյս մուղայէթ լիցի՝ ի ՌՃԻԴ. (1712) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամն է, զոր տուեալ է ըստ արզայի Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսին, զի դառուղայ, թիֆիլդար և այլք տանիկք ի մէջ վանօրէից և եկեղեցեաց մի նստիցեն ի ՌՃԻԴ. (1712) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, գի՛տ ցուցակսւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զի Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն զվեց ռաղամս առաջնոց թագաւորացն տարեալ ցուցանէ և ի նմանէ զվերահաստատութիւն խնդրէ, որոց առաջինն է Մեծ շահ Ապասինն, յորում գրին բոլոր սեռմանելի տեղիքն Սրբոյ Աթոռոյս, որ գրի ի տաենկաց ՌԻԲ. (1612) թուոջն, զոր գտցես ցուցակսւն և ... համարովն: Երկրորդն է Փոքր շահ Ապասինն, յորում գրի հայոց առուտուրն շարով ընդունելի լիցի, որ գրի ի ՌԿԸ. (1068) թուին տաենկաց, զոր գտցես ցուցակսւն և ... համարովն: Երրորդն է շահ Սուլէյմանինն, յորում գրի մերս գեղջ մլքատու և Սրբոյ Աթոռոյս մաղաֆ գոլն ի ՌՁԵ. (1674) թուին տաենկաց, զոր գտցես ցուցակսւն և ... համարովն: Չորրորդն է Փոքր շահ Ապասինն, յորում գրի վասն նուիրակաց Սրբոյ Աթոռոյս, ուր և գնայցեն, ոչ ոք ներհակիցի և յօրէնս մեր մի ոք ձեռնամուխ լիցի ի ՌԿԹ. (1659) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն: Հինգերորդն է Փոքր շահ Ապասինն, յորում գրի, թէ եթէ ոք վանօրէից վախմ ինչ կտակիցէ, ազգականքն նորա ոչ ևս կարեն (396բ) յետս առնուլ ի ՌՀԱ. (1661) թուին տաենկաց: Գի՛տ ցուցակսւն և ... համարովն: Վեցերորդն է շահ Սուլէյմանինն, յորում գրէ, թէ հայքն մինչ հարկատու են մեզ, մի ոք նոցա եկեղեցական արարողութեանցն արգելիչ լիցի կամ զնոսա ի տաենկութիւն բռնադատեսցէ և կամ եկեղեցեաց նորոգութեանն խօսող լիցի ի ՌՀԹ. (1669) թուին

տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Շահն զայսոսիկ տեսեալ և ինքն ևս յատուկ յատուկ գրէ զոսսա վերստին և ի ներքոյ գրէ սաստիւ, թէ և ես հրաման ետու, զի ընդդէմ այդ հրամանացդ ոչ ոք շարժիցի և կամ ընդդէմ կացցէ ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս գեղջս մերոյ մլքատուութեանն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ յամենայն յիշխանութիւնս իւր, ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին, զի թէ՛ կաթուղիկոսն և թէ՛ իւր մարդիկքն ուր և շրջիցին, մի ոք խօսիցի և արգելցէ և կամ յօրէնս նոցա խառնիցի: Եւ չափարք ի յէշմիածնի մարդկանցն ի ճանապարհին զձի մի առնուցուն: Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց, գի՛տ ցուցակաւն և համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, որ գրէ յամենայն յիշխանութիւնս իւր, թէ որպէս օրէնն է և սովորութիւն հայոց, թողէք այնպէս վարին, մի ոք խառնիցի ի յօրէնս նոցա և կամ շիլթախ առնիցէ ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով: Յիշելով, թէ և ի ՌՁԹ. (1678) թուին շահ Սուլէյմանն ևս է տուեալ այսպէս ռաղամ:

Շահ Հիւսէյինին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ ամենայն վանօրայք Երևանու, զոր ինչ կանօն է ի բնէ զայնս տայցեն, այլ մի ոք իշխեսցէ աւելի զիր ինչ պահանջել ի նոցանէ ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշէ ևս թէ շահ Սուլէյմանն ևս է տուեալ այսպէս ռաղամ, ըստ խնդրոյ Ոնոփրիոս վարդապետին ի ՌՁԵ. (1674) թուին, որ յիշեցաւ ի վերդ:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ վանօրայքն Երևանու, զոր ինչ ի ժամանակս Ամիրկունէ խանին տուեալ են, զնոյնն տայցեն, մի ոք աւելի զիր ինչ պահանջիցէ ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին Երևանու խանին, թէ ով ոք յէշմիածնայ բռնութեամբ մուլք է առեալ յետս դարձն և մի թողուր, զի այդպէս արասցեն ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ որպէս շահ Սուլէյմանն ի ՌԳԼ. (1680) թուին տուեալ է ռաղամ, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարովն, նոյնպէս և ես հրամայեմ Երևանու խան, ով ոք զմուլք ինչ յէշմիածնէ բռնութեամբ զաւթեալ է յետս դարձուցես ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Նահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Կարփու նահիայի գեօղականացս, վասն ֆիւրաֆանլու թարաֆեամա[346] տանկացն, որք ի Բաթրինչ նստին և երկրին վնաս տան, սաստիկ թամպէհ, զի մի ևս նստիցին անդ ի ՌՃԿԱ. (1712) թուին տանկաց. զի՛ տ ցուցական և ... համարովն. յիշեցաւ այս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Բաթրինչու:

Նահ Հիւսէյինին ռաղամ, զի արզ են արարեալ Շիրուանու երկիրն, թէ մեք ի բնէ Էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ մեր մի իշխեսցէ: Եւ շահն հրաման գրէ այնպէս (397ա) լինիլ ի ՌՃԿԱ. (1712) [թուին] տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարովն: Սորա սաւատ մի ևս գոյ, զի՛ տ ցուցական և ... համարովն: Յիշեցաւ այս ի Ժ. (10) գլուխն ի ճառս Գանձասարու:

Նահ Հիւսէյինին ռաղամ վասն Աստուածատուրի կաթուղիկոսի կաթուղիկոսութեանն՝ ի ՌՃԿԵ. (1716) թուին տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարովն:

Նահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ Աստուածատուր կաթուղիկոսին՝ վասն ֆռանկ պատրշացն, զի մի իշխեսցեն յիշխանութեանս մերում մնալ և զոք յաղանդն իւրեանց դարձուցանել: Յիշէ ևս, թէ ի ՌՃԿԲ. (1710) թուոջն ևս եմ տուեալ այսպէս ռաղամ Աղէքսանդր կաթուղիկոսին: Գի՛ տ ցուցական և ... համարովն՝ ի ՌՃԿԷ. (1718) թուին տանկաց:

Նահ Հիւսէյինի ռաղամ, որ խիլայ յղէ Աստուածատուր կաթուղիկոսին ի ՌՃԿԹ. (1721) թուին տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարովն:

Նահ Թահմազի ռաղամ, որ գրէ ըստ արզայի Աստուածատուր կաթուղիկոսին, թէ տանկացեալքն ի հայոց յազգականաց իւրեանց զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԿԲ. (1724) թուին տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարով:

Նահ Թահմազի ռաղամ, զի Աստուածատուր կաթուղիկոսն արզ առնէ, թէ յառաջ քան զիս խալիֆայքն ի սեւմանելոց զքահրայ ինչ ոչ են տուեալ, այժմ զմեզ նեղացուցանեն: Նահն գրէ թամպէհ՝ մի առնել այնպէս ի ՌՃԿԶ. (1724) թուին տանկաց: Գի՛ տ ցուցական և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեան:

Նահ Թահմազի ռաղամ, զի Աստուածատուր կաթուղիկոսն արզ առնէ, թէ բաց ի կանօնեալ հարկէն, զոր յամ յամէ տան վանօրայքն, զաւելի զիրս ևս պահանջեն: Եւ շահն գրէ մի առնել այնպէս ի ՌՃԿԶ. (1724) թուին տանկաց: Գի՛ տ ցուցական և ... համարովն:

Նահ Թահմազի ռաղամ վասն կաթուղիկոսութեանն Աբրահամ կաթուղիկոսին Մշեցւոյ ի ՌՃԽԳ. (1731) թուին տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարովն:

Նահ Թահմազի ռաղամ, զոր գրէ, թէ տանկացեալքն ի յազգականաց իւրեանց զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԽԳ. (1731) թուին տանկաց, զի՛ տ ցուցական և ... համարովն:

Շահ Թահմազին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աբրահամ կաթուղիկոսին Մշեցւոյ, թէ զոր ինչ ռաղամ տուեալք են նախնի թագաւորքն մեր էջմիածնի և հայոց, ամենեքեան ընդունելիք լիցին և կատարիցին, մի ոք իշխեսցէ ընդդէմ գրեցելոցն նոցա շարժիլ ի ՌՃԽԳ. (1143) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և .... համարովն:

Շահ Թահմազի ռաղամ, զոր գրէ ի տարագրութեան ժամանակին, յորժամ հանդերձեալ է վերջանալ թագաւորութիւն իւրեանց, առ Աբրահամ կաթուղիկոսն Մշեցի, թէ աղօթեա՛ վասն մեր, զի որպէս մեր նախնիքն զխնամս են ունեցեալ այդ Աթոռիդ, նոյնպէս և մեք եմք ունելոց ի ՌՃԽԳ. (1731) թուին տաճկաց: Աստ վերջացաւ թագաւորութիւնն պարսից շխօճաղին, և բռնութեամբ տիրեաց Նատր կոչեցեալն և թագաւորեաց:

Նատր շահին ռաղամ, զոր տայ ըստ արզայի Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ, վասն Թարվիզու այգեաց ճանապարհին, զի մեր մարդկանցն և անասնոց մի ոք նեղացուսցէ ի ՌՃԽԸ.[1] (1735) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ, վասն եօթն մլքատու գեօղօրէիցն մերոց, այսինքն՝ էջմիածնի, յՕշականու, Ֆռանկանոցի, Մաստարայու, Քիրաշլուի, Դիպակլուի և Ջալապիբեանտին, զի մի ոք (397բ) ձեռնամուխ լիցի ինոսա ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն և ... համարով: Յիշեցաւ այս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Ջալապիբեանտին:

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ, զի Սրբոյ Աթոռոյս նեղութիւն ինչ մի տայցէ ոք և ի կալս և ի մասիլս մի ոք չափեսցէ ի ՌՃԽԸ. (1736) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս:

Նատր շահի ռաղամ, որոյ երկու սաւատք ևս գոն, զոր գրէ ըստ խնդրոյ Թրակացի Աբրահամ կաթուղիկոսին, վասն երկրիս Երևանու վանօրէիցն, զի բաց ի կանօնաւոր հարկէն, այլ պահանջմունս ոչ առնիցեն իշխօղք ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն. և ... համարովն:

Նատր շահի ռաղամք երկուք, ընդ միմեանս կցեալք եռանկունի ձևով թուղթ, զոր գրէ ըստ խնդրոյ Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ և մաղաֆ առնէ զԱթոռս և վանօրայսն Երևանու, զոր գտցես ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն (ՌՃԽԸ.) (1735):

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ վասն չափարաց, ռահդարաց և այլոց այսպիսեաց, զի յէջմիածնի մարդկանցն ուր և պատահիցին, ոչ ինչ պահանջեսցեն ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով, որոյ սուրէթ մի ևս գոյ շարի կնքով, զոր գի՛տ ցուցակաւն և ... համարով:

---

[1] Բ. ՌՃԻԸ.

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին ճանկեցւոյ, թէ մինչև ի շահէն ռաղամ չլինի և կամ ի դիւանէն բարաթ, ամենևին զոչ ինչ տամք խնդրօղաց ի ՌՃՂԴ. (1741) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, թէ ի յէջ-միածնի գեօղս ռահդար ոչ նստիցի ի ՌՃՂԴ. (1741) թուին տանկաց, գի՛տ ցուցական և ... համարովն:

Նատր շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, թէ համիմ, ախունդ և այլք տանիկք ի գործս և ի յօրէնս սևագլխաց ոչ խառնիցին ի ՌՃՂԴ. (1741) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով: Սորա սուրէթ մի ևս գոյ:

Նատր շահի տղային ռաղամ, զի ըստ արզայի Ղազար կաթուղիկոսին գրէ, թէ Սրբոյ Աթոռոյս նուիրակացն ի շրջագայիլն մի ոք նեղացուցէ և կամ զիր ինչ պահան-ջիցէ: Եւ խան, չափար, ռահդար և այլք ի յԱթոռոյս զբան ինչ մի պահանջեսցեն բռնու-թեամբ: Եւ, թէ ի յերկրէս շահն ձի, ջորի, ուղտ և զայլ ինչ պահանջեսցէ և մէնջ մի խնդրեսցեն ի ՌՃՂԲ. (1740) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Յետ Նատր շահին թագաւորէ եղբօր որդի նորին Իպրահիմ շահն:

(398ա) Իպրահիմ շահի ռաղամ, որ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին գրէ պա-տուէր, զի խանք և այլք իշխօղք ի յԱթոռոյս զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Իպրահիմ շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, զի ի չորից մլքատու գեօղօրէիցն մերոց՝ յէջմիածնայ, յՕշականայ, Ֆռանկանոցէն և Մաստարա-յու, զի Քիրաշլու, Դիպաքլու և Ջալապիբեանոն աւեր էին, առանց գիտութեան կաթու-ղիկոսին զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Իպրահիմ շահի ռաղամ, որ գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, զի զհայոց տղայս և զաղջկունս մի քաշեսցեն ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց, գի՛տ ցուցական և ... համարով:

Իպրահիմ շահի ռաղամ, որ գրէ ըստ արզայի Ղազար կաթուղիկոսին, զի չափարք և ռահտարք ի միաբանից մերոց զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարովն:

Իպրահիմ շահի ռաղամ, որ ըստ արզայի Ղազար կաթուղիկոսին զՍրբոյ Աթո-ռոյս մաղափութիւնն վերահաստատէ, որպէս առաջին թագաւորքն արարեալ են ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Իպրահիմ շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, զի շխիս-լամ և այլք տանիկք ի բանս օրինաց մերոց ոչ խառնիցին ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցական և ... համարով:

Իպրահիմ շահի ռաղամ, որ գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, զի տանկացեալքն ի քրիստոնէից, յազգականաց իւրոց զղաւի ոչ առնիցէ վասն ընչից ի ՌՃԿԱ. (1748) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն:

Իպրահիմ շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, զի զապիթք և դիւանագիրք ի մլքատու գեօղօրէիցն Սրբոյ Աթոռոյս՝ յէջմիածնայ, ի յՕշականայ, ի Ֆռանկանոցէն և ի Մաստարայու, զի Քիրաշլուն, Դիպաքլուն և Ջալապիքեանտն աւերք էին, առանց կաթուղիկոսի գիտութեան զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌՃԿԲ. (1749) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարովն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս:

(398բ) Յետ Իպրահիմ շահին վերջացաւ և թագաւորութիւնն ի յազգէն Նատրին և միանգամայն ի յազգէն պարսից: Ապա ժամանակ ինչ թագաւորապէս տիրեաց բոլոր երկրիս Պարսից աղուան Ազատ խանն, որ էր զօրապետ Նատր շահին, որոյ ռաղամքն տե՛ս:

Ազատ խանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Մինաս կաթուղիկոսին Ակնեցւոյ, զի հայքն զօրէնս իւրեանց համարձակ պաշտիցեն և կաթուղիկոսն ըստ օրինին իւրեանց կառավարեսցէ զազգն իւր և մի ոք խառնիցի և կամ ներհակիցէ ի ՌՃԿԴ. (1751) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Մինաս կաթուղիկոսին, զմաղաֆութիւնն Սրբոյ Աթոռոյս վերահաստատելով լաւապէս, ըստ ամենայնի ի ՌՃԿԴ. (1751) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, որ յամենայնի մաղաֆ առնէ զՍուրբ Աթոռս ի ՌՃԿԵ. (1752) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Մինաս կաթուղիկոսին, թէ ով ոք ի յԱթոռոյն զշալթուք է փոխ առեալ, յետս դարձուսցէ զփոխն ի ՌՃԿԵ. (1752) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ մինչ վանորայքն ամայի են լեալք նոցա տասն և եօթն թումանն քեզ բաշխեցի ի ՌՃԿէ. (1754) թուին տանկաց: Այս հինգ ռաղամս յիշեցան ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին երկրիս իշխողացն, թէ էջմիածին, զոր ինչ ռաղամս ունի ի հին թագաւորացն, զամենայն ընդունիցիք ի ՌՃԿէ. (1754) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին Պօլսեցւոյ գրէ, թէ որպէս ի քնէ անտի թագաւորաց ռաղամօք մաղաֆ է լեալ էջմիածին, նոյնպէս և ես մաղաֆ արարի, ուրեմն ոչ ոք խնդրեսցէ ի նոցանէ զքահրայ, զքաղաք, զմալուշհաք, խարճ ոչխարի, անասնոց, քեարվանսարայի, ջրաղացի, դնկի, ձիթահանքի, համամի և այլոց այսպիսեաց ի ՌՃԿԸ. (1755) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին Պօլ-սեցւոյ, թէ ի ժամանակս Նատր շահին, որ էջմիածնի մաղափութիւնն լեալ է տասն թուման և էՌ. (7000) դիան ճաղտ և վաթսուն և վեց խալվար ջինս, նմանապէս և ես հրամայեմ լինիլ մաղաֆ: Իսկ ի ֆոյդ ժամանակիդ, որ տասն թուման ճաղտ և ֆառասուն և մէկ խալվար ջինս աւելի է ի մաղաֆութենէդ, զայդ ևս ֆեզ բաշխեցի ի ՌՃԿԸ. (1755) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ էջմիածնի եկօղաց և գնացօղաց, սևագլխաց և ուխտաւորաց, ռահտարֆ և այլֆ մի մերձեցին և զիր ինչ պահանջեսցեն ի ՌՃԿԸ. (1755) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարով:

Ազատ խանի ռաղամ, զոր տայ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին վասն ամայի վանօրէից տասն և եօթն թումանին, զի յԱթոռոյս մի պահանջիցեն ի ՌՃԿԸ. (1755) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և ... համարով: Յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն, ի[I] (423ա) ճառս մաղաֆութեանն:

Քեարիմ խանին ռաղամ, որ և սա փայլի ի ներկայումս ի մերս ժամանակի, զոր գրէ վասն կաթուղիկոսութեանս մերոյ ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճկաց:

Քեարիմ խանին ռաղամ, զի առաֆեցաֆ մեֆ առ սա զօրինակ այնր թղթոյն, զոր Յակոբ կաթուղիկոսն Շամախեցի և մեֆ ի Հիւսէին Ալի խանէն առեալ եմֆ տասն և չորս գլխով, որ յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն և ի սմանէ խնդրե-ցաֆ զայնպիսի թուղթ, որ և գրեաց նոյնպէս յատուկ յատուկ և սաստիկ պատուիր-մամբ երկրիս իշխողացն, որ լաւ պիտանի և հարկաւոր է ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճ-կաց, զի՛ռ ցուցակաւն և ... համարով: Եւ զորպէսն տասն և չորից խնդրոցն ի ԻԱ. (21) գլուխն և ի ճառս խանից գրեանցն տե՛ս[II]:

---

[I] Զգրված՝ 399ա-422բ

[II] Զգրված՝ 423բ-424բ

## (425ա) ԳԼՈՒԽ ԻԱ.

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՒ ՊԻՏԱՆԻ ԹՈՒՂԹՔ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԽԱՆԻՑ ԵՒ ՀՈՒՃԵԹՔ ԵՒ ՇԱՐԹՆԱՄԱՅՔ ԴԻՒԱՆԱԳՐԱՑ ԵՒ ՇԽԻՍԼԱՄԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԱՅՍՊԻՍԵԱՑ ԳՈՐԾԱԿԱԼԱՑ, ԹԷ ՈՐՊԷ՞Ս ԵՒ ՅԻ՞ՆՋ ՊԱՏՃԱՌԷ, ՏԵ՛Ս Ի ՅՍՏՈՐԵՒՍԴ

Ա. Մեծն շահ Ապաս թագաւորն պարսից ի յառնուլն զերկիրս Հատրբեջանու ի յօսմանցւոց՝ կարգէ երկրիս Երևանու խան զԱմիրկիւնէ կոչեցեալն ի թուին տաճկաց ՌԺԲ. (1012) և ի մերում թուոջ ՌԾԲ. (1603) ի ժամանակս Մելքիսէթ կաթուղիկոսին: Ապա ի փոփոխմանէ իշխանութեանց և յանտիրութենէ Աթոռոյս, նոյն Ամիրկիւնէ խանն զմուլք գեղջս մերոյ էջմիածնի զաւթեալ ուտէ ի բազում ժամանակս: Ապա ի ցուցանելն աթոռայնոցս զվախուպնամայն Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսին, զորս յիշեցաք ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս մլքատուութան գեղջս մերոյ, զգիր մի տայ, թէ չգիտելով իմ գեօղիս այսորիկ էջմիածնի գոլն ժամանակ ինչ բռնութեամբ կերի զմուլքն սորին, յետոյ ի գիտելն իմ՝ շնորհեցի վերստին Աթոռոյն: Ուրեմն մի ոք իշխեսցէ այսուհետև թէ՛ յազգականաց իմոց և թէ՛ յայլոց ձեռնամուխ լինիլ ի մուլք գեղջս այսորիկ ի թուին տաճկաց ՌԻԹ. (1619), թղթոյս այսորիկ երկու սաւատք գոն շարի կնքով, զորս գտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն:

Բ. Ապաս ղուլի խանն՝ որդի Ամիրկիւնէ խանին, յարուցանէ դաւ ընդ Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, որպէս յիշեցաւ ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս մլքատուութեան գեղջս մերոյ, թէ մուլք գեղջս էջմիածնի իմ է, զի հայրն իմ էկեր յայնքան ժամանակ: Յետոյ ի հաւաստելն վախուպնամայիւ և այլովք, թէ Աթոռոյս է լեալ ի բնէ, ապա և սա տայ զթուղթ մի շարի վկայութեամբ, թէ հաւաստեաւ գիտացի, որ մուլք գեղջս այսորիկ էջմիածնի է, որոյ սաւատն գոյ շարի կնքով, ի ՌՀԲ. (1661) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Գ., Դ. Խոսրով խանն, որ չորրորդ էր զկնի Ամիրկիւնէ խանին, երկու թալղայ տայ ըստ խնդրոյ Փիլիպպոս կաթուղիկոսին և մաղաֆ առնէ զՍուրբ Աթոռս ի ՌԾէ. (1647) և ի ՌԾԹ. (1649) թուոջն տաճկաց, զորս գտցես ցուցակօքն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան, յորս գրին ինն այգի, ինն ջրաղաց և ութ հարիւր յիսուն ոչխար մաղաֆ:

Ե. Վերոյ յիշեցեալ Ապաս ղուլի խանդ ի խան նստիլն յԵրևան շատ սէր ցուցանէ Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, սա տայ զիւր հօր շինեալ այգին Սրբոյ Աթոռոյս, որ է մերձ Սուրբ Շողակաթին, որպէս յիշեցաւ ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէիցն: Եւ այս Ապաս ղուլի խանիս արզ առնէ Յակոբ կաթուղիկոսն, թէ որպէս հայր քո Ամիր-կիւնէ խանն և եղբայր քո Թահմազ ղուլի խանն զսէր և զբարեկամութիւնս են ունե-ցեալ առ Սուրբ Աթոռս, նոյնպէս և դու պարտիս ունիլ: Երկրորդ, թէ Բաթրինչ գեօղն գիտես, որ Սուրբ Աթոռոյս է և խոտհարք սորին, նորա հարկն մէկ թուման էր, մենք եօթն թուման տամք, եթէ աւելի պահանջէք, աւերի գեօղն: Երրորդ, թէ ի մէջ էջմիածնի զջուր հանեցի քանքանաւ, որ մեծ օգուտ եղև գեղջն ի վերայ այն ջրոյն, եթէ զաւերմ ինչ սերմանիցեմք՝ ոչ պարտին զբահրայ առնուլ: Եւ խանն, ըստ երից խնդրոցն, յատուկ յատուկ հրաման գրէ և կնքէ ի վերայ միոյ մեծ թղթոյ: Գի՛տ ցուցակաւն:

Զ. Սոյն Յակոբ կաթուղիկոսս, մինչ կրկին գնայ ի յԸստամպօլ և անդ վախճանի, իսկ սորին տեղապահ և լուսարար Սրբոյ Աթոռոյս Ստեփաննոս վարդապետն արզ առնէ (425բ) վրացի Սէֆի ղուլի խանին, թէ գիտես, որ Բաթրինչ գեօղն Սրբոյ Աթոռոյս խոտհարքն է և շահի հրամանաւ մեք հանել տուաք զհիւրաքանչլու քիւտսն ի նմանէ, այժմ կամին զայն գեօղն առնուլ ի մէնջ: Երկրորդ, թէ կաթուղիկոսն յԱթոռոջս չէ, աստի և անտի գան և դաւ յարուցանեն ընդ Աթոռոյս և դապալայ խնդրեն, խնդրեմ, զի տիրութիւն արասցես, և խանն ըստ իւրաքանչիւր խնդրոցն գրէ հրաման և կնքէ մի թուղթ է, զոր գտցես ցուցակաւն: Յիշեցան սոքա ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս Բաթրինչ գեղջն:

Է. Ի ժամանակս շահ Սուլէյմանին և Եղիազար կաթուղիկոսին մերոյ դիւանագիրք արքունի տան Սրբոյ Աթոռոյս զգիր մի մաղաֆութեան, յորում գրեն տասն և երկու այգի, ութ ջրաղաց, հինգ դինք, երեք քրքրայ Սրբոյ Աթոռոյս և քսան և չորս այգի և քսան և երեք ջրաղաց, տասն և չորս վանօրէից ի ՌՃԼԵ. (1686) թուին տաճկաց, զոր գի՛տ ցուցակաւն, որոց որպէսն լիովին յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Ը. Սոյնպէս թուղթ մի ևս ի ժամանակս շահ Հիւսէյինին և Աստուածատուր կաթու-ղիկոսին մերոյ տան Սրբոյ Աթոռոյս դիւանագիրք: Յորում երեսուն և չորս այգի գրեն, տասն և մէկն Սրբոյ Աթոռոյս և քսան և երեքն վանօրէից, երեսուն և ինն ջրաղաց գրեն, տասն և երկուսն Սրբոյ Աթոռոյս և քսան և եօթն վանօրէիցն, քսան ձիթահանք գրեն, երկուքն Սրբոյ Աթոռոյս և տասն և ութն վանօրէիցն ինն դինկ գրեն, հինգն Սրբոյ Աթո-ռոյս և չորսն վանօրէիցն ի ՌՃԼԱ. (1718) թուին տաճկաց, զոր գի՛տ ցուցակաւն: Յիշե-ցաւ այս լիովին ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն: Յայս թղթոյս մի ևս գոյ նման սմին ամենայնիւ:

Թ. Ի ժամանակս շահ Հիւսէինին և Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսին մերոյ Մէհրալի խանն Երևանու զթալղայ մի տայ Սրբոյ Աթոռոյս հինգ տաճիկ վկայից կնքով ի ՌՃԻԱ. (1709) թուին տաճկաց, նոյնպէս և ի ժամանակս Աստուածատուր կաթուղի-

կոսին մերոյ Ալլահ ղուլի խանն Երևանու, զթալղայ մի տայ Սրբոյ Աթոռոյս միոյ տանիկ վկայի կնքով ի ՌՃԼԴ. (1721) թուին տանկաց: Եւ ի ժամանակս Պօլսեցի Աղէքսանդր կաթուղիկոսին մերոյ աղուան Ազատ խանն զռաղամ մի տայ Սրբոյ Աթոռոյս ի թուին տանկաց ՌՃԿԲ. (1754): Եւ երեքեանքն ևս վկայելով, թէ կէս գետոյդ Քարձաղու էջմիածնի է և կէսն միւս գեօղօրէիցն՝ ի բնէ անտի թագաւորաց հրամանաւ: Հրամայեն և ինքեանք, զի այսպէս լիցի միշտ: Գի՛տ զայս երեք թուղթս ընդ միմեանս կցեալ, յերեսն գրեցեալ ցուցակաւն և Թ. (9) համարով, յիշեցաւ այս ի ԺԲ. (18) գլուխն ի ճառս ջրոցն:

Ժ. Նատր շահի դիւանագիրքն զթուղթ մի տան Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԽԲ. (1735) թուին տանկաց, ըստ խնդրոյ Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ, թէ այս եօթն գեօղօրայքս, այսինքն՝ էջմիածին, յՕշական, Ֆռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու և Զալապիքեանտ, մեք հաւաստեաւ վերահասու եղաք, որ ի բնէ անտի մուլք են էջմիածնի: Գի՛տ զայս գիրս ցուցակաւն: Յիշեցաւ այս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս էջմիածնի գեօղիս մլքատուութեանն:

ԺԱ. Շխիսլամի հինէթ և բազմակնիք թուղթ, որ գրեն և վկայեն, թէ Քուլթափեցիքն ի յէջմիածնի ջրոյն ոչ ունին զբաժին և ոչ են տարեալ զնա ի ցանքս իւրեանց ի ՌՃԾԵ. (1742) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

ԺԲ. Սոյնպէս և խանն Երևանու, ըստ խնդրոյ Ղազար կաթուղիկոսին, գիր տայ Սրբոյ Աթոռոյս, թէ Քուլթափեցի տանիկքն յէջմիածնայ ջրոյն ջուր չունին բնաւ: Վասն որոյ ոչ պարտին (426ա) մերձենալ ի ջուրս նոցա ի ՌՃԾԵ. (1742) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն: Յիշեցան սոքա ի ԺԸ. (18) գլուխն ի ճառս ջրոցն:

ԺԳ. Շխիսլամի հունէթ և տանկական բազմակնիք թուղթ վասն արօտատեղեաց անասնոցն մերոց յատկացուցեալ սահմանօք ի կողմն Քուլթափայ կոչեցելոյս գրեցեալ ի ... թուոյն տանկաց, զոր գտցես ցուցակաւն: Յիշեցաւ այս ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտօրէից: Գոն և այլք թուղթք վասն այս Քուլթափայեցւոց, զորս յիւրաքանչիւրն ի տեղւոջն տեսցես:

ԺԴ. Ի մեր քարվանսարայոջս կամ ի գեօղս ռահդար ոչ է նստեալ երբէք: Սակայն ի ժամանակս Ղազար կաթուղիկոսին ռահդար ոմն Իպրահիմ աղա կոչեցեալ ի միւս գեօղորայսն ոչ կարացեալ նստիլ վասն նեղութեան ժամանակին, եկեալ առ Ղազար կաթուղիկոսն աղաչէ, զի թողուցու ժամանակ ինչ ի մեր գեօղս նստիլ և Ղազար կաթուղիկոսն զգիր մի առնու ի նմանէ, որ գրէ, թէ ի յայս գեօղս ռահդար ոչ է նստեալ երբէք, ես խնդրեցի ժամանակ ինչ նստիլ այսու պայմանաւ, զի ի հանդարտիլ միջոցին գնացեալ յիմ տեղս նստիցիմ ի ՌՃԾէ. (1744) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն, որ է վկայական ի հարկաւորութեան ժամանակին:

ԺԵ. Խալիլ խանն, ըստ խնդրոյ միաբանից Սրբոյ Աթոռոյս, հրամայէ դիւանագրաց վերահասու լինիլ մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս, որք և երեք անձինք վերա-

հասու լեալ գրեն և կնքեն հաւաստի գոլ: Ապա և խանն ի գլուխ արզային գրէ զհաստատ մաղաֆ գոլն Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԿՁ. (1752) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

ԺՁ. Նոյն Խալիլ խանս ի նոյն թուղթս զգիր մի ևս Սրբոյ Աթոռոյս տայ գրելով, թէ որովհետև դուք մաղաֆ էք, ձեր մասիլն ոչ պարտի չափիլ, գի՛տ ցուցակաւն: Յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

ԺԷ. Նոյն Խալիլ խանս զգիր մի ևս տայ ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին գրելով, թէ ուխտաւորաց և միաբանից Աթոռոյն ռահդարն ոչ բնաւ մօտեսցի ի ՌՃԿԷ. (1753) թուին տաճկաց, ցուցակաւն գտցես:

ԺԸ. Նոյն Խալիլ խանս զգիր մի ևս տայ Սրբոյ Աթոռոյս, ըստ խնդրոյ Աղէքսանդր կաթուղիկոսին գրելով, թէ յՕշականայ գետոյ ջրոյն կէսն էջմիածնի է և կէսն միւս գեօղորէիցն ի ՌՃԿԸ. (1754) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն: Յիշեցաւ այս ի ԺԸ. (18) գլուխն ի ճառս ջրոցն:

ԺԹ. Նոյն Խալիլ խանս զգիր մի ևս տայ Սրբոյ Աթոռոյս վասն մեր քարվանսարային, թէ որպէս ի բնէ կարգն է վաճառականաց բեռն բացուի և կապվի, Երևան նստող բազազքն մի խօսեսցին ի ՌՃԿԹ. (1755) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն:

Ի. Ղաճար Հասան Ալի խանն, որոյ զերկու աչսն բրեաց Նատր շահն և երբեմն խան նստաւ Երևան, զգիր մի տայ Սրբոյ Աթոռոյս, ըստ արզայի Յակոբ վարդապետին Շամախեցւոյ, վասն մեր քարվանսարային, թէ դիւանի խարճն վանքին կուտան ի նմա նստողքն և վանքն տայ դիւանին, Երևանայ բազազներն ոչ կարեն խառնիլ ի տուրս և յառս նոցա ի ՌՃԿԸ. (1755) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

ԻԱ. Նոյն Հասան Ալի խանիս Աղէքսանդր կաթուղիկոսն զարզայ մի գրէ, թէ երկրիս վանօրայքն, զորս յանուանէ գրէ ամայի են, որպէս գիտես, զհարկս նոցա երբեմն խնդրեն ի մէնջ դիւանագիրքն: Այլև մեր Աթոռս մաղաֆ է, որպէս գիտես, բայց երբեմն նեղութիւն տան մեզ: Խնդրեմ, որ այնպէս գիր մի տաս մեզ, որ յաւիտեան յիշատակ մնայ քեզ: Ապա, ըստ հրամանի խանին նախապէս երկրիս բոլոր մեծամեծ տանիկքն գրեն և կնքեն, թէ վանօրայքն երկրիս ամայի են, զորս գիտեմք, (426բ) և էջմիածին ի բնէ մաղաֆ է յամենայն կողմանէ, որում մեք վկայեմք: Ապա և խանն ի գլուխ արզային գրէ հրաման, թէ որովհետև վանօրայքն ամայի են, վասն նոցա ոչ ոք պարտի զիր ինչ պահանջել ի յէջմիածնէ: Նոյնպէս և էջմիածին, մինչ ի բնէ մաղաֆ է լեալ յամենայնի, նոյնպէս և պարտի մաղաֆ մնալ ի ՌՃԿԸ. (1755) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն: Շատ լաւ թուղթ է և պիտանի և զգուշութեամբ պահելի վասն մաղաֆութեանն Սրբոյ Աթոռոյս, մինչ բազմութիւնքն վկայեն: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

ԻԲ. Զկնի այս Հասան Ալի խանիս նստի Երևան խան սորին եղբայր Հիւսէին Ալին և տիրէ, որպէս թէ ինքնագլուխ, որ իշխէ ևս ի ներկայումս ի ժամանակս մեր: Ի ժամանակս սորա նստի կաթուղիկոս յԱթոռս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսն, զոր ի բազում տեղիս յիշեալ եմք ի ՌՄԸ. (1759) թուոջն մերում և ի տաճկաց ՌՃՀԳ. (1173) թուոջն: Արդ այս Յակոբ կաթուղիկոսս գոլով այր հանճարեղ, խելօք և տեղեակ ամենից այսպիսեաց իրակութեանց, մինչ տեսանէ ի ժամանակս իւր ոչ գոլ հանրապէս իշխող թագաւոր և առաջնոց թագաւորաց ռաղամիցն ևս ոչ այնքան անսային, վասն որոյ զամենայն ռաղամսն հնոց թագաւորաց, որք տրեցեալք են Սրբոյ Աթոռոյս, ըստ խնդրոց յառաջնոց հայրապետացն իւրաքանչիւրքն վասն յատուկ յատուկ խնդրոց ի մի բերեալ և ժողովեալ զնիւթս և զդիտմունս նոցին և զաւելի խնդիրս ևս ինքն մուծանէ ի նոսա և գրեցուցեալ ի վերայ թղթոյ միոյ արզայապէս մատուցանէ յիշեալ Հիւսէին Ալի խանին ասելով, թէ որովհետև մեր իշխօղն այսօր դու ես, ի գլուխ թղթոյս հրաման և ռաղամ գրեա, զի քոյդ հրամանաւ կատարեսցեն այսոքիկ խնդիրք և քեզ յիշատակ յաւիտենական մնասցէ յԱթոռոջս: Եւ գրեցեալ խնդիրքն և հրամանքն են տասն և չորք:

Որք են այսոքիկ նախ, թէ որպէս առաջնոց թագաւորաց ռաղամօքն հաստատեալ է, զի էջմիածնի խալիֆայն և ամենայն իւր միաբանքն և մարդիկքն և ամենայն մուլքն յամենայնի մաղաֆ լիցին և ոչ ոք իշխեսցէ պահանջել ի նոցանէ զդինար մի և ամենայն արտորայք և մասիլք նոցին ոչ չափիցին, նոյնպէս և այժմ լիցի:

Երկրորդն, թէ յԵրևանու երկրէն թէ՛ հայք և թէ՛ տաճիկք, եթէ ի յէջմիածնի հողն զսերմ ինչ սերմանիցեն, զմուլքն տայցեն խալիֆայիհն, որպէս օրէն է:

Երրորդն, թէ զզանկակ՝ զկոչնակ համարձակ ծեծեսցեն հայք ի յէջմիածին և ի վանօրայս և յամենայն յեկեղեցիս ուր և իցեն, զմեռեալս իւրեանց համարձակ բարձցեն, զժամ կոչեսցեն, բարձրաձայն ժամ ասասցեն թէ՛ ի վանօրայս և թէ՛ ի յեկեղեցիս, ոչ ոք լիցի խօսօղ և ներհակ, զի ի քնէ կանօն է ըստ հրամանի թագաւորաց:

Չորրորդն, թէ զմուլքսն էջմիածնի թէ՛ այնք, որք վախմ են և թէ՛ այնք, զորս դրամով են գնեալ, եթէ ոք ի զուր և խլաֆիշար զաւթեալ իցէ՝ յետս դարձուսցէ:

Հինգերորդն, թէ խալիֆայի սարիշտային և գործոյն մի ոք հակառակիցի ո՛չ վարդապետք, ո՛չ քահանայք, ո՛չ աշխարհականք, ո՛չ հայք և ո՛չ տաճիկք:

Վեցերորդն, թէ ի վրդովեալ ժամանակսն, ոմանք զինչս բերեալ ամանաթ դնեն ի յԱթոռս, յորոց զոմանս տեարքն տանին, զոմանս երկրի իշխօղքն զաւթեն և ոմանք աստ և անդ փչանան: Յետոյ տեարքն նոցին թէ՛ տանօղքն և թէ՛ ոչ տանօղքն զան դաւի առնեն: Հրամայեմ, զի մի լիցի այսպէս:

Եօթներորդն, թէ եթէ ոք էջմիածնի զմուլք ինչ ծախեալ իցէ և կամ վախմ տուեալ, յետ մեռանելոյ նորին ազգականք նորին զդաւայ մի (427ա) արասցեն ոչ վասն ծախեցելոցն և ոչ վասն վախմիցն:

Ութերորդն, եթէ տաճիկք թամասուկով զդրամ և կամ զայլ ինչ տալոց իցեն էջմիածնի և ոչ տան, դու բեկլարբեկի առցես և տայցես էջմիածնի:

Իններորդն, տաճիկք բռնութեամբ զհայս մի տաճկացուսցեն:

Տասներորդն, թէ էջմիածնի նուիրակունքն և այլք միաբանքն յուր և իցէ ի շրջիլն, ըստ սովորութեան իւրեանց, գեօմրուկչիք, բաջչիք, ռահդարք մի մեծնեցին ի յինչս և ի ևուրս նոցա և մի ինչ պահանջեսցեն, նոյնպէս և յուխտաւորացն էջմիածնի մի ոք զիր ինչ պահանջեսցէ:

Մետասաներորդն, թէ չափարք մի իշխեսցեն առնուլ զձիս ի յէջմիածնի մարդկանցն:

Երկոտասաներորդն, թէ՛ տաճիկք և թէ՛ հայք մի ոք իշխեսցէ յանդս և ի յայգեստեղիս և յայլս տեղիս էջմիածնի զսերմն սերմանել և կամ յափշտակել:

Երեքտասաներորդն, թէ յՕշականու գետոյ ջրոյն կէսն էջմիածնի է և կէսն միւս գեօղօրէիցն՝ հաստատեցեալ ի բնէ անտի ռաղամօք թագաւորաց, նոյնպէս և լիցի միշտ: Չորեքտասաներորդն, թէ էջմիածնի միաբանքն ի բնէ անտի մաղափք են ռաղամօք թագաւորաց և ելեալք ի ղալամից, որք ոչ ինչ պարտին տալ ումեք:

Արդ ի յայս չորեքտասան խնդիրս ի վերջ յիւրաքանչիւրոցն գրէ յատուկ յատուկ պատուէր և սաստիկ թամպէհ իշխողաց, միրզայից և այլոց գործակալաց, զի զայսսիկ հրամանս կատարեսցեն անպակաս: Եւ մանաւանդ ի յիւրաքանչիւրսն ևս գրէ, թէ որպէս ունին և զռաղամս ի թագաւորաց: Լինի այս ի ՌՃՀԳ. (1759) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Արդ ուրեմն մտածեա դու զպիտանաւորութիւն և զշահաւէտութիւն թղթոյ այսորիկ և լաւապէս պահեա, զի թէ տուօղն չէ թագաւոր, սակայն վկայէ, թէ այսպէս են լեալ ի բնէ և ունին և զռաղամս ի թագաւորաց: Եւ մանաւանդ, եթէ Աստուած տայցէ զթագաւոր, կարես ըստ այսմ օրինակի և ի թագաւորէն առնուլ, որպէս մեք առաք ի թագաւորապէս իշխօղ Քեարիմ խանէն, զորմէ յետոյ տեսցես:

ԻԳ. Ըստ վերոյ գրեալ ԺԴ. (14) գլխով թղթոյդ յետոյ և մեք առաք ի յաջորդիլն մեր զկնի Յակոբ կաթուղիկոսին ի նոյն Հիւսէին Ալի խանէն ի ՌՃՀԶ. (1763) թուին տաճկաց, որ ամենևին միևնոյն է ընդ վերնոյն: Գի՛տ երեսն գրեցեալ ցուցակաւն: Ապա ի բռնանալն Քեարիմ խան Զանդ կոչեցելոյն և ի գալն ի Դաւրէժ և ի յորմի ի նմանէ ևս խնդրեցաք զայսպիսի թուղթ մի՝ առաքելով զօրինակն սորին, որ և գրեալ տայ մեզ ի ՌՃՀԶ. (1763) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն: Սակայն Քեարիմ խանի տուեալն ևս զօրեղ է և հարուստ: Եւ ի վերջ իւրաքանչիւրոցն նոյնպէս սաստիկ պատուէր[I] գրէ խանին և այլոց գործակալաց գրելով, թէ այդպէս են լեալք ի բնէ ռաղամօք թագաւորաց,

[I] Բ. > պատուէր

որք երեքեանքն ևս պիտանիք են և լաւ պահելիք: Յիշեցան սոքա ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեան և ի Ի. (20) գլուխն ի ճառս թագաւորաց գրեանցն:

**ԻԴ.** Վերոյ յիշեցեալ Հիւսէին Ալի խանն թալղայ մի տայ Սրբոյ Աթոռոյս, ըստ արզայի մերում, թէ Իմամարխն, որ է մեր հողն, որ յիշեցաւ ի ԺԵ. (15) գլուխն ի ճառս արտորէիցն Սրբոյ էջմիածնի է, ոչ ոք կարէ ձեռնամուխ լինիլ ի նա և կամ մուք պահանջել ի թուին տանկաց ՌՃՀԶ. (1763): Գի՛տ ցուցակուն վասն սորա և այլք թուղթք զոն, զորս տեսցես ի նոյն գլուխն:

**ԻԵ.** Սոյն Հիւսէին Ալի խանս հունաթապէս և վկայական գիր մի տայ սրբոյ (427բ) Աթոռոյս, ըստ արզայի մերում վասն Աշտարակու, Եղուարդու, Մօղնու և Քիրաշլու գեօղօրէիցն մլքատու լինելոյն Սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի, յիշելով և զԳրիգոր կաթուղիկոսի մեծ վախուպնամայն, զոր կնքէ հնքն, կնքեցուցանէ շխիսլամին և այլոց դիւանագրաց և մեծամեծաց ի ՌՃՁԲ. (1768) թուին տանկաց, զոր գտցես ցուցակուն: Յիշեցաւ այս ի ճառս մլքատուութեան սոյն գեօղօրէիցս ի ԺԳ. (13) գլուխն:

Սոյն խանս զգիր մի ևս տայ Սրբոյ Աթոռոյս, ըստ խնդրոյ մերում վասն երեք դանկ մլքատուութեան Ֆռանկանոց գեղջն Սրբոյ Աթոռոյս ի ՌՃՁԲ. (1768) թուին տանկաց, զոր գտցես ցուցակուն: Յիշեցաւ այս ի ճառս մլքատուութեան սոյն գեղջս ի ԺԳ. (13) գլուխն՝ հանդերձ պարագայիւքն[I]:

---

[I] Զգրված՝ 428ա-431բ

## (432ա) **ԳԼՈՒԽ ԻԲ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՅԱՆԻՆ ՖԱՐՄԱՆՔ ՕՍՄԱՆՅԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՀԱՐԿԱՒՈՐ ԳՐԵԱՆՔ, ՋՈՐՍ ՏՈՒԵԱԼ ԵՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ[347]

Նախապէս գիտելի է, զի ի բնէ անտի կանօն և սովորութիւն է լեալ, զի կաթուղիկոսունքն Սրբոյ Աթոռոյս համարձակ և անմիջնորդ առ յամենայն թագաւորս թէ՛ քրիստոնէից, թէ՛ պարսից և թէ օսմանցւոց զգիրս և զարզայս գրեսցեն, երբ և կամիցին, որպէս տեսանես ահա զուղամս պարսից և զֆարմանս օսմանցւոց թագաւորաց, զորս արզայիւքն իւրեանց և կամ ի ձեռն վեքիլից և կամ ոմանց իշխանաց առեալ են կաթուղիկոսքն մեր ի յիւրաքանչիւր ժամանակս, որ և է այսպէս մինչև զայսօր առ քրիստոնեայ թագաւորսն, եթէ հարկ լինիցի և առ Պարսից թագաւորսն, թէ լինիցին: Իսկ առ օսմանցւոց թագաւորսն տևեաց այս կանօն մինչև ի ՌՃՀԵ. (1726) թիւն մեր և ի ՌՃԼԸ. (1138) թիւն տաճկաց, յորժամ ընտրեցաւ ի մեծ քաղաքն Պօլիս ի կաթուղիկոս Սրբոյ Աթոռոյս Կարապետ վարդապետն Ջէյթունցի և առաջնորդն էնկիւրիու և ի Պօլիս օծեցաւ կաթուղիկոս թելադրութեամբ Բաղիշեցի Յովանէս վարդապետին, որ պատրիարգ էր նոյնոյ քաղաքին և զնոյն Յովանէս վարդապետն և զայլս ոմանս վարդապետս ի նոյն քաղաքոջն ձեռնադրեաց եպիսկոպոս: Արդ, որպէս ասացաք, մինչև յայս Կարապետ կաթուղիկոս էջմիածնանիստ կաթուղիկոսքն ինքեանք և կամ իւրեանց նուիրակօքն և կամ ի ձեռն ոմանց իշխանաց անխտիր գրէին զարզայ առ թագաւորսն օսմանցւոց և առնուին զխնդրելիսն, որպէս տեսանես ի յառաջակայդ: Միայն ի նոր հրաւիրիլն կաթուղիկոսացուին ի կաթուղիկոսութիւն արզայն ի բերանոց ժողովրդոցն գրիւր առ թագաւորն և նա ըստ խնդրանացն տայր զբարաթ ֆարմանն կաթուղիկոսութեան:

Ապա ի հրաւիրիլն ի կաթուղիկոսութիւն վերոյ յիշեալ Կարապետ կաթուղիկոսիդ, որ էր յայն կուսացի և մանաւանդ ի վիճակէն Սսայ, Աթոռոյս ոգիսութեան պատուոյն և իշխանութեանն ամենևին անտեղեակ, ինքն ևս ծեր և պարզամիտ: Իսկ այն Յովանէս վարդապետն Բաղիշեցի, որ էր պատրիարգ Պօլսոյ խորամանկ, շոքմոգ, կեղծաւոր և խաբօղ, որպէս բերքն է Բաղիշու և այնց կողմանց:

Վասն որոյ ժամ գտեալ այս Յովանիսիս, որում ի վաղուց հետէ ցանկայր զարզայն և զայլս խնդրանաց գրեանսն Կարապետ կաթուղիկոսին ինքն նոյն Յօհանէս

վարդապետն գրէ ի յիւր բերանոյն առ թագաւորն գրելով, թէ ըստ խնդրոյ ազգիս մերոյ զԿարապետ վարդապետն կաթուղիկոս արարաք: Եւ թագաւորն ևս գրէ, թէ ըստ արզայի Յովանէս փարիկին եռուք զհրաման: Այսու հնարիւք այդ Յովանէս նենգաւորդ հատանէ զգիրս և զարզայս կաթուղիկոսացն Սրբոյ Աթոռոյս ի դրանէ թագաւորին և յիւր կողմն արկանէ, որ և մնայ այս սովորութիւն, զի կաթուղիկոսաց բարաթքն և այլք հոգալիքն Սրբոյ Աթոռոյս Պօլսոյ պատրիարգի արզայիւն լինիցին և ինքեանք կաթուղիկոսքն և այլք իւրայինքն ոչ կարիցեն զարզայ ինչ գրել առ թագաւորն օսմանցւոց, որպէս և տեսանես ի յառաջակայդ, զի ի Կարապետ կաթուղիկոսէն ցայս վայր որքան ֆարմանք և բարաթք գոն ի յօսմանցւոց թագաւորէն ըստ արզայից պատրիարգին են տրեցեալք: Եւ մինչ այսու նենգաւորութեամբ առին Պօլսոյ պատրիարգունքն զպախուրցս կաթուղիկոսացն ի ձեռս իւրեանց, այնուհետև սկսան խաղացուցանել զնոսա, որպէս և կամեցան, զի ի խնդրելն կաթուղիկոսաց զֆարման ինչ ի պատրիարգաց, (432բ) եթէ անվնաս է իւրեանց և կաթուղիկոսացն ևս ոչ այնքան օգտաւարք առնուն և առաքեն, իսկ եթէ նշուլիւք ինչ վնաս է իւրեանց և կամ կաթուղիկոսացն մեծ օգտաբեր, պատճառաւ իւիք բացասեն՝ պատասխանելով, թէ ոչ կամի թագաւորն: Եւ հոգացելոց ֆարմանացն ևս զծախսն միոյն տասնապատիկ բարդելով առնուն ի կաթուղիկոսացն, զոր օրինակ ի բարաթս կաթուղիկոսացն տուրքն, զորս տան յարքունիս ի նոր նստիլն վեց հազար և ութն հարիւր ստակ գրին, որ է յիսուն և վեց ղուռուշ օսմանցւոց և քսան և վեց փարայ և երկու ստակ: Այս է տուրք կաթուղիկոսացն մերոց, որք ի նստիլն, որպէս թէ զընծայ իմն և կամ զմախթու տան օսմանցւոց թագաւորացն ի սկզբանն միայն: Դիցուք թէ և քանի դրամ ևս ի դրունսն վատնիցին: Բայց պատրիարգունքն ի հոգալն զբէրաթսն կաթուղիկոսաց առնուն որքան և կամին, մինչև ի յերկու և յերեք հազար ղուռուշս աւելի ցուցանելով զծախսն: Այս միայն կաթուղիկոսական բարաթին յաղագաւ: Իսկ եթէ պատահի, զի և զայլս ֆարմանս ևս հոգալոց իցեն, վասն նոցա ևս յատուկ առնուն աւելեօք: Այս այսպէս:

Դարձեալ ի յառաջնոց կաթուղիկոսաց բարաթոջն, մինչև ի Շամախեցի Յակոբ կաթուղիկոսն, որ նստաւ ի ՌՄԸ. (1759) թուոջն մերում, արքունական տուրքն յիսուն և վեց ղուռուշ, քսան և վեց փարայ և երկու ստակ են գրեցեալք, որպէս ասացաք, որ է վեց հազար և ութն հարիւր ստակ: Իսկ ի բարաթն Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին տասն հազար և ութն հարիւր ստակ է գրեցեալ, որ է իննսուն ղուռուշ, որոյ պատճառն է, զի վասն Ջմիւռնոյ քաղաքին, որ է տէրունի թեմ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի [Ջ.] գլուխն, որոյ նուիրակն ի Սրբոյ Աթոռոյս գնայ և առաջնորդ ևս կոչի, որ է այսպէս մինչև ցայսօր, Պօլսոյ պատրիարգունքն մախային միշտ և մոմռային անդադար, զի ի կողմն իւրեանց արկցեն, որպէս զի և զնորին առաջնորդն ինքեանք առաքեսցեն, որպէս և արարին այլոց քաղաքացն, որպէս ասացաւ լիովին ի Ը. (8) գլուխն, պատճա-

ռելով, թէ թագաւորն թէֆթիշ առնէ և զմախթուն խնդրէ ի մէնջ և թէ ի Պարսկաստան նստի կաթուղիկոսն և յիմ երկիրս առաջնորդ առաքէ առանց ֆարմանի: Եւ զայլս այսպիսիս ստապաճոյնս յօդեալ ասէին միշտ:

Ապա ի վերոյ գրեցեալ թուոջն, յորում նստաւ Յակոբ կաթուղիկոսն Շամախեցի, մեք ի Պօլիս նուիրակ էաք և սոյն վէճս ևս յարոյց տեղւոյ պատրիարգ Յակոբ վարդապետն Ջմառացի ի Սսայ տանէն, մինչ գրէ թէ առնուլ կամէր զԻզմիր: Ապա մեք խորհրդակցեալ ընդ ոմանս բարեպաշտօն իշխանս, խնդրէաք զհնարս գտանել առ ի յազատել զԻզմիր ի բերանոց նոցա, որք և գտեալ հոգացաք իսկ Աստուծով: Քանզի Իզմիրու մախթուն, որ է արքունական հարկն, զոր ի նստիլն առաջնորդին տալ պարտի էր չորս հազար ստակ, որ է երեսուն և երեք ղուռուշ, ԺԳ. (13) փարայ և Ա. (1) ստակ, զայս ևս եդեալ ի վերայ մախթուին կաթուղիկոսացն, արարաք զնա տասն հազար ութն հարիւր ստակ, որ է իննսուն ղուռուշ: Ապա փոխելով զբարաթն Յակոբ կաթուղիկոսին՝ ձգեցաք և զանուն Զմիւռնոյ ի մէջ բարաթին, որ եղև սովորութիւն յայնմ հետէ, զի ի մէջ կաթուղիկոսական բարաթին Իզմիր ևս յատուկ գրիցի և մախթուն իննսուն ղուռուշ, որ է տասն հազար և ութն հարիւր ստակ հաշուիցի: Այսու հատաք զձայն նոցին յականջաց կաթուղիկոսացն, որք ոչ ևս կարեն ի բերան բերել Զմիւռին:

Այլև այս է գիտելի, զի Յակոբ կաթուղիկոսի արքունական գրեանքն ամենն մեր ձեռօքն եղեն հոգացեալք, որք էին՝ մէկ կաթուղիկոսական բարաթն, մէկ հավալայ ֆարման, մէկ ֆարման, թէ կաթուղիկոսն ի Կարին, ի Ղարս, ի Բայազիտ և յայլս տեղիս ի կողմանս օսմանցւոց, ուր պատահիցի և նստիցի՝ ոչ ոք խօսեսցի: Եւ մէկ ֆարման ևս, թէ՝ եթէ տաւաշի ինչ յարիցէ ի վերայ կաթուղիկոսին և ի վերայ նորին մարդկանցն՝ նոցա դատաստանն ի յԸստամ(433ա)պօլ տեսցի: Այսոցիկ չորից ֆարմանացս բոլոր ծախսն ետու եօթն հարիւր յիսուն ղուռուշ: Նմանապէս և ի նստիլն մեր զկնի Յակոբայ կաթուղիկոսին զդոյն յիշեցեալ չորեսին ֆարմանսդ ևս այդքան դրամով հոգացին իշխանքն ի Պօլիս, որք, եթէ պատրիարգի ձեռօքն իցէին հոգացեալք՝ քառապատիկ երթայր ծախսն, որ հարկաւոր է գիտել կաթուղիկոսաց, վասն այսորիկ գրեցի:

Դարձեալ և զայս գիտե՛ա, զի յառաջնումն չէ լեալ սովորութիւն և հարկ, զի կաթուղիկոսն ի նստիլն առնուցու ի յօսմանցւոց թագաւորէն զբէրաթ կաթուղիկոսութեան, մինչև ի Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն, որպէս հարկ է առնուլ ի Պարսից թագաւորաց, որովհետև Աթոռս ի յիշխանութիւնս պարսից է: Այլ յետ նստելոյն ռաղամօք Պարսից թագաւորաց յետ այնորիկ, եթէ ունեցեալ է զխնդիր ինչ ի յօսմանցւոց թագաւորացն վասն այսորիկ յատուկ արզ է արարեալ ինքն կաթուղիկոսն և հանեալ է զֆարման: Իսկ ի նստիլն Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսին, առեալ է նաև զբարաթ կաթուղիկոսութեան և ի յօսմանցւոց թագաւորէն, որպէս տեսանես ի յորպիսու-

թիւնս ֆարմանացդ, որոյ պատճառն է գլխաւորապէս եղիազարու և այլոց նոյնապի-սեաց սեագլխաց լրբութիւնն: Ուստի յայնմ հետէ եղև սովորութիւն, զի կաթուղիկոսն ի նստիլն ի յօսմանցւոց թագաւորէն ևս առնուցու զբարաթ ֆարման կաթուղիկոսութեան:

**Տես ուրեմն զգրեանս օսմանցւոց թագաւորացն**[348]

Ա. Սուլթան Մուհամատին ֆարման, առ յոր արզ առնէ Փիլիպպոս կաթուղիկոսն, թէ նուիրակունքն մեր, ըստ սովորութեան մերում ի շրջագայիլն ի յերկիրս քոյ՝ վօյվա-տայք, ենկիչարիք և այլք զապիթք զիրս պահանջեն ի նոցանէ: Եւ թագաւորն գրէ թամ-պէհ, զի մի առնիցեն այնպէս ի ՌԿԵ. (1654) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Բ. Սուլթան Մուհամատի ֆարման, որ ըստ վերնոյդ գրէ ըստ արզայի Փիլիպպոս կաթուղիկոսին ի վերայ Ղազի կոչեցելոցն, զի ի յէջմիածնի նուիրակացն զիր ինչ մի պահանջեսցեն ի ՌԿԵ. (1654) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ... համարով:

Գ. Սուլթան Մահմետին ֆարման, զի Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի ձեռն եսայի կոչեցեալ վէքիլին իւրոյ արզ առնէ թագաւորին, թէ Վանայ երկիրն իւրովք գաւառօքն, նաև՝ Դիարբէքիր, Արճէշ, Ղլաթ, Մուշ, Բաղէշ, Խօշապ[349] և այլք շրջակայքն սոցին ի բնէ էջմիածնի են վիճակ, իսկ Մարտիրոս կաթուղիկոսն Ախթամարու երբեմն ձեռնամուխ լինի ի նոսա: Վասն որոյ և թագաւորն գրէ ֆարման ի վերայ Վանայ փաշային, զի մի՛ թողուցու Ախթամարու կաթուղիկոսացն ձեռնամուխ լինիլ ի յայն վիճակսն ի ՌՃԲ. (1661) թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն և ... համարով: Ջվերոյ գրեալսդ տե՛ս լիովին ի ԺԱ. (11) գլուխն ի ճառս Աղթամարու:

Դ. Սուլթան Մուհամատին ֆարման, զի յորժամ Յակոբ կաթուղիկոսն հանէ զոտս ախթամարցւոց ի Վանայ և յայլ վիճակացդ վերոյ յիշեցելոց և առաքէ յայնս զնուի-րակս բռնաւորք տեղեացն, թէ զառաջին վէճսն արծարծելով և թէ յայլ ինչ պատճառէ ի նուիրակացն (433բ) Աթոռոյս զիր ինչ պահանջեն, վասն որոյ արզ առնէ թագաւորին և զայս ֆարմանս հանէ սաստիկ պատուիրմամբ ի վերայ տեղեաց իշխողացն, զի մի ինչ պահանջեսցեն ի նուիրակացն Աթոռոյս ի Ռ. (1000...) ... թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն և ... համարով:

Ե. Սուլթան Մահմետին ֆարման, զի Եղիազար վարդապետն Հռօմկլայեցի, որ լինի պատրիարգ սրբոյ Երուսաղէմի, թելադրութեամբ Ոնոփրիոս և այլոց ոմանց վար-դապետաց օծանի կաթուղիկոս ի Բերիայ ընդդէմ Սրբոյ Աթոռոյս և Յակոբ կաթուղի-կոսին Ջուղայեցւոյ ի ՌՀԶ. (1076) թուին տաճկաց և ի ՌՃԺԴ. (1665) թուոջն մերում և ֆարման առնու ի սուլթան Մահմետէն, զի և յԵրուսաղէմ մեռոն[I] օրհնեսցէ և անտի

[I] Բ. միւռօն

զնուիրակս առաքեսցէ յամենայն յազգս հայոց, որ և խոստանայ տալ յամի յամի հազար հինգ հարիւր ստակ ի յարքունիս: Ապա Յակոբ կաթուղիկոսն ելեալ գնայ ի յԸստամպօլ և արզ առնէ՝ թագաւորին ծանուցանելով զորպիսութիւն Սրբոյ Աթոռոյս և զընդիմութիւնն Եղիազարու: Եւ թագաւորն տայ զայս ֆարմանս գրելով, թէ որովհետև ի բնէ յէջմիածին օրհնի մեռոն, որպէս և ի ջամբռն մեր ևս գրեցեալ գոյ, հրամայեցի և ես, զի ի յէջմիածին օրհնեսցի և Յակոբն լիցի կաթուղիկոս: Եւ այն ֆարմանն, զոր ետու Եղիազարին, անընդունակ լիցի: Գրի այս ի ՌՃԷ. (1666) թուին տանկաց:

Զ. Բայց սորա սաւատն գոյ, զոր գտցես ցուցակաւն և (Ե.) (5) համարով: Սմա երկու սաւատք ևս գոն գրեցեալք ի ՌՃԹ. (1668) թուին տանկաց, զոր գտցես ցուցակօքն և (Զ.) (6) համարով:

Է. Սուլթան Մահմետին ֆարման, զի յորժամ Յակոբ կաթուղիկոսն զայդ վերոյ յիշեցեալ ֆարմանդ առնու և ըմբերանէ զլրբութիւն Եղիազարու, Եղիազարն ոչ դադարի ի նոյն լրբութենէն: Վասն որոյ վերստին արզ առնէ յԱթոռոյս Յակոբ կաթուղիկոսն նոյնոյ թագաւորին, թէ ես քո ֆարմանովդ եղէ կաթուղիկոս և հազար եօթն հարիւր ամ է, որ այս է մեր Աթոռն և Սուրբ Մեռոնն մեր աստ օրհնի և այլ այսպիսիք: Այժմ Եղիազարն ոչ դադարի ի հակառակութենէն: Վասն որոյ և թագաւորն գրէ զայս ֆարմանս ի վերայ ամենայն իշխողաց, զի ուր և իցէ Եղիազարն՝ ըմկնեսցեն զլրբութիւն նորին և թամպէհ արասցեն: Գի՛տ երեսն գրեցեալ ցուցակաւն, որ գրի ի ՌՃԶԱ. (1670) թուոջն տանկաց և (Է.) (7) համարով: Սորա Բ. (2) սաւատք ևս գոն, զոր գտցես ցուցակօքն: Յիշեցաւ այս իրակութիւնս ի Գ. (4) գլուխն ի ճառս Յակոբայ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ: Իսկ յետ Յակոբայ, յորժամ Եղիազարն հրաւիրի ի կաթուղիկոսութիւն Սրբոյ Աթոռոյս, ըստ օրինի, այլ ոչ ևս առնու զնորոգ ֆարման ի յօսմանցւոց թագաւորէն, այլ նոյնով առաջնով ֆարմանաւն, զոր առեալ էր ի ՌՃԶ. (1665) թուին տանկաց, զի յԵրուսաղէմ նստեալ կաթուղիկոսութիւն արասցէ, գայ յԱթոռս և լինի կաթուղիկոս, Սողոսն ի Պօղոս փոխեցեալ ի ՌՃԼԱ. (1682) թուոջն մեռում: Եւ մեք այրեալ անհետ արարաք զայն ֆարմանն: Գրեցի, զի գիտասջիք:

Ը. Սուլթան Մահմետին ֆարման, զի արզ առնեն վարդապետքն և քահանայք, թէ մեք ի Մահմետէն զիր ունիմք և ի բնէ այսպէս է լեալ, զի կարգաւորք մեր զխարաճ և զիսպանջ մի տայցեն: Թագաւորն գրէ ի վերայ Հալապու, Շամու[350] և Ուռումէլու փաշայիցն և դատաւորացն, զի մի առցեն ի ՌՂԳ. (1682) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ը.) (8) համարով, սաւատ է:

Թ. Սուլթան Մուստաֆային ֆարման, զի յետ Եղիազարու կաթուղիկոսին, յորժամ նստի յԱթոռս Նահապետն Ուռհայեցի կաթուղիկոս, զմտաւ ածեալ, թէ մի գուցէ երբեմնապէս պատրիարգունքն Երուսաղէմի և կամ այլք սևագլուխք զեղիազարն օրինակ առեալ արծարծեսցեն զայն գործ և հինեանք լրբասցին, վասն որոյ արզ առնէ

սուլթան Մուստաֆային, թէ ի բնէ անտի Աթոռն հայոց էջմիածին է և Սուրբ Մեռոնն աստ օրհնի, և կաթուղիկոսն աստ նստի: Իսկ յառաջ, ճան զայս եղիազարն ստապատիր բանիւ արզ արարեալ թագաւորութեանդ ձեռում էհան գֆարման, զի յԵրուսաղէմ նստիցի և կաթուղիկոսութիւն արասցէ: Յակոբ կաթուղիկոսն արզ (434ա) արար սուլթան Մահմետին և ֆարման էհան վերստին, զի յէջմիածին լիցի կաթուղիկոսարան և մեռոնն անդ օրհնեսցի, որով և խափանեաց զեղիազարու անկարգութիւնն: Արդ խնդրի ի տէրութենէդ, զի և դու գֆարման մի տայցես մեզ, զի հաստատ մնասցէ այս կանօն և մի ևս իշխեսցէ ոք զայն առնել: Եւ թագաւորն գրէ սաստիկ հրամանաւ, զի այսպէս լիցի ի ՌՃԽ. (1696) թուին տանեկաց: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և (Թ.) (9) համարով: Սաւատ մի ևս ունի սա:

Ժ. Սուլթան Ահմետին ֆարման, զոր գրէ ըստ արզայի Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսին, զի նուիրակունքն էջմիածնի ուր և գնայցեն՝ մի ոք նեղացուսցէ զնոսա և կամ զիր ինչ պահանջեսցէ ի ՌՃԾ. (1708) թուոջն տանեկաց, չորս հատ սուրաթ է այս շարի կնքով: Գի՛տ յերեսսն գրեցեալ ցուցակօքն և (Ժ.) (10) համարով:

ԺԱ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Զմիւռնոյ ղազեացն վասն տեղւոյ առաջնորդին, զի մի նեղացուսցեն զնա և յօրէնս հայոց մի խառնիցին ի հազար հարիւր բաան և մէկ թուին տանեկաց (1709): Գի՛տ ցուցակաւն և (ԺԱ.) (11) համարով:

ԺԲ. Սուլթան Ահմետին բարաթ ֆարման, զոր գրէ ըստ արզայի Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ վասն կաթուղիկոսութեան նորին ի ՌՃԾԳ. (1712) թուին տանեկաց: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ԺԲ.) (12) համարով: Երեք սուրաթ ևս ունի:

ԺԳ. Սուլթան Ահմետին բարաթ ֆարման, զոր գրէ ըստ արզայի հայոց ազգին վասն կաթուղիկոսութեան Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ ի ՌՃԾԸ. (1715) թուին տանեկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԳ.) (13) համարով:

ԺԴ. Սուլթան Ահմետին ֆարման, զոր գրէ ըստ արզայի Յովանէս պատրիարգին Պօլսոյ վասն ախթարմայ Յարութիւն վարդապետին՝ առաջնորդին Ախլցխայու, զի աքսորեսցի անտի ի ՌՃԿԱ. (1718) թուին տանեկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԴ.) (14) համարով:

ԺԵ. Սուլթան Ահմետին ֆարմանի երկու սուրէթ շարի կնքով, որ գրէ ի վերայ Կարնոյ և Կարսայ փաշայիցն, թէ յէջմիածնայ ուխտաւորացն զիր ինչ պահանջել մի թողուցուք ումեք ի ՌՃԿԲ. (1719) թուին տանեկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԵ.) (15) համարով:

ԺԶ. Սուլթան Ահմետին ֆարման, զոր ըստ արզայի Յովանէս պատրիարգին գրէ ի վերայ ամենայն ղազեացն, որք ի թէմսն Իզմիրու, թէ հայոց օրինաց և առաջնորդի գործոյն և չհաւութեան պսակից և կամ ճահանայից վրէժխնդրութեան առաջնորդին մի խառնիք դուք, զի այդոքիկ առաջնորդին են գործ ի ՌՃԿԴ. (1721) թուին տանեկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԶ.) (16) համարով:

ԺԷ. Սուլթան Ահմետին ֆարման, զի ի ՌՃՀԲ. (1723) թուոջն մերում և ի ՌՃԼԶ. (1136) թուոջն տաճկաց, յորժամ հանդերձեալ էր գալ և առնուլ զերկիրս մեր օսմանցին, որ և էառ, Երևանցի Սիմէօն վարդապետն ի Պօլիս նուիրակ լինի վասն որոյ արզ առնէ թագաւորին, զի զօրքն նոցա յէջմիածնի մուլքն, յայգիս, ի ջրաղացս և յանասունս և յայլ ինչս Աթոռոյս մի մերձեսցին և միաբանից Էջմիածնի մի նեղացուսցեն և ուր և իցեն, բաց ի խարաճէն զայլ ինչ մի պահանջեսցեն ի նոցանէ ի ՌՃԼԶ. (1723) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԷ.) (17) համարով: Յիշեցաւ այս ի Գ. (3) գլուխն ի ճառս Կարապետ կաթուղիկոսին:

ԺԸ. Սուլթան Ահմետին ֆարման վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս ըստ արզայի Աստուածատուր կաթուղիկոսին Համատանցւոյ (յորժամ էառ զերկիրս մեր ի պարսից օսմանցին ի շահ Հիւսէինէն ի ՌՃՀԳ. (1724) թուոջն մերում և ի տաճկաց ՌՃԼէ. (1137) թուոջն), յորում գրեցեալ մաղաֆ իրքն են սոքա. երկու գութան, հինգ հարիւր ոչխար, երկու դինկ և երկու ձիթահանք և բովանդակ ջրաղացք և այգիք, որքան և իցեն, ամենայն միաբանքն ի (434բ) խարաճէ և յիսպանջէ ազատք լիցին: Ընդ Աթոռոյս և չորեքկին վանօրայքն ևս ազատք լիցին յամենայնէ: Անյիշատակաց ինչքն Աթոռոյս հասանիցին և միայն ի տարին ԳՃԾ. (350) ղուռուշ տայցէ յարքունիս, որպէս ի բնէ կանոն է ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն և ԺԸ. (18) համարով: Գ. (3) սաւատ ևս գոյ սորա շարի կնքով, որպէս ցուցակօքն և (ԺԸ.) (18) համարօքն ցուցանեն: Յիշեցաւ այս ի ԺԳ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

ԺԹ. Սուլթան Ահմետին ֆարման, զի Կարապետ կաթուղիկոսն ի Պօլիս գոլով՝ զԵրևանցի Սիմէօն վարդապետն աթոռակալ արարեալ առաքէ ի յԱթոռս: Վասն որոյ և զայս ֆարմանս հանէ ի վերայ փաշայից, ղազեաց և այլոց իշխողաց, զի ուր և պատահիցի Սիմէօն վարդապետն, մի ոք նեղացուսցէ զնա ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԹ.) (19) համարով:

Ի. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Երևանու փաշային, ըստ վերնոյ ֆարմանին, զի մուղայէթ լիցի Սիմէօն վարդապետին ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ի.) (20) համարով:

ԻԱ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ ղազեաց ամենեցունց, ըստ արզայի Յովանէս պատրիարգին վասն Կարապետ կաթուղիկոսին նուիրակացն, զի ի յունիլն զսուրէթ ֆարմանի մի պատճառեսցեն, թէ այդ սուրէթ է և ոչ ասլն և զիր ինչ պահանջեսցեն, այլ ընկալցին զսուրէթն, որպէս զիսկսն ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԱ.) (21) համարով:

ԻԲ. Սուլթան Ահմետին ֆարման, ըստ վերոյ գրելոյդ ի վերայ ղազեացն և բաշչոց[351], զի ընկալցին զսուրէթ ֆարմանին, որպէս զիսկսն ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն (ԻԲ.) (22) և սուրաթ մի ևս գոյ սոցա, գի՛տ ցուցակաւն և (ԻԲ.) (22) համարով:

ԻԳ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Երևանու և Թաւրիզու փաշայիցն և ղազեացն և այլոցն, թէ կաթուղիկոսն ուր և կամիցի գնալ, մի ոք ասասցէ, թէ հրաման առ և գնա և կամ ի գնալդ և ի գալդ զայս ինչ տուր մեզ ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԳ.) (23) համարով: Սուրաթ մի ևս ունի:

ԻԴ. Սուլթան Ահմետին ֆարման վասն Կարապետ կաթուղիկոսին, զի ուր և շրջեսցի՝ խօսող և կամ զիր ինչ պահանջօղ մի լիցի ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԴ.) (24) համարով:

ԻԵ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Երևանու փաշայից, ղազոնց և այլոց մեծամեծաց, զի բայրամ անուամբ ի կաթուղիկոսէն մի պահանջեսցեն զղումաշ, շաքար և այլ ինչ ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԵ.) (25) համարով: Սաւատ մի ևս գոյ սորա:

ԻԶ. Սուլթան Ահմետին ֆարման վասն Կարապետ կաթուղիկոսին կաթուղիկոսութեանն, յորում այս ինչ յաւելի գոյ ի վերայ այլոց, զի զսևագլուխ մի եթէ կամիցի կաթուղիկոսն պատժել և կամ ի Սևան առաքել, մի ոք ընդիմասցի ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԶ.) (26) համարով:

ԻԷ. Սուլթան Ահմետին ֆարման ըստ մտաց վերնոյդ ի վերայ Երևանու փաշային գրէ վասն Կարապետ կաթուղիկոսին ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԷ.) (27) համարով:

ԻԸ. Սուլթան Ահմետին հավալէ ֆարման վասն Կարապետ կաթուղիկոսին ի ՌՃԼԸ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԸ.) (28) համարով:

ԻԹ. Սուլթան Ահմետին ֆարման վասն Կարապետ կաթուղիկոսին, զի ի Պօլսոյ գալն ի ճանապարհին ուր և պատահիցի ի պատիւ ունիցին ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԹ.) (29) համարով:

Լ. Սուլթան Ահմետին ֆարման վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս ի յաւուրս Կարապետ կաթուղիկոսին, յորում մաղաֆ եղեալքն են այսոքիկ. երկու գութան, հազար հինգ հարիւր սօմար սերմն, հինգ հարիւր ոչխար, երկու դինկ և երկու ձիթահանք, ջրաղացք և այգիք որքան ունի: Բոլոր միաբանքն զխարաճ և զիսպանջ (435ա) և զայլ խարճ ամենևին մի տայցեն և չորս եկեղեցիքն ևս ընդ էջմիածնի մաղաֆ լիցին: Անյիշատակ մեռելոց ինչքն յԱթոռն հասցին: յՕշականու մուլքն տացին Աթոռոյն: Իսկ կաթուղիկոսն ի տարին ԳՃԾ. (350) ղ[ու]ռ[ու]շ տայցէ յարքունիս, որպէս կանօն է ի բնէ ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Լ.) (30) համարով: Յիշեցաւ այս ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

ԼԱ. Սուլթան Ահմետին ֆարման գրքանն ի յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ի ՌՃԽ. (1727) թուոջն տաճկաց, զի զգրքանն տէֆթէր մի շինեն գիտութեամբ Երևանու փաշային և շխիսլամին տաճկերէն, յորում նախ գրեն յանուանէ և ուրոյն ուրոյն

զտունս, զայգիս, զջրաղացս, զպարտէզս, զսերմանելի տեղիսս և զայլս այսպիսիս զեօղիս մերոյ: Եւ ապա գրեն զորպիսութիւնս Աթոռոյս թարգ յատկացուցիչ թուոց, թէ ունի զայգիս, զջրաղացս, զդինկս, զբաղանիս, զբեարվանսարայս և զայլս մուլքս, այլև երկու գութան, հազար հինգ հարիւր սօմար սերմն, վեց հարիւր ոչխար, Աթոռոյս և երից վանիցն մերոյ միաբանքն, որք ամենեքեան մաղաֆք են յամենից հարկաց, միայն թէ կաթուղիկոսն ի տարին ԳԾԾ. (350) ղ[ու]ռ[ու]շ տայ յարքունիս և ոչ այլ ինչ: Այլև էջմիածնի գեօղս, յՕշական և Մաստարայ մուլք են Սրբոյ Աթոռոյս: Զայս ամենայն գրէ շխիսլամն և կնքէ զվերջ բանիցն և առաքեն առ թագաւորն, և թագաւորն ևս ի գլուխ գրեանն դէվթէրիս դնէ զթուղէն հրամայելով, զի այսպէս լիցի: Գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ԼԱ.) (31) համարով: Այսու ձևով ֆարման մի ևս գոյ, զոր ի վայրդ տեսցես: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

ԼԲ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Երևանու փաշային, ղազուն և այլոց մեծամեծացն վասն Կարապետ կաթուղիկոսին, թէ ես դմա բարաթ եմ տուեալ, լաւ պատուով պահեցէք զդա ի ՌՃԽ. (1727) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԼԲ.) (32) համարով:

ԼԳ. Սուլթան Ահմետին ֆարման ի վերայ Երևանու փաշային, ղազուն և այլոց մեծամեծացն վասն Կարապետ կաթուղիկոսին, թէ ես դմա բարաթ եմ տուեալ ի շարէն և փաթվայ ունի, զոր ինչ շինուածս շինել կամիցի, մի ոք ներհակեսցի ի ՌՃԽ. (1727) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԼԳ.) (33) համարով:

ԼԴ. Սուլթան Ահմետին կրկին բարաթ վասն Կարապետ կաթուղիկոսին կաթուղիկոսութեանն ի ՌՃԽԱ. (1728) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԼԴ.) (34) համարով:

ԼԵ. Սուլթան Ահմետին բարաթ ֆարման վասն Մշեցի Աբրահամ կաթուղիկոսի կաթուղիկոսութեանն ի ՌՃԽԲ. (1729) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԼԵ.) (35) համարով:

ԼԶ. Սուլթան Մահմուտին բարաթ ֆարման վասն Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին կաթուղիկոսութեանն ի ՌՃԽԳ. (1730) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԼԶ.) (36) համարով:

(435բ) ԼԷ. Սուլթան Մահմուտին գրեանն ֆարման, յորում նախ շխիսլամն երկրիս գիտութեամբ փաշային գրէ զորպիսութիւնս գեղջս մերոյ և ապա զմուլքսն և զորպիսութիւնսն Սրբոյ Աթոռոյս վկայելով մաղաֆութեանն կնքէ և զվերջսն թղթոցն: Եւ ապա առաքէ առ սուլթան Մահմուտն և նա դնէ ի գլուխն զթուրայն ի ՌՃԽԳ. (1730) թուին տաճկաց՝ յաւուրս Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին, որ ամենևին նոյն է ըստ ֆարմանի սուլթան Ահմետին, զոր տայ յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ի ՌՃԽ. (1727) թուին տաճկաց, զոր յիշեցաք ի վերդ ի (ԼԱ.) (31) համարաւն և զայս գի՛տ ցուցակաւն և (ԼԷ.) (37) համարովն: Յիշեցաւ և այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

ԼԸ. Սուլթան Ահմետին ֆարման, որ գրէ վասն վանեցի Յարութիւն և Այվազ կոչեցելոյն ի վերայ Երևանու և Նախիջևանու դատաւորացն, զի սաստեսցեն նմա վասն շառաթութեանն։ Քանզի զկնի մահուան Կարապետ կաթուղիկոսին զսուտ թէմէսուկ մի է հանեալ յանուն Կարապետ կաթուղիկոսին և նորին աթոռակալ Աղէքսանդր վարդապետին, թէ ինձ վեց քէսայ դրամ են տալոց ի ՌՃԽԹ. (1730) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԼԸ.) (38) համարով։ Վասն սորա Իպրահիմ փաշայէն ի նորին քեահեայէն ևս զոն գրեանք և երկու հուճէթք ևս ի շխիսլամէ գրեցեալք, իքր սուտ ցուցանելով զնա, զորս գտցես ի յիւրաքանչիւր տեղւոջն։

ԼԹ. Սուլթան Մահմուտին ֆարման, զոր գրէ ի վերայ փաշային, դազոյն և այլոց գործակալացն Երևանու վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս ի ժամանակս Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին ի ՌՃԽԴ. (1731) թուին տանկաց, որ ամենևին նոյն է ըստ ֆարմանի սուլթան Ահմետին, զոր տայ ի ՌՃԼԹ. (1726) թուին տանկաց յաւուրս Կարապետ կաթուղիկոսին, զոր յիշեցաք ի վերդ ի (Լ.) (30) թիւն։ Եւ զայս զի՛տ ցուցակաւն և (ԼԹ.) (39) համարով։ Յիշեցաւ և այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն։

Խ. Սուլթան Մահմուտի ֆարմանի սուրաթ վասն ֆռանկացելոցն սաստիկ թամպէհ, զի մի շրջեսցին ի մէջ հայոց ի Զմիւռին, յԱնկիւրիա և յայլ կողմունսն ի ՌՃԽԵ. (1732) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (Խ.) համարով։

ԽԱ. Սուլթան Մահմուտին ֆարման, զոր տայ Կրետացի Աբրահամ վարդապետին ի վարդապետութեանն ի գալն յուխտ ի Սուրբ Աթոռս, զի մի ոք նեղացուսցէ ի ճանապարհին ի ՌՃԽԶ. (1733) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԽԱ.) (41) համարով։

ԽԲ. Սուլթան Մահմուտին ֆարման բարաթ վասն Աբրահամ կաթուղիկոսին Կրետացւոյ կաթուղիկոսութեանն ի ՌՃԽէ. (1734) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԽԲ.) (42) համարով։

ԽԳ. Սուլթան Մահմուտին բարաթ ֆարման վասն Ղազար կաթուղիկոսին Ճահկեցւոյ կաթուղիկոսութեանն ի ՌՃԾԱ. (1738) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԽԳ.) (43) համարով։ Սաւատ է։

ԽԴ. Սուլթան Մահմուտի ֆարման վասն արևելցի վաճառականացն, որք ի յերկիրն օսմանցւոց, զի մի պահանջեսցեն զհարկ ինչ ի նոցանէ ի ՌՃԾԱ. (1738) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԽԴ.) (44) ... սաւատ է։

ԽԵ. Սուլթան Մահմուտին ֆարման, որպէս զհավալէ ֆարման և թէ դաւին ի յԸստամպօլ (436ա) տեսցի վասն Աղէքսանդր վարդապետին Պօլսեցւոյ, մինչ յիզմիր առաջնորդ է լեալ ի ՌՃԾԸ. (1745) թուին տանկաց։ Գի՛տ ցուցակաւն և (ԽԵ.) (45) համարով։

**ԽԶ**. Սուլթան Մահմուտին ֆարման բարաթ վասն Մինաս կաթուղիկոսին Ակնեցւոյ կաթուղիկոսութեանն և ՌՃԿԵ. (1751) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԽԶ.) (46) համարով:

**ԽԷ**. Սուլթան Օսմանին բարաթ ֆարման վասն Պօլսեցի Աղէքսանդր կաթուղիկոսի կաթուղիկոսութեանն ի ՌՃԿԸ. (1754) թուին տանկաց, տե՛ս ցուցակաւն և (ԽԷ.) (47) համարով:

**ԽԸ**. Սուլթան Օսմանին հավալէ ֆարման վերոյ Աղէքսանդրի կաթուղիկոսութեանն ի ՌՃԿԸ. (1754) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԽԸ.) (48) համարով:

**ԽԹ**. Սուլթան Օսմանին ֆարման վասն Աղէքսանդր կաթուղիկոսին, թէ ի կողմն օսմանցւոց հանդիպիցի և նստիցի, մի ոք խօսեսցի ի ՌՃԿԹ. (1755) թուին տանկաց, զի՛տ ցուցակաւն և (ԽԹ.) (49) համարով:

**Ծ**. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն իզմիրցի Մնացականի որդի Մարգարին, որ ի զուր դաւի առնէ ընդ Աթոռոյս վասն տասն և եօթն քէսայի, զոր տուեալ է Ղազար կաթուղիկոսին և փօլիցայիւ ի նուիրակացն առեալ և թամասուկն Ղազար կաթուղիկոսին ի յինքն պահեալ, զոր մեք առաք և պատառեցաք: Ֆարմանս վասն այնորիկ է, զի եթէ վերստին դաւ արասցէ ախտրեսցի ի ՌՃՀԳ. (1759) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ծ.) (50) համարով: Սաստ է: Սակայն ի ՌՄԺԷ. (1768) թուոջս մերում Սիմէօն կաթուղիկոսն ի շատ թախանձանացն նոյնոյ Մարգարին և յաղաչանաց միջնորդ եղեալ Իզմիրու իշխանացն, հարկեցեալ զքան ինչ ետ նոյնոյ Մարգարին և ի բերանոյն գիր էառ գիտութեամբ և վկայութեամբ նոյն իշխանացն Իզմիրու ձեռամբ Իզմիրու առաջնորդ և նուիրակ Ղուկաս վարդապետին, որ այլ մի ևս յիշեսցէ զայս վէճս, որ ահա գոյ առ մեզ յԱթոռս այն գիրն, զի կարի յուսահատեալ էր Մարգարն այն ի չքաւորութենէ:

**ԾԱ**. Սուլթան Մուստաֆային բարաթ ֆարման Յակոբ կաթուղիկոսին Շամախեցւոյ ի ՌՃՀԳ. (1759) թուին տանկաց: Առաջին է, յորում Իզմիր ոչ գոյ: Գի՛տ ցուցակաւն և (ԾԱ.) (51) համարով:

**ԾԲ**. Սուլթան Մուստաֆային հավալէ ֆարման վասն Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին ի ՌՃՀԳ. (1759) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԲ.) (52) համարով:

**ԾԳ**. Սուլթան Մուստաֆային կրկին բարաթ ֆարման վասն Յակոբ կաթուղիկոսին Շամախեցւոյ, յորում Իզմիր իւրովք վիճակօքն յանուանէ գրի, որպէս յիշեցաք ի վերդ ի յառաջաբանութեան սոյն գլխոյս ի ՌՃՀԵ. (1761) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԳ.) (53) համարով:

**ԾԴ**. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին, թէ ի Բայազիդ, ի Ղարս, ի յէրզրում և յայլ կողմունսն պատահեալ նստիցի, ոչ ոք խօսիցի ի ՌՃՀԵ. (1761) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԴ.) (54) համարով:

ԾԵ. Սուլթան Մուստաֆային բարաթ ֆարման վասն Երևանցի Սիմէօն կաթուղիկոսի կաթուղիկոսութեանն, յորում Իզմիր ևս գրի յանուանէ ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԵ.) (55) համարով:

ԾԶ. Սուլթան Մուստաֆային հավալէ ֆարման վասն Երևանցի Սիմէօն կաթուղիկոսին ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԶ.) (56) համարով:

ԾԷ. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն Սիմէօն կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի եթէ դաւաճան ինչ ելցէ իւրն կամ իւր մարդկանցն, դատն ի յԸստամպօլ տեսցի և ոչ յայլ ուրեք ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԷ.) (57) համարով:

ԾԸ. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն Սիմէօն կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի եթէ պատահիցի ի յէրզրում, ի Բայազիդ, ի Ղարս և յայլ կողմունսն օսմանցւոց նստիլ, (436բ) մի ոք լիցի խօսող ի ՌՃՀԷ. (1763) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԾԸ.) (58) համարով:

ԾԹ. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն Ախլցխայու յատկապէս ըստ խնդրոյ Սիմէօն կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի ի ժամանակս Շամախեցի Յակոբ կաթուղիկոսին եւդոկիացի ոմն Գէորգ անուն չիք սևագլուխ մի գայ լինի եպիսկոպոս ըստ խնդրոյ կարնեցւոց և Կարնոյ Կարմիր վանից առաջնորդ Մշեցի Յակոբ վարդապետին ի միաբանութիւն նոյնոյ վանիցն: Եւ յետոյ գնայ յԵւդոկիայ ի պատճառս ժողովարարութեան և անդ յայտնէ զպէսպէս Լօթերական աղանդս: Եւ ապա գնացեալ ի Պօլիս առնու ի Յակոբ պատրիարգէն զառաջնորդութիւնն Արծաթահանու[352] ֆարմանաւ, որ տէրունի էր և ի Սրբոյ Աթոռոյս կարգիւր առաջնորդն նորին, իբրև գիտացեալ Յակոբ կաթուղիկոսին բանադրէ զնա և նա գնացեալ ի Պօլիս անկանի յիշխանս յոմանս անպարտս ցուցանելով զինքն, միջնորդս արկանէ առ կաթուղիկոսն ի յարձակել զինքն, և Յակոբ կաթուղիկոսն ոչ արձակէ զնա ասելով, թէ եկեսցէ ի Սուրբ Աթոռս:

Ապա յայսմ միջոցի վախճանի Յակոբ կաթուղիկոսն և նստի Սիմէօն կաթուղիկոսն Երևանցի: Եւ նոյն բանադրեցեալ Գէորգն առ սա յարուցանէ զնոյն իշխանսն ի միջնորդութիւն ի յարձակել զինքն ի կապից: Եւ Սիմէօն կաթուղիկոսն ևս զնոյն պատասխանէ, թէ եկեսցէ ի Սուրբ Աթոռս: Վերջապէս առեալ զգիրս աղաչանաց ի բազմաց գայ ի յոտս Սիմէօն կաթուղիկոսին մեղայ ասէ և գիր տայ ի բերանոյն ոչ ևս ցուցանել զնշան ախթարմայութեան և ոչ ելանել ի Կարմիր վանէէն մինչև ի մահն: Եւ արձակեցեալ գնայ: Եւ յետ փոքր միջոցի գնայ ի յԱխլցխայ ի գործ նոյնոյ Կարմիր վանքին, որովհետև նոյնոյ վանիցն է վիճակ, Ախլցխայ հրամանաւ նորին առաջնորդ վերոյ յիշեցեալ Յակոբ վարդապետին: Եւ ի յԱխլցխայ յայտնապէս քարոզէ զլօթերականութիւն՝ դաս քարշելով զհայս և զեկեղեցիս և զԱթոռս հայոց, որոյ բողոքն հասանին ի չորից կողմանց առ Սիմէօն կաթուղիկոսն:

Ապա և սոյն կաթուղիկոս վերստին նոր ի նորոյ չարաչար բանիւ առնէ զչիք Գէորգն և զհամախոհսն նորին, ընդ նմին և զԿարմիր վանից առաջնորդ զՅակոբ վարդապետն վասն պատճառ լինելոյ եպիսկոպոսութեան նորին և առաքելոյն ի յԱխլցխայ, այլև գրէ ի Պօլիս առ պատրիարքն և յիշխանսն և բերէ զֆարման մի, յորում գրի, թէ՝ Գէորգ, Պօղոս, Ստեփաննոս և Յովանէս սևազլուխք և քահանայքն վա-րիցին ի յէջմիածին, պատրիքն հալածիցին ի յերկիրն իւրեանց, զմիւս խմորեցեալսն պատժեսցին տուգանօք և ի բերանոցն զզիր առնուցուն ի շարումն՝ մի ևս հետևիլ աղանդոյ նոցին: Եւ երեք եկեղեցիքն, որք գոն յԱխլցխայ հայոց քահանայից յանձնեսցին, որպէս ցուցանէ քեզ յերեսն գրեցեալ ցուցակն և (ԾԹ.) (59) համարն: ... հատ սուրաթ ևս գոյ սոյնոյ ֆարմանիս, որպէս ցուցանեն ցուցակքն: Լինի այս ի թուին տաճկաց ՌճՀԸ. (1178) և ի մեր ՌՄԺԳ. (1764) թուոջն:

Կ. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն Ղօշավանից և Կարսայ բոլոր երկրին առաջնորդութեանն յանուն Սիմէօն կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի ի ժամանակս սորին Կարսայ առաջնորդն, որ ֆարմանաւ նստիւր հրամանաւ պատրիարգին Պօլսոյ, որպէս և յայլ վիճակսն օսմանցւոց երկրին նստին, խռչ երևեցաւ Աթոռոյս և սորին նուիրակացն: Վասն որոյ և Սիմէօն կաթուղիկոսն հարկեաց Պօլսոյ պատրիարգ Գրի-գոր վարդապետին, զի զառաջնորդական ֆարմանն նոյնոյ վիճակին յանուն իւրեան հանեալ առաքեսցէ, և զառաջնորդն զայն յԱթոռս յղեսցէ, որ և արարն իսկ: Եւ Սիմէօն կաթուղիկոսն զայն առաջնորդն բերեալ յԱթոռս արար միաբան և ի տեղի նորին առաքեաց ի Ղարս (437ա) առաջնորդ ի միաբանից Սրբոյ Աթոռոյս, որով և զՂօշա-վանքն ևս նորոգեալ ի շինութիւն եբեր, որ բազմ ամաւ աւեր էր: Այժմ Ղարսայ առաջ-նորդական ֆարմանն է յանուն Սիմէօն կաթուղիկոսին և է ի Սուրբ Աթոռս, զոր գի՛տ ցուցակաւն և (Կ.) (60) համարով: Սորա սաւաթ մի ևս ունի, զոր զով ոք և կարգեալ առաջնորդ Ղարսայ յղեսցէ Վեհն, տանի ընդ իւրեան ի ՌճՀԹ. (1179) թուին տաճկաց և ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում եղև այս գործ, որ և յայնմ հետէ եղև Ղարս իւրովք վիճակօքն տէրունի թեմ Սրբոյ Աթոռոյս, որոյ առաջնորդն ի Սրբոյ Աթոռոյս կարգի և ոչ ի Պօլսոյ պատրիարգէն: Յորմէ ոչ սակաւ օգտութիւն լինի Սրբոյ Աթոռոյս ի ցորենոյ, ի գարւոյ, ի յանասնոց, ի յերկաթոյ, ի փայտէ և յայլոց յայսպիսեաց: Սորա որպէսն և ի Գ. (3) գլուխն ի ճառս Սիմէօն կաթուղիկոսին ասացաւ լիովին, զոր անդ տեսցես:

ԿԱ. Սուլթան Մուստաֆային ֆարման վասն վրէժխնդրութեան ախթարմայից էրզրումայ, Ղարսայ, Ախլցխայու, բոլոր Քրստոսանու երկրին և այլոց շրջակայիցն, ըստ խնդրոյ Սիմէօն կաթուղիկոսին Երևանցւոյ ի ՌճՀԹ. (1765) տաճկաց թուին: Սորա ... հատ սաւատ ևս գոյ, զորս գտցես ցուցակօքն և (ԿԱ.) (61) համարով:

ԿԲ. Սուլթան Մուստաֆային ֆարման կրկին վասն Ախլցխայու, ըստ վերոյ գրե-ցելոյդ ի ՌճՁԱ. (1767) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն և (ԿԲ.) (62) համարովն[I]:

[I] Զգրված՝ 437բ-482բ

## (483ա) ԳԼՈՒԽ ԻԳ.

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԳՐԵԱՆՔ ՕՍՄԱՆՑԻՈՑ ՓԱՇԱՅԻՑ, ՇԽԻՍԼԱՄԻՑ ԵՒ ԱՅԼՈՑ ԻՇԽՈՂԱՑ, ԶՈՐՍ ՏՈՒԵԱԼ ԵՆ ՄՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՍ

Յառաջ, քան զՌՃՀԳ. (1724) թիւն մեր և ՌՃԼէ. (1137) թիւն տաճկաց, յորում առին օսմանցիքն զերկիրս մեր ի պարսից, ոչ ունիմք զթուղթ ինչ յայսպիսեաց: Վասն որոյ և յայնմ հետէ զոր ինչ ունիմք, զորս տեսեալ վերահասու եղաք գրեցուք:

Ա. Ռաջափ փաշայի տուեալ գրքանձև գիր, յորում գրէ զամենայն տունս գեղջս մերոյ և զմուլքսն յանուանէ: Եւ ապա գրէ յատուկ յատուկ զմուլքսն Սրբոյ Աթոռոյս՝ մաղաֆ առնելով ըստ խնդրոյ Աստուածատուր կաթուղիկոսին: Յորում գրին Սրբոյ Աթոռոյս տասն ջրաղաց, երկու դինկ, տասն այգի, քսան և հնն արտ, երեք եօնջալըղ, վեց հարիւր ոչխար: Նմանապէս և զերիս վանսն մեր և Երևանու զերկուս անապատսն մաղաֆ, միայն թէ կաթուղիկոսն ի յարքունիս տայցէ ի տարին վեց հազար ՐՃ. (800) ստակ ի ՌՃԼէ. (1724) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով: Յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Բ. Ռաջափ փաշային գիր, զի արզ առնէ Աստուածատուր կաթուղիկոսն, թէ Աթոռս ի բնէ զերկուս գութանս, զքսան և հնն վարելահողս և զերիս եօնճալղս և զայլս մուլքս ունեցեալ է, այժմ գեօղականք և այլք ոմանք ոչ թողուն մեզ վայելել: Փաշայն գրէ ի վերայ սուբաշուն գեօղիս, զի սաստեսցէ հակառակողացն ասելով, թէ ի յարքունի դէֆթէրն գրեցեալք են ի ՌՃԼէ. (1724) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Բ.) (2) համարով: Յիշեցաւ ի ԺԴ. (14) գլուխն մաղաֆութեան:

Գ. Ռաջափ փաշային գիր, որ զամենայն վանօրայսն երկրիս մերոյ մաղաֆ առնելով գրէ, թէ միայն ի տարին զէՃ. (700) ղուռուշս տան, որպէս կանօն է և այլ ոչ ինչ բնաւ ի ՌՃԼէ. (1724) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Գ.) (3) համարով:

Դ. Սոյնամիտ գիր մի ևս տայ սոյն փաշայս ի սոյն թուոջս վասն վանօրէից յամենայնէ մաղաֆ առնելով, զորս գտցես ցուցակօքն և (Գ.) (3) և (Դ.) (4) համարօք: Յիշեցան և սոքա ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Ե. Ռաջափ փաշային գիր ի լուսանցն ևս շարի վճիռ, որք գրեն ըստ արզայի վանօրէից, թէ որովհետև ձեր խարճն ի վերայ էջմիածնի է լեալ ի բնէ և նոյնպէս լիցի ի ձէնջ մի ոք զիր ինչ պահանջեսցէ ի ՌՃԼէ. (1724) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ե.) (5) համարով:

Զ. Ռաշչափ փաշայն յորժամ Սրբոյ Աթոռոյս մաղափութեան ֆարմանն գայ ի սուլթան Ահմետէն, ըստ արզայի Աստուածատուր կաթուղիկոսին, որպէս ասացաւ ի ԻԲ. (22) գլուխն ի ճառս թագաւորացն գրեանց ի ՌՃԼԴ. (1725) թուին տաճկաց գիր տայ, թէ որ ինչ մաղափ է արարեալ թագաւորն ի նոցանէ ոչ զիր ինչ մի պահանջեսցէ ի ՌՃԼԴ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Զ.) (6) համարով:

Է. Ռաշչափ փաշային գիր, որ ըստ խնդրոյ Կարապետ կաթուղիկոսին գրէ զմաղափութիւն Սրբոյ Աթոռոյս երկու գութան, հազար հինգ հարիւր սոմար սերմն, հինգ հարիւր ոչխար և զի մլքատու գեօղօրայքն մեր տայցեն մեզ զմուլքս ըստ բնական կարգին ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Է.) (7) համարով: Յիշեցան և սոքա ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեան:

(483բ) Ը. Շխիսլամի գիր, թէ որպէս ի բնէ Էջմիածին, յՕշական, Մաստարայ և այլք գեօղք տուեալ են Աթոռոյն զտասանորդս, նոյնպէս և տայցեն ի ՌՃԼԷ. (1724) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ը.) (8) համարով:

Թ. Շխիսլամի գիր, թէ որպէս տուեալ են ի բնէ մլքատու գեօղքն Աթոռոյս զմուլքս, նոյնպէս և տայցեն: Նոյնպէս և ցանքն, այգիքն և ջրաղացքն և այլք մուլքն և միաբանքն Աթոռոյս, որպէս մաղափ են լեալք, նոյնպէս և մաղափ լիցին ի ՌՃԼ. (1717)[353] թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Թ.) (9) համարով: Յիշեցան ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեան:

Ժ. Ռաշչափ փաշային, որ գրէ, թէ կէս Քարսախ գետոյդ, որպէս ի բնէ Աթոռոյն է լեալ և կէսն գեօղօրէից, նոյնպէս և լիցի ի ՌՃԼԴ. (1725) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Թ.) (9) համարով: Յիշեցաւ ի ԺԸ.[I] (18) գլուխն ի ճառս ջրոցն:

ԺԱ. Ահմէտ փաշային գրփանձև թուղթ, որ նման Ռաշչափ փաշային գրփանձև թղթոյն, որ ի վերդ յիշեցաւ ի (Ա.) (1) համարն, գրէ զորպէսն գեղջս մերոյ և զամենայն մուլքսն Սրբոյ Աթոռոյս մաղափ առնելով ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԱ.) (11) համարով: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեանն:

ԺԲ. Մուստաֆայ փաշային գիր, զոր գրէ, թէ զոր ինչ մաղափ է արարեալ թագաւորն ֆարմանով, մաղափ լիցի ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԲ.) (12) համարով:

ԺԳ. Ղազու հուճէթ, զի Զալըղ կոչեցեալ Մուստաֆայ տաճիկ ոմն եկեալ դաւի առնէ ընդ Կարապետ կաթուղիկոսին, թէ ես Աստուածատուր կաթուղիկոսին ԲՌ. (2000) ղուռուշի ապրանք ետու, նորա դրամն տո՛ւր ինձ: Աթոռակալ Սիմէօն վարդապետն ընդ նմա գնան ի շարն և տան նմա զվեց հարիւր ղուռուշս և զայս հուճէթս առնուն ի ՌՃԼԹ. (1726) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԳ.) (13) համարով:

---

[I] Բ. ԺԳ.

ԺԴ. Մուստաֆայ փաշային գիր, որ յաւուրս Կարապետ կաթուղիկոսին գրէ, թէ Աթոռս զոր ինչ մուլքս ունի և ունեցեալ է, զորս վայելեալ են այլք կաթուղիկոսքն, նոյնպէս և սա վայելեսցէ, որպէս ֆարման թագաւորին է ի ՌՃԽԱ. (1728) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԴ.) (14) համարով:

ԺԵ. Իպրահիմ փաշայի գիր, զոր գրէ, թէ որպէս Ռաշափ փաշայն տուեալ է այսպէս գիր, նոյնպէս և ես տուեալ հրամայեցի, զի կէս գետոյդ յՕշականայ էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղօրէիցն ի ՌՃԽԱ. (1728) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԵ.) (15) համարով:

ԺԶ. Իպրահիմ փաշային գիր ի վերայ Երևանու ղազուն վասն վանեցի շառաթ Յարութիւնին, թէ մեf վերահասու եղաf, որ դաւին դորա փուչ էր, դու ևս փուչ արա և ի բաց վանեա ի ՌՃԽԲ. (1729) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԶ.) (16) համարով. սորա ֆարման ևս գոյ:

ԺԷ. Ղազու հուճէթ վասն շառաթ Յարութիւնին վանեցւոյ, որ ասէր թէ իմ հայր Միրզայն ի Պօլիս վեց fէսայ դրամ է տուեալ Կարապետ կաթուղիկոսին և նորին աթոռակալ Աղէfսանդր վարդապետին, ես կոխնդրեմ զայն դրամն: Եւ ղազին հետևեալ գտանէ զնա սուտ, վասն որոյ և զայս հուճէթս տայ Աթոռոյս՝ ի բաց վանելով զնա ի ՌՃԽԲ. (1729) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԷ.) (17) համարով:

ԺԸ. Իպրահիմ փաշայի fեահեան գրէ ի վերայ ղազուն վասն նոյնոյ Յարութիւնին, որ Այվազ ևս գրի, թէ առաջագոյն գիտես, որ սուտ է դորա դաւին, այժմ ֆարման (484ա) ևս բերին էջմիածնցիf ի թագաւորէն վասն դորա շառաթութեանն: Վասն որոյ, եթէ ևս եկեսցէ առ fեզ, ի բաց վանեա զնա ի ՌՃԽԳ. (1730) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԸ.) (18) համարով:

ԺԹ. Երևանու ղազու կրկին հուճէթ վասն շառաթութեան վանեցի Յարութիւնին յետ ֆարման գալոյն, որ գրէ, թէ լաւ վերահասու եղէ ստութեանն և զայս հուճէթս ետու Աղէfսանդր վարդապետին ի ՌՃԽԳ. (1730) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԹ.) (19) համարով:

Ի. Մուստաֆայ փաշային գիր, զոր գրէ Սրբոյ Աթոռոյս մաղաֆութիւնն Բ. (2) գութան, ՌԵՃ. (1500) սօմար սերմն, ԵՃ. (500) ոչխար, ձիթահանf, դինկ, այգիf, ջրաղացf, սևագլուխf և միաբանf: Այլև մեր գեօղս յՕշական և Մաստարայ զմուլքս տայցեն, որպէս կանօն է միայն ի տարին տայցէ յարfունիս ԳՃԾԵ. (355) ղուռուշ ի ՌՃԽԴ. (1731) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ի.) (20) համարով:

ԻԱ. Իպրահիմ փաշային գիր, զի յորժամ յաւուրս Մշեցի Աբրահամ կաթուղիկոսին կամեցեալ են ի Սև ջրոյն զջուր բերել ի գեօղս մեր, միջոցի գեօղօրայfն դաւաչի են եղեալ, վասն որոյ և փաշայն հրամայէ, թէ որfան ջուր գայցէ կէսն էջմիածնի լիցի և կէսն միջոցի գեօղօրէիցն ի ՌՃԽԵ. (1732) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԱ.) (21) համարովն:

**ԻԲ.** Մուստաֆայ փաշային գիր, որ գրէ ի վերայ դիւանագրաց Երևանու, թէ որով-հետև թագաւորին արզ արարեալ խալիֆայն զֆարման եբեր վասն մաղաֆութեան էջ-միածնի մլքիցն, դուք մի ինչ պահանջէք ի նոցանէ ի ՌՃԽԷ. (1734) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԲ.) (22) համարով: Ցիշեցան սոքա ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

**ԻԳ.** Շխիսլամի թուղթ, որ ըստ վերնոյ փաշայիդ գրէ վասն Սև ջրոյդ, զոր կամե-ցեալ են բերել աթոռայինքս, թէ կէս էջմիածնի լիցի և կէսն գեօղօրէիցն միջոցին: Գի՛տ ցուցակաւն և (ԻԳ.) (23) համարով: Ցիշեցան սոքա երեքեանս ի ԺԸ. (18) գլուխն ի ճառս ջրոցն:

**ԻԴ.** Հիւսէին փաշային գիր, զոր գրէ ռահդարին, թէ ի յէջմիածին եկօղ ուխտա-ւորացն և այլոց եկողաց և գնացողաց զիր ինչ մի պահանջեսցէ, որովհետև մաղաֆ են և սովորութիւն ևս չէ ի ՌՃԽԷ. (1734) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւ և (ԻԴ.) (24) համարով:

**ԻԵ.** Հիւսէին փաշային գիր, զոր գրէ, թէ էջմիածնի երկու գութանն, հազար հինգ հարիւր սոմար սերմն, այգիքն, ջաղացքն, ձիթհանքն և դինկքն մաղաֆք են և մա-ղաֆ լիցին: Եւ միաբանքն զխարաճ մի տայցեն: էջմիածին, յՕշական և Մաստարայ տայցեն զմուլքս իւրեանց, որպէս օրէն է ի ՌՃԽԷ. (1734) թուին տանկաց: Գի՛տ ցուցա-կաւն և (ԻԵ.) (25) համարով: Ցիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեան:

**ԻԶ.** Ալի փաշային գիր, զոր գրէ, թէ որպէս Ռաջափ և Իպրահիմ փաշայքն տուեալ են զգիր, նոյնպէս և ես տուեալ հրամայեմ, զի յՕշականու գետոյն կէսն էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղօրէիցն ի ՌՃԽԷ. (1734) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԶ.) (26) համարով: Ցիշեցաւ ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն[I]:

[I] Ջգրված՝ 484բ-489բ

(490ա) **ԳԼՈՒԽ ԻԴ.**

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՒՆ ԿԱՐՃԱՌՕՏ ԲԱՆԻՒ ԵՒ ԸՍՏ ԹՈՒՈՅՆ ՄԻԱՅՆ, ԹԷ ՈՐՔԱ՞Ն ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ՎԱԽՈՒՊՆԱՄԱՅՔ ԳՈՆ Ի ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՋՍ ԹԷ՛ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՎ ԵՒ ԹԷ՛ ՏԱՃԿԱԿԱՆ

Զի ոռովհետև ամենայն իրաց, այսինքն՝ այգեաց, ջրաղացաց, դնկից, ջրոց, տանց, մլքատու գեօղօրէից և այլոց այսպիսեաց, զորս ստացեալ է Սուրբ Աթոռս թէ՛ դրամատուութեամբ առեցեալ և թէ՛ վախմատուութեամբ տերանցն տրեցեալ ղապալայքն և վախպնամայքն գրեցան իւրաքանչիւրն ի տեղւոջն իւրեանց հանդերձ պարագայիւքն իւրեանց, վասն որոյ աստանօր ոչ ևս վերակրկնեմ, այլ միայն զորքանութիւնսն գրեմ ցուցանելով, թէ այսինչ իրի և կամ այս ինչ գեղջ յաղագաւ այսքան ղապալայք և վախուպնամայք և կամ այսքան գրեանք գոն յԱթոռոջս, զի զայս գլուխս առձեռն ունիլով դիւրաւ և փութով գտցես և գիտասցես, թէ այս ինչ գեղջ վեց դանկ մլքին յաղագաւ և կամ այս ինչ այգւոյ և այս ինչ ջրաղացի և այլոց այսպիսեաց յաղագաւ այսքան ղապալայք և գրեանք գոն, որպէս տեսանես ի յըստորև։

### ՂԱՊԱԼԱՅՔ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՂՋՍ

**էջմիածնի գեղջս վեց դանկ մլքին ղապալայք**

Ա. Մեր էջմիածնի գեղջս վեց դանկ մլքին յաղագաւ մեծ կոնդակաձև բուն ղապալայ և վախուպնամայ, զոր առեալ է Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն ի յութ հարիւր երեսուն և երկու թուին տաճկաց (1428), զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և (Ա.) (1) համարով։

Բ. Դարձեալ մեծ և կոնդակաձև ղապալայ մի ևս վասն էջմիածնի գեղջս, Աշտարակու, Բաթռինջու, Նորագաւթայ, Աղունատան, Քիրաշլուի և Մօղնու գեօղօրէից վեց դանկ մլքին, զոր առեալ է նոյն Գրիգոր կաթուղիկոսն Մակուեցի ի յութ հարիւր երեսուն և հինգ թուոջն տաճկաց (1431), զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և (Բ.) (2) համարով։ Սորա սաւատ մի ևս գոյ, զոր ևս գի՛տ ցուցակաւն և (Բ.) (2) համարով։

Գ. Դարձեալ հին ղապալայք հինգ հատ, զորս առեալ է Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի յոմանց դաւաճանից վասն մլքի գեղջս այսորիկ։ Մին ի ՋԿԳ. (1555), մին ի

ՌԿԱ. (1612), մին ի ՌԿԴ. (1615), ի ՌԿԷ. (1617), ի մին ՌԿ. (1620) թիւսն տաճկաց գրեցեալք, զոր գտցես ցուցակօքն և (Գ.) (3) համարէն մինչև ի (Է.) (7) համարն:

Դ. Դարձեալ երեք հատ շխիսլամի տուեալ հունէթք ի բերանոց դատախազից, զորս առեալ է նոյն Յակոբ կաթուղիկոսն ի ՌՃԱ. (1660), ի ՌՃԴ. (1663) և ի ՌՃԷ. (1666) թիւսն տաճկաց գրեցեալք, զորս գտցես ցուցակօքն և (Ը.) (8) համարէն մինչև ի (Ժ.) (10) համարն: (490բ) Որք եղեն տասն հատ գրեանք և դապալայք վասն մլքատուութեանն գեղջս մերոյ էջմիածնի:

Գոն ևս ռաղամք և ֆարմանք թագաւորաց և գրեանք խանից և փաշայից և դիւանագրաց տրեցեալք վասն վեց դանկ մլքին սոյն գեղջս, զորս լիովին ի յիւրաքանչիւր տեղւոջն և մանաւանդ ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս մլքատուութեանն սոյն գեղջս տեսցես հանդերձ ամենայն պարագայիւքն իւրեանց:

## Ի ՅԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՕՂՍ ԱՅԳԵԱՅ ՂԱՊԱԼԱՅՔ

### Ղոի այգւոյն մերոյ ղապալայք

Երկու ղապալայք յանուն Ուռուստամի որդի խօճա Յովանիսին գրեցեալք ի ՌՂԲ. (1681) և ի ՌՂԷ. (1685) թիւսն տաճկաց և զորս գտցես ցուցակօքն:

Ղապալայ մի ևս հայերէն, վասն միոյ ջրաղացի և միոյ այգւոյ Նորք անուանեցելոյ, զորս առնու Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի յիւզբաշի Մելքոնի յորդւոցն ի ՌճԿԲ. (1713) թուոջն մերում գրեցեալս:

Ղապալայ մի ևս հայերէն, զոր գտակակար Աւետիքի որդիքն տան Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌճԿԱ. (1712) թուոջն մերում:

Ղապալայք երեք ևս վասն տէր Նահապետի այգւոյն, զորս առնու Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի մին հայերէն ի ՌճՂ. (1741) թուոջն մերում գրեցեալ և երկուքն տաճկերէն ի ՌճԾԴ. (1741) թիւսն տաճկաց, զորս գտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն, որք եղեն եօթն ղապալայք վասն Ղոի այգւոյն մերոյ, զորոց զօրպէսն տեսցես ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս Ղոի այգւոյն լիովին:

### (491ա) Մանկասարենց այգւոյն մերոյ ղապալայք

Վախուպլամայ մի հայերէն վասն չորս տախտակ այգւոյ, զոր տայ Եղիազար կաթուղիկոսին Մանկասարի որդի Մէհրումն ի ՌճԼ. (1681) թուոջն մերում գրեցեալ:

Ղապալայ մի ևս վասն միոյ և կիսոյ տախտակ այգւոյ տայ Մանկասարենց Միրիճանի որդի Յարութիւնն Նահապետ կաթուղիկոսին ի ՌճԴ. (1692) թուոջն տաճկաց, զոր գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի ևս վեց տախտակի այգւոյ, զոր առեալ է Նահապետ կաթուղիկոսն ի Շահրիմանըլու Բայատ Եօնչալու կոչեցեալոյն ի ՌՃԴ. (1692) թուին տանկաց: Գտցես ցուցակաւն[354]:

Դարձեալ ի սոյն թուոջս մէկ ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ հնձանատրի, զոր առնու աթոռակալ Մինաս վարդապետն ի վերոյ յիշեցեալ Միրիջանի որդի Սահակէն և յայլոց ի յանուն Սրբոյ Աթոռոյս, զոր գտցես ցուցակաւն, որք եղեն չորս հատ ղապալայք վասն մեր Մանկասարենց այգւոյն, զորոց զորպէսն լիովին տե՛ս ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս սոյնոյ այգւոյս:

## (491բ) **Մեր վերին այգւոյն ղապալայք**

Ղապալայ մի մեծ, զոր առեալ է Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի տանկաց ի ՌՃԻԴ. (1712) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի ևս հայերէն, զոր առնու Աթոռս ձեռամբ վէքիլ Ալէքսանին ի ՌՃՀԸ. (1729) թուոջն մերում ի տէր Մկրտչի որդի Սահակէն:

Եւ ղապալայ մի ևս տանկերէն նոյնպէս ի ՌՃԽԱ. (1141) թուին տանկաց, զոր գտցես ցուցակօքն:

Դարձեալ երկու ղապալայք ևս մին հայերէն ի ՌՄԺԵ. (1766) թուոջն մերում գրեցեալ և միւսն տանկերէն ի ՌՃՀԹ. (1179) թուին տանկաց վասն Դևոնդենց այգւոյն, որ է կից սոյն վերի այգւոյս, զոր մեք առաք, զորս գտցես ցուցակօքն:

Դարձեալ զիր մի ևս ի խանէն մերմէ Հիւսէին Ալի կոչեցեալոյ, զոր մեք առաք վասն ումեմն տանիկ պառաւի միոյ ղաւաճանի ի ՌՃՀԸ. (1764) թուին տանկաց, զոր գտցես ցուցակաւն, որք եղեն վեց թուղթք վասն վերոյ այգւոյն մերոյ, զորոց զորպէսն ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս Վերի այգւոյն տեսցես լիովին:

## **Խանբաբի կոչեցելոյ այգւոյն մերոյ ղապալայք**

Մեծ[I] ղապալայ մի վասն սոյն այգւոյս բոլորին, զոր Սիմէօն կաթուղիկոսն Երևանցի առնու ի Սայիդ կոչեցելոյ տանկէ միոյ ի ՌՃՋ. (1766) թուին տանկաց: Գի՛տ երեսն գրեցեալ ցուցակաւն: Ընդ սմին և զիր մի ի բերանոյ նոյն տանկին, թէ զին այգւոյս անպակաս ինձ էհաս, կցեալ ընդ ղապալային:

Եւ ղապալայ մի ևս, զոր Մատթէոսն էր առեալ ի Խանբաբէն ի ՌՃՀԱ. (1757) թուին տանկաց: Եւ հունէքի սուրէթ մի ևս վասն սոյն այգւոյս, որք եղեն չորս թուղթք վասն սոյն Խանբաբի այգւոյս, զորոց զորպէսն լիովին տե՛ս ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս սոյն այգւոյս:

---

[I] Բ. >Մեծ

(492ա) **Ղապալայք վասն աւեր այգետեղեաց մերոց ի գեօղս յայս**

Ղապալայք և վախուպնամայք հայերէն և տաճկերէն տասն և երկու հատ, վասն այգետեղեացն մերոց, որք են ի մէջ սրբոյն Հռիփսիմէի և Մանկասարենց այգւոյն մերոյ, զորոց զորպէսն լիովին տե՛ս ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս ... այգեացն:

Ղապալայ մի ևս վասն միոյ այգետեղւոյ, զոր Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն առնու ի յայս գեօղս յԱնանի որդի Մկրտումէն ի ՌՃԽԵ. (1732) թուին տաճկաց, զոր գտցես ցուցակսն:

Ղապալայ մի ևս վասն միոյ պարտիզի, զոր առնու Աթոռոյս վէքիլ Սարգիսն ի մելիք Յովանիսէն ի ՌՀԹ. (1668) թուին տաճկաց գի՛տ ցուցակսն, զորոց ամենեցունց զորպէսն լիովին տե՛ս ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս այգեացն մերոց, որք ի յայս մեր գեօղս:

Դարձեալ հայերէն ղապալայ և շարթնամայ, զոր Կարփու նահիայի մեծք և փոքունք տան Սրբոյ Աթոռոյս վասն խանըղ կոչեցեալ այգւոյն ի ՌՃԾԵ. (1706) թուոջն մերում, զորոյ զորպէսն տե՛ս ի (ԺԵ.) գլուխն ի ճառս արտորէիցն[I]:

(493ա) **Ղապալայք վասն ջրաղացից, դնկից և այլոց այսպիսեաց ի յէջմիածնի գեօղս**

Ղապալայ մի հայերէն վասն Իւզբաշոնց ջրաղացին ի ՌՃԿԲ. (1713) թուոջն մերում:

Ղապալայ մի ևս հայերէն վասն Մեսրոպենց ջրաղացին ի ՌՃԾԹ.[II] (1710) թուոջն մերում[355]:

Ղապալայ մի ևս հայերէն վասն Կուզալի կէս ջրաղացին ի ՌՃԿԴ. (1749) թուոջն մերում:

Ղապալայ մի ևս վասն մեր դնկին, զոր Ղազար կաթուղիկոսն առեալ է ի յայս գեօղացի Բուղաղէն ի ՌՃԿԴ. (1749) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակսն: Զայս ամենայն լիովին տե՛ս ի (ԺԷ.) (17) գլուխն ի ճառս ջրաղացիցն:

(493բ) **Ղապալայք վասն Սէֆիապատ և խաթունարխ կոչեցեալ տեղւոյն, որ է ի վայր հարաւակողմն գեղջս մերոյ ի վերայ Մեծամօր գետոյն և է խոտհարք Սրբոյ Աթոռոյս**

Ղապալայ մի վասն սոյն տեղւոյս, զոր առնու Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի ի յԱլիբէքլի գեօղականացն ի ՌՃԼԱ. (1718) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակսն:

Գիր մի ևս վասն այսորիկ վասն վէքիլութեան ոմանց, զի ծախեցեն զայս տեղիս, գի՛տ ցուցակսն:

Ծխիսլամի գիր մի ևս վասն այսորիկ ի բերանոց նոյն գեօղականացն, զոր ևս գի՛տ ցուցակսն:

---

[I] Զգրված՝ 492բ

[II] Բ. ՌՃԿԴ.

Ղապալայ մի եւ վասն այսորիկ, զոր Թրակացի Աբրահամ կաթուղիկոսն առնու ի նոյն գեօղականացն ի ՌՃԽԲ. (1735) թուին տանկաց, զոր եւ գի՛տ ցուցակաւն: Սոցա որպէսն լիովին տե՛ս ի (ԺԵ.) (15) գլուխն ի ճառս արտորէիցն:

**Ղապալայք վասն ջրոց ի գեօղս յայս, զորս ունի Սուրբ Աթոռս**

Ղապալայ մի վասն երից բաժնեաց մի բաժնի ջրոյ յուշականցւոցն, զորս ունին ի գլուխ դաշտիս մերոյ, զոր տուեալ են Աստուածատուր կաթուղիկոսին ի ՌՃԼԴ. (1721) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Ղապալայ մի վասն Դալմայ կոչեցեալ ջրոյն, որ է Ջանկի գետոյն ելեալ գայ ի գեօղս մեր, զոր առեալ է Նահապետ կաթուղիկոսն ի Բուրճալի բէկ կոչեցեալ տանկի ազգականացն ի ՌՃԺ. (1698) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն: Այս երկուց և այլոց վասն ջրոց գրեանց, որպէսն տե՛ս լիովին ի (ԺԸ.) (18) գլուխն ի ճառս ջրոցն:

(494ա) **Ղապալայք տանց, որք ի մեր էջմիածնի գեօղս**

Ղապալայ մի հայերէն, զոր առեալ է Նահապետ կաթուղիկոսն ի յայս գեօղացի Սահրատի որդի խաչատուրէն վասն միոյ ձեռք տանց ի ՌՃԽԲ. (1693) թուոջն մերում, որ է մեր բաղնեաց տեղն:

Ղապալայ մի եւ վասն միոյ տան, զոր Նահապետ կաթուղիկոսն առնու ի նոյն գեօղացի Մարտիրոսի որդւոցն ի ՌՃԽԴ. (1695) թուոջն մերում, որ է ի մէջ Ղազարապատին:

Ղապալայ մի եւ տանկերէն, զոր Աղէքսանդր կաթուղիկոսն Ջուղայեցի առնու ի յայս գեօղացի Անտօնի յորդւոցն վասն հինգից տանց ի ՌՃԿԵ. (1713) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն, որ էր օթարի կեցեալ տունն, զոր մեք փակեցաք ընդ այլոցն, զայսցանեաց, որպէսն տե՛ս լիովին ի ԺԹ. (19) գլուխն ի ճառս տանց:

## (495ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՅՕՇԱԿԱՆԱՑ ԳԵՂՋՆ, ՈՐ Է ՄՈԻԼՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

**Ղապալայք վասն մլքին գեղջս այսորիկ**

Ա., Բ. Ղապալայք երկուք վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զորս առնու Փիլիպպոս կաթուղիկոսն ի սհաթլուեցի Սուլթան բէկ տանկէն ի ՌԾ. (1640) և ի ՌԾԱ. (1641) թիւսն տանկաց գրեցեալք, զորս գտցես ցուցակօքն և (Ա.) (1) և (Բ.) (2) համարով, որոց սուրէթ մի եւ զոյ սոցա նշանիւքն: Ա. (1) համարով:

Գ. Դարձեալ ղապալայ մի վասն միոյ դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն կաթուղիկոսն ի Բաբայ, ի Բանդալու և ի Բէկում տանկացն ի ՌԾԱ. (1641) թուին տանկաց, զոր գտցես ցուցակաւն և (Գ.) (3) համարով:

Դ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Հասան և ի Հիւսէին տանկաց ի ՌՂԱ. (1641) թուին տանկաց, զոր գի՛տ ցուցակաւն և (Դ.) (4) համարով:

Ե. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Սուլթանբէկ և ի Մէվլամ ղուլի բէկ տանկացն ի ՌՂԲ. (1642) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ե.) (5) համարով: Սորա սուրէթ մի ևս գոյ:

Զ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Սէֆի ղուլի բէկ և ի Մեժլում բէկ տանկացն ի ՌՂԳ. (1643) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Զ.) (6) համարով:

Է. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Շահզէյնալ տանկէն ի ՌՂԴ. (1644) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Է.) (7) համարով:

Ը. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Մէջլում բէկ տանկէն ի ՌՂԵ. (1645) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ը.) (8) համարով:

Թ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Հիւսէին բէկին ի ՌՂԵ. (1645) թուին տանկաց: Սորա երկու սուրէթ ևս գոն, զորս զտցես ցուցակօքն և (Թ.) (9) համարով:

Ժ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի ի Խանադան ղուլի տանկէն ի ՌՃԴ. (1655) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ժ.) (10) համարով:

ԺԱ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Դարկեահ տանկէն ի ՌՃԷ. (1666) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԱ.) (11) համարով:

ԺԲ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Սէֆի ղուլի տանկէն ի ՌՃԻԱ. (1672) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԲ.) (12) համարով:

ԺԳ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Օնոփրիոս վարդապետն ի Սէֆի ղուլի տանկէն ի ՌՃԼ. (1680) թուին տանկաց: Սորա աղագաւ հուճէթ մի ևս գոյ ի շխիսլամէ տուեալ ի ՌՃԻԲ. (1673) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԳ.) (13) համարով զղապալայն և զհուճաթն ևս:

ԺԴ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին Յակոբ կաթուղիկոսն ի Մուշուռ տանկէն ի ՌՃԼ. (1680) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԴ.) (14) համարով:

ԺԵ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի հայ Գասպարէն ի ՌՂԲ. (1681) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԺԵ.) (15) համարով:

ԺԶ. Դարձեալ ղապալայ մի վասն վեց դանկ մլքին Մանկանոց կոչեցեալ մահլա-յին, զոր առնու նոյն երանելին ի յեասաուլ Նաբիբէկ տանկէն ի ՌՃԸ. թուին տանկաց (1667): Գի՛տ ցուցակաւն և (ԺԶ.) (16) համարով, սորա հին ղապալայն ևս զի՛տ ցուցակաւն և (ԺԶ.) (16) համարով: Սորա Ա. (1) սաւաթ ևս զոյ, զի՛տ նոյն (ԺԶ.) (16) համարովն:

(495բ) ԺԷ., ԺԸ., ԺԹ., Ի. Դարձեալ չորս հատ ևս հուճէթք ի բերանոց դաւաճանից առեալ ի ՌՁԷ. (1676), ի ՌՂ. (1679), ի ՌՂԴ. (1682) և ի ՌՂԶ. (1685) թիւսն տանկաց գրեցեալք, զորս գտցես ցուցակօքն և ի (ԺԷ.) (17) համարէն մինչև ի (Ի.) (20) համարն:

ԻԱ. Դաձեալ ղապալայ մի մեծ հին և կոնդականձև վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առեալ են ի հին տերանցն: Յորում գրի գեօղս չորիւք սահմանօքն, գրեցեալ ի յԸՃՂԴ. (1488) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (ԻԱ.) (21) համարով:

[ԻԲ.]-Լ. Այլև ընդ սմին առեալ են երանելիքն մեր զհին ղապալայս վասն մլքին գեղջս այսորիկ ի հին տերանց Թ. (9) հատ, զորս գտցես ցուցակօքն և (ԻԲ.) (22) համարէն մինչև ի (Լ.) (30) համարն:

ԼԱ., ԼԲ. Դարձեալ սոյն յՕշականու գեօղականքս զերկուս ղապալայս ևս տան Սրբոյ Աթոռոյս, մին Աստուածատուր կաթուղիկոսին ի ՌճԼԴ. (1721) թուին տանկաց և զմիւսն Կարապետ կաթուղիկոսին ի ՌճԼԸ. (1725) թուին տանկաց վասն կրկին մուլք տալոյ Սրբոյ Աթոռոյս, զոր գտցես ցուցակօքն և (ԼԱ.) (31) և (ԼԲ.) (32) համարօքն: Սոյնանման և սոյնահամար թուղթ մի ևս գոյ, որք եղեն ընդ ամենն Խ. (40) հատ թուղթք վասն յՕշականու մլքատուութեանն, որոց զորպէսն լիովին պարագայիւքն իւրեանց տե՛ս ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս մլքատուութեան սոյն գեղջս:

### Ղապալայք վասն այգեաց Սրբոյ Աթոռոյս, որք ի յՕշական

Ղապալայ մի վասն մասին մեծ այգւոյն, որ կոչի Ներքի այգի, զոր առնու Մելքիսէթ կաթուղիկոսն ի յԱլի ղուլի տանկէն ի ՌԽ. (1596) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Սօհլամայ մի վասն մասին սոյն այգւոյս, զոր առնու Փիլիպպոս կաթուղիկոսն ի Մեհտի վեզիրէն ի ՌՂԶ. (1646) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Ղապալայ մի հայերէն վասն մասին սոյն այգւոյս, զոր առնու Աբրահամ կաթուղիկոսն Թր(496ա)ակացի ի կարփեցի Անտոնի յորդւոցն ի ՌճՁԴ. (1735) թուին մերում: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի վասն միւս Արեգունի այգւոյն մերոյ, որ կոչի Վերի այգի միոյ մասին, զոր առնու Աթոռս ի Բաբամի որդի Մուրատէն ի ՌՂԷ. (1685) թուին տան-

կաց: Գի՛տ ցուցակաւն, որք եղեն չորս հատ թուղթք վասն երկուց այգեաց մերոց յՕշականու, որոց զորպէսն լիովին տե՛ս ի [ԺԶ.] (16) գլուխն ի ճառս այգեացն յՕշականու:

Դարձեալ երկու վախուպլամայք, մին հայերէն ի ՌՃԽ. (1691) թուոջն մերում գրեցեալ և միւսն տաճկերէն ի ՌՃԲ. (1690) թուոջն տաճկաց գրեցեալ ի ժամանակս Եղիազար կաթուղիկոսին: Բ. (2) ղապալայ ևս հին, զորս տայ Սրբոյ Աթոռոյս մուղնեցի հայրապետի որդի գրագիր Ալէքսանն վասն միոյ այգւոյ, զորս գտցես ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի զոր առնու աթոռակալ Մինաս վարդապետն վասն միոյ այգւոյ ի Թումանէն, ի Մուրատէն և յայլոց գեօղականացն ի ՌՃԲ. (1690) թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու նոյն Մինաս վարդապետն ձեռամբ Թումանին ի Մարիամէն ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին ի ՌՃԴ. (1692) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու Նահապետ կաթուղիկոսն ի Մարուք վարդապետէն ի ՌՃԳ. (1691) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի մեծ հին գրեցեալ ի ՌՃԿԶ. (1714) թուոջն տաճկաց և ղապալայ մի նոր ի ՌՃԼԱ. (1718) թուոջն տաճկաց վասն հնն այգւոյ և տասն և երկու ջրաղացից, զորս առնու Աստուածատուր կաթուղիկոսն ի յերևանցի խօճա Մօսիսէն: Գի՛տ ցուցակօքն:

Դարձեալ ղապալայ մի վասն քսան այգւոյ և հինգ ջրաղացից, զորս առնու Աստուածատուր կաթուղիկոսն ի սհաթլուեցի Վազիրէն ի ՌՃԼԴ. (1721) թուոջն տաճկաց: Գի՛տ ցուցակօքն:

Դարձեալ երկու հայերէն ղապալայք վասն երկու տախտակ այգւոյ և մէկ կարասալի[356] շիրախանայի, զորս առնու Ղազար կաթուղիկոսի սպասաւոր Նիկողայոս վարդապետն ի Յարութիւնէն ի ՌՃՂԴ. (1745) թուոջն մերում, զորս գի՛տ և տե՛ս:

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու Սուրբ Հռիփսիմէի առաջնորդ Անտօն վարդապետն ի Բռումենց տղայոցն ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու Սուրբ Շողակաթի առաջնորդ Մարտիրոս վարդապետն ի Մատթէոսէն ի ՌՃԽԸ. (1735) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր Սուրբ Հռիփսիմէի և Սուրբ Շողակաթի առաջնորդ Անտօն և Մարտիրոս վարդապետքն առնուն ի Բռումենց ի ՌՃԶԵ. (1736) թուոջն մերում[357]:

Դարձեալ երկու հայերէն ղապալայք, մին վասն միոյ այգւոյ, զոր Սուրբ Գայիանէի առաջնորդ Եղիազար վարդապետն առնու ի Քիթուրէն ի ՌՃՂԷ. (1748) և միւն վասն երկու շիրխանայի և տասն կարասի, զորս առնու ի Ղևոնդենց Գրիգորէն ի ՌՄ. (1751) թուին մերոյ:

Դարձեալ չորս հատ ղապալայք հայերէն և մին տաճկերէն վասն երեք հնձանի և երկու մարաքի, զորս առնու Սուրբ Աթոռս ի յայս գեօղացւոցս ի ՌՃԾԸ. (1709), ի ՌՃԿԱ. (1712), ի ՌՃՀԱ. (1722), ի ՌՃՁԷ. (1738) թուոջն մերում և ի ՌՃԸ. (1667) թուին տաճկաց, զորս գի՛տ և տե՛ս, որք եղեն ընդ ամենն ... ղապալայք այգեաց և հնձանաց յՕշականու, զորոց, որպէսն լիովին ի (ԺԶ.) (16) գլուխն և ի ճառս սոյն գեղջս այգեացն տեսցես:

## (496բ) Ղապալայք յՕշականու ջրաղացից, ձիթահանքից

Ղապալայ մի վասն վեց ջրաղացից, զորս առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի Բռումենց Առաքելի յորդւոցն ի ՌՀԳ. (1662) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Ղապալայ մի վասն միոյ ջրաղացի և միոյ այգւոյ, զորս առնու Սուրբ Աթոռս վերիլ Դաւթին ձեռօքն ի տէր Հայրապետի դուստր Կեօքլուէն ի ՌԺԳ. (1604) թուին տաճկաց, գի՛տ ցուցակաւն, զորպէսն սոցա տե՛ս լիովին ի (ԺԷ.) (17) գլուխն ի ճառս սոյնոյ գեօղիս ջրաղացից[I]:

## (498ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՎԱՍՆ ՖՌԱՆԿԱՆՈՑ ԳԵՕՂԻ ՎԵՑ ԴԱՆԿ ՄԼՔԻՆ

Ա. Ղապալայ մի վասն սոյնոյ գեղջս վեց դանկ մլքին, զոր առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի յարալղցի Ալի աղայի յորդւոցն ի ՌԿԶ. (1655) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով: Ընդ սմին առնու և զհին ղապալայն սոյն գեղջս, զոր Ահըլուլայն տայ Իպրահիմ և Սուլէյման տաճկացն, որ գրի ի ՌԽԲ. (1632) թուին տաճկաց, զոր ևս գի՛տ ցուցակաւն:

Բ. Ղապալայ մի ևս, զոր սոյն գեօղականքս տան Աբրահամ կաթուղիկոսին Մշեցւոյ վասն կրկին մուլք տալոյ Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԽԴ. (1731) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Բ.) (2) [համարով]: Գիր մի ևս սոյն գեղջս աղա Մուստաֆայ բեկն տայ վկայական և հաւանական վասն այսորիկ, զոր ևս գտցես ցուցակաւն և (Բ.) (2) համարով:

Գ. Գիր մի ևս բազմակնիք, խանի, շարի և այլոց տաճկաց կնքով վկայութիւնք վասն սոյնոյ գեղջս, թէ ի բնէ անտի մլքատու է էջմիածնի ի ՌՃՀԶ. (1762) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և Գ. (3) համարով:

---

I Զգրված՝ 497աբ

Դ. Գիր մի ևս Հիւսէին Ալի խանին տուեալ վասն երեք դանկ մուլքին սոյն գեղջս, զի՛ռ ցուցակաւն: Յիշեցաւ ի ճառս սոյն գեղջս: Զայս ամենայն լիովին տե՛ս ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջս: Գի՛ռ զայս (Դ.) (4) համարով[I]:

## (499ա) ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ԳԻՐՔ ՎԱՍՆ ՎԵՑ ԴԱՆԿ ՄԼՔԻ ՄԱՍՏԱՐԱՅ ԳԵՂՋՆ

Ա. Ղապալայ մի վասն երկու և կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր սոյն գեօղացի Ոսկանի որդի Թարխանն առնու ի Բատրխանի որդի Մահամատէն ի ՌԿԴ. (1655) թուին տաճկաց և ի ՌԿԷ. (1656) թուին տաճկաց: Ի գլուխ նոյնոյ ղապալային վախմնամայ գրեցուցեալ տաճկերէն տայ Սրբոյ Աթոռոյս, զորս գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Ա. Դարձեալ հուճէթ մի ի բերանոյ Ալփաւուտ Իպրահիմ խալիֆայի որդի Ռազադուլուն վասն սոյն երկու և կէս դանկիս ի ՌՀԵ. (1664) թուին տաճկաց: Յորում յիշի, թէ Կեաւուր գեօղի վեց դանկ մուլքն սոյն տաճիկս ծախեալ է Աթոռոյս, զոր գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Բ. Դարձեալ ղապալայ մի վասն միոյ դանկի երեք բաժին մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի Սարգսի որդի Մհէրէն ի ՌճԻԱ. (1709) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և (Բ.) (2) համարով:

Գ. Դարձեալ ղապալայ մի հայերէն վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Աթոռս ի նոյն Մհէրի թոռանցն ի ՌճԿԳ. (1714) թուին մերում: Գի՛ռ և տե՛ս (Գ.) (3) համարով:

Դ. Դարձեալ ղապալայ մի վասն միոյ դանկ մլքին գեղջս, զոր առնու Աստուածատուր կաթուղիկոսն ի նոյն Մհէրի թոռանցն ի ՌճԼԲ. (1719) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և (Դ.) (4) համարով:

Ե. Դարձեալ հին և բուն ղապալայ վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ, յորում գրի գեօղս այս սահմանօքն, զոր առնուն ղօջի Մահմատ աղայն և Սէիդի որդի Մահամատ աղայն ի Միրաշահի յորդւոցն ի ՋԽԵ. (1538) թուին տաճկաց: Գի՛ռ ցուցակաւն և (Ե.) (5) համարով: Զվերոյ գրեցեալսդ տե՛ս լիովին հանդերձ պարագայիւքն ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջս: Զգրեանսն թագաւորաց և իշխողաց յիւրաքանչիւր տեղւոջն տեսցես[II]:

[I] Զգրված՝ 498բ

[II] Զգրված՝ 499բ

## (500ա) ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ԳՐԵԱՆՔ ՎԱՍՆ ՔԻՐԱՇԼՈՒ ԳԵՕՂԻ, ՈՐ Է ՅԱՊԱՐԱՆՈՒ ՆԱՀԻԷՆ, ՄԼՔԱՏՈՒՈՒԹԵԱՆՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ: ՍԱ ՓԻՐԻԴԱՒՐԻՇ ԵՒՍ ԿՈՉԻ

Ղապալայ մի մեծ վասն սոյն գեղջս ընդ այլոց վեցից գեօղօրէից, զոր Գրիգոր կաթուղիկոսն Մակուեցի առնու ի յԱմիր Ռուստամէն, զոր տե՛ս ի վերդ ի ... ղապալայս էջմիածնի գեղջս:

Ա. Դարձեալ գիր մի ի դաւաճանի բերանոյ, զոր առնու Փիլիպպոս կաթուղիկոսն վասն վեց դանգ մլքին գեղջս ի ՌԿԳ. (1653) թուին տաճկաց: Տե՛ս ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Բ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէ, զոր առնու Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի ի ՌՁԲ. (1671) թուին տաճկաց: Տե՛ս ցուցակաւն և (Բ.) (2) համարով:

Գ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէ, զոր առնու լուսարար Ստեփաննոս վարդապետն ի ՌՂԳ. (1682) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Գ.) (3) համարով:

Դ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէ, զոր առնու Նահապետ կաթուղիկոսն ի ՌԺԺԳ. (1701) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Դ.) (4) համարով: Զայս ամենայն լիովին պարագայիւքն տեսցես ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջս:

## (500բ) ՂԱՊԱԼԱՅՔ ՎԱՍՆ ՄՈՒՂՆԻ ԳԵՂՋ ՎԵՑ ԴԱՆԿ ՄԼՔԻՆ, ՈՐ Է ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

Ղապալայն մեծ, զոր առնու Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն վասն եօթեանց գեօղօրէից: Տես լիովինն ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

Ա. Հուճէթ մի ի բերանոյ դատախազից վասն մլքին գեղջս, զոր առնու սրբոյն Գէորգայ վանից առաջնորդ Դաւիթ վարդապետն ի ՌՁՉ. (1675) թուին տաճկաց, զոր գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

## (501ա) ԴԻՊԱՔԼՈՒ ԳԵՂՋ, ՈՐ ՀԱՅԵՐԷՆ ՍԱՆՏ ԿՈՉԻ

Ա. Հին ղապալայ մի գոյ գրեցեալ ի ՋՂԴ. (1585) թուին տաճկաց, զոր ծախեն Մահմատ և Ահմատ աղայքն Իպրահիմ խալիֆայ տաճկին, յորում գրի գեօղս սահմանօքն: Եւ զայլ ամենայն, որպէսն տե՛ս ի Քիրաշլու գեղջ յորպիսութեանն և ի ճառս սոյն գեղջ:

## (501բ) ՔԷՇԻՇՔԵԱՆՏ, ՈՐ ՉԱԼԱՊԻՔԵԱՆՏ ԵՒ ԱՅՏԻՆ ԴԱՎՐԻՇ ԵՒՍ ԿՈՉԻ, ՈՐՈՅ ՎԵՑ ԴԱՆԿ ՄՈՒԼՔՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ Է

Ա. Ղապալայ մի վասն վեց դանգ մլքին սորա, զոր առնու Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի ի Ղուլ Ֆահրատ և ի Ղուլ Իսմայէլ տաճկացն ի ՌՁԲ. (1671) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարովն:

Բ. Գիր մի ևս ի սոյն Իսմայէլէս ի լուսանցն և խանի գիր և կնիքն, զոր գտցես ցուցակաւն և (Բ.) (2) համարով:

Գ. Ղապալայն սորա հին գրեցեալ ի ՋՁ. (1572) թուին տաճկաց, զոր գի՛տ ցուցակաւն և (Գ.) (3) համարովն: Եւ զայլ որպէսն լիովին տե՛ս ի Քիրաշլուն:

## (502ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՎԱՍՆ ՆՈՐԱԳԵՂՈՒ, ՈՐ Է Ի ՄԵՐՁ ԵՐԵՒԱՆՈՒ

Ա., Բ. Ղապալայք և փախուպնամայք երկուք, մեծք և բազմակնիք վասն վեց դանկ մլքին Նորագեղու, չորս և կէս դանկ մլքին Եղուարդայ և Մարխանենց այգոյն, որ յերևան և մէկ այգոյ ի Զորագեօղ և միոյ ջրաղացի ի Զորագեօղ, զորս տայ յիշատակ Սրբոյ Աթոռոյս խօճա Սեթի որդի խօճա Յակոբճանն ի ՌԿԸ. թուին տաճկաց (1658), զորս գտցես ցուցակաւն և (Ա.) (1) և (Բ.) (2) համարով: Տե՛ս զորպէսն լիովին ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեօղիս:

Ղապալայ մի ևս վասն միոյ այգոյ ի սոյն գեօղս, զոր առնու Ջուղայեցի Աղէք-սանդր կաթուղիկոսն ի դամուրպուլաղցի Հասան աղայէն ի ՌճԻՁ. (1714) թուին տաճ-կաց: Գի՛տ ցուցակաւն և ( ) և հին ղապալայն սորա ևս գի՛տ, որ գրի ի ՌճԻԱ. (1709) թուին տաճկաց:

Ղապալայն Սիրախանի այգոյն այն, որ ասացաւ ի [ԺՁ.] գլուխն ի ճառս սոյն գեղջս և ի [ԺԹ.] գլուխն ի ճառս տանցն Երևանու ի ՌճԻԴ.[358] (1712) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և ( ):

Հուճէթ մի կրկնեցեալ վասն միոյ այգոյ, որ Համաղի բաղ և Քեօշկի Համզայ կո-չի, ի բերանոյ Ֆաթմային ի ՌճԻՁ. (1714) և ի ՌճԻԸ. (1716) թիւսն տաճկաց գրեցեալ: Գի՛տ ցուցակաւն և ( ):

Դարձեալ երկու հուճէթք ևս վասն սոյն այգւոյս, մին ի Ֆաթմայէն նոյնոյ ի հազար հարիւր քսան և երեք (1711) և միւսն ի Մահմատ դասում բէկէն ի ՌճԼԱ. (1718) թիւսն տաճկաց գրեցեալք, զորս գտցես ցուցակօքն և ( ) համարով: Տե՛ս ի (ԺԶ.) (16) գլուխն ի ճառս այգեացն Նորագեղու զորպէսն սոցա լիովին:

## (502բ) ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ԳՐԵԱՆՔ ՎԱՍՆ ԵՂՈՒԱՐԹԱՅ ԳԵՂՋՆ

Ղապալայք երկուք վասն չորս և կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զորս յիշեցաք ի վերդ ի ճառս ղապալայիցն Նորագեղու:

Ա. Հուճէթ մի ի բերանոյ դատախազի առեալ վասն սոյն մլքիս ի ՌԿԳ. (1623) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և Ա. (1) համարով: Եւ ռաղամ մի ևս վասն այսորիկ: Եւ զայլ, որպէսն լիովին տե՛ս ի (ԺԲ.) (12) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## (503ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՎԱՍՆ ՆՈՐՔ ԳԵՕՂԻՆ

Ա. Ղապալայ մի վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի խօճա Սէթի թոռն Սարուխանէն ի ՌՃԻԳ. (1674) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Բ. Ղապալայ մի ևս հին վասն սոյն գեղջ վեց դանկ մլքին, զոր առնու Ամիրկիւնէ խանի որդի Նազրկեօնն ի յայլոց տանկաց ի ՌԿԶ. (1617) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և (Բ.) (2) համարով: Եւ զայլ զորպէսն լիովին տե՛ս ի ԺԳ. (13) գլուխն ի ճառս մլքատուութեան սոյն գեղջս:

Ղապալայք ևս երեք հատ, մին հայերէն ի ՌՃՁԵ. (1736) թուին մեռում և երկուքն տանկերէն ի ՌՃԽԲ. (1729) և ի ՌՃԽԵ. (1732) թիւսն տանկաց գրեցեալք, որովք նորքցի Մարգարի որդի մահտեսի Ջաֆարայն զիւր տունսն, զհինգ այգիսն և զամենայն ունեցեալսն ծախէ Սրբոյ Աթոռոյս: Գի՛տ ցուցակաւն, զորպէսն լիովին տե՛ս ի ԺԶ. (16) գլուխն ի ճառս այգեաց սոյն գեղջս:

## (503բ) [ՂԱՊԱԼԱՅՔ ԵԱՅՃԻ ԵՒ ԱՄԻՐԻ ԳԵՕՂ ԿՈՉԵՑԵԱԼ ԳԵՕՂՕՐԷԻՑ]

Ա. Ղապալայք վասն Եայճի կոչեցեալ գեղջն, որ է յերկիրս յերևան ի Ծաղկունեաց ձորն, որոյ վեց դանկ մուլքն է Սրբոյ Աթոռոյս և վասն Ամիրի գեօղ կոչեցելոյն, որ է ի Գեօղարքունի, որոյ չորս դանկ և կէս մուլքն է Սրբոյ Աթոռոյս ի ՌՀԱ. (1660) թուին տանկաց, զոր գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Դարձեալ վասն այսորիկ ռաղամի սուրէթ մի շարի կնքով ի ՌԾԸ. (1648) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ( ) համարով, զորոց զորպէսն տե՛ս լիովին ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեօղօրէից:

## [ՂԱՊԱԼԱՅ ԲՈԽԵՆԻՍ ԳԵՂՋ]

Ա. Ղապալայ և վախմնամայ մի վասն Բոխենիս կոչեցեալ գեղջն, որ տանկերէն Չաշուրլու ասի, որ է ի Կարփու նահիէն ի սիրտն Արագածու մերձ Ամբերթ կոչեցեալ ամրոցին, վեց դանկ մլքին, որ է Սրբոյ Աթոռոյս ի ՌՀԱ. (1660) թուին տանկաց, զոր գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարովն, զորպէսն լիովին տե՛ս ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## (504ա) [ՂԱՊԱԼԱՅ ԾՕՓԱՆԻՍ ԳԵՂՋ]

Ա. Գիր մի վասն Ծօփանիս կոչեցեալ գեղջն, որ է ի Կարփու նահիէն, մլքատուութեան Սրբոյ Աթոռոյս ի ՌՂԹ. (1687) թուին տանկաց, զոր գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Բ. Ղապալայ մի ևս հին վասն այսորիկ գրեցեալ ի ՋՀԲ. (1564) թուին տաճկաց, զոր ևս գի՛տ ցուցակաւ և (Բ.) (2) համարով, զորպէսն տե՛ս լիովին ի (ԺԳ.) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## ՂԱՊԱԼԱՅՔ ՎԱՍՆ ԲԱԹՐԻՆՋ ԳԵՂՋ ՄԼՔԱՏՈՒՈՒԹԵԱՆՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

Նախապէս մեծ ղապալայն Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսին, զոր յիշեցաք ի [ԺԳ.] (13) գլուխն և ի ճառս էջմիածնի և սոյն գեղջս:

Ա. Դարձեալ ղապալայ մի ևս վասն մէկ դանկ մլքին սորա, զոր առնու Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցի ի Բայրամբէկ տաճկէն ի ՌԿՁ. (1655) թուին տաճկաց: Գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարով:

Բ. Ղապալայք երկուք ևս հին վասն այսորիկ, մին ի ՌԿԳ. (1653) և միւսն ի ՋԶԵ. (1577) թիւն տաճկաց գրեցեալք, զորս գտցես ցուցակօքն և (Ա. (1) և Բ. (2)) համարովք: Եւ զայլ, որպէսն լիովին տե՛ս ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## (504բ) ՂԱՊԱԼԱՅ ՄԵԼԻՔԻ ԳԵՂՋ

Ա. Ղապալայ մի վասն Մէլիքի գեօղ կոչեցելոյ, որ է յԱպարանու ճահիէն վեց դանկ մլքին, զոր առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի Ոբզայ ղուլի տաճկէն ի ՌՀԵ. (1664) թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն և (Ա.) (1) համարով: Զորպէսն տե՛ս ի ճառս սոյն գեղջ:

## [ՂԱՊԱԼԱՅ ՂԱՐԱՂՕՅՈՒՆԼՈՒ ԳԵՂՋ]

Ա. Ղապալայ մի վասն վեց դանկ մլքին Ղարաղօյունլու կոչեցեալ գեղջն, որ եօլ-բեասան ևս ասի, որ է ի Գառնւոյ ճահիէն, զոր առնու Ջուղայեցի Յակոբ վարդապետն ի ՌԿԱ. (1650) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն և (Ա.) (1) համարով: Տես զորպէսն ի ճառս սոյն գեղջ:

## (505ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ԱՇՏԱՐԱԿՈՒ ԳԵՂՋՆ

Նախապէս մեծ ղապալայն Գրիգոր կաթուղիկոսին Մակուեցւոյ վասն վեց դանկ մլքին սորա, զոր յիշեցաք ի (ԺԳ.) (13) գլուխն ի ճառս էջմիածնի գեղջս:

Ա. Գիր մի հունճէթապէս և վկայական Հիւսէին Ալի խանին և այլոց մեծամեծաց կնքովք ի ՌՃԶԲ. (1768) թուին տաճկաց վասն Աշտարակու, Մուղնու, Եղուարդայ և Քիրաշլուի մլքատու լինելոյն Սրբոյ Աթոռոյս: Տե՛ս ի ճառս Աշտարակու:

Դարձեալ ղապալայ մի վասն այգւոյն միոյ, զոր առնու Մօսէս կաթուղիկոսն ի յերևանցի Մուրատի դստերէն ի Ռխ. (1630) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ, զոր առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի ... տանկէն և տայ յիշատակ Սաղմոսավանից ի ՌՃ. (1669) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն և ( ) համարով: Ջայլ, որպէսն տե՛ս ի (ԺԶ.) (16) գլուխն ի ճառս այգեաց սոյն գեղջ:

## (505բ) ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ՓԱՐԱՔԱՐ ԿՈՉԵՑԵԱԼ ԳԵՂՋՆ

Ղապալայք և գրեանք եօթն հատ վասն մեր մեծ և պարսպաւոր այգւոյ, զոր ունիմք ի գեօղս յայս, հինգն տանկերէն և երկուքն հայերէն: Տանկերէն երկուքն ի ՌԽԶ. (1636) և ՌԿԴ. (1653) թուոջն գրեցեալք յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսին: Մին ի ՌՀԶ. (1665) թուին տանկաց յաւուրս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, մին ի ՌճԺԴ. (1702) թուին տանկաց յաւուրս Նահապետ կաթուղիկոսին, մին հայերէն ի ՌճՁԵ. (1736) թուին մեռում յաւուրս Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ, մի ևս տանկերէն սորա հին ղապալայն, որ գրի ի ՌճՁ. (1694) թուին տանկաց և մին ևս հայերէն ի ՌճՀԸ. (1178) թուոջն մեռում յաւուրս Կարապետ կաթուղիկոսին, զորս գտցես ցուցակօքն: Այսք ամենայն ի մէջ մեր այգւոյ են ի մի խառնեցեալք:

Դարձեալ վախուպնամայ մի տանկերէն վասն միոյ այգւոյ, զոր տայ Սրբոյ Աթոռոյս նոյն գեօղացի Ղարակեօզն ի ՌՁԱ. (1670) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Դարձեալ հայերէն վախուպնամայ մի վասն միոյ այգւոյ, զոր տայ Սրբոյ Աթոռոյս սոյն գեօղացի Յովանէսն ի ՌճՂԹ. (1750) թուոջն մեռում:

Դարձեալ ղապալայք երկուք, մին վասն միոյ այգւոյ և միւսն վասն միոյ այգետեղւոյ և միոյ արտի, զորս առնու ի սոյն գեօղացի Դիլանէն և ի տիրացու Նիկողայոսէն ի ՌճՂԴ. (1745) թուոջն մեռում և տանկաց ի ՌճԾԸ. (1158) Սուրբ Հռիփսիմէի առաջնորդ Անանիա վարդապետն Պօլսեցի, զորս գտցես ցուցակօքն: Ջվերոյ գրեալսդ զամենայն տե՛ս լիովին պարագայիւքն ի (ԺԶ.) (16) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## (506ա) ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ՔԱԼԱՐՈՒ ԳԵՂՋՆ

Ղապալայ մի վասն երկուց ջրաղացատեղեաց ի գեօղս յայս, զորս առնու Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի սոյն գեօղացի Առաքելի որդի Սարգսէն և ի Պետրոսի որդի Յովանիսէն ի ՌճԺԹ. (1707) թուին տանկաց: Գի՛տ ցուցակաւն:

Ղապալայ մի ևս վասն երկուց աւեր ջրաղացաց ի սոյն գեօղս, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր կաթուղիկոսն ի ղանար Մահմատ բէկէն ի ՌճԻԶ. (1714) թուոջն տանկաց: Գի՛տ ցուցակաւն, որ է մեր շէն դինկն:

Հունէքթ մի ի շարէն և թալըղայ ևս ի Հիւսէին Ալի խանէն գոն վասն այսորիկ վասն դաւանանի միոյ ի ՌճՀԸ. (1178) թուոջն տանկաց գրեցեալք և ի մեր ՌՄԺԳ. (1764) թուոջն, զորս ևս գտցես ցուցակօքն: Ջսոցունց ամենից որպէսն լիովին տե՛ս ի (ԺԷ.) (17) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## (506բ) ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ԿԱԽԱԿԵՐՏ ԵՒ ԳԵՕԿՔԻԽՄԲԷԹ ԿՈՉԵՑԵԼՈՑՆ

Վախուպնամայ մի վասն ցանելոյ հողոյ, զոր տան բոլոր գեօղականքն Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԺԳ. (1704) թուին տանեկաց: Գի՛տ ցուցական:

Ղապալայ մի վասն երկուց ջրաղացաց ի գեօղս յայս, զոր առնու Ղազար կաթուղիկոսն Ճահկեցի ի Յօհանի որդի Աւագէն ի ՌՃԾԳ. (1740) թուին տանեկաց: Գի՛տ ցուցական:

Ղապալայ մի հին վասն միոյ դնկի ի ՌՃԳ. (1691) թուին տանեկաց գրեցեալ: Գի՛տ ցուցական: Ջսոցունց ուրպէսն լիովին տե՛ս ի [ԺԷ.] (17) գլուխն ի ճառս սոյն գեղջ:

## ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ Ի ՅԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔՆ

Ղապալայ մի վասն երկուց այգեաց ի յԵրևան, զոր առնու քանաքեռցի Միքայէլ վարդապետն ի Դօլվաթ Կեալտի տանեկէն ի ՌԿԲ. (1651) թուին տանեկաց: Գոյ և սորա հին ղապալայն ի ՌԽԱ. (1631) թուին տանեկաց գրեցեալ, զորս գտցես ցուցակօքն: Եւ Միքայէլ վարդապետս այս Սրբոյ Աթոռոյս տայ զայս այգիքս:

Ղապալայ մի և վախուպնամայ մի ևս վասն միոյ այգւոյ ի յԵրևան, որ կոչի Ղարաղաշենց այգի, զորս առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի խօճա Սէթի թոռն Սարուխանէն և յԱբրահամէն ի ՌԶԴ. (1675) թուին տանեկաց: Գոյ և սոյն այգւոյս հին ղապալայն ի ՌԿ. (1650) թուին տանեկաց գրեցեալ, զոր Քեալանթար Սահակն առնու ի Ջամանէն: Հունէք մի ևս գոյ ի դաւանանից առեալ վասն սոյն այգւոյս ի ՌՂԳ. (1682) թուին տանեկաց, զորս գտցես ցուցակօքն:

Ղապալայ մի վասն միոյ այգւոյ, որ Ջիմշիտենց կոչի, զոր առնու Աթոռս ձեռամբ Երևանցի Սիմէօն վարդապետին ի ՌՃԼԹ. (1726) թուին տանեկաց: Գի՛տ ցուցական:

Ղապալայն Մարխանենց այգւոյն այն է, որ յիշեցաւ ի [ԺԳ.] (13) գլուխն ի ճառս մլքատու(507ա)թեան Նորագեղու:

Վախուպնամայ մի վասն միոյ այգւոյ, զոր տան խօճա Թորոսն և խօճա Մանուկն Փիլիպպոս կաթուղիկոսին և Փիլիպպոս կաթուղիկոսն շնորհէ Անանիայ առաքելոյ անապատին: Գի՛տ ... ցուցական. ի ՌԾԳ. (1644) թուին տանեկաց:

Ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ, զոր Փիլիպպոս կաթուղիկոսն առնու ի խօճա Մատթէոսէն և ի Թադէոսէն ի ՌԾԳ. (1644) թուին տանեկաց և շնորհէ նոյնոյ անապատին: Գի՛տ ցուցական:

Հունէք մի ևս գոյ վասն սոյն այգւոյ, զոր Յակոբ կաթուղիկոսն առնու ի դաւանանէ տանեկէ ի ՌԺ. (1669) թուին տանեկաց: Գի՛տ ցուցական: Ջվերոյ գրեցելոց այգեացդ ուրպիսութիւնսն տե՛ս լիովին ի [ԺԶ.] (16) գլուխն ի ճառս Երևանու այգեացն:

## (507բ) ՂԱՊԱԼԱՅՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ՋՈՐԱԳԵՂՈՒ

Ղապալայf և վախուպնամայf երկու Թորոսենց այգւոյն և Գառնուկենց ջրաղացին, զորս տայ Սրբոյ Աթոռոյս խօճա Սէթի որդի խօճա Յակոբճանն ի ձեռն Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ընդ մէքին Նորագեղու և ընդ այլոց այնf են, զոր յիշեցաf ի [ԺԳ.] (13) գլուխն ի ճառս Նորագեղու, զորս գի՛տ ցուցակաւն:

Ղապալայն միւս ջրաղացի, որ ի գեօղս յայս յիշեցաւ ի [ԺԳ.] (13) գլուխն ի ճառս եայճի և Ամիրի գեօղօրէիցն և ի [ԺԷ.] (17) գլուխն ջրաղացաց սոյնոյ գեղջս, զոր ծախէ Քեալանթար Սահակն: Գի՛տ ցուցակաւն:

Վախուպնամայf երկուf և Ա. (1) ղապալայ, մի ևս սուրաթ վախուպնամայի վասն երկուց ջրաղացաց ի սոյն գեօղս, զորս տայ յիշատակ Անանիայ առաfելոյն Փիլիպպոս կաթուղիկոսն ի ՌՂԳ. (1644) թուին տաճկաց, զոր գտցես ցուցակօfն: Ջսոցունց որպէսն տե՛ս լիովին ի [ԺԷ.] (17) գլուխն ի ճառս ջրաղացիցն սոյն գեղջս:

### Ղապալայf Ջորագեղու մեր անապատին և տանցն շրջակայից

Ղապալայ մի վասն սոյն անապատի տեղւոյն, զոր մահտեսի Ղևոնդն Կարնեցի առնու ի նոյն ձորագեօղացի Ասլանէն ի ՌՂԼԱ. (1682) թուին տաճկաց: Սաւատ մի ևս գոյ սորա:

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր նոյն Ղէոնդն ծախէ Եղիազար կաթուղիկոսին ի նոյն թուոջն: Սաւատ մի ևս սորա գոյ:

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Ասլանն վերոյ յիշեցեալ առնու ի Փարիէն ի ՌՂ. (1679) թուին տաճկաց:

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Ալիբէկ տաճիկ ոմն առնու ի Շահում և (508ա) Աւաf եղբարցն ի ՌԼԹ. (1629) թուին տաճկաց:

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, նոյն Ալիբէկն տայ Տէրտէրենց խօճա Միfայէլին ի ՌԽԱ. (1631) թուին տաճկաց:

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Եղիազար կաթուղիկոսն առնու ի Ղազարի որդի Խաչատուրէն ի ՌՃԲ. (1690) թուին տաճկաց: Վերոյ գրեցեալ վեց ղապալայfդ են մեր Ջորագեղու անապատի պարսպի միջի եղեալ տեղեաց ղապալայf, զորս գիտ ցուցակօfն: Եւ զորպէսն սոցա լիովին տե՛ս ի [ԺԹ.] (19) գլուխն ի ճառս սոյնոյ գեղջ տանցն:

Դարձեալ ղապալայ մի վասն ի ներfոյ անապատի ձորոջն եղեալ տանցն, զոր առնու Նահապետ կաթուղիկոսն ի յԱղամալէն ի ՌՃԳ. (1691) թուին տաճկաց:

Ղապալայ և վախուպնամայ մի եւս վասն երեք տանց, որք են հանդէպ մեր անապատի մեծ դրանն, զոր Երանոսի որդի Պօղոսն տայ Յօհաննիսի որդի Յօհաննին, և Յօհանն տայ Սրբոյ Աթոռոյս ի ՌճխԱ. (1728) թուին տանկաց: Ջայսոսիկ եւս գտցես ցուցակօքն: Ջվերոյ գրեցեալսդ լիովին պարագայիւքն իւրեանց տեսցես ի [ԺԹ.] (19) գլուխն, ի Ձորագեղու տանցն[I]:

## (509ա) ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ԳՐԵԱՆՔ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ՎԱՍՆ ԴԱՎՐԻԺՈՒ

Ղապալայապէս հունէք մի վասն այգւոյ միոյ ի Դավրէժ, զոր առնու Սիմէօն կաթուղիկոսն Երևանցի ի դավրէժցի Միրզա Շէֆու որդի Միրզայ Ռաֆիէն ի ՌճՁ. (1766) թուին տանկաց: Ընդ այս գոն և այլք գրեանք, զորս գի՛տ ցուցակաւն: Եւ զլիովին որպէսն տե՛ս ի [ԺԶ.] (16) գլուխն ի ճառս Դավրէժու այգեաց:

Ղապալայք վեց հատ վասն ջրոց, զորս առնուն Աղէքսանդր և Աստուածատուր կաթուղիկոսքն ի Դաւրէժ ի Սէյիդ Միրիմ կոչեցեալ ջրոյն, զորս գտցես ցուցակօքն ի ՌճԻԳ. (1712), ի ՌճԻԵ. (1713), ի ՌճԻԵ. (1713) դարձեալ[II], ի ՌճԻԶ (1714), ի ՌճԼԲ. (1719), ի ՌճԼԲ. (1719)[III] թիւսն տանկաց գրեցեալք, զորոց զորպէսն լիովին տե՛ս ի [ԺԸ.] (18) գլուխն ի ճառս ջրոց:

(509բ) Ղապալայք երեք հատ վասն մեծ այգւոյն մերոյ, որ ի Դուխուրղան կոչեցեալ գեօղն, զոր առնու Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն ի ՌԿԵ. (1654) և ի ՌԿէ. (1656) թիւսն տանկաց գրեցեալք, զորս գի՛տ ցուցակօքն: Եւ զլիովին որպէսն տե՛ս ի [ԺԶ.] (16) գլուխն ի ճառս այգեացն:

## (510ա) ՂԱՊԱԼԱՅՔ ԵՒ ԳՐԵԱՆՔ ՎԱՍՆ ՎՐԱՑՏԱՆՈՒ ԵՐԿՐԻՆ

Վախուպնամայ մի վրացերէն վասն միոյ գեղջ Թասմալուր կոչեցելոյ, որ է ի մէջ Կախէթու և Քիսեղու ի յէնիսուլ նահանգն, զոր տան Կախէթու Թէյմուրազ պարոնն և իւրքն Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ... թուոջն մերում: Գի՛տ ցուցակաւն:

Վախուպնամայ մի վրացերէն վասն միոյ մեծ այգւոյ ի Շուլաւէր գեօղն, զոր տան Ջուանշիրի որդիքն Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌճԻէ. (1678) թուոջն մերում: Գի՛տ ցուցակաւն:

Վախուպնամայ մի վրացերէն վասն երից խանութից ի Թիֆլիզ քաղաքն, զոր տայ Բէհբութի որդի պարոն Ասլանն Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌճԺԳ. (1664) թուոջն մերում: Գի՛տ ցուցակաւն:

---

[I] Ձգրված՝ 508բ

[II] Բ. > ի ՌճԻԵ. դարձեալ

[III] Բ. ՌճԼԵ.

Վախուպնամայք երկում վրացերէն վասն միոյ այգետեղւոյ ի քաղաքն Թիֆլիզ, զոր տուեալ է Սիմէօնի կին խանումն Սրբոյ Աթոռոյս ի ՌՄԺԶ. (1767) թուոջն մերում: Գի՛տ ցուցականն:

Ղապալայք երկում վրացերէն վասն խախուտի որդի Յարութիւնին և Յակոբի որդի Պապին ի քաղաքն Թիֆլիզ, զորս առնու Աստուածատուր կաթուղիկոսն բոլոր ընտանեօքն ի նորա Սրբոյ Աթոռոյս ի ՌՃԿԴ. (1715) և ի ՌՃՀ. (1721)[I] թուոջն մերում: Գի՛տ ցուցակօքն:

Ղապալայ մի ևս վրացերէն վասն Թումանենց Յակոբին, Պապին և բոլոր ընտանեացն նոցին նորտութեանն Սրբոյ Աթոռոյս ձեռամբ Աստուածատուր կաթուղիկոսին ի ՌՃՀ. (1721) թուոջն մերում: Գի՛տ ցուցականն[II]:

---

I Բ. ՌՃԸ.

II Զգրված՝ 510բ-531բ

## (532ա) ԳԼՈՒԽ ԻԵ.

## ՅՈՐՈՒՄ ՅՈՒՑԱՆԻՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔ ՎԱՆՕՐԷԻՑՆ, ՈՐՔ ՅԵՐԿՐՈՋՍ ԵՐԵՒԱՆՈՒ ԵՒ ՆՈՅԻՆ ԹԵՄՔ ԵՒ ՎԻՃԱԿՔՆ ԵՒ ՄՈՒԼՔ ԵՒ ԱՅԼ ՈՒՆԵՑԵԱԼ ՍՏԱՑՈՒԱԾՔ ՅԱՏՈՒԿ ՅԱՏՈՒԿ

Ո՛հ, աւա՛ղ գրչիս աստանօր, զի յիրաւի նմանիմ աւարեցեալ և մերկացեալ ընչակորոյս վաճառականի, որ ի յունևորութեանն ոչ ինչ հոգայցէ և ոչ փոյթ ունիցի զունեցելոցն և զորքանութենէ նոցին, իսկ յետ մերկանալոյն յամենայնէ, ապա սկսանիցի մեծաւ հոգունակութեամբ և մանրամասն խուզմամբ թուել, կանօնաւորել և յարձանի նկարագրել զկորուսեալսն: Քանզի, մինչ ունէաք զխղճալի վանօրայսդ առձեռն ի շինութեան և յունևորութեան, լցեալ միաբանիւք և հարուստ ընչիւք, մլքովք և վիճակօք, ոչ ինչ հոգացաք զսոցունց և զունեցելոցն սոցին ի կանօնաւորել և ի յարձանագրել և գոհունակութեամբ պահել, այժմ, մինչ վասն մեղաց մերոց, կան ի յամայութեան և ի յաւերման, եղեալ փարախ անասնոց և գազանաց, որջք գողոց և աւազակաց, լցեալք գարշութեամբ և աղբիւք, վիճակքն աւերք և անյայտք, ունեցեալ մուլքն ոչ ինչ և անհետք: Ապա սկսանիմք գրել և հոգալ և զկորուսեալսն մեծաւ խուզմամբ ի հաշիւ արկանել և յարձանի նկարել:

Այլ, սակայն որովհետև անհուն է ողորմութիւնն Աստուծոյ և գթութեան նորին ոչ գոյ չափ և խրատելով խրատէ և ոչ իսպառ մատնէ ի մահ, յուսամք, զի իցէ թերևս երբեմն հարկեցեալ ի մարդասիրութենէ իւրմէ և խոնարհեալ ի յաղաչանս իւրոց ծառայից և իւրահաճոյ սրբոցն, յորոց անուն կառուցեալք են այնք եկեղեցիք, այց արասցէ և վերանորոգեսցէ զհնութիւն խղճալոյ ազգիս մերոյ և վանօրէիցս և յայնժամ, եթէ զշէնս ոչ, գոնէ զաւեր տեղիսն մլքից և զվիճակս իւրեանց ճանաչեսցեն իւրաքանչիւրքն: Քանզի ի ներկայումս, յորում գրեմ զսոցունց, երեսուն և երկու ամ է աւերութիւն երկրիս և ամայութիւն վանօրէիցս, զորս մեք և շատք վարդապետք և աշխարհականք տեսաք ի շինութեան և ի շքեղութեան, որոց և ոմանց առաջնորդքն ևս գոն կենդանի յԱթոռոջս և յայլ ուրեք, սակայն ի գրելն մեր զսոցունց և ի տարակուսիլն վասն վիճակի և կամ մլքի և կամ զայլոց պարագայիցն վանից ուրումն զմեծ տարապանս կրէաք, զի հասարակ մարդիկք հնագոյնք, եթէ ոչ կարօղանային լուծանել զտարակուսանս մեր, ոչ լինէր այնքան ցաւ, որքան այնք սևագլուխք, որք միաբան և մանաւանդ առաջնորդք էին

լեալք վանօրէից ոմանց, որոց ի հարցանելն մեր զորպիսութիւն ինչ զվանից յայնցանեաց, մնային պապանձեալք, զի զճանապարհս զինետանցն միայն էին սերտեալք և ոչ զայլ ինչ: Արդ, եթէ այժմ այսպէս, ապա յետ ժանեաց ամաց, որպէս խոհեմութեամբ իմանալ կարէք:

Եւ դարձեալ ի վանօրէիցդ ոմանք ասպատակչաց և գերողաց պատահեցեալք մերկացան յամենայնէ և ամայացան, չէ զարմանք, եթէ այնպիսեաց վանօրէից հին կոնդակք, թուղթք, դապալայք, վախուպնամայք, թէմէսուկք և այլք այսպիսիք գրեանք ընդ այլոց աւերեցեալ իրաց իցեն վատնեցեալք և կորուսեալք, որ հաւաստի իսկ է: Իսկ մեծ զարմանք այն է, զի այնք վանօրայք, որք ոչ աւարեցան և ոչ գերեցան, այլ առաջնորդքն և միաբանքն նոցին չկարելով տանիլ ժամանակի վշտաց և նեղութեանցն ինքնին դատարկեալ զվանսն եկեալ են ի յԱթոռս և կամ յայլս շէնս, յորոց շատքն և կենդանի ևս են, որպէս ասացաք: Այսպիսեաց վանօրէից հարկաւոր գրեանքն և դապալայքն ևս իցեն անհետացեալք ի վատութենէ առաջնորդացն, յորոց ի հարցանելն մեր և ի խնդրելն, յերկիր հայէին և գլխակոր լինէին: Եւ, թէ զոմանս թուղթս ևս ունէին և պահեալ էին, այնք ևս հնացեալք, աղճատեալք և պատառոտեալք և ի ջուր անկեալք, որպէս թէ ընդ կորուսելոյն համարեցեալք: Ո՜հ արգելաւ գրիչս և շարժեցան ցաւքս, վասն որոյ (532բ) կարճառօտել հարկաւորեցայ:

Արդ ուրեմն, զորն մեր գիտելով և զորն աստի և անտի հարցմամբ[I] առձեռն բերելով, զորս գիտացաք հաւաստեաւ և ունեցաք գրեցաք, իսկ զորս ոչ կարացաք առձեռն բերել, բաց թողաք զտեղիսն: Տե՛ս ուրեմն զտորևդ, իսկ զթուղթսն, զորս ձեռն բերաք վասն վանօրէիցդ, էին ամենևին աղճատեալք և պատռոտեալք, որպէս ասացաք, զայնս մեք կարկատելով, որպէս թէ որքան էր հնար վերանորոգեցաք և զերեսսն գրեցաք զպատճէնն իւրեանց, որպէս տեսանես:

## ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ այլ անուամբ կոչի Այրեվանք, որ է ի Գառնու նահիէն մերձ գեօղաքաղաքին Գառնւոյ, նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ ...:

(533ա) Ունի վիճակք յերկրոջս Երևանու զՆորագաւիթ, զՆորք, զենկիճէ, զՏաճարափակ, զՊորտիկ և զԲարձաքի:

Ունի և զմլքատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն մէկ, որք են Պորտիկ, Վերի Աւդալներ և Ազարակ կոչեցեալ գեօղօրայքն, այլև Կոխդ[II] գեղջ երեք դանկ մուլքն, որք ի բնէ անտի վախմ են տրեցեալք: Պորտիկ գեղջ մլքին յաղագս ի Մէլիքբէկ տանէկէ դաւաճանէ միոջէ հունէթ մի ևս գոյ, զոր գի՛տ ցուցական:

---

[I] Բ. հայցմամբ
[II] Բ. Գողթ

**Վարելահողքն, այգիք, ջրաղացք, դինկք և այլք յասպիսիք են այսոքիկ**

Քանաքեռու բոլոր գեօղականքն ի Նորագաւթայ հանդումն երկու հարիւր սօմար սերմի տեղ հող ծախեն սոյնոյ վանքիս ձեռամբ սորին առաջնորդ Պետրոս վարդապետին Ճահկեցւոյ տասն թումանի ի ՌՃԾԳ. (1740) թուին տանեկաց, որոյ սահմանքն են՝ սոյն վանից վախմ տեղին, ճանապարհն և առուն: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն:

Դարձեալ նորագաւթցի Մօսիսի որդի Բարդուղիմէոսն հինգ սօմար սերմի տեղ հող ծախէ ի նոյն գեօղն սոյնոյ վանքիս՝ ձեռամբ սորին առաջնորդ Պետրոս վարդապետին Ճահկեցւոյ տասն և հինգ հազար դիանի ի ՌՃԾ. (1737) թուին տանեկաց, որոյ սահմանքն են՝ Մանուկի հողն, քուչէն, Համազաքի այգին և ճանապարհն: Գի՛տ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն ( ): Զհող մի ևս ունի ի սոյն գեօղս երեսուն սօմարէն տեղ, որ Հարամի գաւար կոչի: Զհող մի ևս ունի Գ. (3) սօմարէն տեղ, որ Զօպանի տեղ կոչի: Զհող մի ևս ի Քանաքեռու հանդի տակն քառասուն սօմարէն տեղ, որ Տեակ կոչի: Զհող մի ևս ի Սևահողումն տասն և երկու սօմարէն տեղ, յիսուն սօմարէն տեղ ևս Մեծ ճլուտն է, որոյ մէկ կողմն Եղկիճու ճանապարհն է, յիսուն սօմարէն տեղ ևս Ներքի ճլուտն է, որոյ մէկ կողմն ճանապարհն է և մէկ կողմն Ոլուխանլուն, զվաթսուն սօմարէն տեղ ևս ի Հրեշտակափոսն ունի, զվաթսուն սօմարէն տեղ ևս ունի ի սոյն գեօղս, որոյ մէկ կողմն վանից ճանապարհն է և վերի կողմն Նորքայ և Երևանու կոպարն: Ի յԵնկիճէ գեօղի հողումն ունի զմեծ հող մի վարելի երեսուն (533ք) սօմարի տեղ, որ մինչև ի խանդակն մէջ Նորագաւթայ և Եղկիճէի, քսան սօմարէն տեղ ևս ունի ի սոյն գեօղս ի Թուլֆիթափայի տակն, որոյ վերջն Ոլուխանլուի ճանապարհն է, ունի ևս ի Բարձաբի գեօղն զերկուս մեծ վարելահողս, մերձ սրբոյն Սարգսի:

Դարձեալ ի Կոխդ գեղջ հանդումն ունի զհող մի վացսուն սօմարէն տեղ, զոր հայոցթաղցիք են տուեալ յիշատակ սոյն վանքիս:

Այլև ունի ի գեօղն Նորագաւիթ զմեծ այգի մի ի վաղուց հետէ վախմ և յիշատակ: Սոյն այգւոյս յառաջն զհող մի ևս ունի Զ. (6) սօմարէն տեղ, որ Թագաւորենց տեղի կոչի: Այլև ունի սոյն վանքս զայգի մի ի սոյն գեօղս, զոր Քեալաշ Ազարիայն տայ վախմ սոյն վանքիս ի ձեռն սորին առաջնորդ Պետրոս վարդապետին Ճահկեցւոյ ի ՌՃԶԸ. (1739) թուոջն մեռում: Գի՛տ զվախուպնամայն հայերէն:

Այլև ունի ի սոյն գեօղս զդինկ մի ի վաղուց հետէ և զջրաղաց մի ևս ընդ նմա ի միում տան ի վերայ Ոլուխանլուի ճանապարհին: Սորա յառաջն մէկ հող տասն սօմարէն տեղ, մէկ կողմն նոյն ճանապարհն է և մէկ կողմն գեօղի այգիքն:

Այլև ունի ի սոյն գեօղս զերկուս ջրաղացս, զորս սոյն գեօղացի Բարդուղիմէոսն է տուեալ վախմ ի յառաջնորդութեանն Ղունկիանոս վարդապետին: Ի ներքոյ բանտի սոյնոյ ջրաղացիս ունի զհող մի ևս վեց սօմարէն տեղ, որոյ վերջն է նոյն վանից կալն:

Նորագաւթցի Տիլանի որդի Համազազն ունիլով ի նոյն գեօղն զմի դինկ և զմի ֆրֆրայ և զերկուս ջրաղացս, զոսցա կէսն ծախէ երևանցի Մարգարի Ղազարին վեց թումանի ի ՌՃԽԹ. (1736) թուին տաճկաց: Եւ կէսն ծախէ սոյնոյ վանքիս ի ձեռն սորին առաջնորդ Պետրոս վարդապետին ճանիկեցւոյ չորս թումանի ի ՌՃԾ. (1737) թուին տաճկաց: Գի՛տ զայս երկուս ղապալայքս յերեսսն գրեցեալ ցուցակօքն: Եւ յետ վեց տարւոյ վերոյ յիշեալ Մարգարի որդի Ղազարն և իւր երկու եղբարք Յովակիմն և Զաքարիայն զհուրեանց առած դնկի, ֆրֆրայի և երկուց ջրաղացաց բաժինն ևս տան վախմ սոյնոյ վանքիս ի ձեռն նոյն առաջնորդ Պետրոս վարդապետին ի ՌՃԾԲ. (1743) թուոջն մեռում[359]: Գի՛տ վախուպնամայն հայերէն գրեցեալ, որ լինին կատարեալ սրբոյն Գեղարդայ, վերոյ յիշեալ դինկն, ֆրֆրայն և երկու ջրաղացքն, որոյ սահմանքն են՝ նոյն Համազազի վարելահողն և մեյիք Յակոբճանի դինկն: Դարձեալ սոյն գեօղացի Աւագի որդի Վարդանն ի սոյն գեօղս զթավիլայ մի ծախէ սոյն վանքիս ձեռամբ նոյնոյ Պետրոս վարդապետին հինգ հազար դիանի ի ՌՃԽԹ. (1736) թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ Միրու և Ստեփանի տունքն: Գի՛տ ղապալայն ցուցակաւն ( ):

Այլև ունի ի սոյն գեօղս զմէկ ձեռք չէն տունս ամենիւք հարկաւոր շինուածովք: Մէկ ձեռք տուն ևս յառաջն (534ա) սորին, որ Ազատ Տէրտէրենց կոչի: Այլև ունի սոյն վանքս զայգի մի ի յԵրևան քաղաքն ի Վերի մահլէն՝ ի վերայ սրբոյն Սարգսի առուին, յորոյ մէջն անցանէ Ղոխբուլաղ կոչեցեալ ջուրն, որոյ կողմունքն են՝ չէն այգաւոր և բաղչայաւոր տունք: Զայգի մի ևս ի Նորք ունի, որ կոչի Բուղաղբէկենց այգի, զոր Աթոռս ծախէ (մահտեսի Զաքարիայինն էր): Այլև ունի ի սոյն գեօղս զկիսաձիթահանք մի, զոր սոյն գեօղացի Վարաքի որդի Սիմօնն ծախէ երկու թումանի ձեռամբ սոյնոյ վանից առաջնորդ Պետրոս վարդապետին ի ՌՃՁԵ. (1736) թուոջ մեռում և տաճկաց ՌՃԾ. (1150): Գի՛տ զերկուս ղապալայսն հայերէն և տաճկերէն ( ) ( ):

Դարձեալ սոյն գեօղացի Համազազի որդի Սէթն ի սոյն գեօղս զմէկ անշէն տնատեղ ծախէ ութն հազար դիանի սոյնոյ վանքիս ձեռամբ սորին առաջնորդ Պետրոս վարդապետին ի ՌՃԾԳ. (1740) թուին տաճկաց: Կողմունքն են՝ Ահարօնի քեալավայքն և ճանապարհն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

Դարձեալ զձեռք մի տուն ծախէ Սրբոյ Աթոռոյս տեղապահ Միքայէլ վարդապետն ի Նորք գեօղն սրբոյն Գեղարդայ վանիցն ձեռամբ նոյնոյ Պետրոս վարդապետին չորս թումանի ի ՌՃԾԳ. (1741)[I] թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ տէր Յովակիմի տունն և բաղչայն, քուչայն և ճանապարհն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Այս է մահտեսի Զաքարիայի տունն, զոր ծախէ Սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի [ԻԴ.] գլուխն[360]:

---

[I] Բ. ՌՃԿԴ.

Դարձեալ աղցուանցի Առաքելի որդի Բէկինն ի նոյն գեօղն զբաղշայ մի տայ վախմ սոյն վանքիս ի ՌՃՂԱ. (1742) թուին մերոյ, զորոյ վախուպնամայն հայէրէն զի՛տ ցուցակաւն ( ):

Այլև ի Բարձաքի, ի Շահապ և ի Ծար գեօղօրայսն ունի այս վանք զմէկ-մէկ ձիթահանք ի վաղուց հետէ: Ի յիւր մօտն ևս ունի զջրաղաց մի յինքենէ ստացեալ: Այս ջրաղացս, Շահապայ և Ծարայ ձիթահանքքն, Նորագաւթայ, Նորքայ և Երևանու այգիքն յիշին ի գրեանս դիւանագրացն ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն: Անդանօր ևս տեսցես[I]:

## (536ա) ՍՐԲՈՅՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ է ի Գառնւոյ նահիէն ի դաւռն մեծ Հայոց թառ[361] կոչեցելոյ գեղջն, կոչի և տանկէրէն Ղզլվանք և Կարմիր վանք, նախապէս է հիմնաւորեցեալ ի թուոջ մերում ի ՃԼԳ. (684) ի յառաջնոյ Աշոտ իշխանին յորդւոյ մեծի քաջին Սմբատայ Բագրատունւոյ, ի հայրապետութեանն Սահակայ Ձորափորեցւոյ, որ գնաց ի Խառան ընդ յառաջ Մահմետի և անդ մեռաւ: Քանզի այս Աշոտս առաքեաց զորդին իւր ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն Կոստանդ թոռն Հերակլայ և եբեր զանձեռագործ պատկերն Փրկչական, որ ասի Ամենափրկիչ, զոր շնորհեաց Քրիստոս ծնողին իւրոյ սրբուհւոյ Աստուածածնին նկարեալ ի փայտի, որ այժմ է ի Սուրբ Աթոռս Էջմիածին, վասն որոյ և շինեաց զվանքս զայս հռաշալի յանուն նոյնոյ անձեռագործի պատկերին և կոչեաց Ամենափրկիչ: Եւ ինքն ննջեալ ի Մամիկոնեան Գրիգորէ, թաղի ի սոյն վանքս: Ապա յետ ժամանակաց վերստին նորոգեաց զսուրբ վանքս զայս Գրիգոր Մագիստրոսն Պալհաւունի, որդին Վասակայ Բջնեցւոյ քաջին, որ ի Սէրկէվիլ գեղջն քարընկէց եղև և զշրջակայ վայրսն ամենայն գնեալ արծաթով՝ շնորհեաց սոյնոյ վանիցս ի յիշատակ ինքեան և զորդին իւր զՎահրամ, որ նոյն ինքն է Գրիգոր Վկայասէրն, որ յետոյ եղև կաթուղիկոս Սրբոյ Էջմիածնի, նստուցանել ետ ի սմա առաջնորդ ի ՆՀԲ. (1023) թուոջն մերում և ի հայրապետութեան տեառն Սարգսի և ի թագաւորութեանն Բագրատունեաց Գագկայ Շահնշահի: Ապա վերոյ յիշեալ Գրիգոր Մագիստրոսն, մինչ վերանորոգեաց զվանքս զայս և հաստացոյց զսա հողովք և ջրովք, և զորդին իւր ետ կացուցանել ի սմա առաջնորդ, ուպէս ասացաք վասն որոյ և յայնմ հետէ, ուպէս թէ զհայրենի մուլք արարեալ զսա որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զառաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութեանն հայոց, այլև ի ժամանակս թագաւորացն Պարսից, մինչև գրէթէ ի ժամանակս մեր, որքան շէն էր վանքս այս, ուպէս տեսանելոց ես ի յառաջակայսդ:

---

[I] Ջնջված՝ 534բ-535բ

Այլև զկնի ժամանակաց անցելոց փլեալ էր եկեղեցին շինեալն ի Գրիգորէ Մագիստրոսէ, Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի կամեցաւ վերստին շինել, զոր և շինեաց, իսկ զորմունսն Fարակոփ, մինչև ի տանեաց կամարն ի ՌՃՀ. (1721) թուոջն մերում, սակայն ի ձախորդութենէ ժամանակին մնաց գործն անկատար և կայ այնպէս կիսատ մինչև ցայսօր: Եւ ի վերստին շինելն Աստուածատուր կաթուղիկոսին ի Fակելն[I] զփլեալ որմունսն, գտեալ եղև արձանաFար մի, յորում գրեալ էր վերոյ գրեցեալ Գրիգոր Մագիստրոսն զյիշատակարանս իւր, զորոյ երեսն առեալ գրեցաF աստ ի գիտութիւն ապագայիցդ, որ է այս. «Թուին ՆԿԲ. (1013) ի թագաւորութեանն Գագկայ և ի Fայրապետութեանն տեառն Սարգսի, ես՝ Գրիգոր Մագիստրոս, վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողացն իմոց: Նաև ի տերանց աշխարFիս գանձագին արարի զվայրս սորա լերամբքն և դաշ(536բ)տամբքն և ամենայն կազմութեամբքն ու ի սմա Fառաղէմք չորս անկեամբ յաջամբ և աFեկամբ՝ ի դիմաց և ի թիկանց: Եւ տուաF յիշատակ անջնջելի արձանագրով և աշխարFակալ թագաւորի թղտովն և կայսերական կնFովն, Fաստատեցաf ձեռագրով և Fայրապետական նամակովն: Եւ ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաւ, ընծայեցաF զFայրենիս մեր Սուրբ եկեղեցւոյս, որ է Հայոց թառ, Fանգստարան և օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին խնդրելին Յօհաննու Աւետարանչին, Fրամանաւ Մօր տեառն մերոյ Սուրբ Աստուածածնին և նորոգեալ Fաստատեցաf վերստին զսուրբ ուխտս վերջինքս, Fան զառաջինն: Աստ եղաF զվէմն Fաւատոյ Fիման Սուրբ եկեղեցւոյ: Գրիգոր Վաչրամ պիտանին: Մինչև ցաստ էր արձանագիրն»:

Արդ վանFս այս ի յերկրոջս ունի զթէմ և զվիճակ յատուկ՝ զերկան Fաղաfն, զԿօնդ, զՆորագեօղ, զՇէնգաւիթ, զՋրվէզ, զգեօղաFաղաfն Գառնի, զԿոխդ և զՀայոց թառ: Ունի և զմլFատու գեօղօրայս, յորոց առնու զմուլFս ի տասնէն զմէկ, որf են այսոնFիկ՝ Հայոց թառ[362], Կուտուց վանf, որ Թարաfեամի գեօղ ևս կոչի, Թառնիս և Ագարակ[363], յորոց առնու զվեց դանկ մուլFս: Այլև Կոխդ, Մանկուս, Աւանիկ, Քաղբերթ[II] և Սուրբ Սարգիս գեօղօրէից զերեf դանկ մուլFն, որոց զորպէսն այսպէս գիտեա՛:

Ի յազգէ վերոյ գրեալ Գրիգոր Մագիստրոսին մի զկնի միոյ յաջորդելով նստի առաջնորդ ի վանFս յայս ի նոյն գեղջէն Հայոց թառու Զաքարիայ վարդապետն, թուի թէ այս Զաքարիայ վարդապետս է մի ի յայնց վարդապետաց, որf զԿիրակոսն Fանեն և զԳրիգոր Մակուեցին դնեն կաթուղիկոս էջմիածնի ի ՊՂԲ. (1443) թուոջն մերում, զոր յիշէ Թօմա պատմագիրն: Արդ այս Զաքարիա վարդապետս զվեց դանկ մուլFս այսոցիկ, այսինքն՝ Մանկուս, Աւանիկ, Կուտիս, Հայոց թառ, Կուտուց վանf, Աւանասար, Թառնիս և Սուրբ Սարգիս կոչեցելոց գեօղօրէիցս և Կոխթայ երեf դանf մուլFն,

[I] Բ. > ի քակելն

[II] Բ. Դաղվերթ

որք են ինն գեօղք ի տանկէ միոջէ, որ կոչի Ամիրհեամալ Աբդին բէկ, որդի Նավրուզի որդւոյ Հէյդարի՝ հինգ հազար դինարի ի ՊԴԴ. (894) թուին տանկաց և ի ՋԼՋ. (1487) թուոջն մեռում, զորոյ զդապալայն գոցես ցուցակաւն ( ): Յորում գրին իւրաքանչիւրն յատուկ յատուկ սահմանօքն իւրեանց, որք են ի Գառնւոյ նահանգոջն: (Մեր յՕշականու վեց դանկ մուլքն ևս սոյն Ամիրհեամալ Աբդին բէկս ծախէ տանկի ումեմն Սատիվախ-կազ կոչեցելոյ ի սոյն թուոջս, որպէս տեսանես ի ճառս յՕշականու): Արդ Զաքարիա վարդապետս զայսոսիկ ի յանունս յիւր անունն առնու և զանուն Ամենափրկչին ոչ ինչ յիշէ ի դապալայոջն և զվախմ անուն ինչ ոչ գրեցուցանէ, որոյ պատճառն է, զի սոքա ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատ ազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք և իւրեանց էր համարեցեալ գեօղն և վանքն առանց խտրութեան: Վասն որոյ և ինքն, մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուլքս, թէպէտ յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութենէն: Եւ յետ գնելոյն (537ա) զայսքան մուլքս յետ քանեաց ամաց, մինչ հաստատի պարսից շխօճաղի թագաւորու-թիւնն և նստի շահ Իսմայէլն առաջին, սոյն Զաքարիա վարդապետս զռաղամ մի առնու ի շահ Իսմայէլէն ի թուոջն տանկաց ..., թէ Ամենափրկչի վանքն ամենևին մաղաֆ է, ոչ խարճ դիւանի, ոչ մուլք և ոչ այլ ինչ հարկ տայցէ ումէք, զոր գոցես ցուցակաւն ( ):

Ապա յետ սոյնոյ Զաքարեայ վարդապետիս ի փոփոխիլ ժամանակին, ի նուազիլ կարօղութեանց և իշխանութեանց սոցա և ի բաժանիլ ազգականացն յիրերաց, սկսաւ խտրութիւն անկանիլ ի մէջ վանականացն և աշխարհականացն վասն միքից և այլոց ընչից, և այլք ևս աստի և անտի դաւ յարուցանէին վասն յիշեցելոց միքիցդ և յափշտա-կել կամէին և կամ գեօղականքն զմուլք տալ ոչ կամէին, վասն որոյ յազգականաց սոցա Զաքարիա և Համազասպ վարդապետքն յայնմ ժամանակին Հայոց թառ, Ման-կուս, Աւանիկ, Քաղբերթ և Սուրբ Սարգիս կոչեցելոց գեօղօրէից զկէս մուլքն, որ է երեք դանկն բաժանեալ յատուկ վախմ գրեն յանուն Ամենափրկչի վանիցն տանկերէն գրով ի ՋԼԳ. (1526) թուին տանկաց, զոր գոցես ցուցակաւն ( ): Եւ սոյն Զաքարիա վարդա-պետս յետ այսպէս առնելոյն զերկուս ռաղամս ևս ի յառաջնոյ շահ Թահմազէն առնու վասն յիշեցելոց գեօղօրէիցդ, թէ պարտիք զմուլս ձեր տալ Զաքարիա վարդապետին, զոր գոցես ցուցակօքն ի ՋՁ. (1572) և ի ՋՁԴ. (1576) թուոջն տանկաց գրեցեալք:

Ապա և յետ միջոց անցանելոյ, թէ յաղքատութենէ աշխարհական ազգականացն դրամով ծախեն, թէ կամաւ տան և թէ այլ որպիսեաւ կերպիւ իցէ, ոչ կարացաք գիտել զՀայոց թառու մնացեալ երեք դանկն, զԿուտռոց վանք կոչեցելոյ վեց դանկն, զԹառ-նիս կոչեցելոյ վեց դանկն, այլև Կոխդ գեօղի երեք դանկն տան սոյնոյ վանքիս, որոց ի հարկէ գիր լեալ է, սակայն թէ ո՞ւր է, ոչ գիտացաք, զպատճառն ի յառաջաբանութեան սոյն գլխոյս ասացաք:

Արդ ի մերս ժամանակի, մինչ չէն էր վանքս այս, զՀայոց թառու, զԹառնիսու և զԿուտուց վանքի վեց դանկ մուլքն առնոյր, մինչ սոքա ևս էին չէն և տանկաքնակ, նոյնպէս և Կոխդ գեօղն, որ չէն էր, տայր զերեք դանկ մուլքն սոյն վանքիս: Իսկ Մանկուս, Աւանիկ, Քաղքերթ և Սուրբ Սարգիս, զորս ամայի տեսաք մէք, որոց զհողն վարէր վանքս այս, իսկ այժմ, մինչ գրէաք, ամենևին ամայի են վանքն և գեօղօրայքն խպառ: Ո՜հ, ո՜հ: Բաւ է:

**Վարելահողքն են այսոքիկ**

Որ է Յղի տակն, Խորագէտիկ կոչեցեալ տեղիքն ի ծագէ ի ծագ, որոյ սահմանքն են՝ արևելեան կողմն Դատենց հողն, հիւսիսային կողմն Մեծ Սէլաֆատեղն, որ Արթուլու Սէլաֆ կոչի, արևմտեան կողմն Կոնտն և հարաւային կողմն Յղի գլուխն: Դարձեալ Ռեզանտափ կոչեցեալ հողն և երկու Ծվարներն, մինչև ի Կատեպանի Կոնտն, զորս Հայոց թառ գեօղականքն տան վախմ սոյնոյ վանքիս: Գի՛տ զվախուպնամէն հայերէն ( ): Դարձեալ Աւազներ կոչեցեալ տեղեն, մինչև ի Սաքաթ աղբիւրն և նոյն Սաքաթ աղբեր ջուրն, Ջրպայ ձորու ջուրն և Իշխանախոռ կոչեցեալ տեղւոյ մերձ աղբիւրն, սոքա ամենեքեան սոյնոյ վանիցս են ի Գրիգոր Մագիստրոսէ (537ք) անտի նուիրեալ:

Դարձեալ ի սոյն գեօղս սոյն գեօղացի տէր Անդրէասն ծախէ սոյն վանից առաջնորդ Մաղաքիա վարդապետին Լ. (30) սօմարէն տեղ հող մի մէկ թումանի ի ՌՃԾԷ. (1744) թուին տանկաց, զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն ( ): Դարձեալ հինգ սօմարէն տեղ հող ևս ի Կոխդ գեօղն ունի սոյն վանք, զոր նոյն գեօղացի Փիլումի որդի Մանուկն է ծախեալ հինգ հազար դիանի ի ՌՃՁԵ. (1736) թուին մերոյ: Գի՛տ զղապալայն հայերէն: Այլև ի սոյն գեօղս ունի զերկուս ջրաղացս: Այլև ունի ևս ի գեօղս յայս մէկ բաղչայով տուն, զոր Արզուլեցի Աղասու որդի Խալաֆն ծախէ սոյնոյ վանքիս սորին առաջնորդ Յովանէս վարդապետի ձեռամբն վեց հազար դիանի ի ՌՃԴԴ. (1745) թուոջն մերում: Գի՛տ զղապալայն հայերէն ( ):

Ունի և զայգիս յերևան քաղաքն, որոց զորպէսն տես. նախապէս սորին առաջնորդ Մատթէոս վարդապետն առնու զայգի մի ի տէրունի որդի Աստուածատրէն իւր հնձանովն քսան և վեց թումանի ի ՌԿԹ. (1658) թուին տանկաց, որոյ կողմունքն գրին՝ մահտեսի Յովանիսի այգին, որ յետոյ և սոյն Յովանէսս զայս այգիս տայ վախմ սոյն վանքիս, Մրխանին այգին, որ վախմ է Սրբոյ Աթոռոյս, Լօֆ Մահմատի և Քիւթուրի այգիքն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

Վասն սոյնոյ այգւոյս սոյն Աստուածատուրս յետոյ զհայերէն վախուպնամայ մի ևս տայ ի ՌՃԺԱ. (1662) թուին մերոյ: Դարձեալ կից սոյն այգւոյս խօճա Գրիգորի որդի քեալանթար Սահակն ունիլով զայգի մի, որոյ զկէսն վախմ տայ սոյն վանքիս, որոյ կողմունքն գրին՝ սոյն այգւոյ կէսն, մահտեսի Յովանիսի այգին, քուչէն և վերոյ

յիշեալ Աստուածատրի այգին, և զկէսն սորին միաբան Յովանէս վարդապետն առնու ի սոյն Սահակէս երեք թումանի և վախմ տայ ևս սոյն վանքիս, որոյ կողմունքն գրին՝ նոյն վերոյ յիշեալ կէսն, Սրբոյ Աթոռոյս վախմ Մարխանենց այգին և վերոյ յիշեալ Աստուածատրի այգին, զի՛ տ զդապալայն և զվախուպնամայն ցուցակօքն, որք գրին ի ՌՃԳ. (1663) թուին տանկաց: Դարձեալ վերոյ յիշեալ մահտեսի Յովանէս, որ է Ոլուբէկի որդի, զիւր այգին, որ սահման գրեցաւ ի վերդ, տայ վախմ սոյնոյ վանքիս՝ ձեռամբ սորին առաջնորդ Մատթէոս վարդապետին ի ՌՁ. (1669) թուին տանկաց, որոյ կողմունքն գրին՝ Ամիրբէկի այգին, նոյն վերոյ յիշեալ այգիքդ, զի՛ տ զվախուպնամայն ցուցակաւն ( ): Յետոյ զայսոսիկ միացուցեալ շինեն մի մեծ այգի: Յիշեցաւ այս ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս մաղափութեանն ի գրեանս դիւանագրաց: Դարձեալ ունի սոյն վանքս ի յԵրևան քաղաքն զձեռք մի տուն իւր բաղչայովն, զոր սորին առաջնորդ Մաղաքիա վարդապետն առնու ի Գասպարի որդի Բաքիշանէն յիսուն դուռուշի ի ՌՃԼԹ. (1726) թուին տանկաց, որոյ կողմունքն են՝ Պետրոսի, Կարապետի, Բարխուտարի և Խուպոնց Սափռազի[I] տունքն և քուչէն: Գի՛ տ զդապալայն ցուցակաւն ( ), որ է Վանանց տունն: Ունի ևս ի յԵրևան քաղաքն զձեռք մի տուն ևս, զոր սորին առաջնորդ Ազարիա վարդապետն առնու ի Պօղոսէն ութն հազար դիանի ի թուին տանկաց ՌՃԾԴ. (1745), որոյ կողմունքն են՝ Պօղոսի և Ազարիա վարդապետի տունքն և երկու կողմն քուչայ: Գի՛ տ զդապալայն ցուցակաւն ( ):

Դարձեալ ունի ի Նորագեօղ զայգի մի վեց տախտակ, որ չորս տախտակն ի վաղուց հետէ վախմ են տուեալ և զերկուս տախտակն նորին առաջնորդ Մաղաքիա վարդապետն առնու ի Սուլէյմանբէկ տանէ (538ա) քսան դուռուշի ի ՌՃԼԹ. (1726) թուին տանկաց: Գի՛ տ զդապալայն ցուցակաւն ( ): Վասն սորա փաշայի միոյ գիր մի ևս գոյ ի սոյն թուղթս գրեցեալ: Գի՛ տ ցուցակաւն ( ):

Դարձեալ սորին առաջնորդ Ազարիա վարդապետն կից սոյն այգւոյս զտախտակ և կէս այգի մի ևս առնու ի յերևանցի տէր Յովանիսէն երկու թուման և երկու հազար դիանի ի ՌՃԿԲ. (1749) թուին տանկաց, որոյ կողմունքն գրին Դանիէլի փայն, քուչէն, Մօլլաքեալբալու այգին և սառաճ Սալմանի այգին, զի՛ տ զդապալայն ցուցակաւն ( ): Եւ կից սմին զկէս տախտակ այգի մի ևս ունի, զոր տէր Մօսէսի որդի Յօսէփն առնու ի սոյն գեօղացւոցս երկու թումանի և տայ յիշատակ սոյնոյ վանքիս ի ՌՃԾ. (1737) թուին տանկաց, որոյ կողմունքն գրին վերոյ այգիքդ, Աբիսօղօմի այգին և Ջանկիբախարն: Գի՛ տ և զայս դապալայս ցուցակաւն ( ): Զայգի մի ևս ունի կից սոյն այգեացս, որ է Եռամի չրաղ անյիշատակ Մատթէոսինն, զոր երևանցիք տան վախմ սոյն վանքիս ի ՌՃՂԶ. (1747) թուին մերոյ: Գի՛ տ զհայերէն վախպնամայն, որոյ կողմունքն գրին

---

I Բ. Սաւրազի

Աւետի և Սալմանի այգիքն և քուչէն: Ջայգի մի ևս ունի կից սոյն այգեացս մէկ մեծ տախտակ, զոր կոնտեցի Կօնկոռենց Յակոբն տայ սոյն վանքիս: Այժմ Անանիայ առաքեալն ուտէ:

Այլև ունի ի Գառնի զբաղչայ մի մեռձ Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն: Այլև յետ կոյս լանջին զհող մի, զոր Գրիգորենց հող կոչեն: Այլև զհող մի ևս, զոր Դաստագիւլենց Կիրակոսի քարուտ ասեն: Այլև ունի յիւր մօտն սոյն վանքս զբաղչայ մի ի վաղուց հետէ ի ներքոյ ի սուրբ Յարութեան, զոր Հախնազարի որդի Խաչատուրն է տուեալ: Այլև, մինչ Գրիգոր Մագիստրոսն վերահաստատէ զսուրբ վանքս այս, զշրջակայ վայրս սորին բոլորն դրամով գնեալ յիշատակ տայ սոյնոյ վանքիս, որպէս գրեցեալ արձանն յայտ առնէ, որ է վերդ գրեցաւ:

Երևանու և Նորագեղու այգիքն և Գառնւոյ ջրաղացն և այլք ոմանք յիշին ի ԺԴ. (14) գլուխն ի ճառս միրվէիզի գրեանցն[I]:

## (539ա) ՍՐԲՈՅՆ ԽՈՐՎԻՐԱՊԱՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ է ի Գառնւոյ գաւառին և է տեղի չարչարանաց և բանդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, յորում եկաց յամս երեքտասան, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու զՎէթի, զԱրկուռի, զԱրտաշար, զՄուշաղբիւր, զՋղուն, զՎանստան, զՄանկուս, զԱւանիկ, զՎանիկ[II], զԴեղձնավանք և զՈտձաձորն բոլոր[364]:

(539բ) Վանքս այս ի բառնիլ թագաւորութեան Պարսից յամս բազմաց աւերեալ ամայացաւ, որպէս և այլք բազումք, զորոյ եկեղեցիսն և զպարիսպն, զոմ խաչանց և համբարք գարշութեանց էին արարեալ տաճիկք և մեք յաջողմամբն Աստուծոյ ի բաց վանեալ զտաճիկսն մաքրեալ զվանքն, բերաք ի շինութիւն և կարգեցաք զառաջնորդ և արարաք վանք միաբանակեցաց, որպէս յառաջն, ի փառս Աստուծոյ և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի ՌՄԺԴ. (1765) թուոջն մերում, որ և է շէն և հաստատ ի մերումս ժամանակի[III][365]:

## (541ա) ԱՂՋՈՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս[366] այս, որ է ի Գառնի գաւառին և յանուն սրբոյն Ստեփաննոսի քահանայի, որ ընդ սրբոց Հռիփսիմեանցն էր, նախապէս հիմնարկեցաւ ի թուոջն ...:

Ունի զվիճակս յերկրոջս յԵրևանու՝ զճաթղռան, զՄեծ Գյան և զՓոքր Գյան[IV]:

---

[I] Ջգրված՝ 538բ

[II] Բ. զԼանիկ

[III] Ջգրված՝ 540աբ

[IV] Ջգրված՝ 541բ

## (542ա) ՍՐԲՈՅՆ ԳԵՏԱՐԳԵԼԱՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ և Ջագավանք և Ջայղայթարան ևս կոչի, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջն …:

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու՝ զՋագավանք, զՋագ, զԱւան, զՇհապն, զԱրամուս, զԱղասւոր, զԱրախուս: Ունի ևս զմլքատու գեօղ զիւր մեծ գեօղն Ջագ կոչեցեալ, յորմէ առնու զտասանորդս, զոր երևանցի Մոծակենց Մկրտիչն գնեալ տայ վախմ սոյնոյ վանքիս ի Ռէ. (1558) թուոջն մերում: Այս ի ճակատ մատուռին նոյն վանիցն արձանագրեցեալ է, որոյ յաղագս բազմակնիք թուղթ մի ևս գոյ տաճկերէն, զոր գրեն և կնքեն Դրխբուլաղու նահիայի հայք և տաճիկք, վկայելով եղմամբ, թէ Ջագավանք գեղջ մուլքն Գետարգելու վանիցն է, զոր գտցես ցուցակաւն ( ):

### Վարելահողն սոյն վանիցս

Բազարաշէն կոչեցեալ մեծ հողն, որ է ի մէջ Եղաւան և Շհապ գեօղօրէիցն, որոյ վերին կողմն առուի բանտն, ներքի կողմն Թնղոցներն, մէկ կողմն գետն և միւս կողմն ճանապարհն, ի բնէ սոյն վանիցս է, որոյ յաղագս բազմակնիք վկայութեամբ թուղթ մի գոյ տաճկերէն: Գի՛տ ցուցակաւն ( ):

Այլև սորին յաղագս գիր մի ևս գոյ տաճկերէն, յորում միաբանք սոյնոյ վանիցս արզ առնեն խանին և խանն թալղայ գրէ ի ճակատն և նորին ի լուսանցն գրէ, թէ հողս այս Ջագավանիցն է: Գի՛տ ցուցակաւն ի ՌճՂԲ. (1743) թուին տաճկաց: Ռաղամ մի ևս ի Նատր շահէն գոյ վասն սոյն հողոյս ընդ արզայի Վարդան վարդապետին ի ՌճՂԷ. (1744) թուին տաճկաց: Գի՛տ ցուցակաւն ( ):

Ալատաղ կոչեցեալ մեծ հողն, որ է ի մէջ Աւան, Ջագ և Տաճարափակ գեօղօրէիցն, սոյնոյ վանիցս է, որոյ յաղագս բազմակնիք վկայութեամբ թուղթ մի գոյ տաճկերէն: Գի՛տ ցուցակաւն ( ): Ճանապարհն, որ յԱւանայ գայ[I] ի սոյն վանքս ի ներքոյ նոյնոյ ճանապարհին Կէչուտ կոչեցեալ հողն սոյն վանիցս է, որոյ կողմունքն գետն և ճանապարհն: Ի գլուխ սոյն Կէչուտ կոչեցեալ հողոյս առուն, որ ի գետոյն ելեալ ոռոգէ մինչև ի Դռն և մինչև ի Խաչերն Աւանայ, Ջագայ գեօղացիքն ծախեն սոյնոյ վանքիս: Մեծ հող մի ևս հարիւր սօմարի տեղ ի Շհապ գեօղն ունի, որոյ կողմունքն են՝ Ջագայ դոն, գետն, ջրաղացքն և կամուրջն: Մեծ հող մի ևս էլառ գեօղացիքն տան սոյն վանքիս, որ Ծաղկէուտ կոչի, որոյ կողմունք են՝ էլառայ առուն, ճանապարհն, էլառայ բլուրն և գետն:

Երկու այգի ի յԵրևան քաղաքն, մին ի ձորն ի ներքոյ Նորք գեղջն ի վերայ Դրխբուլաղու գետոյն, որ ի բնէ վախմ է սոյն վանքիս, որ այժմ սերմանելի (542բ) արտ է, զոր Հաճի Ահմատ խանն զաւթեալ էր, մեք յետս առաք և է ի ձեռս մեր: Երկրորդն ի յԵրևան

[I] Բ. > գայ

ի կողմն Դամուրբուլաղու, ի ներքոյ Նորքայ ճանապարհին, որ է ի ձեռս մեր, որոյ յաղագս գրեանք զոն զացեւս, Անտոնենք են վախմ տուեալ սոյն վանքիս: Ի Զագավանք գեօղն ունի մէկ ջրաղաց, կալ, մարաք, զոմ և Դ. (4) պարտէզք, ի միւս Զագ գեօղն ունի մէկ ձիթահանք, Բ. (2) պարտէզք, մին Դօլումենց Վարդանէն յիշատակ և միւսն Աղամէն ի Շհապ գեօղն ունի Ա. (1) ձեռք տուն և Ա. (1) մարաք և Ա. (1) զոմ, ի յԱւան գեօղն ունի զերիս բաղչայս, միոյն դապալայ զոյ տանկերէն, զոր Վարդան վարդապետն է առեալ յաւանցի Հայրապետի որդի Զաքարիայէն, ի յԱռինջ գեօղն ունի Ա. (1) ջրաղաց, զոր Վարդան վարդապետն է առեալ ի յառնջեցի Արզումի որդի Ահարօնէն: Գոյ դապալայն տանկերէն: Ի յԱղասոր գեօղն ունի զերկուս ջրաղացս, զոր նոյն գեօղացի տէր ... Իրիցու որդիքն տան սոյն վանքիս, մին ի տեղի պարտուց իւրեանց և միւսն հոգեբաժին հօրն իւրեանց:

## (543ա) ՍՐԲՈՅ ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ Կարենոյ վանք[367] ևս կոչի, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջն ...:

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու՝ զԿարենիս և զՂարաօրան[I]:

## (544ա) ԿԷԶԱՌԻՍՈՒ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս ... նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջն ՆԽԴ. (995) յԱպիրատ իշխանէ:

Ունի զվիճակ ի ... զՔուրտակն, զՀարպանտն, զէշակղուտուրան, զԹաքալուկն ևս զՇօրաղն[II 368]:

## (545ա) ՄԱՔԵՆԵԱՑ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս[369] այս, որ նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

Ունի զվիճակս ի Գեղարքունոյ նահիէն[370] ի կողմն Արեզունոյ՝ զԿոթ, զՀոտած աղբիւր, որ Ղրխբուլաղ ևս կոչի, զՑրտազէտ, զՍալամալիք, զՆշխարք, զերկու Կզնուտն՝ Մեծ և Փոքր, զԿածիս, զԲար, զՎարդենիս, զՔաւթառանց, զՍալկուտ, զՓառակունիս, զՔոլատակ, զԿէտանց, զՎանէվան, զԱխէնիս, զԿաթիկ, զԿաթաշէն, զԱղջաքիլիթ, զՄաքենիս, զԿարմիրշէն, զՎէլիշէն, զԲաստամ, զԾուկրուկ, զԽօսկաշէն, զԱկունք, զՊարկիս, զՈսկէշէն, զԱնմեռ, զԽոլինակ, զՄազրայ, զէտիլ, զԴաւալանց, զՍոթ, զԿալէր, զԱրքաունէր, զԵրիցաշէն, զՋաղացաձոր, զՀամաթիար, զԴարանակս, զԱղջաղալայ, զԻրիշատ, զՈկունիս, զՋիլ, զԱրտաւուն, զԳետիկ, զԿարմունջ և զՂարաքեափանակ:

---

[I] Զգրված՝ 543բ

[II] Զգրված՝ 544բ

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով՝ զՎարդենեաց անապատն, զԿոթայ անապատն, որ կուսանաց է, զՍալկուտի անապատն, զՔոլատակի անապատն, որ է անուամբ Սուրբ Աստուածածնին և զանապատ մի ևս ի մէջ ծովուն, որ Ադա կոչի[I]:

## (546ա) ԽՈՒԹԱՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանfս[371] այս, որ ... նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

Ունի վիճակս զքոլոր երկիրն Քեօլանու, որոյ հայերէն անունն Ծարայ երկիր[372] կոչի, որ է սահմանակից Խամսայու, բայց էջմիածնի է վիճակեալ և ընդ ձեռամբ Երևանու իշխողին, որոյ գեօղօրայfն են այսոfիկ՝ էրf, Ծնիլանց, Կարմիրշէն, Սալամալիf, Քաւթառանց, Ուռուցփոր, Ատարենիս, Ծուղրուղաշէն, Հոսաքակ, Կեաւալու, սոfա յայսկոյս լերինն են կից Արեգունւոյն Գեղամայն, իսկ յայնկոյս լերինն՝ Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճար, Ապահէն, Ճումէն, Քարատակ, Ջուար, Մոս, Սևաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուն, Մոթանց, երկու Դաւաչխուր՝ Մեծ և Փոfր, Լև, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Իրիցիշէն, Խութավանf, Զափար, Կեարաf, Նորշէն, Խնդրավանf:

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով՝ զԽնդրավանից անապատն և զԾարայ անապատն[II]:

## (547ա) ՀԱՑՐԵՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանfս[373] այս, որ և կոչի ... որ է ի Գեօղարfունի, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

Ունի զվիճակս ի Գեօղարfունւոյ նահիէն՝ զՓոնադար, զԻլկավանf, զԴալուղարտաշ, Ափատար, զԲիդնի, զԴուլալի, զՆորատուս, զԴշլախ, Առնեղի, Գանձակ, Բուզխանայ, զԴարաfիլիսայ, զԴուդանկի, զԵկդանկի, զՍէդանկի, զՔեամանդրուլաղ, զՊարոնքէկի գեղ, զԽշլաձագ, զԲերթ, զԱզատ fաղաf, Հասանքուլաղ, Կարմիրշէն[374]:

Ունի ևս զանապատս ընդ ձեռամբ իւրով զԴափուց վանf, որ է կուսանաց՝ առընթեր Նորատսոյ: Զանապատ մի ևս կուսանաց ի նոյն Նորատուս գեղջն: Զանապատ մի ևս յԻլկէվանf գեղջն, որ ևս է կուսանաց[III]:

## (548ա) ՇԴՈՒԱՔԱՑ ՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանfս[375] այս, որ կոչի Սուրբ Գրիգոր, որ ևս է ի Գեօղարfունի, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

---

[I] Զգրված՝ 545բ
[II] Զգրված՝ 546բ
[III] Զգրված՝ 547բ

Ունի զվիճակս ի Գեօղարֆունոյ նահիէն՝ զԿորզաբակ, զՄեծ Զագ, զՓոֆր Զագ, զեզնիստն, զՇղուաֆ, զԾակֆար, զէրֆէճի, զՔթափոր, զԴիլանչի, Կարմիրֆար, եւ Կարմիրֆար, զեաստիեօլում, զՄաւրիս, զԲալախատափ, զՎրացաշէն, զԱմրբար, զԱլթունթախտ, զԿարմիր աղբիւր, զԳառնակեր, զԴիլիշէն, զՀաբուլ[376]:

Մաւրուց անապատն եւ ընդ ձեռամբ սորին է[I]:

## (549ա) ՍԷՎԱՆՈՒ ԱՆԱՊԱՏԻ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Անապատս այս, որ է ի ծովակն Գեղարֆունոյ, որ և ... նախապէս հիմնարկեցաւ ի թուոջ ...:

Ունի զվիճակս ի Գեօղարֆունի, զԿախմախի, զԲատակալ, զՎարզել, եւ զՎարզել, զՓշմակալ, զԲուղտաթափայ, զՂարադալու, զՊորտակ, զԿորատեղ, իսկ ի Ծաղկունեաց նահանգէն զայս ինչ ունի՝ զԴրախտիկ, զՈւոիծառ, զՄեծտափ, զՋիպուխլու, զՅամաֆաբերթ, զԳոմաձոր, զՎարսէր, զՇարիս, զԿօրբել և զԾաղկունֆ[II] [377]:

## (550ա) ԲՋՆՈՒ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանֆս այս, որ և կոչի սրբուհւոյ Աստուածածնի վանֆ, որ է ի Կուտէս գաւառի, յեզր Հրաստան գետոյն:

Ունի զվիճակս ի Կուտէից գաւառի՝ զՔանաֆեռ, զԿէթրոն, զԱրծնի, զէլառ, զԳեամրէս, զԹութ, զԳեօֆֆիլիսայ, զՔեամալ, զՔանֆան, զԱղօրան, զՂրզլղալայ, զՂզլօրան, զԹէզխարապ, զեզնաջուր, զԱյլաֆակ, զԱւազանֆ, զԿարմրաւերակ, զՀազարաբերթ, զՆոնումիս, զԱրֆօլ, զԿարէնուց, զՋկրաշէն, զՕզան, զՖոանկանոց, զԹեղի, զԱլաբեր, զԱլաճաֆիլիսայ, զԳոոգոչ, զԱրտազաֆան, զՄեղուս, զԴալուլար, զԲջնի և զԾար, ի Ծաղկունիս գաւառին՝ զՕղրաձոր, զեայջելար, զԴդմաշէն, զԹըրթենաձոր, զՌնդամալ, զԳառնեղի, զՆախամար, զԱղփարայ, զԱղտէն, զԶամանկուտ, զՇխեր, զԿորկոտան, զԽորձոր, զԿաղս, զՄաւրիս և զՍօլաֆ[378]: Ունի և մէկ դանկ մուլքն Կեղոուն գեղջն, զոր առեալ է սոյնոյ վանֆիս առաջնորդ Մեսրոպ վարդապետն ԸՌ. (8000) դիանի ի Յովանիսի որդի Մկրտչէն ի ՌՃԺԳ. (1701) թուին տանկաց: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

**Վարեալահողf են այսոֆիկ...**[III]

(550բ) Այլև ի Շնգաւիթ ունի զհող մի ԺԴ. (14) սոմարի տեղ, զոր առեալ է սոյնոյ վանիս առաջնորդ Յովանէս վարդապետն ի նոյն գեօղացի Փանոսի որդի Նարինէն

---

[I] Ձգրված՝ 548բ
[II] Ձգրված՝ 549 բ
[III] Բ. > Վարելահողք են այսոքիկ

երկու թումանի ի ՌՃԿԵ. (1716) թուին տաճկաց, որոյ սահմանքն գրին Այվազի հողն, խանտակն, ճանապարհն և ծախողի հողն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն:

### Այգիք սոյնոյ վանքիս ի Կեղռոն

Սոյնոյ վանից առաջնորդ Մեսրոպ վարդապետն ի Կեղռոն գեօղն զայգի մի առնու ի Սիմօնի որդի Մարտիրոսէն մէկ թումանի ի ՌՃԲ. (1690) թուին տաճկաց, որոյ սահմանքն գրին Առաքելի, Մահմատողլու, Խաչատրի այգիքն և եօնջալղ մի: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Դարձեալ ի սոյն գեօղս Սարգսի որդի Արզումն զերկու տախտակ այգի մի ևս խարապ հնձանովն ծախէ նոյնոյ Մեսրոպ վարդապետին տասն և երկու հազար դիանի ի ՌՃԴ. (1692) թուին տաճկաց, որոյ սահմանքն գրին վերոյ գրեալ այգին, Աւետրի այգին, ծախողի եղբօր որդւոյ այգին և Թանղրիղուլու այգին, զի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

Դարձեալ ի սոյն գեօղս Թարաղուլի որդի Գրիգորն զկտոր մի այգի ծախէ սոյնոյ վանից առաջնորդ Դաւիթ վարդապետին եօթն հազար դիանի ի թուին տաճկաց ՌՃԿԱ. (1709), որոյ կողմունքն գրին վերոյ յիշեցեալ վանից այգիքն, Սարդարի այգին և սարն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Կից սոյնոյ այգւոյս նոյն Թարաղուլի որդիք Գրիգորն և Յակոբն զայգի մի ևս, որ եօնճալղ ևս ասի, ծախեն նոյն Դաւիթ վարդապետին եօթն թումանի ի տաճկաց թուին ՌՃԿԳ. (1711), որոյ սահմանքն՝ վանից այգիքն և Սարդարի այգին: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Սոցա հայերէն Բ. (2) ղապալայ ևս գոյ ( ) ( ): Սոյն գեօղացի և նոյն Թարաղուլի որդի Գրիգորն, իւր եղբայր Յակոբի և քեռ Սանդխտոյ կամաւն զայգի մի ծախէ նոյնոյ վանից առաջնորդ Յովանէսն վարդապետին երեք թումանի ի տաճկաց թուին ՌՃԿԷ. (1715), որոյ կողմունքն գրին Գրիգորի այգին, մէկ եօնճալղ, զի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Սոյն գեօղացի Սիմոնի որդիք Թօրոսն և Դօլվաթպէկն ի սոյն գեօղս ծախեն զայգի մի նոյն առաջնորդ Յովանէս վարդապետին վեց թումանի ի թուին տաճկաց ՌՃԿԸ. (1716): Եւ սոցին քոյր Խանում աղայն ևս զիւր բաժնին յատուկ ղապալայ գրեցուցանէ ի վայր կոյս նոյն ղապալային և ծախէ նոյն վանքին, որոյ սահմանքն գրին վանից այգին, եօնճալղն, Սարն և Սարդարի այգին: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Սոյն գեօղացի Գրիգորի որդի (551ա) Թօխումն ի սոյն գեօղս զբաղչայ մի ծախէ նոյնոյ առաջնորդ Յովանէս վարդապետին յիսուն շահոյ ի տաճկաց թուին ՌՃԿԹ. (1717), կողմունքն՝ Անանիայի բաղչայն, առուն և եկեղեցւոյ կողմն, զի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): Դարձեալ ի սոյն գեօղս Սիմօնի որդի Դօլումն զայգի մի ծախէ սոյն վանից առաջնորդ Կարապետ վարդապետին երկու թումանի ի ՌՃՂԳ. (1741) թուին տաճկաց, որոյ կողմունքն են՝ վանից այգին, Սիմոնի բաղչայն, ձորն և Դօլումի բաղչայն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

Դարձեալ երեք ղապալայ ևս հին գոն վասն սոյն այգեացս ( ), ( ), ( ): Ի Քանաքեռ գեօղն սոյն գեօղացի Յարութիւնի որդիք Գրիգորն և սորին հօրեղբայր Անդրէասն զիւրեանց բաժին այգիքն վախմ տան սոյն վանքիս ի ՌՃԼԳ. (1720) թուին տանկաց, որոյ կողմունքն են՝ Յարութիւնի և Ջանումի այգիքն, եօնջալղն և ճարափն: Գի՛տ զվախումնամայն ցուցակաւն ( ): Ի Քանաքեռ Աղամալի կինն զայգի մի ծախէ սոյն վանքիս առաջնորդ Յովանէս վարդապետին տասն և երեք հազար դիանի ի տանկաց թուին ՌՃԻԳ. (1711), որոյ սահմանքն են՝ սոյն վանից այգիքն, Այվազի այգին և առուն: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ):

Դարձեալ ի Քանաքեռ Վարդիկ անուն աղջիկ մի զմէկ լաւ բաղչայ հանդերձ իւր տներովն տայ վախմ սոյնոյ վանքիս ի ձեռն սորին առաջնորդ Յովանէս վարդապետին ի տանկաց ՌՃԻԱ. թուին և ի ՌՃԾէ. (1708) թուոջն մեռում: Գի՛տ զղապալայն ցուցակաւն ( ): յՕշական գեօղն ունի վանքս այս զմեծ և հնչակաւոր այգի մի, զոր էմինեանց այգի ասեն, զոր առեալ է սոյն վանից առաջնորդ Յովանէս վարդապետն ի Վէզիրէն, զորոյ պատմութիւնն է ի [ԺԶ.] (16) գլուխն ստացաք, յետոյ էմինի որդի Անդրէասն դաւի առնէ ընդ Դաւիթ վարդապետին, որ զկնի Յովանէս վարդապետին նստի առաջնորդ սոյն վանքիս: Իսկ Մշեցի Աբրահամ կաթուղիկոսի հրամանաւն բան մի տան Անդրէասին և ի բերանոյն գիր առնուն հայերէն ի ՌՃՀԲ. (1723) թուին մեռոյ:

### Հայերեն ղապալայք և վախմնամայք

Բճնեցի Վարդանի որդիք Մելքոնն և իւր քոյր Անդալատն և այլք ի նոյն գեօղն զիւրեանց մօր Թուրվանտայի սեպհական մուլք խոտհարքն, որ է ի յաքն Հրաստան գետոյն, տան վախմ սոյնոյ վանքիս ի ՌՃե. (1656) թին մեռոյ: Երկու կողմն Հրաստան գետն ի վերն ճարափն և ի հարաւն Արտազաքանու սահմանն: Դարձեալ բջնեցի Մէլիք բէկի որդի Սարգիսն ծախէ նոյնոյ վանից առաջնորդ Սիմէօն վարդապետին մէկ խոտհարք ի նոյն գեօղն, որ է չիման մի Թնդոց կոչեցեալ տեղւոյ յառաջն հինգ հազար դիանի ի ՌՃԼէ. (1688) թուին մեռոյ:

Դարձեալ նոնուսեցի Շիրվանի որդիք Յակոբ և Վարդանն ի ձորոջն մէկ ծառոտ տան վախմ սոյն վանքիս ի ձեռն սոյն վանիս առաջնորդ Յովանէս վարդապետին ի թուին մեռոյ ՌՃԿԲ. (1713), մէկ կողմն Մարալի բաղչայն և միւս կողմն եկեղեցին: Բջնեցի Գալուստի որդիք Սիմօնն և խեչիբաքն զիւրեանց էրսանկի չիմանն տան վախմ սոյն վանիցս ի ձեռն առաջնորդ Դաւիթ վարդապետին ի թուին մեռոյ ՌՃԿԳ. (1714), որոյ մէկ կողմն միջի աղբիւրն և միւս կողմն տէր Յօսէփի չիմանն: Բջնեցի Փիլիպպոսի որդի Վիրապն մէկ (551բ) կտոր տեղ ի դուռն Ամենափրկիչ կոչեցեալոյն տայ վախմ սոյն վանքիս ի ձեռն առաջնորդ Դաւիթ վարդապետին ի ՌՃՁԲ. (1733) թուին մեռոյ:

Դարձեալ ունի զկէս ջրաղաց մի ի Բջնի, զոր սորին առաջնորդք Յովանէս և Դաւիթ վարդապետքն առնում ի Ղազարէն և Յակոբէն ութն հազար դիանի ի ՌՃԿԵ. (1716) թուին մերոյ, որոյ կողմունքն են՝ Սարուխանենց առուն, վանքի առուն և Բալասանենց առուն, որոյ կէսն Ազիբէկենցն է լեալ: Վարդանի և Մելքիսէթի որդիքն են Ղազարն և Յակոբն: Դարձեալ բջնեցի խաչիկի որդի Մատթէոսն և իւր որդիքն մէկ ջրաղացի կիսոյ երեք բաժնէն մէկ բաժինն և մէկ էրսանքի կոչեցեալ ճոթն տան վախմ սոյն վանքիս ի ձեռն առաջնորդ Յովանէս վարդապետին: Ջվերոյ գրեալ հայերէն ղապալայսդ գտցես յԱթոռոջս:

## (552ա) ՂԲՋԱՂԱՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս[379], որ է ի Շիրակ գաւառին… նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ ՅԽԴ. (895) ի Սմբաթ թագաւորէն Բագրատունոյ:

Ունի զվիճակս զՂբշաղ և զՇիրակ[I]:

## (553ա) ԿՈՇԱՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ կոչի սրբոյն Գէորգայ վանք, որ է ի Նիգ գաւառի, նախապէս ի թուոջ հիմնաւորեցաւ ի թուոջ[II] …:

Ունի զվիճակս զիւր Կօշ գեօղն և զԱղունատուն[III 380]:

## (554ա) ՏԵՂԵՐՈՒ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս[381] այս, որ կառուցեալ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին ի Կուրծն Արագածու ի վերայ ձորոյն Անբերթ կոչեցելոյ, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ … :

Ունի զվիճակս զիւր մերձ գեօղն Տեղեր, զԲիւրական, Ագարակ, զԱղձ և զՎժան[IV]:

## (555ա) ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ կառուցեալ է յանուն Սաղմոսաց ի մէջ Արագածու և Արայու, ընդ ամին և ի ներքոյ սորին ի մէջ ձորոյն և ի վերայ Քասաղ գետոյն Սուրբ անապատն, որ Լուսաւորչի անապատ կոչի, նախապէս հիմնաւորեցան ի թուոջ Փրկչին մերոյ ի ՅԼ. (330) ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ: Քանզի Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր, յորժամ լուսաւորեաց զհայս քրիստոնէական հաւատով և զարդարեաց հոգևոր և Աստուածահաճոյ կարգօք և բարեզարդ կրօնիւք, շինեաց զեկեղեցիս և կարգեաց զքահանայս և զպաշտօնեայս: Ապա ձեռնադրեաց զկրտսեր որդին իւր զսուրբն Արիստակէս ի

---

[I] Ջգրված՝ 552բ

[II] Բ. > ի թուոջ

[III] Ջգրված՝ 553բ

[IV] Ջգրված՝ 554բ

տեղի իւր հայրապետ և կառավարիչ հօտին իւրոյ և ինքն այնուհետև սկսաւ մեկնիլ յաշխարհէ և անտեսանալ ի մարդկանէ և շրջիլ ի լերինս, ի յայրս և ի ձորս և կեալ հրեշտակական վարուք, որպէս անմարմին և ընդ Աստուծոյ միայն խօսակցիլ, զոր իսկ տեսանէր հանապազ, որ և ելեալ ի ծայր լերինն Արագածու և առնէր անդ զաւուրս բազումս, ուր և յօրինեաց զտաճար մի փոքրիկ ի ներքոյ վիմի միոյ յանուն ամենասրբոյ Երրորդութեանն և կախեաց ի նմա զկանթեղ մի առանց առասանի և էլից զնա իւրովք արտասուօքն և խնդրեաց յԱստուծոյ, զի երկնայնով լուսով վառեցեալ անշէջ մնասցէ մինչև ի կատարած աշխարհի, որ և եղև իսկ ըստ խնդրոյն, որ կայ մինչև ցայսօր ի փառս Աստուծոյ և ի պարծանս ծառային իւրոյ, զոր ետես, իսկ աչօք յայտնապէս սուրբ Գրիգոր ականատեսն յետ ժամանակաց, զորմէ յետոյ ասելոց եմք, որ վասն այնորիկ կոչեցաւ ականատես:

Արդ երանելիս այս սուրբ Գրիգոր Լուսաւորիչս մեր ի յամարայնոյ եղանակոջ ի գլուխ լերինս այսորիկ ճգնէր, որպէս ասացաք և ի ձմերայնոյ եղանակին իջանէր ի ընտորոտ սոյնոյ լերինս ի ձորն Քարցաղ գետոյն և անդանօր պարապիւր ի պաշտօնս Աստուածայինս, որ և երբեմն ի ձորն մնայր և երբեմն ի գլուխ ձորոյն ի բարձրահայեաց տեղւոջն: Վասն որոյ և յերկոսեան տեղիսն ևս շինեաց զփոքրիկ եկեղեցիս և էլից մաքրակեաց միաբանիւք և կարգեաց նոցա կանօնս և զԱստուածահաճոյ կարգս և զաւանդութիւնս: Զանուն վերնոյն կոչեաց Սաղմոսաց անապատ, զի միշտ ի սաղմոսերգութիւնս պարապէին և ներքնոյն անունն կոչեցաւ Լուսաւորչի անապատ, որք և կացին և մնացին այսու կարգաւ մինչև ի … թիւն մեր ի ժամանակս բարեպաշտ իշխանին Վաչէի և սրբոյն Գրիգորի ականատես վարդապետին, որ ի վերդ յիշեցաւ, որ էր առաջնորդ երկուց անապատացս: Ապա բարեպաշտս այս Վաչէ շինեաց զհրաշակերտ և զմեծ եկեղեցին գեղեցիկ և վայելուչ ձևով հանդերձ ներսի շինուածովքն և արտաքին գաւթովքն և այլովք պարագայիւքն, որ կոչի Սուրբ Սիօն և կամ Սուրբ Նշան և զարդարեաց պարսպօք և այլովք բազմօք շինուածովք, որ կայ մինչև ցայսօր շնորհօքն Աստուծոյ և կոչի Սաղմոսավանք:

(555բ) Ունի զվիճակս Ապարանու նահիէն, որոյ գեօղօրայքն են՝ Բաշապարան, Մուլք, Ղարանլղդարայ, Ճանճիկ, Զարհանի, Գիւմպէթլու, Գիւլապլու, Սարուբուդախ, Տամչլու, Մօլլաղասում, Քիրաշլու, Ղարաբուլաղ, Աստուածընկալ, Կեռուկարթ, Ղալանղ, Գիւլլունայ, Փալչխլու, Ղզլբուռին, Ալիքուչակ, Շիրաղալայ, Բուլխէր, Աբնագեօղ: Այլև ի Կարփու նահիումն՝ զՍերկէվիլ, զԱշտարակ, այլև զկէս Շարապխանին[382], քանզի զբոլոր Շարապխանէն, ըստ Յօհաննավանքին են կերեալ[I]՝ խառն և անորոշ: Այլև ի Գեօղարքունի զԳաւառագեօղն (զՇարապխանի գեօղօրայսն ի ճառս Յօհաննավանքին տեսցես):

---

I Բ. գրեալ

Ունի զմլքատու գեօղօրայս, յորոց առնէ ի տասնէն մէկ զմուլքս, որք են իւր մերձ եղեալ Սաղմոսավանք գեօղն, զորոյ զմէկ և զկէս դանկ մլքի ղապալայն գտցես ցուցակաւն (…), զոր սորին առաջնորդ Մանուէլ վարդապետն առնու ի Մուրատէն և ի Մարիամէն ի ՌԽԲ. (1632) թուին տաճկաց երկու թումանի: Իսկ զչորս դանկ և զկէս մուլքն վախմ ունի ի բնէ անտի: Գոն ևս վասն սոյն գեղջս հին ղապալայ մի ի ՄՁԹ. (901) թուին տաճկաց գրեցեալ: Եւ ռաղամ մի ևս ի Մեծ շահ Ապասէն ի ՌԺԳ. (1604) թուին տաճկաց գրեցեալ վասն երեք դանկին սոյն գեղջս, զոր ևս գի՛տ ցուցակաւն (…): Սոյնպէս և Քեարվանսարայ կոչեցեալ գեղջ Գ. (3) դանկ մուլքն, որ է մերձ քարեայ Քարվանսարային, որոյ վասն ի սորին առաջնորդ Ոսկան վարդապետէն Երևանցւոյ գոյ վկայական գիր մի, որ գրի ի թուին մերոյ ՌՃԺ. (1661), զոր ևս գի՛տ: Այլև Համամլու, Այվազլի և Քուռտալի[383] կոչեցեալ գեօղօրէից մուլքն ևս են լեալ սոյնոյ վանքիս, բայց … վարդապետ առաջնորդն սորին ունիլով զբարեկամ տաճիկ մի հաւատալով նմա տայ զղապալայսն սոյն գեօղօրէիցս ի ձեռն տաճկին, տայ նմա և զդրամ, զի գնացեալ ի յԱսպահան ի շահէն զռաղամ հանցէ ըստ ոճի ղապալայիցն, զի հաստատուն մնասցեն մուլք գեօղօրէիցդ: Եւ տաճիկն գնացեալ ըստ տաճկական բարուցն ի յիւր անուն դարձուցանէ զղապալայսն և զռաղամն և եկեալ զաւթէ զմուլք վերոյ ասացեալ երից գեօղօրէիցդ:

### (556ա) **Վարելահողքն սոյնոյ վանքիս են այսոքիկ**

Երկու չովուրմատեղիքն, որոց մինն մերձ վանքին և միւսն ի ներքոյ վանքին, որոց կէսն վարելահողք են և կէսն խոտհարք: Մէկ հող ևս մերձ կալին և առաջի մեծ դրանն սոյնոյ վանից: Սոյնոյ տեղւոյս մերձ, դէպ ի կողմն Արագածու Երկայնադարձ կոչեցեալ հողն: Մեծ հողն երեսուն սօմարէն տեղ, որ է ի վերայ Ապարանու ճանապարհին, սոյնոյ տեղւոյս ներքին առաւելն ի վերայ ձորոյն տասն և ութն սօմարէն տեղ: Մէկ հող ևս յիշեցեալ մեծ հողիդ լրին տակն, որոյ վասն մէկ հայերէն ղապալայ գոյ ի ՌՃՂԱ. (1742) թուին մերոյ գրեցեալ: Ախտինքներ կոչեցեալ հողքն երկուք կից իրերաց ի գլուխ Վասակամուտ կոչեցեալ ձորոյն: Երեք հողք և երեք մանր ճոթք կից իրերաց ի մէջ Սէրկեվլու և Յուշու ճանապարհացն, որք Վասակամուտ կոչին, զորս Սէրկէվլիլ գեօղականքն են տուեալ սոյն վանքիս իբրու ապաշխարանք ինքեանց վասն յիմարաբար սպանանելոյն զիշխանն Վասակ: Ի ներքոյ սոյն հողոցս, դէպ ի մեծ ձորն զերկուս հողս ևս Յօհանավանքին են տուեալ սոյն գեօղականքս, վասն սոյնոյ պատճառիս, որք ևս կոչին Վասակամուտք, որպէս յիշին ի տեղւոջն:

Ի հիւսիսակողմն վանքին ի վերն խարապի Գ. (3) ճոթքն առ ափն մեծ ձորոյն: Գիւղէիկի ձորոյ ի վանքի կողմն եղեալ հողքն, յորոց մէջն ճանապարհն է վանից ջրաղացաց, բոլորքն վանիցն են: Այս ձորոյս ի միւս կողմն ի վերնակողմն ջրաղացաց երեք

հողք ևս գոն: Ի վերայ Գիւղէիկ ջրոյն եղեալ քարեայ կամրջի արևելեան և արևմտեան կողմանց հողքն սոյն վանիցս են: Աքնազեօղի ստիինքն[384], որ է մէկ հող, որոյ կողմունքն են մեծ ձորն, Գիւղէիկն, քարեայ կամուրջն և քարեայ հաւուզն, սոյնոյ վանիցս է, սորա յաղագս տաճկերէն վկայական գիր մի ևս գոյ, զոր գի՛տ ցուցակաւն (...): Երկուք տաճկերէն վկայական գիրք և հուճէթք ևս գոն, որք յատկացուցանեն զսահմանսն սոյնոյ վանից և Աքնազեօղին, զորս ևս գի՛տ ցուցակօքն (...): Տաճկերէն թուղթ մի ևս գոյ, որ յատկացուցանէ զսահմանս սոյնոյ վանքիս և Յօհանավանքին, զոր ևս գի՛տ ցուցակաւն (...)[I]:

(557բ) Ունի զայգիս ի յՕշական և յԱշտարակ գեօղսն, զորց ուրպէսն ի գլուխն ի ճառս նոցին այգեացն տեսցես: Դարձեալ ունի յԱշտարակ գեօղն զմէկ զէրզանգի և ի գլուխն շիրախանայ, զորս սորին առաջնորդ Աւետիք վարդապետն առնու ի Սարգսի յորդւոցն ութն հազար դիանի ի ՌՃՁԷ. (1738) թուին մերոյ: Գի՛տ զղապալայն հայերէն (...): Մեծ սոյնոյ զտուն մի ևս ունի, որք այժմ աւերք են: Ի մէջ բերթին Աշտարակու ունի զմէկ թանապի հանդերձ ներսնատամբ և միով շիրախանայիւ, յորս կուսանքն բնակին: Ի Սէրկէվիլ գեօղն ունի զաւեր այգի մի, զբաղչայ մի, զոր Սիմոնենց կոչեն, նաև զտուն մի, զոր Ջիթչոնց Մարտիրոսի դուստր Անախաթունն տայ վախմ սոյն վանքիս: Գի՛տ զվախուպնամայն հայերէն (...): Ունի ևս զձիթահանք մի ի սոյն գեօղս Սէրկէվիլ: Ունի ևս զերկուս ջրաղացս ի վերայ Գիւղէիկ ջրոյն հանդէպ ինքեան, որք յիշեցան ի մէջ հողիցն: Ջրաղաց մի ևս ի ներքոյ իւր ի մէջ ձորոյն ունի, զոր Ականատեսի ջրաղաց կոչեն: Ունի ևս կից իւրեան զծառուտ բաղչայ մի: Այլև ունի ի մէջ մեծ ձորոյն ի սիրտ քարափին զերկուս մեծ այրս, մին բնական իւրն է և զմիւսն ի վերն սորին, զոր Կեանջումենք են տուեալ յիշատակ սոյն վանքիս, որ և ասի Կեանչումենց այր: Այլև ունի զշնրեսին ուխտատեղս, զորց զքերսն առնու, մին է սրբոյն Լուսաւորչի աղօթատեղն ի գլուխն Արագածու, որ ի վերն յիշեցաւ: Երկրորդն ի ծոցն Արայու լերինն, որ Ծաղկէվանք կոչի: Երրորդն է ի մէջ ձորոյն ի ներքոյ Սէրկէվիլ գեղջն յանուն Աստուածածնի վիմափոր մատուռ մի: Չորրորդն է ի յԱշտարակ գեօղն Կարմրաւոր անուամբ անապատն կուսանաց: Վերոյ գրեցելոցդ զոմանց ուրպէսն տե՛ս ի [ԺԴ.] (14) գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

## (557ա) ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՆԱՊԱՏԻ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Անապատս այս և սորին որդիսութիւնն յիշեցաւ ի ճառս Սաղմոսավանից, տեսցես անտանօր:

---

[I] Չգրված՝ 558աբ

## (557բ) ՅՕՀԱՆԱՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ կառուցեալ է յանուն սրբոյ Կարապետին ի Նիգ գաւառի, նախապէս հիմնաւորեցաւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ: Քանզի ի բերելն զնշխար սրբոյ Կարապետին և յամփոփելն ի ... գաւառին, զմասն ինչ եբեր յերկիրս յայս և ամփոփեաց յայսմ տեղւոջ և շինեաց ի վերայ տաճար մի փոքրիկ յանուն սրբոյ Կարապետին և արար վանք միաբանակեցաց: Յետոյ ի ՈԿԶ. (1217) թուին մերոյ ի յիշխանութեանն Զաքարիա իշխանին ի նմանէ կարգեցեալ իշխօղ և կառավարիչ երկրիս Երևանու մեծահաւատ իշխանն Վաչէ շինէ զմեծ տաճարն զարմանալի տեսողաց, որպէս Սաղմոսավանքն: Եւ յետոյ ի ՈՂԹ. (1250) թուին սորին որդի Քիւրտ կոչեցեալն շինէ զմեծ գաւիթն հրաշալի ձևով, որք կան մինչև զայսօր: Եւ ի սրբոյն Գրիգորէ շինեալ փոքրիկ տաճարն, որ ասացաւ ի վերդ, աւերեալ էր ի ՌՃՁԳ. (1734) թուոջն մերում, նորոգեաց Թրակացի Աբրահամ կաթուղիկոսն:

Ունի զվիճակս զԿարփի, զիւր փոքր գեօղն, զՓարպի ու զկէսն Շարապխանայ կոչեցեալ նահանգին[385]: Գիտեա՛, զի Շիրակվան և Ապարան և կամ Շարապխանայ, Յօհանավանք, Սաղմոսավանք և Մարմառաշէն ի միասին են կերեալ խառն և անորոշ: Ունի զմլքատու գեօղս զիւր մերձ գեօղն Յօհանավանք, այլև զՂօթուրբուլաղ կոչեցեալ գեօղն:

## (559ա) ՍՐԲՈՅՆ ՍԱՐԳՍԻ ՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ է Նիգ գաւառի կառուցեալ յանուն սրբոյն Սարգսի[386], նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ ...:

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու, զյՈւշի, զՆազրվան, զերկու Թամիրսն, զԹալին, զՄաստարայ, զԿեօզլու, զՔեարվանսարայ, զԶրքլու, զԱղին, զԻլումն[I] [387]:

## (560ա) ՄՕՂՆՈՒ ՎԱՆԻՑ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս այս, որ կառուցեալ է յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին ի Նիգ գաւառի, նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ ... :

Եւ յետոյ նորոգապէս շինեցեալ մեծապէս և վայելուչ ի նորին առաջնորդ Մարտիրոս վարդապետէն ի ... թուին ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին:

Ունի զվիճակս զիւր՝ Մուղնի գեօղն, զՇահրիար, զՄօլաբայազիտ, զՋաֆարապատ: Ունի մլքատու զիւր մերձ գեօղն Մուղնի, բայց գիտեա՛, զի մուք գեղջս այսորիկ Մուղնի կոչեցելոյ է Սրբոյ Աթոռոյս ի վաղուց հետէ, իսկ Փիլիպպոս կաթուղիկոսն շնորհէ ձրիապէս սոյնոյ վանիցս ի ժամանակս սորին առաջնորդ Մարտիրոս վարդապետին, որոյ զորպէսն տե՛ս լիովին ի [ԺԳ.] (13) գլուխն ի ճառս մլքատուութեանն սոյնոյ գեղջս:

---

[I] Զգրված՝ 559բ

## (560բ) **Վարեկաճողին սոյնոյ վանքիս են այսոքիկ**

Կաւահանք, երկու Անկանակներ, Անզաւակ և Ջանշուղենց կոչեցեալ տեղիքն: Այլև Կեռնոթն, Աւագ իրիցու հողն, Յակոբենց տեղն, ծովն, Մօսէսենց խուպանն, կոռաւորն, Սևահողն, երկու զվարներն, տանձուտակն, ծառուտի նոթն, եօնշալղներն, Քոշարենց տեղն, տենտահողն, Եղիկենց հողերն, Շահնազարենց հողն, Յովակիմի ածն, Յովակիմի հողն, որ Յարութիւնն առեալ էր, այլև Ասլխանի տեղն, Բաղալի հողն, դռան առաջն և Գալստենց Աստուածատրի հողն: Արդ յայսց գրեցելոց տեղեացս Անկանակ կոչեցեալ տեղեաց միոյն, զոր Տիրինասի որդի մելիք Կարապետն ծախէ քսան և հինգ հազար դիանի ի թուին Հայոց ՌՃԳ. (1654) և Գալստենց Աստուածատրի հողոյն, զոր Աստուածատրի որդի Դաւիթն և Յովանէսն ծախեն տասն և երեք հազար դիանի ի թուին տաճկաց ՌԿԳ. (1652) սոյնոյ վանքիս ձեռամբ սոյնոյ վանից առաջնորդ Մարտիրոս վարդապետին, զորոց զղապալայսն միայն գտաք, մինն հայերէն և միւսն տաճկերէն: Իսկ միւսքն ի հարկէ ի բնէ անտի վախմ են սոյնոյ վանիցս:

Այլև ունի ի սոյն գեօղս ի ձորումն զերկու չիմանս, որ է խոտհարք, զոր առեալ է սորին առաջնորդ Գրիգոր վարդապետն ի ՌՃԽԲ. (1693) թուոջն մերում ի Սարգսի որդի Յովանիսէն, զորոյ ղապալայն գի՛տ հայերէն (…):

Դարձեալ ունի ի Կարփի գեօղն զմարաք (561ա) մի, զոր առեալ է սորին առաջնորդ Դաւիթ վարդապետն ի կարփեցի Թանրիղուլու որդի Եաղուբէն երեք հազար և երեք ապասւոյ ի ՌՂԲ. (1681) թուին տաճկաց, զորոյ ղապալայն գի՛տ հայերէն ( ):

## (561բ) ԱՆԱՆԻԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆԻՑ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔՆ

Վանքս[388] այս, որ է յերևան, որ է Սրբոյ Աթոռոյս իւրայնովքն ամենեքումբք, նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ … :

Ունի զվիճակս զԱռինջ և զամենայն Բօշայից ազգն[389], որոյ այգիքն գրեցան ի [ԺԶ.] (16) գլուխն ի ճառս այգեացն Աթոռոյս և ջրաղացքն ի [ԺԷ.] (17) գլուխն ի ճառս ջրաղացացն[I 390]:

---

[I] Զգրված՝ 562ա-588բ, 593բ-598բ



ՄՄ, ձեռ 978, էջ 157բ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

---

[1] Տիտղոսաթերթին նախորդում է 24 չգրված էջ՝ 1ա-12բ, ձեռագրում համարակալումը՝ Ա.-ՌՃԾԶ. (1-1156):

[2] «Ջամբռ»-ում տանիկ են անվանված բոլոր ոչ քրիստոնյաները, այդ թվում և մահմեդականները՝ անկախ ազգային պատկանելիությունից:

[3] Նախընթաց պատմական իրադարձությունների վերաբերյալ «Ջամբռ»-ի որոշ տեղեկություններ և տարեթվեր չեն համապատասխանում մերօրյա ընդունելի տեսակետներին: Նման դեպքերում ոչ միշտ ենք հարկ համարել ծանոթագրել այդ մասին:

[4] Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Կոտայք գավառը, որը պարսկական տիրապետության ժամանակ Երևանի խանության գավառներից էր և կոչվել է նաև Ղրխբուլաղ:

[5] Դվինում կաթողիկոս դարձած Դավիթ Ա. Արամոնեցին (728-741) իր նստավայրն է դարձրել հայրենի Արամոնք գյուղը (Կոտայքի մարզի ներկայիս Արամուսը):

[6] Ամենայն հայոց կաթողիկոսանիստը Դվինից տեղափոխվել է նախ Արգինա, հետո միայն՝ 992 թ. Սարգիս Ա. Սևանցի (992-1019) կաթողիկոսն այն վերջնականապես հաստատում է Անիում:

[7] Ընդունելի է համարվում, որ Գագիկ Բ.-ի աթոռակալումը Բագրատունյաց գահին ավարտվել է 1045 թ., որից հետո բյուզանդացիները թույլ չեն տվել Հայոց կաթողիկոսներին նստել Անիում:

[8] «Ջամբռ»-ի հաջորդ՝ Բ. գլխում Սիմեոն Երևանցին գրում է, որ Ալփասլանը գրավել է Անին հայոց ՇԺԳ., այսինքն՝ 1064 թվականին:

[9] Անիի Բագրատունիների թագավորության վերացումից հետո կաթողիկոսական մի քանի աթոռների հաստատման քննությունը տե՛ս **Վահե Թորոսյան**, *Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ. դարի կեսեր - ԺԲ. դարի սկիզբ)*, Երևան, 2018, էջ 44-89:

[10] Գրիգոր Բ. Վկայասերը կաթողիկոս է ձեռնադրվել Ծամնդավում (բերդաքաղաք Փոքր Հայքում, Կեսարիայից արևելք, Սարոս գետի Ծամնդավ վտակի մոտ), որը եղել է կաթողիկոսանիստ և Կարսի Գագիկ Աբասյան թագավորի նստավայրը:

[11] Մսրը Եգիպտոսի արաբական անվանումն է:

[12] Թյուրք-սելջուկների կողմից 1085 թ. Հռնին գրավելուց հետո Մարաշում հաստատված Փիլարտոս Վարաժնունին Թեոդորոս կաթողիկոսին կանչում է իր նոր նստավայր Մարաշում աթոռակալելու, սակայն վերջինս չի կարողանում գնալ, որից հետո Փիլարտոս Վարաժնունին որոշում է նոր կաթողիկոսություն հիմնել Մարաշում և կաթողիկոս է ձեռնադրել տալիս Վարագավանքի Սուրբ Նշան վանքի վանահայր Պողոսին (տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, *Ժամանակագրություն*, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 228-229):

[13] «Ջամբռ»-ի երկրորդ գլխում այս տեղեկությունը կրկնվում է, բայց աղեն ճշտված. «...Տէր Բարսեղն յԱնի, Տէր Գրիգոր Վահրամն ի յեգիպտոս, Տէր Պօղոսն ի Մարաշ և Տէր Թորոսն ի Հռնի» (ՄՄ 978, 19ա):

[14] Հայրապետական աթոռը Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսի օրոք (1113-1166) է, որ 1116 թ. նախ տեղափոխվել է Ծովք, ապա՝ Հռոմկլա, իսկ Գրիգոր Պահլավունու պատանեկան տարիքի պատճառաբանությամբ՝ 1113 թ. Աղթամարի Դավիթ եպիսկոպոս Թոռնիկյանը հռչակվում է կաթողիկոս՝ սկիզբ դնելով Աղթամարի կաթողիկոսությանը:

[15] «Ջամբռ»-ի այս տեղեկությունը հակասական է. գրված է, որ Հռոմկլայում կաթողիկոսական աթոռը ԾՁԷ. (187) տարի է մնացել, իսկ հաստատվել է հայոց ՇԿԶ. (1117), այսինքն՝ 1117 թ., այդ դեպքում 187-րդ տարին կստացվի 1304 թ., մինչդեռ՝ հաջորդ իսկ նախադասության մեջ հիշատակված է, որ Հռոմկլան ավերվել, իսկ կաթողիկոսը գերի է տարվել Եգիպտոս հայոց ՉԽԴ., այսինքն՝ 1295 թ.: Ըստ այդմ՝ ստացվում է, որ պետք է գրված լիներ ոչ թե ԾՁԷ. (187), այլ՝ ԾՀԷ. (178):

[16] Ստեփանոս Դ. Հռոմկլայեցին կաթողիկոս է եղել 1290-1293 թթ.:

[17] Այդպես է նաև կոչվել Հայոց կաթողիկոսության նստավայր (1149-1292 թթ.) Հռոմկլան:

[18] Եգիպտական զորքերը Հռոմկլան գրավել, թալանել և կաթողիկոսին ու այլ հոգևորականների գերի են տարել Եգիպտոս 1292 թ., որտեղ էլ 1293 թ. մահացել է Ստեփանոս Դ. Հռոմկլայեցին:

[19] Մամլուքների կողմից Հռոմկլան գրավելուց հետո կաթողիկոսարանը հաստատվում է Սսում, որտեղ և աթոռակալել է Գրիգոր Է. Անավարզեցի կաթողիկոսը (1293-1307):

[20] Գրիգոր Լուսավորչի Սուրբ Աջը Սիս է վերադարձվել Գրիգոր Է. Անավարզեցու (1293-1307) օրոք (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 2034-2035):

[21] Եգիպտոսի սուլթան Մելիք Աշրաֆի զորքերը Սիսը պաշարել և գրավել են 1375 թ.՝ գերեվարելով Կիլիկիայի հայկական պետության վերջին թագավոր Լևոն Ձ.-ին (1374-1375):

[22] Հայրապետական Աթոռը Սուրբ Էջմիածնում վերահաստատվում է 1441 թ., իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Ա. Վիրապեցին (1441-1443):

[23] Սիմեոն Երևանցու աղբյուրն Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ն է, որտեղ պատմիչը մանրամասն նկարագրել է պատմական այդ եղելությունները (տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրութեամբ Լենա Խանլարեանի, Երևան, 1990, էջ 335-339):

[24] Զաքարիա Գ.-ն Աղթամարի կաթողիկոս է եղել 1433-1464 թթ., իսկ 1460 թ. երկրում իշխող կարակոյունլուների պետության առաջնորդ Ջհանշահի (1435-1467) օժանդակությամբ մինչև 1461 թ. վերջերն առաջնորդում է Ամենայն Հայոց կաթողիկոսի Աթոռը (տե՛ս **Վրեժ Վարդանյան**, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն*, Ս. Էջմիածին, 2017, էջ 92-99):

[25] Խաչվառը Քրիստոսի խաչելության պատկերով եկեղեցական դրոշն է, ուրարը՝ եկեղեցականի ուսին գցվող նախշազարդ գոտին:

[26] Հիշյալ իրադարձությունները՝ Աղթամարի Զաքարիա Գ. կաթողիկոսի կարճատև աթոռակալումը Մայր Աթոռում և հետո նրա վերադարձն Աղթամար, պայմանավորված էին այդ ժամանակաշրջանում Ս. Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի շուրջ ծավալված սուր պայքարով, որում ներգրավված էին Այրարատի, Սյունիքի ու Վասպուրականի հոգևորականությունը, աշխարհիկ իշխանությունները և օտար տիրապետողները (տե՛ս **Լևոն Խաչիկյան**, «Հայաստանը ԺԵ դարի երկրորդ կիսամյակում», *Աշխատություններ*, հ. Գ., Երևան, 2008, էջ 163):

[27] Հայոց ՋԻԶ. (1477) թվականին Ամենայն հայոց կաթողիկոսն էր Հովհաննես Է. Աջակիրը (1474-1484), իսկ Սարգիս Գ. Մյուսայլը (1484-1515)՝ նրա աթոռակիցը:

[28] Ըստ ավանդության՝ Օսրոյենեի թագավոր Աբգարը քրիստոնեություն ընդունած անդրանիկ արքան է եղել և դասվել է Հայ Առաքելական Եկեղեցու սրբերի շարքը:

[29] Մասիս լեռից հարավ-արևելք, Արաքս գետից արևմուտք ընկած Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Արտազ գավառը, որն իր տարածքով համապատասխանում է այժմյան Մակուի շրջանին:

[30] Սանատրուկ՝ Հայոց Արշակունի թագավոր 88-110 թթ.:

[31] Մեծ Հայքի Սյունիք նահանգը:

[32] «Օթեաց խաչ» կոչվող սրբավայրը գտնվում է Խոր Վիրապի վանքից դեպի արևմուտք, որտեղ, ըստ ավանդության, հանդիպել են Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալները (տե՛ս **Արսեն Հարությունյան**, *Խոր Վիրապ, պատմությունը, ճեռագրական և վիմագրական ժառանգությունը*, Երևան, 2017, էջ 50):

[33] Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի գավառներից Աղբակը՝ Տիգրիս գետի ձախակողմյան վտակ Մեծ Զավի վերին հոսանքի շրջանում: Աղբակի Սուրբ Բարդուղիմեոս վանքը, ըստ ավանդության, հիմնադրվել է առաջին դարում, Սանատրուկ թագավորի կողմից՝ Բարդուղիմեոս առաքյալի գերեզմանի վրա:

[34] Կոստանդիանոս I Մեծ-ը գահակալել է 306-337 թթ.: Նիկեայի առաջին տիեզերական ժողովը տեղի է ունեցել 325 թ., որին մասնակցել է նաև Գրիգոր Լուսավորչի որդի Արիստակեսը:

[35] Ըստ «Ջամբռ»-ի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչից մինչև Հակոբ Ճամախեցին 1459 տարվա ընթացքում պատրակալել են թվով 127 հայոց կաթողիկոսներ: Սիմեոն Երևանցու այս տվյալները չեն համապատասխանում Մաղաքիա արք. Օրմանյանի հաշվարկին, որի դասակարգմամբ՝ Հակոբ Ճամախեցին միայն 114-րդն է (**Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3503):

[36] Կոստանդնուպոլսի 2-րդ տիեզերական ժողովը տեղի է ունեցել 381 թ.:

[37] Եփեսոսի 3-րդ տիեզերական ժողովը տեղի է ունեցել 431 թ.:

[38] Կաթողիկոսական պատրիարքը Վաղարշապատից Դվին է տեղափոխվել 484 թ.՝ Հովհաննես Ա. Մանդակունու օրոք (478-490):

[39] Քաղկեդոնի ժողովը եղել է 451 թ.՝ Հռոմի Մարկիանոս կայսեր (450-457) օրոք, մինչդեռ Գյուտ Ա. Արահեզացու պատրակալումը թվագրվում է 461-478 թթ.:

[40] Հովհաննես Ա. Մանդակունին կարևոր դերակատարում է ունեցել ծիսական մատյանների կազմման գործում, այդ թվում նաև՝ Մաշտոց ծիսամատյանի մեջ մտած մկրտության, պսակի և այլնի: Նրա օրոք է նաև կարգավորվել սարկավագների, քահանաների, եպիսկոպոսների օրհնության կարգերը:

[41] Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը տեղի է ունեցել 554 թ.՝ Ներսես Բ. Բագրևանդցու (548-557) օրոք:

[42] 590/591 թթ. Հայաստանի բյուզանդապատկան մասում (Ավանում) Մորի կայսեր նախաձեռնությամբ հիմնվել է հակաթոռ կաթողիկոսություն Հովհաննես Բագարանցու առաջնորդությամբ, որը գոյություն է ունեցել մինչև 611 թ. (**Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Ա., սյունակ 671-673):

[43] Զվարթնոցի Սուրբ Գրիգոր կաթողիկե եկեղեցին, որը կառուցվել է Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսի կողմից (641-661):

[44] Անաստաս Ա. Ակոռեցի կաթողիկոսի (661-667) օրոք և Անանիա Շիրակացու միջոցով Հայոց շարժական տոմարն անշարժ դարձնելը Մաղաքիա արք. Օրմանյանը թվագրում է 665 թ. (**Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Ա., սյունակ 870):

[45] 703 թ. Վարդանակերտի ճակատամարտից հետո, որտեղ հայկական ուժերը պարտության են մատնում արաբական զորաջոկատին, Սահակ Գ. Ձորափորեցին (677-703) մեկնում է Միջագետքի Խառան քաղաքը՝ փորձելով կանխել արաբական պատժիչ ուժերի արշավանքը Հայաստան: Այդ նպատակով գրվել է խնդրագիր՝ ուղղված արաբ զորավար Մուհամմեդ իբն Օկբային, որը գտեղ-

ված է Ը. դարի հայ պատմիչ Ղևոնդի երկում (տե՛ս **Ղեւոնդ Վարդապետ**, *Պատմաբանութիւն*, աշխատասիրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, «Մատենագիրք Հայոց», Ձ. հատոր, Ը. դար, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 752-753):

[46] Մանազկերտի եկեղեցական ժողովը գումարվել է 726 թ., որի որոշումները մեծ նշանակություն են ունեցել Հայ եկեղեցու դավանական մի շարք հարցերի հստակեցման համար:

[47] Լափլիզակ, լափլիզող, բառացի՝ ամեն ինչ կլանող, նաև՝ սպառող, ոչնչացնող (Հայերէն բացատրական բառարան (ՀԲԲ), հ. Բ., էջ 189): Խոսքն օտար ասպատակողների մասին է, տվյալ դեպքում՝ Ատրպատականի Ավշին ամիրայի կողմից 894 թ. Հայաստան ներխուժելու և Գևորգ Բ. կաթողիկոսին գերեվարելու:

[48] Հայոց կաթողիկոս, Բագրատունիների շրջանում ակտիվ դերակատարում ունեցած պատմագիր Հովհաննես Ե. Դրասխանակերտցին (898-929):

[49] Տեղեկությունը վերաբերում է Անիի Փոքր Կաթողիկե եկեղեցուն, որի հիմնադրումը վերագրվում է Աբաս Բագրատունուն (տե՛ս Կարեն Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագիր ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 173):

[50] Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսի (946-968) օրոք ընդվզած Աղվանից հոգևորականությունը ձգտում էր ինքնուրույնության: Կաթողիկոսական աթոռն ուժեղացնելու նպատակով՝ Աղթամարից այն տեղափոխվում է Անիի մոտ՝ Արգինա գյուղաքաղաք: Կաթողիկոսին հաջողվել է զսպել Սյունյաց հոգևորականության նկրտումները, իսկ Աղվանքում՝ ձեռնադրել Դավիթ եպիսկոպոսին (958-965): Տե՛ս **Անանիա Մոկացի**, *Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքնոյ Սուրբ Լուսաւորիչի աթոռոյն*, «Մատենագիրք Հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, էջ 269-274:

[51] Հաղբատի վանքի շինարարության թվականը համարվում է 976 թ., իսկ Սանահինը հիմնադրվել է ավելի վաղ՝ 10-րդ դարի 30-40-ական թթ.:

[52] Մարմաշենի եկեղեցին կառուցել է իշխանաց-իշխան, ապա Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունին (967-1045):

[53] Փոքր Հայքում, Հալիս գետի աջափնյակում, Սեբաստիա քաղաքից ոչ հեռու է Սուրբ Նշան վանքը, որը գտնվել է Վասպուրականի Սենեքերիմ թագավորի՝ 1021 թ. Բյուզանդիայից ստացված տիրույթներում:

[54] Բյուզանդիայի կայսր Կոստանդին X Դուկաս (1059-1067):

[55] Պատմական Փոքր Հայքի հարավ-արևմուտքում, Ջահան գավառում, նույնանուն գետի Հուրման վտակի Հոնի ճյուղավորման ափին գտնվող հայտնի բերդաքաղաք:

[56] Ստուգաբանվում է Եգիպտոսից եկած կամ եգիպտացի, այն է՝ Եգիպտոսի մամլուքները:

[57] Լատինամետ գործունեություն ծավալած Կոստանդին Գ. Կեսարացի կաթողիկոսը (1307-1322):

[58] Թյուրքմենական կարա-կոյունլուների առաջնորդ Ջհանշահը (1435-1467), որը Թավրիզը հռչակել է իր պետության մայրաքաղաք:

[59] Վակֆնամ(ե), սեփականագիր կամ ստացվածագիր (*Զամբռ*, էջ 19, ծանոթ. 2), կտակագիր, փաստաթուղթ, որով հավատացյալները զանազան շարժական և անշարժ ստացվածք էին նվիրում եկեղեցիներին կամ մզկիթներին (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 201):

[60] Խոսքը վերաբերում է Սեֆյանների տոհմին (1502-1736):

[61] Նվիրապետական աթոռների կենտրոնախույս նկրտումները, որոնք արտահայտվեցին հատկապես ԺԶ. դարի կեսերից, պայմանավորված էին Ամենայն հայոց կաթողիկոսության խիստ թուլացմամբ: Աղվանից կաթողիկոսությունը հավակնություններ ուներ Ս. Էջմիածնի բոլոր թեմերի նկատմամբ, թերևս բացառությամբ Արարատյան աշխարհի, Աղթամարինը՝ ոչ միայն Վասպուրականի, այլ նաև՝ պատմական Պարսկահայքի:

[62] Պատմական Գանձակ քաղաքը, պարսկերեն՝ Գենջե, որից էլ՝ թյուրքական Գենջե կամ Գյանջա ձևերը:

[63] Ուտիք աշխարհի Պարտավ քաղաքը, ներկայիս՝ Բարդա:

[64] Ջակամներ՝ Վերին և Ներքին, նաև՝ Ջագամ, պատմական Ուտիքի հյուսիս-արևմտյան ընդարձակ հատվածի ուշ միջնադարյան անվանումը: Իր մեջ ընդգրկել է Գարդման, Միափոր, Առե (Աղստև), Տավուշ գավառների տարածքը: Անունն ստացել է համանուն գետից (այժմ՝ Ջեգամ-չայ) (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 459):

[65] Նիկոլ Թորոսովիչ (1604-1681), հայ եպիսկոպոս, որի ակտիվ ջանքերն ուղղված էին լեհահայերին կաթոլիկ դարձնելուն:

[66] Շամբու ձոր (Դարաշամբ), հայաբնակ գյուղ Արաքսի աջակողմյան վտակ Կարմիր գետի գետաբերանի շրջանում: Գյուղից ոչ հեռու նշանավոր Սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքն է (Մաղարդավանք): Տարբեր տարիներին վանքը ձեռք է բերել կամ որպես նվիրատվություն ստացել է տներ, այգիներ, մշակելի հողատարածքներ, ջրաղացներ, ջրօգտագործման իրավունք և այլն (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 91-130, 149, հրատ.՝ *Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր* (976, 981, 1432, 1564, 1614 և 1655-1839 թթ.), պրակ I, կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, 1941):

[67] Վաղարշապատից հյուսիս-արևելք, Սուրբ Հռիփսիմեի վանքից ոչ հեռու գտնվող վանքապատկան Դոի այգիները հայտնի էին այնտեղ աճեցվող խաղողից պատրաստված գինիներով: Սա, թերևս, միակ այգին չի եղել, որի բերքն օգտագործվել է այդ նպատակով: Մայր Աթոռը վանքատանը կից ունեցել է գինետուն, որի կառավարիչը վարել է հատուկ մատյան: Այդ ծավալուն մատյանում գրանցված են գինու, օղու և քացախի հաշիվները (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 7, վավ. 2):

[68] Բերիա, Հալեպ քաղաքի պատմական անվանումներից:

[69] Կաֆա, Ղրիմի Թեոդոսիա քաղաքը, միջնադարի խոշոր հայկական գաղթավայրերից, որտեղ հայերը մշտական բնակչություն են հաստատել դեռևս ԺԱ.-ԺԳ. դարերում (**Վարդգես Միքայելյան**, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*, Երևան, 1964, էջ 46-47): ԺԳ.-ԺԹ. դարերում Կաֆան եղել է հայ գրչության, մանրանկարչության նշանավոր կենտրոն, որից պահպանվել են շուրջ երկու հարյուր հայկական ձեռագրեր:

[70] Հաթթը Շերիֆ՝ սուլթանական հրաման, հրովարտակ:

[71] Շոռոթն Արաքսի ձախ կողմում՝ Օձասար լեռան արևելյան հարթավայրում, Նախիջևանի Ջուղայի հայաբնակ վաճառաշահ բնակավայրերից էր, արհեստագործական կենտրոն, որը հայտնի էր նաև իր պատմաճարտարապետական հուշարձաններով: Եղել է մշակութային կենտրոն, ունեցել է դպրոց, հայտնի է այստեղ ընդօրինակված շուրջ չորս տասնյակ ձեռագրերի մասին:

[72] «Ջամբռ»-ում հիշատակված են Քասաղ գետի Քարձաղ և Քարսախ անվանաձևերը:

[73] Զորագյուղի մենաստանը կամ Երևանի Անապատ վանքը գտնվել է Հրազդան գետի ձախ ափին բարձրացող քարաժայրի վրա: Կործանվել է 1679 թ. ավերիչ երկրաշարժի ժամանակ: Անապատի եկեղեցիներից է Սուրբ Սարգիսը, որը վերականգնվել է երկրաշարժից հետո:

[74] Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցին կառուցվել է 1679 թ. Երևանի ավերիչ երկրաշարժից հետո: Ըստ պահպանված արձանագրության՝ հիմնվել է 1695 թ. թիֆլիսաբնակ մեծահարուստ Հակոբջանի միջոցներով:

[75] Կոնդի բարձունքին գտնվող Սուրբ Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու կառուցման թվականը համարվում է 1710 թ.: Կառուցվել է երևանցի մեծահարուստ Մելիք Աղամալի հովանավորությամբ:

[76] Վերևում գրված է, որ Աղեքսանդր կաթողիկոսը գահակալել է հայոց ՌՃԾԸ. (1709) թվականին, իսկ այստեղ՝ ՌՃԾԶ. (1707)-ին: Աղեքսանդր Ա. Ջուղայեցու գահակալման ընդունված թվականն է 1706-ը:

[77] Աֆղանստանը, ուրտեղ բնակվող ցեղերն ապստամբելով իրանական տիրապետության դեմ՝ արշավում և հասնում են Սպահան՝ պաշարելով երկրի մայրաքաղաքը: 1722 թ. նոյեմբերին աֆղանները ստիպում են շահ Սուլթան Հուսեյնին իր ձեռքով թագադրել նրանց առաջնորդ Միր Մահմուդին, որը հռչակվում է շահ և իր տիրապետությունը հաստատում Իրանում: Սպահանի երկարատև պաշարման ժամանակ մեծ կորուստներ է ունեցել նաև աֆղանների ձեռքում հայտնված և սովի մատնված Նոր Ջուղայի հայությունը. «բազումք մեռան ի սովոյն այնքան, որ ոչ բաւ էին թաղել զնոսայ և տեսօղքն պատմէին, թէ ոչ մնաց անասունս, որ ոչ կերան» (տե՛ս **Ստեփանոս Երէց**, **Հանգիտագիրք**, աշխատասիրությամբ Վահան Բայբուրդյանի, Հասմիկ Կիրակոսյանի, Թամարա Մինասյանի և Լուսինե Թումանյանի, Թեհրան, 2017, էջ 29): Բացի դա՝ Ջուղայի հայ իշխանները ստիպված էին հսկայական գումար խոստանալ, որպեսզի աֆղանները չթալանեն ու գերի չտանեն հայերին (տե՛ս *Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները*, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2010, էջ 48):

[78] Մահմուդ շահը ծագումով Աֆղանստանի Հոթաքիների տոհմից էր, որի գլխավորությամբ աֆղանները 1722 թ. պարտության մատնեցին պարսից շահ Հուսեյնին՝ գրավելով Սպահանը: Սպանվել է 1725 թ.:

[79] Իրանի Գիլան նահանգը, որը գտնվում է Կասպից ծովի հարավ-արևմտյան մասում:

[80] Իրանի հյուսիս-արևելյան ընդարձակ Խորասան երկրամասը (բառացիորեն՝ «արևելյան երկիր»), որն ընդգրկել է նաև Աֆղանստանի հյուսիս-արևմտյան շրջանները՝ Հերաթ քաղաքով:

[81] Ռուսները, օգտվելով աֆղանների կողմից պարսկական պետությանը հասցված ծանր հարվածներից՝ 1720-ական թթ. գրավում են Կասպից ծովի արևմտյան և հարավային առափնյա շրջանները, այդ թվում՝ Գիլանը:

[82] Թեև Պետրոս Քյուրյուրին ընդունված չէ ներառել հայոց կաթողիկոսների ցանկում, սակայն Սիմեոն Երևանցին նրան հիշատակում է որպես ընտրված կաթողիկոս՝ տասնամսյա գահակալմամբ:

[83] Սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունեցող այդ շտեմարանները «Օրինակք գրութեանց» ժողովածուներն են, որոնք առկա են Մաշտոցյան Մատենադարանի մի շարք ձեռագրերում: Հակոբ Շամախեցի կաթողիկոսի օրոք պաշտոնական գրություններ ուղարկելու նպատակով կազմված այդ մատյանները շարունակվել են նաև Սիմեոն Երևանցու ժամանակ: Մասնավոր ուշադրության են արժանի դրանցում տեղ գտած Ս. էջմիածնի նվիրակների գործունեությանը, թեմական վիճակների, վրաց թագավորների, Գանձասարի կաթողիկոսների, պարսից խաների, հայ մելիքների հետ գրագրությունը: Զգալի թիվ են կազմում վրաց Հերակլ II-րդ թագավորին կաթողիկոսների ուղղած դիմումները, որոնք բազմաբովանդակ են և ներկայացնում են խանական ոտնձգություններից պաշտպանվելու, նրա իշխանության ներքո գտնվող հայկական թեմերի հետ կապված բազմապիսի հարցեր: Ձեռագրերի տվյալ խումբն է՝ ՄՄ 2911 (լրացվել է Հակոբ Շամախեցու և Սիմեոն Երևանցու օրոք), ՄՄ 2912 (այս ձեռագրերից գրության օրինակներ առկա են Կաթողիկոսական դիվանի թղթ. 2, վավ. 6-ում), ՄՄ 9120, մասամբ նաև՝ ՄՄ 4424:

[84] Սիմեոն Երևանցի կաթողիկոսի գործունեությանը վերաբերող ընդարձակ այս հատվածը տարբեր կարծիքների է հանգեցրել հարցին անդրադարձած հայագետներին: Գյուտ Աղանյանցը կարծում է, որ Սիմեոն Երևանցուն վերաբերող հատվածը չէր կարող գրված լինել հեղինակի կողմից և որ դա բնագրի հրատարակիչներն են ներմուծել (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ ՃՀԲ): Միևնույն տեսակետին է Մաղաքիա արք. Օրմանյանը՝ գտնելով, որ դա «ուրիշ գրիչէ Ջամբռին մէջ մուծուած է» (**Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3503): Ակադեմիկոս Ստ.

Մալխասյանցը տվյալ հավելումը հակված է վերագրել Սիմեոն Երևանցու «Հիշատակարանի» գրիչ Հովհաննես Գեղամացուն (**Симеон Ереванци**, *Джамбр*, էջ 383): Հակառակ վերոնշյալ պնդումների՝ նախ նշենք, որ այն հրատարակչական հավելում չէ և առկա է 978 թվահամարի ձեռագրում: Բացի դա՝ բնագրի վերոհիշյալ հատվածի գիրը տարբեր չէ: Հետևաբար՝ անհիմն է այն հետագա միջամտություն համարելը: Խնդրո առարկա հարցի տեսանկյունից հիմնավոր փաստարկ է տվյալ հատվածի առկայությունը նաև «Ջամբռ»-ի մյուս ինքնագիր մատյանում (ՄՄ 4592, 35բ-38բ, 40ա-43բ), ուրտեղ կաթողիկոսի գործունեությունը ներկայացված է գրեթե նույնությամբ: Թեև այն ամբողջական չէ, բայց և այնպես այդ հանգամանքը, կարծում ենք, լիովին հաստատում է, որ կաթողիկոսի մասին այդ հատվածն ի սկզբանե նախատեսված և գրված է եղել «Ջամբռ»-ում:

[85] Սիմեոն Երևանցու հեղինակած աշխատությունների ձեռագրերի ընդհանուր թիվը, ընդօրինակություններով հանդերձ, ըստ մեր հաշվարկների, անցնում է 200-ից, որոնք պահվում են ինչպես Մաշտոցյան Մատենադարանում, այնպես էլ Երուսաղեմի, Վիեննայի, Ս. Պետերբուրգի և այլ ձեռագրական հավաքածուներում: Գրական հարուստ ժառանգություն թողած կաթողիկոսը ժամանակի հայ մատենագրության բեղուն գործիչներից է, թեև նրա ոչ բոլոր գործերն են լիարժեք ուսումնասիրված, իսկ որոշները մինչ օրս անտիպ են:

[86] Հեղինակային «Քարոզգիրք»-ը Սիմեոն Երևանցին սկսել է շարադրել 1748 թ. և լրացրել նաև հետագայում, երբ Մայր Աթոռի նվիրակն էր Կ. Պոլսում, ուրտեղ հանդես է եկել քարոզներով, պատգամներով և ուղերձներով. «Ես ի բազմաժողով քաղաքն Կոստանդնուպօլիս ի գործս նուիրակութեան Սրբոյ Էջմիածնի՝ շարադրեցի զգիրքս զայս ի ներթուղթն մերում ի ՌՄԷ. (1758)» (ՄՄ, 2212, 15աբ (Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Է., էջ 454): Նշենք, որ Սիմեոն Երևանցու հեղինակած ավելի քան 100 քարոզները վերաբերում են հոգևոր ամենատարբեր թեմաների և արարողությունների, ունեն ամբողջական և մասնակի բազմաթիվ ընդօրինակումներ: Դրանց թիվն ըստ ձեռագրացուցակների՝ 40-ը՝ Մաշտոցյան Մատենադարանում է, 17ը՝ Երուսաղեմում, 4-ը՝ Անկյուրիայի Կարմիր վանքում, 3-ը՝ Արմաշի վանքում, մեկական՝ Հալեպում, Վիեննայում, Ղալաթիայում, Թավրիզում (Թավրիզի ձեռագրացուցակի հմր 8 ձեռագիրն այժմ գտնվում է Մատենադարանում՝ 4523 թվահամարի ներքո), Սեբաստիայի Սուրբ Նշան վանքում: Իսկ «Քարոզգրքի» մասնակի ընդօրինակումներ և առանձին քարոզներ Մատենադարանում առկա են 52-ը, Պետերբուրգում՝ 5-ը, մեկական՝ Վիեննայում, Անթիլիասում:

[87] Սիմեոն Ջուղայեցու հայտնի՝ «Մեկնություն Պրոկղի» երկի՝ Սիմեոն Երևանցու կողմից կատարված խմբագրումը, որում կատարել է պարզաբանումներ, այսինքն՝ անդրադարձել է այն հատվածներին, որոնք, ըստ իրեն, Ջուղայեցին պարզ և հասկանալի կարծելով չէր մեկնել: Սիմեոն Երևանցին կատարել է նաև որոշ հավելումներ, որոնք տարբերակելու համար ձեռագրի լուսանցքներում դրել է խաչանշաններ և պատգամել է հետագա ընդօրինակողներին, որ դրանք չմոռանան և գրի առնեն, ինչն էլ տեսնում ենք ձեռագրերում: Մասնավոր ուշադրության է արժանի այս ինքնագիր-ձեռագրի հիշատակարանը: Ի թիվս որոշ պատմական իրադարձությունների՝ հիշատակարանից տեղեկանում ենք Սիմեոն Երևանցու ընտանիքի անդամների մասին. «...զմարմնաւոր ծնօղս իմ՝ զԿարապետն և զԳայիանէն, և զեղբայրսն իմ՝ զՄելքիսեթեկն, զՅարութիւնն և զՂազարն, զորս ի յիշելն ձեր, յիշեալ լիջիք և դուք ի Քրիստոսէ՝ յԱստուծոյ մերմէ» (ՄՄ 1818, 135բ):

[88] Սիմեոն Երևանցու հեղինակած կարևոր գործերից է հայոց եկեղեցու Տոնացույցը կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ դրա բարեփոխումը և կանոնակարգումը: Հրատարակված «Տօնացոյց»-ի առաջին հատորում կանոնակարգվել են եկեղեցական տոները, իսկ երկրորդում՝ տոների մանրամասները ներկայացված են աղյուսակների տեսքով: Սիմեոն Երևանցին «Տօնացոյց»-ը տպագրել է

Սուրբ էջմիածնի՝ իր հիմնադրած տպարանում: Այն հետագայում բազմիցս վերահրատարակվել է և գործածվել հայոց եկեղեցիներում, իսկ հրատարակման առթիվ կաթողիկոսը հանդես եկել ընդհանրական մի կոնդակով (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 40):

[89] Բարերարների աջակցությամբ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ձեռնարկած լայնածավալ բարենորոգչական-շինարարական գործունեության շնորհիվ պարսպապատվել է Ս. էջմիածնի վանքը, կառուցվել է նոր սեղանատուն, մոմատներ և դպրատներ, տնտեսական բնույթի շինություններ՝ ամբար, սառցարան, Մայր տաճարի առաստաղում կառուցվել է վերնատուն, վերանորոգվել են տաճարի սյուները, կառուցվել է Սուրբ Հռիփսիմե վանքի հյուսիս-արևմտյան պարիսպը, վերանորոգվել է Երևանի Սուրբ Պետրոս-Պողոս եկեղեցու գմբեթը և այն: Կատարված աշխատանքներն ամփոփվել են շինարարական արձանագրություններում (տե՛ս **Վարազդատ Յարութիւնեան**, *Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները* (պատմական ակնարկ), Ս. էջմիածին, 1996):

[90] Մայր Աթոռի պարսպապատումը կաթողիկոսի առաջին կարևոր ձեռնարկումներից էր, որը նաև կարելի է համահայկական նշանակության նախաձեռնություն համարել: Բնական է, որ շինարարությունը զգալի միջոցներ է պահանջել և Սիմեոն Երևանցին կոնդակներով դիմել է հայությանը՝ Զմյուռնայի (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22), Թոխաթի, Սեբաստիայի և շրջակա բնակավայրերի (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 23), Տիգրանակերտի և շրջակա քաղաքների և գյուղերի (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 24), Հնդկաստանի, Բաղդատի, Բասրայի հայկական թեմերին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 26), խնդրելով միջոցներ հատկացնել այդ կարևոր գործի համար: Հանգանակված միջոցներով կառուցվել են բուրգավոր պարիսպներ (թվով 15-ը), հյուսիսային կողմից՝ գլխավոր դարպասը, որը բացվում էր դեպի գյուղը և կոչվել է «Գյուղի դարպաս» կամ «Դուռն շուկայի», որից օգտվում էր նաև հարևան գյուղերի ազգաբնակչությունը՝ առևտուր անելու նպատակով (**Յովհաննէս Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, էջ 69): Պարիսպն ունեցել է 4 դուռ, որոնցից մեկը փոքր, իսկ մյուս երեքը՝ մեծ և կամարածածկ: Պարսպի արևմտյան կողմում էին պարտեզները և ավազանը, հարավ-արևմուտքում՝ հյուրատունը կամ ուխտավորների բնակարանը, հարավ-արևելքում՝ Ղազարապատը (Ղազար Ա. Ջահկեցու կողմից 1750 թ. կառուցած երկհարկանի հյուրանոցը՝ իր օժանդակ կառույցներով), արևելյան կողմում՝ անասնագոմերը, հյուսիս-արևմուտքում՝ կրպակները (**Ղեւոնդ Ալիշան**, *Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց*, Վենետիկ, 1890, էջ 212): Շինարարությունը տևել է շուրջ 3 տարի, պարսպի և բուրգերի վրա պահպանվել են հովանավորների անուններով արձանագրություններ:

[91] Պահպանվել է համապատասխան արձանագրությունը, որտեղ գրված է կաթողիկոսի պատվերով և Գրիգոր Եղվարդեցի լուսարարի միջոցով տաճարի տանիքի նորոգման մասին. «Աստուծով նորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ տաճարիս և երկուց խորանացն իսկ ի ներքուստ և արտաքուստ, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին Երևանցոյ և աշխատասիրութեամբ լուսարար Գրիգոր վարդապետի Եղվարդեցւոյ ի ՌՄԻ. (1771) թուին մեռոյ: Վարպետ Գասպար» (**Ղեւոնդ Ալիշան**, *Այրարատ*, էջ 221): Կազմված ստացականներից պարզվում է նաև, որ տանիքը նորոգելու համար վճարվել է 77 թուման, 1000 դիան (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 4): Նույն վարպետին վճարվել է նաև խորանների տանիքը նորոգելու համար. «Ես՝ քարտաշ ուստայ Գասպարս, զերկու տանիսն խորանացն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ի ճարայ արարի, ըստ սրբազան հայրապետին քառասուն և հինգ թումանի» (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 7): Առկա է նաև Սուրբ էջմիածնի վանքի այլ նորոգությունների մասին վկայող հաշվեմատյանը (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 1):

[92] Սիմեոն Երևանցու շինարարական ակտիվ գործունեությունը չի սահմանափակվել միայն Սուրբ էջմիածնով ու Վաղարշապատով, այլ ձեռնարկումներից էին՝ 1776 թ. կառուցվում է Սուրբ Հռիփսիմե վանքի հյուսիս-արևմտյան պարիսպը՝ երկու բուրգերով և կամարակապ դարպասով, որի վերաբերյալ առկա է արձանագրություն. «Շնորհիւ Տեառն Աստուծոյ արտաքին պարիսպ սրբոյ վանիցս հանդերձ բրգովք և կամարակապ դրամբս, արդեամբք տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսի սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսին ի յիշատակ իւր և կրկնակի ծնողաց իւրոց հոգևորաց և մարմնաւորաց ի ՌՄԻԵ. (1776), ի յունիսի ելն» (**Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, էջ 187), 1778 թ. նախաձեռնել է Երևանի Սուրբ Պետրոս-Պողոս եկեղեցու գմբեթի վերանորոգումը, որի աշխատանքների վերաբերյալ առկա է արձանագրություն. «Ի թվին ՌՄԻէ. (1778) ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ բոլոր տանիք սրբոյ Եկեղեցւոյս հանդերձ այլ ևս խախուտ տեղեօքն, որք ի յորմունսն և ի սիւնսն էին, արզեամբք և հոգացողութեամբ տեառն Սիմէօնի գերընդիր կաթողիկոսին ամենայն Հայոց և Սրբոյ էջմիածնի, որ ի սոյնոյ քաղաքէ» (**Ղաֆադարյան Կ.**, *Երևան, միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները*, էջ 159, արձ. հմր. 60), իսկ աշխատանքների կատարման վերաբերյալ՝ ունենք հետևյալ վկայությունը. «Պատճառս գրոյս այս է, որ ես՝ Սրբոյ էջմիածնի միաբան Եղվարդեցի Գրիգոր վարդապետս, և ես՝ Երևանցի դերձակ Պօղոսի որդի դերձակ Աղաբաբս... վերակացու եղաք, զի նորոգել տացուք զտանիսն և զսիւնսն Երևանու քաղաքի ներքին մեծ եկեղեցւոյն, որ անուն սրբոյ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի կառուցեալ կայ» և որպես վարձատրություն ստացել են 95 թուման գումար (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 13): 1778 թ. մեկ այլ արձանագրությունում հիշատակվում է Օշականից դեպի հարավ՝ Քասաղ գետի վրայով անցնող 1706 թ. Նահապետ Ա. Եդեսացի կաթողիկոսի կառուցած կամուրջի վերանորոգման մասին. «Նորոգեցաւ կամուրջս ի ձեռն տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Սրբոյ էջմիածնի Երևանցւոյ ի ՌՄԻէ. (1778) թուին մերոյ» (**Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, էջ 260):

[93] Մուղանլու, տարբեր ցեղերի հավաքական անվանումը, որոնք բնակվում էին Մուղանի դաշտավայրում, որը կազմում է Կուր-Արաքսյան դաշտավայրի մասը: Շահ Աբաս I-ն իր իշխանության ամրապնդման նպատակով իր հայրենի ղզլբաշներից «առանձնացնում է» առանձին ցեղերի, որոնք հավաքական անունով կոչվել են «շահսևեններ», այսինքն՝ շահի սիրելիներ: Այդ ցեղերի մի մասին հատկացվում է Մուղանի ընդարձակ արոտավայրերը (**Б. П. Балаян**, «К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев», *Արևելագիտական ժողովածու*, Երևան, 1960, էջ 351): Քոչվորները Մուղանից տեղաշարժվելով՝ անցել են նաև հարևան երկրամասեր, այդ թվում և Արարատյան դաշտ: Մուղանից եկած լինելու պատճառով էլ կոչվել են մուղնալու:

[94] Բայատ (նաև՝ բայաթ, բոյաթ), թյուրքախոս ղզըլբաշական ցեղերից: Առանձին ճյուղեր հաստատվել էին նաև պատմական Արցախի և Ուտիքի տարածքում (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 460):

[95] Խոր Վիրապից բայատ ցեղը վտարվել է 1765 թ., որից հետո վանքը նորոգվել և բարեկարգվել է, իսկ «Ջամբռ»-ում նշված են որոշ վիճակներ, որոնք պատկանել են վանքին: Սակայն, դրանով հանդերձ, վանքն ապահովված չի եղել: 1773 թ. նոյեմբերի 17-ին Սիմեոն Երևանցին կոնդակով կոչ է արել Երևանի և շրջակա գավառների հայ բնակչությանն օգնել վանքին, քանի որ շրջակա գյուղի բնակչությունը հեռացել է և միաբանները մնացել են միայնության ու աղքատության մեջ (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 32): 1775 թ. հոկտեմբերի 10-ի մեկ այլ կոնդակով էլ դիմում է հղվել Նոր Ջուղայի, Շիրազի և այլ նահանգների հայ համայնքներին՝ հօգուտ Խոր Վիրապի հանգանակություններ հավաքելու նպատակով (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 39):

[96] Մոխրաբլուր հնավայր-բնակատեղին է:

[97] Այրըմլու (հայրումլու), թյուրքական քոչվոր ցեղ: Հիմնականում հաստատվել էին Արցախի հյուսիսային մասերում՝ պատմական Գարդման գավառի երբեմնի հայաբնակ գյուղերում, Վերին Խաչենում, Ղազախում և այլուր (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 460-461):

[98] Քյոլանի քրդական քոչվոր ցեղը, նախապես հաստատվելով Դաշտային Ղարաբաղում, ԺԸ. դարում աստիճանաբար տեղափոխվում է Վերի Խաչեն (ժամանակակից Քարվաճառ): Քյոլանիների վերաբնակեցումը Խաչենի տարածքում հանգեցրեց բռնի հայաթափմանը: Եվ պատահական չէ, որ սկզբնաղբյուրներում հայկական այդ երկրամասը կոչվել է նաև Քյոլանու երկիր (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 461): Քյոլանիների՝ Արարատյան դաշտ անցնելու վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել նաև Հովսեփ Էմինը, ով 1766 թ. գտնվել է այս ցեղի դեմ կռված լեզգիների ճամբարում: Նրա վկայությամբ՝ իրենց դեմ դուրս են եկել քոլանի քրդերը, որոնք Նադիր շահի մահից հետո էին Ղարաբաղից հաստատվել Երևանում և դաշնակցում էին Գանձակի Շահվերդի խանի հետ: Ըստ Էմինի՝ վերջիններս Երևանից հասել են Սևանա լճի մոտակայք, որտեղ և տեղի է ունեցել մարտը: Գերի ընկած քրդերի մեջ միևնույն հանդերձանքով եղել են նաև հայեր (**Հովսեփ Էմին**, *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, թարգմ. Գոհար Մուրադյանի և Արամ Թոփչյանի, խմբ. Արտակ Մաղալյան, Երևան, 2018, էջ 303): Սիմեոն Երևանցու «Հիշատակարան»-ում էլ տեղեկություն կա, որ քյոլանիները նպատակ են ունեցել անցնել Տուզախ (Դիզակ)՝ Իբրահիմ խանի մոտ ծառայելու համար: Սակայն, ընդհարվելով լեզգիների հետ՝ ծանր կորուստներ են կրել (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ 494): Սիմեոն Երևանցին երիցս (1766 և 1767 թթ.) հիշատակում է Հուսեյն Ալի խանի կողմից քյոլանիներին Մայր Աթոռի մերձակայքում բնակեցնելու փորձերի մասին: Ակնհայտ էր այն վտանգը, որ կարող էին ներկայացնել խանի հովանավորությամբ գործող ռազմատենչ քրդերը, և կաթողիկոսը վճռականորեն դեմ է եղել այդ նախաձեռնությանը՝ թույլ չտալով քրդերին հաստատվել ու բնակավայր հիմնել Սուրբ Էջմիածնի մոտակայքում:

[99] Հիշատակված է Կարսի Կարմիր վանքը, որը գտնվում է համանուն գյուղում, Անիի ավերակներից հյուսիս:

[100] Աստրախանը ԺԷ. դարի սկզբներից Ռուսաստանում հայկական խոշոր գաղթավայրերից էր, ռուսահայոց թեմի կենտրոններից մեկը, որի հայկական բնակչության թիվը 1763 թ. հաշվվում էր շուրջ 500 տուն (տե՛ս **Պավել Չոբանյան**, *Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ. դարի երկրորդ կեսին*, էջ 224): Քաղաքում գործել են չորս հայկական եկեղեցիներ, դպրոցներ, տպարան: Սկզբնական շրջանում Աստրախանի թեմն իր մեջ ներառել է նաև հայկական բոլոր համայնքները Ռուսաստանում, իսկ Սիմեոն Երևանցու կողմից 1773 թ. ռուսահայոց թեմի առաջնորդ կարգված Հովսեփ Արղությանի (1743-1801) գործունեության շրջանում թեմի մեջ են ներառվել նաև Ղրիմի հայկական բնակավայրերը:

[101] Տեղի հայության ընդվզման պատճառներից նշվում են Բարսեղ վարդապետի կողմից կեղծ կոնդակներով հանդես գալը, նվիրատվությունները տեղ չհասցնելը և այլ մեղադրանքներ: Նման բովանդակությամբ բողոքագիր է ուղարկվել Ղազար Ջահկեցի կաթողիկոսին՝ առաջնորդին փոխելու խնդրանքով (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 11):

[102] Հանդիպելով տեղի առաջնորդ Ստեփաննոս վարդապետի հարուցած խոչընդոտներին՝ նվիրակ Հովհաննես վարդապետը բողոք է հղում Սիմեոն Երևանցի կաթողիկոսին, որն էլ Պետերբուրգ դեսպանության մեկնող Դավիթ վարդապետին հանձնարարում է քննել այդ գործը: Հաջողվում է հասնել նրան, որ Դավիթ վարդապետն «ի հասանիլն ի Հաշտարխան, ըստ պատվիրանի սրբազան հայրապետին, առեալ էր զհաշտութիւն ի մէջ ժողովրդեանն և նուիրակին» (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ 499-500), իսկ Ստեփաննոս վարդապետը եղած հակասությունների հետ կապված 17 կետից բաղկացած մանրամասն բացատրագիր է ուղարկում կաթողիկոսին (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 2):

[103] 1760 թ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսը դիմում է ուղարկում ռուսական արքունիք: Այն ընդհանրական խնդրանք էր՝ ուղղված կայսրուհի Ելիզավետա Պետրովնային, որպեսզի վերջինս «ականջալուր լինի հայերի, վրացիների և մյուս քրիստոնյաների պաշտպան» վրաց Թեյմուրազ II (1744-1762) թագավորի պատվիրակության հաջողմանը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 18) և որևէ պաշտոնական արձագանք չի ունեցել:

[104] Մայր Աթոռի դեսպանությունը սկզբում չի հասել հաջողության: Հայկական պատվիրակությանը մեծապես օժանդակել են ռուսաց արքունիքին մոտ կանգնած հայ գործիչները և մասնավորապես Հովհաննես Լազարյանը (1735-1801) (տե՛ս **Հրանտ Օհանյան**, «Ս. Էջմիածնի և Ռուսական կայսրության փոխհարաբերություններն ըստ Սիմեոն Ա. Երևանցու «Ջամբռի», *Էջմիածին*, Ե, 2017, էջ 84-86):

[105] Եկատերինա II-ի՝ 1768 թ. հունիսի 30-ի հրովարտակով սահմանվում էր. ա) Ռուսական կայսրության տարածքում հայ ժողովուրդը կարող է ազատորեն դավանել իր դավանանքը՝ հայ հոգևոր կանոններով և եկեղեցական կարգերով, բ) Ս. Էջմիածնի կաթողիկոսներին էր վերապահվում եպիսկոպոսներ և այլ հոգևորական պաշտոնյաներ նշանակելու իրավունքը, գ) առանց Հայոց կաթողիկոսի գրավոր թույլտվության որևէ հոգևորական չէր կարող մուտք գործել կայսրության տարածք, որի վերաբերյալ համապատասխան ցուցումներ են ուղարկվում ռուս սահմանապահներին (հրովարտակը պահվում է Մատենադարանում՝ առանձին ցուցակով (ցուցակ 30, «Հրովարտակներ», վավերագիր առաջին): Այն հրատարակվել է դեռևս ԺԹ. դարի կեսերին (տե՛ս *Մեղու Հայաստանի*, 1858, № 45, եր. 356): Այդպիսով՝ ռուսական կայսրությունն իր բարձր հովանու ներքո էր վերցնում հայ բնակչությանը: Ռուսական արքունիքի հետ փոխհարաբերությունների հաստատումը, թեև պայմանավորված էր Աստրախանի թեմի խնդրով, սակայն փաստորեն այն կանոնակարգեց հայոց հոգևոր գործերը Ռուսաստանում: 1773 թ. թեմի առաջնորդ է կարգվում Հովսեփ Արղությանը (1743-1801): Նշենք, որ Հովսեփ Արղությանը վարել է իրեն վստահված թեմի բոլոր արդյունքներից ստացած գումարների և ծախսերի մատյան (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 10, 20):

[106] Մինաս վարդապետն իր հոգևոր թեմի նվիրատվությունների մանրամասն գրանցամատյան է կազմել, որն ունի նաև ծախսերի բաժին: Մատյանը վարվել է 1768-1774 թթ. (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 6):

[107] Գազ - նուրբ և թափանցիկ կտոր՝ մետաքսից, վուշից և այլն:

[108] Հայկական եկեղեցիներում աղոթքի ժամանակ կատարվում է կայսրական մաղթանք՝ «վասն մեծապայծառ տօնախմբութեան նորին», իսկ 1771 թ. Սիմեոն Երևանցին հեղինակում է «Գիրք հանդիսադրութեանց տօնից կայսերականաց» հոգևոր արարողակարգ ներկայացնող գործը, որտեղ կաթողիկոսը գրել է, որ «...ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարէնն, վասն որոյ զայսքան բանս շարադրեցաք վասն մեծապայծառ տօնախմբութեան նորին ... եկեղեցականօք և աշխարհականօք մեծաւ հանդիսաւորութեամբ կատարեսցեն զայս կարգ» (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 43, ՄՄ 7788, 4բ): Մաշտոցյան Մատենադարանում է գտնվում Սիմեոն Երևանցու հեղինակած այս գործը, որն ինքնագիր ստորագրությամբ է:

[109] Կարմիր վանք (Սուրբ Աստվածածին), Բարձր Հայքի Կարին գավառի նշանավոր վանքերից: Գտնվում էր Կարին (Էրզրումի) դաշտում, քաղաքից շուրջ 25 կմ հյուսիս-արևելք: Կոչվել է նաև Հնձուց վանք՝ մոտակա գյուղի անունով: Եղել է գրչության կենտրոն, որի հավաքածուն համարվում է կորված (*Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր Վանուց և շրջակայից*, Անթիլիաս-Լիբանան, 1957, տե՛ս **Յարութիւն Քիւրտեան**, «Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից» (գրախօսական), Բազմավէպ, Վենետիկ, 1959, № 1-2, էջ 46-48):

[110] Կաթոլիկների գործունեության մասին «Ջամբռ»-ի տեղեկություններն Օսմանյան տիրապետության տակ գտնվող՝ Ախալցխա, Բայազետ, Ալաշկերտ, Մանազկերտ և այլ բնակավայրերի վերա-

բերյալ են: Կաթոլիկական քարոզչությունը Սիմեոն Երևանցին դիտարկել է որպես Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի միասնականության պառակտում: Ազգի միասնականության ոգուն է նվիրված նրա «Պարտավճար» գիրքը (**Սիմէօն Երևանցի**, *Պարտավճար*, Ս. Էջմիածին, էջ 201-211): Այն դիտարկվել է նաև ազգային վերածննդի տեսլականի շրջանակներում՝ որպես Հայոց եկեղեցու և հայ բնակչության միասնականության հաստատման ձոն (տե՛ս **Sebouh Aslanian**, "Dispersion History and the Policentric Nation: The Role of Simeon Yerevantsi's Girk or koci Partavcar in the 18th Century Nation Revival", Venise-S. Lazarus, 2004 (Bibliotheque d'Arménologie "*Bazmavep*" № 39):

111 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ 1769 թ., ռուսական ոչ մեծ մի զորաջոկատ ուղարկվել է Կովկաս՝ թուրքական զորքերի դեմ վրացիների հետ համատեղ կռվելու համար: Ռազմական գործողությունները հանգեցրել են հաղորդակցման ուղիների խափանմանը, իսկ Սիմեոն Երևանցու թողած հիշատակությունը բնորոշում է ստեղծված ծանր վիճակը. «...վրդովեցաւ բոլոր աշխարհ ըստ մեծի մասին ... բազմացան գողք և ելուզակք, ապստամբք և կողոպտիչք ի շէնս և հատան ճանապարհք յերթևեկաց, խափանեցան առ և տուրք վաճառականց. և հասարակութիւն ստորադրելոցն և մանաւանդ՝ ազգս հայոց կային ի մէջ մեծի վտանգի և տառապանաց» (**Սիմէօն Երևանցի**, *Գիրք աղօթից որ կոչի Զբօսարան Հոգեւոր*, Ս. Էջմիածին, 1772, էջ 174-175):

112 Ալաշկերտի դաշտի վերոնշյալ՝ Գարսան, Ղարասուն և Նավկա (Նավիկ) գյուղերը գտնվում էին Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ղարաքիլիսայի գավառակում, իսկ Մոլլասուլեյմանը և Միրանկը՝ Ալաշկերտի գավառակում:

113 Սիմեոն Երևանցին մեծ ուշադրություն է դարձրել կաթոլիկների գործունեության վրա: Միայն Ախալցխայի օրինակը բնորոշում է կաթողիկոսի ունեցած անհաշտ դիրքորոշումը պարսկական և օսմանյան տիրապետության սահմաններում կաթոլիկ քարոզչության և նրանց համայնքերի գործունեության հարցում: 1764 թ. Կարինի Կարմիր վանքի միաբաններից Գևորգ Եվդոկացի վարդապետի՝ Ախալցխայում ակտիվ քարոզչությունը մեծապես անհանգստացրել է հայ հոգևորականներին: Գործը հասել է նրան, որ կաթողիկոսը բանագնաց է ուղարկել օսմանյան Մուստաֆա III (1757-1774) սուլթանի մոտ՝ կաթոլիկների գործունեության դեմ այդ իշխանություններից հրամանագիր ստանալու նպատակով: 1765 թ. դեկտեմբերի 2-ով է թվագրված (հիջրայի 1179 ջումադա ալ-ախըրի 19-րդ օրը) Մատենադարանում պահվող սուլթանի համապատասխան հրամանագիր, որն ուղղված էր Կարսի, Ախալցխայի, Չըլդըրի, Բայազետի, Վանի օսմանյան նահանգապետերին, գավառապետերին և այլ պաշտոնյաներին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ց. 29, թղթ. 3ա, վավ. 45): Ինչ վերաբերում է հրամանագրի կատարմանը, ապա մասնավորապես Ախալցխայի օրինակով նշենք, որ 1765-1766 թթ. Օսմանյան կայսրության և Իմերեթի թագավորության միջև բռնկված պատերազմի հետևանքով և ռազմական գործողություններով պայմանավորված՝ տեղի կաթոլիկ համայնքն առժամանակ զերծ է մնացել հետապնդումներից: Թեև 1769 թ. իշխանություններին հաջողվել է ձերբակալել համայնքի առաջնորդներին, սակայն, ինչպես երևում է՝ 1771 թ. նրանք ազատ են արձակվել և սուլթանի հրամանագրով արտաքսվել երկրից (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ց. 29, թղթ. 1դ, վավ. 467): Այն, որ թեկուզ այդպիսի կոշտ գործողությունները բնավ չեն լուծել խնդիրը, երևում է Իմերեթի հոգևոր առաջնորդ Մաքսիմիանոսի՝ Սիմեոն Երևանցուն ուղղված գրությունից, որտեղ վերջինս հավաստիացնում է, որ միջոցներ են ձեռք առնվում նաև տեղի իշխանների աջակցությամբ (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 43): Կաթոլիկների քարոզչություն կար նաև Քարթլի-Կախեթի տարածքում, ինչի վերաբերյալ պահպանվել են արխիվային վավերագրեր: Դավանանքով պայմանավորված բախումները զսպելու համար՝ Հերակլ II-ը 1775 թ. հատուկ հրովարտակով արգելում է հայ կաթոլիկների և լուսավորչականների միջև ամուսնությունները և բռնությամբ դավանանք փոխելը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 39): Թեև նկատելի են վրացական

իշխանությունների կողմից կաթոլիկների նկատմամբ բռնության դեպքեր, մասնավորապես՝ 1777 թ. վրացական Գորիի և հարակից շրջանի հայ կաթոլիկները ենթարկվում են հալածանքների, կազմվել է նրանց ցուցակը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 42):

[114] Եթե նշված երկու արշավանքները համեմատաբար անվնաս են անցնում տեղի հայ ազգաբնակչության համար, ապա բոլորովին այլ ընթացք է ունենում Հերակլ II-ի՝ 1779 թ. Երևան կատարած արշավանքը: Շուրջ երեք ամիս է տևում Երևանի անհաջող պաշարումը, որի ընթացքում վրացական զորքերն ասպատակում ու թալանում են շրջակա բնակավայրերը: Խոսուն են Ս. Էջմիածնում գրված մի գույքամատյանի տվյալները, որում նշված է, թե դրամական և իրեղեն ինչ մեծ քանակի «նվերներ» են այդ ընթացքում տրվել Հերակլին և նրա պաշտոնյաներին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 21):

[115] Խոսքը վենետիկցու կամ վենետիկում բնակվողի մասին է:

[116] Լութերականությունը, որը հիմնվել է ԺԶ. դարի սկզբներին՝ Ռեֆորմացիայի արդյունքում, կոչվել է իր հիմնադրի՝ Մարտին Լութերի անունով: Այն «բարեփոխված» քրիստոնեական եկեղեցին է, որի հիմքում միայն հավատով, այսինքն՝ առանց հոգևորականության և եկեղեցու միջնորդության, Աստծուն հաղորդակցվելով փրկվելու գաղափարն է:

[117] Վենետիկյան Մխիթարյան միաբան Հակոբ Չամչյանի տպագրած «Լուսնացոյց»-ը (1757 թ.) և «Օրացոյց»-ը (1758 թ.) մեծ տարածում էին գտել հայության շրջանում (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., սյունակ 3584): Դրանով է պայմանավորվում հայ իրականության մեջ տոնացույցի կարգավորման անհրաժեշտությունը, որը Սիմեոն Երևանցին համարել է առաջնահերթ և հրատապ գործ՝ պատճառների մասին գրելով Կարինի և Երզնկայի հայությանն ուղղված իր կոնդակում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 37):

[118] Սիմեոն Երևանցի կաթողիկոսի լուսավորչական գործունեության կարևորագույն ձեռնարկումներից էր 1771 թ. տպարանի հիմնադրումը Ս. Էջմիածնում, որի շնորհիվ դարեր շարունակ եվրոպական երկրներում դեգերող տպագրական գործը շարունակվեց նաև մայր հայրենիքում: Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, որ Սիմեոն Երևանցին տպարան հիմնադրելու մտահղացումն ունեցել է դեռևս կաթողիկոս դառնալուց 20 տարի առաջ՝ Հնդկաստանում նվիրակ եղած տարիներին (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան**, *Ազգապատում*, հ. Բ., էջ 3580): Կստահաբար չենք կարող դա պնդել, քանի որ այդ շրջանում հնդկահայ գաղթավայրում տպագրական գործն ինքնին սաղմնային վիճակում էր, բայց հայտնի է, որ Սիմեոն Երևանցին տպագրական հարցերով ակտիվ գործունեություն է ծավալել Կ. Պոլսում: Հետաքրքիր է, որ «Ջամբռ»-ում Ս. Էջմիածնի տպարանի հիմնադրումը թվագրված է 1770-ով, թեև ընդունելի է համարվում տպարանի շինության արձանագրությունում նշված կառուցման տարեթիվը. «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի Սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն՝ հոգաբարձութեամբ տեառն Սիմէոնի սրբազան կաթուղիկոսին Երևանցւոյ՝ արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ Զաքիկենց, ի յիշատակ իւրեան և իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն... Թ[ուին] (Հայոց) ՌՄԻ. (1771)» (**Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի*, էջ 71-72): Նորաստեղծ տպարանը կոչվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով: Տպագրված որոշ գրքերի հիշատակարաններում ներկայացված են տպարանի և տպագրական աշխատանքներում ներգրավված անձիք. Իսահակ եպիսկոպոս Գեղամացին, որը ղեկավարել է տպարանի աշխատանքները, Հարություն Էջմիածնեցին, որը փորագրել և պատրաստել է ծաղկանիշեր, պատկերների, խորանների պարագաները, Գրիգոր սարկավագը (**Սիմէօն Երևանցի**, *Տօնացոյց*, էջ 562), Մկրտիչ Շոռոթեցին, որը պատրաստել է բոլորատառ ու նոտրատառ գրեր և տպագրության համար այլ պարագաներ (**Սիմէօն Երևանցի**, *Զբօսարան Հոգևոր*, էջ 177-178) և ուրիշներ: Ինչպես երևում է աղբյուրների հաղորդած տեղեկություններից՝ տպագրության համար

թուղթը նախապես բերվել է Եվրոպայից, այդ նպատակով նամակագրություն է եղել Կ. Պոլսի, Զմյուռնիայի նվիրակների հետ (տե՛ս *Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Ը., էջ 297, 428 և այլն), Սակայն թղթի ներմուծումը, ըստ ամենայնի, չի ապահովել պահանջարկը, ահա թե ինչու, հաղթահարելով թղթի արտադրությունը սկսելու բազմաթիվ դժվարություններ՝ 1776 թ. բացվում է նաև թղթի գործարան: Այս կարևոր մշակութային ձեռնարկումների և հրատարակությունների հետ կապված զգալի ծախսերն ամփոփվել են հատուկ գրանցամատյանում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 7, վավ. 3): Նշենք նաև, որ տպարանի հիմնադրման 250-ամյակի առթիվ 2021 թ. ապրիլի 16-ին Հայաստանի փոստային կապի ազգային օպերատորը՝ «Հայփոստ»-ը, թողարկել է «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնադրման 250-ամյակը» անունով նամականիշով գեղաթերթիկ, որի վրա պատկերված է կաթողիկոս Սիմեոն Ա. Երևանցին, ինչպես նաև՝ վերոնշյալ տպարանում տպագրված «Տոնացույց»-ի կազմը և գրքի էջերից:

119 «Ջամբռ»-ի Զ. և Է. գլուխներում ներկայացված Էջմիածնի կաթողիկոսության նվիրական թեմերի ցանկերում, որոշ դեպքերում, լրացված են միայն դրանց անունները՝ առանց բնակավայրերի, իսկ ձեռագիր մատյանում մեծ թվով դատարկ էջեր են թողնված: Նույն կերպ՝ չգրված էջեր կան նաև որոշ այլ թեմերի ցանկերում: Ելնելով այդ կառուցվածքից՝ կարող ենք ասել, որ մատյանում մուտքագրված բնակավայրերի ցանկերը հետագայում լրացնելու հարց եղել է, առավել ևս, որ հայտնի է թեմերի ավելի ամբողջական ցուցակ: Այն կաթողիկոսի հանձնարարությամբ կազմել է ատենադպիր Երեմիա Օշականցին (ՄՄ 9120, 1ա-5բ) և հրատարակվել է Գյուտ Աղանյանցի կողմից (տե՛ս *Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., սյունակ 797-806, նաև՝ վերահրատարակվել է՝ **Արմեն Այվազյան**, *Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում*, էջ 244-253):

120 Հոծ հայկական համայնքների գոյության և մշակութային հարուստ ժառանգության տեսանկյունից՝ կարևորել ենք Օսմանյան կայսրության մայրաքաղաքի և նրա շրջակա բնակավայրերի տեղադրության համառոտ ծանոթագրումները:

121 Քարթալ, ժամանակակից Ստամբուլի շրջաններից:

122 Քադըքյոյ, գտնվում է Ստամբուլի ասիական մասում, հայաբնակ պատմական Քաղկեդոնն է, որտեղ 451 թվականին տեղի է ունեցել հայտնի եկեղեցական ժողովը:

123 Սկյուտարը Ստամբուլի ասիական հատվածի թաղամասերից է, որն ունեցել է հոծ հայկական բնակչություն: Այնտեղ այժմ էլ գործում են հայկական վարժարանները:

124 Բեյքոզ, ժամանակակից Ստամբուլի թաղամասերից, ասիական ափում, հյուսիսում հարում է Սև ծովին, արևմուտքում՝ Բոսֆորի նեղուցին: Հնագույն բնակավայր է, որտեղ ապրել են նաև հայեր:

125 Կանդիլլի, Բոսֆորին ափամերձ շրջան Ստամբուլում, Յուսքյուդարի հարևանությամբ: Ունի հայկական և հունական եկեղեցիներ:

126 Ղուռուչեշմէ, Ստամբուլի շրջաններից, որը գտնվում է Բեշիկթաշի հարևանությամբ:

127 Արնավութքյոյ, շրջան և քաղաք Ստամբուլ նահանգում, որտեղ գործել է հայկական խոշոր համայնք: Եղել է դպրոց: Արնավութքյոյը գտնվում էր Էդիրնե/Ադրիանապոլսի միջոցով Ստամբուլը Եվրոպային կապող ցամաքային ճանապարհի վրա:

128 Օրթաքյոյ, պատմական շրջան Բեշիկթաշում (Ստամբուլ), գտնվում է Բոսֆորի նեղուցի եվրոպական ափի կենտրոնում: Կ. Պոլսի հայաշատ թաղամասերից մեկը: Օրթագյուղում են ծնվել Վահան Թեքեյանը, Սրբուհի Տյուսաբը և ուրիշներ: Օրթագյուղում է գտնվում Սուրբ Աստվածածին եկեղեցին, գործում է Թարգմանչաց Վարժարանը:

[129] Բեշիքթաշ, հայտնի թաղամաս Ստամբուլում, քաղաքի եվրոպական հատվածում՝ Բոսֆորի ափին: Բեշիքթաշը հայտնի էր իր ազգային բազմազանությամբ՝ թուրքեր, հույներ, հայեր, վրացիներ և հրեաներ: Բեշիքթաշում է գտնվել հայկական հայտնի Մաքրուհյան վարժարանը:

[130] Խասգյուղ, Ստամբուլի եվրոպական հատվածի թաղամասերից: Ունեցել է հրեա և հայ բնակչություն, հայկական եկեղեցիներ՝ Սուրբ Ստեփանոս, Սուրբ Աստվածածին, Խասգյուղում են գործել Ներսեսյան վարժարանը, Գալֆայան ճեմարան-վարժարանը, Նուբար-Շահնազարյան վարժարանը:

[131] Էյուպ շրջանը Ստամբուլի նահանգում է, եվրոպական հատվածում, Սև ծովի ափին:

[132] Թոփքափի, Կոստանդնուպոլսի կենտրոնական շրջաններից, որտեղ մինչ ԺԹ. դարը գտնվել է Օսմանյան կայսրության գլխավոր պալատը:

[133] Պատմական Ադրիանապոլիսը, Արևելյան Թրակիայի հնագույն քաղաքներից, որը կառուցվել է Հռոմի Ադրիանոս կայսեր կողմից: Հայաբնակ էր մինչև Մեծ եղեռնը:

[134] Գյումյուրջինա, քաղաք Հունաստանի հյուսիս-արևելքում, Կոմոտինի դեմոսի վարչական շրջանը, գտնվում է Արևմտյան Թրակիա պատմական շրջանում, ունեցել է հայկական բնակչություն, այժմ էլ Հունաստանի հայաշատ քաղաքներից է: 1834 թվականից գործում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

[135] Թեքիրդաղ, քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Թեքիրդաղի նահանգում: Նախկինում մտել է Էդիրնեի վիլայեթի մեջ: Եղել է հայաշատ քաղաքներից մեկը: ԺԷ. դարում քաղաքի 30 թաղամասերից երկուսը հայկական էին, ունեցել է հայկական եկեղեցիներ: Եղել է առաջնորդանիստ քաղաք: Հիշատակվում է, որ հայերն այստեղ են գաղթել 1606-1607 թթ. Կամախից (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 464): Մատենադարանում առկա են մի շարք ձեռագրեր, որոնք գրվել են Թեքիրտաղում (ՄՄ 1860, 3368, 5008 և այլն):

[136] Մալղարա, քաղաք և շրջան Թուրքիայի Մարմարայի շրջանում, մտնում է Թեքիրդաղ նահանգի մեջ:

[137] Ուզունքյոփրու քաղաքը գտնվում է Թուրքիայի Էդիրնե նահանգում:

[138] Չորլու, քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Թեքիրդաղի նահանգում: Ունեցել է հայ բնակչություն:

[139] Գալիպոլի քաղաքը գտնվում է Թուրքիայի Չանաքկալեի նահանգում:

[140] Սիլիվրի, քաղաք և շրջան Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Ստամբուլի նահանգում: Շրջանը գտնվում է Մարմարա ծովի ափին: Ունեցել է հայկական բնակչություն: Սիլիվրի քաղաքում է ծնվել Ռուբեն Սևակը:

[141] Բուրսա, հնագույն և խոշոր քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում: ԺԴ. դարում մի քանի տասնամյակ եղել է Օսմանյան կայսրության մայրաքաղաքը: Եղել է հայաշատ բնակավայրերից մեկը, որտեղ հայերը բնակվել են մինչև 1922 թ.: Քաղաքի հայերն ունեցել են իրենց եկեղեցին:

[142] Էնիչէ, քաղաք և շրջան թուրքական Չանաքկալեի նահանգում, հայկական անվանումը նաև՝ Ենիջե:

[143] Բանդիրմա, քաղաք հյուսիս-արևմտյան Թուրքիայում, Մարմարա ծովի ափին: Քաղաքի հայ բնակչության թիվը մի քանի հազար է եղել:

[144] Բալըքեսիր, քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, գտնվում է Մարմարա ծովից ոչ շատ հեռու: Հայաբնակ է եղել մինչև Մեծ եղեռնը:

[145] Քյոթահիա կամ Կուտինա քաղաքը Թուրքիայի արևմտյան հատվածում է: ԺԶ. դարից հայտնի է խեցեգործությամբ, հատկապես հախճապակե կերտվածքների արտադրությամբ: Կուտինայի արհեստագործական թաղամասերի զգալի մասում աշխատել են հայերը և հույները: Կուտինայի խեցեգործության մեջ առաջնահերթ էր դեկորատիվ սալիկների պատրաստումը, որոնք կիրառված են հայկական և հունական եկեղեցիներում, օսմանյան մզկիթները հարդարելու համար: Ծննդով Կուտինայից է Կոմիտասը: Կուտինայից հայտնի են նաև հայկական ձեռագրեր:

[146] Տավսանլի, քաղաք և շրջան Թուրքիայի Քյոթահիա նահանգում:

[147] Բիլեջիք, քաղաք Թուրքիայի արևմտյան մասում, Բիլեջիկի նահանգում: Մինչև Մեծ եղեռնը հայերի թիվն անցել է տասնյակ հազարից, եղել են հայկական եկեղեցիներ:

[148] Յալովա, քաղաք և շրջան Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Յալովայի նահանգում: Քաղաքը գտնվում է Մարմարա ծովի ափին: Հայերի թիվը մինչև Մեծ եղեռնը հասել է մոտավորապես 1000-ի:

[149] Գետելեճ, փոքր գյուղ Բուրսա նահանգի Մարմարայի շրջանում:

[150] Այոլյոզ, գյուղ Բուրսա նահանգի Մարմարայի հարավային ծովափին:

[151] Ենիշեհիր, քաղաք և շրջան Թուրքիայի Բուրսա նահանգում:

[152] Ասլանբեկ (Արսլանբեյ, Ասլանբեյ), գյուղ Թուրքիայի Կոջաելիի նահանգում: Գյուղում հայերը բնակվել են մինչև Մեծ Եղեռը: Ըստ Հրաչյա Աճառյանի, ով անդրադարձել է նաև Ասլանբեկի բարբառին, գյուղն ամբողջովին հայաբնակ է եղել, թեև շրջապատված էր թուրքական, լազ և չերքեզական գյուղերով (տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, *Ուսումնասիրութիւններ հայկական գաւառաբանութեան*, Վենետիկ, 1898):

[153] Ադապազար, քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Սակարիա նահանգում, Բոսֆորից մոտ 120 կմ արևելք, Սաքարիա գետի ձախ ափին, մեծաթիվ քրիստոնեա բնակչությամբ: Հայերի թիվը քաղաքում անցել է 10.000-ից: Ունեցել է հայկական եկեղեցիներ, կից՝ նախակրթարաններ և վարժարաններ:

[154] Արմաշ, հայերով բնակեցված փոքր քաղաք Մարմարա ծովի արևելյան ափին: Հայտնի է Արմաշի Սուրբ Աստվածածին վանքը, որը եղել է վանական կենտրոն: Ունեցել է ուսումնարան, որի տեսուչն է եղել Մաղաքիա Օրմանյանը: Քաղաքում գործել է հայկական տպարան, հրատարակվել է «Լույս» հանդեսը: Արմաշը հայտնի էր նաև որպես գրչության կենտրոն, ունեցել է մատենադարան (տե՛ս **Յակոբ Թոփճեան**, *Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, Վենետիկ, 1962):

[155] Ֆերիզլի, քաղաք և շրջան Թուրքիայի Սակարիայի նահանգում: Բնակեցված է եղել հայերով:

[156] Սապանջա, քաղաք և շրջան Թուրքիայի Սակարիայի նահանգում, Մարմարայի շրջանում, Սապանջա լճի մոտակայքում:

[157] Իզմիթ, քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմտյան մասում, Մարմարա ծովի ափին: Քաղաքը գտնվում է Կոջաելի նահանգում: Եղել է Օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներից, գործել է Սուրբ Աստվածածին եկեղեցին:

[158] Ռումելի, Օսմանյան կայսրության եվրոպական նահանգների հավաքական անվանումը, որի մեջ մտել են Ղրիմը, Ազովի ծովի շրջակա բնակավայրերը և որտեղ բնակվել է հոծ հայկական բնակչություն՝ իր յուրատեսակ մշակութային ժառանգությամբ:

[159] Թեոդոսիա, ղրիմահայության տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոնը: 1778 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայերը զանգվածաբար գաղթել են Ղրիմից, որի պատճառով քաղաքը հայաթափվել է: Նրանք հաստատվել են Դոնի ափի մոտ՝ հիմնադրելով Նոր Նախիջևանը (տե՛ս **Վլադիմիր Բարխուդարյան**, *Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.)*, Երևան, 1967):

[160] Բելոգորսկ, Ղրիմի քաղաքներից, միջնադարում առևտրային երթուղիների խաչմերուկ: ԺԸ. դարի հիշատակությունների համաձայն՝ քաղաքը եղել է Ղրիմի խոշորագույն կենտրոններից, իսկ բնակչության մեծ մասը՝ եղել են հայերը, հույները և հրեաները: Հայերն ունեցել են իրենց եկեղեցիները: Բելոգորսկը եղել է հայկական գրչության կենտրոններից: Ունեցել է հայկական թաղամաս, որը կոչվել է Ղարախաչ (**Վարդգես Միքայելյան**, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*, էջ 113);

[161] Բախչիսարայ, քաղաք Ղրիմում, Ղրիմի խանության նախկին մայրաքաղաքը: Ղրիմում թաթար-ների իշխանության ժամանակ հիշատակվում է քաղաքում 300 տուն հայ ազգաբնակչության մասին (**Վարդգես Միքայելյան**, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*, էջ 115): Այստեղ գրված ձեռագրերի թիվը, որոնք պահվում են Մատենադարանում, անցնում է մեկ տասնյակից: Ռուսական տիրապետության հաստատումից հետո՝ 1778 թ. գաղթի հետևանքով հայաթափվել է:

[162] Սիմֆերոպոլ, Ղրիմի մայրաքաղաքը: Այստեղ ևս հոծ հայկական բնակչություն է եղել՝ Հայ առա-քելական և կաթոլիկ եկեղեցիներով:

[163] Եվպատորիա, քաղաք Ղրիմում, թերակղզու արևմտյան ափին, Եվպատորիա է անվանվել ռու-սական տիրապետության ներքո անցնելուց հետո (1784 թ.): Ըստ վկայությունների՝ ԺԸ. սկզբներին հայ բնակչության թիվը կազմել է 90 տուն, իսկ դարի կեսերին՝ 450 հոգի: Հայտնի էր Սուրբ Նիկո-ղայոս հայկական եկեղեցին, որը, սակայն, այրվել է թաթարների կողմից:

[164] Արմյանսկ քաղաքը Ղրիմի հյուսիսային մասում է: Հիմնադրվել է հայերի կողմից՝ 1730-ական թթ.: Գտնվում է թերակղզին մայրցամաքին կապող պարանոցի վրա:

[165] Գրուշևկա, գյուղ Ղրիմում, թերակղզու հարավ-արևելյան մասում: ԺԴ. դարից հիշատակվում է որպես հայաբնակ, կառուցվել են հայկական եկեղեցիներ: Հայաբնակ է եղել մինչև 1778 թ., երբ Ղրիմի բազմահազար այլ բնակչության հետ միասին հայերը վերաբնակեցվել են Նոր Նախիջևանի տարածում:

[166] Տոպոլևկա գյուղը թերակղզու հարավ-արևելյան մասում է: Հիմնադրվել է հայերի կողմից՝ ԺԳ.-ԺԴ. դարերում: Եղել է մարդաշատ գյուղ՝ երկու հայկական եկեղեցիներով (**Վարդգես Միքայելյան**, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*, էջ 117): Հայկական այլ բնակավայրերի թվում ևս այստեղից հայերը 1778 թ. վերաբնակեցվել են Ռուսական կայսրության տարածք:

[167] Ջեմլյանիչնոե գյուղը թերակղզու հարավ-արևելյան մասում: Ունեցել է հայ բնակչություն, հիշա-տակվում է հայկական եկեղեցու գոյության մասին:

[168] Հին Ղրիմը թերակղզու հարավ-արևելյան մասում է, Ղրիմի հայաշատ բնակավայրերից մեկը, նաև՝ հայկական վաճառականության խոշոր կենտրոն: Հայտնի է քաղաքի Սուրբ Խաչ եկեղեցին, թեև ԺԳ. դարի կեսերից սկսած քաղաքում գործել են շուրջ տաս հայկական եկեղեցիներ (տե՛ս **Վարդգես Միքայելյան**, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*, էջ 93):

[169] Կերչ քաղաքը թերակղզու արևելյան մասում է: Օսմանյան տիրապետության ժամանակ անկում է ապրել, իսկ հայերի գործունեությունը Կերչում ակտիվացել է հատկապես ռուսական տիրապե-տության ժամանակ, երբ այն դարձել է առևտրի խոշոր կենտրոն: 19-20-րդ դարերում քաղաքում գործել է հայկական եկեղեցի և դպրոց:

[170] Գլազովկա, գյուղ Ղրիմում, թերակղզու արևելյան մասում:

[171] Թամանը կայարան և ադմինիստրատիվ կենտրոն է Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասում: Հայերի բնակության վերաբերյալ վկայություններ կան սկսած Ժ. դարից:

[172] Թեմրուք քաղաքը Ռուսաստանում է, Կրասնոդարի երկրամասում: ԺԸ. դարում հիշատակվում է հայկական բնակչության մասին:

[173] Աչուևո, գյուղ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասում, Ազովի ծովի ափին:

[174] Օզու (Ղարաքիրման) քաղաքը Սև ծովի հյուսիս-արևմտյան ափին է, Հարավային Բուգի գետա-բերանից շուրջ 30 կմ արևմուտք:

[175] Նշված բնակավայրերը ներկայիս Ռումինիայի տարածում գտնվող քաղաքներ և գյուղեր են, որոնք ունեցել են հայկական բնակչություն, այդ թվում և մայրաքաղաք Բուխարեստը (Բուքրեշ):

[176] Մոլդովայի հանրապետության մայրաքաղաք Քիշնևը:

[177] Երեք բնակավայրերն էլ ներկայիս Ուկրանիայի կազմում են, երկրի արևմտյան մասում:

[178] Նշված են Սև ծովի ամբողջ արևմտյան ավազանում սփռված բնակավայրերը, որոնք մեծ մասամբ այժմյան Բուլղարիայի տարածքում են: Պահպանվել է 1766-1767 թթ. կազմված Ուռումելու երկրից հավաքված գանձանակի և այլ դրամային մուտքերի հաշվեմատյանը (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 4):

[179] Թոխաթ (պատմական Եվդոկիա) քաղաքը և մյուս բնակավայերը Սեբաստիայի շրջանի հայկական բնակավայրերն են (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 470):

[180] Սիվրիհիսար միջնադարյան քաղաքը հիմնադրել է Բյուզանդիայի Հուստինիանոս I կայսրը (527-565): Գտնվում է Անկարայից շուրջ 185 կմ հարավ-արևմուտք: Վաղ շրջանից էլ եղել է հայաբնակ: Ունեցել է հայկական դպրոցներ:

[181] Հիմնականում Անկյուրայի նահանգի բնակավայրերն են, որոնք սփռված էին Սև ծովի հարավային ափերից մինչև Միջերկրական ծով, այդ թվում նաև՝ Փոքր Ասիայի հարավում և հարավ-արևմուտքում գտնվող մի շարք բնակավայրեր:

[182] Էրզրումի և Կարսի ենթագլուխների համար ձեռագիր մատյանում բազմաթիվ չգրված էջեր կան:

[183] Հայկական բնակավայրերի այս կարևոր ցանկը լիարժեք բնութագրում է Էրզրումի նահանգի Բայազետ գավառի հայաշատ պատկերը ԺԸ. դարում, ինչը զգալիորեն փոխվեց 1829-1830 թթ. արևմտահայերի մեծ գաղթի հետևանքով:

[184] Տեղեկություններն այս թեմերի վերաբերյալ բացառիկ են: Նշված բնակավայրերը սփռված են Փոքր Ասիայի արևմտյան ափին՝ քաղաքներ, գյուղեր և ավաններ, ինչպես նաև՝ մերձակա կղզիները (բնակավայրերի վերաբերյալ մանրամասները տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 477-479):

[185] «Ջամբռ»-ում Իրաքի և հնդկահայ թեմերը ներկայացված են միասնաբար: Ըստ ամենայնի՝ դա պայմանավորված էր հնդկահայ համայնքի առևտրի գործում Իրաքի ունեցած կարևոր տարանցիկ դերով և այդպիսով՝ սերտ կապերով: «Ջամբռ»-ի տեղեկությունը լրացվում է 1763 թ. Սիմեոն Երևանցու մի կոնդակով, որի միասնական հասցեատերը ևս Բաղդատի, Բասրայի և Հնդկաստանի հայությունն է: Կոնդակում նույնաբար թվարկված են «Ջամբռ»-ում նշված հնդկահայ քաղաքները (*Դիւան Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի*, մասն Բ., Էջմիածնի կաթողիկոսներու կոնդակներ (1705-1800), աշխատասիրեց՝ Վարուժան արքեպիսկոպոս, Սպահան, 2015, թիւ 82 կոնդակ, էջ 142):

[186] Բանգլադեշի (Բենգալիայի) հայաբնակ բնակավայրերը գտնվում էին Գանգեսի դելտայում, Բենգալյան ծովածոցի շրջանում: Անգլիական Օստ-Հնդկական ընկերության հիմնադրած Կալկաթան արդեն ԺԷ. դարի առաջին կեսից ուներ հայ բնակչություն: Առևտրի և արհեստների բնագավառներում ներգրավված տեղի հայ համայնքն ուներ իր եկեղեցիները, 1724 թ. կառուցվել է քաղաքի առաջին եկեղեցին՝ Ս. Նազարեթը, հիմնվել են դպրոցներ, իսկ 1821 թ.՝ հայտնի Հայոց մարդասիրական ճեմարանը, որը գործում է մինչև օրս (**Mesrovb J. Seth**, *Armenians in India*, Calcutta, 1937, p. 419-420): Դաքքան ներկայիս Բանգլադեշ պետության մայրաքաղաքն է: Հայկական համայնքը Դաքքայում ձևավորվել է ԺԸ. դարի սկզբներից: Հայաշատ է եղել հետաքրքիր ճարտարապետական լուծումներով 1781 թ. կառուցված (նավի տեսքով) Սուրբ Հարություն եկեղեցու թաղամասը, որը տեղի հայաբնակների անունով կոչվել է Արմանիտոլա: Եկեղեցին կանգուն է մինչ օրս:

[187] Բենգալյան ծոցի հարավ-արևմտյան ափին գտնվող քաղաքներից հայտնի Մադրասը (այժմ՝ Չեննայ), ուրտեղ դեռևս ԺԶ. դարում ձևավորված հայ համայնքն իր ակտիվ դերակատարումն է ունեցել տարածաշրջանի առևտրական հարաբերություններում: 1770-ական թթ. քաղաքում գործել է

հայ ազատագրական գաղափարախոսությամբ ոգեշնչված Մադրասի խմբակը, որպես գրական-հաղախական կազմակերպություն: 1771 թ. հիմնադրվել է հայկական տպարան: 1794 թ. Մադրասում է լույս տեսել առաջին հայկական պարբերականը՝ «Ազդարարը»:

188 Մյանմայի (Բիրմա, հայկական անվանումը՝ Փեկուա) նախկին մայրաքաղաք Ռանգունն (Յանգոն) է, թեև Գ. Բաղալյանն այն նույնացրել է Բանգլադեշի ծայր հյուսիսում գտնվող Ռանգփուր քաղաքի հետ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 479): Հայտնի է, որ ԺԸ. դարից սկսած Հնդկաստանից և Նոր Ջուղայից հայերն արդեն հաստատվել էին Բիրմայում՝ զբաղվելով առևտրով ու արհեստներով, թեև ավելի վաղ հիշատակություններ ևս կան (տե՛ս **Սեպուհ Ասլանյան**, «Հնդկահայ վաճառականության պատմությունից (XVIII դ. սկիզբ)», *Պատմա-բանասիրական հանդես*, № 1, 2006, էջ 262): ԺԹ. դարի սկզբներից գործել է տեղի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որը վերակառուցումից հետո կանգուն է մինչ օրս:

189 Հնդկաստանի արևմտյան ափի խոշոր քաղաքները՝ Սուրաթ (Գուջարաթ նահանգում) և Մումբայ (նախկինում՝ Բոմբեյ): ԺԶ. դարից Սուրաթն առաջին անգլիական հենակետն էր Հնդկաստանի արևմտյան ափին, ուրտեղ հայերի տապանաքարեր են գտնվել, որոնք թվագրված են 1579-ով: 1778 թ. կառուցվել է հայկական եկեղեցի (**Mesrovb J. Seth**, *Armenians in India*, p. 225-226): Առաջին հայ առևտրականները Մումբայում հաստատվել են 1676 թ., իսկ համայնքը սկսել է ձևավորվել ԺԷ. դարի երկրորդ կեսից: Գործել է հայկական եկեղեցի, լույս են տեսել պարբերականներ (**Mesrovb J. Seth**, *Armenians in India*, p. 293-294):

190 Ֆայզաբադը և Պատնան գտնվում են Հնդկաստանի հյուսիսային մասում՝ Նեպալի հարևանությամբ:

191 Գուանչժոու (Կանտոն) Չինաստանի խոշորագույն քաղաքներից մեկը: Թեև ոչ մեծաթիվ, բայց հայ առևտրականներ հաստատվել են այս քաղաքում, հիշատակություն կա հայկական եկեղեցու կառուցման մասին:

192 Մակաո (չին. Աոմին), պորտուգալական գաղութ դարձած քաղաքը գտնվում է Հարավչինական ծովի ափին, անմիջականորեն Սիցզյանի գետաբերանում:

193 Ջակարտա (նախկինում՝ Բատավիա), Ինդոնեզիայի մայրաքաղաքը, որը գտնվում է Ճավա կղզու հյուսիս-արևմտյան մասում: ԺԷ. դարից սկսած հայ առևտրականները՝ հիմնականում Նոր Ջուղայից և Հնդկաստանից հաստատվում են այս քաղաքում՝ հիմնելով համայնքային հաստատություններ:

194 Առևտրային գործունեության նպատակով հայերը Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում, որը կառուցված է Լուզոն կղզու վրա, հաստատվել են ԺԶ. դարի կեսերից սկսած:

195 Գիլանը՝ Ռեշտ (Ռոեշտ) և Մազանդարան՝ Սարի (Սալիա) կենտրոնով, Իրանի հարավկասպիական նահանգներն են:

196 Թիֆլիսի հայկական նշված եկեղեցիներից պահպանվել են միայն Սուրբ Նշանը և Քարափի Սուրբ Գևորգը: Մյուսներն ավերվել կամ քանդվել են (տե՛ս **Պարույր Մուրադյան**, *Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները* (ուսումնասիրություն և աղբյուրներ), Ս. Էջմիածին, 2009):

197 Թվարկված գյուղերը Թիֆլիսից հարավ՝ այժմ Քվեմո Քարթլիի մարզի (Բոռչալու) բնակավայրերն են, որոնցից առավել հայաշատը Կումիսն էր՝ Օրբելյանների պատմական տիրույթը, ուրտեղ գործել է հայկական եկեղեցի և թաղված են Օրբելյան իշխանները:

198 Միսխանան Լոռի բերդ գյուղն է, մյուսները՝ Թիֆլիսից հարավ և հարավ-արևմուտք ընկած շրջանների գյուղերն են, որոնցում դեռևս կարելի է հանդիպել պատմամշակութային հուշարձաններ, ինչպես օրինակ՝ Մուխաթում (Թիֆլիսից հարավ-արևմուտք, նախկին Թեթրիծղարո վարչական շրջան), ուրտեղ հաստատված հայ բնակչությունը թեև վրացախոս է, բայց պահպանել է հայկական Սուրբ Գևորգ եկեղեցին:

199 Որոշ դեպքերում Թիֆլիսի թաղամասերն առաջնորդական եկամուտները չեն ուղարկել Ս. Էջ-միածնին: Այդ են վկայում այն բազմաթիվ խոստումնագրերը, որոնք ուղղված են Սիմեոն Երևանցի կաթողիկոսին և որոնցում նշված է, որ հոգևորականները զղջում են իրենց անհնազանդության համար ու պարտավորվում են այսուհետ հնազանդ լինել իրենց առաջնորդ Զաքարիա վարդապետին և ստացված բաժնի 2/3-ը տալ Մայր Աթոռին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 13, նաև՝ վավ. 11, 14, 16, 22, 23, 24, 33, 41):

200 Կախեթը Վրաստանի արևելյան պատմական ընդարձակ տարածքն է: Կախեթի թագավոր Հերակլ II-ը հոր՝ Քարթլիի թագավոր Թեյմուրազ II-ի մահից հետո՝ 1762 թ., միավորում է Քարթլին և Կախեթը մեկ միասնական պետության մեջ: Սիմեոն Երևանցին մեծապես կարևորել է տարածա-շրջանում կարևոր դերակատարում ստանձնած այդ երկրի տիրակալի հետ բարիդրացիական փոխ-հարաբերությունները և մշտական նամակագրական կապի մեջ է եղել Վրաց թագավորի հետ:

201 Քիսեղ, Կախեթի հյուսիս-արևմտյան մասը (ներկայիս Ախմետայի շրջան), որը գերազանցապես բնակեցված էր կովկասցի մահմեդականներով: Հետաքրքիր դրվագ է, որ Կովկաս անցնելիս Հովսեփ Էմինին հաջողվել է տեղի մահմեդականների մոտ ապրել է շուրջ 6 ամիս (**Հովսեփ Էմին**, *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, էջ 299-300):

202 Գորի, պատմական քաղաք Վրաստանի կենտրոնական մասում: Կառուցել է վրաց թագավոր Դավիթ Շինարարը՝ ԺԲ. դարի սկզբներին: Ըստ հայկական աղբյուրների՝ կառուցապատվել է որպես հայկական քաղաք: Հետագա շրջանում ևս հայ ազգաբնակչությունը զգալի թիվ է կազմել, ունեցել է եկեղեցիներ և դպրոցներ:

203 Ղազախի տարածքի մի մասը, համապատասխանում է ներկայիս Տավուշի մարզին: Ինչպես վե-րը նշվեց՝ Բորչալուն Վրաստանի հարավային և հարավ-արևելյան հատվածն է, որն անվանակոչվել է ԺԷ. դարի սկզբներից այդտեղ հաստատված համանուն ցեղերի անունով և հետագայում կազմել ընդարձակ վարչաքաղաքական միավոր՝ Թիֆլիսի նահանգի կազմում: Բամբականորը (Փամբակ) Լոռիի կենտրոնական տարածքն է՝ Դիլիջանից մինչև Ջաջուռի լեռնանցք, որն իր մեջ է ներառում ներկայիս Վանաձոր և Սպիտակ քաղաքների հատվածները:

204 Այս հատվածի գրչագիրը տարբերվում է (ՄՄ 978, 162բ): Կարող ենք ասել, որ այն հետագայի հավելում է, քանի որ Նոր Նախիջևանը հիմնադրվել է 1779 թ., իսկ Գրիգորիոպոլն ավելի ուշ՝ 1792 թ. (**Վլադիմիր Բարխուդարյան**, *Նոր Նախիջևանի Հայկական գաղութի պատմություն*, էջ 69), իսկ Ղրիմը Ռուսական կայսրությանն է միացվել միայն 1783 թ.:

205 Վաղարշապատի շրջակա գյուղերն են. դեպի հյուսիս՝ Դողսը (գտնվում է Վաղարշապատից 4 կմ հյուսիս, Արագած լեռան ստորոտում: Հայտնի է 894 թ. Սմբատ Ա. Բագրատունու գլխավորված հայկական ուժերի հաղթական ճակատամարտով ընդդեմ Ատրպատականի էմիր Ափշինի), Օշակա-նը, հյուսիս-արևելք՝ Եղվարդը, հարավ-արևմուտք՝ Արտիմետը (Ալիբեկլու, Արմավիրի մարզում, Վաղարշապատից 2 կմ հարավ-արևմուտք), արևելք՝ Փարաքարը, Գեղանիստը (Գյոյգումբեթ, Արա-րատի մարզում, Հրազդան գետի աջ ափին, Արգավանդից ոչ հեռու), Կավակերտը (գտնվել է Հրազ-դան գետի ստորին հոսանքի աջ ափին), Արբաթը (Արարատի մարզում է, Փարաքարից ոչ հեռու՝ դեպի հարավ), Ղուկասավանը (Քյալարա, Արարատի մարզում, Մասիս քաղաքից 6 կմ հյուսիս, Հրազդան գետի հովտում):

206 Արաքս գետի աջ ափին, Սուրմալուի տարածքում էր Սուրմառին բերդաքաղաքը, Խաչասար լեռան հարավային ստորոտին և հիշատակվում է դեռևս միջնադարից: Ինչպես երևում է՝ հայաբնակ էր նաև ԺԸ. դարում: Կողբը և Ալեթլուն, որոնք Սուրմալուի արևելյան մասում են, Արաքս գետից ոչ հեռու էին:

[207] Ծաղկունյաց ձոր (Դարաչիչակ), գավառ (մահալ) Երևանի խանությունում, տարածվում էր Հրազդանի աջակողմյան վտակ Հանքավան գետի ավազանում և համապատասխանում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառին:
[208] Անդրկուրյան և մերձկասպյան հայաբնակ շրջաններն են, որոնք կազմում էին համանուն խանությունները: Թեև դրանք հիշատակված են որպես էջմիածնապատկան, սակայն պետք է ասել, որ պատմական նախընթաց շրջանում, մասնավորապես Շիրվանի և Շամախու թեմերի պատկանելության հարցը բազմիցս վիճարկվել է:
[209] Մովսես Կաղանկատվացին և Ստեփանոս Օրբելյանը, որոնց երկերից առատ նյութ է քաղել Սիմեոն Երևանցին:
[210] Նոմոս - օրենք, կարգ, կանոն:
[211] Սուրբ Թադեի նշանավոր վանքը պատմական Պարսկահայքում՝ Մակուի շրջանում: Ըստ Մովսես Խորենացու հիշատակած ավանդության՝ կառուցվել է հին հեթանոսական տաճարի տեղում՝ ի հիշատակ Հայաստանում քրիստոնեություն տարածող Թադեոս առաքյալի: Եղել է գրչության նշանավոր կենտրոն: 2008 թ. գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում:
[212] Աղվանից երկրորդ կաթողիկոսը, որ գահակալել է 595-629 թթ.:
[213] Կյուրիոն I, վրաց կաթողիկոս (599-614/616 թթ.): Ծնունդով Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ջավախք գավառից: Նրա աթոռակալման ժամանակ վրաց եկեղեցին ընդունեց քաղկեդոնականություն, և տեղի ունեցավ հայ-վրացական եկեղեցական բաժանումը:
[214] Կոլոնիա (Կողոնիա, Կողոնք), քաղաք-ամրոց Փոքր Հայքում, Օրոնտես շրջանում, Գայլ գետի ափին: Ժամանակակից Կոյլհիսար բնակավայրն է Շապին Գարահիսարի գավառում (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 485):
[215] Համադան, հնագույն (մարա-պարսկական Էքբատանը) քաղաք Իրանի արևմուտքում: Հայերով է բնակեցվել 1603 թ. շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթի հետևանքով:
[216] Ներսես Ա. (689-706), Աղվանից կաթողիկոս: Հարել է քաղկեդոնականությանը՝ փորձելով Գարդմանի իշխան Վարազ-Տրդատի կին Սպարամի հովանավորությամբ տարածել այն Արցախում: Այդ իրադարձությունները ներկայացված են հայ պատմիչների երկերում (տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ, Երևան, 2011, էջ 364, **Յովհաննէս Դրասխանակերտցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն (երկու գրքով), Գիրք Ա., Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 418-419):
[217] Գարդման (Գարդմանք) Մեծ Հայքի Ուտիք աշխարհի գավառներից, Զակամ և Շամքոր գետերի միջև: Ավելի ուշ շրջանում հայտնի Վերին Զակամն է:
[218] Շիրակավան գյուղաքաղաքն Այրարատի Շիրակ գավառում, Ախուրյան գետի աջ ափին, որը Սմբատ Ա. Բագրատունին (890-914) դարձրել է Հայաստանի մայրաքաղաքը (890-928): Հայտնի է՝ 862 թ. այստեղ գումարված եկեղեցական ժողովը, ուռեղ քննարկվել է Կ. Պոլսի Փոտ պատրիարքի՝ քաղկեդոնականություն ընդունելու մասին նամակը:
[219] Համամ Արևելցի (Համամ-Գրիգոր, Համամ Բագրատունի, Համամ Բարեպաշտ), Թ. դարի երկրորդ կեսին Արցախ-Խաչենի իշխան, ապա Հայոց Արևելից կողմանց թագավոր:
[220] Նշված իրադարձությունները ներկայացված են «Ջամբռ»-ի ոչ թե երկրորդ, այլ երրորդ գլխում:
[221] Ուշագրավ այն տեղեկությունը, թե 1634 թ. «ժողովուրդքն Խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից» դիմել են պարսից Շահ Սեֆիին՝ հայտնելով, թե իրենք «ի բնէ» հանդիսացել են Ս. Էջմիածնի

վիճակներ և չեն ցանկացել ենթարկվել Գանձասարի կաթողիկոսին ու շահը բավարարել է այդ խնդրանքը, պարզաբանման կարիք ունի (տե՛ս **Հրանտ Օհանյան**, Սիմեոն Երևանցու «Ջամբռը» որպես Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսությունների փոխհարաբերությունների պատմության սկզբնաղբյուր, *Պատմություն և մշակույթ*, Երևան, 2016, էջ 287-288): Նախ, սույն գրությունն առանձին թղթի վրա է, որը փակցված է Մատենադարանում պահվող այդ վավերագրին: Մինչդեռ տվյալ հրովարտակը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ց. 29, թղթ. 1ա, վավ. 57) շահ Սեֆիի այն հրամանագիրն է, որը վերաբերում է բացառապես Քաշաթաղի հայերից եկեղեցական տուրքերի գանձման իրավունքն Ս. Էջմիածնին վերապահելուն (տե՛ս *ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 109, վավ. 22): Այդպիսի հրամանագրի գոյությունն ինքնին անհավանական է թվում, քանի որ հայտնի է նույն՝ 1634 թ. դեկտեմբերի 31-ի շահ Սեֆիի մեկ այլ հրովարտակ, որով Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին տրված իրավունքները Գանձակի, Ղարաբաղի, Շիրվանի, Շամախիի և Ջարուզբիլի (պատմական Ծար գավառը՝ Վերին Խաչենը) նկատմամբ փոխանցվել են Գրիգոր կաթողիկոսին (տե՛ս *ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 110, վավ. 23):

[222] Թեև 1650 թ. շահ Աբաս II-ի (1642-1667) հրովարտակով Շամախու և Շիրվանի թեմերն անցել են Ս. Էջմիածնին (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 147, վավ. 42), սակայն ընդամենը երկու տարի անց՝ 1652 թ. տեսնում ենք, որ Գանձասարի Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսը շահական հրամանագրով Շիրվանի թեմը վերադարձրել է, ընդ որում՝ շահի խիստ կարգադրությամբ, որ իր «հրամանը բոլորը համարեն պարտականություն և ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն» (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 28, վավ. 1): Բայց, այդքանով պայքարը չի դադարել, քանի որ Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսին հաջողվել է ստանալ շահական նոր հրովարտակ և Ս. Էջմիածնի ենթակայությանը վերադարձնել Շիրվանի և Շամախու թեմերը (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 176, վավ. 82):

[223] Ուշագրավ են Մայր Աթոռի հետ հաշտվելու Պետրոս Խանձքեցու (1653-1675) ջանքերը: Այդ նպատակով նա Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու (1655-1680) օրոք՝ 1672 թ., ժամանել է Մայր Աթոռ և արժանացել հայրապետական գավազանի: Դա նշանակում էր Պետրոսի կաթողիկոսության հաստատում, իսկ գավազանի շնորհմամբ ցուցադրվում է Ս. Էջմիածնի գերագահությունը (**Լեոնիկ Մկրտումյան**, «Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք», *Լրաբեր Հասարակական գիտությունների*, № 1, 2000, էջ 94):

[224] Ղազվին քաղաքը գտնվում է Իրանի հյուսիսում, Թեհրանից շուրջ 140 կմ հյուսիս-արևմուտք: ԺԶ. դարում եղել է Սեֆյան պետության մայրաքաղաքը:

[225] 1677 թ. օգոստոսի 25-ով թվագրված այդ պարտավորագրով Սիմեոն Խոտորաշենցին ստանձնում է. «զոր ինչ առնեմ առանց հրամանի քո չառնեմ, որքան կենդանի իցես, իսկ եթէ մինչև իմ հայոց երկիրն գնալն նմա կամ վաղճանիլ պատահի կամ յօտար երկիր, որ ոչ լինի ձեռնուհաս, ես զայս վերոյ գրեալս կատարեմ առանց պատճառի: Այլև զայս հաստատաբար գրեմ Սիմէօն կաթուղիկոսս, որ ամենևին իմ մարմնաւոր ազգականացն կաթուղիկոսութեան անուն չլինի, որ թէ իմ ազգէն սևագլուխ, այլ յառաջ գայ, որ ես յայս կաթուղիկոսութեան յաստիճանս չհրաւիրեմ, որ թէ զայս գրեցելոցս դառնամ, այլ իմն մտածեմ դատապարտիմ» (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 1):

[226] Ուշագրավ այդ համախոսականը կազմել են Արցախի մելիքները և եպիսկոպոսները 1691 թ. փետրվարի 10-ին և հղել Եղիազար Ա. Այնթափցի (1681-1690) կաթողիկոսին, ուրտեղ մասնավորապես գրված է. «Մեք՝ բոլոր երկրիս Աղուանից առաջնորդք, վարդապետք, քահանայք, մելիքք, երեսփոխք, տանուտերք, վաճառականք, և հողագործք և առհասարակ մեծ ու փոքր ժողովուրդք, գրեցաք այս թուղթ դաշնագրութիւն և նամակ ուխտի և միաբանութեան այսպէս, քանզի որ մերումս ժամանակի երկու կաթուղիկոս եղեն հակառակ միմիանց և աւերեցին զաթոռն մեր սուրբ Գանձասար և

մեf երբեմն նորա կողմն լինելով և երբեմն նորա, ոչ գիտելով, թէ ով ի նոցանէ բարեկամիցէ աթոռոյն մերոյ և այժմ իմացաf ճշմարտութիւն, որ Երեմիա կաթուղիկոսն զորինչ ժողովում է վասն աթոռոյն է և զորինչ Սիմոնն հաւաfում է իւր հօր տունն է մսղում և այլ տէղ կորուսանում, մանաւանդ մինչև ցայսօր խաբեաց զմեզ, ասելով՝ կերթամ Գանձասար և ոչ գնաց՝ ուխտազանց լինելով և այժմ պարսաւէ զաթոռն մեր և արհամարէ զսրբութիւն նորա: Վասն որոյ գրեցաf պայման և սահման և հաստատեցաf կնfով և մօհրով, այսուհետև մեր հայրապետն Երեմիա կաթուղիկոսէ, այլ Սիմոնին հետ բան չունիմf զկնի այսորիկ ովոf զՍիմոնն ուզէ և կաթուղիկոսի տեղ դնէ թէ՛ վարդապետ, թէ՛ եպիսկոպոս, թէ՛ fահանայ և թէ՛ աշխարհական սև երես լինի» (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 2):

[227] Ամենայն հայոց կաթողիկոսներին նվիրված «Ջամբռ»-ի Դ. գլխում Եղիազար Ա.-ի գահակալման տարիները նշված են 1682-1690 թթ.:

[228] Սիմեոն Խոտորաշենցին Ջրաբերդում կառուցում և 1691 թ. օծում է Երից Մանկանց վանfը՝ այն դարձնելով իր աթոռանիստը: Իրողություն է դառնում այն հանգամանfը, որ եթե նախկինում Գանձասարի կաթողիկոսների հետ միաժամակ հանդես էին գալիս հակաթոռներ և պայfար էր գնում նրանց միջև, այժմ միաժամանակ հանդես եկող կաթողիկոսներից յուրաfանչյուրը հաստատվում է իր նստավայրում՝ ունենալով աջակիցներ ինչպես տեղի հայ մելիfներից, այնպես էլ մահմեդական խաներից: Պառակտման հետագա խորացմանը նպաստում է նաև նրանց կողմից աթոռակիցների նշանակումը. Երեմիա Հասան-Ջալալյանն իր եղբոր որդի Եսայուն, Սիմեոն Խոտորաշենցին՝ իր ազգական Ներսեսին (տե՛ս **Լեոնիկ Մկրտումյան**, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ.*, Երևան, 2006, էջ 75):

[229] 1701 թ. շահ Սուլթան Հուսեյնի կողմից հաստատվել է Եսայի Հասան-Ջալալյանի կաթողիկոսական իրավունfները, որը մահացած Երեմիա կաթողիկոսի եղբայր Վելիջան-բեկ Գ.-ի ավագ որդին էր (տե՛ս **Արտակ Մաղալյան**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.*, Երևան, 2007, էջ 133):

[230] Կոնդակում, որը հասցեագրված է Աղվանfի հոգևորականներին, իշխաններին և ժողովրդին, կոչ է արվում հեռու մնալ Ներսեսից և այդպիսով վերջ տալ խռովություններին և ավերածություններին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 39):

[231] Ղապալա, Աղվանfի պատմական Ուտան գավառը, որտեղ գտնվել է հնագույն մայրաfաղաf Կապաղակը, Կուրի ձախափնյա Սեբոջ գետի ավազանում (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 486):

[232] Դաղստանում և ներկայիս Ադրբեջանի հյուսիս-արևելյան մասում բնակվող լեզգիները ԺԸ. դարում բազմիցս են ասպատակել հարևան երկրները, ինչի մասին վկայություններ կան նաև Սիմեոն Երևանցու «Հիշատակարան»-ում: Ուշագրավ դրվագներից է, որ շուրջ մեկ տարի լեզգիների բնակավայրում ապրած Հովսեփ Էմինն ակամայից մասնակից է դառնում 1766 թ. Գանձակի Շահվերդի խանի կոչով Տավուշի շամշադին ցեղի դեմ ուղղված արշավանfին, որի ընթացfում, սակայն, լեզգիներն ասպատակում են նաև շրջակա բնակավայրերը՝ հասնելով մինչև Սևանա լիճ (**Հովսեփ Էմին**, *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, էջ 302):

[233] Աֆղանստանի հարավում գտնվող Ղանդահար կամ Կանդահար fաղաfը նաև նույնանուն վիլայեթի կենտրոնն է: ԺԸ. դարում եղել է աֆղանական պետության մայրաfաղաfը:

[234] 1722 թ. Պետրոս I-ը ձեռնարկում է իր հայտնի Կասպիական արշավանfը, որի արդյունfում ռուսական տիրապետությունն է հաստատվում նաև Կասպից ծովի հարավ-արևմտյան մասում գտնվող պարսկական Գիլան նահանգում:

[235] Շահվերդի խանը կառավարել է Գանձակի խանությունը 1747-1760 թթ.:

[236] 1763 թ. փետրվարի 5-ով է թվագրված Աղվանից ժողովրդի համախոսականը, որը ստորագրողները հաստատակամ նշում են, որ Գանձասարի օրինական կաթողիկոս են ընդունում Հովհաննեսին և մերժում Իսրայելին. «այսուհետև մեր հայրապետն Յօհաննէս կաթուղիկոսն է, որ է եղբօր որդի Յիսայի կաթուղիկոսին, որ եղև մեր հայրապետ» և որ «Իսրայելին հետ բան չունեմք: Ջկնի այսորիկ ով ոք զԻսրայելն ուզի և կաթուղիկոսի տեղ դնէ, թէ վարդապետ, թէ եպիսկոպոս, թէ քահանայ, և թէ աշխարհական, սև երես լինի»: Համախոսականում նաև հետևյալ մեղադրանքներ են ներկայացված. «և որչափ արծաթեղէն, ոսկեղէն, զառպափ և այլ զարդ եկեղեցական, զոր աստի յառաջ Ներսէս կաթուղիկոսն անուամբն մեծի աթոռոյս Գանձասարայ ի երկրիցն մեր Աղուանից ժողովեալ է և չի տվեալ աթոռոյն մեր, զամենայն մի [ը]ստ միոջէ պահանջեմք Իսրայելէն» (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 5):

[237] 1736 թ. Նադիր շահը ճանաչել է Արցախի մելիքների ինքնիշխանությունը և վերահաստատել նրանց ինքնավարությունը՝ Խամսայի մելիքություններ (հինգ մահալ, պարսկերեն՝ «Մահալ-ե խամսե») անունով: Այդ մելիքություններն էին՝ Գյուլիստան, Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա և Դիզակ: Դիզակի տիրակալ Մելիք-Եգանը նշանակվել է ընդհանուր կառավարիչ և ուղղակիորեն ենթարկվում էր շահի եղբայր Իբրահիմ խանին, որը նստում էր Ատրպատականի Թավրիզ քաղաքում (**Արտակ Մաղալյան**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.*, էջ 34-35):

[238] 1763 թ. հունվարին Ներսես կաթողիկոսի եղբոր թոռ Իսրայել Ջրաբերդցին կաթողիկոս է օծվում: Մեկ ամիս անց Ղարաբաղի Իբրահիմ խանի նախաձեռնությամբ և մի քանի մելիքների ու հոգևորականների մասնակցությամբ ժողովը մերժում է Իսրայելի ընտրությունն այն պատճառաբանությամբ, որ Ներսեսը պետք է իրենից հետո աթոռը թողներ Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին: Արդյունքում՝ ժողովը կաթողիկոս է ընտրում Հովհաննես Հասան-Ջալալյանին: Աթոռի համար սկսված տևական վեճում ներգրավված էին Գանձակի, Երևանի և Ղարաբաղի խաները, վրաց թագավորությունը՝ ի դեմս Հերակլ II-ի և հայ մելիքները (տե՛ս **Լեոնիկ Մկրտումյան**, *Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ.*, էջ 142-183):

[239] Գանձակի Շահվերդի խանը Սիմեոն Երևանցի կաթողիկոսին և Երևանի Հուսեյն Ալի խանին ուղղված իր նամակներում շարունակել է պնդել Իսրայելի կաթողիկոսական իրավունքների ճանաչումը (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., էջ 336-337):

[240] Արցախի ներքին կյանքում նշանակալի է նաև Հովհաննես կաթողիկոսի ներդրումը, ով բնութագրվում է որպես հայ ազատագրական շարժման Հասան-Ջալալյանների տոհմի արժանի շարունակող (տե՛ս **Արտակ Մաղալյան**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.*, էջ 140): Նա կապեր է հաստատել ռուսահայ գործիչների, հնդկահայ ազատագրական խմբակի հետ, աջակցել է Հովսեփ Էմինին: Վերջինս մեծ դրվատանքով է հիշատակել Հովհաննես Հասան-Ջալալյանին՝ պատկերավոր նկարագրելով կաթողիկոսի հետ հանդիպումը Գանձասարում, որի խորհրդով և երաշխավորագրով էլ մեկնել է Շուշի և ընդունելություն ստացել Իբրահիմ խանի մոտ (**Հովսեփ Էմին**, *Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները*, էջ 334-336):

[241] Դիարբեքիրը (հին անվանումը՝ Ամիդ, Մեծ Հայքի Աղձնիք նահանգում՝ Արևմտյան Տիգրիսի աջ ափին), որն իր բազմադարյա պատմության ընթացքում մշտապես հանդիսացել է վարչաքաղաքական կենտրոն:

[242] Սիմեոն Երևանցին նշում է Աղթամարի երեք կաթողիկոսների, որոնք տարբեր ժամանակներում դիմել են օսմանյան սուլթաններին և ստացել հրովարտակներ, որոնցով իրենց ենթակայությունն են հաստատել որոշ թեմերի նկատմամբ: 1574 թ., երբ Գրիգոր Բ. Աղթամարցին ստանում է սուլթանի հրովարտակն իրեն ենթակա թեմերն ընդարձակելու մասին, Աղթամարի կաթողիկոսությունը,

ինչպես երևում է վկայություններից, օսմանյան հարկապահանջության հետևանքով գտնվում էր ծանրագույն վիճակում (**Վրեժ Վարդանյան**, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն*, Ս. Էջմիածին, 2017, էջ 137-138):

[243] Խոշաբի գավառակը Վանա լճի ավազանում է՝ նրա հարավ-արևելյան մասում:

[244] Օսմանյան կայսրությունում Աղթամարի կաթողիկոսների կողմից Մայր Աթոռի նվիրակների գործունեությանը խոչընդոտներ հարուցելն այդ շրջանում պարբերական բնույթ է կրել: Այդպիսի օրինակ է 1661 թ. Աղթամարի Մարտիրոս կաթողիկոսի դիմումն օսմանյան պաշտոնյաներին, որով տեղեկացնում է, թե Ս. Էջմիածին ուղարկվող հավաքված գումարներն իր աթոռի հասույթն են և, հետևաբար, պետք է իրեն հանձնվեն (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ց. 29, թղթ. 3ա, վավ. 16): 1662 թ. համանման խնդիրներ են ծագում նաև Բաղեշի հայկական թեմում: Մասնավորապես՝ տեղի իշխանությունները հայերից պահանջում են, որ եկեղեցուն հասանելիք հարկը վճարեն ոչ թե Ս. Էջմիածնին, այլ Աղթամարին: Խնդիրը հաջողվում է հարթել միայն օսմանյան իշխանությունների միջամտությամբ (**Վրեժ Վարդանյան**, «Էջմիածնի ընդհանրական աթոռի և Աղթամարի կաթողիկոսության հարաբերությունների շուրջ (XII դ. - XIX դարավերջ)», *Պատմա-բանասիրական հանդես*, 2012, № 2, էջ 161:

[245] Եդդիքիլիսա (թուրք. «յոթ եկեղեցի»), Վարագա նշանավոր վանքի օտար անվանումը: Վանքը գտնվում էր Վան քաղաքից արևելք, Վարագ լեռան արևմտյան լանջին: Վանքի համալիրի յոթ եկեղեցիներն էին՝ Սուրբ Աստվածածին, Սուրբ Գևորգ, Սուրբ Խաչ, Սուրբ Հովհաննես, Սուրբ Նշան, Սուրբ Սիոն և Սուրբ Սոֆիա: Նշանավոր էր Սուրբ Աստվածածինը, որը հատակագծով նմանեցվում էր Աղթամարի Սուրբ Խաչին: Սուրբ Գևորգ եկեղեցու գավթում էին թաղված Վասպուրականի վերջին թագավոր Սենեքերիմ Արծրունին (990-1021) և նրա կինը՝ Խուշուշ թագուհին: Վերջինս է կառուցել համալիրի Սուրբ Սոֆիա եկեղեցին: Վարագավանքը եղել է եպիսկոպոսանիստ, որի մեջ մտել են Վան քաղաքը և շրջակա բնակավայրերը: Եղել է գրչության կենտրոն և մատենադարան: Վարագավանքի առաջնորդներից է եղել Խրիմյան Հայրիկը, որի օրոք համալիրը մշակութային և տնտեսական նշանակալի զարթոնք է ապրել: Այժմ լիովին ավերակ է:

[246] Ստակ (սպիտակ, աքչե) - արծաթե դրամ, մանրադրամ՝ ամենափոքր թուրքական դրամը: Նախապես նշանակել է պարզապես արծաթե դրամ: Հետագայում՝ այն օգտագործվել է օսմանյան մանրադրամը հատկորոշելու համար, համարժեք էր 1/3 փարայի կամ 1/12 դուրուշի (**Симеон Ереванци**, *Джамбр*, էջ 390, ծանոթ. 99):

[247] Դոլթուղ ֆերմանի՝ ծածուկ, գաղտնի կազմված թուղթ, հրաման (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 425, ծանոթ. 15):

[248] Զկարողանալով պահել Ս. Էջմիածնից վերցված թեմերը՝ Նիկողայոս Սպարկերտցին Մայր Աթոռի հետ հարաբերությունների կարգավորումից հետո փայլեր է ձեռնարկել ապահովագրելու աթոռի եղած ունեցվածքը: Այդ նպատակով նա բանակցություններ է վարում օսմանյան իշխանությունների հետ և պայմանավորվածություն է ձեռք բերվում, որ թուրք զինվորականները չպետք է մուտք գործեին Աղթամար և հարկեր գանձեն վանականներից (**Վրեժ Վարդանյան**, *Աղթամարի կաթողիկոսության պատմություն*, էջ 197):

[249] Թովմա Բ. Աղթամարցին հետագա տարիներին ևս բարիդրացիություն է պահպանել Ս. Էջմիածնի հետ, ինչը երևում է նաև 1778 թ. մի գրությունից, որում նկարագրելով հարկահանության հետևանքով ժողովրդի անտանելի վիճակը՝ կաթողիկոսն օգնություն է խնդրել Սիմեոն Երևանցուց (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 14):

[250] Հաճն (Հաճին), Լեռնային Կիլիկիայի հնագույն քաղաքներից, Սարոս գետի աջ կողմում:

[251] 1431 թ. Գրիգոր Մակվեցու կողմից ձեռք բերված գյուղերի թվում էին Վաղարշապատը, Աշտարակը, Բաթռինջը, Նորագավիթը, Աղավնատունը, Քիրաշլուն և Մուղնին (տե՛ս *ՄԴՎ*, Կալվածագրեր, պրակ առաջին, վավ. 5, էջ 66-76):

[252] Շորլու, նույնացվում է ներկայիս Ջորակ (Ջանգիլար) գյուղի հետ, որը գտնվում է Մասիս քաղաքից 5 կմ հեռավորության վրա (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 487):

[253] Ճիմճիմե (չմչա) - ճահիճ, ճահճուտ:

[254] Գամըշլըք - շամբ, եղեգնապուրակ (*Ջամբռ,* էջ 102, ծանոթ. 4), ղամիշ (ղամիշլուխ), եղեգ, եղեգնուտ (ՀԲԲ, հ. Գ., էջ 184):

[255] Բազրկյան յոլի - առևտրական ճանապարհ (*Jambr*, էջ 198, ծանոթ. 6):

[256] Ջանկի (Ջանգի), Հրազդան գետի անվանումներից:

[257] Հայերեն կալվածագիրը պահպանվել է (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 14բ):

[258] Հաջի են կոչվել Մեքքա՝ Քաբբա ուխտի գնացած մահմեդականները:

[259] Շաղվարդ (Շաղվերթի ջուր) գետն Արաքսի ավազանում է, նրա Քասաղ վտակի աջ օժանդակը: Սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևելյան լանջերի աղբյուրներից:

[260] Կարբիբասարի մահալը (գավառը) պարսկական տիրապետության շրջանում Երևանի խանության վարչատարածքային միավորներից էր, որի կենտրոնը եղել է Կարբի գյուղը: Ներառել է խանության կենտրոնական շրջանները՝ Հրազդան գետի միջին հոսանքից արևմուտք ընկած և Քասաղ գետի միջին ու ստորին հոսանքի շրջանները:

[261] Ինչպես երևում է՝ տվյալ պարբերությունը թյուրիմացաբար է դուրս մնացել հիմնական ձեռագրից, քանի որ ՄՄ 4592 ձեռագրում առկա է հետևյալ նշումը. «այս չէ գրեցեալ մոռացմամբ» (ՄՄ 4592, 4բ):

[262] Նովռուզ-բայրամ (բառացի՝ «նոր օր»): Պարսկական նոր տարվա առաջին օրը, որը սկսվում է գարնանային գիշերահավասարին՝ մարտի 21-ին:

[263] Իմամարխ տեղավայրի մասին խոսվում է ոչ թե ԺԸ., այլ ԺԵ. գլխում, իսկ կալվածագիրն ԻԱ. գլխում է՝ ԻԴ. համարի ներքո է:

[264] Ղարախաչ լեռն Արագածի լեռնազանգվածում է, նրա արևմտյան կողմում:

[265] Աքնեհի - մշակ, հողագործ, ցանքս անող (*Ջամբռ,* էջ 115, ծանոթ. 1):

[266] Պատմագիր հայոց կաթողիկոս Աբրահամ Գ. Կրետացին (1734-1737) իր գործունեությունը սկսել է որպես Երուսաղեմի միաբան և նվիրակ, իսկ 1709-1734 թթ. եղել է Թրակիայի Թեքիրդաղ (Ռոդոսթո) քաղաքի թեմի առաջնորդ, որի համար հաճախ կոչվել է նաև Թեքիրդաղցի:

[267] Ընդունելի է համարվում, որ Հակոբ Ջուղայեցին Կոստանդնուպոլիս է մեկնել 1679 թ., որտեղ և մահացել է 1680 թ.:

[268] Ղաջարները նշանակալի դերակատարում են ունեցել Սեֆյան Իրանի ռազմավարչական համակարգում և շահ Աբաս I-ի կողմից վերաբնակեցվել են նաև Արևելյան Հայաստանում: Ղաջարական ծագում են ունեցել Երևանի և Գանձակի (Ղարաբաղի) բեկլարբեկությունների (ապա՝ խանությունների) կառավարիչները: Ուշագրավ է այն, որ երբ Շուշիում հաստատված ջևանշիր Փանահ խանն ուժ է հավաքում, ղաջարները միջամտում են: Մասնավորապես՝ Կասպից ծովի հարավ-արևելյան Աստարաբադ (ներկայիս Գոլեստան շրջանը) նահանգի կառավարիչ Մուհամմադ Հասան խան Ղաջարը 1757 թ. մեծ ուժերով արշավանք է կազմակերպում վերջինիս դեմ, սակայն արդյունքի չի հասնում (տե՛ս **Միրզա Ադիգեոզալ-բէկ**, *Ղարաբաղ-Նամէ*, աշխատասիրությամբ Արտակ Մաղալյանի, Երևան, 2016, էջ 19, 54-55): Ղաջարների հետագա վերընթացը 1796 թվականին էր, երբ նրանք գրավում են իշխանությունն Իրանում և հիմնադրում Ղաջարական դինաստիան (1796-1925):

[269] Պարսկական տիրապետության շրջանում Դրխբուլաղ է կոչվել Մեծ Հայքի պատմական Կոտայք գավառը:
[270] Նկատենք, որ հիջրայի 1069 թվականը համապատասխանում է 1658 թ., սակայն ոչ հայոց 1109 (1660 թ.), ինչպես որ գրված է ձեռագրում: Ըստ ամենայնի՝ հայոց թվականի վրիպակ է, ինչը հաստատվում է տվյալ նվիրատվության հրատարակված կալվածագրով (տե՛ս *ՄՊՎ*, *Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ. – ԺԸ. դդ.)*, վավ. 10, էջ 74):
[271] Թեյշեբաինի (Կարմիր բլուր), Ռուսա Բ.-ի հիմնադրած ուրարտական քաղաքը, Հրազդան գետի ձախ ափին:
[272] Խոսքը Գետառի մասին է, Հրազդանի ձախ վտակը, որը վերին հոսանքի շրջանում կոչվել է նաև Դրխբուլաղ:
[273] Թեև տեղադրությունը հայտնի չէ, բայց քանի որ հիշատակվող մյուս՝ Յայճի և Գյոլբենդ գյուղերը Գեղարքունիքի տարածում են, ապա Ամիրի գյուղը ևս, կարելի է կարծել, որ գտնվել է Սևանա լճի արևմտյան ափերին:
[274] Կալվածագիրը հրատարակված է, տե՛ս *ՄՊՎ*, *Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ.-ԺԸ. դդ.)*, վավ. 11, էջ 76:
[275] Յուզբաշի՝ զորքի հարյուրապետ (*ՀԼԲՀ*, հ. Դ., էջ 119):
[276] Քոչվոր, գաղթական, թափառական, ոչ նստակյաց կյանք վարող, վաչկատուն:
[277] Թեև ձեռագրում գրված է Հակոբ կաթողիկոսը, սակայն հաջորդիվ հիշատակված հրամանագիրը, որը թվագրված է հիջրայի ՌԿ. (1060) և ՌԿԱ. (1061) թվականներով, որը համապատասխանում է 1650 և 1651 թթ., տրվել է ոչ թե Հակոբ Ե. Ջուղայեցու օրոք, որը գահակալել է 1655 թ., այլ Փիլիպոս Ա. Աղբակեցու (1633-1655): Ուշագրավ է, որ ՄՄ 4592-ում (12բ) գրված է ճիշտ տարբերակը և այս վրիպակը, պետք է կարծել, պատահմամբ է տեղ գտել ձեռագրում:
[278] Քյուրաքանլու քրդական ցեղը հիշատակվում է Երևանի նահանգի տարածքում, իսկ համանուն անունով գյուղն այժմ կոչվում է Տերիկ և գտնվում է Արմավիրի մարզում, Վաղարշապատ քաղաքից 5 կմ հյուսիս-արևմուտք:
[279] Արարատի մարզի գյուղերից են, որոնք ընկած են Արտաշատից հյուսիս-արևմուտք. Դիմիտրովը (Ղոյլուհասար, Գայլաձոր Ներքին)՝ 6-7 կմ, Նշավանը (Ալիբաբաթ, Ալփավա)՝ 7-8 կմ և Մխչյանը (Իմամշարլու, Իմամշալու)՝ 8-9 կմ:
[280] Պետք է լինի հիջրայի ոչ թե ՌՄՁԲ. (1282), ինչպես ձեռագրում է, այլ ՌՃՁԲ. (1182), որն էլ կհամապատասխանի հայոց ՌՄԺԷ.՝ 1768 թ.:
[281] Հնգորդ, այսինքն՝ բահրա, որը կազմում էր բնամթերքի 1/5 մասը:
[282] Մուլք (տասանորդ), հողի սեփականատիրոջը վճարվող հարկը, որը կազմում էր բնամթերքի 1/10 մասը:
[283] Հակոբ Փափազյանը, ուսումնասիրելով տվյալ երկու հարկացուցակները, առաջինը թվագրել է 1728-ով, իսկ երկրորդը՝ 1731-ով (տե՛ս **Հակոբ Փափազյան**, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները», *Բանբեր Մատենադարանի*, № 5, Երևան, 1960, էջ 431-465):
[284] 1747 թ. Նադիր շահի սպանությունից հետո նրա ստեղծած պետությունը սկսվում է արագորեն քայքայվել: Նախ՝ կարևոր իրողություն էր աֆղանական անկախ պետության ստեղծումը, բացի դա՝ ներքին պայքար է սկսվում բուն Իրանում, որի արդյունքում երկրի տարբեր մասերում հաստատվում են առանձին իշխանություններ: Արևելյան շրջանները՝ մասնավորապես Խորասանը, հայտնվում է աֆղանների ազդեցության տակ, Կասպից ծովի հարավային շրջաններում՝ Աստարաբադում և

Մազանդարանում իշխում էին ղաջարները, Ատրպատականում իշխանությունը գտնվում էր Նադիրի զորահրամանատարներից մեկի՝ ծագումով աֆղան Ազատ խանի ձեռքում, իսկ երկրի հարավային շրջաններում գերիշխում էր Քերիմ խանը:

[285] Գերիշխանության համար ծավալված անզիջում պայքարում Հարավային Իրանի տիրակալ Քերիմ խանի գլխավոր հակառակորդն Ատրպատականի Ազատ խանն էր: Թեև երկուստեք արշավանքները Հայաստանից հեռու էին տեղի ունենում, սակայն դրանք ամենածանր հետևանքներն են ունեցել Նոր Ջուղայի հայության համար, որոնք ոչ միայն մեծ վնասներ են կրել, այլև ստիպված էին 6000 թուման ռազմատուգանք վճարել Սպահան մտած Ազատ խանին (տե՛ս **Ստեփանոս Երէց**, *Հանգիտագիրք*, էջ 57-59): Սիմեոն Երևանցու կաթողիկոսության շրջանում Քերիմ խանն արդեն պարտության էր մատնել իր հիմնական հակառակորդներին և իշխում էր Իրանի մեծ մասում: Ազատ խանից Սպահանը գրավելով, ըստ վկայությունների, Քերիմ խանը բարյացկամ վերաբերմունք է ցույց տալիս տեղի հայության նկատմամբ, իսկ երկրի բնակիչներին երեք տարով ազատում է հարկերից (տե՛ս *Նադիր շահի ղարաշրջանի պատմագրական հուշարձանները*, էջ 101): Մասնավոր ուշադրության է արժանի պարսից գահակալի կողմից Սիմեոն կաթողիկոսի աթոռակալումը հաստատող հրամանագիրը, որը տնտեսական զգալի ինքնուրույնություն էր ապահովում Մայր Աթոռի համար (տե՛ս *ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 91-95, վավ. 49):

[286] Արդաղանը ժամանակակից Իրանի արևմտյան լեռնային մասի միջնադարյան հավաքական անվանումն է: Սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Ատրպատական, հարավում՝ Ֆարս (Պարսք), արևելքում՝ Մեծ Աղի անապատ, արևմուտքում՝ Խուզիստան և այժմյան Իրաք (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 490):

[287] Ատրպենան՝ պատմական Ատրպատականը (Իրանական Ադրբեջան):

[288] Վաղարշապատից ոչ հեռու՝ 4 կմ հյուսիս, Արագածի ստորոտում, Քասաղ գետի մոտ գտնվող հայտնի Դոխս գյուղը, որտեղ 894 թ. տեղի ունեցած ճակատամարտում Ատրպատականի Յուսուֆ ամիրայի զորքերը պարտություն են կրել Բագրատունյաց արքա Սմբատ Ա.-ի գլխավորած հայկական ուժերից:

[289] Կոշի Սուրբ Ստեփանոս վանքը գտնվում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղից հյուսիս-արևելք: Վանքի եկեղեցին կառուցվել է է. դարում, գործել մինչև ԺԸ. դարը:

[290] Զագավանքը՝ Գետարգելի հայտնի Սուրբ Նշան վանքը, Կոտայքի մարզի Առինջ գյուղից 2 կմ հարավ-արևելք է: Հիմնադրվել է վաղ միջնադարում, հնագույն եկեղեցին է. դարի է: 1293 թ. Գետարգելում է պահվել Քրիստոսի խաչափայտի մասունքը՝ Սուրբ Նշանը, որը պահելու համար էլ կառուցվել է երկհարկանի գմբեթավոր եկեղեցի: Գետարգելի Սուրբ Նշանը (ոսկե խաչը) այժմ գտնվում է Սուրբ էջմիածնում և մյուռոնօրհնության ժամանակ կաթողիկոսն առաջինը նրանով է օրհնում Սուրբ Մյուռոնը:

[291] Արագածոտնի մարզի Ուշի գյուղն Արագած լեռան հարավ-արևելյան փեշերին է, Աշտարակից՝ 5 կմ հյուսիս:

[292] Հավուց թառ, գտնվում է Գողթ գյուղի դիմաց, Ազատ գետի Գողթ վտակի ձախափնյա բլուրների վրա: Հայաստանի հնագույն վանքերից է, որի հիմնադրումը վանքի եկեղեցական ավանդությունը կապում է Սահակ Պարթև (348-439) կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի (360-440) անվան հետ: «Ամենափրկիչ» է կոչվել այստեղ պահված փայտյա փորագրազարդ խաչի շնորհիվ, որն այժմ գտնվում է Սուրբ էջմիածնում: ԺԳ.-Ե. դարերում եղել է գրչության նշանավոր կենտրոն, որտեղ գրված տասնյակ ձեռագրեր են պահպանված (տե՛ս **Կարեն Մաթևոսյան**, *Հավուց թառի վանքը*, Երևան, 2012):

293 Գեղարդավանքից 7 կմ հարավ-արևելք, լեռան լանջին գտնվող Աղջոց վանքը (Սուրբ Ստեփանոս վանք), ըստ ավանդության, հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը՝ Դ. դարի սկզբներին: Գործել է մինչև ԺԸ. դարի կեսերը:

294 Ջառ (Ծառ) գյուղը գտնվում է Աբովյան քաղաքից 10 կմ արևելք, Հատիս լեռան հարավարևելյան լանջին:

295 Տեղերի վանքն Արագածոտնի մարզում է, Բյուրականից հյուսիս, նախկին Տեղեր գյուղում: Վանքի հայտնի՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին, ըստ շինարարության արձանագրության, 1213-1232 թթ. կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանի կինը՝ Մամախաթունը:

296 Աղձք գյուղն Արագածոտնի մարզի հնագույն բնակավայրերից է և գտնվում է Աշտարակ քաղաքից 7-8 կմ արևմուտք: Գյուղում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ հնություններ և հուշարձաններ, այդ թվում՝ Արշակունիների դամբարանը:

297 Անանիա առաքյալի անապատը զբաղեցրել է Երևանի Սուրբ Ջորավոր Աստվածածին եկեղեցու մուտքի արևմտյան տարածքը: Ըստ Առաքել Դավրիժեցու՝ հիմնվել է ԺԷ. դարի առաջին կեսին՝ Երևանի Ամիրգունե խանի կառավարման տարիներին (**Առաքել Դավրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, էջ 245): Անապատում ծավալվել է կրթական և մշակութային ակտիվ գործունեություն, դպրոցի համբավը տարածվել է նաև հարևան երկրներում: Եղել է գրչավայր: Ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր:

298 Սեֆյանների տոհմի վերջին գահակալ շահ Սուլթան Հուսեյնի (1694-1722) օրոք է, որ աֆղանները 1722 թ. գրավում են մայրաքաղաք Սպահանը, որին հետևում է օսմանյան ներխուժումը և 1724 թ. Երևանի գրավումը:

299 Ձեռագրում գրված է Ռճ. (1100), որը սխալ թվական է: Տվյալ հրամանագիրը, որ ներկայացված է նաև ԻԲ. գլխում, թվագրված է Ռճխ. (1140) թվականով:

300 Միրզա Մուհամմադ Քազիմը պետական բարձր պաշտոններ է զբաղեցրել Նադիր շահի վարչակարգում: Նա եղել է Երևանի գլխավոր միրվեհզ (գործակալ) և ղեկավարել է նաև Մայր Աթոռի հասույթների և ամբողջ ունեցվածքի գույքագրումը: Հետագայում զբաղեցրել է Մերվի (Թուրքմենստան) կառավարչի պաշտոնը: Ուշագրավ են Սիմեոն Երևանցու տեղեկությունները վերջինիս գործունեության վերաբերյալ Մայր Աթոռում, թե ինչպես է շահի պաշտոնյան ամենայն մանրամասնության գրանցել Սուրբ Աթոռին պատկանող բոլոր այգիները, ջրաղացները և մնացած ամբողջ գույքը: Պետք է ասել, որ նման քաղաքականություն Նադիր շահը վարում էր պետության ամբողջ տարածքում, ինչը հանգեցրել է դաժան հարկահավաքության, որի վերաբերյալ ուշագրավ մանրամասներ է ներկայացնում հենց ինքը՝ Մուհամմադ Քազիմը՝ Նադիր շահին նվիրված իր եռահատոր գրքում (**Мохаммед Казим**, *Мироукрашающая надирова книга* (“Наме-йи аламара-йи Надири”), изд. текста и предисл. Н. Д. Миклухо-Маклая, т. 1-3, М., 1960-1966):

301 Հայրավանքը (Հայր Հովհաննու վանք, Մարդաղավնյաց վանք) Գեղարքունիքի նշանավոր վանքերից է, Այրիվան գյուղի հյուսիս-արևելյան կողմում, Սևանա լճի առափնյա մասում: Հայրավանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցին Թ. դարի է:

302 Կոշի Սուրբ Ստեփանոս վանքը գտնվում է Արագածոտնի մարզի Կոշ գյուղից հյուսիս-արևելք: Վանքի եկեղեցին կառուցված է Է. դարում և գործել է մինչև ԺԸ. դարը:

303 Զարբաֆ բալափուշ - ոսկեթել փարաջա (*Jamb*r, էջ 260, ծանոթ. 2):

304 Կապա - հոգևորականի երկար զգեստ, պարեգոտ (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 389):

305 Շահարխ, ջրանցք Արարատյան դաշտում, սկսվում է Քասաղ գետից: Է. դարի առաջին կեսին Հայոց կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցին (1633-1655) այն հիմնովին վերանորոգել է:

[306] Զաքարիա Քանաքեռցու մոտ հիշյալ իրադարձությունները մանրամասնորեն նկարագրված են (տե՛ս **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն*, Կոնդակ սուրբ ուխտին Յօհաննու վանից, էջ 132-133):

[307] Ըստ կտակագրի՝ գյուղի բնակիչները Մայր Աթոռին են նվիրաբերել մեկ կտոր 30 թաղար (համարժեք 100 մանի) ցանքատարածություն (տե՛ս *ՄԴՎ*, *Շարիաթական նոտարական փաստաթղթեր (Ժէ.-ԺԸ. դդ.)*, վավ. 17, էջ 92):

308 Կալվածագրով 1719 թ. ձեռք բերված ցանքատարածության և արոտավայրի սահմաններն էին՝ Դուփի Փալչաղլուն, Սևչուրը, նրա ավազուտն ու Սեֆիաբադի առուն (*ՄԴՎ*, Շարիաթական նոտարական փաստաթղթեր (Ժէ.-ԺԸ. դդ.), վավ. 18, էջ 93):

[309] Ցանքատարածությունը գտնվել է Սևչուր և Ուչքիլիսա առուների միջև ու նրա սահմաններն էին. արևելքում Սեֆիաբադ գյուղի առուն, հարավում Սևչուրն ու նրա ավազուտը, արևմուտքում՝ Յալչաղլու Դոբի կոչվածը (*ՄԴՎ*, Շարիաթական նոտարական փաստաթղթեր (Ժէ.-ԺԸ. դդ.), վավ. 21, էջ 107):

[310] Ջրաղ - բաղացի՝ հրազ, այստեղ՝ աշակերտ (*Ջամբռ*, էջ 164, ծանոթ. 2, *ՀԲԲ*, հ. Դ., էջ 32):

[311] Իլախա - հարաբերություն (*Ջամբռ*, էջ 167, ծանոթ. 2):

[312] Ջղավզի գիր՝ պայմանագիր, պարտավորագիր (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 437, ծանոթ. 22):

[313] Կալվածագիրը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 78 (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 7, էջ 86):

[314] Կալվածագիրը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 80:

[315] Կալվածագիրը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 79 (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 69, էջ 88):

[316] Կալվածագիրը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 67 (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 102, էջ 130):

[317] Ներսես վարդապետը սույն մարագը ձեռք է բերել Տեր Մարուքից և նրա եղբայրներ Գրիգորից և Բաքից (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 73, *Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 111, էջ 141):

[318] Կալվածագիրը տե՛ս *Կալվածագրեր*, Հար. Աբրահամյան, № 115, էջ 145, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 81:

[319] Ըստ գրավի պայմանագրի՝ 2 տախտակ այգու համար վճարվել է 1 թուման (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 64, էջ 84), իսկ շիրախանայի (հնձան) համար՝ 4000 դիան (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 65, էջ 84): Պայմանի համաձայն՝ վաճառողը կարող էր դրանք ետ գնել՝ հատուցելով վճարված գինը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 76, 77):

[320] Մովսես Գ. Տաթևացի հայրապետոն աթոռակալել է 1629-1632 թթ., իսկ տվյալ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվել է 1630 թ. (*Շարիաթական նոտարական փաստաթղթեր (Ժէ.-ԺԸ. դդ.)*, վավ. 1, էջ 54):

[321] Ձեռք բերված այգու սահմաններն էին. աջ կողմից՝ Սուրբ Հռիփսիմեի շավուրմեն, ձախ կողմից՝ եղվարդցի Զաքարիայի այգին, վերևից՝ հանդի ճետահն, ներքևից՝ Տմբոլենց այգին (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, N62, էջ 82):

[322] Քանի որ «Ջամբռ»-ի այս գլխում այգիները թվարկված են ըստ բնակավայրերի՝ պարբերացման համար նպատակահարմար գտանք «Այլ այգիներ» վերնագրով տարանջատել նաև Իրանում և Վրաստանում գտնող այգիների նկարագրությունը: Նշենք նաև, որ ձեռագրի հաջորդ էջերում բաց են թողնված բազմաթիվ պարբերություններ և, ակնհայտ է, որ այգիների այս ցանկն ամբողջական չէ և նախատեսված է եղել այն լրացնել:

[323] Դուխուրղան (Դեհարական), գյուղ Ատրպատականում, Ուրմիա լճի արևելյան կողմում: Այժմ վերանվանված է Ազերշահր (Սիմեոն Երևանցի, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 493), գյուղի եկեղեցու ավերակները պահպանվել էին մինչև 20-րդ դարի սկզբները:

[324] *Հայոց* ՌՄԾԲ. (1803) թվականը, բնականաբար, շատ հեռու է «Ջամբռ»-ը գրելու ժամանակաշրջանից: Գրչագրից ևս ակնհայտ է, որ դա հավելում է և ոչ թե թվականի վրիպակ:

[325] Կալվածագիրը հրատարակված է, տե՛ս *ՄՊՎ, Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ.-ԺԸ. դդ.)*, վավ. 5, էջ 62:

[326] «Ջամբռ»-ի հրատարակությունում «Զիթահանճ Սրբոյ Աթոռոյս ի յՕշական» վերնագիրը բացակայում է: Բնականաբար, այն դուրս է մնացել նաև բոլոր թարգմանություններից: Թեև վերնագրի ներքո ոչինչ չկա գրված ձեռագիր մատյանում, բայց դրա առկայությունն ինքնին խոսուն փաստ է այն մասին, որ ձիթհաններ եղել են նաև Օշականում:

[327] Կաթողիկոսի տեղապահ Մկրտիչ վարդապետը Սիմեոն Երևանցու կարգադրությամբ սկսել է վարել նաև Մայր Աթոռի մանրամասն ծախսամատյանը, որը հետագայում շարունակվել է նաև հաջորդ կաթողիկոսների օրոք (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 3, վավ. 8):

[328] Գեղաձոր գետակն Ախուրյանի ձախ ավազանում է և սկիզբ է առնում Արագած լեռան հյուսիսային լանջերից: Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի կառուցած հիշյալ ջրանցքը, որի միջոցով գետի ջրերը տարվել են նաև Ամբերդ, կոչվել է Շահարխ: Եղել է ներկայիս Ամբերդ ջրանցքի տարածքում:

[329] Բանտ - առուի սկիզբը, գետաբերան (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 331):

[330] Ղալամ - մաս, նյութ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 442, ծանոթ. 30):

[331] Զորագյուղի հայտնի անապատը, մենաստան հին Երևանում, քաղաքի հարավ-արևմտյան կողմում, Հրազդան գետի ափին, Սուրբ Սարգիս եկեղեցու դիմաց: Զորագյուղում է գտնվել կաթողիկոսական իշխանատունը, որը վերակառուցվել է Հակոբ Ե. Շամախեցու կողմից: Եղել է եպիսկոպոսարան, ունեցել է իր դիվանատուն-արխիվը (**Յովհաննէս եպս. Շահխաթունեանց**, *Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ*, էջ 305-307):

[332] Կալվածագիրը տե՛ս *ՄՊՎ, Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ.-ԺԸ. դդ.)*, վավ. 2, էջ 55:

[333] 1773 թ. մեկ այլ կալվածագրով 4 թուման պարտքի դիմաց Մայր Աթոռին են անցել երևանցի Լոզենց տները՝ մեկ բաժինը որպես սեփականություն, իսկ մյուս բաժինը գրավով, պայմանով, որ մինչև կպարզի, թե արդյոք տանտերը ժառանգորդ ունի (*Կալվածագրեր*, կազմեց Հար. Աբրահամյան, № 119, էջ 149, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 84):

[334] Էնիսուլ, Կախեթի հյուսիս-արևելյան շրջաններից՝ Ալազան գետի ավազանում, Վրաստանի ներկայիս Ղվարելիի շրջանը (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 493):

[335] Աշպազխանա - հացատուն (*Jambr*, էջ 327, ծանոթ. 3):

[336] Իմերել, այսինքն՝ Իմերեթի բնակիչ: ԺԵ. դարում Արևմտյան Վրաստանում ձևավորվում է Իմերեթի թագավորությունը՝ Քութայիսի կենտրոնով, որի տարածքը հետագայում սահմանափակվում է ներկայիս Իմերեթի շրջանով: ԺԸ. դարում Սողոմոն I թագավորի կառավարման տարիներին (1752-1784) այն զգալի վերելք է ապրում՝ կարողանալով ոչ միայն դիմագրավել Օսմանյան կայսրությանը, այլև՝ 1757 թ. Խրեսիլի ճակատամարտում հաղթանակ տանել: Ուշագրավ է հայ գաղթականների առնչությամբ Սիմեոն Երևանցու նամակագրությունը վրաց գահակալի հետ, որում Սողոմոնն անվանված է Բաշաչիաց և Ափխազաց արքա (*Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք ԺԱ., էջ 43-46):

[337] Խանութը նվիրաբերվել է 1768 թ. (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 85):

[338] Շուլավեր, հնագույն հայաբնակ այս ավանը պատմական Գուգարքի տարածքում է, Կուրի խրամ վտակի Շուլավեր օժանդակի ափին: Հայտնի է իր բազմաթիվ հայկական հուշարձաններով:

[339] Հպատակության գրի մեջ պարտքի դիմաց Մայր Աթոռի «արծաթագին» ծառա և ճորտ են հիշատակված տեր Աբրահամի որդիներ Ավթանդիլը և Դավիթը (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 33):

[340] Ճորտ դառնալու վերաբերյալ այլ վկայություններ էլ կան. 1761 թ. Թեոդորը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավ. 23), 1773 թ.՝ Մունթյանց Սարգիսը (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավ. 28) և թիֆլիսեցի Հարությունը, որն «իր կամքով» է դառնում Մայր Աթոռի ճորտը, ինչպես իր հայրն է եղել (տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 26), 1778 թ.՝ շամախեցի Հովհաննեսի որդի Շահարոն (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավ. 33), գորեցի Գեորգու որդի Հարությունը, իր հայրը և որդիները հոժարակամ «մինչև հավիտյան» ճորտ են դառնում (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավ. 34): Ճորտերի ձեռքբերումը շարունակվել է նաև 1780-ական թթ., ինչի մասին վկայում են մի շարք այլ ճորտագրեր (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 252, վավ. 38, 39, 40, 43, 44 և այլն):

[341] Ի. գլխում ամփոփված պարսից տիրակալներից ստացված հրամանագրերը հրատարակված են Հ. Փափազյանի և Ք. Կոստիկյանի կողմից՝ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» ժողովածուներում:

[342] Պատրիկ՝ կաթոլիկ հայ (ՀԲԲ, հ. Դ., էջ 75):

[343] Ձեռագրում բաց թողնված թվականը վերականգնել ենք ըստ շահ Աբաս I-ի համապատասխան հրովարտակի (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 93-94, վավ. 12):

[344] Ինչպես արդեն նշել ենք, հրովարտակը վերաբերում է բացառապես Քաշաթաղի հայերից եկեղեցական տուրքերի գանձման իրավունքն Մայր Աթոռին վերապահելուն (տե՛ս *ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 109, վավ. 22):

[345] ԺԳ. գլխի համապատասխան՝ Նորագյուղ և Եղվարդ գյուղերի մասին գրված է, որ նվիրաբերողը «պարոն Սեթի որդի Հակոբջանն» է, իսկ որպես թվական նշված է հիջրայի ՌԿԹ. (1069), այլ ոչ թե ՌԿԲ. (1062), ինչպես որ այստեղ է: Ըստ ամենայնի՝ ձեռագրում տեղ է գտել Բ. և Թ. գրչագրերի շփոթ, այսինքն՝ պետք է լինի նույն ՌԿԹ. (1069) թվականը: Դա հաստատվում է նաև տվյալ գյուղերի նվիրատվության վավերագրով (ՄՊՎ, Շարիաթական նոտարական փաստաթղթեր, վավ. 10, էջ 74):

[346] Թարաքյամե, թուրքմեն անվան արաբական հոգնակի ձևն է: Այսպես էին կոչվում թուրքմենական քոչվոր ցեղերը, որոնք ԺԷ.-ԺԸ. դարերում դեռևս հաստատուն ձմեռանոցներ չունեին: Ավելի ուշ՝ Իրանում այս անվան տակ հասկանում էին ընդհանրապես անասնապահ քոչվոր ցեղերին (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 217):

[347] ԻԲ. գլխում ներկայացված օսմանյան սուլթանների հրամանագրերն աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն: Մատենադարանի օսմաներեն վավերագրերի ցուցակի հետ համեմատությամբ՝ ներկայացված ոչ բոլոր հրամանագրերն են այսօր առկա:

[348] Հրովարտակները տրված են Մեհմեդ IV (1648-1687), Մուստաֆա II (1695-1703), Ահմեդ III (1703-1730), Մահմուդ I (1730-1754), Օսման III (1754-1757), Մուստաֆա III (1757-1774) օսմանյան սուլթանների կողմից:

[349] Խոշաբ, բերդաքաղաք Վանի նահանգում, Վան քաղաքից շուրջ 40 կմ հարավ-արևելք, համանուն գետի ափին:

[350] Շամ, Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի անվանումներից:

351 Թերևս՝ բաշխիչ - ստորադաս, ենթակա (անձ) (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 447, ծանոթ. 16):

352 Հավանական է համարվում, որ պատմական Փոքր Հայքի տարածքում գտնվող Գյումուշխանեի («արծաթի հանք») հայերեն թարգմանությունն է (տե՛ս *Джамбр*, էջ 398, ծանոթ. 196): Հնագույն ժամանակներից հայտնի էին վերջինիս արծաթի հարստագույն հանքավայրերը: Եղել է Տրապիզոնի նահանգի համանուն գավառի կենտրոնը: Թեև այս բնակավայրը հիշատակված չէ «Ջամբռ»-ի թեմերի ցանկում, բայց գրված է Երեմիա Օշականցու կազմած ավելի ընդարձակ ցուցակում (տե՛ս *Դիւան Հայոց պատմութեան*, Գիրք Գ., սյունակ 800):

353 Թվականը պետք է լինի հիջրայի ՌՃԽ. (1727), ինչպես որ ԺԴ. գլխում է:

354 Տվյալ նախադասությունը դուրս է մնացել «Ջամբռ»-ի ռուսերեն թարգմանությունից (տե՛ս *Джамбр*, էջ 331):

355 Վաղարշապատյան հրատարակությունում գրված է ՌՃԿԳ. (1163), ինչը սխալ է: ՄՄ 978 ձեռագրում այն պարզ կարդացվում է ՌՃԾԹ. (1159/1710), բացի դա, ինչպես և նշված է՝ նույնական է ԺԷ. գլխի համապատասխան տեղեկության հետ (ՄՄ 978, 308բ), որտեղ ևս գրված է ՌՃԾԹ.: Ըստ այդմ՝ վերականգնել ենք ճիշտ թվականը: «Ջամբռ»-ի բոլոր թարգմանություններում վրիպակը մնացել է:

356 Կարասալի՝ կարասներով լի, լեցուն, կարասներ ունեցող (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 448, ծանոթ. 8):

357 Ըստ կալվածագրի՝ այգին գնվել է 25.000 դիանով, իսկ այգու սահմաններն էին՝ էլի Քուչեն և էլի առուն, խաչի խուպանն, Ուսուպն (*Կալվածագրեր*, կազմեց Հաr. Աբրահամյան, № 61, էջ 81, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 72):

358 Ձեռագրում վրիպակ է և թվականը պետք է լինի ոչ թե հիջրայի ՌՃԽԳ. (1731), այլ ՌՃԻԴ. (1712) (*Джамбр*, էջ 398, ծանոթ. 202): Այս նույն տեղեկությունը կա նաև ԺՁ. գլխում՝ էջմիածնապատկան այգիների նկարագրության մեջ, որտեղ հիշատակված է նույն Սիրիխանը (Սիրախան), ով իրեն պատկանող այգին նվիրաբերել է Մայր Աթոռին՝ Աղեքսանդր Ա. Ջուղայեցի կաթողիկոսի (1706-1714) օրոք և գրված է նաև թվականը՝ «ՌՃԻԴ. (1712) թուին տանեկաց և ի մեր թուոջն ՌՃԿ. (1711)»:

359 Կալվածագիրը տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 75, *Կալվածարեր*, № 113, էջ 143:

360 Հրատարակված պայմանագրում նշված է, որ Մայր Աթոռից պարտք վերցված 60 թումանի դիմաց Զաքարիան ոչ միայն իր տունը, այլև այգիները, վարելահողը և ամբողջ ունեցվածքը վաճառել է (տե՛ս *Կալվածագրեր*, կազմեց Հ. Աբրահամյան, № 12, էջ 22, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 12):

361 Հավուց թառի վանքը գտնվում է Գառնիից 3 կմ արևելք, Ազատ գետի ձախ ափին, լեռնագագաթի վրա: Եկեղեցական ավանդույթը վանքի հիմնադրումը կապում է Սուրբ Սահակ Պարթևի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որի վերաբերյալ կան միջնադարյան մի շարք վկայություններ: Եղել է գրչության կենտրոն, իսկ ԺԷ. դարում՝ Երևանի հոգևոր առաջնորդների նստավայր (տե՛ս **Կարեն Մաթևոսյան**, *Հավուց թառի վանքը*, Երևան, 2012):

362 Հայոց թառ, Կուտուց վանք, Թառնիս, Ավանիկ, Քաղբերդ, Սուրբ Սարգիս, Կուտիս, բոլորն էլ այժմ ավերակ են, գտնվել են՝ Ազատ գետի ձախափնյակում՝ Գեղամա լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերին (բնակավայրերի տեղադրության մասին ավելի մանրամասն տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 496-497): Ավանսար և Մանկուս գյուղերի տեղադրությունը, ըստ ամենայնի, Ազատ գետի աջակողմում է (նույն տեղում, էջ 497-498):

363 Ազարակը գտնվում էր Ողջաբերդի լեռնաշղթայի արևելյան մասում՝ Ազատ գետի աջ ափին (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 495):

[364] Ներկայիս Արարատի մարզի տարածքում գտնվող այդ բնակավայրերից այժմ գոյություն ունեն միայն երկուսը՝ Վեդի քաղաքավանը և Արտաշար գյուղը (Վերին Արտաշատ, Արտաշատ քաղաքից 5 կմ հյուսիս-արևելք, Ազատ գետի ստորին հոսանքի շրջանում): Մյուս գյուղերի տեղադրության հարցերի հետ կապված տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 498-499):

[365] «Ջամբռ»-ի ԺԳ. գլխում գրված է այն մասին, որ Խոր Վիրապի վանքն այգի ունի նաև Նորքում: Վանքի տարածքից բայատ ցեղին հեռացնելուց հետո, ինչպես նշվել է, վանքի բարեկեցությունը հնարավոր չի եղել միանգամից վերականգնել: Այդ նպատակով է, թերևս, որ 1771 թ. մարտի 16-ին Խոր Վիրապի առաջնորդ Ավետիք վարդապետը, հաշվի առնելով վանքի ոչ այնքան բարվոք վիճակը, Նորքում գտնվող «Զարեքանց» կոչված այգին հանձնում նորքեցի Ղազարի որդի Մարկոսին՝ այգի հիմնելու նպատակով: Պայման է դրվում, որ եթե այն շենանա և կանոնավոր պտուղ տա, ապա բերքը պետք է կիսեն, իսկ եթե ոչ՝ այգին կմնա վանքին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 82):

[366] Աղջոց վանքը (Սուրբ Ստեփանոս) գտնվում է Արարատի մարզում, Գեղարդավանքից 7 կմ հարավ-արևելք, լեռան լանջին: Ըստ ավանդության՝ հիմնադրել է Գրիգոր Ա. Լուսավորիչը, իսկ ներկայիս կիսավեր համալիրը կառուցվել է ԺԳ. դարում: Հայտնի են վանքում գրված ԺԵ. դարի ձեռագրեր:

[367] Կարենիսի վանք (Առաքելոց վանք), Կոտայքի մարզի Արգել գյուղից հարավ, Հրազդանի ձորում: Ըստ ավանդության՝ վանքում պահվել են մասունքներ: Վանքը վերջնականապես լքվել և ամայացել է ԺԹ. դարում:

[368] Ըստ Գեղամ Բադալյանի՝ էշակղուտուրանը ներկայիս Մաքրավանն է, որտեղ և գտնվում է նշանավոր Մաքրավանքը՝ Հրազդան քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում, իսկ Թաքալուկը (Թաքյալու) ներկայիս Արտավազ գյուղն է՝ Մարմարիկ գետի միջին հոսմանքի ձախափնյակում: Գյուղից ոչ հեռու է գտնվում կիսավեր վաղ միջնադարյան վանական համալիրը: Մյուս գյուղերի տեղադրությունը մնում է անորոշ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 499-500):

[369] Մաքենյաց վանքը գտնվում է Գեղարքունիքի մարզի ներկայիս Մաքենիս գյուղի եզրին: Հիշատակվում է վաղ միջնադարից, եղել է նշանավոր կրոնական և կրթական կենտրոն: ԺԸ. դարում, ինչպես երևում է «Ջամբռ»-ի տեղեկություններից, եղել է խոշորագույն թեմ՝ իր մեջ ընդգրկելով Գեղարքունիքի ամբողջ հարավ-արևելյան մասը՝ շուրջ 50 գյուղեր:

[370] Նշված գյուղերը ներկայիս Գեղարքունիքի մարզի տարածքում են: Կոթը պատմական Գեղարքունիքի իշխանանիստ կենտրոնն էր: Մյուս գյուղերի տեղադրության մանրամասները տե՛ս Գեղամ Բադալյանի ծանոթագրություններում (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 502-510):

[371] Խութավանքն Արցախի նշանավոր Դադիվանքն է, պատմական Ծար գավառում (Վերին Խաչեն)՝ ներկայումս Քարավաճառի տարածքում: Ըստ ավանդության՝ հիմնադրվել է առաջին դարում, Թադևոս առաքյալներից մեկի՝ Արցախում քրիստոնեության համար նահատակված Դադիի գերեզմանի տեղում: ԺԲ.-ԺԴ. դարերում եղել է եպիսկոպոսանիստ, Վերին Խաչենի հոգևոր կենտրոնը: Ինչպես համոզվում ենք «Ջամբռ»-ի տեղեկություններից՝ Դադիվանքն ունեցել է ընդարձակ տիրույթներ (թվարկված են շուրջ 30 գյուղեր), որոնք գտնվել են ինչպես Գեղարքունիքում, այնպես էլ Արցախի տարածքում (մանրամասները տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 510-520):

[372] Պատմական Արցախի Վայկունիք գավառը, կենտրոնը՝ միջնադարյան գյուղ և բերդավան բարձրադիր Ծարը, որը գտնվում է Թարթառ գետի ձախ ափին, եղել է իշխանանիստ և մելիքական կենտրոն: Հայտնի է նաև որպես գրչության կենտրոն, որտեղից հայտնի են մի շարք ձեռագրեր: Ավելի ուշ՝ ԺԹ. դարի սկզբներին ավերվել և ամայացել է:

[373] Հայրավանքը Գեղարքունիքի նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոններից է: Գտնվում է Այրիվան գյուղի հյուսիս-արևելյան կողմում: Սուրբ Ստեփանոս եկեղեցին հիմնադրվել է Թ. դարում: Վանքի թեմի մեջ էին մտնում Գեղարքունիքի հյուսիսային մասի գյուղերը՝ հիմնականում Գավառագետի հովիտը:

[374] Նշված գյուղերի տեղադրությունը մեծ մասամբ հայտնի է, դրանցից շատերն այսօր էլ կան՝ ժամանակակից անվանումներով:

[375] Շղվաքը Սևանա լճի հարավ-արևմտյան ափին է, ներկայիս Ջորագյուղում (պատմական Շողվագ):

[376] Նշված գյուղերից այժմ մի քանիսը միայն գոյություն ունեն (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 522-525):

[377] Սևանի վանքին պատկանող գյուղերը հիմնականում սփռված էին լճի հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածում, իսկ Ծաղկունյաց ձորն ընդգրկում էր Հրազդան քաղաքից հյուսիս ընկած բնակավայրերը (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 525-527):

[378] Բջնու թեմի մաս էին կազմում Կոտայք, Նիգ գավառների և Ծաղկունյաց ձորի գյուղերը, որոնց մի զգալի մասն այժմ լքված են կամ ավերակ (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 528-532:

[379] Հառիճավանք (նախկինում նաև՝ Դիփչաղավանք), գտնվում է Շիրակի մարզի Հառիճ գյուղում, Արագածի հյուսիսային լանջին: Կառուցվել է Է.-ԺԳ. դարերում: Հնագույն միջնադարյան հայկական վանքերից է: Ունեցել է դպրոց, եղել է գրչության կենտրոն:

[380] Կոշի Սուրբ Ստեփանոս վանքն Արագածոտնի մարզի Կոշ գյուղից հյուսիս-արևելք է: Վանքի եկեղեցին Է. դարի է: Գործել է մինչև ԺԸ. դարը: Վանքին պատկանող նշված Կոշը հարակից գյուղն է, իսկ Աղավնատունը՝ Վաղարշապատի մոտ, քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք:

[381] Տեղերի վանքը Բյուրականից հյուսիս, նախկին Տեղեր գյուղում է: Վանքի հնագույն հիշատակությունը Ղազար Փարպեցունն է: Սուրբ Աստվածածին եկեղեցին, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է ԺԳ. դարի առաջին կեսին՝ Վաչուտյանների կողմից, ԺԵ. դարում վանքը պարսպապատվել է:

[382] Ինչպես երևում է՝ Սաղմոսավանքի թեմին են պատկանել Ապարանի (պատմական Նիգ գավառի) և Կարբիի նահիեի (գավառ) գյուղերը՝ Քասաղ գետի վերին հոսանքի և Ապարանի շրջանի տարածքում (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 534-537):

[383] Քասաղ գետի ձախ ափին՝ Սաղմոսավան գյուղից հյուսիս, Արայի լեռան արևմտյան ստորոտում են գտնվել Համամլու և Այվազլի գյուղերը, իսկ Քուրդալին՝ Սաղմոսավանից հյուսիս-արևելք:

[384] Ոստին, ցամաքային, անջրդի, անջուր, չոռոգվող (*ՀԲԲ*, հ.Գ, էջ 572):

[385] Շարապխանա (Շարապխանե), պատմական Նիգ գավառի (Ապարանի նահիե) արևմտյան մասը:

[386] Ուշիի Սուրբ Սարգիս միջնադարյան վանքն Արագածոտնի մարզի Ուշի գյուղից 1 կմ արևմուտք է: Ըստ ավանդության՝ Մեսրոպ Մաշտոցը Սուրբ Սարգսի մասունքների վրա է հիմնադրել վանքը: ԺԳ. դարում կառուցվել է Սուրբ Աստվածածինը, իսկ ԺԷ. դարի առաջին կեսին՝ պարսպապատվել է: Հետագայում աստիճանաբար ամայացել է:

[387] Արագածոտնի և արևելյան Շիրակի բնակավայրեր են (տե՛ս **Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, Ծանոթագրություններ, էջ 540-542):

[388] Երևանի Ջորավոր Սուրբ Աստվածածին հայտնի եկեղեցին: Նախապես եկեղեցու տեղում եղել է քառաշեն փոքր մատուռ, որը շահ Աբասի արշավանքներից հետո հիմնովին ավերվել է: ԺԷ. դարում Մովսես վարդապետը (ապագա Մովսես Գ. Տաթևացի կաթողիկոսը) Սուրբ Անանիայի գերեզմանի վրայի մատուռի շուրջը հիմնել է անապատ և կառուցել պարիսպներով շրջապատված համալիր և

դպրոց: Հերթական անգամ ավերվել է 1635-1636 թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ, կրկին վերակառուցվել 1637 թ.: 1679 թ. հունիսի 4-ի հզոր երկրաշարժը հիմնովին ավերում է այն: 1693 թ. անապատի մատուռի տեղում սրբատաշ տուֆով կառուցվում է եռանավ բազիլիկ հորինվածքով Սուրբ Աստվածածին եկեղեցին: Հետագայում ևս վերակառուցումների է ենթարկվել, իսկ եկեղեցում պահվող «Ջորավոր» կոչվող Ավետարանի անունով էլ եկեղեցին սկսել է կոչվել Ջորավոր Սուրբ Աստվածածին (տե՛ս **Արսեն Հարությունյան**, **Արփինե Սիմոնյան**, *Ջորավոր Ավետարանը*, Երևան, 2016):

[389] Վանքի հարևանությամբ գտվող Երևանի Կոնդ թաղամասը:

[390] ՄՄ 978 ձեռագրի 589ա-593բ էջերում 1828 թ. այբբենական կարգով ավելացվել է բովանդակության ցանկ, որը ներառված է «Ջամբռ»-ի 1873 թ. հրատարակությունում, իսկ գրքի վերջում նվիրատուների անվանացանկն է, որոնց հանգականությամբ հավաքվել է անհրաժեշտ 519 ռուբլի գումարը:

# ԲԱՌԱՐԱՆ

**Աբասի** (պարսից շահ Աբաս I թագավորի անունով) - արծաթե դրամ, որը համարժեք էր պարսկական 200 դինարի, 4 շահիի կամ 2 սոմարի:

**Աբրեշում** - մետաքս (*ՀԼԲԲ*, հ. Ա., էջ 2):

**Ախթարմա** - հիշատակվում է Հայ Առաքելական եկեղեցուց հեռացածներին բնորոշելու նպատակով, փոխառություն է, որը նշանակում է «ուրացություն» (*Դիւան Հայոց պատմութեան*, գիրք Գ., էջ 828) կամ «կաթոլիկ հայ» (*Հայերէն արմատական բառարան*, հ. 1, էջ 128):

**Ախունդ** - մահմեդական հոգևորական (*Jambr*, էջ 358, ծանոթ. 3):

**Ամալ** - աշխատող, գործավար (*Ջամբռ*, էջ 136, ծանոթ. 2):

**Ամանաթ** (էմանեթ) - ավանդ (*Ջամբռ*, էջ 233, ծանոթ. 1), ժամանակավոր պահպանության կամ մի ուրիշին փոխանցելու համար պահ տրված ապրանք, փող կամ այլ հարստություն (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 55):

**Այվան** - դահլիճ, հովանոց, վերանդա (*Ջամբռ,* էջ 183, ծանոթ. 1):

**Աշխանա** - խոհանոց (*Ջամբռ,* էջ 183, ծանոթ. 5):

**Աշպազխանա** - հացատուն (*Jambr*, էջ 327, ծանոթ. 3):

**Արզ, արզա** - խնդրանք, փափագ, աղերսանք (*Ջամբռ,* էջ 23, ծանոթ. 1):

**Արխ** - առու (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 269):

**Աքննի** - մշակ, հողագործ, ցանքս անող (*Ջամբռ*, էջ 115, ծանոթ. 1):

**Բազազ** - կտորեղենի, գործվածքների վաճառական (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 302):

**Բաթիլնամա** - արգելահրաման (*Ջամբռ*, էջ 178, ծանոթ. 1):

**Բախալ** - նպարավաճառ (*Ջամբռ*, էջ 209):

**Բահրա** - գյուղացիության կողմից պետությանն ու կալվածատիրոջը հատուցվող հողային տուրքը, որի՝ պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահրաշե-ե դիվանի», իսկ կալվածատիրոջը հատուցվողը՝ «բահրաշե-ե մալիքանե»: Վերջինս սովորաբար կոչվում էր միայն «մալիքանե» կամ պարզապես «մուլք» (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 213): Բահրան գանձվել է բնամթերքի 1/5 մասով:

**Բաննահ** - որմնադիր, (*ՀԼԲԲ*, հ. Ա., էջ 162):

**Բանտ** - առուի սկիզբը, գետաբերան (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 331):

**Բայիր** - դարիվեր (*Ջամբռ*, էջ 176, ծանոթ. 2), թումբ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 438, ծանոթ. 49):

**Բաշչի** - պահապան (*Ջամբռ*, էջ 233, ծանոթ. 4):

**Բասմաճի** - 1. արհեստավոր, որ կտավի վրա նախշեր է տպում, 2. արհեստավոր, որ գիրք է տպում (մամուլով) (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 55):

**Բարաթ** - որոշ վարչությունների կողմից որևէ անձի հարկեր գանձելու համար տրված հատուկ գրություն՝ հանձնարարագիր, պարտավորագիր, մուրհակ, (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 103):

**Բեկլարբեկ** (բեկերի բեկ) - Սեֆյան Իրանի բարձրաստիճան պաշտոնյա, որը կառավարում էր սահմանամերձ նահանգը կամ կուսակալությունը:

**Բրինձ** - կիլիկյան հայերի կողմից ֆրանսերենից վերցված փոխառություն, նշանակում է արքայազն:

**Գազ** - 1. երկարության պարսկական չափ, որը համարժեք էր 112 սանտիմետրի, 2. նուրբ և թափանցիկ կտոր՝ մետաքսից, վուշից և այլն (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 402):

**Գեօմրուկչի** - մաքսավոր (*Jambr*, էջ 371, ծանոթ. 1):

**Գեռ** - մահմեդականի գերեզման (*Ջամբռ*, էջ 172, ծանոթ. 2):

**Դաբաղ** - կաշեգործ (*Ջամբռ*, էջ 209):

**Դալլաք** - վարսավիր, սափրիչ (*Ջամբռ*, էջ 168, ծանոթ. 1):

**Դալմա** - մեծ փոս, ստորգետնյա ջրուղի (*ՀԼԲԲ*, հ. Ա., էջ 299):

**Դանկ** (դանգ) - կալվածատիրական՝ մուլքային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը, որը կոչվել է նաև մուլք և բաժանվում էր 6 մասի՝ դանգերի: Ենթակա էր վաճառքի ինչպես ամբողջությամբ (կոչվում էր «շեշդանգ»՝ վեց դանգ), այնպես էլ մասնակի՝ մի քանի, նաև՝ մեկ, կես կամ քառորդ դանգով, որն անվանվում էր թասուջ (*ՄՊՀ*, պրակ երկրորդ, էջ 213-214): Նաև՝ հաշվի միավոր, որը համարժեք էր դիրհամի (դրամի) 1/6 մասին:

**Դառուղա** - այդպես էր կոչվում տվյալ վայրի ոստիկանապետը, որ ակտիվ մասնակցություն ուներ բնակչությունից գանձվող հարկերի իրացման գործում (*ՄՊՎ*, պրակ 2, էջ 214):

**Դաւաշի** - հայցվոր, դատ հարուցող (*Jambr*, էջ 376, ծանոթ. 2):

**Դարվազա** - դուռ (*Ջամբռ*, էջ 36, ծանոթ. 2), դարպաս (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 499):

**Դէֆթէր** (դաֆթար) - տետր, մատյան, որն օգտագործվում էր հարկային մատյանի իմաստով *(ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 103):

**Դինար** - դրամական փոքր միավոր, հայկական աղբյուրներում նաև՝ «դեան» կամ «դիան»: ԺԷ. դարում ամենափոքր միավորը նշվում է 5 դինարը՝ «ղազբեկի», 10 դինարը՝ «փարա», 20 դինարը՝ «բիսթի», 50 դինարը՝ «շահի», 100 դինարը՝ «մահ-

մուղի» կամ «սոմար» 200 դինարը՝ «աբասի» (եղել է արծաթ դրամի հիմնական միավորը): Եղել են 1.5 աբասանոցներ (300 դինար), 2.5 աբասանոցներ (500 դինար), 5 աբասանոց (1000 դինար), իսկ ավելի խոշոր հաշվումը կատարվում էր թումանով՝ 10.000 դինար (*ՄԴՎ*, պրակ երկրորդ, էջ 215):

**Դիպայ** - մետաքսյա ոսկեթել զգեստ, կտոր (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 521):

**Դումեանդար** - խանութպան, խանութի տեր (*Jambr*, էջ 257, ծանոթ. 1):

**Եասաւուլ** (յասավուլ) - պահակ (*Ջամբռ*, էջ 110, ծանոթ. 2), ճաղաճացիական պաշտոնյայի մոտ ծառայություն իրականացնող ձիավոր (*Джамбр*, էջ 391, ծանոթ. 114), գավառական ոստիկանության ստորին պաշտոնյա (*ՀԼԲԲ*, հ. Դ., էջ 108):

**Եղաճ** - ձի, որին հեծնում և որին կապում են մի ուրիշ ձի՝ նրա ետևից գնալու համար (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 549):

**Ենկիչար** (ենիչերի) - Օսմանյան կայսրությունում զորքի այն տեսակը, որը համալրվում էր բռնի մահմեդականացված գերի քրիստոնյա մանուկներից:

**Եօնջալուղ** - արոտատեղի (*Ջամբռ*, էջ 107, ծանոթ. 1):

**Զապիթ** - ոստիկան, ոստիկանություն (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 444, ծանոթ. 15):

**Զերզամպի** - ներքնախուց կամ սառնատուն (*Ջամբռ,* էջ 183, ծանոթ. 4):

**Զվար** - հարթավայր (*Джамбр*, էջ 399, ծանոթ. 219):

**Էշակչի** - իշապան, էշ, պահող՝ խնամող, էշերով ապրանք տեղափոխող (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 436, ծանոթ. 10):

**Էշիկաղասի** (իշիքաղասի) - Սեֆյան արքունի արարողապետը (*Օտար աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Պարսկական աղբյուրներ Ա*, էջ 227):

**Թալղայ** - հրովարտակ, հրաման, որոշում (*Jambr*, էջ 238, ծանոթ. 4):

**Թալպիս** - նենգ, խաբեբա, կեղծող (*Ջամբռ*, էջ 94, ծանոթ. 1):

**Թաղման** - հողե աման (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 79):

**Թամասուկ** - պարտամուրհակ (*Ջամբռ*, էջ 233, ծանոթ. 2), պարտավորագիր, ստացագիր (*ՀԼԲԲ*, հ. Բ., էջ 72):

**Թանապի** - վերնասենյակ (*Ջամբռ*, էջ 183, ծանոթ. 2), կամարաձև պատշգամբ (*Джамбр*, ծանոթ. 48, էջ 380):

**Թասլիմ** - հանձնել, տալ, հատկացում անել (Սիմեոն Երևանցի, *Ջամբռ*, էջ 444, ծանոթ. 10):

**Թավլայ** - ախոռ (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 89):

**Թէզբազ** - թերևս՝ արհեստավոր, գործատեր (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 443, ծանոթ. 28):

**Թիֆիլդար** - գանձապետ, պաշտոնյա, որ զբաղվում էր դրամական գործարքներով (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 104):

**Թուման** - դրամական խոշոր միավոր, որը համարժեք էր 10.000 դինարի: ԺԶ.-ԺԸ. դարերում Իրանում ընդունված էր դրամահատության չափի և կշռի՝ Թավրիզում հաստատված չափերը (Թավրիզը եղել է Սեֆյան պետության մայրաքաղաքը 1501-1555 թթ.): Չնայած որ առանձին նահանգներում գործածվել են նաև տեղական չափեր: Այդուհանդերձ, առուծախի փաստաթղթերում, կալվածագրերում և այլ հրամանագրերում օգտագործվել է «թավրիզի թուման» հասկացությունը (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 219):

**Թուրայ** - արքունի դրոշմ (սուլթանի) կնիք (*Ջամբռ,* էջ 107, ծանոթ. 6):

**Թուրէ** - օրենք (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 126):

**Թօփ** - գունդ, գործվածքի ամբողջ ծրար (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 134):

**Իթլախ** (իթլաղ) - բառացի՝ «հեռացում», «ուղարկում»: Խոսքը պետական պաշտոնյաներին այս կամ այն հարկատու օբյեկտն ուղարկելու մասին է, պաշտոնյաներ, որոնք իրենց ռոճիկները ստանում էին տվյալ օբյեկտից գանձվող հարկերի հաշվից: Այս առիթով նրանց ձեռքը տրվող հանձնարարական գրությունները կոչվում էին «հավալե» (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 105):

**Իլխճի** - գրաստապան (խանի կամ նահանգապետի) (*Ջամբռ,* էջ 28, ծանոթ. 1):

**Իջարայ** - վարձ (*Ջամբռ*, էջ 156, ծանոթ. 2), նաև՝ վարձում, վարձակալություն (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 169):

**Իսպանջ** (իսփենջ) - հարկատեսակ, որ վճարում էին ոչ մահմեդականները չիֆթի (մի զույգ եզան միջոցով մշակվող հողակտոր) հարկի դիմաց Օսմանյան կայսրությունում:

**Խալիսա** (խալիսե) - արքունի հող (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 106):

**Խարաճ** (խարաջ) - հարկ, տուրք: Արաբական տիրապետության շրջանում այդպես էր կոչվում գլխավոր հողային հարկը: Սակայն, հետագա շրջանում հասկացվում էր բնակչությունից գանձվող մի շարք պետական հարկերի իմաստով (բացի գլխահարկից), ուրպես հավաքական հարկային տերմին (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 106):

**Խալվար** (խարվար) - կշռի միավոր (1 խալվարը համարժեք էր 10 սոմարի կամ 100 մանի) համարժեք մոտ. 300 կգ (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 220):

**Խէյրաթ** - բարի գործ (*Ջամբռ*, էջ 156, ծանոթ. 1):

**Խիլայ** (խլա) - երկար հագուստ, խալաթ (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 265):

**Խլաֆիշար** - ոչ օրինական, շարիաթին հակառակ (*Jambr*, էջ 370, ծանոթ. 1):

**Խոջա** - այդպես էին կոչվում մեծահարուստ վաճառականներն ու դրամատերերը: Այն խոջաները, որոնք առևտրի բնագավառում ձեռք բերած հարստությամբ սկսում էին գանձագին կալվածքներ կամ մուլքեր գնել՝ հաճախ ազդեցիկ դիրք էին գրավում արքունիքում (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 193):

**Կոպար** - նեղ ճանապարհ, կածան (*ՀԲԲ*, հ. Բ., էջ 471):

**Համամ** - բաղնիք (*ՀԼԲԲ*, հ. Գ., էջ 234):

**Հաշիայ** - տարբեր տեսակ թելերից (մետաքսի, ոսկու, արծաթի և այլն) հյուսված երիզ, ժանյակ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 53):

**Հասար** - պատ, պարիսպ, ցանկապատ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 57):

**Հասիլ** - հասույթ, բերք, որևէ կալվածքից ստացվող օգուտ, եկամուտ (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 221):

**Հավալէ** - Դիվանի կողմից պետական պաշտոնյաներին ու զինվորականներին տրվող հանձնարարական գրություն (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 106):

**Հիպալամայ** (գուցե՝ հիպեռամե) - պարգևագիր (*Ջամբռ*, էջ 169, ծանոթ. 1):

**Հունէր** - գրություն, թուղթ, փաստ, ապացույց (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 425, ծանթ. 13):

**Հուքմ** (հոքմ) - հրամանագիր, հրաման, բարձր կարգադրություն (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 193):

**Հօխայ** - ծանրության չափ Օսմանյան կայսրությունում, համարժեք 400 դիրհամի (մոտ. 1.2 կգ) (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 125):

**Ղազի** (ղադի) - հոգևորական դատավոր, ով գործերը վճռում էր Ղուրանի պատվիրաններով (*ՄՊՎ*, Կալվածագրեր, էջ 190):

**Ղալամ** (բառացի՝ «գրիչ») - 1. գրություն, հոդված, հրաման, թուղթ, գրված արտոնություն (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 446, ծանոթ. 9), 2. մաս, նյութ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 442, ծանոթ. 30):

**Ղալայնի** - անազգորդ (*Ջամբռ*, էջ 209):

**Ղանվէ** - սուրճ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 183):

**Ղապալա** (ղաբալե) - առնուվաճառքի պայմանագիր, կալվածագիր (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 106):

**Ղափէս** (գափես) - վանդակ, բանտ (*Ջամբռ*, էջ 30, ծանոթ. 1):

**Ղոռուղ** (ղորուխ) - անտառ, արոտ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 189):

**Ղումաշ** - մետաքսյա կտոր, կերպաս (*ՀԲԲ*, հ.Գ, էջ 188):

**Ղուռուշ** - Օսմանյան մանրադրամ, որը համարժեք էր 40 փարայի:

**Ճոթ** - ծայր, եզր, մասն, կտոր (*ՀԲԲ*, հ.Գ, էջ 221):

**Մահալա** (մահլա) - 1. թաղ, քաղաքի կամ գյուղի մի մասը, 2. փողոց (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 242):

**Մահսար** - հանրագիր, համախոսական (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 441, ծանոթ. 15):

**Մալոջհաթ** - Արաբերեն «մալ» և «ջհաթ» բառերից. «Մալ»-ը սեփականության հարկն էր, իսկ «ջհաթ»-ը՝ վարելահողերից գանձվող հողային հարկը: Այս երկու հարկերը միշտ համատեղ էին հաշվվում և գանձվում: Մալոջհաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասն էր կազմում: Այս անվան տակ հասկանում էին նաև տվյալ օբյեկտից գանձվող այլ հարկերը և մալոջհաթը դիտվում էր որպես հավաքական հարկային տերմին (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 107):

**Մասիլ** (մահսուլ) - հացի կամ պտղի բերք (*ՀԼԲԲ*, հ. Գ., էջ 28):

**Միրապ** (միրաբ) - ոռոգման ջրերի ավագ կարգավորիչ, ջրբաշխ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 340):

**Միրասխոր** - ժառանգ (*Ջամբռ*, էջ 200, ծանոթ. 1):

**Միրի** - արքունի, հօգուտ արքունիքի բռնագրավում (*Ջամբռ,* էջ 93, ծանոթ. 1):

**Միրվէիզ** - գործակալ, քննիչ (*Ջամբռ*, էջ 120, ծանոթ. 1), արքունական տուրք գանձող (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 429, ծանոթ. 58) և դիվանագիր (*Джамбр*, էջ 392, ծանոթ. 118): Խոսքը պետական այն պաշտոնյայի մասին է, ում վերապահված է եղել արքունի տուրքերի հաշվառումը և գրանցումը:

**Մովպետ** (մոգպետ) - ամենաբարձր աստիճանի կրոնավոր, կրոնապետ (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 359):

**Մուաֆ** - հարկային իմունիտետ, ազատում պետական հարկերից, երբեմն նաև՝ միայն որոշ հարկերից ու պարտավորություններից: Այն վերաբերում էր ինչպես անհատներին, այնպես էլ օբյեկտներին: Միանշանակ չի եղել՝ կարող էր լինել սահմանափակ և անսահմանափակ, այսինքն՝ տարածված լինել ամբողջ սեփականության կամ նրա մի մասի վրա (*ՄՊՎ*, *Հրովարտակներ*, պրակ երրորդ, էջ 195):

**Մուհասիլ** - կատարելաթուղթ կամ հրաման (*Ջամբռ,* էջ 183, ծանոթ. 7):

**Մուլք** - սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացված կամ գնված ու սեփականություն դարձած հող կամ այլ անշարժ կալվածք (*ՄՊՎ, Կալվածագրեր*, պրակ առաջին, էջ 115):

**Մուխաթթա** (մախթու) - որոշված, վերջնականապես որոշ չափով հաստատված գումար, որ հանձն էին առնում կանոնավոր կերպով մուծել պետական գանձարան՝ հիմնականում պաշտոն ստանալու դիմաց (*ՄՊՀ*, պրակ երկրորդ, էջ 225):

**Մուղայէթ** - վերահասու լինել, աչքը վրան պահել, փույթ ունենալ (Սիմեոն Երևանցի, *Ջամբռ*, էջ 440, ծանոթ. 20):

**Մուսավատայ** - սևագիր, օրինակագիր (*Ջամբռ,* էջ 32, ծանոթ. 1):

**Մուտախիլ** - հասույթ, եկամուտ (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 226):

**Մուրաֆայ** - հարցուփորձ անել, հարցուփորձի կազմակերպում՝ դատ (*Ջամբռ*, էջ 120):

**Նալպանտ** - անասունները նալող արհեստավոր, պայտար (*ՀԲԲ*, հ. Գ., էջ 425):

**Նահիե** - վարչատարածքային բաժանման միավոր պարսկական տիրապետության շրջանում (գավառ, մահալ):

**Նոմոս** - օրենք, կարգ, կանոն:

**Շահի** - պարսկական մանրադրամ՝ 50 դինարի չափով:

**Շառաթ** - բանսարկու (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 447, ծանոթ. 2):

**Շարթնամայ** - պայմանագիր (*Ջամբռ,* էջ 139, ծանոթ. 1):

**Շարիաթ** - մահմեդական կրոնական օրենքները և հաստատված նորմերը, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական-դատական ատյանը: Շարիաթի կամ Շար'ի հոգևոր դատարաններում էին մեծամասամբ քննվում տնտեսական գործերը (*ՄԴՎ*, պրակ երրորդ, էջ 198):

**Շիլթաղ** - այս տերմինով անվանում էին այն անօրինական հարկերը, որոնք գանձվում էին ռայաթներից պետական պաշտոնյաների կողմից զանազան կեղծ և հնարովի պատճառներով (*ՄԴՎ*, պրակ չորրորդ, էջ 109):

**Շիրխանայ** - հնձան (*Ջամբռ*, էջ 176, ծանոթ. 1):

**Շխօճաղ** - խոսքը վերաբերում է Սեֆյանների տոհմին (1502-1736) (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 432, ծանոթ. 40):

**Ոտին** - ցամաքային, անջրդի, անջուր, չոռոգվող (*ՀԲԲ*, հ.Գ, էջ 572):

**Չալթուկ** - փեչեկը դեռ չհասած բրինձ (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 8):

**Չարսու** - քաղաքում բաց հրապարակ, որտեղ առևտուր է արվել կամ քաղաքի այն մասը, որտեղ վաճառատներն են (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 17):

**Չարտախ** - տանիքի վրա չորս կամարով վրան, տան կտուրին թեթև շինություն՝ փայտի ճյուղերից, տերևներից (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 17):

**Չափար** - սուրհանդակ, շտապ կարգով որևէ կարևոր գործի ուղարկվող պետական ծառայող (*ՀԼԲԲ*, հ. Դ., էջ 396):

**Չիման** - մարգագետին (*ՀԼԲԲ*, հ. Դ., էջ 410):

**Չրաղ** - բառացի՝ ճրագ, աշակերտ, լուսարար (*Ջամբռ,* էջ 164, ծանոթ. 2, *ՀԲԲ*, հ. Դ., էջ 32):

**Չուան** - ճոպան, թոկ, պարան՝ 3-10 մ երկարությամբ, որը նախատեսված է եղել դաշտերը և խաղողի այգիները չափելու համար: Վերջինիս դեպքում՝ այն համապատասխանել է 10 մետրի, հետևաբար՝ 1 չվանը կարելի է համապատասխանեցնել 100 քմ. (*Джамбр*, էջ 395, ծանոթ. 150):

**Չուխայ** - նուրբ բրդե գործվածք, մահուդ (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 30):

**Ջամ** - հարկերի հաշվառման այն ձևը, ըստ որի՝ տվյալ հարկատուից (գյուղական համայնքից) գանձվող բոլոր հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և

առանձին մատյաններում գրանցվելուց հետո, դրամական արտահայտությամբ, ընդհանուր գումարով ի մի էին բերվում որպես հարկատուի ընդհանուր հարկային պարտավորություն (*ՄՊՀ*, պրակ երկրորդ, էջ 211):

**Ջամբր** - փոխառություն ֆրանսերենից (ֆրանս. Chambre), նշանակում է սենյակ, դիվան (դիվանատուն) (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 131):

**Ջազիայ** (ջիզյա) - ոչ մուսուլմաններից (քրիստոնեա և հրեաներ) գանձվող գլխահարկ, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս աշխատող տղամարդուց (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 110):

**Ջինս** - բնամթերքային հարկ, տուրք, հացահատիկով վճարվող հարկ (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 140):

**Ռախտ** - ձիու սարք ու կարգ, ձիու հանդերձանք, ասպազեն (*Ջամբռ*, էջ 151, ծանոթ. 2, *ՀԼԲԲ*, հ. Ե.., էջ 225):

**Ռահդար** - մաքսավոր (*Ջամբռ*, էջ 214, ծանոթ. 1), ճանապարհի պահակային ծառայող (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 110):

**Ռաղամ** - հրամանագիր, թագավորական հրովարտակ, պաշտոնական գրություն (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 110):

**Ռուպ** - չափման միավոր, համարժեք մեկ քառորդի (*ՀԼԲԲ*, հ. Ե., էջ 237):

**Սանդուխխանայ** - նախասենյակ (*Ջամբռ,* էջ 183, ծանոթ. 3):

**Սավատ** (սավադ) - պատճեն (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 200):

**Սառան** (սառաչ) - թամբագործ (*ՀԼԲԲ*, հ. Ե., էջ 269):

**Սարշտա** - օրենք, հարցմունք (դատական) (*Ջամբռ*, էջ 33, ծանոթ. 1):

**Սուբաշի** - ջրպետ (*ՀԲԲ*, հ. Դ, էջ 246): Պաշտոնյա, որը չափում էր ստացված բերքը և առանձնացնում հողատիրոջ կամ պետության մասնաբաժինը: Մինչև դա չարվեր՝ գյուղացին իրավունք չուներ վերցնել իր բաժինը (*Джамбр*, էջ 392, ծանոթ. 124):

**Սինօռ** - սահման, եզր (*Ջամբռ*, էջ 28, ծանոթ. 1):

**Սէրէսկէր** (սերասկեր) - զորավար (*ՀԼԲԲ*, հ. Ե., էջ 315):

**Սոմար** - չափման միավոր՝ համարժեք 3 ցենտների (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 240): 10 սոմարը համարժեք էր 1 խալվարի կամ 100 մանի:

**Ստակ** (սպիտակ, աքչե) - արծաթե դրամ, մանրադրամ՝ ամենափոքր թուրքական դրամը: Նախապես նշանակել է պարզապես արծաթե դրամ: Հետագայում՝ այն օգտագործվել է օսմանյան մանրադրամը հատկորոշելու համար, համարժեք էր 1/3 փարայի կամ 1/12 դուռուշի (**Симеон Ереванци**, *Джамбр*, էջ 390, ծանոթ. 99):

**Սուրաթ** - պատճեն, օրինակ (*Ջամբռ*, էջ 42, ծանոթ. 1):

**Սօհլամայ** (թերևս՝ սուլհնամե) - հաշտագիր, դաշնագիր (*Ջամբռ,* էջ 172, ծանոթ. 1):

**Վախմ** (վակֆ) - բառացի՝ «կանգ առնել», «ամրանալ»: Այսպես էին կոչվում եկեղեցիներին կամ մզկիթներին նվիրված՝ վակֆ արված հողերն ու այլ ստացվածքները, որովհետև, նվիրվելով որևէ կրոնական հաստատության, դրանք այլևս ենթակա չէին ոչ մի կարգի օտարման և մնում էին որպես եկեղեցու կամ մզկիթի մշտական սեփականություն և որպես այդպիսին ազատվում էին պետական հարկերից (*ՄՊՎ*, պրակ առաջին, էջ 120):

**Վախմլամայ** (վակֆնամ(ե) - կտակագիր, փաստաթուղթ, որով հավատացյալները զանազան շարժական և անշարժ ստացվածքներ էին նվիրում եկեղեցիներին կամ մզկիթներին (*ՄՊՎ*, պրակ երրորդ, էջ 201):

**Վատայ** - պայմանաժամ, ժամկետ (*Ջամբռ*, էջ 160, ծանոթ. 4):

**Վեքիլ** - փոխանորդ, ներկայացուցիչ, դատական գործերում հավատարմատար (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 338):

**Վօյվատա** (վոյվոդա) - քաղաքացիական բարձր կառավարիչ պաշտոնյա (*ՀԲԲ*, հ. Դ, էջ 352):

**Տախտակ** - այգիների մեջ առանձին բաժանմունք, որ բաղկացած է 25-40 թմբից և ջրվում է ջրի նույն ճանապարհով (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 363):

**Տուն** - գինու համար փոքր կարաս, կիսակարաս (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 436):

**Տօնլուղ** - վարձ, աշխատավարձ (*Ջամբռ*, էջ 103, ծանոթ. 1), նաև՝ զինվորների հագուստի համար գանձվող հարկ (*Jambr*, էջ 200, ծանոթ. 6):

**Փարայ** - թուրքական դրամ՝ համարժեք ղուռուշի մեկ քառասուներորդին (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 490):

**Փէշքեաշ** (փիշքաշ) - բառացի նշանակում է «առջևը դնել», «մատուցել», զանազան առիթներով բնակչության կողմից ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք, ինչպես նաև՝ ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին կամ խոշոր ֆեոդալների կողմից շահին մատուցվող նվեր (*ՄՊՎ*, պրակ երկրորդ, էջ 233):

**Փօլիցա** - այդպես են կոչվել դրամական փոխանցելի վկայագրերը (*Джамбр*, էջ. 398, ծանոթ. 195):

**Քալանթար** կոչվել են քաղաքագլուխները, որոնք զբաղվում էին բնակչության քաղաքացիական հարցերով և հետևում էին քաղաքի հասարակական գործերին: Ընտրվում էին մեծամասամբ քաղաքի մեծահարուստ վաճառականներից կամ խոջաներից (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 111):

**Քահրիզ** - ստորգետնյա ջրանցք, փոս (*Jambr*, էջ 320, ծանոթ. 1):

**Քանքան** - հողի տակով փորված առու, ստորերկրյա ջրմուղ (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 547):

**Քաշ** - այգու փոքր տախտակ, որ ավելացնում են բուն տախտակների կողքին (*ՄԲԲ*, հ. 4, էջ 550):

**Քեալավ** - մոխրանոց (*Ջամբռ,* էջ 195, ծանոթ. 1):

**Քեահեայ** - կառավարիչ, տնտեսվար, ավագ (*Джамбр*, стр. 397, прим. 193):

**Քեօպա** - եզր, երիզ, եզրին կարվող շերտ (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 417, ծանոթ. 64):

**Քէսայ** (քեսա) - քսակ (*ՀԲԲ*, հ. Դ, էջ 590):

**Քոււր** - տան ամենատարբեր իրեր, հանդերձեղեն, ամանեղեն և այլն (*ՀԲԲ*, հ. Դ, էջ 591):

**Քրէհ** - վարձ, որ վճարում են անասունի կամ իրի տիրոջը՝ այն օգտագործելու համար (*ՀԲԲ*, հ. Ա., էջ 592):

**Քրքրայ** - բամբակահան (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 596):

**Քուրթուկ** - թեթև վերարկու (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 439, ծանոթ. 54):

**Օդայ** - սենյակ, հյուրասենյակ, ընդունարան (*Ջամբռ*, էջ 35, ծանոթ. 1, *ՀԲԲ*, հ. Դ., էջ 601):

**Օջախլու** - տուն, ընտանիք, այստեղ՝ ունևոր, մեծատուն (**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ*, էջ 425, ծանոթ. 16):

**Ֆարշ** - կարպետ, սալահատակ (*Jambr*, էջ 91, ծանոթ. 2):

**Ֆաթվայ** - մուսուլմանական կրոնապետերի և կրոնական բարձրագույն ատյանի՝ *Շարիի* կողմից տարբեր հարցերի շուրջ տրված վերջնական վճիռ, որն օրենքի ուժ ուներ (*ՄՊՎ*, պրակ չորրորդ, էջ 112):

**Ֆարման** (ֆերման) - սուլթանի կամ շահի հրովարտակ (*ՀԲԲ*, հ. Դ., էջ 624):

**Բառարանում օգտագործված հապավումներ.**

*ՀԲԲ* - Հայերեն բացատրական բառարան[1]:

*ՀԼԲԲ* - Հայոց լեզվի բարբառային բառարան[2]:

*ՄՊՎ* - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը:

*Ջամբռ* - վաղարշապատյան հրատարակությունը:

*Джамбр* - ռուսերեն հրատարակությունը:

**Սիմեոն Երևանցի**, *Ջամբռ* - աշխարհաբար հրատարակությունը:

*Jambr* - անգլերեն հրատարակությունը:

---

[1] Հայերեն բացատրական բառարան, կազմեց՝ Ստ. Մալխասեանց, Երևան, 1944-1945:

[2] Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա.-Է., Երևան, 2001-2012:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ[1]

**Ագարակ** - Արագածոտնի մարզ, Աշտարակ քաղաքից 7 կմ արևմուտք:

**Աղավնատուն** - Արմավիրի մարզ, Վաղարշապատից 7 կմ հյուսիս-արևմուտք:

**Այվազալի** - Քասաղ գետի ձախ ափին՝ Սաղմոսավան գյուղից հյուսիս, Արայի լեռան արևմտյան ստորոտում: Գյուղը լքված է:

**Արքաթ** - Արարատի մարզ, Փարաքարից ոչ հեռու՝ դեպի հարավ:

**Ալիքաքաթ** (Նշավան) - Արարատի մարզ, Արտաշատից 7-8 կմ հյուսիս-արևմուտք:

**Ալիպեքլու** (Արտիմետ) - Արմավիրի մարզ, Վաղարշապատից 2 կմ հարավ-արևմուտք:

**Ավդալներ Վերին** (Հացավան) - Կոտայքի մարզ, Երևանից 13 կմ արևելք, Երևան Գեղարդ խճուղու աջ կողմում:

**Աղասոր** (Կաթնաղբյուր) - Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքից 6 կմ հարավ:

**Արախուս** (Ակունք) - Կոտայքի մարզ, Աբովյանից 5-6 կմ հյուսիս-արևելք, Հատիս լեռան ստորոտին:

**Արամուս** - Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքից մոտ՝ 4 կմ հարավ- հարավ:

**Ափնագյուղ** - Արագածոտնի մարզ, Աշտարակ-Ապարան մայրուղու վրա, Քասաղ գետի աջ ափին:

**Բաթռինջ** (Ոսկեհատ) - Արագածոտնի մարզ, Աշտարակից 6 կմ հարավ-արևմուտք, Ամբերդ գետի հուսանքի շրջանում: Եղել է կաթողիկոսական ամառանոց:

**Բարձաքի (**Կոտայք) - Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքից 5 կմ հյուսիս-արևելք:

**Բոխենիս** (նաև՝ Ջաշուրլու) - գյուղ Երևանի խանությունում, Էջմիածնի տարածքում: ԺԹ. դարի սկզբներին լքվել է:

**Գլան Մեծ** և **Գլան Փոքր** - գյուղեր, որոնք այժմ անքնակ են: Հավանական տեղադրությունը՝ Ազատ գետի վերին հուսանքի շրջանում, Աղջոց վանքի մոտակայքում:

---

[1] Ներկայացված են Հայաստանի բնակավայրերի և տեղանունների ծանոթագրությունները, նախ նշել ենք «Ջամբռ»-ում եղած անվանումը, ապա փակագծերում՝ ներկայիս (ըստ «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի, հ. 1-5, Երևան, 1986-2001):

**Գյոկգումբեթ** (Գեղանիստ) - Արարատի մարզ, Հրազդան գետի աջ ափին, Արգավանդից ոչ հեռու:
**Գյոլբենդ** (Լիճք) - Գեղարքունիքի մարզ Մարտունու մոտ, Սևանա լճի հարավ-արևմտյան ափին:

**Դիբաքլու** - գյուղ Երևանի խանությունում, Կարբիբասարի գավառում (մահալ), Արայի լեռան հյուսիսային կողմում: Հիշատակվում է որպես էջմիածնապատկան: ԺԹ. դարի առաջին քառորդի վերջերից լքվել ու ամայացել է: Ավերակները տեղորոշվում են այժմյան Երնջատափ գյուղի մոտակայքում:

**Ելղովան** (Կոտայք) - Կոտայքի մարզ, Աբովյան քաղաքից 5 կմ հյուսիս-արևելք:
**Ենկիճե** (Նորաբաց) - Արարատի մարզ, գտնվում է Մասիս քաղաքից 4 կմ հս-արլ:

**Թաքիա** (Բազմաղբյուր) - Արագածոտնի մարզ, Աշտարակից 5 կմ հյուսիս-արևելք:

**Իմամշարլու** (Մխչյան) - Արարատի մարզ, Արտաշատից 8-9 կմ հյուսիս-արևմուտք:

**Լազրվան** (Ղազարավան) - Արագածոտնի մարզ, Աշտարակ քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք, Արագած լեռան հարավ-արևելյան ստորոտին:

